«ՈԳԻ-ՆԱԻՐԻ»

Евгений ВОДОЛАЗКИН

ЛАВР

Неисторический роман

Перевел на армянском Шант Мкртчян

Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»
ինքնավար ոչառեւտրային կազմակերպության
աջակցությամբ, Ռուսաստան:

Eugene VODOLAZKIN

LAURUS

Unhistorical novel

Translation into Armenian by Shant Mkrtchyan

VOGI-NAIRI

ԵՎԳԵՆԻ ՎՈԴՈԼԱԶԿԻՆ

ԼԱՎՐ

Ոչ պատմական վեպ

Թարգմանությունը՝ Շանթ ՄԿՐՏՉՅԱՆԻ

Ստեփանակերտ 2015

ՀՏԴ 821.161.1-31Վոդոլազկին
ԳՄԴ 84(2Ռ)-44 «Գեղարm» հանդեսի մատենաշար
Վ 778

Վոդոլազկին Եվգ.
Վ 778 **Լավը: Ոչ պատմական վեպ:**
Թարգմ. ռուսերենից՝ Շ. Մկրտչյանի:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2015.- 352 էջ:

Եվգենի Վոդոլազկինը ժամանակակից ռուսական արձակի առաջատար դեմքերից է, հեղինակ՝ մի շարք ուշագրավ ստեղծագործությունների, բանասեր է՝ հինռուսական գրականության մասնագետ: Իր այս վերջին՝ ոչ պատմական վեպում, օգտագործելով հինռուսական տեքստերի տոնայնությունը, գրողը հնարամտորեն միախառնում է տարբեր դարաշրջաններն ու լեզվական տարերքները եւ ընթերցողին մատուցում միանգամայն կենդանի ու գրավիչ պատմություն: Վեպի գլխավոր հերոս Լավրը միջնադարյան բժիշկ է, ով սակայն չի կարողանում փրկել իր սիրեցյալի կյանքը եւ վճռում է երկրային ուղին անցնել նրա փոխարեն:

Բանասիրական արձակի ժանրին պատկանող «Լավրը» Վոդոլազկինի առաջին ստեղծագործությունն է, որ ներկայացվում է հայ ընթերցողներին:

ISBN 978-9939-1-0268-9

ՀՏԴ 821.161.1-31Վոդոլազկին
ԳՄԴ 84(2Ռ)-44

© Evgenii Vodolazkin, 2012
The publication of the book was negotiated through Banke, Goumen & Smirnova Literary Agency (www.bgs-agency.com).
© «Ոգի-Նաիրի», թարգմանության համար, 2015

ԼԱՎՐ

Տատյանային

ՆԱԽԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Տարբեր ժամանակներում նա ուներ չորս անուն: Դրանում կարելի է առավելություն տեսնել, որքանով մարդուս կյանքը միատարր չէ: Երբեմն պատահում է, որ նրա մասերն իրար հետ քիչ ընդհանուր բան են ունենում: Այնքան քիչ, որ կարող է թվալ, կարծես ապրվում են տարբեր մարդկանց կողմից: Նման դեպքերում չի կարելի չզարմանալ, որ բոլոր այդ մարդիկ կրում են նույն անունը:

Նա ուներ երկու մականուն: Դրանցից մեկը՝ Ռուկինեց էր՝ հղում Ռուկինյան գյուղարվարձանին, վայրին, որտեղ նա լույս աշխարհ էր եկել: Սակայն մեծամասնությանն այդ մարդը հայտնի էր Բժիշկ մականունով, քանի որ ժամանակակիցների համար նախեւառաջ բժիշկ է եղել նա, եղել է, կարելի է կարծել,ավելին,քան բժիշկը, քանզի այն, ինչը նա է կատարել, դուրս էր գալիս բժշկելու հնարավորությունների սահմանից:

Ենթադրում եմ, որ բժիշկ բառը ծագում է врати բառից՝ заговаривать: Այսպիսի նմանությունը ենթադրում է, որ բժշկելու ընթացքում էական դեր է խաղացել բառը: Բառը որպես այդպիսին՝ ինչ էլ այն նշանակեր: Նկատի ունենալով բուժամիջոցների սուղ հավաքածուն՝ Միջնադարում բառի դերն առավել նշանակալի էր, քան այժմ: Եվ ստիպված պիտի բավականին շատ խոսվեր:

Բժիշկներն էին խոսում: Ախտերի դեմ նրանց հայտնի էին ինչ-որ միջոցներ, բայց նրանք հնարավորությունը բաց չէին թողնում ուղղակի դիմելու հիվանդությանը: Արտաբերելով ռիթմիկ, արտաքուստ իմաստազուրկ դարձվածքներ, նրանք *մոլորեցնում* էին հիվանդությանը, համոզելով նրան՝ լքել այցելուի մարմինը: Եզրը բժշկի եւ հեքիմի միջեւ այն դարաշրջանում հարաբերական էր:

Հիվանդներն էին խոսում: Կանխորոշիչ տեխնիկայի բացակայության պատճառով նրանք ստիպված էին մանրամասն նկարագրել այն ամենը, ինչը կատարվում էր իրենց չարչարված մարմիններում: Երբեմն իրենց թվում էր, որ տանջալի, ցավով ներծծված բառերի հետ

մեկտեղ քիչ առ քիչ իրենց միջից ցավը դուրս է գալիս: Միայն բժիշկներին էին նրանք կարողանում պատմել հիվանդության բոլոր մանրամասները եւ դրանից թեթեւանում էին:

Հիվանդների հարազատներն էին խոսում: Նրանք ճշգրտում էին մերձավորների ցուցմունքները կամ նույնիսկ դրանցում ուղղումներ մտցնում, որովհետեւ ոչ բոլոր հիվանդություններն էին հնարավորություն ընձեռում տառապյալներին իրենց քաշածի մասին արժանահավատ հաշվետվություն տալ: Հարազատները կարող էին բացահայտ արտահայտել իրենց անհանգստությունը, որ հիվանդությունն անբուժելի է, եւ (Միջնադարը սենտիմենտալ ժամանակաշրջան չէր) բողոքել այն բանից, թե ինչ դժվար է գործ ունենալ հիվանդի հետ: Դրանից իրենք նույնպես թեթեւանում էին:

Մարդու յուրահատկությունը, ում մասին խոսվում է, այն էր, որ նա քչախոս էր: Նա հիշում էր Մեծն Արսենիի բառերը՝ շատ անգամ եմ զղջացել բառերի համար, որոնք արտաբերել են իմ շուրթերը, սակայն լռության համար չեմ զղջացել երբեք: Ավելի հաճախ նա անբառ էր նայում հիվանդին: Կարող էր միայն ասել՝ մարմինը քո դեռ քեզ կծառայի: Կամ՝ մարմինը քո դարձել է անպիտան, պատրաստվիր այն լքելու,- իմացած եղիր, որ թաղանթն այս՝ անկատար է:

Նրա փառքը վիթխարի էր: Այն լցնում էր ողջ բնակելի աշխարհը, եւ նա ոչ մի տեղ չէր կարող դրանից թաքնվել: Նրա հայտնվելը բազմաքանակ ժողովուրդ էր ժողովում: Նա ուշադիր հայացքով զննում էր ներկաներին, եւ նրա լռությունը փոխանցվում էր հավաքվածներին: Ամբոխը քարանում էր տեղում: Բառերի փոխարեն հարյուրավոր բաց բերաններից լոկ գոլորշու թաղանթներ էին պոկվում: Նա նայում էր, թե դրանք ինչպես են հալվում սառնամանիքում: Եվ լսելի էր հունվարյան ծյան խրթխրթոցը նրա ոտքերի տակ: Կամ շրշյունը սեպտեմբերյան տերեւների: Բոլորը հրաշքի էին սպասում, եւ կանգնածների դեմքերից գլորվում էր քրտինքը սպասման: Աղի կաթիլները խուլ ընկնում էին հողին: Ետ քաշվելով՝ ամբոխը թողնում էր նրան մոտ գալ այն մեկին, ում համար որ նա եկել էր:

Նա ձեռքը դնում էր հիվանդի ճակատին: Կամ ձեռքով հպվում վերքին: Ծատերը հավատում էին, որ նրա ձեռքի հպումը բալասան է: Ռուկինցի մականունը, որն ստացել էր ըստ ծննդյան վայրի, այդպիսով

լրացուցիչ հիմնավորում էր ձեռք բերում: Տարեցտարի նրա բժշկարար գիտությունը կատարելագործվում էր եւ կյանքի զենիթում հասավ բարձունքների, որը թվում էր, անհասանելի է մարդուն:

Ասում էին, որ նա տիրում է անմահական կենսահյութին: Ժամանակ առ ժամանակ նույնիսկ միտք է արտահայտվում, որ ապաքինում շնորհողը չի կարող մեռնել, ինչպես ամեն բան: Նման կարծիքը հիմնվում է այն բանի վրա, որ նրա մարմինը մահից հետո քայքայման հետքեր չուներ: Մի քանի օր մնալով բաց երկնքի տակ՝ այն պահպանել է իր նախկին տեսքը: Իսկ հետո չքացել, կարծես թե նրա տերը հոգնել է պառկելուց: Վերկ կացավ ու հեռացավ: Այդպես մտածողները մոռանում են, սակայն, որ աշխարհի արարումից հետո միայն երկու մարդ են լքել երկիրը մարմնապես: Նեռի մերկացման նպատակով Աստված վերցրեց Ենոքին, եւ հրեղեն կառքով երկինք համբառնեց Եղիան: Ռուս բժշկի մասին ավանդությունը չի հիշում:

Դատելով նրա սակավաթիվ ասույթներից, նա չէր պատրաստվում կենալ մարմնի մեջ հավերժորեն,- թեկուզեւ այն պատճառով, որ դրանով էր զբաղված ամբողջ կյանքը: Դե անմահական էլիքսիրն էլ, ավելի շուտ, չուներ: Նմանատիպ բաներն ինչ-որ ձեւով չեն համապատասխանում նրան, ինչը մենք գիտենք իր մասին: Այլ խոսքով, կարելի է վստահորեն ասել, որ ներկայումս նա մեզ հետ չէ: Արժե ընդ որում առարկել, որ ինքն էլ միշտ չէր հասկանում, թե ո՞ր ժամանակն է հարկավոր ներկա համարել:

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ

- Ա -

Նա լույս աշխարհ եկավ Ռուկինյան գյուղարվարձանում, Կիրիլյան միաբանությանը մերձ: Դա տեղի ունեցավ 6948 թվականի մայիսի 8-ին՝ աշխարհի Արարչագործությունից հաշված, 1440-ին՝ հաշված մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ծննդից, Մեծն Արսենիի հիշատակի օրը: Յոթն օր անց ի սեր Արսենիի նա մկրտվեց: Այդ յոթ օրերին նրա մայրը միս չկերավ, որպեսզի նորածնին նախապատրաստի առաջին հաղորդությանը: Ծննդից հետո՝ մինչեւ քառասներորդ օրը, նա եկեղեցի չէր գնում եւ սպասում էր իր մարմնական մաքրմանը: Երբ նրա մարմինը մաքրվեց, նա գնաց վաղ ժամերգության: Երեսնիվայր ընկնելով գավիթում, պառկած մնաց մի քանի ժամ եւ իր նորածնի համար աղերսեց լոկ մի բան՝ կյանք: Արսենին նրա երրորդ երեխան էր: Շուտ ծնվածները մի տարի էլ չէին ապրում:

Արսենին ապրեց: 1441 թվականի մայիսի 8-ին Կիրիլ-Բելոզորյան վանքում ընտանիքը գոհունակության կարգ կատարեց: Մաղթանքից հետո, հպվելով արդարակյաց Կիրիլի մասունքներին, Արսենին ծնողների հետ մասին ուղեւորվեց տուն, իսկ Քրիստափորը՝ նրա պապը, մնաց վանքում: Հաջորդ օրը նրա յոթերորդ տասնամյակն էր լրանում, եւ նա որոշեց հարցնել ճգնավոր Նիկանդրոսին, թե ինչպես անի հետագայում:

Սկզբունքորեն, պատասխանեց ալեւորը, ես բան չունեմ քեզ ասելու: Միայն թե, ապրիր, բարեկամս, գերեզմանոցին մոտ: Դու էնքան լողլող ես, որ քեզ էնտեղ տանելը դժվար կլինի: Եվ առհասարակ՝ ապրիր մենակ:

Այսպես ասաց ճգնավոր Նիկանդրոսը:

- Բ -

Եվ Քրիստափորը տեղափոխվեց շրջակա գերեզմանոցներից մեկի մոտ: Հեռու Ռուկինյան գյուղարվարձանից, հենց գերեզմանատան ցանկապատի մոտ նա մի դատարկ խրճիթ գտավ: Նրա տերերը չապրեցին մինչեւ վերջին ժանտամահը: Դրանք տարիներ էին, երբ տները դարձան ավելի շատ, քան մարդիկ: Ամուր, ընդարձակ, սակայն անտերունչ խրճիթում ոչ ոք չէր համարձակվում բնավորվել: Առավել եւս՝ գերեզմանոցի մոտ, լիքը ժանտախտամահ հանգուցյալներով: Իսկ Քրիստափորը համարձակվեց:

Ասում էին, թե դեռեւս այն ժամանակ նա լիովին հստակ պատկերացրել է այդ վայրի հետագա ճակատագիրը: Որ, իբր, արդեն այն հեռավոր ժամանակներում գիտեր իր խրճիթի տեղում 1495 թվականին կառուցվելիք գերեզմանատան եկեղեցու մասին: Եկեղեցին կառուցվել է ի երախտագիտություն 1492 թվականի բարեհաջող ելքի, աշխարհի Արարչագործությունից հաշված՝ յոթհազարամյակի: Ու թեեւ աշխարհի սպասվող վախճանը չեղավ այդ թվին, Քրիստափորի անվանակիցն իր եւ ուրիշների համար անսպասելի հայտնագործեց Ամերիկան(այն ժամանակ դրա վրա ուշադրություն չդարձրին):

1609 թվականին եկեղեցին ավերված է լեհերի կողմից: Գերեզմանոցն ամայության է մատնվում, եւ նրա տեղում աճում է սոճու անտառը: Սունկ հավաքողների հետ երբեմն-երբեմն բարբաջում են ուրվականները:

1817 թվին տախտակների արտադրության համար անտառը ձեռք է բերում վաճառական Կոզլովը: Երկու տարի անց ազատագրված տեղում կառուցում են հիվանդանոց՝ աղքատների համար: Ուղիղ հարյուր տարի անց հիվանդանոցի շենք է խուժում գավառային ՉԿ-ն: Համապատասխան տարածքի նախնական նշանակության գերատեսչությունը նրա վրա կազմակերպում է զանգվածային թաղումներ: 1942 թվին գերմանացի օդաչու Հայնրիխ ֆոն Այնզիդելը դիպուկ խոցումով ջնջում է շենքը երկրի երեսից: 1947 թվին հողակտորը վերաշինվում է իբրեւ զինվորական կրակադաշտ եւ հանձնվում Կ. Ե. Վորոշիլովի անվան Կարմրադրոշ տանկային 7-րդ բրիգադին: 1991 թվականից հողը պատկանում է «Սպիտակ գիշերներ» այգեգործական ընկերությանը: Կար-

տոֆիլի հետ մեկտեղ այգեգործական ընկերության անդամները փորում հանում են մեծ քանակությամբ ոսկորներ ու արկեր, բայց չեն շտապում բողոքել վոլոստի վարչություն: Նրանք գիտեն, որ ուրիշ հող իրենց միեւնույն է ոչ ոք չի տրամադրի:

Դե այդպիսի հողում է բախտ վիճակվել մեզ ապրել, ասում են:

Այդ կանխատեսումը մանրամասն ցուցանում էր Քրիստափորին, որ իր ապրած օրերին հողին ոչ ոք չի դիպչի, իսկ իր ընտրած տունը հիսունչորս տարի կմնա անխաթար: Քրիստափորը հասկանում էր, որ բուռն պատմություն ունեցող երկրի համար հիսունչորս տարին՝ քիչ չէ:

Դա մի տուն-հնգարմ էր,- բացի չորս արտաքին պատերից փայտակերտվածքում կար հինգերորդ ներքնապատը: Միջնորմած փայտակերտվածքը ձեւավորում էր երկու սենյակ՝ տաք (վառարանով) եւ սառը:

Տեղափոխվելով տուն, Քրիստափորը ստուգեց՝ այդտեղ գերաններ միջեւ արդյո՞ք ճեղք չկա, եւ նորից լուսամուտները վրաքաշ արեց ցուլի լեղապարկով: Ձիթատու փոճոկ եւ գիհի հատապտուղներ վերցրեց, խառնեց գիհի տաշեղների եւ խունկի հետ: Ավելացրեց կաղնու տերեւներ եւ տերեւներ փեգենու: Մանր ծեծեց, դրեց աճուխի վրա եւ օրվա ընթացքում զբաղված էր ծխահարելով:

Քրիստափորը գիտեր, որ ժամանակի ընթացքում նաեւ ժանտամահն ինքը դուրս կգա խրճիթից, բայց նախազգուշական այդ միջոցն ավելորդ չհամարեց: Նա վախենում էր հարազատների համար, որոնք կարող էին իրեն այցելել: Նա վախենում էր նաեւ բոլոր նրանց համար, ում բուժել էր, քանի որ նրանք լինում էին իր մոտ մշտապես: Քրիստափորը խոտաբույժ էր, եւ նրա մոտ զանազան մարդիկ էին գալիս:

Գալիս էին հազից տառապողները: Նրանց ծեծած ցորեն էր տալիս գարու ալյուրի հետ՝ դրանք խառնելով մեղրով: Երբեմն՝ խաշած հաճարի, քանի որ հաճարը դուրս է քաշում թոքերի խոնավությունը: Հազի տեսակից ելնելով կարող էր տալ ոլոռի ապուր կամ եփած շաղգամի ջուր: Հազը Քրիստափորը զանազանում էր ձայնից: Եթե հազը թաց էր եւ չէր որոշվում, Քրիստափորը ականջը տանում էր հիվանդի կրծքին եւ երկար լսում նրա շնչառությունը:

Գալիս էին գորտնուկները հանելու: Նմաններին Քրիստափորը խորհուրդ էր տալիս գորտնուկների վրա ծեծած սոխ դնել՝ աղով: Կամ

դրանց վրա քսել ճնճղուկի ծերտ, թքի հետ խառնած: Բայց դե լավագույն միջոցն իրեն թվում էր երիցուկների մանրած սերմերը, որոնք հարկ էր գորտնուկների վրա ցանել: Երիցուկի սերմերը գորտնուկներից դուրս էին քաշում արմատը, եւ այդ տեղում այլեւս չէին աճում:

Օգնում էր Քրիստափորը նաեւ անկողնային գործերում: Այդ առիթով այցելածներին նա իսկույն իմանում էր այն բանից, թե ինչպես են ներս մտնում եւ վարանում շեմի վրա: Ողբերգական եւ մեղավոր նրանց հայացքը ծիծաղեցնում էր Քրիստափորին, բայց նա ցույց չէր տալիս: Առանց երկար-բարակ նախաբանի դեղաբույժը նրանց կոչում էր հանել անդրավարտիքները, եւ հյուրերը սուսուփուս հնազանդվում էին: Երբեմն նրանց ուղարկում էր լվացվելու հարեւան զետեղարանում՝ առաջարկելով հիմնական ուշադրությունը դարձնել ծայրանդամին: Նա համոզված էր, որ անձնական հիգիենայի կանոններին պետք է հետեւել նաեւ Միջնադարում: Ցաղագրգռությամբ էր լսում,թե ինչպես է ջուրը շերեփից ընդհատ լցվում փայտե չանիկի մեջ:

Այս առումով ինչպիսի՞ խորհուրդ տաս, գրի էր առնում նա անկեղծորեն կեչեկեղեւի կտորի վրա: Եվ ինչպե՞ս են այդ կանայք նմաններին մոտ թողնում իրենց:

Եթե թաքնակարթը չէր ունենում ակնհայտ վնասվածքներ, Քրիստափորը հարցուփորձ էր անում մանրամասներից: Նրան պատմել չէին վախենում, որովհետեւ գիտեին՝ բերանբաց չէ: Էրեկցիայի բացակայության դեպքում Քրիստափորը առաջարկում էր սննդի մեջ ավելացնել թանկ անիսոն եւ նուշ կամ դաղձի էժան անուշահյութ, որոնք բազմապատկում են սերմերն ու առաջ տանում անկողնային մտադրությունները: Նույն գործողությունը վերագրվում էր *ճնճղուկի ճրագու* անսովոր անվամբ խոտին, ինչպես նաեւ սովորական ցորենին: Գոյություն ուներ, վերջապես, *ծիծեռնախոտը,* որն ուներ երկու արմատ՝ սպիտակ եւ սեւ: Սպիտակից էրեկցիա էր առաջանում, իսկ սեւից այն կորչում էր: Դեղամիջոցի թերությունն այն էր, որ սպիտակ արմատը պատասխանատու պահին պիտի պահվեր բերանում: Բոլորը պատրաստ չէին այդ բանին:

Եթե այդ ամենը չէր բազմապատկում սերմնահեղուկը եւ չէր շարժում անկողնային մտադրությունները, խոտաբույժը բուսական աշխարհից անցնում էր կենդանականին: Ներուժականությունից զրկ-

վածներին խորհուրդ էր տրվում ուտել բադ կամ աքլորի երիկամ: Ծայրահեղ դեպքերում Քրիստափորը հրահանգում էր ճարել աղվեսածվեր, հավանգի մեջ մանրացնել եւ խմել գինու հետ: Նրանց, ում նման խնդիրն ուժից վեր էր, առաջարկում էր սովորական հավի ձվեր՝ սոխ ու շաղգամի հետ կծելով:

Քրիստափորը ոչ թե հավատում էր խոտերին. ավելի շուտ հավատում էր նրան,որ ամեն մի խոտի միջով Աստծո օգնությունը գալիս է որոշակի գործի համար: Այնպես, ինչպես այդ օգնությունը գալիս է նաեւ մարդկանց միջոցով: Ե՛վ նրանք, եւ՛ մյուսները գործիքներն են էության: Այն մասին,թե ինչու իրեն ծանոթ յուրաքանչյուր խոտի հետ կապված են խիստ որոշակի հատկանիշներ, նա չէր խորհրդածում, համարելով այն պարապ հարց: Քրիստափորը հասկանում էր, Ում կողմից է այդ կապը հաստատված, եւ իրեն բավարար էր այդ մասին իմանալը:

Քրիստափորի օգնությունը մերձավորներին չէր սահմանափակվում բժշկելով: Նա համոզված էր, որ խոտերի խորհրդավոր ազդեցությունը տարածվում է մարդկային կյանքի բոլոր բնագավառների վրա: Քրիստափորին հայտնի էր, որ բաց գույնի արմատով կաթնբեկ խոտը, ինչպես մոմը, հաջողություն է բերում: Նա դա տալիս էր վաճառական մարդկանց, որպեսզի, ուր էլ նրանք գնային, ընդունվեին պատվով եւ մեծ փառքով վեր բարձրանային:

Միայն թե չափազանց մի հպարտացեք, զգուշացնում էր Քրիստափորը: Հպարտությունն արմատն է բոլոր մեղքերի:

Կաթնբեկ խոտը նա տալիս էր միայն նրանց, ում բացարձակապես հավատում էր:

Ամենաշատը Քրիստափորը սիրում էր կարմիր, ասեղի բարձրության արքայական խոտը: Նա միշտ պահում էր իր մոտ: Գիտնալով, որ սկսելով ցանկացած գործ, լավ է այն պահես թեւիդ տակ: Վերցնել, օրինակ, հետդ դատարան, որպեսզի չդատվես: Կամ նրանով նստել խնջույքի, չվախենալով հերետիկոսից, որ դարանակալում է ուզածդ թուլացածի:

Հերետիկոսներին Քրիստափորը չէր սիրում: Նրանց հայտնաբերում էր *աղամի գլխի* միջոցով: Այդ խոտը հավաքելով ճահիճների մոտից՝ խաչակնքվում էր, ասելով՝ ողորմայ զիս, Աստուած: Ապա, խոտը տալով օրհնելու, Քրիստափորը խնդրում էր եկեղեցականին դնել այն սե-

ղանին եւ պահել քառասուն օր: Այն պահելով իր մոտ մինչեւ օրերը լրվեին, նույնիսկ ամբոխի մեջ անվրեպ կարող էր գուշակել հերետիկոսին կամ դեւին:

Խանդոտ ամուսիններին Քրիստափորն առաջարկում էր ջրոսպ, ոչ այն ջրոսպը, որը քաշում է ճահիճը, այլ կապույտը, հողին փռված խոտը: Հարկ է այն դնել կնոջ գլխատակին,- քուն մտնելով, նա ինքն իր մասին ամեն ինչ կպատմի: Լավը եւ վատը: Մի միջոց էլ կար նրան ստիպելու խոսել՝ բվի սիրտը: Այն պետք է դրվեր քնած կնոջ սրտի վրա: Բայց այդ քայլին ոչ ոք չգնաց՝ սարսափելի էր:

Իրեն՝ Քրիստափորին այդ միջոցներն անհրաժեշտ չէին, որովհետեւ երեսուն տարի առաջ նրա կինը զոհվել էր: Խոտ ժողովելիս ամպրոպը նրանց բռնել էր, եւ անտառի բացատում կայծակը սպանել էր կնոջը: Քրիստափորը կանգնել ու չէր հավատում, որ կինը մահացած է, որքանով քիչ առաջ ողջ էր: Նա ցնցեց կնոջ ուսերը, եւ նրա բաց մազերը հոսեցին իր ձեռքին: Նա սրբեց կնոջ այտերը: Նրա մատների տակ անձայն շարժվեցին կնոջ շրթունքները: Լայն բացված աչքերը նայում էին սոճիների կատարներին: Նա համոզում էր կնոջը ոտքի ելնել եւ վերադառնալ տուն: Կինը լռում էր: Եվ ոչ մի բան չկարողացավ ստիպել նրան խոսել:

Նոր վայր տեղափոխվելու օրը Քրիստափորը վերցրեց միջին չափի կեչեկեղեւի մի կտոր եւ գրեց՝ վերջիվերջո, նրանք արդեն հասուն մարդիկ են: Վերջիվերջո, նրանց երեխայի մեկ տարին լրացել է: Համարում եմ, որ առանց ինձ իրենց համար ավելի լավ կլինի: Խորհելով, Քրիստափորը հավելեց՝ իսկ գլխավորը՝ այդպես խորհուրդ տվեց ճգնավորը:

- Գ -

Երբ բոլորեց Արսենիի երկու տարին, նրան սկսեցին բերել Քրիստափորի մոտ: Երբեմն, ճաշի նստելով, ետ էին դառնում երեխայի հետ միասին: Բայց հաճախ Արսենիին թողնում էին մի քանի օրով: Նրան դուր էր գալիս պապի մոտ: Այդ այցելությունները եղան Արսենիի առաջին հիշողությունները: Եվ դրանք եղան վերջինը, ինչը նա ապագայում պիտի մոռանար:

Արսենին սիրում էր պապի խրճիթի հոտը: Այն բաղկացած էր բազմաթիվ խոտերի բույրերից, որոնք չորացվում էին առիքի տակ, եւ այդպիսի հոտ ոչ մի տեղ չկար: Նա սիրում էր նաեւ սիրամարգի փետուրները, որ Քրիստափորին էր բերել ուխտագնացներից մեկը եւ փակցված էր պատին հովհարի տեսքով: Հնդկահավի փետուրի նախշը զարմանալիորեն աչք էր հիշեցնում: Գտնվելով Քրիստափորի մոտ՝ տղան ինչ-որ ձեւով իրեն հսկողության տակ էր զգում:

Նաեւ դուր էր գալիս սուրբ նահատակ Քրիստափորի սրբապատկերը, որը կախված էր Փրկչի պատկերի տակ: Խիստ ռուսական սրբապատկերների կողքին այն դիտվում էր անսովոր. սուրբ Քրիստափորը շնագլուխ էր: Երեխան ժամերով զննում էր սրբապատկերները, եւ ազդեցիկ պատկերի միջով շնագլխի քիչ- քիչ երեւակվում էին պապի դիմագծերը: Փրչոտ հոնքեր: Քթից սկսվող կնճիռներ: Աչքատակից աճած մորուք: Ժամանակի մեծ մասն անցկացնելով անտառում, պապն առավել հաճույքով էր տարրալուծվում բնության մեջ: Նա գնալով նմանվում էր շներին ու արջերին: Խոտերին ու կոճղերին: Եվ խոսում էր ճռճռան փայտանյութի ձայնով:

Երբեմն Քրիստափորը սրբապատկերը հանում էր պատից ու տալիս Արսենիին համբուրելու: Երեխան մտախոհ համբուրում էր սուրբ Քրիստափորի փրչոտ գլուխն ու մատնաբարձիկներով հպվում խունացած գույներին: Քրիստափոր պապը հետեւում էր, թե ինչպես են սրբապատկերի խորհրդավոր հոսանքները հոսում Արսենիի ձեռքերի մեջ: Մի անգամ նա հետեւյալ գրառումն արեց՝ երեխան ինչ-որ հատուկ սեւեռում ունի: Նրա ապագան ինձ պատկերանում է երեւելի, սակայն ես նրան հետեւում եմ դժվարությամբ:

Չորս տարեկանից Քրիստափորն սկսեց տղային սովորեցնել խոտաբույսերի գործը: Առավոտից իրիկուն նրանք թափառում էին անտառում եւ տարբեր խոտեր էին հավաքում: Ձորակների բերանին սիզախոտ էին փնտրում: Քրիստափորը Արսենիին ցույց էր տալիս նրա սուր փոքրիկ տերեւները: Սիզախոտն օգնում էր ճողվածքի եւ ջերմի դեպքում: Ջերմի դեպքում այդ խոտը տալիս էին մեխակի հետ, եւ այդ ժամանակ հիվանդից առվակներով սկսում էր գլորվել քրտինքը: Եթե քրտինքը թանձր էր եւ ծանր հոտ էր արձակում, պետք էր (նայելով Արսենիին Քրիստափորը ձայնը կտրեց) պատրաստվել մահվան: Երեխայի մանկական հայացքից Քրիստափորը մի տեսակ էր լինում:

Ի՞նչ է մահը, հարցնում էր Արսենին:

Մահը՝ երբ չեն շարժվում եւ լռում են:

Այսպե՞ս: Արսենին փռվեց մամուռի վրա եւ անթարթ նայում էր Քրիստափորին:

Բարձրացնելով տղային, Քրիստափորն ասաց մտքում՝ իմ կինը՝ նրա տատը, այն ժամանակ նույնպես պառկած էր այդպես, այդ պատճառով էլ հիմա ես շատ վախեցա:

Պետք չի վախենալ, ճչաց տղան, որովետեւ ես նորից ողջ եմ:

Ջբոսանքներից մեկի ժամանակ Արսենին հարցրեց Քրիստափորին՝ որտե՞ղ է իր տատը մնում հիմա:

Երկնքում, պատասխանեց Քրիստափորը:

Այդ օրն Արսենին վճռեց թռչել մինչեւ երկինք: Երկինքը վաղուց էր նրան գրավում, եւ չտեսած տատի այնտեղ կենալու լուրը իր ձգտումը դարձրեց անհաղթահարելի: Այդ գործում նրան կարող էին օգնել միայն փետուրները սիրամարգի, անկասկած, դրախտային թռչնի:

Վերադառնալով տուն՝ Արսենին դեզի միջից վերցրեց պարանը, պատից հանեց սիրամարգի փետուրներն ու դնովի աստիճանով բարձրացավ տանիք: Փետուրները բաժանելով երկու հավասար մասի, նա ամուր կապեց իր ձեռքերին: Առաջին անգամ Արսենին չէր ուզում երկնքում երկար մնալ: Նա ուզում էր շնչել միայն լազուրե օդը եւ, եթե ստացվի, ի վերջո տեսնի տատիկին: Միաժամանակ, հնարավոր է, նրան բարեւ տանի Քրիստափորից: Արսենիի պատկերացմամբ ինքը լիովին կարող էր վերադառնալ մինչեւ ընթրիք, որն այդ է պատրաստում էր Քրիստափորը: Արսենին մոտեցավ պպածիուն, թափահարեց թեւերն ու քայլ արեց առաջ:

Նրա թռիչքը շեշտակի էր, բայց ոչ երկարատեւ: Աջ ոտքի մեջ, որն առաջինը դիպավ գետնին, Արսենին սուր ցավ զգաց: Նա չկարողացավ ոտքի կանգնել եւ պառկեց լուռ, ոտքերը հավաքելով թեւերի տակ: Կոտրված եւ գետնին զարնվող սիրամարգի փետուրները Քրիստափորը տեսավ, երբ դուրս ելավ տղային ընթրիքի կանչելու: Քրիստափորը շոշափեց նրա ոտքը եւ հասկացավ, որ կոտրվածք է: Որպեսզի ոսկորը կպներ արագ, նա վնասված տեղին մանրացրած ոլոռով սպեղանի դրեց: Որպեսզի ոտքը հանգստի վիճակում մնար,նա կիպ փաթաթեց փոքրիկ տախտակի հետ: Որպեսզի ամրանար ոչ միայն մարմինը,

այլեւ Արսենիի ոգին, նա վանք տարավ նրան:

Գիտեմ, որ պատրաստվում ես երկինք մեկնել, ճգնախուցի շեմից նրան ասաց ալեւոր Նիկանդրոսը: Բայց կերպը քո գործողության, ներող կլինես, համարում եմ էկզոտիկ: Ժամանակը կգա, եւ ես քեզ կպատմեմ, թե ինչպես է դա արվում:

Հենց Արսենին զորեց ոտքի վրա կանգնել, նրանք դարձյալ անցան խոտ ժողովելուն: Սկզբում գնում էին միայն շրջակա անտառ, բայց օրեցօր, փորձելով Արսենիի ուժերը, էլ ավելի հեռուն էին գնում: Գետերի ու առուների երկայնքով *եղնաձաղիկ* էին հավաքում՝ կարմրադեղին ծաղիկներ, սպիտակ տերեւներով, թունավորման դեմ: Հենց այնտեղ՝ գետերի մոտ էր *բակլան* խոտը: Քրիստափորը սովորեցրել էր այն ճանաչել դեղին գույնով, կլոր տերեւներով եւ սպիտակ արմատով: Այդ խոտով բուժում էին ձիերին ու կովերին: Բացատներում հավաքում էին *քնախոտը,* որն աճում էր գարնանը: Այն հարկ էր քաղել ապրիլի իննին, քսաներկուսին եւ քսաներեքին: Խրճիթ շինելիս *քնախոտը* դնում էին առաջին գերանի տակ: Եվ գնում էին նաեւ սավա *խոտի*: Այստեղ Քրիստափորը զգուշավորություն էր ցուցաբերում, քանի որ հանդիպումը նրա հետ սպառնում էր ուղեղի մթագնումով: Սակայն (նա պպզում էր երեխայի դիմաց,) եթե այդ խոտը դնես գողի հետքի վրա, գողոնը ետ կգա: Նա դարսում էր խոտը կողովում եւ ծածկում կռատուկով: Տան ճամփին ամեն անգամ հավաքում էին *պերենոս* խոտի ծլեպները, որը քշում է օձերին:

Նրա վարսանդից դիր բերանդ՝ ջուրը կքաշվի, մի անգամ ասաց Քրիստափորը:

Կքաշվի՞, լրջորեն հարցրեց Արսենին:

Աղոթքով՝ կքաշվի: Քրիստափորն իրեն լավ չզգաց: Ամբողջ խնդիրը հենց աղոթքն է:

Իսկ էլ ինչի՞ է պետք այդ սերմիկը: Տղան գլուխը վեր բարձրացրեց եւ տեսավ, որ Քրիստափորը ժպտում է:

Այսպիսին է ավանդապատումը: Իմ գործը քեզ հաղորդելն է:

Խոտ հավաքելիս մի անգամ նրանք գայլ տեսան: Գայլը նրանցից մի քանի քայլ հեռու էր կանգնած եւ նայում էր նրանց աչքերին: Նրա լեզուն երախից կախ էր ընկել եւ դողդողում էր հաճախական շնչառությունից:

Չենք շարժվելու, ասաց Քրիստափորը, եւ նա կիեռանա: Մեծն տառապյալ Գեւորգ, լեր ապավեն...

Նա չի հեռանա, առարկեց Արսենին: Չէ՞ որ եկել է, որ մեզ հետ լինի:

Տղան մոտեցավ գայլին եւ բռնեց նրա վզատակից: Գայլը նստեց: Ետնաթաթերի տակից ցցվել էր նրա պոչի ծայրը: Քրիստափորը հակվեց սոճուն եւ ուշադիր նայում էր Արսենիին: Երբ նրանք շարժվեցին տան կողմը, գայլը գնաց նրանց ետեւից: Կարմիր դրոշակի պես այդպես էլ կախվել էր նրա լեզուն: Գյուղի սահմանում գայլը կանգ առավ:

Այդ օրվանից նրանք հաճախ էին գայլին հանդիպում անտառում: Երբ ճաշում էին, գայլը մոտներն էր նստում: Քրիստափորը հացի կտորներ էր նետում, եւ գայլը, ատամները շրխկացնելով, բռնում էր օդում: Ձգվում էր խոտի վրա եւ մտածկոտ նայում իր դիմաց: Երբ պապն ու թոռը վերադառնում էին, գայլը մինչեւ տուն ճանապարհում էր նրանց: Երբեմն գիշերում էր բակում, եւ առավոտյան երեքով ուղեւորվում էին խոտ փնտրելու:

Երբ Արսենին հոգնում էր, Քրիստափորը նրան նստեցնում էր քաթանե թիկնապայուսակում: Մի քանի ակնթարթ անց նրա այտն զգում էր իր պարանոցին եւ իմանում, որ տղան քնած է: Քրիստափորը կամաց էր անցնում ամառային տաք մամուռի վրայով: Ձամբյուղից ազատ ձեռքով նա ուղղում էր ուսակապերն ու հեռու էր քշում ճանճերին քնած երեխայից:

Տանը Քրիստափորը Արսենիի երկար մազերի միջից *դժնիկ* էր հանում, երբեմն նրա գլուխը լվանում էր մոխրաջրով: Մոխրաջուր նա պատրաստում էր *թխկիի* տերեւներից եւ սպիտակ *չարախոտից,* որը նրանք միասին էին հավաքել բարձրաբերձ տեղանքից: Մոխրաջրից Արսենիի ոսկե մազերը փափկանում էին, ինչպես մետաքսը: Արեւի շողերի տակ լույս էին արձակում: Նրանց մեջ Քրիստափորը հյուսում էր հրեշտակախոտի տերեւիկներ, որպեսզի մարդիկ նրան սիրեն: Ընդ որում, ինքը նկատել էր, որ Արսենիին մարդիկ սիրում էին նաեւ այդպես:

Երեխայի հայտնվելը լավացնում էր տրամադրությունը: Դա զգում էին Ռուկինա գյուղարվարձանի բոլոր բնակիչները: Երբ համբուրում էին նրա մազերը, թվում էր, թե իրենք հակվել են աղբյուրի: Արսենիի մեջ մի այնպիսի բան կար, որ թեթեւացնում էր իրենց ոչ սովորական

կյանքը: Եվ նրանք երախտապարտ էին:

Գիշերվա համար Քրիստափորը երեխային պատմում էր Սողոմոնի եւ Կիտովրասի* մասին: Այդ պատմությունը երկուսն էլ բերանացի գիտեին եւ միշտ ընկալում էին ասես առաջին անգամ:

Երբ Կիտովրասին բերեցին Սողոմոնի մոտ, նա տեսավ մի մարդու, որն իր համար կոշիկ էր գնում: Մարդն ուզեց իմանալ՝ այդ կոշիկները յոթ տարի կդիմանա՞ն, եւ Կիտովրասը ծիծաղեց: Առաջ անցնելով, Կիտովրասը հարսանիք տեսավ եւ լաց եղավ:

Եվ հարցրեց Սողոմոնը Կիտովրասին, թե նա ինչո՞ւ ծիծաղեց:

Տեսնելով մարդուն այդ, Կիտովրասն ասաց, թվում է, նա յոթ օր էլ չի ձգի:

Եվ հարցրեց Սողոմոնը Կիտովրասին, թե նա ինչո՞ւ լաց եղավ:

Ափսոսս եկավ, ասաց Կիտովրասը, քանզի փեսացուն այդ՝ չի ձգի մինչեւ օրն երեսուներորդ:

Ես չեմ հասկանում, ինչո՞ւ ծիծաղեց Կիտովրասը: Որովհետեւ գիտեր, որ այդ մարդը հարությո՞ւն է առնելու:

Չգիտեմ: Վստահ չեմ:

Քրիստափորն ինքն էլ էր զգում, որ լավ կլիներ Կիտովրասը չծիծաղեր:

Որպեսզի Արսենին հանգիստ աչքերը փակեր, Քրիստափորը նրա բարձի տակ դնում էր ապուզան խոտը: Դրանից Արսենին հեշտ էր աչքերը փակում: Եվ նրա երազներն անխռով էին:

- Դ -

Արսենյան տարիների երկրորդ շաբաթվա սկզբին հայրը տղային բերեց Քրիստափորի մոտ:

Գյուղարվարձանում հանգիստ չէ, սպասում են մահտարաժամի: Տղան թող մնա այստեղ բոլորից հեռու:

Մնա եւ դու, առաջարկեց Քրիստափորը, եւ կինը քո:

Հնձած ցորեն ունենք, հայրիկ, առանց ժողովելու ձմռանը ո՞նց պահենք: Միայն ուսերը թոթվեց:

---

*Կիտովրաս - իմաստուն Կենտավրոս:

Քրիստափորը փշրեց եռման ծծումբն ու տվեց, որ վերցնի իր հետ, որպեսզի խմեն ձվի դեղնուցով եւ վրայից խմեն մասուրի հյութ: Հորդորեց լուսամուտները չբացել, իսկ առավոտյան ու երեկոյան բակում խարույկ սարքել կաղնու ճղոններով: Երբ շիջեն ածուխները, նրա վրա օշինդր գցեն, կեչեկեղեւ ու փեգենա: Վերջ: Սա այն է, ինչ կարելի է անել: Քրիստափորը հոգոց հանեց: Ազատվիր այդ ցավից, որդի՛ս:

Նայելով, թե ինչպես է հայրը գնում սայլի մոտ, Արսենին արտասվեց: Ինչպես է ցածրահասակ, թոչկոտուն քայլվածքով գնում: Կիսանստելով կողափայտին՝ ոտքերը գցում սայլամիջի խոտի վրա: Բռնում է սանձերն ու ճիպտում ձիերին: Ձին խռխռում, քաշում է գլխով, փափուկ պոկվում է: Տոպանված բնահողի վրա սմբակները հնչում են խուլ: Հայրը ճոճվում է թեթեւակի: Շրջվելով՝ ձեռքով է անում: Փոքրանում է չափսերով ու ձուլվում սայլին: Դառնում է կետ: Անհետանում:

Ինչո՞ւ ես այդպես լալիս, հարցրեց Քրիստափորը:

Նրա վրա մահվան նշան եմ տեսնում, ասաց տղան:

Նա լաց եղավ յոթ օր ու յոթ գիշեր: Քրիստափորը լռում էր, քանի որ գիտեր, որ Արսենին իրավացի է: Ու նաեւ գիտեր՝ իր խոտերն ու բառերն այստեղ անզոր են:

Յոթերորդ օրվա կեսօրին Քրիստափորը բռնեց տղայի ձեռքից, եւ նրանք ուղղվեցին Ռուկինյան գյուղարվարձան: Օրը պարզ էր: Նրանք գնում էին՝ չտրորելով խոտերն ու փոշի չբարձրացնելով: Ասես ոտնաթաթերի վրա: Ասես հանգուցյալի սենյակ էին մտնում: Ռուկինյան գյուղարվարձանի մոտերքում Քրիստափորը գրպանից գինու քացախի մեջ թրջած գիհի արմատ հանեց եւ կոտրեց երկու մասի: Կեսն իրեն վերցրեց, կեսը տվեց Արսենիին:

Ահա, պահիր բերանիդ մեջ: Աստծո զորությունը մեզ հետ է:

Գյուղը նրանց դիմավորեց շնահաչով ու կովերի բառաչով: Քրիստափորը լավ էր իմանում այդ ձայները, դրանք չէր կարելի ոչնչի հետ շփոթել: Դա ժանտախտի երաժշտությունն էր: Պապ ու թոռ դանդաղ գնում էին փողոցով, բայց միայն շներն էին պոկվում շղթաներից նրանց ընդառաջ: Մարդ չկար: Երբ նրանք մոտեցան Արսենիի տանը, Քրիստափորն ասաց.

Էլ մի՛ գնա: Այնտեղ օդի մեջ մահ կա:

Տղան գլխով համաձայնության նշան արեց, քանի որ տեսավ մահ-

վան թեւերը: Դրանք տարածվել էին տան վրա: Տանիքի պպածիու վրա թպրտում էին քլթքլթացող օդից:

Քրիստափորը խաչակնքվեց եւ մտավ բակ: Ծրջափակոցի մոտ պառկած էին ցորենի տռզած հասկերը: Խրճիթի դուռը բաց էր: Օգոստոսյան լույսի ներքո այդ խորաբաց ուղղանկյունը չարագուշակ տեսք ուներ: Օրվա բոլոր գույներից նա իր համար ընտրել էր միայն սեւը: Ամբողջ հնարավոր սեւությունն ու ցուրտը: Ընկնելով այստեղ, ինչպե՞ս կարելի է կենդանի մնալ: Երկմտելով՝ Քրիստափորը քայլ արեց դեպի դուռը:

Կանգնի՛ր, լսվեց մութի միջից:

Այդ ձայնը հիշեցրեց իր որդու ձայնը: Բայց միայն հիշեցրեց: Ինչ-որ մեկը, ո՛չ իր որդին, օգտվում էր այդ ձայնից: Քրիստափորը չհավատաց նրան եւ մի քայլ եւս արեց դեպի դուռը:

Կանգնի՛ր, կսպանե՛մ:

Մութի մեջ ինչ-որ բան դղրդաց եւ, ասես ինչ-որ մեկի ձեռքից ընկնելով, դռան կողափայտին հարվածեց մուրճը:

Թող որ ձեզ մի լավ նայեմ, խռպոտ ձայնով ասաց Քրիստափորը:

Նրա կոկորդը սեղմվեց:

Մենք արդեն մեռած ենք, ասաց ձայնը: Եվ անհաղորդ ենք ողջերին: Մի՛ մտիր, որպեսզի Արսենին ապրի:

Քրիստափորը կանգ առավ: Նա լսում էր, թե ինչպես է խփում քնեբակը, եւ հասկացավ, որ որդին ճշմարիտն է ասում:

Ցո՛ւր, մթության միջից տնքաց մայրը:

Մայրի՛կ, ճչաց Արսենին եւ նետվեց խրճիթ:

Նա չանի միջից կռճեց ջուրն ու տվեց նստարանից վայր ընկած մորը: Համբուրեց մոր դոնդողանման դեմքը, բայց նա ասես քնած լիներ եւ չէր կարողանում աչքերը բացել: Նա ջանում էր հատակից կտրել մորը եւ ափերով էր զգում նրա անութների բորբոքված հանգույցները:

Որդիս, ես այլեւս չեմ կարող արթնանալ...

Հոր ձեռքը բռնեց Արսենիին եւ շպրտեց դեպի շեմը: Շեմից նրան քարշ տվեց Քրիստափորն արդեն: Արսենին այնպես էր ճչում, ինչպես չէր ճչացել ոչ մի անգամ, սակայն գյուղարվարձանում նրան ոչ ոք չէր լսում: Երբ լռություն տիրեց, նա շեմի վրա հանկարծ տեսավ հոր մեռած մարմինը:

- Ե -

Այդ օրվանից Արսենին տեղափոխվեց Քրիստափորի մոտ:

Տղան անկասկած օժտված է,- մի անգամ գրի առավ Քրիստափորը: Նա ամեն ինչ իսկույն ըմբռնում է: Ես նրան խոտաբույսերի գործը սովորեցրի, եւ դա ամբողջ կյանքում կկերակրի նրան: Ես նրան կփոխանցեմ բազում այլ գիտելիքներ, որպեսզի ընդարձակվի նրա մտահորիզոնը: Թող ճանաչի, ինչպիսին է աշխարհն արարված:

Հոկտեմբերյան աստղառատ մի գիշեր Քրիստափորը տղային տարավ մարգագետին եւ ցույց տվեց նրան ընդերքների զուգամիտումը՝ երկնային եւ երկրային:

Ի սկզբանէ արար Տէր զերկին եւ զերկիր: Նրա համար արարեց, որպեսզի մարդկությունը չկարծի, թե երկրի եւ երկնի երեւույթն անսկիզբ է:

Եվ մեկնեաց Աստուած ի մեջ լուսոյն եւ ի մեջ խաւարին: Եւ կոչեաց Աստուած զլոյսն տիւ եւ զխաւարն կոչեաց գիշեր:

Խոտը քնքշորեն հպվում էր նրանց ոտքերին, իսկ գլխավերեւում թռչում էին ասուպները: Արսենիի ծոծրակն զգում էր Քրիստափորի ձեռքի ջերմությունը:

Եւ արար Աստուած զարեւ յիշխանութիւն տուընջեան եւ զլուսին եւ զաստղերս յիշխանութիւն գիշերոյ:

Հսկայակա՞ն են լուսատուները, հարցրեց տղան:

Առհասարակ, այո... Քրիստափորը կնճռոտեց ճակատը: Լուսնի շրջագիծը կազմում է հարյուր քսան հազար փուլ, իսկ Արեւի շրջագիծը՝ մոտավոր, իհարկե, երեք միլիոն փուլ: Էդ նրանք միայն այդպես փոքր են թվում, բայց նրանց իսկական չափերը դժվար է նույնիսկ պատկերացնել: Ել բարձր սարն ու նայիր դաշտին: Այստեղ արածում է հոտը, նրանք քո աչքին թերեւս մրջյուններ երեւան: Այդպես էլ լուսատուները:

Հաջորդած մի քանի օրերին նրանք խոսում էին լուսատուների եւ նախանշանների մասին: Քրիստափորը տղային պատմում էր երկակի արեւի մասին, որն իր կյանքում տեսել էր ո՛չ մեկ անգամ. նրա երեւումը արեւելքում կամ արեւմուտքում խորհրդանշում է անձրեւ ու քամի: Երբեմն արեւը մարդկանց թվում է արյունոտ, բայց դա տեղի է ունենում մառախուղների գոլորշացումից եւ բարձր խոնավություն ցուցանում:

Երբեմն էլ արեգակնային ճառագայթները նման են վարսերի (Քրիստափորը շոյեց Արսենիի մազերը), իսկ ամպերն ասես վառվում են, իսկ դա՝ քամի է բերում եւ սառնամանիք: Իսկ եթե ճառագայթները հակվում են դեպի արեւը, իսկ ամպերն արեւամուտին սեւանում են՝ թխպոտ եղանակ: Երբ մայրամուտին արեւը մաքուր է՝ խաղաղ եւ պայծառ եղանակ: Պարզ եղանակ է ցուցանում նաեւ եռօրյա լուսինը, եթե այն մաքուր է ու բարակ: Իսկ եթե այն բարակ է, բայց, կարծես թե կրակե, ուժեղ քամի, իսկ եթե արդեն երկու եղջյուրները լիալուսնի հավասար են եւ հյուսիսային եղջյուրը մաքուր՝ արեւմտյան քամիների հանդարտություն: Լիալուսնի լրիվ մթագնման դեպքում անձրեւներ սպասիր, իսկ երկու կողմերից բարակելու դեպքում՝ քամի, իսկ լուսնի շուրջ պսակը՝ նշան է թխպոտ եղանակի, մգացող պսակը՝ ծանրագույն վատ եղանակի:

Քանի որ տղային դա բացահայտորեն հետաքրքրում է, իսկ ինչո՞ւ նրան այդ մասին չպատմեմ, ինքն իրեն հարցրեց Քրիստափորը:

Մի անգամ նրանք եկան լճափ, եւ Քրիստափորն ասաց.

Տերը հրամայել է, որպեսզի ջրերը ձկներ բազմացնեն, խորքերում լողացող, եւ թռչուներ, որ ճախրեն երկնային խորքերում: Եվ նրանք, եւ այլք ստեղծված են լողալու իրենց յուրահատուկ տարերքներում: Ասված նաեւ հրամայել է, որ երկիրը ծնի կենդանի հոգիներ՝ չորքոտանիներ: Մինչեւ նախամեղքը գազաններն Ադամին ու Եվային հնազանդ էին: Կարելի է ասել, սիրում էին մարդկանց: Իսկ այժմ, միայն հազվադեպ, ամեն բան կարծես հունից դուրս է եկել:

Քրիստափորը թփթփացրեց իրենց ետեւում վախից կուչ եկած գայլի վզատակին:

Եվ եթե քննենք, ապա թռչունները, ձկներն ու գազանները շատ բանով նման են մարդկանց: Դրանում է, տեսնում ես, չէ՞, մեր համընդհանուր միասնությունը: Մենք սովորեցնում ենք մեկմեկու: Կորյունը, Արսենի, միշտ մահացած է ծնվում մայր առյուծից, բայց երրորդ օրը գալիս է առյուծն ու նրան կյանք է ներշնչում: Դա մեզ հիշեցնում է այն մասին, որ նաեւ մարդու երեխան, մինչեւ մկրտվելը, մեռյալ է հավերժության համար, իսկ մկրտության հետ՝ կյա՛նք է առնում: Իսկ կա նաեւ ձուկ-բազմոտնուկը: Որ գույնի քարի մոտ լողա, այդպիսի գույնի էլ ինքն է դառնում. Սպիտակի մոտ՝ սպիտակ, կանաչի մոտ՝ կանաչ: Այս-

պիսին են, զավակս, նաեւ օտար մարդիկ. քրիստոնյաների հետ նրանք քրիստոնյա են, անհավատների հետ՝ անհավատ: Կա նաեւ փյունիկ թռչունը, որը ոչ ամուսին ունի, ոչ երեխաներ: Նա ոչինչ չի ուտում, բայց թռչում է լիբանանյան մայրիների միջեւ եւ իր թեւերը լցնում նրանց անուշաբույրով: Երբ ծերանում է, այդժամ թռչում է երկնի բարձունքներում եւ բոցավառվում երկնային կրակից: Եվ, իջնելով վար, այրում է իր բույնն ու ինքն էլ է վառվում եւ իր բնի մոխրի մեջ վերածնվում իբրեւ որդ, որից էլ ժամանակի ընթացքում հասակ է առնում փյունիկ թռչունը: Այդպես էլ, Արսենիե, հանուն Քրիստոսի ի չարչարանք գնացածները վերածնվում են ամբողջ փառքով Երկնային Արքայության համար: Եվ կա վերջապես խառադրիոս թռչունը, ամբողջովին սպիտակ: Ու երբ մեկնումեկը տկարանում է, խառադրիոսը մեզ խորհել է տալիս՝ կապրի՞, թե՞ կմեռնի: Եթե նա պիտի մեռնի, խառադրիոսը թեքում է երեսը, իսկ եթե ողջ է մնալու, ապա խառադրիոսը հրճվանքով թռչում է օդ, դեպի արեւը, եւ բոլորը հասկանում են, որ Հիսուս Քրիստոս խաչափայտ բարձրացավ եւ մեզ համար սպառեց մաքրագուն արյունն Իր հանուն մեր մեղքերի քավության:

Իսկ որտեղի՞ց գտնենք այդ թռչնին, հարցրեց տղան:

Դո՛ւ դարձիր այդ թռչունը, Արսենիե: Չէ որ մի փոքր էլ թռչել գիտես:

Տղան մտախոհ գլխով արեց, եւ նրա լրջությունից ազդվեց Քրիստափորը:

Ափից քամին վերջին տերեւներն էր փչում-լցնում լճի սեւ ջրերի մեջ: Տերեւները խառնաշփոթում սահում էին թխաթույր խոտերի վրայով, իսկ հետո դողդողում լճի ծածանքում: Ավելի ու ավելի հեռու լողում: Հենց ջրի մոտ երեւում էին ձկնորսների սապոգների խոր հետքերը: Հետքերը լիքն էին ջրով եւ թվում էին մշտնջենական: Մեկընդմիշտ թողնված: Դրանցում նույնպես լողում էին տերեւները: Ձկնորսների նավակը ճոճվում էր ափից ոչ հեռու: Ցրտից կարմրած ձկնորսների ձեռքերը քաշում էին ուռկանը: Նրանց ճակատներն ու մորուսները թացացել էին քրտինքից: Նրանց հագուստի թեւքերը ծանրացել էին ջրից: Ուռկանում թպրտում էր միջին մեծության մի ձուկ: Քայլելով աշնանային աղոտ արեւի տակ՝ նա նավակի շուրջ ցայտքեր էր նետում: Ձկնորսները գոհ էին որսից եւ իրար ինչ-որ բան էին գոռգոռում բարձր: Նրանց բառերն Արսենին չէր զանազանում: Նա ձկնորսների ոչ մի բա-

ոը չէր կարող կրկնել, թեեւ լսում էր հստակ: Դեն նետելով իմաստային թաղանթը, բառերը դանդաղ վերածվում էին հնչյունների եւ տարրալուծվում տարածության մեջ: Երկինքն անգույն էր, որովհետեւ բոլոր գույները տվել էր ամռանը: Վառարանի ծխի հոտ էր գալիս:

Արսենին խնդություն զգաց այն բանից, որ, գալով տուն, իրենք նույնպես վառարանը կվառեն եւ հաճույք կզգան աշնանային յուրահատուկ հարմարավետությունից: Նրանք վառում էին, ինչպես եւ իրենց շուրջբոլորի մարդիկ, այն էլ՝ ինչպես: Վառելուց հետո խրճիթի պատերը տաքանում էին: Հաստ գերանները երկար էին պահում տաքությունը: Ավելի երկար էր պահում կավածեփ վառարանը: Վառարանի հեռապատի մոտ շարված քարերը շիկացել, կարմրել էին: Ծուխը ելնում բարձր առաստաղի տակ եւ մտածկոտ դուրս էր գալիս դռան վերեւում բացված ծխնելույզից: Ծուխը Արսենիին թվում էր կենդանի էակ: Նրա անշտապ ելքը հանգստացնում էր: Ծուխն ապրում էր վերին՝ խրճիթի մրից սեւացած մասում: Ցածինը պաճուճազարդ էր ու լուսավոր: Խրճիթի վերին եւ ցածի մասերը բաժանված էին լայն լաստակներով, որոնց վրա վերեւից սորում էր մուրը: Ճիշտ վառելու դեպքում լաստակներով ցած ծուխը չէր իջնում:

Վառարան վառելը Արսենիի պարտականությունն էր: Փայտանոցից նա բերում էր կեչու ճղոններն ու դարսում վառարանի մեջ տնակածեւ: Ճղոնների արանքում խոթում էր ջախը: Կրակը բորբոքում էր մարմրող ածուխների միջոցով: Դրանք հանում էր բնիկներից՝ վառարանի հատուկ գրպանից, որտեղ կպչան ածուխները պահվում էին մոխրի շերտի տակ: Նա ածուխները չոր տերեւների մեջ էր հորում եւ ամբողջ ուժով փչում: Տերեւները դանդաղ փոխում էին գույնը: Վառվելով ներսի կողմով, դրանք դեռ պատկերում էին անտարբեր չորացումը, բայց ամեն ակնթարթը նրանց համար ավելի էր դժվարանում, կրակը բռնում էր հանկարծակի եւ միանգամից բոլոր կողմերից: Տերեւներից հուրը նետվում էր ջախի վրա, ջախից՝ ճղոնների: Ճղոնները սկսում էին վառվել կողքերից: Նրանք խոնավ էին, ապա ճթճթում էին, փունջ-փունջ կայծեր կրակում: Կրակե բուքի մեջ երեխան տեսավ Փյունիկ թռչնին եւ ցույց տվեց իր կողքին նստած գայլին: Գայլը մերթընդմերթ կկոցում էր աչքերը, բայց անհասկանալի էր, իրականում տեսնու՞մ էր թռչնին: Կասկածանքով նայելով գայլին՝ Արսենին հաղորդեց Քրիստափորին.

Նա անբնական է նստած, ես կասեի՝ լարված: Ըստ իս, նա պարզապես վախենում է իր կաշվից:

Տղան իրավացի էր: Վառարանից դուրս թռչող կայծերի փնջերը գայլին որոշակի տագնապ էին հաղորդում: Միայն երբ կրակն անցավ հավասարաչափ վերջնայրման, գայլը մեկնվեց հատակին ու շնավարի գլուխը դրեց թաթերին:

Մենք պատասխանատու ենք նրանց համար, ում ընտելացրել ենք, շոյելով գայլին ասաց Քրիստափորը:

Նայելով վառարանի մեջ, Արսենին երբեմն տեսնում էր իր դեմքը: Այն բոլորել էին ալեհեր մազերը՝ թնջուկով հավաքված ծոծրակին: Դեմքը պատված էր կինճիռներով: Չնայած մեծ տարբերությանը, տղան հասկանում էր, որ դա իր սեփական արտացոլանքն է: Միայն թե՝ շատ տարիներ անց: Այլ իրավիճակներում: Դա արտացոլանքն էր նրա, ով կրակի մոտ նստած, տեսնում է դեմքը լուսագես տղայի եւ չի ուզում, որպեսզի ներս մտնողը նրան անհանգստացնի:

Ներս մտնողը դռփում է շեմին եւ, մատը դնելով շուրթին, ինչ-որ մեկին շշնջում ուսի վրայով, թե ամենայն Ռուսիո Բժիշկն այժմ զբաղված է: Կրակն է դիտում:

Ներս թող նրան, Մելետի, ասում է ճգնավորը չշրջվելով:

Ի՞նչ ես ուզում, կինարմատ:

Ապրել կուզեմ, Բժիշկ: Օգնական եղիր:

Իսկ մեռնել չե՞ս ուզում:

Կան, որ մեռնել են ուզում, պարզաբանում է Մելետին:

Որդի ունեմ, խղճա նրան:

Այսպիսի՞: Ճգնավորը ցույց է տալիս վառարանի շուրթը, որտեղ բոցերի ուրվագծերում կարելի է կռահել տղայի կերպարանքը:

Ջուր ես, իշխանուհի, ծունկի իջնում (Մելետին հուզված է եւ եղունգներն է կրծում), չէ՛ որ նա այդ չի սիրում:

Ճգնավորը հայացքը կտրում է կրակից: Մոտենում է ծունկի իջած իշխանուհուն եւ նրա կողքին ինքն էլ է ծունկի իջնում: Մելետին, շրջվելով, դուրս է ելնում: Ճգնավորը բռնում է իշխանուհու կզակից, նայում նրա աչքերին: Ձեռնափի երեսով սրբում նրա արցունքները:

Քո մոտ, կինարմատ, ուռուցք կա՝ գլխումդ: Դրանից էլ վատանում է տեսողությունդ: Եվ բթանում լսողությունդ:

Գրկում է նրա գլուխն ու սեղմում իր կրծքին: Իշխանուհին զգում է նրա սրտի զարկերը: Ծանրացած ծերունական շնչառության: Նրա շապկի միջով զգում է կրծքախաչի սառնությանը: Նրա կողերի չորությունը: Իր համար էլ զարմանալի է, որ ինքն այդ ամենը տեսնում է: Փակ դռների ետեւում Մելետին մարխեր է կտրում: Նրա դեմքին արտահայտություն չկա:

Հավատա Տիրոջն ու Նրա Կույս Մորը եւ օգնություն հայցիր: Ձգնավորն իր չոր շուրթերը հպում է նրա ճակատին: Գնա խաղաղությամբ եւ այլեւս մի տխրիր:

Ինչո՞ւ ես արտասվում, Արսենիե:

Ես լաց եմ լինում ուրախությունից:

Արսենին լուռումունջ շրջվում է դեպի գայլը: Գայլը լիզում է նրա արցունքները:

-Զ -

Մարդն արարված է հողից: Եվ հող կդառնա: Բայց մարմինը, որը տրված է նրան կյանքի ժամանակում, սքանչելի է: Դու պիտի այն ճանաչես, որքան հնարավոր է՝ լավ, Արսենիե:

Այսպես խոսեց Քրիստափորը զմռսելով Անդրոն Նավգորոդցուն՝ հանգուցյալին հայրենիք ճանապարհելուց առաջ: Ռուկինյան գյուղարվարձանի բաղնիքներից մեկում Քրիստափորը Անդրոնի մաշկին մայրու խեժ էր քսում՝ միախառնած մեղրի եւ աղի հետ: Քրիստափորի հպումից Անդրոնը ցնցվում էր ամբողջ մարմնով եւ ողջ էր թվում: Այդ տպավորությունն ուժեղացնում էր հանգուցյալի մեծ անդամը, որն իբր չէր համապատասխանում ցածրահասակ մարդուն, թեեւ Արսենիին թվում էր, թե ամրակազմ Անդրոնը հիմա ոտքի կկանգնի, շնորհակալ կլինի Քրիստափորից հոգս պատճառելու համար եւ դուրս կգա մաքուր օդ: Բայց Անդրոնը ոտքի չէր կանգնում: Գիշերային ծեծկռտուքից հետո նա պառկած էր ջախջախված գանգով եւ թիկունքի կողմից առաջին դիապուտերով: Եկվոր Անդրոնին հետաքրքրում էին գյուղարվարձանի աղջիկները (դեռեւս երեկ): Դա էլ ծեծկռտուքի պատճառ դարձավ: Այսօր Անդրոնը պատրաստվում է իր վերջին ճանապարհին դեպի Նովգորոդ:

Մարդկային փոքրիկ մարմնում (ասում էր Քրիստափորը), ինչպես արեւը ջրի կաթիլում, արտացոլվում է անսահման գերիմաստնությունն Աստուծո: Ամեն մի օրգան հղացված է մանրազնին: Սիրտն, օրինակ, սնում է ամբողջ մարմինն արյունով, եւ նրանում, ինչպես ասում են, կենտրոնացած են մեր զգացմունքները, ահա թե ինչու է նա հուսալի պահպանված կողոսկրերով: Ատամները՝ ծամում են, դրա համար էլ ամուր ոսկրից են, լեզուն՝ ճանաչում է համը, եւ դրա համար էլ փափուկ է եւ ծակոտկեն, ինչպես սպունգը, ականջն ստեղծված է խխունջի տեսքով, որպեսզի որսա թռչող հնչյունները: Ի դեպ, ցցված ականջները (Քրիստափորը մատը տարավ Անդրոնի ականջով), նշան են դատարկախոսության: Բայց կա նաեւ ներքին ականջը, որն անտեսանելի է: Նա տանում է հնչյուններն արտաքին ականջից ուղեղին, եւ ուղեղը հնչյունները վերածում է խոսքի: Այն՝ ամբողջ մարմնի արքան է եւ գտնվում է ամենավերեւում, քանի որ երկրի բոլոր անասուններից միայն մարդն է - բանական եւ ուղղաքայլ: Նրա անմարմին միտքը, գտնվելով մարմնում, համբառնում է երկինք եւ հասնում կատարելությանն այս աշխարհի: Խելքը՝ հոգու աչքն է: Երբ այդ աչքերը վնասվում են, հոգին կուրանում է:

Ի՞նչ է հոգին, հարցրեց Արսենին:

Այն, ինչը Տերը ներշնչում է մեր մարմնում, այն, ինչով տարբերում է մեզ քարերից եւ բույսերից: Հոգին մեզ կենդանացնում է, Արսենիե: Նրան նմանեցնում եմ կրակին, որ դուրս է ժայթքում երկրային մոմից, սակայն չունի երկրային բնություն, որ ծգտում է վեր դեպի համաբնույթ տարերքները:

Եթե հոգին է կենդանացնում, նշանակում է՝ այն ունեն նաեւ կենդանիներ՞ը: Արսենին ցույց տվեց իր կողքին կանգնած գայլին:

Այո, կենդանիները հոգի ունեն, բայց այն համաբնույթ է իրենց մարմնին եւ ամփոփված իրե՛նց արյան մեջ: Եվ նկատի առ՝ մինչեւ ջրհեղեղը մարդիկ կենդանիներին չէին ուտում՝ խնայելով նրանց հոգին, քանզի կենդանու մարմնի հետ հոգին մեռնում է: Իսկ մարդկային հոգին այլաբնույթ է եւ մարմնի հետ չի մեռնում, քանի որ հոգին մարդկային՝ այլաբնույթ է, բայց հենց Աստծո բարեշնորհին է արժանանում:

Ի՞նչ է սպասվում մարդկային մարմնին:

Մեր մարմինը աճյունահող կդառնա: Սակայն Աստված, արարելով

մարմինն աճյունահողից, մեր մարմինները տարածեց համապիտուռ: Չէ որ, միայն թվում է, թե մարմինը քայքայվում է անհետ, այն խառնվում է մյուս տարրերի հետ՝ դառնալով հող, գետ, խոտ: Մեր մարմինը, Արսենիե, ասես թափված սնդիկ լինի, որն ընկած է, մասնատված՝ մանր գնդիկների, հողին, բայց հողի հետ չի խառնվում: Ինքն իրեն ընկած է մնում այնքան ժամանակ, քանի չի եկել ոմն գիտուն եւ չի հավաքել վերստին անոթի մեջ: Այդպես էլ Բարձրյալը նորեն հավաքում է մեր քայքայված մարմինները համընդհանուր հարության համար:

Քրիստափորի ջանքերի շնորհիվ Անդրոնի մարմնի քայքայումը կասեցվեց: Մարմինը փայլատ շողարձակում էր եւ մայրու հոտ արձակում: Այն աներեւակայելի սպիտակ էր: Բացառություն էին դեմքը եւ ձեռքերը՝ մինչեւ արմունկները, որոնք պահպանում էին ոչ վաղուցվա արեւահարության հետքերը: Ավարտելով զմռսող քսուկի մաքրումը՝Քրիստափորն սկսեց բոլորակի փաթաթել քաթանե ժապավեններով: Ուժեղ ճարճատյունով նա պոկում էր դրանք իրեն բերված կտավի կտորից, թաթախում քսուկի մեջ եւ պինդ սեղմում հանգուցյալի մարմնին: Ադրոնը չէր դիմադրում: Կիսագոց կոպերը նրան ծաղրական տեսք էին հաղորդում եւ ինչ-որ անզուսպ հանդուգնություն: Թվում էր, թե Անդրոնը ծիծաղում է քրտնաթոր Քրիստափորի ջանքերի վրա: Իր ողջ կերպարանքով կարծես հասկացնել տալիս, որ դե մինչեւ Նովգորոդ նա ցանկացած իրավիճակում կհասնի:

Քրիստափորը չէր նայում Անդրոնի դեմքին: Նա փաթաթում էր մարմինը ժապավեն առ ժապավեն՝ ամուր կապելով ծայրերը:

Քանի որ խոսք եղավ մարմնի մասին, ասաց Քրիստափորը,ես քեզ կպատմեմ, թե ինչպես են սաղմնավորվում երեխաները: Վերջիվերջո, դու ինքդ էլ արդեն երեխա չես, քո ժամանակն է իմանալու, որ Ադամի ու Եվայի մեղսագործությունից ի վեր մարդիկ այլեւս չեն արարվում Տիրոջ կողմից, այլ իրենք են ծնում իրենց երեխաներին: Որի հետեւանքով էլ նրանք մեռնում են, որովհետեւ ծնունդյան շնորհի հետ ձեռք բերեցին մահվան շնորհ: Մանուկը հղացվում է տղամարդու սերմից եւ մոր արյունից: Տղամարդու սերմն ամրություն է տալիս ոսկորներին ու ջղերին, իսկ կանացի արյունը՝ մարմնի փափկություն: Արյունը, ինչպես գիտես, կարմիր է եւ հոսում է անոթներով, իսկ տղամարդու սերմը գտնվում է այստեղ (ցույց տալով Անդրոնի խոշոր ձվերը՝ Քրիստափո-

ը դրանք կապեց ազդրին), եւ այն սպիտակ գույն ունի:

Արսենին գիտեր, թե ինչ գույնի է սերմը, բայց Քրիստափորին այդ մասին չասաց: Նա այդ մասին խոսեց ճգնավոր Նիկանդրոսին խոստովանելիս: Ձեռքերդ պահիր ծածկոցի վրա, խորհուրդ տվեց ծեր ճգնավոր Նիկանդրոսը:

Դա եղել է ոչ թե տանը, այլ գերեզմանոցում, ասաց Արսենին:

Առը հա, շվվացրեց ճգնավորը: Եվ դեռ գերեզմանոցում: Չէ՞ որ այնտեղ կենդանի մարդիկ են պառկած:

Ես տեսա միայն մեռյալներին:

Աստծո համար բոլորը ողջ են:

Արսենին շրջվեց.

Իսկ ես սկսել եմ մահից վախենալ:

Ճգնավորը շոյեց Արսենիի մազերը: Ասաց.

Մեզանից ամեն ոք կրկնում է Ադամի ճանապարհը եւ անմեղության կորստի հետ գիտակցում, որ մահկանացու է: Լաց եւ աղոթիր, Արսենիե: Եվ մի վախեցիր մահից, որովհետեւ մահը միայն բաժանման դառնությունը չէ: Դա նաեւ հրճվանքն է ազատագրման:

- Է -

Արսենին կարդալ սովորեց վաղ: Տառերը, որ իրեն ցույց էր տալիս Քրիստափորը, մտապահեց մի քանի օրում եւ շուտով, առանց դժվարության դասավորում էր բառերի մեջ: Սկզբում նրան խանգարում էր, որ բառերը գրքերի մեծամասնության մեջ չէին զատվում մեկը մյուսից, այլ գնում էին համաշարք: Մի անգամ Արսենին հարցրեց՝ ինչո՞ւ բառերը չեն գրվում անջատ:

Իսկ մի՞թե նրանք անջատ են արտասանվում, իր հերթին նրան հարցրեց Քրիստափորը: Ես քեզ ավելին ասեմ: Երբեմն արդեն էական էլ չի, ինչպես եւ ում կողմից է բառն ասված: Կարեւորը լոկ այն է, որ ասված է: Վատթար դեպքում՝ մտածված:

Արսենիի առաջին եւ սիրելի ընթերցումները եղան Քրիստափորի գրառումները կեչեկեղեւի վրա: Դրա պատճառները մի քանիսն էին: Կեչեկեղեւին գրառվածները գրված էին խոշոր, հստակ ձեռագրով: Դրանք չափերով մեծ չէին: Դրանք ամենահասկանալի ընթերցվելիքն

էին, որքանով խրճիթում փռված էին ամենուր: Ի վերջո, Արսենին տեսավ, թե ինչպես են դրանք պատրաստվում:

Գարնանը, ծառահյութերի շարժան ժամանակ, Քրիստափորը զբաղված էր կեչեկեղեւ նախապատրաստելով: Նա բնից խնամքով պոկում էր այն լայն շերտերով եւ մի քանի ժամ եփում աղաջրում: Կեչեկեղեւը փափուկում ու կորցնում իր փխրունությունը:

Մշակելուց հետո Քրիստափորը կտրատում էր կեչեկեղեւը հավասար թերթերի: Հիմա այն պատրաստ էր օգտագործման՝ լիովին փոխարինելով թանկարժեք թղթին:

Քրիստափորը գրելուն հատկացվելիք ժամանակ չուներ: Նա կարող էր գրել առավոտյան, կեսօրին եւ երեկոյան: Երբեմն, երբ մի կարեւոր միտք էր գալիս, ելնում եւ գրի էր առնում գիշերը: Քրիստափորը ընթերցվածը գրի էր առնում գրքերում. Սողոմոն թագավորն ուներ յոթ հարյուր կին, երեք հարյուր հարճ եւ ութ հարյուր մատյան: Գրի էր առնում իր սեփական դիտարկումները. Սեպտեմբերի տասներորդ օրը ընկավ Արսենիի ատամներից մեկը: Գրի էր առնում բուժիչ աղոթքներ, դեղերի բաղադրատոմսեր, խոտերի նկարագիրը, տեղեկություններ բնական անոմալիաների մասին, եղանակի նշանները եւ համառոտ հրահանգչական ասույթներ՝ չարացած ամուսնու լռությունը աչք փակեց շան կծոցի վրա: Կեչեկեղեւի երեսին խազում էր տառերը ոսկրե գրիչով:

Քրիստափորը գրում էր ոչ այն բանի համար, որ վախենում էր, թե ինչ-որ բան կմոռանա: Նրան թվում էր, թե գրառված բառը կարգավորում է աշխարհը: Կանգնեցնում է նրա ընթացականությունը: Թույլ չի տալիս հասկացությունները ջնջվեն: Հատկապես դրա շնորհիվ էր Քրիստափորի հետաքրքրությունների շրջանակը լայն: Ըստ նրա պատկերացման այդ շրջանակը պիտի համապատասխաներ աշխարհի լայնությանը:

Իր գրառումները Քրիստափորը սովորաբար թողնում էր այնտեղ, ինչի վրա անում էր՝ նստարանին, վառարանին, վառելափայտին: Չէր վեր առնում, երբ դրանք փլվում էին հատակին՝ աղոտ կանխատեսելով դրանց հետագա հայտնաբերումը մշակութային մի այլ շերտում: Քրիստափորը հասկանում էր, որ գրված բառն այդպիսին է մնում ընդմիշտ: Հետեւանքում ինչ էլ պատահեր, լինելով գրված, այդ բառն արդեն կա-

յացած էր:

Հետեւելով Քրիստափորի տեղաշարժերին, Արսենին արդեն գիտեր, որտեղ գտնի գրառումները: Լինում էր՝ հայտնաբերված գրության տեղում հենց նույն օրը գտնվում էր ուրիշը, այն էլ՝ ո՛չ մեկը: Երբեմն պապը Արսենիին թվում էր հավ, ոսկե ձվեր ածող, դրանք պետք էր միայն հասցնել հավաքել: Քրիստափորի դեմքի արտահայտությունից տղան սովորել էր գուշակել նույնիսկ գրառվածի բնույթը: Կիտված հոնքերը թույլ էին տալիս ենթադրել, որ ընթացիկ գրության մեջ մերկացվում էին հերետիկոսները: Խաղաղ ուրախության արտահայտությունն ուղեկցվում էր գերազանցապես հորդորական ասույթներով: Բարձրություններ, ծավալներ եւ տարածություն նշելիս, Քրիստափորն ըստ Արսենիի դիտարկման, քիթն էր քորում մտածկոտ:

Կեչեկեղեւ գրառումները մանուկը կարդում էր բարձրաձայն: Միջնադարում առհասարակ կարդում էին գերազանցապես բարձրաձայն, վատթար դեպքում պարզապես շրթունքներն էին շարժում: Ավելի շատ դուր եկած գրառումները Արսենին դասավորում էր հատուկ զամբյուղի մեջ: Նա ով կխեղդվի ոսկորից, թող օգնության կանչի սուրբ Վլասին: Բարսեղ Մեծն ասում է, թե Ադամը դրախտում գտնվեց քառասուն օր: Մի շնանա կնոջ հետ, քանզի կայրվես կրակներում: Տեղեկությունների բազմազանությունն ապշեցնում էր մանկան երեւակայությունը:

Բայց նրա ընթերցանության շրջանակը կեչեկեղեւ գրառումներով չէր սահմանափակվում: Սրբապատկերներից մեկի տակ՝ կարմիր անկյունում դրված էր Ալեքսանդրականը՝ հինավուրց վիպասքը Ալեքսանդր Մակեդոնացու մասին: Այդ գիրքը երբեմնի արտագրված էր Թեոդոսիոսի կողմից՝ Քրիստափորի պապի: Սույն Թեոդոսիոս մեղապարտն արտագրեց մատյանն այս ի հիշատակ քաջաց, որպեսզի նրանց գործքն անհիշատակ չկորչի: Այսպես էր առաջին թերթի վրա դիմում Թեոդոսիոսն իր հետնորդներին: Ի դեմս Արսենիի նա գտավ իր ամենաերախտագետ ընթերցողին:

Արսենին սրբապատկերն զգույշ շրջեց կողքի եւ երկու ձեռքով գիրքը հանեց գրակալից: Փչեց կազմի փոշին եւ ձեռքը տարավ նրա սեւացած մաշկով: Կազմի վրա փոշի չկար, բայց Արսենին տեսել էր, որ այդպես է անում Քրիստափորը: Ապա տղան բռնեց փականներից եւ դրանք շրխկացրեց խաղաղ պղնձաձայն: Ահա ես՝ Թեոդոսիոսը... գրու-

թյան տակ տեղավորված էր Ալեքսանդրի դիմանկարը՝ կատարված նախանախապապի կողմից: Հերոսը նստած էր անհարմար դիրքով, գլխին՝ արքայական պսակ:

Ալեքսանդրի վարքն Արսենին ընթերցում էր մշտապես: Նա կարդում էր նստած՝ նստարանին եւ պառկած՝ վառարանի վրա, ձեռքերը՝ սեղմած ծնկների միջեւ եւ գլուխը հակած ձեռնափերին, առավոտ եւ երեկոյան: Երբեմն՝ գիշերը, մարխի լույսի տակ: Քրիստափորը չէր առարկում. նրան դուր էր գալիս, որ տղան շատ է ընթերցում: Ալեքսանդրի վարքի առաջին իսկ բառերից գայլը մոտ եկավ Արսենիին: Տեղավորվեց նրա ոտքերի մոտ եւ լսում էր արտասովոր պատմությունը: Արսենիի հետ միասին ուշադիր հետեւում էր մակեդոնացի թագավորի կյանքի իրադարձություններին:

Այսպես, պարզվեց, որ, ժամանելով Արեւելք, Ալեքսանդրն այնտեղ հայտնաբերեց վայրի մարդկանց: Նրանց հասակը երկու սաժեն էր, իսկ գլուխները՝ (Արսենիի ձեռքը գայլի գլխի վրա է) փոչոտ: Վեց օր անց անապատի խորքում Ալեքսանդրի զորաբանակը հանդիպեց զարմանալի մարդկանց, որոնցից ամեն մեկը վեց ձեռք ուներ ու վեց ոտք: Ալեքսանդրը շատերին սպանեց, իսկ շատերին ողջ-ողջ բռնեց: Նա ուզում էր նրանց բերել մարդաբնակ աշխարհ, բայց ոչ ոք չգիտեր, ինչ են ուզում այդ մարդիկ, եւ նրանք բոլորը մեռան: Մրջյուններն այդ հողում այնպիսի չափեր ունեին, որ դրանցից մեկը, բռնելով ձիուն, քարշ տվեց իր բույնը: Եվ այդժամ Ալեքսանդրը հրամայեց հարդ բերել եւ կրակի տալ այն, իսկ մրջյունները վառվեցին: Իսկ հետո, վեց օր անց, Ալեքսանդրը մի լյառ տեսավ, որին երկաթյա շղթաներով մարդ էր գամված: Այդ մարդը հազար սաժեն հասակ ուներ եւ երկու հարյուր սաժեն լայնություն: Տեսնելով նրան, Ալեքսանդրը զարմացավ, բայց մոտ գնալ չհամարձակվեց: Եվ մարդն այդ լալիս էր, եւ դեռ չորս օր էլ լսում էին նրա ձայնը: Այդտեղից Ալեքսանդրը եկավ անտառապատ մի տեղանք եւ տեսավ ուրիշ արտասովոր մարդկանց, գոտկատեղից վեր՝ մարդ էին, գոտկատեղից վար՝ ձի: Երբ փորձեց նրանց բերել մարդաբնակ աշխարհ, նրանց վրա սառնաշունչ քամի փչեց, եւ նրանք բոլորը մեռան: Եվ անցավ Ալեքսանդրն այդ վայրով հարյուր օր, եւ մոտեցավ տիեզերքի սահմաններին՝ թախիծ զգալով:

Արսենին փակեց գիրքը, որն ընթերցում էր գերեզմանոցում՝ մայ-

ռամուտի արեւի շողերի ներքո: Դեռ ցուրտ չէր: Քարերը, որ տաքացել էին մի օրվա մեջ, ջերմություն էին ճառագում: Մեկնվելով տապանաքարին, տղան դա զգաց ամբողջ մարմնով: Տապանաքարն անանուն էր:

Ինչո՞ւ գերեզմանաքարերի վրա անուններ չկան, մի անգամ հարցրեց Արսենին:

Որովհետեւ Տիրոջն առանց այդ էլ նրանք հայտնի են, պատասխանեց Քրիստափորը: Իսկ հետագա սերունդներն անունների կարիք չունեն: Հարյուր տարի անց արդեն ոչ ոք չի հիշի, ում են պատկանում: Պատահում է, որ հիսուն տարի անց նաեւ: Իսկ գուցե, նույնիսկ երեսուն տարի անց:

Այդպես հիշում են ամբողջ աշխարհո՞ւմ, թե՞ միայն Ռուկինյան գյուղարվարձանում:

Թերեւս ամբողջ աշխարհում: Սակայն հատկապես՝ Ռուկինյան գյուղարվարձանում: Մենք մարմարե դամբարաններ չենք կառուցում եւ չենք փորագրում անուններ, քանզի մեր գերեզմանոցներին իրավունք է վերապահված դառնալ անտառ կամ դաշտ: Ինչն ուրախալի է:

Նշանակում է մերոնք կա՞րճ հիշողություն ունեն:

Կարելի է եւ այդպես ասել: Միայն թե հիշողությունը չպիտի չափազանց երկար լինի: Դա, գիտես, նույնպես կարեւոր չէ: Չէ՞ որ պետք է ինչ-որ բան մոռանալ: Ես հիշում եմ ահա (Քրիստափորը ցուց տվեց մի մոխրագույն տապանաքար), որ այստեղ հանգչում է Եղիազար Տռանը: Նա ուներեւոր մարդ էր եւ կարող էր ունենալ նման տապանաքար: Բայց ես առանց սրա էլ կհիշեի: Այդ մարդը մի թեթեւ կաղում էր եւ խոսում էր կոկորդային կտրուկ ձայնով: Խոսում էր ընդհատ, երբեմն-երբեմն պապանձվելով, այնպես որ՝ նրա խոսքը նույնպես կաղին էր տալիս: Տառապում էր գազերի ավելցուկից: Բարձր էր տռում, եւ ես նրան երիցուկի թուրմ տվեցի: Տվեցի սամիթի ջուր, ուրիշ գազամուղ միջոցներ: Եվ արգելեցի գիշերը խմել փրփրուն կաթ: Բայց, կովի տեր լինելով, Եղիազարը կաթ սիրում էր չափից դուրս եւ ըմբոշխնում երեկոյան ժամերին: Ինչը փորում քամիներ առաջացրեց: Ու նաեւ Եղիազարը սիրում էր փայտի փորագրությունը: Եվ նրանից լավ Ռուկինյան գյուղարվարձանում ոչ ոք չէր փորագրում, առանձնապես, երբ գործը վերաբերում էր լուսամուտների շրջակալներին: Աշխատելիս ֆսֆսում էր: Խոսքն

ասում էր կիսածայն, կարծես ինքն իրեն: Ձեռնափը շուրթերի վրայով տանելով, ասես կանգնեցնում էր խոսքը: Ասես վախենալով ասածից: Թեեւ նա ոչ մի վտանգավոր բան, եթե քննենք, չէր ասում: Այսպես, դատում էր ծառի հատկությունների մասին, այն մասին, որ մեզ բոլորիս գյուղարվարձանում առանց այդ էլ հայտնի էր. որ կաղնեփայտը՝ պինդ է, իսկ սոճեփայտը՝ փափուկ, եւ, հավատո՞ւմ ես, Արսենիե, դեռ կախված են նրա շրջակալները, իսկ Եղիազարին ոչ ոք չի հիշում: Պատահել է, որ հարցրել եմ մի ջահելի. ո՞վ է այս Եղիազարը: Չի պատասխանել: Դե ծերերն էլ են աղոտ հիշում, որովհետեւ անտարբեր են հիշում, անսեր: Իսկ Տերը հիշում է սիրով, եւ իր հիշողությունից ոչ մի մանրուք բաց չի թողնի, եւ պետք չի Նրան նրա անունը:

Արսենին պառկած է տաք սալաքարին: Պառկած է՝ փորով ցած, նրա կողքին՝ փակ Ալեքսանդրականը: Նրա դեմքին հպվում են դեղին գլուխները հրանունկերի: Խուտուտ է գալիս, եւ նա ժպտում է: Գայլը հազիվ նկատելի դեսուդեն է պոչը շարժում:

Եղիազա՛ր, տռի՛ր, կամացուկ խնդրում է տղան: Թեկուզ մի անգամ: Թող դա քո ազդանշանը լինի այդտեղից:

Եղիազարը լռում է նեղացած:

- Ը -

Տոթ հուլիսյան օրերին սպանեցին ծեր ճգնավոր Նեկտարիային: Ծերունին ապրում էր անտառային ճգնարանում, քիչ հեռու վանքից: Առավոտները նրա ուսերին թռչուններ էին նստում, եւ նա նրանց տալիս էր վանքից բերած հացը: Մահվանից առաջ ճգնավորին կտտանքների ենթարկեցին փողերը գտնելու հաշվարկով, բայց նա փող չուներ: Կար լոկ մի քանի գիրք: Դրանք էլ վերցրին՝ թողնելով ճգնավորի տանջված մարմինը բացատի ճգնարանի մոտ: Հաջորդ օրը մարմինը գտան վանական եղբայրները եւ մտածեցին, թե մահացել է: Մարմնում, սակայն դեռեւս առույգ էր ոգին, բայց մնում էր նրա միակ բառը՝ ներում եմ: Իսկ չարագործները տանջվում էին Ահեղ դատաստանի սպասուներում, շարունակում թրեւել շրջակայքում: Նրանք հարձակվում էին միայնակ ճգնավորների, հեռավոր խուտորների վրա, եւ ոչ ոք չգիտեր, ինչպիսի տեսք ունեն, որովհետեւ ոչ ոք նրանցից ողջառողջ չէր պրծել:

Սակայն մի անգամ նրանք սպանեցին մի մարդու, որ գնում էր իր շան հետ: Հանեցին նրա հագուստներն ու մարմինը նետեցին ճամփի մեջտեղը, իսկ շունը մնաց պահպանելու իր տիրոջը: Եվ գտավ նրան բարեգութ մի մարդ, որ ճամփամերձ պանդոկի տերն էր: Նա աղոթք կարդաց Աստծո ծառայի հանգստության համար,- իսկ նրա անունն Աստված գիտի,- եւ մերկ մարմինը հանձնեց հողին: Շունը, տեսնելով դրսեւորած կարեկցանքը, գնաց նրա ետեւից, ու այդպես էլ մնաց նրա պանդոկում:

Օրերից մի օր պանդոկ մտնել փորձեց ոմն հարբած, եւ շունը կատաղորեն հաչեց՝ չթողնելով ներս մտնել: Եվ երբ այս ամենը կրկնվեց մի քանի անգամ, հիշեցին այդ շան պատմությունը եւ կասկածեցին սատանայական ինչ-որ բան:

Մարդը բռնվեց եւ ենթարկվեց տանջանքների՝ ջրով: Լիճը նետվեց կապկպած ձեռուտով, նա սկսեց սկել, եւ բոլորն արդեն մտածում էին, թե փորձության ենթարկվողը, ինչպես ինքն էր պնդում, անմեղ է, բայց մեկ րոպե անց նա երեւաց լճի ծածանքում եւ լող տվեց, ասես ոչ մի բան չէր եղել: Նա գոռում էր, որ ջրերեսին իրեն պահում է ալկոհոլը, որը թեթեւ է ջրից, բայց բոլորն էին հասկանում, որ նրան պահում է սատանայական ուժը:

Եվ երբ նրա մեղքը հայտնի դարձավ բոլորին, նրան կտտանքների ենթարկեցին շիկացած երկաթով, որին նույնպես չդիմացավ, քանի որ այրվածքներների բնույթից երեւում էր ակնհայտ, որ նա ստում է: Երբ նրան խարանեցին ինչպես որ հարկն է, նա պատմեց, որ մնացած թվով երեք չարագործներին պիտի փնտրել մի լքված խուտորում, այստեղից հինգ վերստ հեռավորության վրա: Հինգ վերստը մի վերստի պես անցան: Ճրջապատեցին խուտորը, որպեսզի ոչ ոք չհեռանար: Առաջին իսկ խրճիթում հայտնաբերեցին երկուսին, գրքերով, որ վերցրել էին ճգնավորից: Մինչեւ կապկպում էին, չնկատեցին, թե ինչպես նրանց սպանեցին: Ետ դարձան ու իմացան, որ սկզբում բռնվածը կտտանքներից մեռել է: Եվ մարդասեր լինելով, թեթեւացած շունչ քաշեցին, որովհետեւ ննջեցյալներին հույս տվեցին Ահեղ Դատաստանի ժամանակ՝ եթե ո՛չ արդարացման (սուրբ մարդու էին սպանել), ապա ներողամտության, որպեսզի նրանց՝ աստ տանջանքներ կրածների տանջանքները, պակասեն անդ:

Բայց չորրորդ չարագործը ազատության մեջ էր: Նրան փորձեցին նաեւ հետագայում բռնել, բայց դա դժվարին գործ էր, որքանով հայտնի չէր նրա տեսքը, ոչ էլ առահասարակ, թե ով է նա:

Ո՞վ է նա, հարցրեց դառնացած Արսենին:

Ռուս մարդը, էլ ո՞վ, պատասխանեց Քրիստափորը: Ուրիշներն այստեղ կարծես թե քարշ չեն գալիս:

Օրերից մի օր, երբ թանձրանում էին մթնշաղերը, նրանք շարժում նկատեցին գերեզմանոցում: Ավելի շուտ՝ զգացին: Լռելյայն գյուղական գերեզմանատնից տագնապ էր փչում նրանց վրա: Փայլկտացող ստվերում Արսենիին ուրվագծվեց մեռյալի ստվերը, բայց Քրիստափորը նրան կոչեց պահպանել ոգու արիությունը: Ծերուկին հայտնի էր, որ ողջերի՛ց պիտի վախենալ: Իրենց հետ մինչ այդ կատարված անհաջողությունները գալիս էին հենց նրանից: Ոչինչ չբացատրելով Արսենիին, նա կարգադրեց աննկատ թողնել տունն ու գնալ գյուղ մարդկանց կանչելու:

Գնանք միասին, պա՛պ: Պետք չի այստեղ մնալ:

Ոչ, ասաց Քրիստափորը, կպցնելով մարխը: Ես պիտի մնամ, որ նա կասկածի տակ չառնի: Գնա՛, Արսենիե:

Արսենին դուրս եկավ:

Մեկ րոպե անց նա նորից երեւաց դռների միջեւ: Թռավ նրանց վրա, ասես քշված կողմնակի ուժից: Այդ ուժն անմիջապես հայտնվեց նաեւ Քրիստափորին: Արսենիի թիկունքում մի ֆիգուր էր կանգնած, եւ ծերուկը նրան ճանաչեց: Դա մահն էր: Նրա անլվա մարմինը գարշահոտ էր արձակում եւ այնպիսի անմարդկային ծանրություն, որից հոգում սարսափ է ծնվում: Որն զգում էր ամենայն կենդանություն: Որից պատուհանի դիմաց վաղաժամ տերեւաթափ էին լինում ծառերը: Եվ թրփոցով ընկնում էին թռչունները: Պոչը ոտքերի արանքում նստարանի տակ մտավ գայլը:

Թռչունն հեռու պիտի թռչեր, բայց մոտերքում թեւը կոտրեց:

Նա այդ ասաց խռպոտ ժանգակալած ձայնով: Քորելով թափթփված մորուքը: Ճոճվելով խրեց դռան սողնակը: Մոտ եկավ Քրիստափորին, եւ նա զգաց փչացած արտաշնչումը նրա:

Ինչ է, սարսափելի՞ է, հայրենակից:

Հավատավո՞րն ես Քրիստոսի, հաստատակամ հարցրեց Քրիստա-

փորը:

Ով ապրում է թավուտում,անիվին է հավատում: Այսպիսին է մեր հավատը: Մի բան էլ, հայրենակի՛ց, մեզ փող է պետք: Մա՛ն արի, մի բա՛ն արա:

Էդ ինչի՞ց եղա քեզ հողակից:

Ներս մտնողը աչքով արեց: Նրանով ես հողակից, որ արդեն, համարիր, հողի բաժին ես: (Սապոգի ճտքից նա դանակը հանեց): Ես քեզ այնտեղ էլ կուղարկեմ:

Քեզ փող կտամ, իսկ դու հեռացիր, Աստծո սիրուն: Մենք քո մասին ոչ ոքի չենք ասի:

Էդ ո՞նց չեք ասի: (Անատամ ժպտաց: Ծրջվեց ու խփեց Արսենիին դանակի կոթով: Արսենին ընկավ): Ծուտ-շուտ, հողակից, հետո կխփեմ շեղբով:

Գայլը թռավ ու կախվեց եկվորի ձեռքից: Կախվեց, կառչելով արմունկից վերեւ եւ թաթերով հենվելով կողին: Դա առանց դանակի ձեռքն էր: Դանակով ձեռքը մի քանի անգամ մխրճվեց գայլի բրդի մեջ: Եվ այդ ժամանակ դանակն ընկավ: Անկենդան մեխանիկական շարժումով աջ ձեռքը մեկնվեց օգնելու ձախին: Այն բռնեց գայլի վզատակից եւ սկսեց պոկել նրան ցավացող մարմնից: Գայլի մռութն առաջ ձգվեց, ինչպես քաշվող, պոկվող դիմակ: Աչքերը վերածվեցին երկու սպիտակ գնդերի: Նրանք նայում էին ինչ-որ տեղ առաստաղին եւ արտացոլում բռնկվող մարխը:

Քրիստափորը ձեռք գցեց դանակը, բայց եկվորը չէր մտածում դանակի մասին: Նա ցավագին պոկում էր գայլին իրենից եւ, ի վերջո, պոկեց: Ի՞նչ էր մնացել գայլի երախում՝ մի ծվեն շապի՞կ: Մի՞ն: Ոսկորնե՞ր: Գայլն ինքն էլ այդ չգիտեր: Նա փռվել էր հատակին ու ոռնում էր՝ չսեղմելով ատամները: Միայն թե դա ձեռք չէր, որովհետեւ եկվորը հեռացավ կարծես թե ձեռքի հետ: Ինչ -որ բան կարծես թե կախված էր նրա ուսից, բայց թե ի՞նչ՝ հասկանալն արդեն անհնար էր: Այն կախված էր մտրակի պես, անկամ ու թույլ: Քրիստափորը բռնեց նրա անվնաս ձեռքից եւ քաշեց սողնակը: Նա, դուրս գալով, գլուխը խփեց բարավորին: Մի անգամ էլ խփեց պատսպարանում: Մանր քայլերով շրշաց անտառային տերեւների վրայով: Պապանձվեց: Չքվեց: Տարրալուծվեց:

Փառք Քեզ, Տեր Ամենազսպիչ, զի չթողեցիր մեզ: Քրիստափորը

ծունկի իջավ եւ խաչակնքվեց: Հակվեց Արսենիի վրա: Տղան պառկած էր հատակին, այտին եւ մազերին արյուն էր քսվել: Արսենիի բաց մազերի վրա հատկապես արյունն էր վառ տեսնվում՝ նույնիսկ լուսնի լույսի ներքո:

Միայն հոնքդ է ճղվել, սարսափելի բան չկա: Քրիստափորն օգնեց Արսենիին ոտքի կանգնել: Հիմա կկպցնենք եզան լեզվով:

Սպասիր, կանգնեցրեց նրան Արսենին: Տես, թե գայլի հետ ինչ է եղել: Գայլը պառկած էր արյան լճակում: Քրիստափորը բացեց նրա երախն ու այնտեղից հանեց ինչ-որ ահավոր մի բան: Արսենիին ցույց չտալով, այն դուրս տարավ խրճիթից: Երբ Քրիստափորը ետ դարձավ, գայլի պոչը դողում էր:

Կենդանի է, ուրախացավ Արսենին:

Կենդանի՞ է որ, ֆսֆսալով Քրիստափորը զննեց գայլին: Ամուր կյանք նրա մեջ չեմ տեսնում: Միայն կարճատեւ նշաններ:

Գայլը մանր դողացնում էր, նրա գլուխն ընկնում էր թաթերին:

Փրկի՛ր նրան, պա՛պ:

Քրիստափորը վերցրեց դանակն ու վերքի շուրջ բուրդը կտրեց: Տաքացրեց բալասանող յուղերի խառնուրդը, զգուշությամբ քսեց ճղոտած մարմնին: Գայլը ցնցվեց, բայց չբարձրացրեց գլուխը: Գայլի մարմնի խոցված մասերին Քրիստափորը կաղնու աղացած տերեւներ ցանեց: Ծածկեց սառցահալվելուց հետո տաքացրած խոզապուխտի կտորներով եւ սկսեց չորս կողմից փաթաթել քաթանով: Գայլը չէր դիմադրում: Դեռ երբեք նրա մարմինն այդպես չէր տրվել: Սկաններում այլեւս ամրություն չկար: Աչքերը բաց էին, բայց նրանցում ոչինչ չէր արտացոլվում, բացի տանջանքից:

Արսենին կպցրեց վառարանը, իսկ Քրիստափորը մարագից դարման բերեց: Նրանք հարդը խնամքով դասավորեցին վառարանի մոտ եւ գայլին տեղափոխեցին դրա վրա: Գայլը կրակին էր նայում անթարթ: Կրակը նրան այլեւս չէր անհանգստացնում:

Արսենին զգում էր, որ ինքն այլեւս ուժ չունի: Նստեց նստարանին եւ հենվեց ձեռքերով: Վերջին բանը, որ մտապահեց, Քրիստափորի հանգստացնող հպումն էր, որ իր գլխի տակ բարձ դրեց:

Երբ առավոտյան նրանք արթնացան, գայլը խրճիթում չէր: Արյունոտ հետքը ձգվում էր վառարանից մինչեւ դուռը, այդտեղից էլ՝ բակ:

Կորչում էր սայթաքուն ճանապարհի փտող խաշամի տակ:

Նա չէր կարող հեռուն գնալ, եւ մենք նրան կգտնենք: Արսենին նայեց Քրիստափորին: Ինչո՞ւ ես լռում:

Նա հեռացել է մեռնելու, ասաց Քրիստափորը: Դա յուրահատուկ է կենդանիներին:

Արսենիի պնդմամբ մեկնեցին գայլին որոնելու: Նրանք չգիտեին, որտեղ փնտրեն եւ մեկնեցին այնտեղ, որտեղ երբեմնի նրան հանդիպել էին: Բայց գայլն այնտեղ չէր: Նրանք գնում-գալիս էին նաեւ այլ տեղեր, բայց չգտան: Կարճ աշնանային օրը թեքվում էր մայրամուտ:

Արդեն կիսախավարում հանկարծ նկատեցին նախօրեի եկվորին: Նա ժպտում էր իր պոկված ծնոտով եւ հյուրընկալ գիրկը բացեց: Այդ գիրկը բնական չէր: Լայն բացված ձեռքերում սառել էին հոգեվարքի նշույլները: Անհույս ձգտումը ոտքի կանգնելու: Արսենին ջանում էր չտեսնել սարսափելի խյուսը ձախ ձեռքի տեղում, բայց հայացքն անդրդվելիորեն վերադառնում էր հենց նույն տեղը, որտեղ ուսից վար ճերմակին էր տալիս ոսկորը: Գայլից վնասված ձեռքն արդեն կերված էր: Կասկածի բան չէր մնացել, որ իրենց հայտնվելն ընդհատել էր ինչ-որ մեկի ընթրիքը: Երբ Քրիստափորը կիպ մոտեցավ հանգուցյալին, Արսենին փսխեց:

Հիմա կթեթեւանաս, ասաց Քրիստափորը:

Համարյա մինչեւ տուն նրանք չխոսեցին: Երբ արդեն մոտեցել էին գերեզմանոցին, Արսենին ասաց.

Չգիտեմ, ինչպես է գայլը հեռացել այդ քաթանի մեջ: Չէ՞ որ շատ է ծանր:

Ծանր է, հաստատեց Քրիստափորը:

Արսենին կպավ Քրիստափորի կրծքին ու հեկեկաց: Հեկեկոցի հետ դուրս էին գալիս նրա բառերը: Դրանք շարժվում էին հրումներով, ընդհատ եւ բարձր: Խանգարելով գերեզմանոցի լռությունը:

Ինչո՞ւ նա հեռացավ մեռնելու: Ինչո՞ւ չմեռավ մեզ մոտ՝ նրան սիրողների:

Շրշուն հպումով Քրիստափորը սրբեց Արսենիի արցունքները: Համբուրեց ճակատը:

Այդպես նա նախազգուշացրեց մեզ, որ վերջին րոպեին ամեն ոք մնում է միայնակ Աստծո հետ:

- Թ -

Աստվածածնի տոնին Քրիստափորը որոշեց հաղորդվել Կիրիլյան միաբանությունում: Իր մեկնումի մասին պայմանավորվեց իրեն այցելած գյուղարվարձանցիների հետ: Գիշերը՝ Աստվածածնի տոնից առաջ, Քրիստափորի եւ Արսենիի ետեւից սայլ եկավ: Նրանում եւս չորս մարդ կային, որ ուղեւորվում էին վանք, տոնի: Նրանք բարեւեցին, եւ շուրթերից նրանց գոլորշու չորս շիթ դուրս ելավ: Այլեւս ամբողջ ճանապարհի ընթացքում նրանք չարտաբերեցին եւ ոչ մի հնչյուն՝ բառերը պահելով ապագա խոստովանության համար: Նրանց լռության արձագանքում սառած հողի երեսով զրնգում էին սմբակները: Ակների օղագոտիների տակ խրթխրթում էր ձյան սառցակեղեւը:

Սառնամանիք խփեց նախօրեին, եւ ցեխը սառեց ակոսներով ու գուղձերով՝ ճանապարհը վերածելով լվացատախտակի: Արսենին լսում էր իր ատամների շխկշխկոցը: Որպեսզի լեզուն չկծի, նա ջանք էր դնում ավելի պինդ սեղմել ծնոտները: Ինքն էլ չնկատեց, թե ինչպես քնեց:

Արթնացավ այն բանից, որ սայլը կանգ առավ: Ամպերի ծվատված եզրերը լույսնալույսի մեջ էին: Ամպերի միջով խաչեր տանողները դրանք ճեղքում էին մասերի: Նայելով գմբեթների մթնագույն կուտակումներին, Արսենին մտածեց, որ էլ ոչ մի տեղ չի տեսել նման բարձր շինություններ: Գիշերային խավարում նրանք երեւում էին Է՛լ ավելի նշանակալի եւ խորհրդավոր, քան ցերեկով: Դա Աստծո տունն էր: Հարյուրավոր մոմերի լույսով այն շողարձակում էր ներսից:

Ժամանածների առաջին գործը խոնարհվելն էր սուրբ Կիրիլին, քսանութ տարի մահվան օրվանից հաշված: Եվ ութ տարի՝ փառաբանման օրվանից: Մոմը դնելով սուրբի աճյունատուփի մոտ՝ Քրիստափորը եւ Արսենին ետ եկան կիսախավար: Այդտեղից նրանք լսում էին գիշերահսկումի շարունակությունը: Այդտեղից տեսնում էին, թե ինչպես է տաճարի մեջտեղ դուրս գալիս ճգնավոր Նիկանդրոսը եւ սկսում խոստովանության նախապատրաստել հավատացյալներին:

Աղոթք ասելով ծերունին կապայի տակից հանեց փոքրիկ՝ մեկ ութերորդ ֆունտանոց տետրը, վերնագրված՝ Միջին ծանրության մեղքեր, որոնք հատուկ են աշխարհիկներին եւ հոգեւորներին: Մանր մեղքերը չէին մտնում տետր, որքանով արժանի չէին համարվում բարձրա-

ձայն արտասանվելու: Ապաշխարեք ինքներդ ձեր մեջ, սովորեցնում էր իր համայնքին, եւ դրանով գլուխս մի տարեք: Նման հիմար բաներով գլխավորին չեք հասնի: Ծանրագույն մեղքերը ճգնավորը գրի չէր առնում՝ վախենալով դրանք հավերժացնել: Նա խնդրեց ասել իր ականջին եւ այդ ականջում թողեց հավիտյանս:

Միջին ծանրության մեղքերի ցուցակում էր ուշացումը եկեղեցական արարողությունից կամ հակառակը՝ վաղաժամ հեռացումը արարողությունից: Այդ ընթացքում՝ խոսակցությունները, տաճարում դեգերելը, մտքերը կողմնակի բաների մասին: Պահքի ոչ պատշաճ պահպանումը, արտասվելու չափ ծիծաղելը, հայհոյանքը, աչքով անելը, սկոմորոխների հետ պարելը, գնորդին թերաչափելով ու թերակշռելով խաբելը, խոտի գողությունը, երեսին թքելը, դանակով հարվածելը, բամբասանք տարածելը, վանական դատապարտելը, որկրամոլությունը, հարբեցողությունը, լողացողներին ծիկրակելը: Արսենին զգում էր, թե ինչպես են իր աչքերը փակվում, իսկ ծերուկ Նիկանդրոսի ցուցակը դեռ նոր էր սկսվում:

Առավոտվա դեմ, երբ անցան անձնական խոստովանության, Արսենին եւ Քրիստափորն ավելացնելու բան չունեին արդեն: Կենսական իրավիճակները, որ նախատեսված չէին ծերուկ Նիկանդրոսի կողմից,ինչպես պարզվեց, զարմանալիորեն քիչ էին: Խոստովանելիս, Քրիստափորը հապաղեց եւ նայեց ծերունու աչքերի մեջ:

Ի՞նչ ես ուզում կարդալ իմ աչքերում, հարցրեց ծերունին:

Դու ինքդ էլ, հայր իմ, տեսնում ես:

Քեզ միայն կասեմ, որ հաշվարկը տարիներով է: Եվ նույնիսկ՝ ոչ թե ամիսներով: Ընդունիր այս տեղեկությունը խաղաղ, առանց փսլինքի, ինչպես վայել է իսկական քրիստոնյային:

Քրիստափորը գլխով արեց: Նա տեսավ, որ տաճարի մյուս ծայրում հոգնաբեկ Արսենին ինչպես է պպզել սյան մոտ: Եվ շարունակ բացվող դռներից ներս պոռթկաց քամին, եւ տղայի գլխավերեւում օրորվեց բազմաճյուղ կանթեղը: Մոմերի բոցը թրթռում էր, վեր ձգվում, բայց չէր մարում: Քամու խոնավությունից Քրիստափորը հասկացավ, որ գիշերավերջը ջերմացել է: Նա լսում էր հեռավոր աքլորականչերը, բայց տաճարի պատերից այն կողմ առաջվա պես խորաբաց մութ էր՝ լուսամուտի ճաղերի կանոնավոր շեղանկյուններով կտրատված:

- ԺԱ -

Վերադառնալով միաբանությունից, Քրիստափորն ուշադրությամբ զննեց տունը: Երկու օր հետո գյուղարվարձանից իր պատվերով գերաններ ու տախտակներ բերեցին: Չորսուն տանիքի հիմնակմախքին հուպ տալով՝ Քրիստափորն ու Արսենին փոխեցին վերին պսակները, որ փտել էին անձրեւներից ու տաք գոլորշիներից: Քրիստափորն ստուգեց փայտաշենքի գերանակապերի միացումներն ու շատ տեղեր նորից խծուծեց վուշով ու մամուռով: Ապա նա հատակի մաշված տախտակները փոխեց նորերով: Խոտերի հոտի հետ միասին խրճիթում տարածվեց ռանդած փայտի թարմ բուրմունքը: Քրիստափորի աշխատանքում Արսենին հապճեպ մի բան զգաց, բայց օգնում էր պապին, ոչինչ չհարցնելով:

Երբ խտացան մթնշաղերը, Քրիստափորն Արսենիից քննություն վերցրեց դեղաբույսերի գիտություն առարկայից: Անհրաժեշտության դեպքում ուղղում եւ լրացնում էր պատասխանները, բայց նման դեպքերը քիչ էին: Երբեւէ իրեն պատմած ամեն բան Արսենին հիանալի էր հիշում:

Այլ երեկոների Քրիստափորը քննում էր ունեցած գրքերն ու գրառումները: Ինչ-որ բան նա արագ էր թերթում, որոշ թերթերի վրա էլ կանգ էր առնում ու կարդում, ասես խոհերում: Ծրթունքներն էր շարժում: Երբեմն կտրվում թերթից ու երկար նայում էր մարխին: Արսենիին դա զարմացնում էր, որովհետեւ տանը սովորաբար ամեն բան կարդում էին բարձրաձայն:

Ի՞նչ ես կարդում, Քրիստափորե:

Աբրահամի գիրքը ոչ Սուրբ Գրային:

Բարձրաձայն կարդա, ես էլ լսեմ:

Եվ Քրիստափորը կարդաց: Ծերունաբար, հեռու պահելով աչքերից ձեռագիրը, նա կարդում էր այն մասին, թե ինչպես Տերն ուղարկեց հրեշտակապետ Միքայելին Աբրահամի մոտ:

Տերն ասաց.

Հաղորդիր Աբրահամին, որ եկել է այս կյանքից հեռանալու իր ժամը:

Հրեշտակապետ Միքայելը գնաց Աբրահամի մոտ եւ նորից վերադարձավ:

Դա հեշտ բան չէ, ասաց նա, հայտնել Աբրահամին՝ Աստծո բարեկամին, մահվան մասին:

Եվ այդժամ ամեն բան երազում հայտնվեց Իսահակին՝ Աբրահամի որդուն: Եվ գիշերվա կեսին ելավ Իսահակը, հոր սենյակի դուռը թակեց, ասելով.

Բաց արա, հա՛յր, քանզի ես ուզում եմ տեսնել, որ դու դեռ այստեղ ես:

Եվ երբ դռները բացեց Աբրահամը, Իսահակը նետվեց նրա վզով, արտասվելով եւ համբուրելով նրան: Իսկ Միքայել հրեշտակապետը, որ գիշերել էր Աբրահամենց տանը, նրանց արտասվելիս տեսավ եւ արտասվեց նրանց հետ, եւ արցունքներն ասես քար լինեին: Լաց էր լինում նաեւ Քրիստափորը: Լաց էր լինում Արսենին, նայելով, թե ինչպես է Քրիստափորի արցունքներից թերթի վրա պայծառանում թանաքը:

Եվ հրամայեց Աստված Միքայել հրեշտակապետին գեղեցկացնել Սահը, որ գնում էր դեպի Աբրահամը, վահագույն գեղեցկությամբ: Եվ տեսավ Աբրահամը, թե Սահն ինչպես է մոտենում իրեն, եւ սարսափեց լրիվ, եւ ասաց Սահին.

Աղաչում եմ քեզ, ներկայացիր, ո՞վ ես դու: Եվ խնդրում եմ, հեռու մնա ինձնից, քանզի հենց քեզ տեսա, իմ հոգին խռովեց: Չեմ կարող տանել փառքը քո եւ տեսնում եմ, որ գեղեցկությունը քո այլաշխարհիկ է:

Գիշերները, երբ տղան արդեն քնած էր, Քրիստափորը գրում էր կեչեկեղեւի վրա խոտերի այն հատկությունների մասին, որոնք թոռան անչափահասությունը նկատի առնելով չէր բացահայտել լիովին: Նա գրում էր խոտաբույսերի մասին, որոնք մոռացության են մատնում, եւ այն խոտերի մասին, որոնք շարժում են անկողնային մտադրությունները: Սամիթի մասին, որին վերագրվում են թութքի բուժումը, կախարդության դեմ՝ հոտզվենի խոտը, մանրացրած սոխի մասին՝ կատվի կծոցի դեմ: Թութակ խոտի մասին, որն աճում է ցածրավայրերում (կրիր այն քո մոտ՝ այնտեղ, երբ ուզում ես գնալ փող կամ հաց խնդրելու,- եթե արական սեռից ես խնդրում, դիր աճուկիդ աջ կողմում, եթե իգական՝ ձախ, երբ որ սկոմորոխներն են նվագում, այդ խոտը նետիր նրանց ոտքերի տակ, նրանք կկռվշտեն): Գայթակղության եւ անառակ երազաները հեռու քշելիս խմել նարդոսի եփուկ: Կուսության ստուգ-

ման համար՝ ջուր, որի մեջ երեք օր ընկղմված է մնացել քարը, խմելով այդ ջուրը, կուսությունը կորցրածն իր մեջ այդ ջուրը չի պահի: Փիրուզը, եթե կրես, կկանխապաշտպանի սպանությունից, որովհետեւ երբեք այդ քարը չեն տեսել սպանված մարդու վրա: Աքլորի ստամոքսաքարը վերադարձնում է թշնամու խլած պետությունը: Ով մագնիս է կրում, կանանց դուր է գալիս: Ոսկեփոշին էլ ներս ընդունելիս առողջացնում է նրանց, ովքեր իրենք իրենց խոսում են, եւ իրենք են իրենց հարցնում, եւ իրենք են պատասխանում, եւ ընկճախտի մեջ են ընկնում: Կինճի թոքը չորացնել, տրորել եւ լուծել ջրում: Ով այդ ջուրը խմի, խնջույքի ժամանակ չի հարբի: Վերջ:

1455 թվի դեկտեմբերյան մի առավոտ Քրիստափորը, հակառակ սովորույթի, պառկած մնաց անկողնում: Նա փոքր-ինչ վեր ելավ, նստեց, բայց առաջ շարժվելու ուժ չուներ: Իր մոտ եկած հավատացյալներին ըստ կարելվույն ասաց.

Մի խոսեք ինձ հետ իբրեւ աշխարհիկի, քանզի արդեն մասնիկը չեմ ողջ արարածոց, տկարացել են անդամները իմ, եւ դա, բացի վերահաս իմ մահից եւ Փրկչի Ահեղ Դատաստանից, էլ ոչինչ չի ասում:

Եվ հավատացյալները հեռացան:

Կեսօրին մոտ Արսենին օգնեց Քրիստափորին դուրս գալ պետքերն հոգալու: Միայն այստեղ նա հասկացավ, որ ծերուկն արդեն չի զորում քայլել: Քրիստափորի ձեռքը գցելով իր ուսին, Արսենին տարավ նրան բակի միջով: Քրիստափորի ոտքերն անուժ քարշ էին գալիս: Հին սովորության համաձայն գնում էին դեռեւս շարժվելով հերթով: Մաքրեցին նորամուտ ձյունը: Վերադառնալիս Արսենին հարցրեց.

Պա՛պ, քեզ ի՞նչ տամ:

Թող շունչ առնեմ, զավակս: Քրիստափորը նստեց, կուզը վեր, անկողնու եզրին: Նրա ճակատին սառը քրտինք տվեց: Թող շունչ առնեմ:

Պառկիր, պապիկ:

Հենց պառկեմ՝ նույն պահին կմեռնեմ:

Մի՛ մեռիր, պապիկ, որովհետեւ աշխարհում ես կմնամ մենակ: Դրա համար էլ, զավակս, ինձ մահվան վախն է բռնել: Պայթում է սիրտն իմ, եւ ծանր է ինձ համար քեզ լքելը, բայց կդնեմ, ըստ մարգարեի, իմ վիշտը Տիրոջ վրա: Հետայսու նա է լինելու քեզ պապիկ: Ահա ես, հեռանում եմ այս աշխարհից, Արսենիե: Բուժիր մարդկանց դեղաբույսերով, դրա-

նով էլ քեզ կկերակրես: Իսկ ավելի լավ է՝ գնա վանք, եղիր Աստծո մոմը: Կլսե՞ս ինձ:

Մի՛ մեռիր, պապիկ: Մի՛ մեռիր... Արսենին շնչեց եւ շնչահեղձ եղավ:

Ախր ի՞նչ անեմ, գոչեց Քրիստափորը՝ վերջին ուժերը հավաքելով, կմեռնեմ, հենց պառկեմ:

Ես կհենվեմ քե՛զ, պապիկ:

Երեք օր ու երկու գիշեր Քրիստափորը նստած էր անկողնում՝ մի ոտն իջեցնելով հատակին եւ երկրորդը մեկնելով նստարանի երկարությամբ: Նստած դրությունը նրան օգնում էր պահպանել Արսենին: Իր թիկունքով նա հենակ էր դառնում պապին եւ պապին կպած սրտով կանոնավորում նրա սրտխփոցը: Վերականգնում էր ընդհատվող շնչառությունը: Տղան բացակայում էր ընդամենը մի քանի անգամ՝ մի կում ջուր խմելու եւ պետքերն հոգալու: Երրորդ օրը վանքից եկավ ճգնավոր Նիկանդրոսը եւ հրահանգեց Արսենիին դուրս գալ խրճիթից: Քրիստափորի կողքին նստեց բավականին երկար: Հեռանալով նայեց, թե Արսենին ինչպես է թիկն տալիս Քրիստափորին: Ասաց.

Բաց թող նրան, Արսենիե: Չէ՞ որ հանուն քեզ նա հեռանալ չի համարձակվում:

Բայց Արսենին ավելի պինդ էր թիկն տալիս պապին:

Արթուն մնա նրա հետ մինչեւ կեսգիշեր, ասաց ճգնավորը, իսկ հետո թող:

Կեսգիշերին մոտ Արսենիին թվաց, թե Քրիստափորի վիճակը թեթեւացավ: Եվ որ նա շնչում է ոչ այնքան ծանր: Արսենին տեսավ պապի ժպիտը, զարմանալով, որ ինքը կարող է նրան տեսնել մեջքով: Հոգու թեթեւությամբ հետեւեց նրան, թե պապն ինչպես անցավ սենյակներով եւ հպվեց անկյունում կախված անթառամին: Առաստաղից կախված բոլոր խոտերը օրորվեցին: Օրորվեց նաեւ առաստաղը: Ծոյելով քնած տղայի այտը՝ Քրիստափորն ասաց Տիրոջը.

Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին, Դու էլ ողորմած եղիր եւ հավերժական կյանք տուր նրան: Ամեն:

Խաչակնքվեց, պառկեց թոռան կողքին եւ փակեց աչքերը:

Արթնացավ Արսենին վաղ առավոտյան: Նայեց կողքին պառկած Քրիստափորին: Ներշնչեց խրճիթի ամբողջ հասանելի օդը եւ ճչաց: Վանքում լսելով ճիչը՝ ճգնավոր Նիկանդրոսն ասաց Արսենիին.

Պետք չէ այդպես բարձր ճչալ, քանզի նրա մահը խաղաղ էր:

Գյուղարվարձանում, լսելով ճիչը, մարդիկ մի կողմ դրեցին առտնին հոգսերն ու Քրիստափորի տան կողմը շարժվեցին: Քրիստափորի բարի գործերի հիշողությունը պահպանում էին իրենց բուժած մարմինները:

Եվ սկսվեց առաջին օրն առանց Քրիստափորի, իսկ այդ օրվա առաջին կեսը Արսենին լաց էր լինում: Նա նայում էր գյուղարվարձանից եկածներին, բայց արցունքները ողողում էին նրանց դեմքերը: Վշտից ուժասպառ, օրվա երկրորդ կեսին Արսենին քնեց:

Երբ նա արթնացավ, արդեն գիշեր էր: Նա հիշեց, որ Քրիստափորն այլեւս չկա, եւ նորից լաց եղավ: Քրիստափորը պառկած էր նստարանին, իսկ նրա գլխավերեւում մոմ էր դրված: Այուս մոմը լուսավորում էր Հավերժական Գիրքը, որը նախկինում դրված էր դարակում: Մոմը բռնել էր ծերուկ Նիկանդրոսը: Նա թիկունքով էր կանգնել Քրիստափորին ու Արսենիին եւ Գիրքն ընթերցում էր խլածայն՝ սրբապատկերներին:

Ահա, կարդա, չշրջվելով ասաց ճգնավորը, իսկ ես մի քիչ քնեմ: Եվ՝ ընկերաբար, էլ մի շարունակիր հեկեկալ, խնդրում եմ:

Արսենին ծերունու ձեռքից ընդունեց մոմը եւ կանգնեց Գրքի առջեւ: Աչքի պոչով տեսնում էր, թե ինչպես, թեթեւակի մի կողմ հրելով Քրիստափորին, ծերունին նրա կողքին պառկեց նստարանին: Սաղմոսների տողերը դեռ լողում էին նրա աչքերի դեմ, իսկ ձայնը չէր լսվում: Արսենին մաքրեց կոկորդն ու սկսեց կարդալ: Քարբին եւ հրեշին տրորողը կհաղթի նաեւ առյուծին ու մեղսածին օձին: Արսենին ընթերցում եւ մտածում էր այն մասին, թե այդ արարքները, հնարավոր է, նախատեսված էին, որ Քրիստափորը կատարի:

Արսենին շրջվեց ծերուկ Նիկանդրոսի կողմը:

Ո՞վ է այս հրեշը:

Բայց ծերուկը քնած էր: Նա ուս- ուսի քնած էր Քրիստափորի հետ, եւ երկուսի ձեռքերն էլ ծալված էին կրծքին: Նրանց քթերն աղոտ փայլում էին մոմի լույսի ներքո: Երկուսն էլ միանման անշարժ էին, եւ երկուսն էլ, ասես թե մեռած: Նիկանդրոսի ժամանակավոր մահացումը համերաշխության դրսեւորում էր: Որպեսզի զորակցի Քրիստափորին, վճռեց նրա հետ առաջին քայլերն անել մահամիջում: Որովհետեւ առաջին քայլերը՝ ամենադժվարն են:

-ԺԲ-

Քրիստափորի հուղարկավորության արարողությունը կատարվեց հաջորդ օրը: Երբ գերեզմանափոսը լցրին քարերով, Նիկանդրոս ճգնավորն ասաց.

Կյանքի վերջին օրերը գերեզմանոցին մոտ իր տանն անցկացրած մարդն իր մահվան օրերը կանցկացնի գերեզմանոցում իր տան մոտ: Համոզված եմ, որ նման զուգաչափությունը հանգուցյալի կողմից ընդունելի կլիներ:

Գերեզմանոցը խաղաղ էր: Վերջին ժանտախտի ժամանակներից ի վեր այնտեղ մարդիկ հազվադեպ էին այցելում, քանի որ նրանք, ովքեր նախկինում գնում էին այնտեղ, հիմա ուրիշ վայրերում էին ապրում: Քրիստափորի վերաբնակեցմամբ գերեզմանոցում նրա հանգստությունը դարձավ համընդգրկուն:

Թաղումից հետո գյուղարվարձանի երախտագետ բնակիչներն Արսենիին կանչեցին ապրելու իրենց մոտ, սակայն Արսենին հրաժարվեց:

Քրիստափորի հիշատակը, ասաց նա, պիտի պահպանվի ըստ նրա վերջին բնակության տեղի, որն իր ուժերի պատածի չափով նա բարեկորոգեց: Այստեղ ամեն մի որմ, ասաց, պահպանում է նրա հայացքի ջերմությունն ու նրա հպման կոշտությունը: Էլ ինչպե՞ս, հարց է ծագում, ես այստեղից հեռանամ:

Նրան չկարողացան համոզել: Հայտնի իմաստով բոլորն էլ թեթեւություն զգացին այն բանից, որ նա մնալու է Քրիստափորի տանը: Դեղաբույժի ծանոթ եւ ընտել կացարանը այդպիսով պահպանվեց: Քրիստափորի տնից շարունակելով անհրաժեշտ դեղուդարմանը տալ, Արսենին ինքն էլ մարդկանց աչքին աննկատ դարձավ Քրիստափոր: Եվ նույնիսկ ճանապարհը, որը գյուղարվարձանցիները ստիպված պիտի կտրեին անցնեին դեղ ստանալու համար, փոխհատուցվում էր այն բանի ամուր գիտակցմամբ, որ ամեն ինչ մնում է իր տեղում:

Այդ գիտակցումն իսկույն պարզեցրեց հարաբերությունները բժշկի եւ այցելուների միջեւ: Ե՛վ կանայք, եւ՛ տղամարդիկ Արսենիի առջեւ հանում էին շորերն այն թեթեւությամբ, որով նախկինում հանում էին Քրիստափորի առաջ: Երբեմն-երբեմն Արսենիին թվում էր, որ կանայք դա ավելի հեշտությամբ էին անում, քան տղամարդիկ, եւ այդժամ նա

անհարմար էր զգում: Սկզբում նրանց մարմնին դիպչում էր մատների ծայրերով, բայց շուտով արդեն, քանի որ խոսքը հիվանդ մարմնի մասին էր, առանց հուզվելու դնում էր ամբողջ ափը, իսկ եթե հարկ էր լինում, սեղմում էր եւ տրորում:

Ձեռքը դնելու հմտությունը, ձեռքը դնելով ցավն ինչ-որ չափով թեթեւացնելն էլ վճռեց Արսենիի մականունը՝ Ռուկինեց (ձեռնհասծնթ. թարգմանչի): Ըստ էության, այդ մականունն իր եզերքի համար տիպական էր: Այդպես օտարներն էին անվանում Ռուկինյան գյուղարվարձանցիներին: Մարդիկ, որ հեռվից էին գալիս, ռուկինցի էին անվանում նաեւ Քրիստափորին:

Գյուղարվարձանի բնակիչների համար այդ մականունն իմաստ չուներ, որքանով նրանք բոլորը ռուկինցի էին: Այլ կերպ պատահեց Արսենիի հետ: Նույնիսկ գյուղարվարձանի ներսում հենց նրան սկսեցին տարբերակել իբրեւ Ռուկինեց: Դա ընդունվում էր որպես իր տեսակի մեջ պատվավոր քաղաքացու շնորհում, ինչպես իրենց սիրելի Ալեքսանդրին անվանելը՝ Մակեդոնացի: Եվ երբ Արսենիի հրաշագործ ձեռքերի համբավը հասավ աշխարհ աշխարհ, ուր Ռուկինա գյուղարվարձանի մասին երբեւէ չէին լսել (իսկ այդպիսիք շատ էին), մականունը դարձյալ կորցրեց իր իմաստը: Եվ այդժամ Արսենիին սկսեցին անվանել Բժիշկ:

Դեռահաս Արսենիի մանկական թմբլիկ ափերն ազնվատոհմիկ ուրվագծեր ստացան: Մատները երկարեցին, փոքր-ինչ ցցվեցին հոդերը, իսկ մաշկի տակ նախկինում աննկատ ջղերը ծգվեցին: Ձեռքի շարժումները դարձան սահուն, շարժուձեւերը՝ արտահայտիչ: Դրանք երաժշտի ձեռքեր էին, որոնց ընծայաբերված էր ամենազարմանալի նվագարանը՝ մարդկային մարմինը:

Հպվելով հիվանդի մարմնին՝ Արսենիի ձեռքերը կորցնում էին նյութականությունը. դրանք ասես հոսում էին: Դրանցում ինչ-որ բան կար աղբյուրի նման, սառեցնող: Արսենիին վաղ տարիներին այցելած մարդիկ դժվարանում էին ասել, թե բալասանո՞ղ են նրա հպումները, բայց այն ժամանակ արդեն համոզված էին, որ այդ հպումները հաճելի են: Ընտելացած այն բանին, թե բուժմանը, սովորաբար, ուղեկցում է ցավը, հոգու խորքում այդ մարդիկ, հնարավոր է, կասկածի տակ էին առնում հաճելի բժշկարար գործողությունների օգտակարությունը: Դա,

բայցեւայնպես, նրանց ետ չէր պահում: Առաջինը՝ ոչխարի մորթին: Նա, անպայման, գիտեր, որ իր ներկա դրությամբ Քրիստափորը ցրտին անհաղորդ է, սակայն պապի չջերմացած հանգստարանի մասին մտքից անգամ տաքացրած տանը կյանքը դառնում էր անտանելի: Միակը, որ փրկում էր երեկոներին, Քրիստափորի գրառումների ընթերցանությունն էր:

Սողոմոնը բարբառեց՝ ավելի լավ է ամայի հողում ապրես, քան թե ապրես կռվասեր, լեզվանի, բարկացկոտ կնոջ հետ: Փիլոնը ասաց՝ արդարամիտ մարդը նա չէ, ով չի նեղացնում, այլ նա, ով կարող էր նեղացնել, բայց չուզեց: Սոկրատն իր ընկերոջը տեսավ, որն շտապում էր նկարչի մոտ, որ քարի վրա իր պատկերը փորագրեն, եւ ասաց նրան՝ դու շտապում ես քարը քեզ նմանեցնել, իսկ ինչո՞ւ չես մտահոգվում այն մասին, որպեսզի ինքդ նմանվես քարի. Փիլիպպոս արքան ոմն մեկին դատավորներին էր ներկայացնում դատելու, երբ իրեն հայտնի դարձավ, որ նա ներկով մազերն ու մորուքն է ներկում, հեռացրեց դատավորին, ասելով՝ դու որ մազերիդ հավատարիմ չես, ինչպե՞ս կարող ես մարդկանց եւ դատարանին հավատարիմ լինել: Սողոմոնը բարբառեց՝ միայն երեք բան է անհնար հասկանալ եւ չորրորդը՝ չգիտենք. արծվի հետքը, որ ճախրում է օդում, եւ օձի ճամփեքը, որ սողում է քարերի միջով, եւ նավի ուղին, որ լողում է ծովում, եւ տղամարդու ճամփեքը պատանության օրերին: Դա չէր հասկանում Սողոմոնը: Դա չէր հասկանում Քրիստափորը: Ինչպես ցույց տվեց կյանքը, դա չէր հասկանում նաեւ Արսենին:

-ԺԳ-

Փետրվարի վերջին գարունը բուրեց: Ձյունը դեռ հալված չէր, սակայն հյուսիսի գարունը մոտենում էր ակնհայտ: Թռչունների ճիչերը դարձան գարնանորեն թափանցող, իսկ օդը լիացավ ոչ ձմեռային փափկությամբ: Պայծառացավ լույսով, որն այդ եզերքներում չէին տեսել աշնանավերջից ի վեր:

Երբ դու մահանում էիր, ասաց Արսենին, բնությունն արդեն մթնել էր: Իսկ այժմ՝ նորից լուսավոր է, եւ ես լաց եմ լինում. առ այն, որ դու այդ չես տեսնում: Եթե խոսենք գլխավորի մասին, ապա երկինքները

բարձրացել եւ կապույտ են դարձել: Ինչ-որ փոփոխություններ էլ են տեղի ունենում, որոնց մասին ես քեզ լուր կտամ ըստ նրանց զարգացման չափի: Ըստ էության, որոշ բաներ ես կարող եմ նկարագրել հիմա արդեն:

Արսենին կուզենար շարունակել, բայց ինչ-որ բան նրան ետ պահեց: Դա հայացք էր: Նա զգում էր այն՝ դեռեւս չտեսնելով: Հայացքը ծանր չէր, ավելի շուտ՝ անոթի: Առավել եւս՝ անբախտ: Այն պեծպեծում էր հեռավոր մահարձանների քարերի ետեւից: Հետեւելով նրա ուղղությանը, Արսենին գլխաշոր եւ շեկ հյուսք նկատեց:

Ո՞վ ես, հարցրեց Արսենին:

Ես Ուստինան եմ: Նա վեր կացավ պպզած տեղից եւ մի րոպե լուռ նայում էր Արսենիին: Ես ուտել եմ ուզում:

Ուստինայից չքավորության հոտ էր փչում: Նրա հագուստը կեղտի մեջ կորել էր:

Ներս մտիր: Արսենին նրան ցուց տվեց խրճիթը:

Չեմ կարող, պատասխանեց Ուստինան: Ես էն տեղից եմ, որտեղ ժանտախտ է: Ինչ-որ մի բան բեր ուտելու եւ թող մնա: Դու կգնաս՝ ես կհավաքեմ:

Ներս արի, ասաց Արսենին: Թե չէ կսառչես:

Ուստինայի այտերով մի քանի խոշոր արցունքահատեր գլորվեցին: Դրանք հեռվից էլ էին երեւում, եւ Արսենին զարմացավ, թե ինչ խոշոր են:

Երեկ ինձ գյուղարվարձան չթողեցին: Ասացին, որ ես ժանտախտ եմ տարածում: Մի՞թե դու չես վախենում ժանտախտից:

Արսենին ուսերը թոթվեց:

Իմ պապը մահացավ, հիմա ես ամեն բանից չեմ վախենում:

Ուստինան ներս մտավ՝ աչքերը գետնին հառած: Երբ հանեց իր պատառոտված քուրքը, հասկանալի դարձավ, որ մի քանի օրվա ընթացքում նա առաջին անգամ է դա անում: Խրճիթով մեկ տարածվեց անլվա մարմնի հոտը: Ջահել կնոջ մարմնի: Ցտիպ հոտը ոչ միայն ուժեղացնում էր նրա ջահելությունն ու կանացիությունը, ներառում էր ծայրահեղ կենտրոնացումը թե՛ մեկի, թե՛ մյուսի: Արսենին հուզվեց:

Ուստինայի դեմքն ու ձեռքերը ճանկռվածքներով էին պատվել: Արսենին գիտեր, որ հագուստը չփոխելուց նույնպես մարմնի վրա խոցեր

են լինում: Սարմնին պետք էր իր մաքրությունը վերադարձնել: Նա վառարանի մեջ դրեց ջրով լի կավե մեծ կճուճը: Այն հեռավոր ժամանակներում ոչ մի բան չէին եփում կրակի վրա, եփվում էր կողքից՝ կրակից հեռու: Այսպես էր հորինվել վառարանը:

Ուստինան նստել էր անկյունում, ձեռքերը ծալած ծնկներին: Զնում էր հատակը, որտեղ մրով ցանված խոտն էր: Նրա հագուստն ասես այդ խոտի շարունակությունն էր՝ սեւ ու թափված: Եվ նույնիսկ հագուստ էլ չէր՝ ինչ-որ բան, ո՛չ մարդու համար նախատեսված:

Երբ ջրի երեսին սկսեցին փոքրիկ պղպջակներ հավաքվել, Արսենին վերցրեց ամենամեծ բռնիչն ու զգույշ (լեզվի ծայրը շրթունքին) դուրս քաշեց կճուճը կրակից: Սենյակի կենտրոնում դրեց կիսատակառը, մեջը սառը ջուր լցրեց: Ապա տաքը՝ կճուճից: Ավելացրեց Ենոքի խոտի մոխրաջուր, խառնած՝ թխկու տերեւի հետ: Կողքին գոլ ջրով կուժը դրեց ցայվելու համար:

Լողացիր, թե ուզում ես:

Նա մտավ հարեւան ցուրտ սենյակն ու իր ետեւից փակեց դուռը:

Ուստինան շրշում էր իր քրջերով: Արսենին լսեց, թե նա ինչպես զգուշորեն մտավ կիսատակառի մեջ եւ շերեփով դիպավ նրա պատերին: Լսեց ջրի աղմուկը: Աղմուկը սեփական գլխի մեջ: Հենվեց թիկունքով եղյամակալած պատին եւ թեթեւություն զգաց: Երկար արտաշնչելով հետեւում էր, թե ինչպես է օդում լուծվում գոլորշին:

Իսկ ի՞նչ շոր հագնեմ, դռան ետեւից հարցրեց Ուստինան:

Արսենին մտքերի մեջ ընկավ: Քրիստափորի տանը կանացի ոչինչ չկար: Քրիստափորի մահացած կնոջ հագուստը մինչեւ վերջ Արսենիի մայրն հագավ, բայց ժանտախտից հետո ստիպված էին այդ ամենն այրել: Թիկունք դարձնելով Ուստինային՝ Արսենին մտավ սենյակ եւ բացեց սնդուկը: Երեսին դասավորված իրերի մի մասը դրեց բացված կափարիչի վրա: Գտավ այն, ինչը փնտրում էր: Նույնպես, չնայելով Ուստինային, նրան պարզեց իր կարմիր շապիկը: Կարմրեց նաեւ ինքը: Ինչպես բոլոր շիկահեր մարդիկ, նա իսկույն կարմրեց:

Ուստինան ձեռքերը մտցրեց թեւքերի մեջ, իսկ կտորը փափուկ նստեց նրա ուսերին: Շորը, որ նախկինում հագնում էր Արսենին, այժմ գրկում էր նրա աննման մարմինը: Դրանում էր նրանց տարօրինակ միացումը: Արսենին չգիտեր, արդյոք երկուսո՞վ էլ այն զգում են հավա-

սարապես:

Շապիկն Ուստինային երկար եղավ, եւ նա ծալեց թեւքերը: Բաց սնդուկի մեջ նա նկատեց վուշե կտավի մի կտոր:

Կարելի՞ է:

Անշուշտ:

Շապկի վրայից նա փաթաթեց կտավն իրանի եւ ազդրերի շուրջ: Ստացվեց զոլավոր շրջազգեստ: Շրջակապեց սնդուկում գտած պարանով: Նայեց Արսենիին: Նա գլխով արեց եւ զգաց, թե հորդացող քնքշությունն ինչպես արտացոլվեց իր հայացքում: Նա աչքերը վար հառեց եւ նորից կարմրեց: Նիհար, շիկահեր աղջկա հանդեպ կարեկցանքից, որ իր շապիկն է հագել, Արսենիի կոկորդը բռնվեց: Նա մտածեց, որ այդպես կրքոտ դեռ չի խղճացել ոչ ոքի:

Հա, մոռացա: Եթե խոցեր ունես քո մարմնի վրա, ցույց տուր ինձ:

Ուստինան ետ տարավ շապկի օձիքը եւ ցույց տվեց նրան վզի վրայի խոցը: Տատանվելով, քանդեց կոճակը եւ ցույց տվեց եւս մի խոց թեւատակին: Արսենին ներշնչեց բուրմունքը նրա մաշկի: Վերքերը մեծ չէին, բայց խոնավ էին: Արսենին գիտեր, որ դրանք հարկ է չորացնել: Մոտ գնալով դարակին, քուրջուփալասով կապկպված բազմաթիվ կճուճներին, մի պահ մտքերի մեջ ընկավ: Մի փոքր կճուճ գտավ վերաթրծված ուռու կեղեւով: Մի քիչ ցանեց մաքուր կտորի վրա եւ թրջեց քացախով: Հերթով դրեց խոցերին: Ուստինան շրթունքը կծեց:

Դիմացիր, խնդրում եմ: Խոց էլի՞ ունես:

Ունեմ, բայց ցույց տալ չեմ կարող:

Արսենին մեկնեց նրան շորի մի կտոր:

Վերցրու, ինքդ քսիր, ես չեմ նայի: Նա շրջվեց վառարանի կողմը: Վառարանի մոտ Ուստինայի ցնցոտիներն էին ընկած, եւ վառարանին մոտ լինելն էլ վճռեց գործը: Ոչ մի բառ չասելով՝ Արսենին դրանք նետեց վառարանի մեջ:

Դա բնական շարժում էր, եւ նա արեց: Բայց դրանում անշրջելիության մի նշանակ կար: Ինչպես ինչ-որ մի հեքիաթում, որ նա լսել էր Քրիստափորից: Նայելով, թե հնամաշ հագուստն ինչպես է կլանել բոցը, Արսենին մտածեց, որ իր շապիկն Ուստինան հիմա պիտի կրի մշտապես: Նաեւ մտածեց, որ ըստ էության նա իր տարեկիցն է: Նա Ուստինային հաց տվեց կվասի հետ եւ իր ձեռքին զգաց հպումը նրա շուր-

թերի:

Առայժմ միայն սա է, ասաց Արսենին, ետ քաշելով ձեռքը: Նա ուզում էր էլի ինչ-որ բան ավելացնել, բայց զգաց, որ իր ձայնը չի ենթարկվում:

Տաք ուտելիք տանը չկար, քանի որ Արսենին ոչինչ չէր եփում: Ժամանակին Քրիստափորը սովորեցնում էր նրան սովորական ճաշատեսակներ պատրաստել, պապի հեռանալուց հետո,-այդպես էր թվում Արսենիին,-այլեւս իմաստ չուներ: Ուստինան ջանում էր ուտել անշտապ, բայց դա վատ էր ստացվում: Նա հացի կողքերից մանր կտորներ էր պոկում ու դանդաղ դնում բերանը: Կուլ տալով՝ համարյա չծամելով: Արսենին հետեւում էր Ուստինային եւ զգում նրա համբույրն իր ձեռքին:

Պարկից նա թեփից մաքրած հատիկ վարսակ ածեց: Ջուր լցրեց եւ դրեց, որ վառարանում եփ գա: Ընթրիքին որոշել էր Ուստինային հյուրասիրել շիլայով:

Մեր գյուղում բոլորը մեռել են, ասաց Ուստինան, մենակ ես եմ մնացել: Եվ սարսափում եմ մահվան ժամից: Իսկ դու սարսափո՞ւմ ես:

Արսենին չպատասխանեց:

Ուստինան հանկարծ սկսեց երգել ուժեղ, բարձր ձայնով:

Հոգին ճերմակ մարմնին հրաժեշտ է տալիս,
ներիր, իմ մարմին ճերմակ (օդ հավաքեց),
դու, մարմին, խոնավ հողի մեջ պիտ գնաս,
քեզ խոնավ հողին պահ տաս (կոկորդի զարկերակն ուռեց),
գիշատիչ որդերին կեր դառնաս:

Լռելով՝ Ուստինան հանգիստ նայում էր նրան: Ասես չէր էլ երգել: Հայացքը չէր փախցնում: Չորացող, դեռ չհյուսված մազերը փափուկ փայլում էին գլխի շուրջ: Քո ծամերը ասես այծերի հոտ լինեն... եկած Գաղաադից: Այն անհիշելի ժամանակներում մազերն ավելի էին հուզում, քան այժմ, որովհետեւ սովորաբար փակ էին: Դրանք համարյա ինտիմ մաս էին կազմում:

Նայելով Ուստինային՝ Արսենին աչք չէր կտրում: Նա զարմանում էր, որ իրենց համար դժվար չէ դիմանալը մեկմեկու հայացքին: Որ իրենց

միջեւ ձգվող թելը բարձր է վեհերոտության զգացումից: Հրճվում էր հրաշեկ շողարձակմամբ: Նրանով, թե ինչպես է անրակին բարձրանում եւ իջնում շնչառության տակտով կրծքախաչի վուշե թելը: Դա միակ բանն էր, որ Ուստինայի վրա մնացել էր իրենը:

Երեկոյան նրանք կերան շիլան, որին Արսենին ավելացրել էր կտավատի յուղ: Կավե ամանները պահած ծնկներին՝ նստել էին օջախի մոտ: Վերջին անգամ նա այդպես նստել էր Քրիստափորի հետ: Արսենին աննկատ դիտում էր նրա վարսերում խաղացող լույսը, որը համաբնույթ էր բոցին: Այժմ դրանք ծամ էին հյուսված եւ նայում էին ամենքին այլ կերպ: Մոտ բերելով փայտե գդալը (Քրիստափորն էր տաշել) բերանին, Ուստինան շուրթունքները ձգում էր ծիծաղելիորեն: Այն ասես համբույր լիներ: Համբույր՝ Քրիստափորին: Արսենին հիշեց, թե ինչպես տաշվեցին այդ գդալները, նույնպես ձմռանը, նույնպես վառարանի մոտ: Հերթական անգամ նայեց Ուստինային, նա քնած էր:

Զգուշությամբ նրա ձեռքից վերցրեց ճաշամանն ու գդալը: Ուստինան չարթնացավ: Նա շարունակում էր նստած մնալ ուղիղ եւ անհանգիստ, ասես նաեւ երազում էր հաղթահարում ինչ-որ դժվարին, միայն իրեն հայտնի ուղի: Արսենին Ուստինային տեղ գցեց դարակի վրա: Ցանալով չարթնացնել, կամացուկ բարձրացրեց աթոռից ու զարմացավ նրա թեթեւությամբ: Նրա գլուխը հակվեց Արսենիի թեւին: Որպեսզի պահի գլուխը, հենեց արմունկին: Ուստինայի թափանցիկ մաշկի տակից նա տեսավ քներակները: Զգաց բուրմունքը նրա շուրթերի: Քո շրթունքներն են երկու կարմիր թել: Այտով սեղմվեց նրա ճակատին: Կամացուկ պառկեցրեց դարակին եւ ծածկեց քուրքով:

Արսենին նստել էր գլխավերեւում ու նայում էր Ոստինային: Սկզբում նստեց ձեռքերը կրծքին ծալած, հետո՝ ծնոտը հենելով ձեռնափին: Երբեմն Ուստինայի դեմքով թեթեւ դողէրոցք էր անցնում: Երբեմն նա ճչում էր: Արսենին իր ձեռնափը նրա երեսով տարավ, եւ նա խաղաղվեց:

Քնիր, քնիր, Ուստինա, ՀՀնջում էր Արսենին:

Եվ Ուստինան քնեց: Նրա տակ քաթանը ճմռթվեց: Նրա այտը քսվեց դարակի փայտին: Արսենին զգուշությամբ բարձրացրեց նրա գլուխը, որպեսզի ծալքերը հարթի: Չարթնանալով, Ուստինան առավ Արսենիի ձեռնափն ու դրեց իր այտի տակ: Նա ստիպված էր կռանալ եւ

բռնել աջ ձեռքը ձախով: Մի քանի րոպե անց Արսենին թիկունքում եւ ձեռքերում ցավ զգաց, բայց դա իրեն հաճելի էր: Նրան թվաց, որ իր թեթեւ տառապանքով հանում է Ուստինայի բեռան մի մասը: Նա ինքն էլ չնկատեց, թե ինչպես նիրհեց:

Արթնացավ իր ձեռնափը խուտուտ բերող արտեւանունքների շարժումից: Ուստինան պառկած էր բաց աչքերով: Նրանցում պլպլում էր վառարանի ածուխների արտացոլանքը: Արսենիի ձեռնափը թացացել էր նրա արցունքներից: Ծրթունքներով հպվեց Ուստինայի կոպերին եւ զգաց աղահամը: Ուստինան կողքի գնաց, ասես տեղ բացելով նրա համար.

Սարսափելի է մթության մեջ:

Նստեց նրա կողքին՝ դարակի եզրին, եւ գլուխը նրա ծնկներին դրեց:

Եղիր ինձ հետ, Արսենիե, մինչեւ իմ մահը:

Ծորի միջից նա զգում էր աղջկա տաք շնչառությունը, որը ելնում էր նրա բառերի հետ:

Մինչեւ մահ կլինեմ քեզ հետ:

Քեզնից բացի ես ոչ ոք չունեմ: Ես ուզում եմ քեզ ամուր գրկել եւ բաց չթողնել:

Ես էլ եմ ուզում քեզ գրկել, որովհետեւ միայնակ սարսափելի է:

Դե պառկիր կողքիս:

Նա պառկեց: Նրանք գրկվեցին եւ պառկեցին այնքա՛ն երկար: Նա կորցրեց ժամանակի հաշիվը: Նա դողում էր մանրիկ դողով, թեեւ քրտինքի մեջ կորել էր: Եվ նրա քրտինքը խառնվել էր մյուսի քրտինքին: Եվ ապա նրա անդամը մտավ մյուսի անդամի մեջ: Իսկ առավոտ ծեգին նրանք տեսան, որ կտավը ալ գույն է ստացել:

-ԺԴ-

Արսենին սկսեց այլ կյանքով ապրել՝ լի սիրով ու վախով: Սիրով՝ Ուստինայի հանդեպ եւ վախով, որ նա կանհետանա նույնքան հանկարծակի, ինչպես եկել էր: Նա չգիտեր, հատկապես ինչի՞ց է վախենում՝ փոթորկի՞ց, կայծակի՞ց, հրդեհի՞ց կամ չար հայացքի՞ց: Ուստինան սեր էր, եւ սերն Ուստինան էր: Նա տանում էր նրան, ասես մոմը

մթար անտառում: Նա սարսափում էր այն բանից, որ գիշերային հազարավոր ագահ էակներ կթռչեն այդ բոցի վրա եւ կհանգցնեն իրենց թեւերով:

Նա կարող էր ժամերով զմայլվել Ուստինայով: Բռնում էր նրա ձեռքն ու, կամաց բարձրացնելով թեւքերը, շուրթերով շոշափում հազիվ նկատելի ոսկե աղվամազիկները: Դնում էր գլուխը նրա ծնկներին եւ մատնաձայրերով անցնում վզի եւ կզակի միջնագծով: Լեզվով համտեսում էր նրա թարթիչները: Զգուշորեն նրա գլխից հանում էր թաշկինակը եւ բաց էր թողնում մազերը: Ծամ էր հյուսում: Նորից էր բաց թողնում եւ դանդաղ տանում՝ կատար անելով: Պատկերացնում էր, որ մազերը լիճ են, իսկ կատարը՝ նավակ: Սահելով ոսկե լճով, այդ կատարին տեսնում էր իրեն: Զգում էր, որ սուզվում է եւ ամենաշատը վախենում էր փրկվելուց:

Ուստինային նա ոչ ոքի ցույց չէր տալիս: Լսելով դռան թակոցը՝ Ուստինայի վրա գցում էր Քրիստափորի քուրքն ու կից սենյակ էր ուղարկում: Հայացք էր նետում դարակի վրա որոնելու իրեր, որոնք կարող էին մատնել Ուստինային: Բայց նման իրեր չկային: Քրիստափորի եւ Արսենիի տնտեսության մեջ առհասարակ կանացի ոչինչ չկար: Համոզվելով, որ դուռը Ուստինայի վրա ամուր փակված է, նա բացում էր մուտքի դուռը:

Ուստինան անձայն նստում էր հարեւան սենյակում, իսկ Արսենին զննում էր այցելուին: Նրա ընդունելություններն առավել կարճատեւ դարձան, եւ այցելուներն այդ նշում էին: Արսենին այլեւս զրույցի տոն չէր տալիս: Չարտասանելով ոչ մի ավելորդ բառ, նա զննում եւ շոշափում էր հիվանդ մարմինը: Կենտրոնացած լսում գանգատներն ու նշանակում անում: Ընդունում էր ուղարկված վարձը: Երբ բժշկող բառերն ասված էին, սպասողաբար նայում էր հյուրին: Դա կապելով բժշկի աճող զբաղվածության հետ, այցելուները նրան վերաբերվում էին մեծ հարգանքով:

Ուստինայի մասին ոչ ոք չգիտեր: Բակում նա գրեթե չէր երեւում, իսկ դրսից փոքրիկ պատուհանի միջով, որ պատված էր ցուլի փամփուշտով, ոչ մի բան չէր երեւում: Խիստն ասած, նրանց միջով ոչինչ չէր երեւում նաեւ ներսից: Այնպես որ, նույնիսկ եթե որեւէ մեկը որոշեր ծիկրակել Արսենիի պատուհանից, քիչ բան կիմանար: Բայց չէ՞ որ ոչ ոք էլ չէր ծիկրակում:

Մի անգամ տղամարդկային տկարությամբ տառապող մի մարդու ընդունելության ժամանակ Ուստինան փոշտաց: Ոչ բարձր, բայց փոշտաց, որքանով կացարանը, համենայն դեպս, ցուրտ էր: Այցելուն հարցական նայեց Արսենիին եւ հարցրեց, թե այդ ինչ աղմուկ է: Արսենին պատասխանեց չհասկացող հայացքով: Եկվորին առաջարկեց չշեղվել իր խնդրից, այլապես նա երբեք չի կարգավորի այն:

Երբեք, ընդգծեց Արսենին եւ խորհուրդ տվեց ավելի շատ ստեպղին ուտել:

Ճանապարհելով հյուրին՝ տանտերը ոտքերը դիտմամբ դնում էր լսելի, սակայն, Ուստինան այլեւս չէր փոշտում: Երբ նա ի վերջո ներս մտավ, Արսենին խնդրեց փոշտալ քուրքի ներսամասում, որովհետեւ մորթին խլացնում է ձայները:

Սովորաբար ես այդպես էլ անում եմ, ասաց Ուստինան: Իսկ այս անգամ ամեն ինչ հանկարծակի եղավ, եւ ես պարզապես չհասցրի ծածկվել քուրքով:

Այցելուների հետ Արսենիի հարաբերություններում ինչ-որ ցրվածություն ի հայտ եկավ: Առավել նկատելի դարձավ, որ Արսենին մտքերով ուրիշ տեղում է: Նրա այցելուներն իմանային Ուստինայի մասին, այդ մտքերը կտեղավորեին հարեւան սենյակում: Եվ ոչ լիովին արդար կլինեին:

Արսենին Ուստինայի մասին չէր մտածում պարզապես: Քիչ առ քիչ նա սուզվում էր յուրատիպ, մի ավարտուն ներաշխարհում, որն իրենից եւ Ուստինայից էր կազմված: Այդ աշխարհում նա Ուստինայի հայրն էր եւ որդին: Ընկերն էր, եղբայրը, բայց գլխավորը՝ ամուսինը: Բոլոր այդ պարտականությունները Ուստինայի որբությունը թողնում էին ազատ: Եվ նա դրանց մեջ մտավ: Իր սեփական որբությունը ենթադրում էր նույնպիսի պարտականություններ Ուստինայի հանդեպ: Շրջանը փակվեց. նրանք միմյանց համար դառնում էին ամեն ինչ: Այդ շրջանի կատարելությունը Արսենիի համար անհնարին էր դարձնում որեւէ այլ բանի ներկայությունը: Դրանք ամբողջի երկու մասերն էին, եւ ցանկացած հավելում Արսենիին թվում էր ոչ սովորական ավելցուկային, այլ անթույլատրելի: Նույնիսկ բոպեականը եւ ոչնչի չպարտավորեցնողը:

Միության կատարելությունն Արսենիին տեսանվում էր նաեւ այն բանում, որ իրենց առանձնությունը չէր չարչարում Ուստինային: Իրեն թվում էր, թե կյանքի նման ընթացքի պատճառն ու իմաստը նա տեսել

է նույն թափանցողությամբ, ինչ որ ինքը: Եվ եթե նույնիսկ չի էլ տեսել, ապա պարզիպարզո անսահման հոգնել է թափառումներից, եւ նրա մշտական ներկայությունն ընկալվում էր իբրեւ չվաստակած երջանկություն:

Երեկոներին նրանք ընթերցում էին: Որպեսզի տեղից չելնեին մարխը փոխելու, օգտագործում էին ծիթաճրագ: Այն այրվում էր աղոտ, բայց հավասարաչափ: Կարդում էր Արսենին, որովհետեւ Ուստինան գրագետ չէր:

Ծնորհիվ Արսենիի նա առաջին անգամ լսեց Ալեքսանդրին հղված Անտիֆոնեսի կանխագուշակությունը: Ամենայն աշխարհի տիրակալը, ասաց Անտիֆոնեսը, կմեռնի երկաթյա հողում, ոսկրե երկնքի տակ: Եվ երբ Ալեքսանդրը հայտնվեց պղնձե հողում, սարսափը պատեց նրան: Այդ սարսափն առկայծում էր կիսախավարից Ուստինայի աչքերում: Եվ հրամայեց Ալեքսանդրն իր զինվորներին ուսումնասիրել հողի կազմությունը: Իսկ նրանք, ուսումնասիրելով հողի կազմությունը, գտան միմիայն պղինձ՝ առանց երկաթի: Ալեքսանդրը, երկաթից պինդ հոգի ունենալով, հրաման արձակեց շարունակել առաջ շարժվել: Եվ նրանք գնում էին պղնձե հողով, եւ ձիերի սմբակների հարվածները պղնձի վրա նրանց կայծակ էին թվում...

Ուստինան քնքշորեն հակվեց Արսենիի ուսին:

Իսկ հասկանո՞ւմ ես, ինչ որ կարդում ես, թե՞ միայն թերթերն ես շուռ տալիս:

Նրան ավելի ամուր սեղմվելով՝ Ուստինան ձեռքերով գրկեց իր ծնկները: Խնդրեց շտապելով չընթերցել: Նա գլխով արեց,սակայն իր համար անսպասելի նորից սկսեց շտապել: Մի երեկոյի համար առանձնացված հինգ թերթերն ամեն անգամ ընթերցվում էին ավելի արագ, եւ Ուստինան նորից ու նորից հարցնում էր Արսենիին, ի՞նչն է ստիպում այդպես շտապել: Պատասխանելու փոխարեն նա այտը սեղմում էր նրա այտին: Խանդագին մի միտք էր ծագում, որ երեկոյան ժամերին Ալեքսանդրը նրան հետաքրքրում էր Արսենիից շատ:

Երբեմն կարդում էին Կիտովրասի մասին: Որպեսզի իր կնոջը թաքցնի ուրիշներից, Կիտովրասը նրան իր ականջի մեջ էր պահում: Արսենին նույնպես կուզենար Ուստինային ականջի մեջ կրել, բայց այդ հնարավորությունը չուներ:

-ԺԵ-

Մարտի վերջին Ուստինան ասաց.

Ես իմ որովայնում պտուղ եմ կրում, քանզի դադարել է իմ սովորական կանացին:

Ասաց՝ ափերով հենվելով դարակի փայտին, փոքր-ինչ խեղճացած, Արսենիին նայելով: Այդ վայրկյանին Արսենին վառարանի մեջ ճղոնների էր գցում: Նա մի քայլ արեց դեպի Ուստինան եւ ծնկների վրա իջավ նրա դեմ՝ նստածի: Նրա ձեռքը դեռ սեղմում էր ճղոնը: Այն վայր ընկավ եւ ծայնեղ գլորվեց հատակին: Արսենին դեմքը մտցրեց Ուստինայի կարմիր շապիկի տակ: Իր ծոծրակին զգաց նրա ձեռքը՝ սիրող եւ թուլացած: Փափուկ շարժումով նա Ուստինային պառկեցրեց դարակի վրա եւ դանդաղ, դարս առ դարս, սկսեց վեր քաշել նրա շապիկը: Մերկացնելով փորը՝ շուրթերով սեղմվեց նրան: Ուստինայի փորը հարթ էր, որպես հովիտը, իսկ նրա մաշկը պիրկ էր: Փորը սահմանափակում էր կողերի թրթռուն գիծը: Եվ ոչինչ փոփոխություն չէր կանխատեսում: Ոչինչ չէր ցուցանում նրան, ով ներսում պատրաստվում էր խախտել այդ գծերը: Շուրթերը փորով սահեցնելով, Արսենին գիտակցում էր, որ միայն Ուստինայի հղիությունը կարող էր արտահայտել իր անչափելի սերը, որ այն աճում է Ուստինայի միջով: Նա երջանկություն էր զգում այն բանից, որ հիմա ներկա է Ուստինայի ներսում մշտապես: Ինքը նրա անբաժանելի մասն էր:

Արսենին հասկանում էր, որ Ուստինայի նոր վիճակն իրեն առավել կախյալ է դարձրել: Գուցեեւ նրան կորցնելու վախը նվազել է, իսկ քնքշությունը նրա հանդեպ, ընդհակառակը, ինքն զգում էր չտեսնված սրությամբ: Արսենին քնքշանք էր տածում, տեսնելով, թե Ուստինան ի՛նչ հաճույքով է սկսել ուտել: Ախորժակը ծիծաղելի էր թվում հենց իրեն՝ Ուստինային: Նա ֆոթացնում էր, եւ չորս կողմը հացի փշրանքներ էին թռչում: Արսենին քնքշանք էր տածում, երբ Ուստինայի դեմքը գորշին էր տալիս, եւ նա սրտխառնուք էր զգում: Նա մուսկատի յուղ էր հանում եւ գդալով տալիս Ուստինային: Գդալը դանդաղ ծգում էր դեպ իրեն եւ, հետեւելով, թե ինչպես են Ուստինայի շուրթերը սահում գդալի վրայով: Եվ դեռ առանց հոգնության հիանում նրա աչքերով, որ հղիության հետ բոլորովին այլ էին դառնում: Նրանցում ինչ-որ խոնավու-

թյուն, անօգնականություն ի հայտ եկավ: Արսենիին հորթի աչքեր հիշեցնող:

Երբեմն այդ աչքերում թախիծն էր միջանցում: Արսենիի հետ առանձին գոյությունը, անպայման, նրա երջանկությունն էր եղել: Բայց եղել էր նաեւ ինչ-որ այլ բան, որն օրն օրի առավել նկատելի էր դառնում: Արսենին, որ նրա համար աշխարհ էր թվում, չէր կարող փոխարինել, համենայն դեպս, ողջ աշխարհին: Ընդհանուր կյանքից կտրված լինելու զգացումն անհանգստություն էր ծնում Ուստինայի մեջ: Եվ Արսենին դա տեսնում էր:

Մի անգամ Ուստինան հարցրեց՝ իսկ իրեն չի՞ կարելի կանացի հագուստ գնել: Արսենիի մոտ մնալու ընթացքում ինքը հագել է այն, ինչը հագել է նա:

Քեզ հաճելի չի՞ հագնել իմ շորը, հարցրեց Արսենին:

Ինձ հաճելի է, անուշս, շատ հաճելի է, պարզապես ես կուզեի հագնել նաեւ իմը: Չէ՛ որ ես կին եմ...

Արսենին խոստացավ մտածել: Նա իրոք մտածում էր, բայց իր խոհերում ոչնչի չհանգեց: Չբացահայտելով Ուստինայի գաղտնիքները՝ կանացի շրջազգեստ գնել նա չկարողացավ: Այդ գործում վստահելի որեւէ մեկը չկար: Այն, որ Ուստինային մենակ թողներ գյուղարվարձան գնալիս, խոսք անգամ լինել չէր կարող: Առաջինը՝ գյուղարվարձանցիներին դժվար չէր իմանալը, որտեղից է նա եկել, իսկ երկրորդը... Արսենին աղմուկով արտաշնչեց եւ զգաց, թե ինչպես է կոկորդը սեղմվում: Նա չէր կարող պատկերացնել, որ Ուստինան իրեն կլքի թեկուզ կես օրով:

Միառժամանակ անց նա հիշեցրեց Արսենիին իր խնդրանքի մասին, սակայն պատասխան չստացավ: Մի քանի շաբաթ անց գնելու մասին մտածելն արդեն ուշ էր. հարմար հագուստ գտնել թույլ չէր տալիս Ուստինայի մեծացած փորը: Եվ այդ ժամանակ նա սկսեց իր համար վերակարել Արսենիի շորերը:

Հագուստից առավել նրան անհանգստացնում էր այն, որ իրենք հաղորդության չեն գնում: Եկեղեցի գնալ Արսենին վախենում էր, քանի որ ճանապարհը դեպի Սուրբ Ընծաներ անցնում էր խոստովանության միջով: Իսկ խոստովանությունը ենթադրում էր պատմությունն Ուստինայի մասին: Նա չգիտեր, թե ինչ է լինելու պատասխան խոսքը: Պսա-

կադրվե՞լ: Նա երջանիկ կլիներ պսակադրվել: Իսկ եթե ասեն՝ բաց թո՞ղ: Կամ առայժմ ապրեք տարբեր տեղերու՞մ: Նա չգիտեր, ինչ կարող են ասել, որովհետեւ նման ոչ մի բան իր հետ չէր պատահել:

Վախենալով նրանց լսելուց, Արսենին եկեղեցի չգնաց եւ չխոստովանեց: Նաեւ Ուստինան չգնաց:

Մի անգամ նա հարցրեց.

Դու ինձ կնության կառնե՞ս:

Դու իմ կինն ես, ում սիրում եմ կյանքիցս ավելի:

Ես ուզում եմ քոնը լինել, Արսենիե, Աստծո առաջ եւ մարդկանց:

Համբերիր, սեր իմ: Նա համբուրեց նրա փոսիկը: Դու կլինես իմը Աստծո առաջ եւ մարդկանց: Միայն թե մի փոքր համբերիր, սեր իմ:

Համարյան ամեն օր նրանք գնում էին անտառ: Սկզբում դա այնքան էլ հեշտ չէր, քանի որ այնտեղ ձյունը դեռ խորն էր: Նրանք գնում էին՝ մխրճվելով ծնկահաս ձյան մեջ, բայց, համենայն դեպս, գնում էին: Արսենին գիտեր, որ Ուստինային թարմ օդ է անհրաժեշտ: Բացի այդ, նույնիսկ այդպիսի թեթեւ զբոսանքը նրա համար տանը նստելուց լավ էր: Հագնելով Քրիստափորի սապոգները՝ Ուստինան հաճախ էր մաքրում ներբանները: Ոտքի փաթաթանները դրությունը չէին փրկում: Եվ եթե այն ժամանակ սապոգները կարում էին փափուկ կաշվից, հաշվի չառնելով աջ ու ձախ ոտքերը, չափսը ամեն դեպքում նշանակություն ուներ: Ուստինայի ոտքերը շատ էին տարբերվում Քրիստափորի ոտքերից:

Ուստինան շարժվում էր ճիշտ Արսենիի ոտնահետքերով: Ամեն առավոտ նրանք գնում էին միեւնույն կածանով եւ ամեն առավոտ տրորում էին այն, ասես առաջին անգամ, որովհետեւ մեկ օրվա մեջ կածանը ծածկվում էր: Նույնիսկ եթե ձյուն չէր տեղում, տրորված ուղին հավասարեցնում էր գետնահողմը: Բաց տարածության մեջ, գերեզմանոցի եւ անտառի արանքում, միշտ ուժեղ քամի էր փչում:

Երբ անտառ էին մտնում, քամին թուլանում էր: Եվ այնտեղ նրանք երբեմն գտնում էին իրենց հետքերը: Այդ հետքերը նույնպես ձյունափոշու տակ էին, երբեմն էլ դրանք հատվում էին այլ հետքերով՝ գազանների կամ թռչունների,- բայց դրանք գոյություն ունեին: Չկորան անհետ, անցնում էր Արսենիի մտքով:

Անտառում այնքան էլ ցուրտ չէր, ինչպես որ ուղին դեպ այնտեղ:

Գուցեեւ, ավելի տաք էր: Բազմօրյա ձյունաածածկույթը ճյուղերի վրա Ուստինային մորթի էր թվում: Սիրում էր այն թափ տալ ճյուղերից եւ հրճվում, թե ձյունն ինչպես է նստում իր ու Արսենիի ուսերին:

Դու ինձ այսպիսի մուշտակ կառնե՞ս, հարցնում էր Ուստինան:

Իհարկե, պատասխանում էր Արսենին: Անպայման կգնեմ:

Ճատ էր ուզում նրա համար այդպիսի մուշտակ գնել:

Ապրիլի կեսին ձյունն սկսեց հալվել եւ իսկույն հնացավ ու դարձավ հերաթափ: Ծակոտկեն՝ սկսված անձրեւներից: Այդպիսի մուշտակ Ուստինան այլեւս չէր ուզում: Ուշադիր նայելով իր ոտքերի տակ, նա ցատկում էր հալված մի ճիմաթմբից մյուսը: Ձյան տակից երես էին ելնում անտառային ամբողջ թափթփվածությունը՝ հերվա տերեւներ, գունազրկված քրջի ծվեններ եւ խունացած պլաստիկ շշեր: Արեւի դեմ բաց բացատներից արդեն խոտն էր ելնում, բայց ծմակ տեղերում ձյունը դեռ խորն էր: Եվ այդտեղ ցուրտ էր: Վերջիվերջո հալվեց նույնիսկ այդ ձյունը, բայց գոյացած ջարփոսերը մինչեւ ամառվակես մնացին:

Մայիսին Ուստինան սապոգները փոխեց տրեխիկներով, որ Արսենին էր գործել: Տրեխիկները Ուստինային դուր էին գալիս, որովհետեւ գործված էին իր ոտքի չափով եւ, կարեւորը, գործել էր Արսենին: Թույլ չտալով կռանալ, նա զգուշությամբ փաթաթում էր կապերը նրա ոտքերի շուրջ, եւ դա նույնպես նրան դուր էր գալիս: Կոշիկը թեթեւ էր, բայց ջուր էր քաշում:

Հաճախ Ուստինան տուն էր գալիս թաց ոտքերով, բայց սապոգ, ինչ էլ լիներ, չէր ուզում:

Պարզապես ես կքայլեմ, ասում էր նա Արսենիին:

Նրանց զբոսանքներն ավելի երկարատեւ դարձան: Այժմ գնում էին ոչ միայն մոտակա անտառ, այլեւ շատ հեռու ամեն մի բնակելի վայրից, որ Քրիստափորը Արսենիին էր ցույց տվել ժամանակին: Այդ վայրերում Արսենին իրեն ավելի հանգիստ էր զգում: Մոտակա անտառում նրանք, պատահում էր, մարդկանց էին տեսնում եւ, նկատելով դեռեւս հեռվից, շտապում էին թաքնվել: Իսկ հիմա, գնալով ավելի հեռու, չէին հանդիպում ոչ ոքի:

Դու չե՞ս վախենում մոլորվելուց, հարցնում էր Ուստինան Արսենիին:

Չեմ վախենում՝ այս թավուտներն իմ եղունգները դեռ մանկուց են ճանաչում:

Այդ զբոսանքներին Արսենին հետը վերցնում էր պարկով ուտելիք եւ խմելիք: Այնտեղ էր նաեւ ոչխարի փոստը, որի վրա նրանք նստում էին երկարատեւ երթադադարների ժամանակ. Արսենին հետեւում էր, որպեսզի Ուստինան շատ ուժեղ չհոգնի: Ծրջելով, նրանք խոտ էին հավաքում, որով ընծյուղվում էր կենդանի բնությունը: Արսենին Ուստինային նկարագրում էր բույսերի հատկությունները, եւ նա զարմանում էր նրա լայն իմացության վրա: Նրան նմանապես պատմում էր մարդու կազմության եւ կենդանիների վարքագծի մասին, մոլորակների տեղաշարժման, պատմական անցքերի եւ թվերի խորհրդանշական ամբողջականության մասին: Այդպիսի րոպեներին նա իրեն զգում էր իբրեւ հայրը նրա: Կամ, եթե նկատի առնենք նրա իմացության աղբյուրը, իբրեւ պապ: Ծիկահեր աղջիկը Արսենիին կավ էր թվում իր ձեռքերում, որից ինքն իր համար Կին էր ծեփում:

-ԺԶ-

Ասել, որ Ուստինայի գոյության մասին ոչ ոք չգիտեր, հիմա կլիներ չափազանցություն: Թեկուզեւ հեռվից, անտառում նրանց երկուսին մեկ անգամ չէ որ տեսել էին: Ուստինայի հետ, անշուշտ, ծանոթ չէին, բայց Արսենիին կարող էին ճանաչել առանց դժվարության, նույնիսկ հեռվից: Այցելելով Արսենիի տուն, Ուստինային լսում էին պատի մյուս կողմից, որովհետեւ անաղմուկ մնալ մարդը մշտապես չի կարող: Շատերը գլխի էին ընկել, որ Արսենիի մոտ ինչ-որ մեկն ապրում է, բայց դե քանի որ թաքցնում էր, նրան ոչ մի բանի մասին չէին հարցնում: Արսենին նրանց բժիշկն էր, իսկ բժիշկներին գրգռել՝ միշտ էլ վախեցել են: Իր կողմից, այդ կասկածանքների մասին, Արսենին, ըստ երեւույթին, նույնպես գլխի էր ընկել: Իր կռահումները նա չէր ջանում ո՛չ հաստատել, ո՛չ էլ ժխտել: Նրան հարմար էր, որ իրեն ոչ ոք չէր հարցնում՝ ինչ էլ որ դրա տակ ենթադրվեր: Արսենիին բավ էր եւ այն, որ իր աշխարհին ոչ ոք ձեռք չի տալիս: Աշխարհին, որտեղ գոյում էին միայն ինքը եւ Ուստինան:

Ամռան սկզբին, երբ երկարատեւ զբոսանքներից Ուստինան սկսեց հոգնել, նրանք ավելի հաճախակի էին նստում տան առջեւ: Խրճիթի նորոգումից հետո մի քիչ գերան ու տախտակ էր մնացել, եւ Արսենին

որոշեց բակում ծածկ շինել: Տախտակները կողք-կողքի դնելով, նա ցավով հիշեց,թե ինչպես մի տարուց քիչ առաջ նման աշխատանքը ղեկավարում էր Քրիստափորը: Պապի ձայնով Արսենին Ուստինայից խնդրեց իրեն տալ այս կամ այն գործիքը, բայց դա ավելի վատ ստացվեց, քան Քրիստափորի մոտ: Տախտակները կցադրվում էին նույնպես վատ: Ի՞նչ կասեր Քրիստափորն իր աշխատանքի մասին: Եվ ի՞նչ կասեր ինքը Ուստինայի մասին:

Ծածկը կպած էր տանը ետեւի կողմից եւ ճանապարհից տեսանելի չէր: Արսենիի ձգած պարաններով մի քանի շաբաթ անց խիտ վեր ձգվեց բաղեղը: Նրա տանիքը հարդով էր պատված, եւ ջուր չէր թողնում: Այժմ կարելի էր մաքուր օդին լինել ցանկացած եղանակի: Ամենից շատ նրանք սիրում էին ծածկի տակ նստել երեկոներին:

Հուլիսյան երկարատեւ մի երեկո Ուստինան Արսենիին խնդրեց իրեն գրել-կարդալ սովորեցնել: Այդպիսի խնդրանքը նրան սկզբում զարմացրեց: Այն ամենը, ինչը նրանց պետք էր ընթերցել, կարող էր ընթերցել ինքը, եւ դա իրենց երկմիասնության մասն էր: Պոկելով պատատուկի ծաղիկը՝ Արսենին զգուշորեն այն հագցրեց Ուստինայի քթի ծայրին: Քո ինչի՞ն է պետք, ուզում էր հարցնել Արսենին, բայց չհարցրեց: Նա տուն մտավ եւ այդտեղից ետ դարձավ Սաղմոսագրքով: Նստելով Ուստինայի կողքին, Արսենին բացեց գիրքը: Ցուցամատը հպվեց առաջին իսկ խրուկաներկե անվանատառին: Տառը կարմրատակեց մայր մտնող արեւի շողերի մեջ:

Սա Ե տառն է: Այստեղ նրանից է սկսվում «Երանելի» բառը:

Երանելի է այն տղամարդը, ով չի հետեւում անարգ խորհուրդների, անշտապ ընթերցեց Ուստինան: Մեղավորաց ճանապարհին մի նստեք եւ մի կանգնեք, քանզի կկեղեքվեք: Արսենին լուռ նայեց Ուստինային: Նա գլուխը դրեց Արսենիի ուսին:

Շատ սաղմոսներ ես անգիր գիտեմ: Լսողությամբ:

Նրան գրել-կարդալ ուսուցանելիս դա պետք եկավ: Մի քանի տառ կարդալով՝ Ուստինան վերհիշում էր ամբողջ դարձվածքը, ինչը օգնում էր նրան ակնթարթորեն ճանաչել հաջորդ տառերը: Արսենին նույնիսկ չէր սպասում, որ ուսումն այդքան արագ առաջ կգնա:

Ամենաշատը Ուստինային դուր էր գալիս, որ տառերն անուն ունեն: Նա արտաբերում էր մտքում, եւ շուրթերը նրա միշտ շարժվում էին: Այբ:

Բեն: Գիմ: Պոկելով ճյուղը՝ տառերի անունները գրում էր տոպանած հողի վրա եւ անտառային կածաններում:Բարին Բարբառիր: Անուններ-ը տառերին ինքնուրույն կյանք էին տալիս: Նրանք տալիս էին հան-կարծակի իմաստ, որն ապշեցնում էր Ուստինային: Ինչպես մարդիկ մտածում են: Ասա խոսքդ հաստատ:

Վերջապես տառերն ունեին թվային նշանակություն:

Ա տառը տիտղոսի տակ նշանակում էր՝ մեկ, Բ-ն՝ երկուս, Գ-ն՝ երեք: Ինչու՞ է Ա-ից հետո գալիս Վ-ն, զարմացավ Ուստինան: Իսկ ու՞ր է, հարց է ծագում, Բ-ն:

Թվերի նշանակությունը հետեւում է հունական այբուբենին:

Դու հունարեն գիտե՞ս:

Ոչ (Արսենին ափերը Ուստինայի այտերին դրեց եւ քիթը քսեց նրա քթին), այսպես խոսեց Քրիստափորը: Նա նույնպես չգիտեր հունարեն, բայց շատ բաներ զգում էր ինտուիտիվ:

Ուստինային ապշեցրած տառերի հատկանիշներն ամրապնդվեցին ոչ պակաս զարմանալի թվերի հատկանիշներով: Արսենին նրան ցույց տվեց, թե ինչպես են թվերը դասավորվել եւ ընթերցվել, բազմապատկ-վել եւ բաժանվել: Նրանք նշանավորեցին մարդկության պատմության գագաթը: ՐԾ տարին՝ /5500-ն է/ ըստ աշխարհի Արարչագործության, երբ ծնվեց Քրիստոս: Նրանք էլ նշանավորեցին պատմության ավար-տը, որը երեւաց Նեռի սարսափելի թվի մեջ՝ ՈԿԶ /666/: Եվ այս ամենն արտահայտվում էր թվերով:

Թվերն իրենց հարմոնիան ունեին, որն արտացոլում էր աշխարհի հարմոնիան եւ նրանում՝ ամենայն բանի: Բազմակի նմանատիպ տեղե-կություններ Ուստինան ընթերցում էր Քրիստափորի գրառումներից, որն իր համար գրկամեջ բերում էր Արսենին: Շաբաթն ունի յոթ օր եւ կազմավորում է մարդկային վարքը. Ա օրը՝ մանկան ծնունդն է, Բ օրը՝ պատանու, Գ օրը՝ երիտասարդի, Դ օրը՝ հասուն տարիքի, Ե օրը՝ ծե-ության, Զ օրը՝ զառամության, Է օրը՝ մահվան:

Ի դեպ, Քրիստափորը տարված էր ոչ միայն թվերի նշանագիտու-թյամբ: Նրա գրառումների մեջ Ուստինան գտավ հեռավորությունների ցուցումներ: Մոսկվայից Կիեւ մեկուկես հազար վերստ է, Մոսկվայից մինչեւ Վոլգա՝ ՄԽ վերստ, Սպիտակ լճից մինչեւ Ուգլիչ՝ ՄԽ վերստ: Ինչու է նա այդ ամենը գրառել, մտածում էր Ուստինան ընթերցելով:

Քրիստափորը,- նրան մտովի պատասխանում էր Արսենին,- չի եղել, անշուշտ, ո՛չ Մոսկվայում, ո՝չ էլ Կիեւում, ո՛չ էլ Վոլգայում: Հնարավոր է, այդ տվյալների մեջ նրա ուշադրությունը գրավել է 240 վերստը, որը հանդիպում է կրկնակի: Նման զուգադիպումներին, պատասխանեց Արսենին, հանգուցյալը հատուկ նշանակություն էր տալիս, թեեւ լիովին չէր գիտակցում դրանց իմաստը: Կարեւոր է, որ մենք իրար արդեն հասկանում ենք առանց խոսքի:

-ԺԷ-

Ուստինայի հղիությունն ընթանում էր ոչ սովորական: Ժամանակ առ ժամանակ նա գանգատվում էր գլխացավից ու գլխապտույտից: Նման դեպքերում Արսենին տրորում էր նրա քունքերը սամիթի յուղով կամ գետնամորու եփուկով: Ծագեցին անհարմարություններ, որոնցից Ուստինան ամաչում էր, եւ այդ պատճառով էլ՝ լռում: Օրինակ, փորկապությունը: Նկատելով այդ, Արսենին նախատեց Ուստինային եւ ասաց, որ հիմա իրենք մեկամբողջ են, եւ որ նա չպիտի ամաչի: Փորկապության դեմ նա տվեց շամբուկի մատղաշ տերեւների եփուկ: Գարնանը նրանք միասին էին հավաքում այդ տերեւները եւ միասին եփում մեղրով:

Ուստինայի քունը խանգարվեց: Այն մասին, որ գիշերվա կեսին նա արթնանում էր, Արսենին կռահեց, լսելով նրա շնչառությունը: Երբ Ուստինան քնած էր, շնչում էր քթով՝ աղմուկով եւ հավասարաչափ: Որպեսզի նրա քունը վերականգնվի, Արսենին գիշերվա համար տալիս էր փայտամամուռի թուրմ:

Ուստինայի մարմինը բացահայտորեն փորձում էր նրա ոգու ամրությունը: Ուստինային մշտապես տանջում էին այրոցները: Իր արգանդում, այնտեղ, ուր գտնվում էր երեխան, նա ծանրություն ու ցավ էր զգում: Մեծացած փորն անխղճաբար հարվում էր Արսենիի քաթանե շապկի հետ շփվելուց:

Ուստինայի կրած բեռան պառճառով ոտնաթաթերն այտուցվեցին: Դիմագծերը թվացին ուռած: Աչքերը քնքոտ դարձան: Ուստինայի հայացքում անսովոր ցրվածություն ի հայտ եկավ: Այդ փոփոխությունները նկատելի էին Արսենիին եւ անհանգստացնում էին: Ուստինայի հան-

գած աչքերում նա տեսավ հղիության հետեւանքով սկսվող հոգնություն:

Վիճակի նորույթը օգնում էր նրան հաղթահարել առաջին ամիսների անհարմարությունները: Առժամանակ անց այդ վիճակն արդեն նոր չէր: Սովորական էր եւ հոգսաշատ: Եվ դեռ աշուն էլ եկավ, եւ օրերը դարձան հյուսիսանման կարճատեւ: Բելոգյորեն պարուրած խավարը Ուստինային թախիծ էր բերում: Նա տեսնում էր, որ բնությունը մեռնում է, եւ դրա հետ ոչինչ անել չէր կարողանում: Նայելով, թե ինչպես են տերեւները թռչում շուրջբոլորը ծառերի, Ուստինան նույնպես արցունք էր թափում:

Իր մարմնում փոփոխությունները հիմա դիտում էր ասես թե կողքից: Ուռած, դանդաղաշարժ էակի մեջ ավելի դժվար էր տեսնելը իրեն՝ առաջվանին՝ ճկուն, ճարպիկ, ուժեղ: Ինչ-որ մեկի կողմից տեղավորած օտար մարմնում:

Դե ոչ թե ինչ-որ մեկի՝ Արսենիի: Հասնելով այդ մտքին, Ուստինան կարծես թե հասնում էր հատակին, ետ հրվում եւ դարձյալ լողում դեպի երեսը: Եվ այստեղ բացվում էր բոլոր խնդությունների դիմաց, որոնք շրջապատում էին իրեն: Եվ Ուստինայի ուրախություններն ավելի վառ էին, քան տառապանքները:

Նա ուրախանում էր իր մեջ զարթնած ախորժակից, որովհետեւ գիտեր, որ այլեւս մենակ չի սնվի, այլ՝ երեխայի հետ: Ուրախանում էր նոր կաթով, որ շարունակ հայտնվում էր իր պտուկների վրա: Տրվում էր երեխայի ապագայի մասին անզսպելի ֆանտազիաների եւ դրանք կիսվում Արսենիի հետ: Եթե աղջիկ ծնվի, նա կմեծանա իբրեւ ամենագեղեցիկը Ռուկինյան գյուղարվարձանում եւ կամուսնանա իշխանի հետ:

Բայց Ռուկինյան գյուղարվարձանում իշխաններ չկան:

Գիտես, նման առիթով կգա: Իսկ եթե տղա ծնվի, որը, համենայն դեպս, նախընտրելի է,- նա կլինի լուսագես եւ իմաստուն, ինչպես դու, Արսենիե:

Ինչու՞ երկու լուսագես եւ իմաստուն:

Ես այդպես եմ ուզում, քնքուշս, ի՞նչ վատ բան կա դրանում: Ստածում եմ, չէ՞, որ ոչ մի վատ բան չկա:

Մի անգամ Արսենին ափով դանդաղ շոշափեց Ուստինայի փորն ու

ասաց.

Տղա է:

Փառքդ շատ, Տե՛ր, ես որքան ուրախ եմ: Ինչ էլ լինի՝ ուրախ եմ: Հատկապես՝ տղայի համար:

Նստելով նստարանին, Ուստինան սովորաբար շոյում էր իր փորը: Երբեմն իր ներսինի խաղն էր զգում: Արսենիի խոսքերից հետո նա չէր կասկածում, որ տղա է: Երբեմն Արսենին նրա փորին ականջ էր դնում:

Ի՞նչ է ասում նա, հարցնում էր Ուստինան:

Քեզ խնդրում է, քիչ էլ սպասես: Մինչեւ դեկտեմբերի սկիզբը:

Դե լավ, քանի որ խնդրում է: Ախր, իրեն էլ, կարծում եմ, հոգնեցրել է այնտեղ նստելը:

Դու նույնիսկ չես պատկերացնում, ինչքան է զզվել:

Որպեսզի զվարճացնի տղային, Ուստինան երգեց.

Մայրիկ-Մայրիկ, Մայր Աստուծո,
Սրբազնագույն Տիրամայր, (Ուստինան ինքը խաչակնքվեց եւ խաչակնքեց փորը),
Ու՞ր ես, Մայրիկ, քնե՞լ ես գիշերը:
Գիշերել եմ ես ի քաղաք Երուսաղեմ,
Աստծո եկեղեցու ավագ սեղանի մոտ,
Մի քիչ քնեցի՝ շատ բան տեսա,
Ասես Քրիստոս Որդուն ծնեցի,
Բարուրի մեջ բարուրեցի,
Մետաքս ժապավենով կապեցի:

Արսենին մտածեց այն մասին, որ նրա զիլ ձայնը կարող է լավել ճանապարհից, բայց ոչինչ չասաց: Թող որ, մտածում էր, երգի, երեխայի համար, ոնց էլ լինի, ուրախալի է:

Ծոր էր կարում:

Վատ նշան է, ասում էր, չծնվածի համար շոր կարելը:

Բայց, համենայն դեպս, կարում էր: Կտորը վերցնում էր Քրիստափորի իրերից:

Մեռյալի ունեցվածքից, ասում էր, մի բան կարելը ողջունելի չէ:

Կարը կարին դնելով, խոր տնքում էր, եւ նրա հսկայական փորը

շարժման մեջ էր մտնում: Նրա ձեռքերի տակից դուրս էին գալիս խանձարուր, տիկնիկի չափսերի վարտիքներ ու շապիկներ:

Սարքում էր նաեւ տիկնիկներ: Դրանք պատրաստում էր լաթերից եւ գունազարդում տարբեր ձեւերով: Տիկնիկ էր գործում ծղոտից: Բոլոր ծղոտները միատեսակ էին եւ բոլորը նման էին լինում Ուստինային: Երբ Արսենին ասաց այդ մասին, նա լաց եղավ:

Ծնորհակալ եմ (գլխով արեց) կոմպլիմենտի համար: Ծատ շնորհակալ եմ:

Արսենին գրկեց նրան.

Ես սիրելով եմ ասում, այ իմ հիմարիկ, ոչ ոք քեզ, ինչպես ես, չի սիրում եւ չի սիրելու, մեր սերը հատուկ դեպք է:

Այտով հպվեց նրա վարսերին: Նա զգուշությամբ ազատվեց եւ ասաց.

Արսենիե, ես ուզում եմ ծնունդից առաջ հաղորդություն առնել, սարսափելի է ծնունդաբերել առանց հաղորդվելու:

Իր ափը դրեց նրա շուրթերին.

Կհաղորդվես, ծնելով, սեր իմ: Ինչպե՞ս ես դու այս վիճակում մեկնելու եկեղեցի: Իսկ ծնունդից հետո, գիտես, մենք բոլորի դեմ բաց կլինենք եւ ցույց կտանք մեր որդուն, եւ կմկրտվենք, եւ թեթեւություն կգա, որովհետեւ, երբ երեխան ծնվի, նաեւ ոչ ոքի բացատրելու հարկ չի լինի. նա ամեն բան արդարացնում է, ասես կյանքն սկսես մաքուր էջից, հասկանու՞մ ես:

Հասկանում եմ, պատասխանում էր Ուստինան: Սարսափելի է, Արսենիե:

Նա հաճախ էր լաց լինում: Ցանում էր, որ Արսենին չտեսնի, բայց տեսավ, որովհետեւ բոլոր այդ ամիսներին նրանք անբաժան էին իրարից, եւ դժվար էր լաց լինել թաքուն:

Ընթերցելն Ուստինայի համար ավելի էր դժվարանում: Նրա ուշադրությունը ցրվել էր: Նրա համար դժվար էր նստելն ու դժվար էր պառկելը: Ստիպված պիտի պառկեր ոչ թե մեջքի, այլ կողքի վրա: Հիմա ավելի հաճախակի էր խնդրում Արսենիից ընթերցել, եւ նա, իհարկե, ընթերցում էր:

Եվ պատահեց, որ Ալեքսանդրն անցավ ճահճուտ եզերքներ: Եվ հիվանդացավ Ալեքսանդրը, բայց այն ճահիճներում չգտնվեց մի տեղ, որ-

պեսզի պառկի: Նրա վրա օտար երկինքներից ձյուն տեղաց: Հրաման արձակեց Ալեքսանդրն իր զինվորներին, հանելով իր վրայից սպառազինությունը, դնել դրանք իրար վրա: Նրանք այդպես անկողին բացեցին նրա համար մի խրուտ տեղում: Պառկեց դրա վրա, ուժասպառ, իսկ ձյունից նրան ծածկում էին վահաններով: Եվ հասկացավ հանկարծ Ալեքսանդրը, որ պառկած է երկաթե հողի վրա, ոսկրե երկնքի տակ...

Հերիք է: Ուստինան ծանր շուռ եկավ մյուս կողքի վրա եւ հիմա պառկած էր մեջքով դեպի Արսենին: Այսօր մեզ մոտ նույնպես ձյուն եկավ, ինչու՞ ես ինձ համար այդ ամենը կարդում...

Ես քեզ համար մի ուրիշ բան կգտնեմ, սեր իմ:

Ուստինան նորից շուռ եկավ դեպի նա:

Ինձ համար մի տատմեր գտիր: Դա այն է, ինչը ինձ շուտով պետք կգա:

Քո ինչի՞ն է էդ անգետ պառավը, զարմացավ Արսենին: Չէ՞ որ ինձ ունես:

Դու մի՞թե երբեւէ ծնունդ ես ընդունել:

Ոչ, բայց Քրիստափորն ինձ մանրամասն պատմել է: Ու նաեւ ինձ համար բոլորը գրառել:

Արսենին փորփրում էր զամբյուղն ու այդտեղից հանեց գրառումը: Ահա:

Կարելի՞ է արդյոք ծնունդն ընդունել ըստ գրվածի, հարցրեց Ուստինան: Եվ բացի այլ բաներից, գիտես, ես չեմ ուզում, որ դու ինձ տեսնես այսպես: Չեմ ուզում, Արսենիե:

Բայց մի՞թե մենք մեկամբողջ չենք:

Իհարկե, մեկ ենք: Եվ, համենայն դեպս, չեմ ուզում:

Արսենին չվիճեց, բայց եւ ոչ ոքի էլ չփնտրեց:

-ԺԸ-

Նոյեմբերի 27-ին, մթնշաղին Ուստինայի պտղաջրերն սկսեցին հոսել: Նա այդ հասկացավ ոչ անմիջապես, այլ երբ նրա անկողինը թրջվեց: Մինչ նա նստած էր թասամանի վրա, Արսենին քաթանը փռեց: Նրան սկսեց դող տալ: Երբ Ուստինան նորից պառկեց, նա վառեց ու-

նեցած երկու ձիթաճրագն ու մարխը: Ուստինան բռնեց նրա ձեռքն ու իր կողքին նստեցրեց: Սի՛ հուզվիր, անուշս, ամեն ինչ լավ կլինի: Արսենին շուրթերով հպվեց նրա ճակատին ու լաց եղավ: Նա սարսափ էր զգում, որպիսին չէր զգացել կյանքում ոչ մի անգամ: Ուստինան շոյում էր նրան ծոծրակի կողմից: Մեկ ժամ անց սկսվեցին նրա ցավերը: Կիսախավարում նրա դեմքն ահավոր փայլփլում էր քրտինքի խոշոր կաթիլներից, եւ նա չէր ճանաչում այդ դեմքը: Սովորական դիմագծերի տակից դուրս էին գալիս ինչ-որ այլ դիմագծեր: Դրանք տգեղ էին, այտուցված եւ ողբերգական: Եվ առաջվա Ուստինան այլեւս չկար: Նա ասես հեռացավ, իսկ եկավ մեկ ուրիշը: Կամ թե նույնիսկ չեկավ՝ առաջվա Ուստինան էր շարունակում հեռանալ: Կաթիլ-կաթիլ կորցնում էր իր կատարելությունը՝ դառնալով առավել անկատար: Սաղմնային կարծես թե: Այն մտքից, թե նա կարող է հեռանալ առմիշտ, Արսենիի շնչառությունը կտրվեց: Այդ մասին չէր մտածել երբեք: Պարզվեց, այդ մտքի ծանրությունը մեծ էր: Ուստինան նրան քարշ տվեց վար,եւ նա քնադարակից սողաց հատակին: Կարծես թե ծառին գլխի հարվածի ձայն առավ հեռվից: Տեսավ, թե մի կերպ, ինչպես է Ուստինան վեր կենում նստարանից եւ հակվում իր վրա: Նա ամեն ինչ էր տեսնում: Նրա գիտակցությունը տեղն էր, բայց չէր կարենում շարժվել: Եթե շուտ իմանար այդ մտքի ծանրությունը, որքան ծիծաղաշարժ կթվար իրեն Ուստինայի մասին գյուղարվարձանում պատմելու սարսափը: Արսենին դանդաղ նստեց. ես կվազեմ գյուղարվարձան, տատմոր ետեւից, մի ակնթարթում: Հիմա արդեն ուշ է (Ուստինան դեռ շոյում էր նրան), հիմա արդեն ինձ մենակ թողնել չի կարելի, մի կերպ գլուխ կբերենք, ինձ միայն անհանգստացնում է... Ես չէի ուզում ասել, վստահ չէի... Արսենին նստեցրեց Ուստինային նստարանի վրա: Նրա ձեռքերը համբույրներով ծածկեց, իսկ նրա խոսքը դեռ շերտատվում էր առանձին բառերի եւ իր գլխում ի մի չէր գալիս: Նա գիտեր, որ այդ սարսափն իրեն բռնեց ոչ պատահաբար: Ուստինան ձեռքը հպեց փորին. դեռ երեկվանից չեմ լսում նրան... Տղայիս: Նա, ըստ իս, չի շարժվում: Արսենին իր ափը տարավ նրա փորին եւ զգուշորեն վերից վար իջեցրեց: Փորի ներքեւում ափը քարացավ: Արսենին առանց աչք թարթելու նայում էր Ուստինային: Նրա արգանդում այլեւս կյանք չէր զգում ինքը: Այնտեղ այլեւս սիրտ չէր բաբախում, որը նա լսել էր այս ամիսների ընթացքում:

Պտուղը մեռած էր: Արսենին օգնեց նրան կողքի վրա պառկել եւ ասաց՝ մանկիկը շարժվում է, հանգիստ ծնունդաբերիր: Նա նստեց նստարանի ծայրին եւ բռնեց Ուստինայի ձեռքը: Իրար ետեւից փոխում էր մարխը: Ձեթ էր լցնում կանթեղի մեջ: Գիշերվա կեսին Ուստինան վեր ցատկեց տեղից. մանկիկս մահացել է, ախր ինչու՞ ես լռում, դու արդեն մի քանի ժամ է լուռ ես: Ես չեմ լռում, (ասա՞ց որ) Արսենին հեռու ինչ-որ տեղից: Ինչպե՞ս կարող եմ լռել: Նա նետվեց Քրիստափորի դարակների կողմն ու շուռ տվեց գիշերանոթը: Ծրջվեց, տեսավ, ինչպես է անոթը դանդաղ գլորվում նստարանի տակ: Ախր, ինչպե՞ս կարող եմ լռել: Բայց դե խոսել էլ չեմ կարող: Արսենին հանեց հոտզվենի խոտի եփուկը: Խմիր սա: Ի՞նչ է սա: Խմիր: Վեր բարձրացրեց նրա գլուխն ու ջրաբաժակը դրեց շուրթերին: Լսեց՝ սենյակով մեկ տարածվող խոշոր կումերի ձայնը: Սա հոտզվենի խոտն է: Այն դուրս է մղում... Ի՞նչն է դուրս մղում: Ուստինայի շնչափողը թռավ, եւ եփուկը դուրս թափվեց նրա քթից: Հոտզվենի խոտը դուրս է մղում մեռած պտուղը: Ուստինան անձայն լաց եղավ: Արսենին դարակից հանեց քաղլակը եւ նրա պարունակությունը թափեց ածուխների վրա: Սենյակով մեկ տարածվեց սուր, տհաճ հոտ: Ի՞նչ է սա, հարցրեց Ուստինան: Ծծումբ: Նրա հոտը արագացնում է ծնունդը: Մեկ րոպե անց Ուստինան փսխեց: Նա վաղուց արդեն ոչինչ չէր կերել, եւ խմած թուրմն էր ետ տալիս:

Ուստինան դարձյալ պառկեց: Եվ Արսենին դարձյալ նրան շոյում էր: Նա զգում էր նորացումը երկունքի ցավերի: Ցավը համակեց նրան: Այն, ինչը զգում էր, սկզբում փորացավ էր, հետո տարածվեց ողջ մարմնով: Թվում էր, թե շրջակա բոլոր խուտորների ցավը հավաքվել մի կետում եւ մտել է իր մարմինը: Որովհետեւ իր՝ Ուստինայի մեղքերն ավելին էին այդ մարզի բոլոր մեղքերից, եւ դրա համար պետք էր երբեւէ պատասխան տալ: Եվ Ուստինան ճչաց: Եվ այդ ճիչը մռնչոց էր: Այն վախեցրեց Արսենիին, եւ Արսենին կառչեց նրա դաստակից: Այն վախեցրեց հենց Ուստինային, բայց նա չէր կարող չճչալ: Ծարունակելով պառկած մնալ կողքի վրա, նա ոտքը մի կողմ տարավ, եւ Արսենին սկսեց նրա ոտքը բռնել: Այդ ոտքը ծալվում էր եւ ուղղվում, այն թվում էր մի առանձին չար էակ՝ չկամենալով ոչ մի ընդհանուր բան ունենալ անշարժ Ուստինայի հետ: Արսենին ոտքը բռնեց երկու ձեռքով, բայց, միեւնույն է, չէր կարողանում պահել: Ուստինան կտրուկ շրջվեց, ըն-

կած լույսի շերտիկում նա տեսավ, թե ինչպես է ազդրի ներսի մասում փայլում կղկղանքը: Ուստինան շարունակում էր ճչալ: Արսենին չէր կարողանում հասկանալ՝ շարժվո՞ւմ է արդյոք մանկիկը: Մատների տակ զգալով նրա ընդերքի մազերը, նա հիշեց ուրիշ հպումներ եւ աղաչեց Աստծուն Ուստինայի ցավը տալ իրեն, փոխանցել թեկուզ կեսը նրա ցավերի: Իսկ իր պայծառացման րոպեներին Ուստինան երախտապարտ էր լինում Աստծուն այն բանի համար, որ իրեն տրված է տառապել թե՛ իր, եւ թե՛ Արսենիի համար, այնքան մեծ էր իր սերը նրա հանդեպ: Արսենին ավելի շատ շոշափեց, քան տեսավ, թե ինչպես է Ուստինայի ընդերքում երեւում երեխայի գլուխը: Ծոշափելիս՝ գլուխը մեծ էր, եւ Արսենին հուսալքված մտածեց, թե այն չի կարողանա դուրս գալ: Գլուխը դուրս չէր գալիս: Ահա-ահա պիտի հայտնվեր կատարը, բայց հետո նորից անհետացավ: Արսենին փորձեց դրա տակով մատները մտցնել, բայց մատները ներս չէին մտնում: Նրան նույնիսկ թվաց, թե ջանք դնելով գլուխը դուրս քաշել, նա այն ավելի խոր մխրճեց: Նրան շոգ տվեց: Ծոգն անտանելի էր, եւ նա, ուղղվելով, մի ցատկով իր վրայից դեն նետեց շապիկը: Մանկան գլուխն առաջվա պես չէր երեւում: Ուստինայի ճիչերն սկսեցին մեղմանալ, բայց ավելի ահավոր էին, որովհետեւ ուժը կորցրել էին ոչ թե այն բանից, որ թեթեւացել էին ցավերը: Ուստինան ուշակորույս էր լինում: Արսենին տեսնում էր, որ նա հեռանում է, եւ սկսեց գոռալ նրա վրա, որպեսզի պահի: Խփում էր նրա թշերին, բայց Ուստինայի անկեղան գլուխը մի կողմից մյուսն էր տարուբերվում: Արսենին նրա ոտքը գցեց իր ուսին եւ աջ ձեռքով փորձում էր մտնել նրա ընդերքը: Ձեռքը կարծես չէր մտնում, բայց մատները շոշափում էին մանկանը: Կատարը: Վիզը: Ուսերը: Միանում էին մի տեղում, որտեղ վզից գլուխն է սկսվում: Ծարժվում էին դեպի ելքը: Ճթթոց լսվեց: Արսենին արդեն մանկան մասին չէր մտածում: Այն մասին, որ նա, գուցեեւ, համենայն դեպս, կենդանի է: Նա մտածում էր միայն Ուստինայի մասին: Ծարունակում էր քաշել երեխայի գլխից՝ պայքարելով վերահաս ուշագնացությամբ: Տեսավ, թե ինչպես են պատռվում ելանցքի շուրթերը, եւ լսեց Ուստինայի ահավոր ճիչը: Մանկիկն Արսենիի ձեռքերում էր: Լույս աշխարհ գալով՝ նա ճչաց: Նախօրոք նախապատրաստած դանակով Արսենին կտրեց պորտալարը: Ծպպացրեց մանկանը: Նա լսել էր, որ այդպես են անում տատմերերը, որպեսզի առա-

ջին շունչը դուրս բերեն: Նորից շպպացրեց: Մանուկն առաջվա պես լուռ էր: Արսենին զգուշորեն դրեց խանձարուրին ու հակվեց Ուստինայի վրա: Երկունքի ցավերը շարունակվում էին: Արսենին գիտեր, որ դա ընկերքն է դուրս գալիս: Ուստինայից դուրս եկած արյան լորձունքը նա մաքրեց-թափեց գիշերանոթի մեջ: Ամբողջ կտավն արնաշաղախ էր, եւ նա մտածեց, որ արյունն ավելի շատ է, քան պետք է լինի ծննդաբերելիս: Նա չգիտեր, թե որքան պիտի լինի: Նա տեսնում էր միայն, որ արնահոսությունը չի դադարում: Նրա համար սարսափելի էր, քանի որ արյունը հոսում էր արգանդից, եւ նա չէր կարողանում այն կանգնեցնել: Նա մատների վրա վերցրեց մանր քերած խրուկը եւ մտավ Ուստինայի ելանցքի մեջ այնքան խոր, որքան կարող էր: Քրիստափորից լսել էր, որ քերած խրուկը կանգնեցնում է վերքի արյունը: Բայց նա չէր տեսնում վերքերը եւ արնահոսության ճշգրիտ տեղը չգիտեր: Իսկ արյունը չէր դադարում: Այն ավելի ու ավելի էր ներծծվում անկողնու մեջ: Ուստինան պառկած էր փակ աչքերով, եւ Արսենին զգում էր, ինչպես է կյանքը նրան լքում: Ուստի՛նա, մի՛ գնա, ճչաց Արսենին այնպիսի ուժով, որ վանքում նրա ձայնն առավ ծերունի Նիկանդրոսը: Ճգնավորն իր խցում կանգնած աղոթք էր անում: Վախենամ, թե գոռալն արդեն անօգուտ է, ասաց ճգնավորը (նա նայում էր, թե ինչպես բաց դռան միջով թռչում են այդ օրվա առաջին փաթիլները, մոմը միջանցքում մարեց քամին, բայց լուսինը ճիշտ ու ճիշտ դուրս ելավ ծվատված ամպերից եւ լուսավորեց դռան բացվածքը, իսկ հետո պիտի աղոթեմ քո կյանքի պահպանման համար, Արսենիե: Ոչ մի այլ բանի համար չեմ աղոթելու մոտակա օրերին, ասաց ճգնավորը, դուռը փակելով: Մի որոպե խրճիթում կատարյալ լռություն հաստատվեց, եւ լռության մեջ Ուստինան բացեց աչքերը, ափսոս, Արսենիե, որ հեռանում եմ այս խավարում եւ գարշահոտի մեջ: Պատուհանից այն կողմ նորից սուլեց քամին: Ուստի՛նա, չհեռանա՛ս, ճչաց Արսենին, քո կյանքով դադարում է նաեւ իմ կյանքը: Բայց Ուստինան նրան այլեւս չէր լսում, որովհետեւ նրա կյանքը դադարել էր: Նա պառկած էր թիկունքի վրա, եւ ծնկածալ ոտքը մի կողմ էր տարված: Ձեռքը կախ էր ընկել նստարանից: Նա սեղմել էր կտավի անկյունը: Նրա դեմքը շուռ էր եկել Արսենիի կողմը, եւ բաց աչքերը ոչ մի տեղ չէին նայում: Արսենին պառկած էր հատակին, Ուստինայի նստարանի կողքին: Նրա կյանքը շարունակվում էր, թեեւ դա

ակնբախ չէր: Արսենին գիշերվա կեսն ու եւս հաջորդ օրը պառկած մնաց: Երբեմն աչքերը բացում եւ արտասովոր երազներ էր տեսնում: Ուստինան եւ Քրիստափորը տանում էին նրան՝ փոքրիկին, անտառի միջով ձեռքը բռնած: Երբ նրան թռցնում էին ճմաթմբերի վրայով, իրեն թվաց, թե նա թռչում է: Ուստինան եւ Քրիստափորը ծիծաղում էին, քանզի իր զգացողությունները նրանց համար հանելուկ չէին: Քրիստափորը մի գլուխ հակվում խոտերին եւ դրանք դնում էր քաթանե պարկի մեջ: Ուստինան ոչինչ չէր հավաքում, նա պարզապես դանդաղեցնում էր քայլքը, հետեւելով Քրիստափորի գործողություններին: Ուստինայի հագին տղամարդու կարմիր շապիկ կար, որը հարկ եղած ժամանակ նա պատրաստ էր տալու Արսենիին: Նա այդպես էլ ասաց. այս շապիկը քոնը կլինի, միայն թե դու անունդ պիտի փոխես: Օբյեկտիվ հնարավորություն չունենալով Ուստինա լինելու, անվանվիր Ուստին: Պայմանավորվեցի՞նք: Արսենին Ուստինային էր նայում ներքեւից վերեւ: Պայմանավորվեցինք: Ուստինայի լրջությունն իր համար ծիծաղելի էր, բայց ցույց չտվեց: Իհարկե, պայմանավորվեցինք: Քրիստափորի պայուսակն արդեն լիքն էր: Իսկ նա շարունակում էր խոտեր հավաքել, եւ իր քայլքին համատակտ դրանք պայուսակից ընկնում էին կածանի վրա: Ամբողջ կածանը, որքան աչքդ բռներ, ծածկված էր Քրստափորի խոտերով: Իսկ նա դեռ շարունակում էր հավաքել: Առաջին հայացքից այդ անմիտ գուծունեությունն ուներ իր գեղեցկությունն ու թափը: Իր շռայլությունը, որն անտարբեր է այն բանի հանդեպ, թե դրա կարիքը կա՞ արդյոք. դա միմիայն տվողի հոգեդրվածքն է ծնում: Առավոտվա բացվելու հետ Արսենին նկատեց լույսը, բայց ամեն ինչ արեց, որ չարթնանա: Նույնիսկ երազում էր վախենում հայտնաբերել, որ Ուստինան մահացել է: Նրան առավոտյան տարօրինակ վախ բռնեց: Նոր օրվա գալն առանց Ուստինայի անտանելի էր: Նա նորից քնով սնեց իրեն մինչեւ անզգայություն: Քունը հոսում էր Արսենիի ջղերով եւ բախում նրա սիրտը: Որպե առ որպե նա ավելի պինդ էր քնում, որովհետեւ զարթնելու սարսափն էր ապրում: Արսենիի քունն այնքան խոր էր, որ նրա հոգին երբեմն թողնում էր մարմինը եւ կախվում առաստաղն ի վար: Այդ ոչ մեծ, ըստ էության, բարձրությունից կարող էր հայել պառկած Արսենիին եւ Ուստինային՝ զարմանալով տանը իր սիրելի Ուստինայի հոգու բացակայությունից: Տեսնելով Մահը՝ Արսենիի հոգին

ասաց. չեմ կարող տանել քո փառքը եւ տեսնում եմ, որ քո գեղեցկությունն այս աշխարհից չէ: Այստեղ Արսենիի հոգին զննում էր Ուստինայի հոգին: Ուստինայի հոգին համարյա թափանցիկ էր եւ այդ պատճառով՝ աննկատելի: Մի՞թե ես էլ եմ այդպես տեսնվում, մտածում էր Արսենիի հոգին եւ կուզենար հպվել Ուստինայի հոգուն: Բայց զգուշացնող ժեստը Մահվան՝ կանգնեցրեց Արսենիի հոգուն: Մահն արդեն բռնել էր Ուստինայի հոգու ձեռքից եւ պատրաստվում էր տանել: Նրան թող այստեղ, լաց եղավ Արսենիի հոգին, մենք նրա հետ վիճել ենք: Ընտելացիր բաժանմանը, ասաց Մահը, թեեւ ժամանակավոր, բայց ցավալի է: Կճանաչե՞նք մենք իրար հավերժության մեջ, հարցրեց Արսենիի հոգին:

Դա շատ բանով քեզնից է կախված, ասաց Մահը. կենաց ընթացքում հոգիները հազվադեպ չէ որ գորովազրկվում են, եւ այդ ժամանակ նրանք քչերին են ճանաչում մահվանից հետո: Եվ եթե քո սերը, Արսենիե, կեղծ չի եւ չի ջնջվի ժամանակի ընթացքում, ապա էլ ինչո՞ւ, հարց է ծագում, չճանաչեք մեկմեկու անդ, ուր ո՛չ հիվանդություն կա, ո՛չ վիշտ, ո՛չ տրտունջ, այլ կյանք է անսահման: Մահը թփթփացրեց Արսենիի հոգու թելին: Ուստինայի հոգին փոքրիկ էր, գրեթե՝ մանկական: Քնքուշ ժեստին նա պատասխանում էր ավելի շուտ վախից, քան թե երախտագիտությունից: Այդպես պատասխանում են մանուկները նրանց, ովքեր իրենց անորոշ ժամկետով ընդունում են հարազատներից, եւ կյանքը /մահը/ ում հետ լինելու է, հնարավոր է, վատ չէ, սակայն բոլորովին այլ, զերծ նախկին կացութաձեւից, սովորական անցքերից եւ խոսքի շրջադարձից: Հեռանալով՝ նրանք շարունակ հենց շուրջն են նայում եւ հարազատների արցունքով լի աչքերում տեսնում իրենց արտացոլանքը:

-ԺԹ-

Արսենին ուշքի եկավ, երբ մթնել էր: Նրա ձեռքը դիպել էր Ուստինայի թույլ կախված ձեռքին: Նրա ձեռքը սառն էր: Այն չէր ծալվում: Վառարանի մեջ ածուխները վաղուց շիջել էին, սակայն ինչ-որ բան հազիվ նկատելի պեծպեծում էր Փրկչի սրբապատկերի տակ դրված ճրագում: Արսենին մոմը մոտ բերեց ճրագին: Նա բռնել էր այն զգուշորեն, որ-

պեսզի չհանգցնի տանը մնացած վերջին կրակը: Մոմը (ոչ իսկույն) վառվեց եւ լուսավորեց սենյակը: Արսենին ուշադիր շուրջը զննեց: Նա ուշադիր շուրջն էր նայում, նկատելով յուրաքանչյուր մանրուք: Այս ու այն կողմ թափթփված իրեր: Ցարդված կճուճներ դեղուդարմանով: Նա բաց չէր թողնում ոչ մի մանրուք, քանի որ այդ ամենը դեռ թույլ չէր տալիս իրեն նայել Ուստինային: Իսկ հետո նայեց նրան:

Ուստինան պառկած էր նույն դիրքով, ինչպես երեկոյան, բայց բոլորովին ուրիշ էր: Նրա քիթը սրվել էր, բայց աչքերի սպիտակուցները փոս էին ընկել: Ուստինայի դեմքն ալաբաստրե էր, իսկ ականջների ծայրերը՝ անագե-կարմիր: Արսենին կանգնել էր Ուստինայի գլխավերեւում եւ վախենում էր նրան դիպչել: Նա չէր զզվում, նրա ահը այլ բնույթի էր: Նրա առջեւ չռված մարմնում ոչ մի բան չկար Ուստինայից: Նա ափը մեկնեց նրա կիսաձալված ոտքին եւ զգուշորեն դիպավ: Մատը տարավ մարմնով. պարզվեց՝ սառն է ու խորդուբորդ: Ուստինան ողջության օրոք այդպիսին երբեք չէր եղել: Փորձեց ուղղել Ուստինայի ոտքը, բայց ոչինչ չստացվեց, ինչպես չստացվեց փակել Ուստինայի աչքերը: Վախեցավ սեղմել: Այն, ինչին նա հպվում էր, եղել էր, հնարավոր է, շատ փխրուն: Ուստինային ծածկեց ծածկոցով՝ ամենը, բացի դեմքից:

Արսենին սկսեց կարդալ ի վերա ննջեցելոց աղոթքը: Նա խնդրեց Տիրոջը, որպեսզի Ուստինան ազատվի չարի ուռկաններից եւ խռովքի հորդորից, որպեսզի չերկնչի գիշերային խավարից եւ ընդերքից դուրս պրծնող նետերից: Ժամանակ առ ժամանակ շուռ գալիս ու նայում էր նրա դեմքին: Իր ձայնը նա լսում էր հեռվից: Երբեմն նրա մեջ հնչում էին արցունքները: Ձայնը խուլ հաղորդում էր, որ Տերը պատգամել է հրեշտակներին պահապան լինել Ուստինային նրա բոլոր ճանապարհներին: Արսենին հիշեց, ինչպես էր հեռանում Ուստինան, բռնած՝ Մահվան ձեռքը, ինչպես էին նրա ուրվագծերը փոքրանում, մինչեւ որ դարձան մի կետ: Այնժամ նրա հետ Մահն էր, ոչ հրեշտակները: Արսենին աչքերը պոկեց էջից:

Հիմա դու պիտի լինես հրեշտակների ձեռքում, վեհերոտ նա դիմեց Ուստինային: Ձեռքերի վրա կառնեն քեզ, ոտքդ երբեք քարին չի առնի:

Նա նորից շուռ եկավ եւ իրեն թվաց, որ Ուստինայի դեմքը դողդո-

ղաց: Նա չհավատաց իր աչքերին: Բարձրացնելով մոմը՝ ավելի մոտ գնաց: Ուստինայի քթի ստվերը տեղաշարժվեց դեմքով: Ծարժվում էր ոչ միայն ստվերը. ստվերի հետ միասին փոխվում էր Ուստինայի դեմքը: Այդ փոփոխությունը բնական չէր նայվում, այն չէր համապատասխանում Ուստինայի կենդանի դիմախաղին, բայց դրանում կար նաեւ ինչ-որ բան, ոչ հատուկ մեռյալին: Ուստինան եթե ամբողջովին ողջ էլ չէր, ապա կարծես լիովին մեռյալ էլ չէր:

Արսենին վախեցավ, որ կարող է բաց թողնել Ուստինայի մեջ իր նկարած կյանքի ընձյուղները: Սառեցնել դրանք, օրինակ: Միայն հիմա նա զգաց, որ անցած օրերի ընթացքում խրճիթը ցրտել է: Նա նետվեց դեպի վառարանն ու կրակը բորբոքեց: Հուզմունքից Արսենիի ձեռքերը ցնցվում էին: Հանկարծ նա գլխի ընկավ, որ ամեն ինչ կախված է նրանից, թե որքան շուտ հիմա կհաջողվի կրակը վառել: Մի քանի րոպե անց փայտերն արդեն ճարճատում էին: Արսենին դեռ հայացքը չէր հառում Ուստինային՝ թույլ տալով նրան իրեն կարգի բերի: Բայց Ուստինան տեղից չէր ելնում:

Որպեսզի չխրտնեցնի Ուստինայի մեջ կյանքի ընձյուղները, Արսենին որոշեց ձեւ անել, թե դրանք չի նկատել: Նա շարունակեց կարդալ ի վերա ննջեցելոց աղոթքը: Դրանից հետո սկսեց կարդալ սաղմոսները: Նա կարդում էր չշտապելով եւ հասկանալի արտասանելով ամեն մի բառը: Հասավ Սաղմոսագրքի վերջին եւ մտքերի մեջ ընկավ: Որոշեց կարդալ եւս մեկ անգամ: Ավարտեց լուսադեմին: Իր համար անսպասելի՝ քաղց զգաց եւ կերավ հացի մեծ կողը:

Ուտելիքն ասես բացեց նրա պնչերը, եւ նա ներս քաշեց օդը: Մարմնի փտման հոտ էր զգացվում: Արսենին մտածեց, որ հոտը մանկիկից է գալիս: Եվ իրավ. ակներեւ էին փոքրիկ մարմնի քայքայման ախտանշանները: Լույսը բացվելու հետ Արսենին այն բերեց լուսամուտին ավելի մոտ:

Դու երբեք չես տեսել արեւի շողերը, ասաց նա նորածնին, եւ անարդար կլիներ քեզ զրկելը լույսից՝ թեկուզեւ այսքան փոքր քանակի:

Արսենին գաղտուկ, ինչ խոսք, հույս էր տածում, որ որդու հետ իր զրույցին կխառնվի Ուստինան: Բայց նա չէր խառնվում: Եվ նույնիսկ դիրքը, որով պառկած էր Ուստինան, արտաքուստ մնում էր նույնը:

Նա որոշեց ի վերա Ուստինայի երրորդ անգամ ընթերցել Սաղմոսարանը: Տասներորդ կաֆիզմի* վրա Արսենին նստարանին շարժում որսաց: Կողային տեսողությամբ նա շարունակում էր հետեւել նստարանին, բայց շարժումը չկրկնվեց: Սաղմոսարանը կարդալով մինչեւ վերջ, Արսենին անելանելիության մեջ ընկավ: Նա չգիտեր էլ, թե ինչ կարդար ի վերա Ուստինայի այս անկայուն վիճակում կյանքի եւ մահվան միջեւ, որում նա, դատելով ամեն ինչից, գտնվում էր: Նա հիշեց, որ ողջության օրոք նա սիրում էր լսել Ալեքսանդրականը, եւ սկսեց կարդալ Ալեքսանդրականը: Նրա ռեակցիան Ալեքսանդրի մասին վեպի հանդեպ միշտ թրթռուն էր, եւ այժմ, Արսենիի կարծիքով, դա կարող էր իր դրական դերը խաղալ:

Մինչեւ մյուս օրվա առավոտ ի վերա Ուստինայի նա ընթերցում էր Ալեքսանդրականը: Մի կարճ մտորումից հետո ընթերցեց ի վերա նրա Աբրահամի հայտնությունը, Ասք Հնդկական թագավորության մասին եւ Սողոմոնի ու Կիտովրասի մասին պատմվածքները: Արսենին դիտմամբ էր ընտրում հետաքրքիր եւ դեպի կյանք մղող գործեր: Գիշերագալի հետ նա ձեռքն առավ ընթերցելու Քրիստափորի այն գրառումները, որոնցում չէին բովանդակվում կենցաղային հրահանգներ եւ դեղատոմսեր: Լուսաբացին Արսենին ընթերցեց վերջին գրառումը. բացի ջրից որեւէ բանով հնարավոր չէ լվալ պղծված հագուստը եւ արցունքից բացի հնարավոր չէ ոչնչով սրբել եւ մաքրել հոգեւոր կղանքն ու ապականությունը:

Նրա արցունքները հոսել էին նախորդ օրերին, եւ այլեւս չկային: Չկար ձայն՝ վերջին գրառումները նա կարդում էր շշուկով արդեն: Ուժ չկար: Նստել էր հատակին, փռված՝ բորբոքված վառարանի մոտ: Չնկատեց, թե ինչպես ննջեց: Նրան արթնացրեց լուսամուտի մոտի խշխշոցը: Մանկան կողքին առնետ էր նստել: Արսենին ձեռքը շարժեց, եւ այն փախավ: Նա հասկացավ, որ չպիտի քնի, եթե ուզում է պահպանել իր որդու մարմինը: Նայեց Ուստինային: Նրա դիմագծերը հալվել էին:

Արսենին դժվար վեր կացավ ու մոտ գնաց Ուստինային: Երբ բարձրացրեց ծածկոցը, նրա քթին սուր հոտ խփեց: Ուստինայի փորը հսկայական էր: Քանիցս ավելի, քան հղիության օրերին:

---

* Սաղմոսարանի քսան բաժիններից մեկի անունը

Եթե դու իրավ մահացել ես, ասաց Արսենին, ես պիտի պահպանեմ քո մարմինը: Ես սպասում էի, որ այն քեզ պետք կգա մոտակա հեռանկարում, բայց քանի որ դա այդպես է, բոլոր ճիգերը կգործադրեմ, որպեսզի պահպանեմ նրան գալիք համընդհանուր հարության համար: Ամենից առաջ, ենթադրվում է, վառարան էլ չենք վառի, որը նպաստում է հյուսվածքների քայքայմանը: Այստեղ արդեն իսկ թռչում են ճանճերը, որը հատուկ չէ նոյեմբերին, եւ նրանց հայտնվելն ինձ, ճիշտն ասած, զարմացնում է: Հատկապես ինձ անհանգստացնում է իմ ու քո տղան, նա շատ վատ տեսք ունի: Ըստ էության, մեր խնդիրն այնքան էլ բարդ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Ըստ իմ պապ Քրիստափորի խոսքերի, աշխարհի Արարչագործության 7000-րդ տարում լիովին հնարավոր է աշխարհի վերջը: Եթե ելնենք այն բանից, որ արդեն իսկ 6964-րդ տարին է, մեր մարմիններին մնում է դիմանալ երեսունվեց տարի: Համաձայնիր, որ համեմատած ժամանակի հետ, որն սկսվում է աշխարհաստեղծումից, դա այնքան էլ շատ չէ: Հիմա ցրտեր են սկսվում, եւ մեզ բոլորիս մի թեթեւ կսառեցնեն: Հետո, իհարկե, եւս երեսունվեց անգամ ամառ կգա (այն շոգ է լինում նույնիսկ մեր կողմերում), բայց մինչ տաքերն ընկնեն, մենք արդեն ինչ-որ ձեւով կամրանանք մեր նոր իրավիճակում, քանզի առաջին ամիսները ոչ միայն դժվար են, այլեւ՝ վճռորոշ:

Այդ օրվանից Արսենին վառարանը չվառեց: Ինչպես նաեւ դադարեց ուտել, որովհետեւ ինքն այլեւս չէր ուզում ուտել: Հազվադեպ ջուր էր խմում չանից: Չանը դրված էր դռան մոտ, եւ առավոտները նա նկատում էր, թե ինչպես է ջուրը ծածկվում սառույցի բարակ շերտիկներով: Մի անգամ, երբ նա ջուր էր խմում, թվաց, Ուստինան շարժվեց: Նա շրջվեց ու տեսավ, որ մի կողմ տարված եւ բարձրացրած նրա ոտքը հիմա դրված է նստարանին: Նա մոտեցավ Ուստինային: Այն, ինչը նա տեսավ, տեսողության խաբկանք չէր: Ուստինայի ոտքն իրոք իջել էր: Արսենին անցավ նրա ոտքին եւ հայտնաբերեց, որ ոտքը կրկին ծալվում է: Նա բռնեց Ուստինայի կախ ընկած ձեռքն ու գուրգուրանքով դրեց նստարանին: Արսենին հասկացավ, որ մարմնի ընդարմացումն անցել է, բայց իր սրտին արգելեց բաբախել հաճախակի: Ցանկացած հույս սպանում էր Ուստինայի փորին նետված հայացքը: Այն ավելի էր ուռչել եւ դուրս էր մղել ընդերքից այն, ինչը չէր հասցրել դուրս գալ մահվան օրը:

Արսենին այլեւս ոչինչ չընթերցեց: Ըստ Ուստինայի վիճակի, նա տեսնում էր, որ հիմա արդեն ընթերցումը չի օգնի: Նաեւ քիչ էր խոսում նրա հետ, որովհետեւ առայժմ չէր կարող հուսադրող ոչ մի բան հաղորդել:

Ես սարսափում եմ մեր երեխայի համար, ասաց նա մի օր, նրա քթանցքերում սպիտակ որդեր տեսա:

Ասաց ու զղջաց, քանզի այստեղ Ուստինան ինչ կարող էր անել, իրեն իսկ հեշտ չէր: Նրա քիթն ու շուրթերը ուռել էին, իսկ կոպերն այտուցվել: Ուստինայի սպիտակ մաշկը դարձել էր յուղա-դարչնագույն, տեղ-տեղ պատռված եւ թարախ էր ծորում: Մաշկի տակ անբնական հստակությամբ կանաչել էին երակները: Եվ լոկ կպած մազերն էին դեռ պահպանում իրենց շիկագույնը:

Գրկելով ծնկները՝ Արսենին նստեց վառարանի ծայրին մոտ եւ անթարթ նայում էր Ուստինային: Հիմա արդեն տեղից չէր ելնում նույնիսկ ջուր խմելու: Երբեմն լսում էր, թե ինչպես են ծեծում դուռը, եւ խաղաղ ուրախություն էր զգում, որ հասցրել է փակել դուռը մինչեւ իր անցումն անշարժության: Նա չէր արձագանքում կանչերին, ուշ չէր դարձնում բակի ոտնաձայներին: Երբ դրանք դադարեցին, Արսենին նորից ընկղմվեց խաղաղության մեջ: Եվ խաղաղության ընդերքների ինչ-որ տեղից, ինչպես վախվորած ձյունաձաձկ ծաղիկ, աճում էր հույսը Ուստինայի հետ շուտափույթ հանդիպման:

Մի անգամ շարժում նկատեց լուսամուտի մոտ: Ծրջանակի վրա ձգված ցուլի փուչիկը ճարճատելով պատառ-պատառ եղավ, եւ երեւաց դանակը բռնած մի ձեռք: Ետեւից՝ դեմք: Բայց ձեռքն իսկույն փակեց քիթը, իսկ ինքն անհետացավ: Արսենին զգաց օդի շարժումն ու ճիչեր լսեց: Նրան էին դիմում: Նա նորից շրջվեց Ուստինայի կողմն ու դադարեց նայել լուսամուտին: Մի կարճ ժամանակ անց լսվեցին դռան հարվածներ: Արսենին տեսնում էր, թե ինչպես է ցնցվում այն: Նա ափսոսանք զգաց, որ չի հասցրել մեռնել մինչեւ այդ թակոցը:

Դուռը պոկվեց իր վերնամասով եւ փլվեց բարձր շեմից: Այն ջարդողները չներխուժեցին: Նրանք առհասարակ չէին շտապում մտնել՝ բացահայտ սարսափ զգալով: Առաջին երկուսին Արսենին տնտղեց: Նիկոլա Տկաչն ու Դեմիդ Սոլոման էին՝ գյուղարվարձանի մարդիկ,քանիցս եկած նրա մոտ բուժվելու: Նրանք կանգնել էին փլված դռան վրա

եւ կամաց խոսում էին իրար մեջ: Բերաններն ու քթերը ծածկել էին արմյակների՝ գյուղացու վերնազգեստի օձիքներով:

Երբ Դեմիդն ուղղվեց դեպի Ուստինան, Արսենին ասաց.

Ձեռք մի տուր:

Ուժերն հավաքելով՝ Արսենին ոտքի ելավ: Նա ուզեց խոչընդոտել Դեմիդին, որ մոտ չգնա Ուստինային, սակայն Դեմիդն ափով ոչ ուժեղ հրեց նրա կրծքին: Արսենին վայր ընկավ ու չշարժվեց: Նիկոլան չանից նրա վրա ջուր լցրեց: Արսենին բացեց աչքերը:

Ողջ է, լուր տվեց Նիկոլան:

Արսենիի թեւերի տակ մտած՝ նրան բարձրացրեց եւ հենեց վառարանին: Արսենիի գլուխն ընկավ ուսին, բայց աչքերը մնում էին բաց: Դեմիդն ասաց, որ հայտնաբերված մարմիններն անհրաժեշտ է տեղափոխել մեռելանոցի մոտ: Նիկոլան ասաց, թե դրա համար գյուղարվարձանից պետք է սայլը քշել-բերել: Սայլի ետեւից նրանք ուղարկեցին ինչ-որ մի երրորդին, ով ոչ մի բառ չէր արտաբերում:

-Ի-

Մեռելանոցը տրտմալի տեղ էր: Նույնիսկ գերեզմանոցը, որի պարսպի մոտ ապրում էին Արսենին եւ Քրիստափորը, ինչ-որ բանով ավելի ուրախացնող էր թվում: Մեռելանոցը կամ աստվածահյուղը, Քրիստափորի տնից երկու վերստ հեռավորությամբ բլուրի վրա էր տեղ բռնել: Այնտեղ պառկած էին ժանտախտից մահացածները, թափառականները, խեղդվածները, չմկրտված մանկունք եւ ինքնասպանները: Նրանք, որոնց ծածկել էր ջուրը, ում հայհոյախոսությունն էր խժռել, եւ սպանանել էին սպանանողներին, եւ հրո ճարակ դարձածները: Եվ անակընկալ կայծակնահար եղածները, ցրտահար եղածները եւ այլատեսակ ցավերով տառապողները: Այդ տարաբախտների կյանքը տարբեր էր, եւ դա չէր նրանց միավորում, որովհետեւ նմանությունները նրանց մահվամբ էր կայացել: Դա մահ էր՝ առանց զղջումի:

Նման մահով մեռածներին չէին հուղարկավորում եւ ընդհանուր գերեզմանոցներում չէին թաղում: Նրանց տեղափոխում էին մեռելանոց: Այստեղ մարմիններն իջեցնում էին խոր փոսի հատակն ու ծածկում սոճու ճյուղերով: Այդպես հանգուցյալները դառնում էին պատանդ:

Նրանք պառկած էին ընդհանուր փոսում՝ տառապելով իրենց խռովքից: Նրանց գորշ, ավազացան դեմքերն այդ է- այդ է կծիկրակեին ճյուղերի տակից: Հատկապես տխուր տեսարան էր գարնանը, երբ հալչող ձյունը ճյուղերը տեղաշարժ էր անում: Այդժամ պատանդ հանգուցյալներն ի երեւ էին գալիս ամենաանդուր իրենց տեսքով՝ զրկված աչքերից ու քթերից, ձեռքերով ու ոտքերով սողացած կողքի մարմնի վրա,- ասես իրար գրկում:

Սակայն մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի անսահման ողորմածությամբ նաեւ նրանց բախտն անհուսալի չէր: Զատկի յոթերորդ շաբաթվա հինգշաբթի օրը Կիրիլ-Բելոզյորսկի վանքից գալիս էր վանեռեցն ու պատանդ հանգուցյալներին հուղարկավորում: Այդ օրը կոչվում է Սեմիկ՝ Յոթներորդ: Փոսը հող էին լցնում եւ նորն էին փորում: Եվ նորը բաց էր մնում մինչեւ հաջորդ Յոթներորդը:

Ընդ որում, նույնիսկ հուղարկավորելով, պատանդ հանգուցյալների դժվարությունները միշտ չէ որ վերջանում էին: Նրանց մասին հիշում էին անբերրի օրերին: Բոլոր ավանդապաշտների համար էլ գաղտնիք չէր, որ աղետի պատճառն ամենից հաճախ հենց պատանդ հանգուցյալներն էլ դառնում էին: Գոյություն ուներ հավատալիք, թե նրանք, ում կյանքը կտրվել է վաղաժամ, մեռնում էին ոչ անմիջապես: Մայր խոնավ հողը չէր ընդունում նրանց եւ դուրս էր վանում իրենից՝ ստիպելով նրանց տեղ որոնել կայանալու հողերեսին մոտ:

Իրենց այլակեցությամբ այդ մեռյալները կարծես թե ցվերջ ապրում էին իրենցից խլած ժամանակը, բայց դա անում էին շրջապատի համար մեծ վնասով: Ելք փնտրելով իրենց չմսխած ուժին՝ նրանք ոչնչացնում էին բերքն ու ամառային երաշտ սարքում: Քաջատեղյակ մարդիկ երաշտը բացատրում էին նրանով, որ հանգուցյալները (հատկապես շատ խմելուց մեռածները) անմարդկային ծարավ էին զգում եւ ծծում էին հողի խոնավությունը:

Ծանր ժամանակներում արդեն պատանդ հանգուցյալ թաղվածներին երբեմն փորում-հանում էին հողից եւ, անտեսելով հոգեւորականության բողոքները, քարշ էին տալիս թավուտներն ու ճահիճները: Պատահում էր, իհարկե, որ նրանց թողնում էին տեղում, սակայն դրանից առաջ, համենայն դեպս, փորում-հանում էին եւ շուռ էին տալիս դեմքով վար: Ենթադրվում էր, թե ինչ-որ մեկին դա կարող էր թվալ կես-

պատիժ, բայց նույնիսկ այդ համարում էին պակաս չարիք, քան բացահայտ անգործությունը:

Ողջերի դրությունը, եթե ծանրութեթեւ անենք, նույնպես հեշտերից չէր: Թաղելով առանց զղջանքի, նրանք մայր խոնավ հողի ցասումն էին հարուցում, եւ նա պատասխանում էր գարնանային ցրտահարումներով: Չթաղելով՝ հարուցում էին հենց հանգուցյալների ցասումը, եւ ամառ ժամանակ նրանք անխնա ոչնչացնում էին բերքը: Այդ դժվարին իրավիճակում հենց Յոթներորդն էլ, ըստ էության, եղավ սողոմոնյան վճիռ: Մեռածներին մինչեւ գարնանավերջ չհանձնելով հողին, հողագործներն առանց վնասի անցնում էին ցրտահարումների շրջանը: Զատկի յոթերորդ շաբաթ հուղարկավորություն ու թաղում կատարելով, նրանք դեռ կարող էին հույս ունենալ, որ ոխակալ հանգուցյալները չեն ոչնչացնի հասունացած բերքը:

Այդ հանգուցյալների մեջ այժմ պիտի հայտնվեր Ուստինան: Նրան՝ անսահման սիրող Արսենիի Ուստինային, պատրաստվում էին մեռելանոց գցել: Որդու հետ մեկտեղ, որն այդպես էլ անանուն մնաց: Դեմիդն ու Նիկոլան ձեռքները փաթաթեցին փալասներով, հանեցին Ուստինային խրճիթից եւ դրեցին գլորվող սայլի վրա: Մեկ րոպե անց պարզված ձեռքի վրա Նիկոլան դուրս բերեց կիսաքայքայված մանկանը: Սայլի ետեւից դանդաղորեն ծգվում էին գյուղարվարձանցիները: Նրանք տուն չէին մտել եւ լուռ կանգնել էին ճամփին:

Արսենին, որ մինչ այդ անմասնակից նստել էր հատակին, ոտքի կանգնեց, վառարանի վրայից վերցրեց դանակն ու ելավ փողոց: Նա շարժվում էր դանդաղ, բայց ուղիղ, կարծես բոլոր այդ ժամերը չէր անցկացրել կեսուշաթափված: Լռության մեջ լսելի դարձավ բոպիկ ոտքերի չլմփոցը հողի վրա: Նրա աչքերը չոր էին: Ամբոխը, որ կանգնած էր սայլի մոտ, ընկրկեց, քանզի զգաց, որ նրա ուժը կարծես թե վերմարդկային է:

Նա ձեռքը դրեց սայլին.

Ձեռք մի՛ տվեք:

Նա գոռաց.

Ձեռք մի՛ տվեք:

Կանգնած ձին խռխռաց:

Նա գոռաց.

Նրանց ի՞նձ թողեք ու գնացեք, որտեղից եկել եք: Իմ կինն ու իմ տղան են, իսկ ձեր ընտանիքները գյուղարվարձանում են, ուրեմն՝ ուղեւորվեք ձեր ընտանիքների մոտ:

Եվ եկածները չհամարձակվեցին մոտ գալ: Նրանք տեսան մարմարե մատներ՝ դանակի կոթին: Տեսան, թե քամին ինչպես է շարժում նրա այտերի աղվամազը: Նրանք վախենում էին ոչ թե դանակից, վախենում էին հենց իրենից: Եվ չէին ճանաչում:

Դա սուր գործիք է, տուր ինձ, խնդրում եմ:

Ամբոխի ամենախոր ընդերքից հայտնվեց ճգնավոր Նիկանդրոսը: Նա գնում էր ձեռքը պարզելով Արսենիին եւ քարշ տալով ոտքը: Ամբոխը ճեղք տվեց նրա առջեւ, ինչպես ծովային ալիքները Մովսեսի առջեւ: Նրան հետեւում էր ուղեկցող վանականը:

Հավատա,իմ վիճակը հիմա լավ չի, բայց հարկ համարեցի հայտնվել այստեղ եւ քեզնից վերցնել դանակը:

Նրանք ուզում են Ուտինային երեխայի հետ տանել մեռելանոց,ասաց Արսենին: Եվ բոլորովին չեն հասկանում այն,որ հիմա, հիմա մեռյալները հարություն կառնեն:

Դանակը նրա ձեռքից ընկավ ճգնավորի պարզած ձեռքին:

Տուր նրանց այդ մարմինները, չէ՞ որ բանը մարմինը չէ, ասաց ճգնավորը: Եթե սովորական գերեզմանում դնես, ապա սրանք,- նա Արսենիի դանակով ցույց տվեց ամբոխին,- հենց մոտակա երաշտին կփորեն-կհանեն: Կփորեք-կհանեք, չէ՞, հեթանոսներ, հարցրեց կանգնածներին, եւ նրանք սսկվեցին: Հենց խմելու բան տաս, կքանդեն: Ինչ վերաբերում է վախճանված Աստծո ծառաների հարությանն ու հոգիների փրկությանը, ապա այդ տեղեկությունը ես կներկայացնեմ քեզ, որն անվանում ենք դեմ առ դեմ:

Ճգնակյացը նշան արեց վանականին, որպեսզի սպասի դրսում: Նա Արսենիին թեւանցուկ արեց, եւ Արսենին միանգամից փափկեց: Երբ նրանք բարձրացան առմուտքի վրա, ճգնակյացի ոտքը քանիցս շուռ եկավ աստիճաններին: Կանգնածները տեսան եւ արտասվեցին: Նրանց բացահայտվեց, որ նրա ոգու ամրությունն ակնհայտ հակասության մեջ է մտել խարխուլ մարմնի հետ: Նրանք գիտեին, ինչով էին ավարտվում նման բաները: Սայլն անձայն պոկվեց տեղից: Ճգնավոր Նիկանդրոսը Արսենիի հետ կորավ դռների մեջ:

Սկզբում ես պիտի խոսեմ մահվան մասին, իսկ հետո, եթե ստացվի, կյանքի մասին: Նստելով նստարանին՝ Արսենիին ցուցանեց իր տեղը: Երբ նա նստեց, ծերուկը ձեռքերով հենվեց նստարանին եւ խոնարհեց գլուխը: Նա խոսում էր Արսենիին չնայելով:

Ես գիտեմ, որ դու երազում ես մահվան մասին: Դու մտածում ես՝ այն ամենին, ինչը քեզ համար թանկ էր, այժմ մահն է տիրում: Բայց դու սխալվում ես: Ուստինային մահը չի տիրում: Մահը լոկ տանում է դեպի Նա, Ով պետք է դատի նրան: Եվ հանուն դրա, եթե նույնիսկ վճռես մահվան տրվել, Ուստինայի հետ դու չես միանա: Հիմա կյանքի մասին: Քեզ թվում է, թե կյանքում քեզ համար էական ոչինչ չի մնացել, եւ դու նրանում իմաստ չես տեսնում: Սակայն հատկապես հիմա քո կյանքում բացահայտվել է մի մեծագույն իմաստ, որը չի եղել նախկինում:

Ծերուկը շրջվեց Արսենիի կողմը: Արսենին ակնապիշ նայում էր իր առջեւ: Նրա ձեռնափերը դրված էին ծնկներին: Այտով սողում էր ճանճը: Ծերուկը ճանճին քշեց, բռնեց Արսենիի կզակից եւ դեմքով շրջեց դեպ իրեն:

Չեմ խղճալու քեզ. դու մեղավոր ես նրա մարմնական մահվան մեջ: Դու մեղավոր ես նաեւ, որ կարող էր մեռնել նրա հոգին: Ես պիտի որ քեզ ասեի, թե դագաղ մտնելուց հետո նրա հոգին փրկելն արդեն ուշ է, բայց գիտես՝ չեմ ասի: Որովհետեւ այնտեղ, ուր հիմա նա է, չկա արդեն: Եվ չկա դեռ: Եվ չկա ժամանակ, այլ կա Աստծո անսահման ողորմածությունը, որն էլ թախանձում ենք: Բայց ողորմածությունը պիտի ճիգերի համար պարգեւ լինի: (Ծերուկը հազաց: Նա բերանը փակեց ձեռքով, եւ հազը, փորձելով դուրս պոկվել, ուռցրեց նրա թշերը): Ամբողջ հարցն այն է, որ, թողնելով մարմինը, հոգին մնում է անօգնական: Այն կարող է գործել միայն մարմնավոր: Չէ՞ որ փրկվում են միայն երկրային կյանքում:

Արսենիի աչքերը առաջվա պես չոր էին.

Բայց ես խլեցի նրանից երկրային կյանքը:

Ծերուկը հանդարտ նայեց Արսենիին.

Ուրեմն՝ տուր նրան քո՛նը:

Մի՞թե ես հնարավորություն ունեմ ապրելու նրա փոխարեն:

Լրջորեն հասկացված իմաստով՝ այո: Սերը ձեզ՝ Ուստինայի հետ միասին, դարձրել է մեկ ամբողջություն եւ կնշանակե՝ Ուստինայի մի

մասը դեռ այստեղ է: Դա՝ դու ես:

Թակելով՝ ներս մտավ վանականը եւ ծերուկին փոխանցեց տափակ ամանը վառվող ածուխներով: Ծերուկն այն թափեց վառարանի մեջ: Վերեւից նետեց ջախը: Դրա վրա դրեց մի քանի ճղոն: Մի քանի ակնթարթ անց ճղոններն արդեն լիզում էր կրակը: Ծերուկի գունատ դեմքը վարդագունեց:

Քրիստափորը քեզ խորհուրդ տվեց գնալ վանք: Ես ինձ հարցնում եմ, ինչո՞ւ նրան չլսեցիր, եւ պատասխան չեմ գտնում... (Մոտ եկավ Արսենիին): Դե, մնաս բարով անենք գուցե, քանի որ սա մեր վերջին հանդիպումն է: Իրադրություններն այնպես են դասավորվում, որ մոտ ժամանակներս իմ կյանքը կդադարի: Եթե ոչինչ չեմ խառնում, ամեն բան տեղի կունենա դեկտեմբերի 27-ին: Կեսօրին կամ դրա մոտ:

Սրբահայրը գրկեց Արսենիին եւ ուղղվեց դեպի դուռը: Ճեմի վրա շրջվեց:

Դու դժվար ճամփի վրա ես, չէ՞ որ քո սիրո պատմությունը դեռ նոր է սկսվում: Այժմ, Արսենիե, ամեն բան կախված կլինի քո սիրո ուժից: Եվ, իհարկե, քո աղոթքի ուժից:

-ԻԱ-

Պարզվեց այդ տարվա ձմեռը նման չէր նախորդ ձմեռներին: Այն ո՛չ սառնամանիքային էր, ո՛չ ձյունե: Միգապատ էր ու խավար, նույնիսկ ոչ ձմեռ, այլ ուշ աշուն: Եթե ձյուն էլ էր գալիս, գալիս էր անձրեւի հետ: Բնակչությանը պարզ էր, որ այդպիսի ձյունն այս աշխարհում չի մնա: Հալվում էր՝ չհասնելով հողին, եւ ոչ ոքի ուրախություն չէր պարգեւում: Դեռ չէր հասցրել սկսվել, ձմեռվանից հոգնել էին արդեն: Դրանում, ինչը տեղի էր ունենում բնության մեջ, տեսնում էին վատ կանխանշան: Եվ դա հաստատվեց:

Ծննդյան տոներից մեկ օր անց հանգյավ ի Տեր ծերուկ Նիկանդրոսը: Ծննդյան տոնի երեկոյան ժամերգության ավարտից հետո նա տեղեկացրեց միաբանության եղբայրներին, որ պատրաստվում է իր ծննդյան օրը տոնել դեկտեմբեր ամսի քսանյոթերորդ օրը: Ծննդյան տոները ճգնավորը երբեք չէր տոնում, եւ սահմանված ժամին, հետաքրքրությունից դրդված, միաբանությունը հավաքվեց նրա ճգնա-

րանի մոտ:

Ծնունդյան օր՝ հավիտենության համար, մեկնաբանեց նա անկյունի փայտե պառկելատեղից: Նրա ձեռքերը դրված էին կրծքին:

Հասկանալով բանն ինչում է, հավատացյալները հեծկլտացին:

Ես ձեզ ասում եմ՝ մի ողբացեք ինձ, քանի որ հիմա տեսնում եմ դեմքը իմ Տիրոջ: Եվ պաղատում եմ նաեւ Քեզ, Տեր իմ՝ Քո ձեռքն եմ տալիս իմ հոգին, գթասիրտ եղիր եւ հավերժական կյանք պարգեւիր ինձ:

Ամեն:

Ամեն, կրկնեցին հավաքվածները, նայելով, թե ինչպես է Նիկանդրոսի հոգին մարմինը լքում:

Նրանց աչքերը չորացան, իսկ դեմքերը լուսավորվեցին: Միաբանությունը լցվեց շրջակայքի մարդկանցով՝ սպասելով հրաշագործության, քանզի նորաննջեցյալ արդարակյացն իր մեջ ամփոփում էր յուրահատուկ զորություն: Եվ նրանք ստանում էին ըստ հավատի իրենց:

Ձմեռն այդ ընթացքում լիովին դեռ չէր սկսվել: Ճանապարհները կատարյալ ցեխաջրի մեջ էին, իսկ գետերը չէին սառել:

Ա կետից Բ կետ տեղաշարժը ձախողվում էր գյուղարվարձանում, անհնար էր այն պատկերացնելը կամ՝ խիստ դժվար էր: Մենք փաստորեն զրկվում էինք ճանապարհներից, որոնք այդ բառի ներկա իմաստով չեն եղել նաեւ նախկինում:

Բայց նույնիսկ ճանապարհների բացակայությունը չէր խանգարում այն ժամանակվա հիմնական աղետի՝ ժանտախտի տարածմանը: Հիվանդությունն առաջինը հայտնաբերվեց Բելոզյորսկում՝ իշխանության գլխավոր քաղաքում: Այդտեղից այն դանդաղ շարժվում էր հարավարեւելք: Նման թշնամական բանակի, որը զավթում է գյուղ գյուղի ետեւից եւ գրաված բնակավայրերում իրեն պահում անողոք:

Բոլորն էլ մնում էին իրենց տեղերում, որովհետեւ հիվանդությունից ուր փախչես: Չէ՞ որ նույնիսկ ցեխաջուր ճանապարհներ հաղթահարելը պարտադիր չէ փրկության համար: Ըստ լուրերի, որոնք հասնում էին բելոզյորսկցիներին, թաց եղանակ էր ողջ Ռուսիայով, իսկ այդ նշանակում էր, որ ժանտամահի օջախը կարող է բռնկվել ուր պատահի: Սկսվելով, ինչը հաճախ էր լինում, աշնանը, ախտը չէր կարող սառչել ձմռանը, քանի որ ձմեռը վրա չէր հասել:

Մինչեւ Ռուկինյան գյուղարվարձան ժանտամահը դեռ չէր հասել,

բայց բնակիչներն արդեն տագնապում էին: Կանխատեսելով ժանտամահի գալը՝ նրանք վճռեցին խորհրդակցել Արսենիի հետ: Նրա հետ տեղի ունեցած փոփոխությունները վախեցնում էին գյուղարվարձանցիներին, եւ սկզբնապես Արսենիի մոտ գնալ չէին ուզում: Նկատի առնելով սպառնացող վտանգը, սակայն, նրանց ընտրություն անելու բան չէր մնում: Իսկ երբ նրանք եկան Քրիստափորի տուն, ապա այն գտան դատարկ:

Դուռը կողպված չէր, եւ նրանք ներս մտան անարգել: Չնայած լրիվ կարգուկանոնին, բացահատ էր, որ տանը ոչ ոք չի ապրում: Ավելի ստույգ՝ հենց այդ կարգուկանոնն էլ անբնակելի էր: Գյուղարվարձանցիները ձեռք տվեցին վառարանին. պարզվեց, բացարձակապես սառն է: Նույնիսկ ջերմության հիշողությունը չկար, որն անսխալ զգացվում է օրերս վառած վառարանում: Գյուղարվարձանցիները փնտրում էին, թե Արսենիից ինչ որ մի տեղ գրություն չի՞ մնացել: Բայց գրություն նույնպես չկար: Զգուշանալով վատթարից՝ նրանք նստարանի տակ աչք ածեցին, զննեցին բակի զետեղարանները եւ նույնիսկ անցան տանը հարակից գերեզմանի մոտով: Արսենիից ոչ մի հետք՝ կենդանի, թե մեռած, գյուղարվարձանցիները չգտան: Կարող է պատահի, նա հալվել է, որպես կրակի երեսից հալված մոմ, մտածեցին նրանք: Ավելի ճիշտ, պարզապես չգիտեին, թե ինչ մտածեն:

ԳԻՐՔ ՀՐԱԺԱՐՄԱՆ

-Ա-

Սակայն Արսենին չհալվեց: Այն օրը, երբ նրան փնտրում էին Քրիստափորի տանը, նա գտնվում էր արդեն տասը վերստ հեռու: Երկու օր առաջ մեջքին գցեց քաթանե մախաղն ու լքեց խուտորը:

Պարկի մեջ դրեց սակավաթիվ պիտույքներ ու բժշկական գործիքներ: Մնացածը զբաղեցնում էին Քրիստափորի գրառումները: Դա հանգուցյալի գրառումների աննշան մասն էր, որովհետեւ նրա ձեռագիր ժառանգությունը լայնածավալ էր եւ չէր տեղավորվի նույնիսկ մի մեծ պարկի մեջ: Իսկ Արսենիի պարկը մեծ չէր: Բազում սքանչելի գրառումներ նա ստիպված պիտի թողներ:

Դուրս գալով տնից՝ Արսենին ճամփա բռնեց Կոշչեեւո: Կոշչեեւոյից՝ Պավլովո, Պավլովոյից՝ Պանկովո: Ոտքերը սայթաքում էին թաց կավի վրա, նա խրվում էր խոր ջրափոսերի մեջ, եւ սապոգներն արագ ջուր էին քաշում: Արսենիի ճանապարհն ուղիղ չէր, քանզի չուներ հստակ արտահայտված աշխարհագրական նպատակակետ: Նաեւ աճապարող չէր: Մտնելով հերթական գյուղ, Արսենին հարցնում էր, արդյո՞ք այնտեղ ժանտամահ կա: Նրա տեսած առաջին գյուղերում ժանտամահ չկար: Այնտեղ Արսենիին դեռ գիտեին եւ այդ պատճառով էլ թողնում էին տուն մտնի եւ նույնիսկ կերակրում էին:

Հաշվի առնելով մութը շուտ ընկնելը, Արսենին ստիպված գիշերեց Պանկովոյում: Իսկ երբ լուսադեմին նորից ճամփա ընկավ եւ եկավ Նիկոլսկոյե, նրան չթողեցին այնտեղ մտնի: Նիկոլսկոյե չէին թողնում ոչ ոքի, որպեսզի մարդու հետ գյուղ չբերվեր ժանտամահի համաճարակը: Արսենիին չթողեցին մտնի նաեւ Կուզնեցովոյե, որը մեկ վերստ էր հեռու Նիկոլսկոյեից: Արսենին ճամփա բռնեց Փոքր Զակոզյե, բայց մուտքը Փոքր Զակոզյե, պարզվեց, լցված է գերաններով: Նա կշարժվեր դեպի Մեծ Զակոզյե, բայց ճիշտ այդպիսի գերաններ թափված էին նաեւ այնտեղ:

Արսենիի ճամփին հաջորդը Վելիկոյե գյուղն էր: Այնտեղ մուտքն ազատ էր, բայց թշվառության ոգին, որ սավառնում էր այդ վայրի վրա, Արսենիին իսկույն ակնհայտ դարձավ:

Այստեղ դժբախտության հոտ է փչում, ասաց Արսենին Ուստինային: Այս գյուղում մեր օգնության կարիքն ունեն:

Սա իր առաջին դիմելն էր Ուստինային մահից հետո, եւ թրթիռ զգաց: Արսենին նրանից ներում չհայցեց, քանի որ ինքն արդար չէր համարում իրեն ներված լինելը: Պարզապես խնդրեց կարեւոր գործի մասնակից լինել նրան եւ հույս ուներ, որ նա չի հրաժարվի: Սակայն Ուստինան լռում էր: Նրա լռության մեջ ինքը կասկածելի բան էր զգում:

Հավատա ինձ, սեր իմ, ես մահ չեմ փնտրում, ասաց Արսենին: Հենց հակառակը. մեր կյանքը՝ քո եւ մեր հույսն է: Մի՞թե ես հիմա կարող եմ մահ փնտրել:

Առաջին խրճիթում դուռը չբացեցին նրա առաջ: Ասացին, որ մահտարաժամ է եկել գյուղ: Արսենին հարցրեց՝ հատկապես որտե՞ղ են հիվանդները, եւ նրան ցույց տվեցին Դարբին Եգորի խրճիթը: Նա դուռը թակեց: Պատասխան չկար: Արսենին մախաղից հանեց քաթանի մի ծվեն, դրանով փակեց բերանը եւ ծայրերը կապեց ծոծրակին: Խաչակնքվելով՝ ներս մտավ:

Դարբին Եգորը պառկած էր նստարանին: Նրա հսկա ձեռքը կախ էր ընկել: Մերթ ընդ մերթ դաստակը սեղմվում, բռունցք էր դառնում, եւ դա ցույց էր տալիս, որ Եգորը դեռ կենդանի է: Արսենին բռնեց Եգորի դաստակից, որպեսզի հասկանա, ուժե՞ղ է արդյոք արյան շարժը: Սակայն շարժ համարյա չէր զգացվում: Հպումից Եգորն անսպասելի բացեց աչքերը:

Խմեմ:

Ջուր խրճիթում չկար: Հատակին՝ Եգորի հենց ձեռքի մոտ, վար էր ընկած շրջված շերեփը, որի տակ փայլփլում էին խոնավության վերջին կաթիլները: Պարզ էր, որ Եգորը շերեփը վայր էր գցել, իսկ ջրհորից ջուր բերելու ուժ արդեն չէր մնացել: Արսենին դուրս ելավ խրճիթից եւ ուղղվեց դեպի կռունկով ջրհորը: Կռունկ-բռնակը մեռած տեսք ուներ: Նրա փայտյա իրանը, որ բռնակով ամրացված էր գերան-մարմնին, ճռռոցով ճոճվում էր քամուց: Արսենին չանն իջեցրեց ջրհորի մեջ: Ստորերկրյա ջուրը, որին սառանմանիքը չէր կապանքել, բարձր էր կանգ-

նած: Արսենին տեսավ իր արտացոլանքն ու չճանաչեց: Դեմքը դարձել էր ուրիշ:

Իմ դեմքն ուրիշ է դարձել, ասաց նա Ուստինային: Այդ փոփոխությունները դժվար է տարբերել, բայց դրանք, սեր իմ, աչքի են զարնում:

Վերադառնալով խրճիթ՝ նա Դարբին Եգորին ջուր խմեցրեց: Արսենին նրա գլուխը պահում էր ձեռքերով, իսկ Եգորը խմում էր կուրեկուր: Խեղդախում էր լինում: Ջուրը չոչոռում էր նրա մորուքն ի վար ու լցվում շապկի տակ: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հագեալ: Իր ձեռքով կառչել էր Արսենիի ձեռքից, եւ Արսենին հազիվ էր պահում նրա ծանրությունը: Որքան զորեղ էր այս մարդը, մտածում էր Արսենին, իսկ որքան թույլ՝ հիմա: Հիվանդության ընդամենը մի քանի օրերը նրան վերածեցին անկար մսակույտի: Որը մի քանի օր անց կսկսի քայքայվել: Նա զգում էր, որ այդ մարմնում արդեն կյանք չկա:

Եգորն անսպասելի աչքերը բացեց:

Մի՞թե իմ մահվան հրեշտակն է:

Ոչ, բացառեց Արսենին:

Ասա ինձ, հրեշտակ, ի՞նչ դատ է ինձ սպասվում:

Արսենին նայում էր, թե ինչպես են Եգորի կոպերը դանդաղ փակվում:

Իմացիր, շուտով կմեռնես, կամացուկ ասաց Ասենին, բայց Եգորը նրան արդեն չէր լսում:

Նա ծանր էր շնչում, եւ քրտինքի կաթիլները գլորվում էին ճակատից՝ կորչելով խիտ մազերի մեջ:

Արսենին նստել էր նրա կողքին եւ հիշում էր, թե ինչպես էր հաճախակի նայում քնած Ուստինային: Ծածկոցի տակ հազիվ նկատելի խփում էր նրա կուրծքը: Երբեմն Ուստինան քթանցքերով աղմուկով ներս էր քաշում օդն ու շուռ գալիս մյուս կողքի վրա: Քորելով այտը: Շարժում էր շուրթերը: Շուրթերը շարժում էր նաեւ Արսենին: Նա մեռնողի վրա աղոթք էր կարդում: Նրա հայացքն աստիճանաբար սրություն էր ձեռք բերում, եւ Ուստինայի դիմագծերի ետեւում նա տեսավ Եգորին: Եգորը մեռած էր:

Արսենին գնաց հարեւան տները: Այնտեղ պառկած էին ողջերն ու մեռածները: Մեռածներին նա քաշելով դուրս հանեց եւ ծածկեց կտորով ու ցախով: Քաշելով մարմիններից մեկը, Արսենին կյանքի նշան-

ներ զգաց: Նկատեց, որ այդ մարմնից դեռ կառչում է հոգին: Դա ջահել կնոջ մարմին էր:

Ինչ-որ բան ինձ հուշում է, ասաց նա Ուստինային, որ գործն այստեղ անհուսալի չէ:

Արսենին կնոջը ետ բերեց տուն: Այնտեղ տաք էր, քանի որ դեռ առավոտյան տանտերերը ոտքի վրա էին եւ վառել էին վառարանը: Արսենին հիվանդին պառկեցրեց փորի վրա եւ զննեց նրա վիզը: Խոշոր անագակարմիր ուլուքներով նրա վզով մեկ ձգվում էին ուռած գեղձուռուցքները: Արսենին փչեց վառարանի ածուխներն ու փայտ գցեց: Պայուսակից հանելով գործիքները՝ շարեց նստարանի վրա: Ոտքերի մեջ ընկավ: Ընտրեց փոքրիկ սրածողն ու այն մոտեցրեց կրակին: Երբ սրածողը շիկացավ, մոտ եկավ հիվանդին: Ազատ ձեռքով շոշափեց գեղձուռուցքը: Ընտրելով ամենամեծն ու փափուկը, նրա մեջ խրեց ձողաձայրն ու սեղմեց երկու մատով: Գեղձուռուցքից հոսեց պղտոր, անդուր հոտով խյուսը: Արսենին մատներով զգաց դրա կպչուն արտահոսքը, բայց իր համար զզվելի չէր: Կնոջ վզով հոսող թարախը նրան երեւաց իբրեւ մարմնից հիվանդության տեսանելի ելք: Արսենին հրճվանք ապրեց: Մատների բարձիկներով շոշափելով հանգույց առ հանգույց՝ նա հիվանդից ժանտախտը մղում էր դուրս:

Վզից Արսենին անցավ թեւատակերին, թեւատակերից՝ աճուկին: Թարախի հոտից բացի նա այնտեղ զգում էր ուրիշ հոտեր, եւ դրանք իրեն հուզում էին: Որքան անասնություն կա իմ մեջ, մտածեց Արսենին: Եվ որքան: Աշակումն ավարտելով, նա արյունը բաց թողեց այն տեղերում, որտեղ գեղձուռուցքներն ամենաշատն էին: Արյունն այնտեղ վատն էր, եւ պիտի դուրս թափվեր: Արսենին ծակեց առաջին արյունատար անոթը, կինը գիտակցության եկավ ու տնքաց:

Համբերիր, կին, շշնջաց Արսենին, եւ կինը նորից մոռացության գիրկն ընկավ:

Նա ծակում էր նրա արյունատար անոթները մարմնի տարբեր մասերում, եւ ամեն անգամ կինը տնքում էր, բայց աչքերն արդեն չէր բացում: Ավարտելով՝ Արսենին նրան ծածկեց ծածկոցով:

Իսկ հիմա՝ քնիր երկար քնով եւ ուժ հավաքիր: Եվ արթնացիր ոչ հանուն մահվան: Կանխագուշակումը քեզ համար բարենպաստ է:

Այդ խոսքերով Արսենին դուրս ելավ: Մինչեւ օրվա վերջ նա եղավ

եւս մի քանի տներում եւ գործ ունեցավ ողջերի ու մեռածների հետ, եւ տեսավ, թե ինչպես են ողջերը կերպափոխվում մեռյալի: Տներից մեկում նա հայտնաբերեց, որ իր դեմքի բերանակապը կորել է: Նորը փնտրելու ժամանակ չկար, եւ ինքն աղաչեց Պահապան Հրեշտակին, որ, գտնվելով իր աջ ուսի մոտ, ե՛տ քշի ժանտամահ համաճարակն իր թեւերով: Ժամանակ առ ժամանակ Արսենին հրեշտակային արտաշունչ էր զգում, եւ դա իրեն հանգստացնում էր: Այժմ կարող էր ամբողջովին կենտրոնանալ հիվանդների ապաքինման վրա:

Արսենին բռնում էր հիվանդների դաստակներն ու հետեւում արյան շարժմանը: Երբեմն ձեռքը տանում էր կրծքով կամ թաքուն տեղերը: Դա իրեն բացում էր առավելագույն հնարավոր ճանապարհը, որ կանխորոշված էր հիվանդին: Եթե հիվանդին ապաքինում էր սպասվում, Արսենին ժպտում էր եւ համբուրում նրա ճակատը: Եթե նրան մահ էր վիճակված, Արսենին անձայն լաց էր լինում: Երբեմն չէր հայտնաբերվում կանխանշվածը, եւ այդ ժամանակ Արսենին ջերմեռանդ աղոթում էր հանուն ախտավորի ապաքինման: Բռնելով պառկած մարդու ձեռքից՝ նրան կենսական ուժ էր փոխանցում: Թողնում էր ձեռքը միայն այն ժամանակ, երբ զգում էր, որ մահ ու կենաց պայքարը վճռվում է հօգուտ կյանքի:

Այդ օրը նրանից շատ ուժ խլեց, որովհետեւ դեռ երբեք միանգամից այդքան մարդու օգնության պահանջը չէր ունեցել: Իր այցելած վերջին տներից մեկում Արսենին աչքերը փակեց հիվանդի կողքին: Նա քնեց, եւ Պահապան Հրեշտակը նրան երազ եկավ, որն իրենից քաշում էր ժանտախտի համաճարակը: Նա թեւերը չփակեց նույնիսկ գիշերը: Արսենին զարմացել էր Հրեշտակի անկոտրումությամբ եւ հարցրեց նրան, ինչպե՞ս է, որ չի հոգնում:

Հրեշտակները չեն հոգնում, պատասխանեց Հրեշտակը, որովհետեւ նրանք իրենց ուժերը չեն խնայում: Եթե դու չմտածես քո ուժերի վերջնասահմանի մասին, դու նույնպես չես հոգնի: Իմացիր, Արսենիե, ջրի երեսով կարող է քայլել միայն նա, ով չի վախենում խեղդվելուց:

Լուսադեմին Արսենին ու հիվանդն արթնացան միեւնույն ժամին: Եվ հիվանդը հասկացավ, որ ինքն առողջ է:

-Բ-

Վելիկոյե գյուղում Արսենին մնաց երկու շաբաթ: Նա բուժում եւ լվանում էր հիվանդներին: Նրանց ուտելիք ու խմելիք էր տալիս, առաջին հերթին՝ խմելիք: Նա ապաքինվածներին ուսուցանում էր, թե ինչպես հոգ տանեն հիվանդների մասին:

Այժմ դուք ժանտամահի իշխանության տակ չեք, ասում էր Արսենին ապաքինվածներին: Նրանց, ովքեր պոկվել են դրա ճանկերից, այլեւս ձեռք տալ չի կարող:

Նրան հավատում էին ոչ բոլորը: Ոմանք, վախենալով ախտի վերադարձից, լուռ լքում էին գյուղն ու գնում այնտեղ, ուր ժանտամահ չկար: Ծուտով նրանք համոզվեցին այն բանում, որ դա սխալ է եղել: Իրենց հիվանդությունից ուժասպառ մարմինները չզորեցին դիմադրել ճամփորդական զրկանքներին, եւ այն, ինչ ուժը չպատեց անել ժանտախտը, ավերիչ շլոփան եւ ճամփի ցուրտ մեգը հասցրին ավարտին: Իսկ նրանք, որ մնացին (նրանք մեծամասնություն էին), հավատում էին Արսենին, ինչպես որ իրենց: Նա փրկիչն էր իրենց, եւ նրա խոսքերի ճշմարտացիությունը իրենց աչքում հաստատվում էր վերակենդանացմամբ: Արսենիի հետ միասին նրանք մտնում էին ժանտախտավոր տները, բայց ոչ ոքի դրանից վնաս չէր լինում:

Երբ Արսենիի օգնականները բավականին շատացան ողջերին աջակցելու համար, նա անցավ մեռյալներին: Նրանք նույնպես չէին կարող սպասել: Նույնիսկ տներից նախկին դուրս բերված մեռյալները կատաղորեն քայքայվում էին: Հանգուցյալների ամոթալի դիմածռությունները բացահայտ ցույց էին տալիս, որ իրենք իրենց ոչինչ անել չէին կարող: Շտապ օգնություն էր հարկավոր: Մի սայլ ճարեցին, որի վրա դարսում էին դիակները: Նրանց տեղափոխում էին մոտակա մեռելանոց, երեք վերստ հեռու, եւ այնտեղ նրանք մնում էի Յոթներորդի սպասումով: Մարդիկ, որ զբաղվում էին հանգուցյալներով, չէին լալիս: Այն օրերին առհասարակ ոչ ոք չէր լալիս, քանզի համընդհանուր մահվան վիշտը չի թեթեւանում արցունքներով: Եվ բացի այդ՝ արցունք պարզապես այլեւս չկար:

Հասկանալով, որ կյանքը կարգավորվում է Վելիկոյե գյուղում, Արսենին որոշեց այն թողնել: Հունվարյան մի լավ առավոտ նա մնաս բարով

արեց բնակիչներին եւ թույլ տվեց իրեն ճանապարհեն գյուղի ծայրամասից ոչ հեռու: Բայց Արսենիի մեծ փառքը, որի ակունքները փնտրվում են Վելիկոյե գյուղում, այդ տեղանքով սահմանափակվել չէր կարող արդեն:

Արսենիի կամքից անկախ այն տարածվում էր ոստաններով ու գյուղերով՝ հաղթահարելով թացն անձրեւոտ եւ ճամփախափանքը: Արսենին շարժվեց դեպի Լուկինսկոյե գյուղ, բայց փառքը նրան դիմավորեց առաջին իսկ տան մոտ: Խոնարհված փորագիր շրջակալներին՝ այն կանգնած էր կարավայը ձեռքին գեղջուկ կնկա կերպարանքով:

Դու ե՞ս Արսենին, հարցրեց կնիկը:

Ես եմ, պատասխանեց Արսենին:

Կինը նրա ձեռքը խոթեց կարավայը, եւ նա մեքենաբար պոկեց կողքից: Կարավայը չոր էր, քանի որ (Արսենին հասկացավ) այն թխել էին վաղուց:

Օգնակա՛ն եղիր, Արսենիե, մահից կոտորվում ենք:

Եթե Աստծուն բարեհաճ լինի, կօգնեմ, փնթփնթաց Արսենին, կնկան չնայելով:

Նա չհասկացավ, որտեղից էր այդ մասին իմացել, եւ նրա ետեւից անձայն գնաց գյուղամիջով: Նրանց ոտքերի տակ չլմփում էր ցեխը, կեչիների խցանված ճյուղերի միջով նրանց վրա էին թռչում խոշոր թաց փաթիլներ: Սպիտակ բների ֆոնին փաթիլները չէին երեւում, բայց լավ զգացվում էին դեմքի մաշկով: Դրանք իսկույն հալչում էին այտերի վրա եւ մի կարճ միջոցում կախված մնում թարթիչներից:

Որտեղի՞ց գիտի նա ինձ, Արսենին հարցրեց Ուստինային, բայց Ուստինան լուռ էր մնում:

Վախենամ թե նա ինձ ուրիշի տեղն է դնում, ասաց Արսենին դադարից հետո: Եվ որ նրա սպասելիքները չափազանց են:

Երբեմն նա առաջ էր անցնում կնկանից եւ նայում նրա աչքերի մեջ: Նրանցում արտացոլվում էր մոխրագույն երկինքը, որտեղ լուսաշերտ չկար: Նա բռնեց կնկա ուսից եւ կտրուկ կանգնեցրեց: Կինը գլուխը շրջեց, բայց նայում էր կողքանց:

Չէ որ գիտես դու, որ քո թոռնիկը մահացել է, այդ դեպքում ինչո՞ւ ես ինձ նրա մոտ տանում, ասաց Արսենին:

Էլ ինչո՞ւ եմ ես ապրում, հարց է ծագում, անտարբեր հարցրեց գեղջ-

կուհին:

Արսենին չգիտեր, ինչ պատասխանի, դե դա հարց էլ չէր: Ծայրահեղ դեպքում հարց՝ ուղղված իրեն: Նա անձայն նայում էր, ինչպես է գեղջկուհին կորչում ձյան փաթիլների ետեւում: Երբ նա այլեւս չէր երեւում, ուղղվեց մոտակա խրճիթ: Այնտեղ նրան արդեն աշխատանքն էր սպասում:

Լուկինսկոյում Արսենին ավելի երկար կանգ առավ, քան Վելիկոյե գյուղում: Այստեղ ավելի շատ հիվանդներ կային: Մեռյալները նույնպես շատ էին: Լուկինսկոյում հուսահատությունն էր թագավորում: Եվ իրար օգնության հասնելու գործը կարգավորելն այստեղ պարզվեց քանիցս բարդ է: Բայց Արսենին սա էլ գլուխ բերեց: Համոզեց գյուղացիներին, որ նրանց ապաքինումը շատ բանով կախված է հենց իրենցից: Կամենալով նրանց մեջ կենսական ուժեր արթնացնել, Արսենին նրանց ապացուցում էր, որ Աստծո օգնությունը հաճախ ուղեկցվում է գործնական մարդկանց միջոցով: Գյուղացիները գլխով էին անում, քանի որ գործնական մարդու անվան տակ հասկանում էին Արսենիին: Իսկ իրենք գործնական դառնալ չէին ուզում: Կամ չէին կարող: Եվ երբ մի քանի հիվանդ լավացան, արդեն իրենց ողբալուց հետո, հույսն արթնացավ:

Եվ ապաքինվածներն սկսեցին օգնել հիվանդացածներին եւ հավաքել հանգուցյալներին: Նրանք տանում, հաց էին բաժանում որբ մնացած երեխաներին, լվանում եւ ծխահարում էին տները, մաքրում էին բակերն ու փողոցները, որ մահտարաժամի գալով թողլքված էր: Տեսնելով այդ՝ Արսենին թողեց Լուկինսկոյե գյուղն ու շարունակեց իր ճամփան:

Հաջորդ վայրը, որն Արսենիի ճամփի վրա էր, Գոռի գյուղն էր: Ինչոր ժամանակ մնալով Գոռիում, նա շրջանցեց Կիշեմսկոյե լիճը եւ, տասը վերստ հաղթահարելով, հայտնվեց Ծորտինո գյուղում: Ծորտինոյից նրա ճամփան անցնում էր Կուլիգ, Կուլիգից՝ Դոբրիլովո, այնտեղից՝ Զագորյե: Եվ ամենուր Արսենիին արդեն սպասում էին, եւ տեղացիներին արդեն հայտնի էր, որն է լինելու իրենց օգնությունը բժշկարարին: Նրա խոսքը, ինչպես եւ փառքը, իրենից առաջ էին ընկնում, եւ այժմ բոլորը գիտեին, թե իրենց մոտ գալով, Արսենին ինչ կասի, այդ իսկ պատճառով նրան խոսելու քիչ կարիք կար: Դա Արսենիին ահագին թեթեւու-

թյուն բերեց, քանզի իր նախածեռնած ամեն ինչից ավելի ամենածանր գործը, թվում էր, բառեր արտաբերելն է:

Երբ Արսենին գտնվում էր Զագորյեում, ի վերջո սառնամանիքը խփեց: Սառնամանիքն ուժեղ էր: Ծաբաթ էլ չէր անցել, որ այն կապանքեց Ծեկսնին բարակ, բայց պինդ սառույցով: Նրա ոտքերը երբեմն սայթաքում էին, երբեմն կառչում սառցակալված եղեգներից, բայց գետով գնալը, միեւնույն է, ավելի հեշտ էր, քան ճամփախափանքով:

Այդպես նա հասավ Իվաչեւո մեծ գյուղը: Դա հարուստ գյուղ էր, որն ապրում էր ձկան որսով: Իվաչեւոյում կանգուն էր Անդրեաս Նախավկայի քարե եկեղեցին, մինչեւ նրա՝ ձկնորսի առաքելությունը: Իվաչեւոյի խրճիթներում քայքայվող մարմինների հոտին խառնված էր ուռկանների եւ աղ դրած ձկների հոտը: Վաղուց էր այնտեղ բռնկվել ժանտամահը, ինչպես բոլոր գետամերձ գյուղերում, որոնք ընդունում էին լողարկողներին եւ ճամփորդներին:

Արսենին, որ ջրային տարածություններից հեռու էր մեծացել, գետի ներկայությունն զգում էր ամեն ժամ: Ծեկսնին մեծ չէր, բայց ուղղորդող ջրաշերտը, նույնիսկ գտնվելով սառույցի տակ, շարժման յուրահատուկ էներգիա էր ճառագում: Կենսական այդ ուժն Արսենիի կյանքում նոր էր, եւ իրեն հուզում էր: Այն իր մեջ արթնացնում էր միտքը թափառումների մասին:

-Գ-

Իվաչեւոյում Արսենիին գտավ գարունը: Սառնամանիքը, որ ժանտամահի մոլեգնությունը նվազեցրել էր մի փոքր, փոխվեց հալոցքի: Արսենին բոլոր ճիգերը գործադրեց հօգուտ այն բանի, որ թույլ չտա ժանտամահ համաճարակի երկրորդ ալիքը: Իվաչեւցիներին նշանակում էր ուտել մանրած խեժ՝ ձվի դեղնուցով, վրայից խմել մասուրի հյութ՝ հանուկով: Դեղորայք չընդունելու օրերին խորհուրդ չտվեց ուտել խոզի միս, կաթ խմել եւ գինի: Ցերեկը շրջայց էր անում հիվանդների տներում, իսկ գիշերն աղոթում ի սեր նրանց առողջության, ինչպես նաեւ հանուն նրա, որ հիվանդությունը չբազմապատկվի:

Հայտնվելով Ծեկսնայի ափին՝ Արսենին մտածում էր այն մասին, որ սառույցը շուտով կսկսի հալվել: Մինչեւ տաք օրեր գային, հարկ էր գե-

տով անցնել մի ուրիշ գյուղ: Նա այն է արդեն պատրաստվում էր ճամփա ընկնել, երբ մի անգամ առավոտյան շեկսնինյան սառույցի վրայով Իվաչեւո ժամանեցին սահնակները: Նայելով սահնակների գեղեցկությանը՝ իվաչեւցիներից ինչ-որ մեկը դրանք անվանեց իշխանական: Եվ դա ճիշմարիտ էր: Սահնակներն ուղարկված էին Բելոզյորսկից, իշխան Միխայիլի կողմից: Եվ ուղարկված՝Արսենիի ետեւից:

Իմ ետեւի՞ց, զարմացավ Արսենին, երբ նրան պատմեցին սահնակների ժամանման մասին:

Քո ետեւից, հաստատեցին Բելոզյորսկից եկածները: Իշխանուհուն եւ նրա դուստրերին է կպել մահտարաժամի խոցը: Մեծ է քո համբավը, Արսենիե, բելոզյորյան հողերում: Ցույց տուր բժշկող հնարքդ, դո՛ւ էլ պատվի կարժանանաս իշխանից:

Ումի՞ց է մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս վարձք ուզում, պատասխանեց Արսենին, եւ ո՞վ ենք մենք, որ իշխանը մեզ պատիվ անի:

Մի կողմ շրջվելով՝ նա ասաց Ուստինային.

Տեսնեմ, սեր իմ, ինչ կարող եմ անել այդ մարդկանց համար: Այն բանից, որ նրանք պատկանում են իշխանական ցեղին, հիվանդությունը չի մեղմանա: Ավելի ծանր էլ չի դառնա, իրոք, նույնպես:

Այդ բառերով էլ Արսենին նստեց գեղազարդված սահնակը: Նստոցներին փետուրե բարձեր էին շարված,- մարմնին փափկություն էր տալիս այն թանկարժեք իրի ընդգծված պատրաստակամությամբ: Արսենիին փաթաթեցին ծածկոցով, եւ նա անհարմար էր զգում իրեն աչք ածող իվաչեւցիների առջեւ: Նա երբեք չէր մեկնել այդպիսի սահնակով: Եվ չէր պատկերացնում, որ ճամփան այդքան հարմար կլինի: Իսկ ընթացքը՝ արագ:

Սահաչորսուները գնում էին սառույցի վրայով ոչ բարձր բյուրեղյա ձայնով, եւ ջրի հաստ շերտը պատասխանում էր խորքային ծանր զանգով: Ոտնատակ աղուրով սահակողերի ետեւից պտտվում էր գետնահողմը: Սառույցի տակ այսուայնկողմ էր նետվում ցաքուցրիվ վախեցած ձկնավտառը: Շեկսնան թռչում էր, իսկ անտառները փոխվում էին գյուղերի:

Մինչեւ Բելոզյորսկ կար նաեւ ավելի կարճ ճանապարհ: Նա այնքան էլ հարմար չէր, ինչպես գետայինը, եւ գնում էր մեկը մյուսի ետեւից երեւացող գյուղերով: Բայց եկվորները չգիտեին, արդյո՞ք մաքրված է

այն: Նրանք շտապում էին եւ որոշեցին ռիսկի չդիմել, գիտնալով, որ ճամփան գետով ապահով է եւ արագ: Հնարավոր է, նրանք չէին ուզում այդ գյուղերը մտնել, որովհետեւ այնտեղ մոլեգնում էր մահտարաժամը: Իրենց (սայլորդը խստահայաց նայեց Արսենիին) բավ էր Բելոզյորսկի ժանտախտը:

Երբ արեւը կորավ պայծառության մեջ, սառցե տարածությունն սկսեց ընդլայնվել:

Նայելով շուրջը՝ Արսենին հասկացավ, որ ափը մնացել է միայն ձախ կողմում: Աջ ափի փոխարեն, որքան աչքդ կտրում է, փոխվում էին սառույցի անսահման վերստերը: Դա Բելոզյորեն էր: Նրա սառույցը պարզվեց հավասար է գետայինին, եւ ընթացքն արագացավ: Երբ արդեն բոլորովին մութ էր, լիճը սահուն անցավ քաղաք: Նրանց դիմավորում էր Բելոզյորսկը՝ իշխանության գլխավոր քաղաքը:

Սահնակները սահում էին մութ փողոցների միջով: Արսենին դեռ երբեք չէր տեսել նման փողոցներ եւ այդպիսի բարձր տներ: Բարձր տների մասին նա կարող էր դատել վերին լուսամուտների լուսավորությունից: Երբ մոտ եկան իշխանի բնակատեղին, նրանց արդեն սպասում էին: Հենց սահնակի վրա կառչեցին Արսենիից եւ քարշ տվին սանդուղքով երկրորդ հարկ: Վազելով կիսամութ երկու սենյակների միջով՝ հայտնվեցին երրորդ հարկում: Այն լուսավորված էր պայծառ, եւ այնտեղ մարդ էր կանգնած: Դա իշխան Միխայիլն էր:

Լսել ենք, որ դու բժիշկ ես խորհրդատու, ասաց իշխանը: Նա մոտ եկավ Արսենիին եւ խոսեց ցածրաձայն, համարյա ականջին: Բարձր՝ վերեւից ներքեւ: Նրանք՝ կինս ու աղջիկներս, հիվանդացել են երեկ գիշեր, հասկանո՞ւմ ես: Այստեղի բուժակները ոչինչ չեն կարողանում անել: Ոչինչ: Նույնիսկ ատամը չեն բուժում...

Դա, երեւում է, ասաց Արսենին: Դու փչացած արտաշունչ ունես:

Օգնիր իմ մերձավորներին, Արսենիե: Կարծում եմ, դու կարող ես:

Ինչո՞ւ ես դու այդպես մտածում, հարցրեց Արսենին: Նրանցից, ում բուժել եմ, քչերը չեն մահացել:

Իշխանը նստեց զանգվածեղ փորագիր աթոռին: Նրան մոտ նստածին սկսեց երեւալ կատարի ճաղատը:

Նա նայեց Արսենիին՝ անբնական շրջելով գլուխը:

Որովհետեւ դու ինքդ էլ չես մեռել: Ինձ ասել են, որ դու բազմաթիվ

ժանտախտավոր գյուղեր ես անցել եւ չես մեռել: Դրանում քո հանդեպ աստվածահաճություն եմ տեսնում:

Արսենին լռեց:

Իշխանը նրան տարավ կանանց հարկաբաժին: Երբ նրանք մոտեցան սենյակին, որտեղ պառկած էին հիվանդները, Արսենին կանգնեցրեց իշխանին.

Մնացածը ես ինքս կանցնեմ:

Խոնարհեց գլուխն ու ներս մտավ:

Երկու մահճակալ կողք կողքի էին: Մեկի վրա պառկած էր երիտասարդ կինը (նա շատ ջահել էր իշխանից), մյուսին՝ աղջիկը՝ մի վեց տարեկան: Աղջիկն անգիտակից էր: Իշխանուհին թույլ գլխով արեց Արսենիին: Սկզբում նա մոտ գնաց աղջկան եւ բռնեց դաստակից: Հետո ձեռքը դրեց ճակատին:

Ի՞նչ կասես, Արսենիե, հարցրեց իշխանուհին:

Դու իմ անունը գիտե՞ս, զարմացավ Արսենին:

Նստեց նրա անկողնուն: Նույնիսկ սենյակի կիսախավարում էր երեւում, որ իշխանուհին կապուտաչյա է: Արեւի տակ, մտածեց Արսենին, նրա աչքերը պիտի առկայծեն երկնի կապույտով: Տերն այդպիսի ներկ ունի: Զգուշորեն բարձից բարձրացրեց իշխանուհու գլուխն ու շոշափեց վիզը:

Ի՞նչ կասես, կրկնեց նա:

Աղոթիր, իշխանուհի՛, եւ Տերը ցույց կտա իր գթասրտությունը:

Արսենին դուրս ելավ եւ իր ետեւից փակեց դուռը: Իշխանը լուռ մոտ եկավ: Կողք էր նայում:

Տեսա՞ր նրանց:

Տեսա, ասաց Արսենին: Ծանր են, բայց կյանքը չի լքի նրանց: Աստծո օգնությամբ լուսադեմին, կարծում եմ, կթեթեւանան:

Իշխանը գլուխը դրեց Արսենիի ուսին: Իր պարանոցին Արսենին արցունքներ զգաց:

Նա վերադարձավ հիվանդների մոտ եւ մնաց մինչեւ լույս: Տեսավ, թե ինչպես է կյանքը մաքառում մահվան դեմ, եւ հասկանում էր, որ կյանքին պետք է օգնել: Նա մշակեց մոր եւ երեխայի ժանտախտի խոցերը: Նրանց շատ խմելիք տվեց, որովհետեւ ջուրը մաքրում է մարմնից անմաքուր ամեն բան: Նրանց գլուխը բռնում էր լագանի վրա, երբ

ուզում էին փսխել: Իսկ գլխավորը՝ նրանց մեջ էր թողնում իր կենսական ուժերը, երբ զգում էր, որ իրենց սեփական ուժերը չեն բավում:

Արսենին հատկապես զգուշանում էր աղջկա համար, որքանով երեխաները ժանտախտը տանում են մեծահասակներից ավելի ծանր: Ամբողջ ազատ ժամանակ նա բռնում էր երեխայի ձեռքը՝ բաց չթողնելով: Երակազարկից իմանում էր վիճակի փոփոխությունն ու կառավարում՝ պայքարելով հանուն կյանքի: Արսենին զգում էր, երբ է իրեն պետք վճռականորեն միջամտել: Այդպիսի պահերին նա հավաքվում էր անմնացորդ եւ հաղորդում երեխային ամենայն կենսականը, ինչը կարող էր իր մեջ գտնել: Վախենում էր միայն իր սեփական ուժերի սպառումից:

Երբ առավոտյան եկան նրա սենյակ, Արսենին անշարժ նստած էր հատակին, երեխայի ձեռքն իր ափում: Ստնողներին թվաց, թե նա մեռած է: Որ մեռած են նաեւ իշխանուհին ու աղջիկը: Բայց Արսենին ողջ էր: Իսկ իշխանուհին ու աղջիկը թեեւ դեռ թույլ, սակայն ողջ էին:

-Դ-

Այդ իրադարձությունն էլ եղավ Արսենիի վերելքի սկիզբը: Իշխանի վրա, որ հոգի էր տալիս ընտանիքի համար, հարազատների ապաքինումը խոր տպավորություն թողեց: Նա Արսենիին սամույրի մուշտակ նվիրեց: Չնայած տաք եղանակին, ընծայի արժեքն ակնհայտ էր: Իշխանը որոշեց Արսենիին դարձնել պալատական բժիշկ եւ բնակեցնել իր պալատում:

Պետք է ասել, որ իշխանական ապարանքներն այն առմիշտ կորուսված ժամանակներում ոչ լիովին էին համապատասխանում պալատների մասին ներկայիս պատկերացումներին: Ռուսական վերնախավի պալատները սովորաբար փայտից էին: Դրանք տարբերվում էին սովորական քաղաքացիների տներից ամենից առաջ չափերով. ավելի բարձր էին եւ ավելի ընդարձակ: Դրանց շինարարությունը երբեք չէր ավարտվում: Այն կարող էր ընդհատվել, սակայն նորացվում էր ծագած առաջին իսկ անհրաժեշտությունից: Նոր ամուսնությունների հետ ընտանիքում հիմնական կառույցին հարմարեցվում էին նոր մասեր: Հայտնվում էին կից կառույցների համար նաեւ օժանդակ կցակառույցներ: Շինությունները շատանում էին, բայց առավել չէին գեղեցկանում:

Դրանք հիշեցնում էին մեղրահացեր կամ միջատների գաղութ: Դրանց գլխավոր արժեքն այն էր, որ ձեռնտու էին տերերին:

Ապրելով իշխանի մոտ մի քանի շաբաթ, Արսենին խնդրանքով դիմեց նրան բաց թողնել իրեն: Ոչ, Արսենին չէր ուզում հեռանալ Բելոզյորսկից, այնտեղ ավելի շատ մարդիկ կային, որ բուժման կարիք ունեին,- նա միայն խնդրեց իրեն տրամադրել այլ բնակարան: Նման խնդրանքն սկզբում իշխանին զարմացրեց, սակայն Արսենին պարզաբանեց, որ այցելում է ուրիշ հիվանդների եւ վախենում է ժանտախտը բերել իշխանական պալատ: Դա ճշմարիտ էր, բայց ոչ ամբողջ ճշմարտությունը: Կյանքը դղյակում հոգնեցուցիչ էր Արսենիի համար:

Գտնվելով ճոխության մեջ, ես ավելի թույլ եմ զգում ինձ, արցունքներն աչքերին նա խոստովանեց Ուստինային: Եվ գործը, հանուն որի ես ապրում եմ հիմա, այնտեղ իրականացնել հնարավոր չէ:

Իշխանը չխոչընդոտեց Արսենիին, քանզի Արսենիի խոսքը շատ բան էր նշանակում: Իշխանի համար կարեւոր էր, որ Արսենին չի հեռանում Բելոզյորսկից: Նա տուն տվեց դղյակից ոչ հեռու եւ թույլ տվեց ապրել ըստ իր կամքի: Իսկ Արսենիի կամքն էր՝ գլուխ հանել քաղաքը բռնած ախտից: Կարճ ժամանակում նա կարողացավ կարգավորել առողջացած հիվանդների օգնության խնդիրը նաեւ Բելոզյորսկում: Միայնակ ամբողջ քաղաքի հիվանդների հետ գործը գլուխ չէր բերի:

Լուսաբացի հետ Արսենին լքում էր իր տունը եւ շրջայց էր անում ժանտախտավորների խրճիթներում: Զննում էր նրանց՝ որոշելով վիճակներն ու ապրելու հնարավորությունները: Այնտեղ, որտեղ իր օգնությունը կարող էր վճռական լինել, նա մնում էր ժամերով եւ համոզում մահվան տխուր հրեշտակներին՝ ժամկետը երկարաձգել: Հաճախ, երբ իրեն թվում էր, թե ուժերը լքել են բոլորովին, նա գնում էր դեպի Բելոոզյորե:

Արդեն մայիսի վերջն էր, իսկ լիճը դեռ սառույցի տակ էր: Նրա անսահման անագե տարածությունը հակադրության մեջ էր կանաչապատ ափերի հետ: Արսենին քայլում էր սառույցի վրայով. այդտեղ լճի անդունդն իր մեջ ամփոփում էր երբեմնի բոլոր հանգուցյալ բելոզյորսկցիներին: Նա կարող էր ժամերով սեւեռվել սառույցին, ուսումնասիրելով այն, ինչը ձմռան ընթացքում սառել-մնացել էր նրա ներսում. կավամանի կտորտանքներ, խարույկների խանձողատներ, ընկած գայլ, թաթե-

րի մնացորդներ, ինչպես նաեւ այն, ինչը տեղում երկար մնալուց կորցրել էր նախնական տեսքն ու փոխակերպվել մաքուր մատերիայի:

Արսենին մտածում էր, որ մենակ է, բայց այդպես չէր: Նա երբեք չէր կարող թաքչել իր փառքից: Արսենիից թաքուն ափից նրան հետեւում էր Բելոզյորսկը: Քաղաքը հասկանում էր, որ Արսենիի լարումը սովորական մարդու համար անտանելի է, եւ չէր խանգարում նրան մենության մեջ ուժ հավաքել:

Բայց մի օր ափից զատվեց կետն ու սկսեց արագ շարժվել դեպի Արսենին: Արսենին նրան ուշադրությամբ նայեց, երբ ակներեւ դարձավ, որ մոտենում է իրեն: Արսենին կմտածեր, որ մարդը դեռ հեռվում է, բայց այդքան հեռու էր թվում, որովհետեւ եկողը փոքր էր: Երբ մոտեցավ, Արսենին տեսավ, որ մի տղա է յոթ տարեկան:

Ես Սիլվեստրն եմ, ասաց տղան: Ես եկել եմ, քանի որ հիվանդ է իմ մայրիկը: Դու էլ Արսենին ես, օգնի՛ր մեզ:

Նա բռնեց Արսենիի ձեռքից եւ քաշեց դեպի ափ: Սիլվեստրի ձեռքը սառն էր: Արսենին լուռ շարժվում էր նրա ետեւից: Սառույցի վրա Սիլվեստրը մի քանի անգամ սայթաքեց եւ ծիծաղելիորեն կախվեց Արսենիի ձեռքից: Եվ նրանցից ոչ ոք չծիծաղեց, որովհետեւ ընթացքն ուրախալի չէր: Ընթացքն ուղեկցվում էր ոտքի տակ սառույցի ճաքճքոցներով: Գլխավերեւում տաք եզերքներից վերադարձած թռչուններն էին ճչում: Ժամանակ առ ժամանակ քայլողներին պարուրում էին ալիքները տաք առափնյա օդի՝ ջերմացնելով սառցե տարածքի վրա:

Իմ հայրը մեռավ երկու տարի առաջ, ասաց Սիլվեստրը: Նույնպես ժանտախտից: Իսկ մորս անունը Քսենյա է:

Տեսնելով, որ Սիլվեստրը նայում է իրեն, Արսենին գլխով արեց: Սիլվեստրի տունը գտնվում էր ճահճացած լճակի մոտ, քաղաքի սահմանածայրին: Ի հեճուկս Արսենիի սպասումների, դա լավ տուն էր: Որբություն եւ լքվածություն չկար: Մինչեւ շեմն անցնելը Արսենին հարցրեց.

Ե՞րբ է նա հիվանդացել:

Երեկ, պատասխանեց տղան:

Արսենին ներս մտավ: Չնայած նախազգուշական ժեստին՝ Սիլվեստրը քայլում էր նրա ետեւից:

Սա իմ մայրն է, շշնջաց Սիլվեստրը: Նրանից ոչ մի վատ բան ինձ չի լինի:

Հիմա նա արդեն պատկանում է ոչ իրեն, այլ՝ հիվանդությանը, այդպես շշուկով էլ ասաց Արսենին եւ տղային դուրս տարավ:

Քսենյան պառկած էր փակ աչքերով: Մի քանի րոպե Արսենին լուռ նայում էր նրան: Նույնիսկ հիվանդագին այտուցվածությունը չէր աղավաղել կանոնավոր դիմագծերը: Արսենին ձեռքով հպվեց նրա ճակատին եւ ինքն էլ զարմացավ իր վարանմունքից: Որպեսզի դեն նետի անվճռականությունը, նա ձեռնափը սեղմեց հիվանդի ճակատին: Քսենյան բացեց աչքերը: Դրանք ոչինչ չէին արտահայտում եւ դանդաղ փակվեցին: Քսենյան անզոր էր դիմադրել քնին: Արսենին շոշափեց զարկերակը: Ձեռքը տարավ պարանոցային զարկերակով: Մի քանի անգամ սեղմեց այն տեղը, որի տակ բաբախում էր սիրտը: Նա ոչինչ չէր զգում հիվանդի մեջ, բացի մահացող կյանքից:

Խոտերում նրան հարցական նայեց Սիլվեստրը: Արսենիին քաջածանոթ էր այդ հայացքը, բայց երեխայի մոտ երբեք չէր տեսել: Չէր կարողանում հասկանալ, ինչ է հարկավոր ասել նման հայացքով երեխային:

Գիտես, գործերը վատ են (շրջվեց Արսենին): Ինձ համար շատ ծանր է, որ ես չեմ կարող փրկել նրան:

Բայց չէ որ դու փրկել ես իշխանուհուն, ասաց տղան: Փրկիր եւ նրան:

Ամեն բան Աստծո ձեռքերում է:

Գիտես, Աստծո համար չէ՞ որ դա հեշ բան է՝ առողջացնել նրան: Դա շատ պարզ է, Արսենիե: Եկ աղոթենք Նրան համար:

Եկ: Միայն թե ես չեմ ուզում, որպեսզի դու մեղադրես Նրան, եթե, համենայն դեպս, մայրդ մահանա: Հիշիր, որ նրա մահը հավանական է:

Դու ուզում ես, որպեսզի մենք խնդրենք Նրան ու չհավատա՞նք, որ Նա մեզ կօգնի:

Արսենին համբուրեց երեխայի ճակատը:

Ոչ, իհարկե, ոչ:

Նա Սիլվեստրին տեղ գցեց խոտերի մեջ:

Դու կքնես այստեղ:

Այո, բայց մենք սկզբից պետք է աղոթենք, ասաց Սիլվեստրը:

Արսենին սենյակից բերեց Փրկչի, Նրա Սուրբ Մոր եւ սուրբ տառապյալ ու բժշկարար Պանտելեյմոնի սրբապատկերները: Դարակից

հանեց շերեփներն ու սրբապատկերները դրանց տեղը դրեց:

Երեխայի հետ միասին ծունկի իջան: Աղոթեցին երկար: Երբ Արսենին ավարտեց Փրկչի աղոթքների ընթերցումը, Սիլվեստրը քաշեց նրա ձեռքից:

Սպասիր: Ես ուզում եմ ասել իմ բառերով: (Նա ճակատով սեղմվեց հատակին, եւ նրա ձայնը հնչեց խուլ): Տե՛ր Աստված, թող որ նա ապրի: Ինձ աշխարհում էլ ոչինչ պետք չի: Ընդհանրապես: Ամբողջ կյանքս շնորհակալ կլինեմ: Դե Դու գիտես, եթե նա մահանա, ես մենակ կմնամ: (Ձեռքի տակով նայեց Փրկչին): Առանց օգնության:

Փրկչին հաղորդելով հնարավոր հետեւանքների մասին, տղան վախենում էր ո՛չ իր համար: Նա մտածում էր մոր մասին եւ ընտրում էր ամենածանրակշիռ արդարացումները հանուն նրա ապաքինման: Հուսով էր, որ իրեն չի կարելի մերժել: Եվ Արսենին տեսնում էր: Եվ հավատում էր այն բանին, որ դա տեսնում է Փրկիչը:

Հետո նրանք աղոթեցին Աստվածամորը: Չլսելով Սիլվեստրի ձայնը, ինչ-որ պահի Արսենին շուրջը նայեց: Սիլվեստրը քնել էր՝ ծնկած: Հենված սնդուկին: Արսենին նրան զգուշորեն տեղափոխեց անկողին: Բժշկարար Պանտելեյմոնին Արսենին աղոթում էր արդեն մենակ: Կեսգիշերին մոտ նա անցավ սենյակ եւ սկսեց զբաղվել Քսենյայով:

-Ե-

Մի քանի օր շարունակ Քսենյան իրեն ավելի լավ չզգաց: Բայց նաեւ չմեռավ: Դրանում Աստծո անսահման գթասրտության դրսեւորումը տեսավ Արսենին եւ խրախույսը՝ հանուն կյանքի: Եվ նա շարունակեց պայքարել: Մի փոքր վեր բարձրացնելով Քսենյայի գլուխը՝ նրա բերանի մեջ լցնում էր ոչ միայն հակաժանտախտային դեղեր, այլեւ թուրմեր, ունակ՝ նրա մարմինը ամրապնդել մահվանը դիմադրելիս: Աղոթք շշնջալով, նա բռնում էր Քսենյայի ձեռքն ու զգում, թե ինչպես է իր միջով հիվանդի մեջ լցվում Նրա զորությունը, Ում ինքը դիմում էր:

Երբ դուրս եկավ սենյակից, խոտերի մեջ նրան դիմավորեց Սիլվեստրը: Քսենյայի առողջության մասին աղոթքից հետո նրանք մի քիչ էլ գնացին լճի վրայով: Օրերը Բելոզյորսկում ավելի շոգել էին, եւ լճի զովությունը հաճելի էր: Սառույցի վրա նրանք չէին ելնում, որովհետեւ

այն այլեւս անհուսալի էր: Սառույցի մեջ հայտնվել էին ազատ տեղեր եւ ստորջրյա աղբյուրների սառցախոռեր: Կապույտից այն դարձել էր սեւ, կարծրությունից՝ փխրուն:

Դու կամուսնանա՞ս մորս հետ, հարցրեց Սիլվեստրը, երբ նրանք գնում էին ափով:

Հանկարծակի եկած Արսենին կանգ առավ:

Ես ուզում եմ, որ մենք միշտ միասին լինենք, ասաց Սիլվեստրը:

Ախր, գիտես որ, Սիլվեստր...

Տղան, որ առաջ էր անցել, դանդաղ վերադարձավ Արսենիի մոտ:

Դու ուրիշ կի՞ն ունես:

Դու շատ հասուն հարցեր ես տալիս:

Ուրեմն՝ ունե՛ս:

Կարելի է նաեւ այդպես ասել:

Արսենին տեսավ, թե տղայի աչքերն ինչպես լցվեցին արցունքներով: Սիլվեստրը պահում էր ձեռքերով, եւ արցունքներն այդպես էլ չգլորվեցին այտերն ի վար:

Ի՞նչ է նրա անունը:

Ուստինա:

Նա քո գյուղում է ապրում:

Ոչ:

Բելոզյորսկո՞ւմ:

Նա ապրում է ո՛չ այս աշխարհում:

Տղան բռնեց նրա ձեռքը, եւ հետո նրանք գնացին լուռ:

Հիվանդության հիգերորդ օրը Քսենյան դեպի լավը գնաց: Նա բացարձակապես ուժ չուներ, բայց մահն այլեւս չէր սպառնում: Նա երախտագիտորեն էր նայում Արսենիին, որն իրեն ջուր էր տալիս, գդալով շիլա էր ուտեցնում եւ օգնում էր հասնելու գիշերանոթին:

Ես քեզնից չեմ ամաչում, ասաց նա մի կերպ: Դա ինձ էլ է զարմացնում:

Հիվանդության մեջ մարմինը կորցնում է իր մեղսունակությունը, պատասխանեց, մտածելով, Արսենին: Հասկանալի է դառնում, որ այն՝ ընդամենը թաղանթ է: Եվ դրանից պետք չի ամաչել:

Ես քեզնից չեմ ամաչում, ասաց Քսենյան մի ուրիշ անգամ, որովհետեւ դու ինձ համար դարձար հարազատ մարդ:

Քսենյան լավանում էր: Մոտակա մի իրիկնաժամի վեր կացավ եւ շաղգամ եփեց: Շաղգամը կլոր շրջանակներով կտրատելով՝ Քսենյան դրեց ամանների մեջ: Երջանիկ հայացքով էր նայում տղամարդկանց: Արսենին նայում էր Սիլվեստրին. տղան համարյա չէր ուտում: Ամբողջ օրը նա թոշնած էր, եւ դա Արսենիին սկսեց անհանգստացնել:

Ընթրիքից հետո Արսենին բռնեց Սիլվեստրի դաստակից: Մոտ գալով տղային, նա արդեն գիտեր, որ վիճակը վատ է, բայց միայն Սիլվեստրի զարկերակը շոշափելով Արսենին հասկացավ, թե որքան է վատ:

Արսենիին թվաց, որ իր սեփական արյունը հոսեց հակառակ ուղղությամբ: Եվ հիմա կխփի պնչերից, ականջներից, կոկորդից: Քսենյան դեռ շարունակում էր խոսել, իսկ նա չէր կարողանում շուրթերը փակել: Բացահայտորեն զգում էր անկարողությունն օգնելու: Նայում էր երեխային, եւ նա նորից ուզում էր մեռնել:

Գիշերը Սիլվեստրը չքնեց: Նրան առանց պատճառի տագնապ էր պատել, անկողնում տեղը չէր գտնում: Ծուռումուռ էր գալիս մի կողքից մյուս կողքի եւ ոչ մի կերպ չէր կարողանում հարմար դիրք գտնել քնելու: Ձեռքերի եւ ոտքերի մկանները ցավում էին: Աչք փակելով մի քանի րոպե՝ նա իսկույն արթնանում էր ու հարցնում, արդյոք այստե՞ղ են Քսենյան ու Արսենին: Նրան թվում էր, թե գնացել են: Բայց իր կողքին էին: Նստած էին անկողնու մոտ եւ անթարթ նայում էին իրեն: Քսենյան ոչինչ չէր ասում:

Նրա այտերով արցունքներ էին հոսում: Լուսադեմին Սիլվեստրը մոռացության մեջ ընկավ:

Քսենյան գլուխը վեր բարձրացրեց:

Փրկի՛ր նրան, Արսենիե: Նա իմ կյանքն է:

Արսենին իջավ հատակին, նրա կողքին, գլուխը դրեց նրա գոգին եւ հեծկլտաց: Նա լաց էր լինում Սիլվեստրին կորցնելու վախից եւ օգնելու անհնարինությունից: Լաց էր լինում բոլոր նրանց համար, ում իրեն փրկել չհաջողվեց: Նա պատասխանատվություն էր զգում նրանց համար, եւ չգիտեր՝ ում հետ կիսվեր: Նա լաց էր լինում սեփական մենակությունից, որն հիմա այրում էր անսպասելի սուր:

Ցանալով բուժել Սիլվեստրին՝ նա ձեռնարկեց բոլոր հակաժանտախտային միջոցները, որոնք միաժամանակ սովորեցրել էր իրեն

Քրիստափորը: Նա կիրառեց մի քանի միջոց, որոնց օգտակարությունը հայտնաբերել էր իր սեփական դիտարկումների արդյունքում: Երեխային նստեցրեց իր ծնկներին եւ այդպես պահեց չթողնելով: Արսենին վախենում էր, որ մահվան հրեշտակը կարող է գալ Սիլվեստրի ետեւից իր բացակայությամբ: Արսենին գիտեր, որ պատասխանատու պահին նա կսեղմի երեխային իր կրծքին, որպեսզի սրտից սիրտ նրա մեջ մխրճի ալիքները կյանքի: Նրան սարսափը կալեց, երբ Սիլվեստրն սկսեց հազալ: Սրբելով տղայի շուրթերից արյունոտ լորձունքը, Արսենին զգուշացավ, որ ահավոր հազի հետ նրա միջից դուրս կթռչի հոգին, քանզի դիրքը հոգու՝ մարմնում ամուր չէր:

Հիշելով Սիլվեստրի ասածները՝ Արսենին դիմեց տիրոջը.

Օգնի՛ր նրան: Չէ՞ որ Քեզ համար դա այնքան դյուրին է: Ես հասկանում եմ, որ իմ խնդրանքը՝ հանդգնություն է: Եվ ես նույնիսկ չեմ կարող առաջարկել իմ կյանքը երեխայի փոխարեն, որովհետեւ իմ կյանքն արդեն տրված է Ուստինային, ում առջեւ ես հավիտյանս մեղավոր եմ: Բայց, համենայն դեպս, ապավինում եմ Քո անսահման ողորմածությանը եւ աղերսում եմ Քեզ՝ պահպանիր Քո ծառա Սիլվեստրի կյանքը:

Արսենին չքնեց եւս հինգ օր եւ հինգ գիշեր: Նա ձեռքը ետ չէր քաշում Սիլվեստրից նաեւ այն պատճառով, որ նրա մարմինը պետք էր պահել կիսանստած վիճակում: Երբ տղան պառկում էր, թոքերն արագ լցվում էին խորխով, եւ նա սկսում էր սրտաճմլիկ հազալ: Վեցերորդ օրն Արսենին փոփոխություն զգաց: Արտաքնապես՝ դեռեւս աննկատելի, բայց Արսենիից չէր թաքչի:

Ոչինչ չբացատրելով՝ նա հրամայեց Քսենյային ուժեղացնել աղոթքը: Տապալվելով հոգնությունից եւ անքնությունից՝ Քսենյան ուժեղացրեց աղոթքը: Նա ծնկները ծալեց սրբապատկերների առջեւ կարմիր անկյունում եւ այդպես մնաց ժամերով: Նրա խզված ձայնը հիմա հնչում էր անընդմեջ: Խոպոպները դուրս էին ընկել գլխաշորի տակից, բայց նա ուժ չուներ ուղղելու: Եվ նրա արցունքները ցամաքել էին եւ այլեւս չէին հոսում այտերով: Յոթերորդ օրը տղան բաց արեց աչքերը:

Ծնորհակալական աղոթքն ասելով՝ Արսենին փլվեց նստարանին: Նա քնեց երկու օր եւ երկու գիշեր եւ դեռ քունը չէր առնում: Նա հասկացավ, որ կարելի է ոտքի կանգնել, եւ իրեն երազվեց, որ ինքը ոտքի է կանգնում: Նա ուզեց զննել Սիլվեստրին, եւ իրեն երազվեց, որ զն-

նում է: Զննումը ցույց տվեց, որ Սիլվեստրի հետ ամեն ինչ կարգին է: Արսենին գիտեր, որ դա իրեն երազվում է, բայց գիտեր, որ երազվում է իրերի ճշմարիտ վիճակը: Այլապես իրեն կերազվեր մի ուրիշ բան:

Արթնացրեց սառը հպումն իր ձեռքին: Քսենյայի շուրթերն էին: Տեսնելով, որ Արսենին բացել է աչքերը, Քսենյան սեղմեց նրա ձեռնափն իր ճակատին: Նրա թիկունքում կանգնած էր Սիլվեստրը: Հիվանդությունից հետո տղան դժգույն էր ու հյուծված: Թափանցիկ, գրեթե ուրվական: Հրեշտակաթեւերի պես նրա թիկունքից ցցվել էր շապիկի ծալը: Նա ժպտում էր Արսենիին՝ փորձ չանելով մոտ գալ: Առաջ թողնելով իր մորը:

-Զ-

Լճի սառույցն հալվեց, եւ քաղաքում իսկույն տաքերն ընկան: Ծոգ օրերի գալուն պես ժանտամահն սկսեց նահանջել: Բելոզյորսկը վերադառնում էր սովորական կյանք, եւ նրա բնակիչների տագնապն աստիճանաբար ցրվում էր: Չէր ցրվում Արսենիի մեծ հռչակը, որ դղրդում էր արդեն ամբողջ իշխանությունում: Արսենիին դիմում էի բուժական ցանկացած առիթով եւ դիմում էին նույնիսկ առանց առիթի: Նրա հետ շփումից քաղաքացիներն ակնհայտ երանություն էին զգում: Արսենին քիչ էր խոսում, բայց իր իսկ ուշադրությունը, ժպիտը, հպումը նրանց լցնում էին խնդությամբ եւ ուժով:

Ժամանակ առ ժամանակ նրան ճաշելու էր հրավիրում իշխան Միխայիլը: Նա նորեն կանչեց Արսենիին տեղափոխվելու իր մոտ՝ պալատ, բայց Արսենին քանիցս նրբորեն հրաժարվեց: Իշխանը կուզեր նրա համար մի մեծ տուն կառուցել իր պալատի կողքին, սակայն Արսենին նաեւ դա մերժեց: Արսենին կհրաժարվեր նաեւ ճաշից, բայց այդպիսի վարմունքն իշխանը կընդուներ իբրեւ անձնական վիրավորանք:

Իշխանը խելացի մարդ էր, եւ Արսենիին իրեն մոտ բերելու ձգտումից չսկսեց սրտնեղել: Հասկանալով, որ Արսենիին անհրաժեշտ է որոշակի անկախություն, իշխան Միխայիլը նրան չպարտադրեց իր մերձավորների շրջանակը: Որոշակի անկախության անվան տակ իշխանը հասկանում էր այնպիսի անկախություն, որի սահմանները կորոշեր նա ինքը: Հնարավորություն տալով Արսենիին քաղաքում ապրել սեփա-

կան՝ Արսենիական կամքով, նա սահմանափակեց միայն մի բանով՝ քաղաքը լքելու իրավունքով: Դա Արսենիին հասկացրեց բարեկրթորեն, սակայն հաստատապես:

Բայց ճաշկերույթներով իշխանի մոտ Արսենիի դժվարությունները չէին սպառվում: Պարզվեց՝ առավել հաճախակի եւ հոգի ծվատող էին ճաշկերույթները Քսենյայի մոտ: Համարյա ամեն օր նրա ետեւից էր գալիս Սիլվեստրը եւ նրան քաշում մայրական տուն: Այդ ճաշկերույթներից հրաժարվելն առավել դժվար էր, քան իշխանականից: Հատկապես Արսենիին անհանգստացնում էր այն, որ ինքը հրաժարվել չի էլ ուզում:

Գալիս էր Քսենյայի մոտ ու նայում, թե նա ինչպես է դասավորում սեղանը: Հիանում էր նրա հանդարտ ու ճշգրիտ շարժումներով: Քսենյայի հետ համարյա չէին խոսում: Նրա հետ լուռ մնալը ծանր չէր, եւ դա Արսենիին նույնպես դուր էր գալիս: Մեկ-մեկ Սիլվեստրն էր խոսում, բայց հաճախ փորձում էր թողնել նրանց մենակ: Ճաշից հետո գալիս էր Արսենիին տուն ճանապարհելու: Արսենիին հաճելի էր նաեւ այդ: Երբեմն թվում էր, թե Սիլվեստրը զգուշանում է, որպեսզի նա ճամփան չշեղի ինչ-որ մի ուրիշ տան կողմ:

Ուստինան չի կարող քո կինը լինել, մի անգամ ասաց Սիլվեստրը ճանապարհելով Արսենիին:

Ինչո՞ւ, հարցրեց Արսենին:

Որովհետեւ նա չի ապրում այս աշխարհում:

Ես՝ Սիլվե՛ստրս, նրա համար ամենուր պատասխանատու եմ:

Արսենին ձեռքը դրեց Սիլվեստրի ուսին, բայց Սիլվեստրը շրջվեց:

Դժբախտ էր ոչ միայն Սիլվեստրը: Իր տեղը չէր գտնում նաեւ Արսենին: Չէր կարողանում չայցելել Քսենյային, որովհետեւ այդ անելու շոշափելի պատճառներ չկային: Ավելին՝ նա սկսեց նկատել, թե ինչ է սպասվում այդ այցելություններից իբրեւ տոն, եւ սկսեց ամոթ զգալ: Արսենիին ամոթ էր նաեւ այն պատճառով, որ Բելոզյորսկում չէր կարող թաքնվել իր փառքից: Իսկ Բելոզյորսկը լքելը նրան արգելված էր:

Այժմ բելոզյորսկցիներն իրենք էին նրա մոտ գալիս: Նա բուժում էր այն նույն ախտերից, ինչ-որ Ռուկինյան գյուղարվարձանի բնակիչներին: Բուժման վարձ չէր խնդրում ոչ մեկից, բայց քիչ էին նրանք, ովքեր պատրաստ էին ձրի բուժվել: Ի տարբերություն գյուղարվարձանի բնա-

կիչների, քաղաքաբնակները հազվադեպ էին վճարում բնամթերքով, նախընտրելով փողը: Եվ վճարում էին քանիցս ավելի: Ծռայլ նվերներ հազվադեպ չէր անում նաեւ իշխան Միխայիլը:

Այդ փողերով Արսենին, պատահում էր, գնում էր ոչ մեծ գրքեր, որոնց մեջ նկարագրվում էին դեղաբույսերի եւ քարերի բալասանող հատկանիշները: Դրանցից մեկն օտարերկրյա բժշկարան էր, եւ Արսենին վճարեց Աֆանասի Բլոխա վաճառականին, որ գերմանների հողերն էր հասնում իբրեւ թարգման: Բլոխայի թարգմանությունն ամբողջովին մոտավոր էր, որը սահմանափակում էր գրքի օգտագործման հնարավորությունը: Ստացված դեղատոմսերն Արսենին կիրառում էր միայն այն ժամանակ, երբ դրանք համընկնում էին Քրիստափորից իր իմացածի հետ:

Հետեւելով, թե ինչպես է վաճառականն ընթերցում անծանոթ տպատառերը եւ թարգմանում դրանցով կազմված բառերը, Արսենին հետաքրքրվեց լեզուների փոխհարաբերությամբ: Համաշխարհային յոթանասուներկու լեզուների գոյության մասին Արսենին գիտեր աշտարակաշինության պատմությունից, սակայն բացի ռուսերենից, ամբողջ կյանքում դեռ չէր լսել եւ ոչ մեկը: Շարժելով շուրթերը, նա ինքն իրեն Բլոխայի ետեւից կրկնում էր հնչյունների ու բառերի անսովոր համակցումները: Երբ հասու դարձավ դրանց իմաստներին, նրան զարմացրեց, որ ծանոթ առարկաները կարելի է արտահայտել ոչ սովորականի պես, իսկ գլխավորը՝ անհարմար ձեւով: Դրա հետ մեկտեղ Արսենիին ապշեցնում ու ձգում էր բազմազանությամբ արտահայտելու հնարավորությունը: Նա ջանում էր հիշել նաեւ ռուսերեն ու գերմաներեն բառերի հարաբերակցությունը, եւ Բլոխայի առոգանությունը հազիվ թե համապատասխաներ ժամանակակից գերմաներենի առոգանությունը:

Նախաճեռնող Բլոխան Արսենիի հետաքրքրասիրությունն անմիջապես նկատեց եւ առաջարկեց գերմաներենի դասեր տալ նրան: Արսենին պատրաստակամ համաձայնեց: Սկսվող դասերն, ըստ էության, հեռու էին ուսուցման սովորական պատկերացումներից, որովհետեւ լեզվի մասին, որպես այդպիսին, Աֆանասի Բլոխան խելքին մոտ ոչ մի բան չէր կարողանում ասել: Երբեք չէր խորհել նրա կառուցվածքի մասին եւ, առավել եւս, չգիտեր նրա կանոնները: Սկզբի օրերին դասերը հանգում էին նրան, որ վաճառականը շարունակում էր բժշկարանն ըն-

թերցել բարձրաձայն եւ թարգմանել: Այդ դասերն, ի տարբերություն նախորդ թարգմանության, այն էին, որ ամեն մի փոքր գլխիկի ավարտից հետո Բլոխան հարցնում էր Արսենիին.

Հասկանալի՞ է:

Դա թույլ էր տալիս վաճառականին Արսենիից վերցնել կրկնակի վարձավճար՝ թարգմանության եւ դասերի համար: Արսենին չէր տրտնջում, քանի որ փողը նա չէր ափսոսում: Նա գնահատում էր Աֆանասիին իբրեւ եզակի մարդ Բելոզյորսկում, ով այս կամ այն չափով ծանոթ էր արտաշխարհի խոսքին: Հասկանալով, որ միայն բժշկարանի ընթերցանության միջոցով շատ բանի չես հասնի, Արսենին որոշեց օգտագործել իր դաստիարակի անառարկելի արժանիքներից մեկը. նա լավ լսողություն ուներ եւ կառչուն հիշողություն:

Նամետչինա իր երկարատեւ շրջագայությունների ժամանակ Բլոխան յուրացրել էր բառակապակցություններ, որ արտաբերվում էին այս կամ այն իրադրությունում, եւ իրեն ուղղված հարցերին պատասխանելիս կարողանում էր այդ բառերը կրկնել: Արսենին նկարագրում էր Բլոխային այդ իրադրությունները եւ հարցնում՝ ի՞նչ են հատկապես նման դեպքերում ասում: Վաճառականը (չէ՛ որ դա շատ պարզ է) զարմանքով թափ էր տալիս ձեռքը եւ Արսենիին հայտնում իր լսած բոլոր տարբերակները: Բլոխայի պատմածներն Արսենին գրի էր առնում: Մենակ մնալով, նա իր գրառումները կարգի էր բերում: Բլոխայից լսած արտահայտություններից նա դուրս էր գրում անծանոթ բառերն ու անցկացնում առանձին փոքրիկ բառատետրի մեջ:

Մի անգամ, երբ վաճառվում էին իրերը օտարերկրացի մի վաճառականի, ով ճամփին էր մահացել, Արսենին քրոնիկոն գնեց: Դա հաստափոր եւ բավականին մաշված ձեռագիր էր: Պատահական տեղից բացելով ձեռագիրը՝ Արսենին Բլոխայի հետ չէր կարողանում կտրվել:

Նրանք կարդացին մարդկանց մասին, որ սատիր էին կոչվում, որոնց, երբ վազում են, ոչ ոք չէր կարողանում հասնել: Սան են գալիս մերկ, ապրում գազանների հետ, իսկ նրանց մարմինները բրդոտ էին: Սատիրները չեն խոսում, այլ միայն ճիչեր են արձակում: Արսենին եւ Բլոխան կարդացին ատանասիաների մասին, որ ապրում էին Մեծ օվկիանոսի հյուսիսում: Նրանց ականջներն այնքան խոշոր էին, որ դրանցով առանց դժվարության նրանք ծածկում էին իրենց ողջ մարմինը: Կարդացին շչիռատների մասին, որոնք ընդհակառակը՝ ականջ

չունեին, այլ ունեին միայն ծակեր: Կարդացին մանտիկոռների մասին, որոնք ապրում են Հնդկաց հողերում. նրանց ատամները երեք շարանի են, գլուխները՝ մարդկային, իսկ մարմիններն՝ առյուծի:

Ու որքան տարակերտ է աշխարհը, մտածում էր Արսենին, եւ հիշում նման նկարագրություններն Ալեքսանդրականում, եւ հարցնում ինքն իրեն՝ իսկ ինչպիսի՞ն է թվարկված երեւույթների տեղն իրերի համակարգում: Չէ՞ որ դրանց գոյությունն աշխարհում չի կարող (հարցնում էր իրեն) թյուրիմացություն լինել՝ բանականության կողմից հորինված:

Արսենիի վաստակած փողերի մեծ մասը ծախսվում էր, ոչ թե գրքերի վրա կամ նույնիսկ դասերի: Գլխավորապես Արսենին գնում էր արմտիք, դեղաբույսեր ու հանքանյութեր, որոնք անհրաժեշտ էին դեղուդարման պատրաստելու համար: Թանկ դեղուդարմանն Արսենին բաժանում էր նրանց, ովքեր հնարավորություն չունեին գնելու: Ամենաթանկն արժեին այն դեղամիջոցները, որոնք ներկրվում էին այլ երկրներից: Դրանց մեջ կային այնպիսիք, որոնց մասին Արսենին լսել էր միայն Քրիստափորից եւ կարդացել գերմանական բժշկարանում: Այժմ, շնորհիվ Բելոզյորսկի քաղաքացիների շռայլության, Արսենին հնարավորություն ստացավ փորձարկել նաեւ դրանք:

Ամենից առաջ նա գնեց մի քանի մարգարիտ եւ լավ մանրացրեց: Ապա խառնեց շաքարի հետ, որ մասրենուց էր ստացել, եւ տալիս էր ուտելու այն մարդուն, ով հյուծվել էր ժանտախտից: Ըստ Քրիստափորի խոսքերի, այդ դեղուդարմանը վերադարձնում է ուժերը: Ուժերն իրականում վերադառնում էին հիվանդին, ինչպես, ի դեպ, դրանք վերադառնում էին նաեւ մյուս փրկված հիվանդներին: Մանրած մարգարիտի դերն Արսենիի համար մնաց անբացատրելի: Վստահորեն նա կարող էր միայն ասել, որ մարգարիտը հիվանդին չվնասեց:

Արսենին գնեց նաեւ զարմանալի զմրուխտ քարը, որ բերում էին Բրիտանիայից: Ով հաճախ է զմրուխտին նայում, ասում էր Քրիստափորը, նրա տեսողությունն ուժեղանում է: Իսկ մանրած եւ ջրում լուծված զմրուխտն օգնում է մահաբեր թույնին: Որպես հակաթույն Արսենին այն այդպես էլ ոչ մի անգամ չօգտագործեց, իսկ զմրուխտին նայելն իրոք հաճելի էր:

Նրա կողմից փորձարկվեցին նաեւ նախկինում չտեսնված յուղեր: Թարմ վերքերի ապաքինման համար Արսենին օգտագործեց բեւեկնա-

յուղը, եւ այն ներգործուն թվաց: Հոդացավերի դեպքում նա անհանգստացնող տեղերին սեւ քարյուղ էր քսում: Հիվանդներն զգում էին, թե ինչպես են Արսենիի հպումից իրենք թեթեւանում: Վերջնահաշվում նրանց համար մեկ էր, թե ինչ յուղ է քսում Արսենին: Իրենց համար կարեւոր էր, որ անում է հատկապես նա, քանի որ, երբ իրենք իրենց էին նավթ քսում, բուժական ներգործությունը զգալիորեն թույլ էր լինում: Նավթի դրական դերը, բայցեւայնպես, նրանք չէին ժխտում:

Փորձելով նախկինում իրեն անհասանելի միջոցները, Արսենին խաղաղվեց: Չի կարելի ասել, թե նա կատարելապես տարհամոզվեց, թեկուզեւ այն պատճառով, որ հավատում էր Քրիստափորին: Արսենին, սակայն, նկատի էր առնում, որ նաեւ Քրիստափորն էր շատ դեղերի մասին դատում ոչ սեփական փորձով: Դա թույլ տվեց ստուգման ենթարկել դեղերն ու սեփական դատողություններն անել: Իսկ անմիջականորեն Արսենին ամրապնդում էր իր վաղուցվա ենթադրությունը, թե վերջնահաշվում դեղերն ունեն երկրորդական նշանակություն: Գլխավոր դերը դեղագործինն է եւ բուժարար ուժինը:

Այս ընթացքում հյուսիսային կարճ ամառն արդեն ավարտվում էր: Վերադարձավ վառարանների իրիկնային ջերմությունն ու մարխերի լույսը: Գիշերները նույնիսկ թեթեւ ցրտահարումներ էին լինում: Մինչեւ ուշ գիշեր նստելով Սիլվեստրի եւ Քսենյայի մոտ, Արսենին նրանց Քրիստափորի գրառումներն էր ընթերցում:

Բարսեղ Մեծն ասում էր՝ առաքինությունը, ծերունական տարիքում, առաքինություն չէ, այլ անկարությունն է շնանալու: Ալեքսանդրը տեսնելով ոմն անվանակոչյալի՝ մի սոսկալի էակի, ասաց՝ փոխիր կամ քո անունը, կամ քո բարքը: Դիոգենեսին մի ոմն ճաղատ պարսավեց, Դիոգենեսն ասաց՝ հայհոյանքով հայհոյանքդ չեմ հատուցում, բայց գովում եմ քո գլխի մազերը, որովհետեւ, տեսնելով գլխիդ խելահեղությունը, նրանք փախան: Մի ոմն պատանի վաճառատանը պարծենալով ասում էր,թե ինքը իմաստուն է, որովհետեւ բազում իմաստուն մարդկանց հետ է զրուցի նստել, բայց նրան այսպես պատասխանեց Դեմոկրիտը՝ ես քիչ առաջ զրուցեցի բազում հարուստների հետ, բայց դրանից չհարստացա: Երբ Դիոգենեսին հարցրին, ինչպես ապրել ճշմարտությամբ, նա պատասխանեց՝ եթե կրակի մոտ ես, ընդհուպ մի մոտենա, այն քեզ կայրի, շատ հեռու էլ գնաս, խավարը կպատի:

-Է-

Այն ընթացքում սառնամանիքներն արդեն մոտ էին: Քամին բելոզյորյան ծառերից պոկում էր տերեւներն ու լիճը նետում: Քամու պոռթկումներն ավելի էին ուժգնանում, իսկ տերեւների կապը ճյուղերի հետ արդեն բոլորովին թուլացել էր: Լճի մեջ թռչող տերեւները նմանվում էին մանր թռչունների երամի, որ չգիտես ինչու, հյուսիս էր ձգտում:

Արսենին շարունակում էր բուժել բելոզյորսկցիներին, սակայն ո՛չ միայն նրանց: Այժմ առ ինքն էին առհոսում մարդիկ ամբողջ Բելոզյորսկի իշխանությունից, տարված՝ Բժշկի մասին լուրերով: Սկզբում Արսենին նրանց նստեցնում էր չոր խոտերի մեջ: Երբ խոտերի մեջ տեղերը չբավեցին, նա կարգադրեց մի քանի իշոտնուկ դնել բակում: Երբ այցելուները նաեւ այնտեղ չտեղավորվեցին, հիվանդների ընդելությունն Արսենին սկսեց սահմանափակել: Սկսեց ընդունել միայն նրանց, ովքեր հասցնում էին տեղ զբաղեցնել իշոտնուկին: Մնացածները, բայցեւայնպես, չէին հեռանում: Թափառում էին բակում եւ համբերատար սպասում Բժշկի ողորմածությանը: Նրանք գիտեին, որ մինչեւ վերջ սպասողներին, միեւնույն է, նա կզննի:

Հիվանդները շատ էին, եւ՝ շատ տարբեր:

Բերում էին ոսկորները կոտրածներին: Արսենին ուղղում էր նրանց ոսկորներն ու ձգակապում վնասված տեղերը բուժական քսուկով ու քաթանով: Դա փիփերթի գույնի էր, եփված՝ ֆրանգստանի գինու մեջ: Խմելու համար նա տալիս էր մանրած մամուխի հյութ՝ երիցուկի հետ: Տկարացածները համբերատար կրում էին փաթաթանները եւ ութ օր առավոտները խմում էին դեղուդարմանը: Եվ նրանց ոսկորները սերտաճում էին:

Բերում էին հրդեհներից վառվածներին եւ եռման ջրից խաշվածներին: Արսենին նրանց այրուքների վրա կտրատած կաղամբով ու ձվի սպիտակուցով քաթան էր դնում: Փոխելով քաթանները, այրուքի վրա խրուկ էր ցանում: Վառվածներին նա էֆիլիա խոտի թուրմն էր տալիս: Մի կարճատեւ ժամանակից հետո այրուքներն սկսում էին ձգվել ու սպիանալ:

Գալիս էին ճիճվացավերով: Այդպիսիներին նշանակում էր վայրի բողկուկ, մանրած՝ ալանի մեղրի մեջ: Նշանակում էր նուշընկույզ:

Մատղաշ եղինջ, եփած՝ քացախի մեջ, աղով: Իսկ եթե դրանից հետո էլ մարդու մեջ մնում էր ինչ-որ ճիճվատեսակ, Արսենին նրան, կուշտ ստամոքսին, տալիս էր մի պտղունց արջասպ, որպեսզի ճիճուները դուրս գան վերջնականապես: Միջնադարում ճիճուները շատ էին:

Բուժվում էին նրա մոտ նաեւ թութքով տառապողները: Արսենին նրանց պատվիրում էր ցավոտ տեղերի վրա ցանել սամիթի մանրած սերմեր կամ ծարիր: Դիմում էին նրանք, ում կուրծքն էր քոր գալիս: Նա նշանակում էր անում՝ վաճառականներից ճարել ծովատառեխ ձուկը, որի մասին հայտնի է, թե այն վտառներով է շարժվում, եւ նրանց աչքերը գիշերը լույս են տալիս: Ծովատառեխն անհրաժեշտ էր կտրատել երկարությամբ եւ դնել կրծքին: Գալիս էին Արսենիի մոտ նաեւ հիվանդ լնդերով: Նա խորհուրդ էր տալիս բերանի մեջ հաճախ նուշի կուտ պահել, որպեսզի լնդերն ամրանան:

Արսենիի ետեւից առաջվա պես գալիս էր Սիլվեստրն ու տանում իր մոր մոտ: Իմանալով, որ Արսենին ամբողջ օրն զբաղված է հիվանդներով, տղան հայտնվում էր ուշ գիշերով: Իր համար աննկատ՝ օրավերջին Արսենին սկսում էր շտապել եւ ամեն ինչ անում էր այն բանի համար, որպեսզի Սիլվեստրի գալուն պես ազատ լինի: Արսենիի այցելուները նկատել էին եւ ջանում էին երեկոյան չգալ: Վերջիվերջո դա նկատեց նաեւ Արսենին: Այն օրը, երբ իր այդ հայտնագործությունն արեց, սիրտը ճմլվեց: Նա լռեց մինչեւ մայրամուտ, իսկ հրիկնադեմին այդպես էլ չպատրաստեց հերթական ընթերցման գրառումները:

Երբ Սիլվեստրը եկավ, Արսենին տարակուսում էր: Տղան անմրմունջ նայեց նրան, եւ Արսենին չկարողացավ դիմանալ այդ հայացքին:

Գնացինք, Սիլվեստրե:

Ճամփին նրանք չէին խոսում: Տղան զգում էր, որ Արսենիի հոգում ինչ-որ փոփոխություններ են կատարվել, բայց վախենում էր հարցնել: Քսենյան ամեն բան դրել էր սեղանին: Արսենին ուտել չէր ուզում: Որպեսզի չնեղացնի Քսենյային, կերավ: Քրիստափորի գրառումներից իր մոտ չկային, իսկ խոսակցությունը չէր ստացվում: Երբ Սիլվեստրը թաքնվեց խոտերում, Արսենին արտահայտվեց .

Ես չպետք է այստեղ լինեմ, Քսենյա:

Քսենյայի դեմքը չփոխվեց: Նա սպասում էր այդ բառերին եւ պատրաստ էր: Այդ բառերը նրան տառապանք էին պատճառում:

Ես գիտեմ, որ դու հավատարիմ ես Ուստինային, ասաց Քսենյան, եւ դրա համար քեզ սիրում եմ: Բայց ես չեմ ուզում Ուստինայի տեղը գրավել:

Ինձ համար լավ է եւ ուրախալի քեզ հետ, ասաց Արսենին: Բայց Ուստինան իմ հավիտենական հարսնացուն է:

Եթե քեզ ուրախալի է ինձ հետ, դարձիր իմ եղբայրը: Եկ ապրենք կատարյալ սիրով: Միայն թե՝ քեզ տեսնեմ, Արսենիե:

Ես չեմ կարող քեզ հետ ապրել կատարյալ սիրով, որովհետեւ թույլ եմ: Ի սեր Աստծո, ներիր ինձ:

Աստված կների, ասաց Քսենյան: Դու ծառայում ես քո հիշողությանը եւ անսահման նվիրում ես դրսեւորում, Արսենիե, բայց իմացած եղիր, որ հանուն մեռյալների դու կործանում ես կյանքդ:

Ամբողջ խնդիրն այն է, որ եւ՛ Ուստինան է ողջ, եւ՛ փոքրիկն է ողջ, եւ ծարավի են լինելու թողության: Ո՞վ նրանց թողությունը կհայցի, եթե ոչ ես՝ մեղսագործս:

Մենք: Մենք երեքով՝ Սիլվեստրի հետ, որը երջանիկ կլինի քեզ հետ կիսելու աղոթքը: Եվ քեզ խաղաղություն վերադարձնելու համար կլինի երջանիկ: Նրա աղոթքը շահեկան է Տիրոջը: Երեքով կաղոթենք Տիրոջը բոլոր օրերին, առավոտից իրիկուն: Միայն թե մի՛ լքիր մեզ, եղբայր իմ Արսենիե:

Քսենյան դժգույն էր եւ դրանից՝ անասելի գեղեցիկ: Արսենին զգում էր, ինչպես է կոկորդը սեղմում: Դուրս գալով՝ խոտի մեջ տեսավ Սիլվեստրին, եւ նրա հայացքը որբացած էր: Այդ հայացքից Արսենին փղձկաց: Դեմքն ափերով փակեց, դուրս թռավ փողոց: Գնում էր սոճիների ցցապատնեշի երկայնքով ու ձայնեղ հեկեկում: Նրան ոչ ոք չտեսավ, որովհետեւ Բելոզյորսկում արդեն գիշեր էր: Բելոզյորսկցիները լսեցին միայն նրա հեկեկանքը եւ տարակուսում էին, ով կարող է լինել, քանզի Արսենիի նման ձայնը նրանց էլ անծանոթ էր:

Գալով տուն, Արսենին սրբեց արցունքներն ու ասաց Ուստինային.

Սեր իմ, դե դու տեսնում ես, ինչ է կատարվում: Ես քեզ հետ չեմ խոսել արդեն մի քանի ամիս եւ ինձ արդարացում չկա: Ինչպե՞ս կարող եմ, իմ խե՜ղճ աղջիկ, քեզ համար մեղքերի քավություն խնդրել Աստծուց, երբ ինքս եմ սուզվում ջրանդունդը: Եթե ես կորչեի մենակս, ապա, գիտես, խղճմտալու բան էլ չէր լինի, իսկ ո՞վ մեղքերի թողություն կտա

քեզ՝ քո զավակի հետ: Ես այստեղ ձեր միակ աղոթավորն եմ եւ միայն այդ պատճառով վիատության մեջ չեմ ընկնում:

Այսպես ասաց Արսենին Ուստինային: Պարկի մեջ հավաքեց Քրիստափորի գրառումները, ցույց տվեց Ուստինային եւ հավելեց.

Ահա Քրիստափորի գրառումների պարկը, հենց այն, ըստ էության, ինչ կա իմ մոտ: Ես այն կվերցնեի եւ կգնայի իմ փառքից հեռու, ուր աչքս կտրեր: Իմ փառքը կալել է ինձ, ճկում է դեպի գետին եւ խանգարում խոսել Նրա հետ: Ես կհեռանայի այստեղից, սեր իմ, բայց ինձ բաց չի թողնում իշխանն այս քաղաքի, իսկ գլխավորը՝ Քսենյան ու Սիլվեստրը: Նրանք երջանիկ կլինեն աղոթել ինձ հետ քո եւ երեխայի համար, բայց չեն հասկանում, որ դա կարող եմ անել միայն ինքս: Ես միակն եմ, ում հետ այս աշխարհում միացած ես դու, եւ ինձնով ասես թե շարունակում ես ապրել: Իսկ Քսենյան համարում է, որ ես հանուն մեռյալների կործանում եմ կյանքս, եւ ուզում է աղոթել քեզ համար իբրեւ մեռածի, թեեւ ես հո գիտեմ, որ դու ողջ ես, միայն թե՝ այլ ձեւով:

Արսենին մտքերի մեջ ընկավ: Ծոյեց գրառումների պարկը, եւ գրառումներն իրեն պատասխանեցին կեչեկեղեւե շրշյունով:

Ես, գիտես, գնում եմ դեպի քաղաքի դարպասները: Դրանք մինչեւ հիմա կողպված են, բայց եթե հարկ լինի, իմ հրեշտակն ինձ դուրս կբերի այս քաղաքից:

Նրա հայացքն ընկավ իշխանի նվիրած մուշտակին: Չէր հագել ոչ մի անգամ: Չնայած շքեղությանը,մուշտակը ոչ ծանր էր, ոչ դժվարաշարժ: Արսենին մուշտակը հագավ եւ անցավ սենյակներով: Մուշտակն իրեն դուր էր գալիս: Արսենին մտածեց, որ սկսում է գնահատել թանկարժեք իրերի բարեհարմարությունը, եւ վատ զգաց: Մուշտակով կանգնելով մի քանի րոպե, նա վճռեց, համենայն դեպս, չհանել: Եթե իրեն իրոք ճամփորդություն է սպասվում, այդպիսի մուշտակը պետք կգա: Դռան մոտ, նստարանի վրա Քրիստափորի մի քանի գրառումները նկատեց: Լավ դասավորված պարկը չէր ուզում քանդել: Արսենին գրառումները խոթեց մուշտակի գրպանն ու դուրս ելավ տնից:

Փողոցում փչում էր գետնահողմը: Ոչինչ չտեսնելով մթության մեջ, Արսենին այտերով զգաց նրա ծակծկող շփումը: Լուսամուտներում ոչ մի կրակ չէր լուսավորում, եւ դա լավ նշան էր. կյանքում գիշերային կրակները նրան ուղեկցում էին դեպի հիվանդություններն ու մահերը:

Սթությունը չէր խանգարում նրան առաջ գնալ: Ճանապարհը դեպի քաղաքային դարպասներ նա կարող էր անցնել նաեւ փակ աչքերով:

Դարպասների մոտ, մի բաց տեղում փոքր-ինչ լուսավոր էր: Հրապարակի անկյուններից մեկում Արսենին շարժում նկատեց: Երկմտելով՝ նա ուղղվեց այնտեղ: Նոր ռանդած ցցապատնեշի ֆոնի վրա երեւացին ձին ու հեծվորը: Արսենին չգիտեր, հրեշտակներն արդյոք ձի քշո՞ւմ էին: Կողքին մի ձի էլ էր կանգնած:

Պատրաստ եմ, կամացուկ ասաց հեծյալը:

Պատրաստ եմ, նույնպես կամացուկ պատասխանեց Արսենին:

Հեծյալը լուռ մատնացույց արեց երկրորդ ձիուն, եւ Արսենին թռավ թամբին: Հեծյալը շարժվեց դարպասների ուղղությամբ: Արսենին հետեւեց նրան: Դարպասների մոտ հեծյալն իջավ ձիուց եւ թակեց պահատնակի դուռը: Ի պատասխան՝ քնկոտ ինչ-որ բան ասին: Հեծյալը ներս մտավ: Պահատնակից շշուկով խոսակցություն էր լսվում, որն ուղեկցվում էր մետաղադրամների զրնգոցով: Մեկ րոպե անց պահատնից մի քանի մարդ դուրս եկան, այդ թվում՝ նաեւ հեծյալը: Նա նորից իր տեղն զբաղեցրեց թամբին: Երկու մարդ բանալին մտցրին կողպեքի մեջ եւ շրջեցին շառաչյունով, անսպասելի բարձր, որը տարածվեց խաղաղ քաղաքով մեկ: Երեք ուրիշները հրում էին դարպասները: Դրանք բացվեցին, կրկին ճռճռոցով՝ ճիշտ նույն հեռավորության վրա, որը պետք էր ձիանցման համար: Այդ ճեղքում կորան գիշերային թափառաշրջիկները:

-Ը-

Պահակախումբը կաշառվող է, ասաց ուղեկիցն Արսենիին, երբ նրանք հեռու էին դարպասներից:

Արսենին գլխով արեց, միայն թե՝ ոչ ոք չտեսավ: Այլեւս ուղեկիցը նրան ոչինչ չասաց:

Ծուտով նրանք մտան անտառ: Լոկ այնտեղ պարզ դարձավ, թե ինչ է իսկական մութը: Ստիպված դանդաղ էին շարժվում, ձիերը ոտքները դնում էին շոշափելով: Մի անգամ ճյուղը ճիպտեց անծանոթի դեմքին, եւ նա կեղտոտ հայհոյանք տվեց: Արսենին հասկացավ, որ իրեն ուղեկցողը հրեշտակ չէ: Նա կասկածում էր դա իրենց հանդիպման հենց

առաջին րոպեից:

Քառորդ ժամ անց հաջորդեց երկրորդ ճյուղը, որը ցած գլորեց հեծյալին թամբից: Ընկնելով՝ նա ճարպկորեն չդրեց ոտքն ու վնասեց այն: Հենց նույն պահին փորձեց վեր կենալ, ոտքը դրեց վնասված ոտքի վրա եւ տնքոցով փռվեց գետնին:

Ոտքս...

Արսենին թռավ ձիուց ու մոտեցավ ընկածին: Ուշադիր տնտղեց ոտքը: Սարսափելի ոչինչ չկա, դուրս է ընկել: Կարեւորը՝ բան չի եղել ոսկորին: Արսենիի ձայնի հնչումից անծանոթը լարվեց: Արսենին զգաց, թե ինչպես քաշվեց նրա ոտքը:

Սրանից հեշտ գլուխ կհանենք, ուզեց ոգեպնդել Արսենին: Ոչ մի բառ չասելով սա բռնեց Արսենիի մազերից ու քաշեց դեպ իրեն: Կոկորդի մոտ Արսենին զգաց դանակը:

Ո՞վ ես դու, խռխռաց անծանոթը:

Ե՞ս: Արսենին եմ:

Ես քեզ, լե՛շ, կփրթեմ:

Ինչո՞ւ, հարցրեց Արսենին:

Հենց իրեն հարցը թվաց անիմաստ:

Որովհետեւ քո տեղում պետք է իմ գործովը՝ Ժիլան լիներ: Անծանոթը թափ տվեց Արսենիին եւ դանակը մի փոքր ճղեց վզի մաշկը: Ինչ է, դու Ժիլա՞ն ես:

Ոչ, ասաց Արսենին:

Դու ինչպե՞ս էստեղ հայտնվեցիր, ոջի՛լ:

Դու ինքդ հարցրիր, թե պատրա՞ստ եմ:

Ե՞վ...

Եվ ես պատրաստ էի:

Վայ ես սրա... Բա հիմի Ժիլան վիզս կկտրի հենց հանդիպենք: Իսկ ես, բոզը, ոչ թե մենակ քեզ՝ ես սաղիս փողերն եմ տանում հետս... Հիմի էնի կմտածի, որ իրեն գցեցի, էս է ոռայինը: Այ թե որն է ոռայինը, ասում եմ:

Նորից թափ տվեց Արսենիին, բայց դանակը կոկորդին կպնելով չանցավ:

Դու նրան կբացատրես, որ ես եմ մեղավորը, ասաց Արսենին:

Ըհը, ինքը հենց իմ բացատրություններին էլ սպասում է: Դե ես բե-

ռանս չեմ էլ հասցնի բացել: Բայց մինչեւ էդ ես քո վիզը կկտրեմ, իմացա՞ր:

Այդ դառը բառերում, բայցեւայնպես, զգացվում էր, սակայն, որոշ հանգստություն: Ձայնի տոնը հաշտեցման հնարավորություն էր նախատեսում իրադրության հետ: Արսենին հեշտորեն վերցրեց իր ուղեկցի ձեռքից դանակն ու անցավ ոտքին: Նրա կարճ գոռոցի տակ մի ոստյունով տեղը գցեց ոտքը:

Գոնե զգուշացնեիր, գանգատվեց այցելուն:

Առանց զգուշացնելու ավելի լավ է:

Անտառում այդքան էլ մութ չէր արդեն: Ոչ թե լուսաբաց էր, այլ նրա նախադուռը: Ուղեկիցը հետաքրքրությամբ զննում էր Արսենիին:

Արսենիի օգնությամբ սա ելավ գետնից եւ տեղը գցած ոտքը զգուշորեն դրեց . ոնց որ թեթեւացավ:

Առայժմ ձիով գնա, մի՛ քայլիր, ասաց Արսենին: Մի քանի օրից լրիվ կանցնի: Գուցե, դա այդպես էլ պետք է լիներ, որպեսզի Ժիլան մնար Բելոզյորսկում, մտածկոտ ասաց նա: Գուցե, այդպես ավելի ճիշտ է:

Բռնելով երկու ձիերի երասաններից՝ նա սկսեց շարժվել անտառի խորքը:

Եվ դու, իմացա՞ր, դու էլ ցվրվի ստեղից: Ես, բոզ ըլնեմ, հանգիստ չունեմ, երբ մենակ չեմ: Ճամփից հեռու կհանգստանամ, իսկ հետո գիշերով կամացեն կգնամ... Իսկ դո՛ւ ինձ, ախպերս, մենակ թե մուշտակը թող, քո մուշտակը լավն է:

Ի՞նչ, չհասկացավ Արսենին:

Մուշտակը հանի, իսկ դու կարաս գնաս: Դու իմ ոտը տեղը գցեցիր, ես էլ քեզ ողջ ու առողջ բաց եմ թողնում: Դե, ի՞նչ ես աչքերդ չռել:

Նրա ձեռքում նորից փայլեց դանակը: Արսենին հանեց մուշտակն ու պարզեց անծանոթին: Սա հանեց իր զիպունը եւ նետեց Արսենիին:

Ա՛ռ, հագի՛ր:

Մուշտակը հագավ, փորձեց, ուսերը հո չեն սեղմում: Ծիծաղելի ֆռֆռաց Արսենիի դիմաց: Ստածելով՝ մոտեցավ այն ձիուն, որն հեծնել էր Արսենին, եւ երկար քանդում էր թամբից կախ կաշվե տոպրակը: Կապերը չէին քանդվում: Նա դանակը քաշեց դրանց վրայով, եւ տոպրակը զնգոցով ընկավ գետնին: Վեր առնելով տոպրակը, անծանոթն աչքով արեց:

Էս իմն է, իսկ էս՝ (նա Արսենիին շպրտեց սանձերը) քոնը: Երկրորդն իմ ինչի՞ն է: Գնա, թեկուզ Բելոգյորսկ: Կարաս ճամփին քնես: Բելոգյորսկի ձի է, ինքն էդպես էլ կտանի: Իսկ իմ մասին՝ մոռացիր, իմացա՞ր:

Արսենին Բելոգյորսկ չմեկնեց: Այդ քաղաքի դարպասները նրա ետեւից փակվել էին: Նա գիտեր, որ դրանցով այլեւս չի անցնի:

Բելոգյորսկում իր համար լավ էր, հատկապես այդ պատճառով էլ փախավ: Այդ քաղաքն իրեն հեռացնում էր Ուստինայից:

Նա ճնշված վիճակում էր ընթանում: Հակառակ նախկին ուղեկցի պահանջին, նրա մասին Արսենին մոռանալ չէր կարող: Այն, որ ինչպես էր ուղեկիցն իր հետ վարվել, Արսենիին չէր դառնացրել: Չէր դառնացրել նույնիսկ այն ակնհայտ փաստը, որ քաղաքից իրեն դուրս բերեց ոչ թե հրեշտակը, ինչի մասին, ճշմարիտն ասած, նա երազում էր: Դանդաղ ընթանալով անձանոթ ուղղությամբ՝ Արսենին տագնապի մեջ ընկավ: Տագնապը կարծես թե պատճառ չուներ, բայց որպե առ որպե դառնում էր ավելի պարզ, որ այն կուտակվում է իր թողած մարդու շուրջ: Արսենին գիտեր, որ ետ դառնալ չի կարելի, քանի որ այդ մարդն իրեն քշեց: Եվ մենակ էլ նա այնտեղ հանգիստ էր:

Եվս մի ժամվա չափ ընթանալով, Արսենին հիշեց, որ մուշտակի մեջ Քրիստափորից մի քանի գրառումներ են մնացել՝ նրանք, որ դրեց վերջին պահին: Ափսոսը եկավ, հազիվ թե մուշտակի նոր տիրոջ համար դրանք արժեք ունենան: Նա դրանք կարող էր վերադարձնել: Արսենին հասկացավ, որ իրեն առիթ եղավ նորից տեսնելու իր ուղեկցին: Ծուռ տվեց ձիու գլուխը: Գնում էր ետ, եւ իր տագնապն աճում էր:

Այն վայրի մոտ, որտեղից պետք է դուրս գար ճամփից, Արսենին ձիուց ցած իջավ: Ձիուն կապեց ծառին եւ ուղղվեց անտառ: Արդեն հեռվից մերկ ծառերի ետեւից ինչ-որ շարժում նկատել էր: Այնտեղ երկու ձիերի միջեւ կանգնած, իր մուշտակը հագին մի մարդ էր գնում-գալիս, բայց Արսենին չտեսավ նրան, ում հետ գիշերը քշել-գնացել էին: Նրանում նա տեսավ Ժիլային, թեկուզեւ չէր հանդիպել երբեք: Ձախ ձեռքում Ժիլան բռնել էր մահակը: Հավանաբար, նա ձախլիկ էր: Մի քանի քայլ եւս անելով՝ Արսենին տեսավ նաեւ իր ուղեկցին:

Սա պառկած էր գետնին, ձիերից մեկի ետեւում, եւ դիրքն անբնական էր: Դեմքով վեր շրջված, մի ձեռքը չգիտես ինչու պահել էր թիկուն-

քի ետեւում, իսկ ոտքերը ջղաձիգ սողոսկում էին գետնին: Կրունկնե-
րից մեկը մի խորուն ճռռիկ էր փորել, շրջանակված՝ սոճու ասեղնե-
րով: Աչքերը կուրորեն նայում էին Արսենիին, նրանցում Արսենին
առանց որեւէ ջանքի կարդաց, թե ինչ է սպասվում սույն մարդուց:

Ուշադրություն չդարձնելով Ժիլային, Արսենին խոնարհվեց մեռնողի
վրա: Այն արդեն չէր շարժվում: Ժիլան մտածեց եւ մահակն իջեցրեց
Արսենիի գլխին:

-Թ-

Անտառում կիսախավար էր: Եվ դժվար էր որոշել՝ մայրամո՞ւտ է, թե՞
լուսաբաց: Միայն երբ փոքր-ինչ լուսացավ, պարզ դարձավ, որ լուսա-
բաց է: Ուժերը հավաքելով՝ Արսենին զորեց գլուխը կտրել այն ամուր
բանից, ինչի վրա ինքը պառկած էր: Դա իր ուղեկցի մարմինն էր: Այն
նույնքան սառն էր, որքան հողը:

Իսկ ես տաք եմ, ասաց Արսենին Ուստինային: Եվ, ով մեղավոր է
նրա մահվան մեջ, տաք է եւ ողջ: Հիմա ես փրկված եմ հանուն քեզ՝ մի-
ակիդ, բայց նա, ինչպես եւ դու, իմ խիղճն եք: Ես կործանեցի նրան ար-
տաբերված բառով: Եթե ես չասեի նրան, նա չէր պառկի այստեղ այդ-
պես սառած: Չէ որ հիշում էր Մեծն Արսենիին եւ փոշմանել էր քանիցս
ասված բառերի համար, որոնք արտաբերել էին շուրթերը նրա, բայց
երբեք չէր փոշմանել լռության համար: Չէի ուզենա այսուհետ խոսել ոչ
ոքի հետ, բացի քեզնից, իմ սեր:

Բռնելով ծառից՝ Արսենին ոտքի կանգնեց: Ձիերն արդեն չկային:
Ակնհայտ էր՝ Ժիլան իր հետ էր տարել: Արսենին դանդաղ դեգերեց դե-
պի ճանապարհը: Կապված ձին դեռ կանգնած էր տեղում: Նա կանչեց
եւ, կառչելով բաշից, որպեսզի չընկնի, տարավ անտառի խորքը: Նրան
կողքից կողք գցելով:

Երբ նրանք մոտ եկան մեռած մարմնին, Արսենին նստեց շունչ առ-
նելու: Հավաքելով ողջ ուժերը, սպանվածին քարշ տվեց ձիու մոտ եւ
փորձեց դնել թամբին լայնքով: Սպանվածը, որն արդեն չէր կարող
կռանալ, մի քանի անգամ վայր սահեց: Գետնին ընկավ խուլ, բութ ձայ-
նով: Արսենին կամքի ճիգերով նրա ձեռքերը նետեց թամբին, ամբողջ
ուժով գլուխը դեմ տվեց նրա ոտքերին եւ հրեց մարմինը վեր: Սպան-

վածը ճոճվում էր թամբի վրա անտարբեր հավասարակշռությամբ: Նրա բաց աչքերի հայացքը նույնպես անտարբերություն էր արտահայտում: Նա ուներ այն մարդու տեսքը, ով ուզում է, որպեսզի իրեն հանգիստ թողնեն:

Արսենիին հաջողվեց մեռյալին դեմքով շրջել առաջ եւ նստեցնել թամբին: Ոչ մի բան չգտնելով, որով կարելի էր նրան կապել ձիու թամբին, Արսենին ստուգեց մեռյալի սապոգները: Դրանցից մեկում դանակ կար, որով դեռ երեկ սպառնում էր սա: Արսենին հանեց նրան տրված զիպունը եւ սկսեց կտրատել բարակ շերտերի: Կապելով իրար՝ նա ստացավ բավականին երկար մի պարան: Այդ պարանով փաթաթեց հանգուցյալի ոտքերը թամբին:

Արսենին ձին հանեց ճանապարհ:

Նա ասաց, որ դու Բելոզյորսկցի ես: Դե տար նրան այնտեղ, քանի որ այնտեղ նրան կհանձնեն հողին:

Ձին համառորեն նայում էր Արսենիին եւ տեղից չէր շարժվում:

Ես չեմ գնա, ասաց Արսենին: Դու նրան ավելի ես պետք: Նա թեթեւ շպպացրեց ձիու գավակին:

Ձին շարժվեց տեղից ու գնաց այն ուղղությամբ, որտեղ Բելոզյորսկն էր: Սեղմվելով նրա բաշին՝ գնում էր մեռյալ հեծյալը: Արսենին նայում էր, եւ գնալով նրանք ավելի թափանցիկ էին դառնում: Դարձան մի մեծ շրջանակ, որը մանրատվեց: Շրջանակները լողում էին, իրար չկպչելով: Հանդիպելիս նրանք անցնում էին մեկը մյուսի միջով: Արսենին փսխեց: Նրա ոտքերում այլեւս ուժ չկար:

.....

.....

.....

Ստածում էին՝ մեռած է այն պատճառով, քանի որ ողջ չէր երեւում:

.....

.....

.....

Տասն օր անց Ժիլան մոտեցավ Նովգորոդին: Մի ձիու վրա նստած էր ինքը, երկրորդն առանց հեծյալի մանրավարգում էր քիչ ետեւում: Սառած հողի վրա չորս զույգ սմբակ դոփում էին չափից ավելի բարձր: Գնում էին անշտապ, որովհետեւ շտապելու տեղ չունեին: Ստցնելով

ձեռքը մուշտակի գրպանը՝ Ժիլան հանեց Քրիստափորի գրառումները: Նա կարդում էր եւ շուրթերը շարժում:

Դավիթը բարբառում է. մեղսագործների մահը տառապալից է: Սողոմոնը բարբառում է. թող գովաբանի քեզ մերձավորը քո, ոչ թե քո շուրթերը: Կիրիկը հարցրեց Նիֆոնտ տիրակալին. աղոթք անեմ պղծյալ կավանոթի՞ վրա, թե՞ միայն փայտե, իսկ մյուսները պետք է ջարդե՞լ: - Ինչպես փայտե, այնպես էլ կավե անոթի վրա, նաեւ պղնձե, նաեւ ապակե, նաեւ արծաթե, պատասխանեց Նիֆոնտը, բոլորի վրա աղոթք պիտի ասես: Յուրաքանչյուր բարի գործ անող մարդ չի կարող լինել առանց բազում թշնամիների: Ոչ թե հարստությունն է ընկեր բերում, այլ ընկերը հարստություն: Բացակա ընկերներին հիշիր ներկաների առջեւ, որպեսզի նրանք, լսելով այդ, իմանան, որ նաեւ իրենց մասին չես մոռանում: Ժիլայի բոլոր ընկերները բացակա էին, եւ նա պիտի հիշեր մեկ առ մեկ:

-Ժ-

Նա բացեց աչքերը, ասացին Արսենիի գլխավերեւում:

Եվ նա հասկացավ, որ բացեց աչքերը: Իր գլխավերեւում լողացող խաչվող ճյուղերը երազ էին թվում: Նրա առջեւ հայտնվեց ինչ-որ մեկի դեմքը: Դա մեծ էր այնքան, որ փակում էր այդ զարմանալի կամարը, որն իր գլխավերեւում էր լողում: Արսենին տեսնում էր դեմքի ամեն մի կնճիռը եւ դեմքը բոլորող մորուքը: Մորուքի մեջ բերան շարժվեց եւ հարցրեց.

Անունդ ի՞նչ է:

Ահա թե ինչպես են գոյանում հնչյունները, մտածեց Արսենին:

Անունդ ի՞նչ է, կրկին հարցրեց բերանը:

Նա արտաբերեց երեք բառ առանձին, ասես չէր վստահում պառկածի լսողությանը:

Ուստին, հազիվ լսելի ասաց Արսենին:

Ուստին: Դեմքը շրջվեց ինչ-որ մեկին: Նրա անունը Ուստին է: Քեզ ի՞նչ է պատահել, Ուստինե:

Արսենին հոգնեց նայել դեմքին եւ փակեց աչքերը: Ամբողջ մարմնով նա զգում էր փափուկ խոտը: Ձեռքը շոշափում էր սայլի կողափայտը:

Թող նրան, ասաց մի ուրիշ ձայն: Կհասցնենք մոտակա գյուղ, թող այնտեղ պարզեն:

Արսենին նորից աչքերը բացեց, բայց արդեն սայլի ցնցումները չէր զգացվում: Ցուրտ էր: Նա ինչ-որ կոշտ բանի վրա էր պառկած: Դա նման էր փայտի: Նա իր տակից քաշեց հանեց կոճղը եւ երկար նայում էր դրան: Լույս կիսաբաց դռան միջով: Լույս եւ ճռռոց: Վառելափայտի մարագն է:

Բարձրանալով արմունկի վրա, Արսենին տեսավ, որ ինքը լրիվ մերկ է: Նրա կողքին իր պարկն էր եւ ինչ-որ ցնցոտիներ: Վարանելով՝ Արսենին ձեռքը մեկնեց ցնցոտիներին եւ իսկույն ետ քաշեց: Զզվելի էր: Ցնցոտիները վանեցին ո՛չ միայն իրենց կեղտոտությամբ: Անտանելի էր այն միտքը, որ դրանք, հավանաբար, հագել է նա, ով իրեն մերկացրել է: Ով չի վերցրել,- եւ դա նույնիսկ վիրավորական էր,- պարկը Քրիստափորի գրառումներով: Հաղթահարելով զզվանքը՝ Արսենին պարզեց ձեռքը քրջերին, որոնք պարզվեց՝ շապիկ է, վարտիք եւ գոտի:

Արսենիին ոչ միայն հագուստ, այլեւ ոտնաման էր հարկավոր, քանզի նրա սապոգներն էլ էին հանել: Մի քիչ մտորելուց հետո նա երկու կոճղերից պլոկեց կեղեւներն ու դրանց կտորները չափեց իր ոտնաթաթերի համեմատ: Օգնելով իրեն ատամներով, կեղեւին պետք եղած ձեւը տվեց: Ապա քրջերից դուրս քաշեց գոտին եւ դրանով սկսեց շփել դռան կողափայտը: Երբ հնամաշ գոտին պոկվեց երկու մասի, Արսենին դրանով կեղեւը փաթաթեց ոտնաթաթերին: Հագնվելով, իրեն բռնեց այն մտքի վրա, որ հագնվելու պահը ձգձգվում է: Չնայած որ դողն էր բռնել, դանդաղեցնում էր հագնվելը:

Բայց մարագից չէր կարելի մերկ դուրս գալ: Արսենին վերցրեց այն, ինչը մի ժամանակ շապիկ էր եղել, եւ դրեց կրծքին: Երերալով ձեռքերը մտցրեց թեւքերի մեջ եւ գլուխը՝ ծակի մեջ. օձիքը պոկված էր: Շապիկը մարմնի վրա կախվել էր տձեւ քրջի պես:Գունութափությունն ուժեղացնում էին կարկատանները:

Ամենադժվարը վարտիքներն հագնելն էր: Բանից պարզվեց դրանք մի փոքր ավելի ամբողջական էին շապկից, բայց ավելի վատ ստացվեց: Հագնելով, նա մտածում էր, որ այդ քուրջուփալասին դիպել է գոդի կեղտոտ հետույքը: Այդ մեկի վարտիքները մարմնական մերձություն ունեին ասես իր հետ, եւ Արսենին ջղացնցվում էր սահմռկելով:

Կողոպուտն իրեն հալածում էր ոչ թե որ իր հագուստն է կորցրել, այլ որ ուրիշներն է ձեռք գցել: Արսենին վախեցավ, որ այսուհետ ինքը խորշելու է իր սեփական մարմնից, եւ լաց եղավ: Իսկ երբ Արսենիի միտքը պայծառացավ, թե այդուհետ պիտի խորշի իր սեփական մարմնից, ծիծաղեց:

Մարագից նա դուրս եկավ բարձր տրամադրությամբ: Մի քանի քայլ անելով իր նոր հագուստով, ասաց Ուստինային.

Գիտեմ, սեր իմ, Բելոզյորսկ իմ գալու ժամանակից ի վեր սա, ըստ էության, առաջին քայլերն են ճիշտ ուղղությամբ:

Մարագը գյուղի ծայրին էր: Արսենին մոտեցավ ամենամերձ խրճիթին ու թակեց դուռը: Խրճիթում իր ընտանիքի հետ ապրում էր Անդրեյ Սորոկան:

Դու ո՞վ ես, Սորոկան հարցրեց Արսենիին:

Ուստինն եմ, պատասխանեց Արսենին:

Ուստին՝ դե սպասիր ուստին, քմծիծաղ տվեց Սորոկան եւ շրխկացրեց դուռը:

Այդժամ Արսենին թակեց Տիմոֆեյ Կուչայի դուռը: Տիմոֆեյը զննեց Արսենիին եւ ասաց.

Դու իմ տուն լու ես բերում, որովհետեւ քո էդ վիճակում հնարավոր չի, որ լու չլինի: Կամ ոջիլ: Դրանցից, կարծում եմ, մի պարկ կունենաս:

Պարկում միայն Քրիստափորի գրառումներն էին, բայց Արսենին չսկսեց քանդրտել դրանք Տիմոֆեյի աչքի դեմ:

Հաջորդ խրճիթը Իվան Սուխոբոկինն էր: Հիշելով Աբրահամի հյուրընկալության մասին՝ Իվանը չուզեց քշել թափառականին: Բայցեւ ներս թողնել էլ չէր ուզում: Տարավ նրան գյուղի մյուս ծայրը Եվդոկիա անունով մի կնկա մոտ, որ ո՛չ լվից, ո՛չ ոջիլից, ո՛չ էլ օտարականներից չէր վախենում:

Երբ նրանք ներս մտան, Եվդոկիան հացի խմորոտ մասն էր ծամում: Նա ատամ չուներ, խմորը ծամում էր լնդերով. դրանից նրա ամբողջ դեմքը շարժվում էր: Պարզապես քայլում էր ճմռթվելով ու բացվելով՝ հիշեցնելով հին կաշվե քսակ:

Տնտղելով Եվդոկիայի դեմքը՝ Իվանն ասաց.

Այ կնիկ, էս ա քեզ հյուր, ոչ մի բան չի խոսում, բացի էն, որ անունն Ուստին է: Համաձայն եղիր, որ Է՛դ էլ ինչ-որ բան ասում է:

Հաշվենք, որ Է՛դ էլ քիչ չի, գլուխը տմբտմբացրեց Եվդոկիան:

Նա պոկեց խմորի կտորն ու պարզեց Արսենիին:

Կեր, Ուստինե:

Իվանն ու Եվդոկիան նայում էին, թե Արսենին ինչպես է ուտում:

Անոթի է, նշեց Իվանը:

Փաստ է, հաստատեց Եվդոկիան, թող մնա:

Մի փոքր տաքանալուց հետո Արսենին զգաց,թե ինչպես է քոր գալիս գլուխը: Իրեն բաժին հասած հագուստը վխտում էր լվերով: Ջերմության մեջ դրանք աշխուժացան եւ սկսեցին սողալ Արսենիի մազերով: Նա նստել էր, զգալով լվերի շարժն իր վզի վրա՝ ներքեւից վերեւ: Արսենին գիտեր, որ լվերից մաքրվելը դժվար է, եւ նա խղճաց Եվդոկիային: Չէր ուզում բազմապատկել նրա կյանքի դժվարությունները: Ինքը, վճռեց, չարժե որ այստեղ մնա: Վեր կենալով՝ Արսենին գլուխ խոնարհեց Եվդոկիային մինչեւ գոտկատեղը: Եվդոկիան շարունակում էր ծամել: Դուրս ելավ եւ իր ետեւից ծածկեց դուռը:

Արսենիին ցուրտը պատեց: Նա դեռ բռնած էր պահում դռան օղը: Ցանկություն առաջացավ թողնել այն ու վերադառնալ տաք խրճիթ: Բայց, իջնելով առմուտքից, հասկացավ, որ արդեն չի վերադառնա: Թանձրանում էին վաղ մթնշաղերը: Արսենին գնում էր ցրտին ու սարսափում: Նա ինքն էլ չէր հասկանում՝ ինչո՞ւ դուրս եկավ տաք տեղից: Իր համար միայն մի բան էր պարզ, որ դժվարին ճամփա էր սպասվում, եթե այն առհասարակ կարելի էր հաղթահարել: Եվ չգիտեր, ուր է տանում այդ ճամփան:

Արսենին գնում էր անտառի ճամփով, որն ավելի էր մթնում: Նա գնում էր, կարծես անթացուպերի վրա, որովհետեւ ցրտից նրա ոտքերը չէին ծալվում: Հետո սկսեց ձյուն տեղալ: Դա տարվա առաջին ձյունն էր, եւ թռչում էր կարծես վեհերոտ: Սկզբում երեւացին առանձին փաթիլներ, հազվագյուտ, բայց խոշոր: Դրանց փափուկ տեսքից, կարծես, ինքն ավելի էր ջերմանում: Փաթիլներն ընկնում էին առավել հաճախակի, մինչեւ որ վերածվեցին ձնաբքի համատարած պատի: Երբ ձնաբուքը դադարեց, երեւաց լուսինն ու լուսավորվեց: Ճամփան երեւում էր ամեն մի ոլորանում:

Լուսնի հայտնվելով սառնամանիքը կարծես թե սաստկացավ: Արսենիին թվաց, հատկապես լուսինն է թափում այն արծաթավուն ցուր-

տը, որը տարածվում է հողագնդով: Նա կափսոսեր իր փայտացած մարմինը, բայց իսկույն հիշեց, որ իր մարմինը պղծված է ուրիշի հագուստով ու ոջիլներով, եւ խղճմտանքն իրեն բաց թողեց: Դա արդեն իր մարմինը չէր: Այն պատկանում էր ոջիլներին, նրան, ով նախկինում հագել էր այդ հագուստը, ի վերջո, սառնամանիքին: Բայց ո՛չ իրեն:

Ասես ուրիշի մարմնում եմ ապրում, մտածեց Արսենին:

Օտար մարմնի հանդեպ ողջ կարեկցանքով հանդերձ, նրա ցավը անկարելի է զգալ իբրեւ սեփական: Օգնելով մարդկանց անզոր մարմիններին՝ Արսենին դա գիտեր: Նույնիսկ ուրիշի ցավի մեջ տարածվելով նրան թեթեւություն բերելու համար, երբեք չէր հասնի ամբողջ խորությանը: Իսկ հիմա խոսքը մի մարմնի մասին էր, որին ինքը նույնիսկ այնքան չէր էլ կարեկցում: Որը մեծ հաշվով արհամարհում էր:

Արսենին այլեւս չէր մրսում, քանզի չէ որ չի կարող մրսել՝ լինելով ուրիշի մարմնում: Հակառակը՝ նա բացահայտ զգում էր,թե ինչպես (ոչ) իր մարմինը լցվեց ուժով, եւ վստահաբար շարժվում էր լուսաբացին ընդառաջ: Նա զարթնում էր այնքանով, որքան ամուր էր քայլը եւ լայն՝ ձեռքերի թափահարումը: Ցերմության ալիքներն ինչ-որ տեղից ցնցումներով բարձրանում ներքեւից եւ խփում էին գլխին: Ընկնելով հողին՝ Արսենին նույնիսկ չնկատեց, թե ինչպես իր անբեկ շարժումը դադարեց:

.....

.....

.....

-ԺԱ-

.....

.....

.....

Ես արդյոք ուզո՞ւմ եմ, մտածում էր Արսենին, ամեն բան մոռանալ եւ այսուհետ ապրել այնպես, կարծես իմ կյանքը չի եղել ոչինչ, կարծես հենց նոր եմ աշխարհ եկել, բայց արդեն ո՛չ իբրեւ մանուկ, այլ միանգամից, ոնց որ մեծ մարդ: Կամ այսպես՝ հիշել ապրվածից միայն լա՞վը, քանզի հիշողությանը բնորոշ է տառապանքներից ձերբազատվելը: Իմ հիշողությունը շարունակ լքում է ինձ եւ այն էլ, տես, լքում է առմիշտ:

Բայց հիշողությունից ձերբազատվելն իմ ներումն ու փրկությունը կդառնա՞: Գիտեմ որ՝ ո՛չ, եւ նույնիսկ հարցն այդպես չեմ դնի: Իսկ ինչ-պիսի՞ն կարող է լինել իմ փրկությունն առանց Ուստինայի փրկության, իմ կյանքի գլխավոր երջանկության եւ գլխավոր տառապանքի: Այդ բանի համար պաղատում եմ Քեզ՝ մի խլիր իմ հիշողությունը, որտեղ հույսը Ուստինան է: Իսկ եթե կանչես Քո մոտ, ողորմած եղիր. դատիրն նրան ոչ թե մեր արարքներով, այլ նրան փրկելու իմ ծարավով: Եվ այն սակավ բարին, որ արել ենք այստեղ, գրի առ նրա հաշվին:

.....

.....

.....

Կովի լեզուն փափուկ է եւ չի խորշում ոջլոտ բանից: Նրա անհարթ լեզուն մասնակիորեն փոխարինում է մարդկային ջերմությանը: Մարդուն հեշտ չէ հոգ տանել ոջլոտ ու թարախակալված մեկի համար: Ներս մտնողը նրա կողքին կթողնի մի կտոր չոր հաց ու մի բաժակ ջուր, բայց իսկական քնքշություն, առանց զգվանքի, կարելի է սպասել միայն կովից: Կովն արագ ընտելացավ Արսենիին եւ իրենը համարեց: Երկար լեզվով նրա մազերից լիզում էր արյան չորացած գնդերն ու թարախը:

Արսենին ժամերով հետեւում էր նրա պտուկների ելեւէջին ու երբեմն դիպչում շուրթերով: Կովը (ի՞նչ ես գտել իմ կրծքի մեջ) ոչնչի դեմ չէր, թեեւ լուրջ էր վերաբերվում լոկ առավոտյան եւ երեկոյան կիթին: Իսկական թեթեւություն բերում էին նրան միայն տանտիրուհու ձեռքերը: Դրանց մեջ, ի տարբերություն Արսենիի շուրթերի, ուժ կար: Ձգտում՝ դուրս քաշել ամբողջ կաթն անմնացորդ պինդ հյուսած կեղեւատուփում: Կաթը պոկվում էր կրծքից աղմկոտ կարկաչով. սկզբում՝ բարակ, համարյա ճստյունով, սակայն կեղեւատուփի լցվելու հետ ձեռք բերելով լիություն ու թափ: Կաթի մի մասը հոսում էր տանտիրուհու մատներով: Օրվա մեջ հետեւելով դրանց երկու անգամ, Արսենին տիրոջական դեմքից ավելի լավ էր հիշում: Նա գիտեր, թե ինչպես են նայվում մատներն առանձին-առանձին, սակայն ոչ մի անգամ չզգաց դրանց հպումը:

Երբեմն կովը քարանում էր, փոքր-ինչ վեր էր տնկում պոչը (նա դողդողում էր), եւ ուղիղ իր վերեւում վրձնի պես հատակին չպպում էին տաք ծեփիկները: Ժամանակ առ ժամանակ այդ ծեփիկները ցայտում

էին չորս կողմ թանձրուձիգ շիթով: Երեսին ընկած կաթիլներն Արսենին սրբում էր խոտի փնջիկով:

.....

.....

.....

Գլխի վրայի վերքը փակվել էր, սակայն ի հայտ եկան գլխացավերի նոպաներ: Ցավը գալիս էր ոչ թե վերքից, այլ հենց գլխամիջի ընդերքի ինչ-որ տեղից: Արսենիին թվում էր, թե այնտեղ որդ է բույն դրել, որ նրա շարժումներն էլ հարուցում են այն կտտանքները, որոնք այդքան դժվար է տանելը: Նոպաների ժամանակ նա ձեռքերով գրկում էր գլուխը կամ դեմքը խրում ծնկների մեջ: Նա մոլեգնած տրորում էր գլուխը, եւ առաջացած արտաքին ցավը մի վայրկյան հանում էր ներքին ցավը: Բայց ներքինը, ասես շունչ առնելով, իսկույն բռնում էր նոր ուժով: Արսենին ուզում էր կիսել իր գանգը երկու մասի եւ ուղեղի հետ միասին այդտեղ դուրս թափել որդը: Նա դրմբացնում էր իր ճակատին եւ մթությանը, սակայն ներսում նստած որդը լավ հասկանում էր, որ մինչեւ իրեն չի հասնի: Որդի անխոցելիությունը թույլ էր տալիս ձեւեր թափել եւ Արսենիին խելքից հանել:

.....

.....

.....

Նրանք հարցնում էին Արսենիին, ո՞վ է ինքը, բայց նա լռում էր: Եվ զարմանքով հայտնաբերեց, որ կովն արդեն իր կողքին չի:

Իսկ ո՞ւր է կովը, ներկաներից ամենամոտ կանգնածին հարցրեց Արսենին: Նա փառավոր ընկեր էր եւ իմ հանդեպ փրկիչ գթասրտություն ցուցաբերեց:

Իրեն ոչ ոք չպատասխանեց, որովհետեւ թվացյալ ներկաները բացակայում էին: Ամենամոտը Արսենիին մի փոքրիկ բան էր՝ կուզ, գորշ,-ուշադիր զննելիս պարզվեց գութանի բռնակոթն է: Մնացածները նույնպես ծռված էին ու ոսկրոտ: Հսկայական չափերի խամութներ (ի՞նչ են այստեղ հեծնում, հարց է ծագում): Սահնակների կողեր: Առեղներ ու ջրկիրի լծակներ: Իսկ կացարանը բոլորովին այլ էր:

Հետաքրքիր է, ասաց Արսենին, իր տակ շոշափելով սայլանիվը: Հետաքրքիր է, որ ժամանակն ընթանում է, իսկ ես պառկած եմ սայլակի

վրա՝ չմտածելով անգամ իմ գոյության գերխնդրի մասին:

Արսենին ճիգով ոտքի կանգնեց եւ, թույլ-թույլ քայլեր գցելով դուրս ելավ դռան ետեւից: Փափուկ գլխարկներով տանիքների առջեւում շարված էին անծանոթ գյուղի խրճիթները: Յուրաքանչյուրից ծուխը ծգվում էր անբեկ ու խաղաղ: Արսենիին թվաց, թե իրենց ծխով բոլոր խրճիթները հավասարաչափ ամրացված են երկնքին: Կորցնելով ծխին բնորոշ շարժունությունը, կապող թելերը ձեռք էին բերել անսովոր պրկություն: Այնտեղ, ուր դրանք կարճ էին անհրաժեշտ չափից, տները վեր էին ելնում մի քանի սաժեն: Երբեմն ճոճվում էին: Դրանում ինչ-որ անբնական բան կար, եւ Արսենիի գլուխը պտտվեց: Ձեռքը գցելով դռան կողափայտին, նա ասաց.

Կապը երկնքի եւ հողի միջեւ այդքան էլ պարզ չէ, ինչպես, երեւի, սովոր են համարել այս գյուղում: Նման հայացքն իրերին ինձ թվում է ավելորդ մեխանիստական:

Ճռճռացնելով նորաթափ ձյունը Արսենին գնաց գյուղից հեռու: Որոշ ժամանակ անց այդ ձայնը գրավեց նրա ուշադրությունը, եւ նա տեսավ իր ճռճռացող ոտքերը. դրանք տրեխներ էին:

Իսկ առաջ կեչեկեղեւում էին, հիշեց Արսենին: Ահա այսպիսի կերպափոխություններ:

Նրա թիկունքին աջ ու ձախ օրորվում էր Քրիստափորի գրառումներով պարկը:

-ԺԲ-

Արսենին անցնում էր գյուղից գյուղ, եւ հիշողությունը նրան չէր լքում: Գլուխն ավելի քիչ էր ցավում, երբեմն բոլորովին չէր ցավում: Բոլոր հարցերին Արսենին պատասխանում էր, որ ինքը Ուստինն է, քանզի դա էր միայն տվյալ պահին իրեն էական թվում: Բայց այդպես էլ պարզ էր բոլորին, թե ինչ մարդ է նա եւ ինչով նրան օգնեն: Արսենին արդեն առաջվա Արսենին չէր: Իր դեգերումների ընթացքում նա այնպիսի տեսք ձեռք բերեց, որը ոչ մի մեկնություն չէր պահանջում: Առանց խոսքի նրան տեղ էին տալիս գոմում կամ չէին տալիս: Տաք խրճիթներից նրան մի կտոր հաց էին բերում կամ չէին բերում: Հաճախ բերում էին: Եվ նա հասկացավ, որ կյանքն առանց խոսքի հնա-

ռավոր է:

Արսենին չգիտեր, թե ո՞ր,- եւ առհասարակ ո՞ր մի,- ուղղությամբ է ինքը շարժվում: Խիստն ասած, իրեն ուղղություն պետք էլ չէր, որովհետեւ ինքը ոչ մի տեղ էլ չէր ձգտում: Դատելով սառնամանիքների թուլացումից, գարունն էր մոտենում: Ի դեպ, այդ էլ նրան չէր անհանգստացնում առանձնապես: Քանզի կենալով օտար մարմնում, Արսենին սառնամանիքներին ընտելացավ: Երբ Կրասնոյե գյուղում նրան նվիրեցին ծակ-ծակ, բայց տաք մի զիպուն, նա արդեն վստահ չէր, թե այդ իրը իրեն հարկավոր է: Վոզնեսենսկոյե գյուղում նա զիպունը թողեց խրճիթներից մեկում, ասելով Ուստինային.

Գիտես, մենք ամբողջ այս քուրջուփալասով համբարձված Փրկչի հետքով չենք համբառնա: Մարդը, սեր իմ, բազում անպիտան գույք ու կապվածություններ ունի, որոնք իրեն վար են քաշում: Իսկ եթե դու անհանգստանում ես իմ առողջությամբ, ապա ուրախությամբ հայտնում եմ քեզ, որ սկսվում է ջերմացնող,- թող որ ցուրտ,- գարունը:

Շարժվելով կակղող, բայց եւ լրիվ չսառած ճամփաներով, Արսենին անսխալ իմանում էր գարնան գալը: Նա հիշում էր այն խնդությունը, որն զգացել էր նախորդ կյանքում օդի փոփոխությունից: Այն բանից, որ արեւային ճառագայթները լեցվում էին զորությամբ, եւ նա զգում էր, երբ ընկնում էին իր դեմքին:

Մի անգամ իր դեմքը տեսավ գարնանային ջրափոսում եւ լաց եղավ: Խճճված մազերն ավելի գունաթափ էին: Փլված այտերի միջից փունջ-փունջ ելել էր մորուքը: Դա նույնիսկ մորուք էլ չէր, այլ թափված փետուր, տեղ-տեղ՝ կպած կաշվին, տեղ-տեղ՝ կախված սառցալուլաների պես: Արսենին լաց էր լինում ոչ թե իր, այլ կորուսյալ ժամանակի համար: Նա հասկանում էր, որ այն ետ չի դառնա: Արսենին նույնիսկ վստահ չէր, որ այն հողը, որտեղ ինքն ապրել էր անցած գարունին, դեռ գոյություն ունի: Այն, բայցեւայնպես, կանգնած էր նախկին տեղում:

Սիրտը դատարկած Արսենին եկավ Պսկով քաղաք: Դա իր տեսած ամենամեծ քաղաքն էր: Եվ ամենագեղեցիկը: Արսենին անվանումը չգիտեր, քանզի ոչ ոքի ոչինչ չէր հարցնում: Պսկովցիներն իբրեւ մեծ քաղաքի բնակիչներ Արսենիից ոչինչ չէին հարցնում, եւ Արսենիին դա ուրախացնում էր: Նա մտածեց, որ այստեղ կարելի է մոլորվել:

Նա գնում էր կրեմլի (кроме) պատի երկարությամբ եւ զարմանում

նրա հզորությունից: Այսպիսի պատի ետեւում, մտածեց Արսենին, ապրում են, ըստ երեւույթին, հանգիստ եւ անխռով: Ես չեմ պատկերացնում մեծությամբ դնովի այնպիսի աստիճաններ, որ հարմար գան այս պատերին: Կամ, ենթադրենք, հրանոթներ, ունակ ծակելու այս հաստությունը: Սակայն (Արսենին գլուխը ետ գցեց եւ նրան թվաց, թե պատը դանդաղ թեքվում է իր վրա) նույնիսկ այսպիսի պատը չի փոխի ներքին թշնամու վտանգը, եթե նա այս պատի ետեւում բազմանա: Այդ-ժամ, կարելի է ասել, ամենավատը կլինի՝ ահա քեզ արդեն իրավամբ կրիտիկական դեպք:

Պատն Արսենիին տարավ Վելիկոյե գետի մոտ: Գետի երեսին դեռ լողում էին առանձին սառցակտորներ, բայց գետն ամբողջությամբ ազատ էր սառույցից: Ափին լաստավարները մարդ էին հավաքում: Արսենին զգաց, որ իրեն ձգում է հակադիր ափը, եւ նույնպես ոտք դրեց լաստին:

Իսկ դու վճարե՞լ ես առաջինի համար, Արսենիին հարցրեց լաստավարներից մեկը:

Արսենին չպատասխանեց:

Նրանից փող մի ուզիր, ասացին լաստավարին, քանզի քո առջեւ Աստծո մարդն է, մի՞թե չես տեսնում:

Տեսնում եմ, հաստատեց լաստավարը, հենց էնպես հարցրի, համենայն դեպս:

Նա ձողով հենվեց ափին, եւ լաստը, տակը ճռռացնելով ավազին, ափից հեռացավ: Գետի մեջտեղում Արսենին գլուխը բարձրացրեց: Կրեմլի պատի ետեւից երեւացին գմբեթները, որոնք մինչ այդ չէին երեւում: Մայր մտնող արեւը կրկնապատկել էր նրանց ոսկեջրվածքը: Երբ ղողանջեց առաջին զանգը, պարզ դարձավ, որ այն հնչում է ջրի տակից, քանի որ ջրերեսի զանգերն ավելի կենդանի էին երկնամիջի գմբեթներից: Նրանց մանրիկ ղողանջյունն արտացոլում էր ուժը արտածված հնչյունի:

Իջնելով լաստից՝ Արսենին երկար զմայլվում էր բացվող տեսարանով: Գիտես, սեր իմ, ես ետ եմ վարժվել կյանքի գեղեցկություններից, ասաց Ուստինային: Իսկ դրանք այնպես հանկարծակի են բացվում, երբ հատվում է գետը, որ ես նույնիսկ խոսք չեմ գտնում: Եվ ահա գետի մի կողմից՝ ես եմ, կեղտոտված կեղանքի մեջ ու ոջիլների, իսկ մյուս

կողմից՝ այս գեղեցկությունը: Եվ իմ թշվառությամբ ես ուրախ եմ ընդգծելու նրա վեհությունը, չէ՞ որ նման ձեւով կարծես թե մասնակցում եմ նրա արարումին:

Երբ մութն ընկավ, Արսենին թափառեց գետափով: Վերջիվերջո, դեմ առավ պատին: Գնաց երկայնքով եւ միջում նկատեց մի բացվածք: Մութն այդտեղ ավելի թանձր էր, քան շրջակայքում: Բացվածքի եզրերը շոշափելով Արսենին ներս խցկվեց: Իր առջեւ վառվում էին մի քանի ձիթաճրագներ: Դրանց աղոտ լույսի ներքո ճանաչելի էին խաչերի ուրվագծերը: Գերեզմանոց է: Համենայն դեպս, ի՜նչ գեղեցիկ տեղ է: Ավելի լավը չես էլ հորինի: Հենց այն, ինչը պահանջվում է տվյալ պահին: Վերցնելով ճրագներից մեկը, նա ձեռքերը պահեց դրա վերնամասում: Ցերմությունն անցավ ամբողջ մարմնով: Արսենին պարկը դրեց գլխատակն ու աչքերը փակեց: Քնի մեջ նա երբեմն ջղաձգվում էր, եւ այդ ժամանակ նրա այտի տակ շրշում էին Քրիստափորի գրառումները:

-ԺԳ-

Նա արթնացավ թռչունների երգից: Մի իսկական գարնանային երգեցողություն, թեեւ գարնանագալը դեռ ակներեւ չէր: Մի քանի գերեզմանի վրա դեռ ձյուն կար: Թռչունները նպաստում էին ձյան հալոցքին: Նրանց երգեցողության տակ ձյունը ջուր էր դառնում եւ ներծծվում ի ենջեցյալները՝ նրանց բարի ավետիս բերելով: Գարունը Պսկով եկավ ավելի շուտ, քան Բելոզյորսկ: Բելոզյորսկցիները պսկովցիներին միշտ էլ անվանել են հարավցի: Եվ շարունակում են այդպես անվանել ցայսօր:

Ծիրմատունը, որտեղ գիշերն անցկացրեց Արսենին, միաբանություն էր: Նա դա հասկացավ՝ տեսնելով շիրմատանը գնացող-եկող միանձնուհիներին: Երբ քույրերը նրան հարցրին՝ ո՞վ է ինքը, Արսենին սովորույթի համաձայն իրեն Ուստին անվանեց: Ավելին՝ նրանց, անշուշտ, չասաց: Քույրերը տեղյակ պահեցին, որ ինքը գտնվում է Հովհաննես Կարապետի կուսանաց միաբանության հողում: Նրանք վստահ չէին, որ Արսենին իրենց հասկացավ: Խորհրդակցելով, նրանք Արսենիին բերեցին մի ման ձկնապուր: Երբ Արսենին ապուրը կերավ

պրծավ, նրանք ընկան Արսենիի թեւերն ու դուրս տարան շրջափակոցի մյուս կողմը:

Ամբող օրն Արսենին թափառեց Վելիկոյե գետի ափերով: Տեսնելով մոտեցող լաստը, նա վճռեց գետը հատել հակառակ ուղղությամբ: Այս անգամ լաստավարը նրանից փող չպահանջեց: Նա ասաց.

Լողա, որքան կամենաս, մարդ Աստծո: Ինձ քո այցելությունից բարիք է գալիս:

Մյուս ափին Արսենիին դիմավորեց խեւ Ֆոման:

Ըհը, գոչեց Ֆոման, տեսնում եմ, դու հենց իսկական խեւ ես, որ կաս: Իսկականը: Ինձ մոտ հանգիստ եղիր, էդ հաշվով հոտառությունս առաջնակարգ է: Բայց դու գիտե՞ս, բարեկա՛մս, որ պսկովյան հողի ամեն մի մասը մի խեւ է պահում:

Արսենին լռեց: Այդժամ խեւ Ֆոման բռնեց նրա թեւից ու քաշեց իր ետեւից: Նրանք համարյա վազում էին կրեմլյան պատի երկայնքով, եւ Արսենին հնարավորություն չէր տեսնում այդ շարժումը կանգնեցնել: Ֆոման շատ կառչուն դուրս եկավ: Նրանց առջեւ հայտնվեց եւս մի գետ: Դա Պսկովոն էր, որն իր ջրերն էր բերում Վելիկոյե գետին:

Այնտեղ՝ Պսկովոյից այն կողմ, ասաց խեւը, ապրում է խեւ Կարպը: Նա խոսքով ժլատ է եւ ափեղցփեղ: Ուրիշ անգամ իր անունը հաճախաբառով է ասում՝ Կարպ, Կարպ, Կարպ: Շատ արժանավոր մարդ է: Այդուհանդերձ, միջին հաշվով ամիսը մեկ ստիպված եմ նրա մռութը ջարդել: Դա լինում է այն օրերին, երբ նա կտրում է գետն ու գալիս քաղաք: Իսկ ես, արյունալի վերքեր հասցնելով խեւ Կարպին, ստիպում եմ նրան չթողնել Մերձպսկովյեն: Քո խաչը, սովորեցնում եմ նրան, Մերձպսկովյեն է: Այն, իմացած լինես, առանց քեզ որը կմնա, այն դեպքում, երբ քաղաքի իմ մասում առաջանում է եղբոր ավելցուկ: Ավելցուկն էլ արատավոր բան է եւ բերում է հոգեւոր ամայության...Հայտնվեց ու չանհետացավ:

Խեւ Ֆոման ձեռքերը կրծքին դրեց եւ նայում էր հակադիր ափին: Այնտեղից նրան էր սպառնում Կարպը:

Սպառնա, քաքլան, սպառնա, գոչում էր խեւ Ֆոման առանց չարության: Հերիք է էստեղ մի անգամ էլ գաս, առանց խղճալու ջարդուփշուրդ կանեմ ոտուձեռդ: Ծխի պես կցնդես:

Նրանք ինձ խեւի տեղ են դրել, ասաց Արսենին Ուստինային:

Իսկ ո՞ւմ տեղը քեզ դնեն, զարմացավ Ֆոման: Մի նայիր քեզ, Արսենիե: Դու հենց խեւ ես, որ կաս, զի ընտրել ես վարքը խելագարի եւ ստորացած մարդու:

Եվ նա գիտի իմ կնքանունը:

Ֆոման ծիծաղեց:

Իսկ ո՞նց չիմանաս, երբ այն ամեն մի կնքված մարդու ճակատին է գրված: Դե Ուստինի մասին գլխի ընկնելը, իհարկե, բարդ է, բայց նրա մասին դու ինքդ ես բոլորին պատմում: Այնպես որ, խեւություն արա, թանկագի՛նս, մի՛ ամաչիր, այլապես իրենց մեծահարգությամբ նրանք քեզ վերջիվերջո կգտնեն: Նրանց խոնարհումը քո նպատակների հետ անհամատեղելի է: Հիշիր, թե ինչպես էր Բելոզյորսկում: Քեզ պե՞տք է:

Ո՞վ է իմ գաղտնիքներն այս իմացողը: Արսենին շրջվեց դեպի Ֆոման:

Ո՞վ ես դու:

Կլ...ս կուլ տու, պատասխանեց Ֆոման: Դու երկրորդական բանեերից ես հարցնում: Իսկ ես ասեմ գլխավորի մասին: Վերադարձիր Զավելիչիյե, որտեղ ապագա Կոմսոմոլսկոյե հրապարակում Հովհաննես-Կարապետի վանքն է: Վանական գերեզմանոցում դու այսօր արդեն գիշերել ես: Մնա այնտեղ, եւ գլխի եմ ընկնում, հավատա, այդ վանքում կարող է լինել Ուստինան: Ենթադրում եմ, որ նա այնտեղ պարզապես դեռ չի հասել: Հո՛ դու հասել ես: Աղոթիր նրա համար եւ քո համար: Եղիր նա եւ ինքդ միաժամանակ: Անօրինություններ արա: Պսկովցիներին չթողնես քնեն. նրանք ծույլ են ու ծանձրալի: Ամեն:

Ֆոման թափ առավ եւ խփեց Արսենիի դեմքին: Արսենին լուռ նայում էր նրան, զգալով, թե ինչպես է կզակի տակով եւ վզին հոսում քթի արյունը: Ֆոման գրկեց Արսենիին, եւ նրա դեմքը նույնպես արնոտվեց: Ֆոման ասաց.

Տրվելով Ուստինային, դու, ես գիտեմ, հյուծում ես քո մարմինը, բայց հրաժարումը մարմնից՝ դեռ ամենը չէ: Հենց դա, իմ ընկեր, կարող է հանգեցնել հպարտության:

Էլ ի՞նչ կարող եմ անել, մտածեց Արսենին:

Ավելին արա, հենց նրա ականջին շշնջաց Ֆոման: Հրաժարվիր քո անձից: Դու արդեն արել ես առաջին քայլը՝ կոչվելով Ուստին: Իսկ այժմ հրաժարվիր քեզնից կատարելապես:

-ԺԴ-

Հենց այդ օրվանից Արսենին բնակվեց շիրմատանը: Պատերից մեկի մոտ նա նկատեց երկու մերձաճած կաղնի, եւ դրանք դարձան նոր տան առաջին պատը: Երկրորդ պատը դարձավ գերեզմանոցինը: Երրորդ պատն ինքն Արսենին շինեց: Անցնելով գետի երկայնքով՝ նա հավաքեց այնտեղ թափված գերանները, փլված պատերի աղյուսները, ցանցերի կտորտանքներ ու շատ այլ առարկաներ, անփոխարինելի՝ շինարարության համար: Չորրորդ պատ Արսենիին պետք չեղավ. դրա տեղը մուտքն էր:

Այդ աշխատանքին հետեւում էին միանձնուհիները, բայց ոչինչ Արսենիին չէին ասում: Նրա կողմից նույնպես ոչ մի բառ չէին լսում: Շինարարությունն ընթանում էր երկկողմանի լուռ համաձայնությամբ: Երբ այն ավարտվեց, Արսենիի տան մոտ մի քանի քույրերի ուղեկցությամբ եկավ միաբանության մայրապետը: Տեսնելով Արսենիին, պառկած հերվա դեղնած խոտի վրա, ասաց.

Աստ ապրողի մահիճը հողն է, իսկ ծածկը՝ երկինքը:

Այո, այսպիսի շինարարությունը չի կարելի լիարժեք անվանել, հաստատեցին քույրերը:

Պարզապես նա իր հիմնական տունը կշինի երկինքներում, ասաց մայրապետը:

Աղոթիր Տիրոջը մեզ համար, մարդ Աստծո:

Մայրապետի հրամանով Արսենիին մի ման շիլա բերեցին: Հազիվ էր Արսենին զգացել ամանի ջերմությունը, նրա սեղմված ձեռքերը ետ քաշվեցին: Ամանն ընկավ խուլ շրխկոցով, բայց չկոտրվեց: Խոտը դանդաղ կլանեց շիլան: Նկատելի դարձավ, թե դեղին փնջերի միջով ինչպես է արդեն դուրս գալիս առաջին կանաչը:

Այս կանաչը, ասաց Արսենին Ուստինային, նույնպես սնվելու կարիք ունի: Թող աճի՝ փառաբանելով մեր տղային:

Քանիցս նրան էլի շիլա բերեցին, եւ ամեն անգամ նույն բանն էր կատարվում: Արսենին մինչեւ վերջ ուտում էր այն, ինչը թողնում էր խոտը: Նա զգուշորեն հանում էր սննդի մնացորդները խոտից, նրա միջով անցկացնելով իր մատներն իբրեւ փոցխ: Երբեմն բացվածքի միջով շիրմատուն էին վազում շներն ու շիլան լիզում իրենց երկար, կարմիր

լեզուներով: Արսենին շներին չէր քշում, որովհետեւ հասկանում էր, որ նրանք էլ պետք է ուտեն: Բացի այդ, նրանք իրեն հիշեցնում էին իր մանկության գայլին: Կեր տալով, ասես կեր էր տալիս նաեւ գայլին: Հիշողությանը նրա մասին: Ծներն ուտում էին այն, ինչը երբեմնի չէր հասցրել ուտել Գայլը: Երբ հեռանում էին, Արսենին նրանց ետեւից բղավում էր ներումի խոսքեր եւ խնդրում բարեւ տանեն Գայլին:

Դուք նույն ցեղից եք, գոռում էր Արսենին, եւ ես կարծում եմ, դուք գիտեք, այդ ինչպես անեք:

Տեսնելով Արսենիի սնվելու յուրատիպությունը, քույրերն սկսեցին ուտելիքը դնել խոտին: Նա կռանում էր, թիկունք անելով նրանց, եւ, երբ հեռանում էին, չէր ուղեկցում հայացքով: Նա վախենում էր, որ իր մոտ եկածների դեմքերին նայելով չի ճանաչի Ուստինայի դիմագծերը:

Պսկովյան իր կյանքի առաջին շաբաթներին Արսենին զարթնում էր լուսաբացին եւ գնում քայլելու Զավելիչյեով: Նա հետեւում էր այնտեղ ապրող մարդկանց: Կանգ առնելով՝ նրանց էր ուղղում յուրահատուկ հայացքն այն մարդու, ում մտակերտվածքը տարբերվում է ընդունված համընդհանուրից: Աչք էր ածում ցցապատերի ետեւը: Ճակատով հպվում էր լուսամուտներին եւ հետեւում պսկովցիների գաղտնաթաքույց կյանքին: Ամբողջապես դա իրեն ուրախություն չէր բերում:

Զավելիչյեի տներում ծուխը կանգնած էր, խառնված՝ գոլորշու հետ: Այնտեղ հագուստն էր չորանում ու շչին էր եռում: Այնտեղ ծեծում էին երեխաներին, գոռում ծերերի վրա եւ բոլորն իրար գլխի էին հավաքվում խրճիթի տարածքում: Ուտելուց եւ քնից առաջ աղոթում էին: Երբեմն փռվում էին քնելու առանց աղոթքի՝ աշխատանքից ուժասպառ: Կամ հարբած: Սապոգներով դեն էին շպրտում կանանց դրած փալասը: Սրբում էին քնի մեջ հոսող փսլինքներն ու ճանճերին քշում: Քերիչի ձայնով ձեռքը տանում երեսով: Սոլի հայհոյախոս էին: Ճթճթոցով փչացնում էին օդը: Այդ ամենը՝ խոր քնի մեջ:

Գնալով Զավելիչյեի փողոցներով, ազնվաբարո մարդկանց տներին Արսենին խփում էր քարով: Քարերը ետ էին թռչում գերաններից՝ խուլ փայտաձայնով: Տներից դուրս էին գալիս բնակիչները, եւ Արսենին խոնարհվում էր՝ նրանց խաչակնքելով: Իսկ անառակ կամ իրենց ոչ պատշաճ պահող մարդկանց Արսենին մոտենում էր կիպ: Նա ծնկում էր, համբուրում էր այդ տների պատերը եւ ցածրաձայն ինչ-որ բան ասում:

Եվ երբ շատերը զարմանում էին Արսենիի արարքից, խեւ Ֆոման ասում էր.

Հա, ի՞նչ կա այստեղ զարմանալի, եթե գցենք-բռնենք: Մեր եղբայր Ուստինը խորապես իրավացի է, քանզի քարեր է նետում միայն ազնվաբարո մարդկանց տների վրա: Էդ տներից դեւերը քշել են հրեշտակներին: Նրանք վախենում են ներս մտնել եւ կառչում են, ինչպես փորձն է ցույց տալիս, տների անկյուններից:

Խեւ Ֆոման ցույց տվեց տներից մեկը: Իսկ տեսնո՞ւմ եք անկյունների բազմաթիվ դեւերին:

Չենք տեսնում, պատասխանում էին հավաքվածները:

Իսկ նա տեսնում է: Եվ քարհալած է անում: Իսկ ոչ բարեպաշտ մարդկանց մոտ դեւերը նստած են տների ներսում, որքանով հրեշտակները, ում տրված է պահպանել մարդկանց հոգիները, այնտեղ ապրել չեն կարող: Հրեշտակները կանգնած են տների մոտ եւ լաց են լինում անկյալ հոգիների համար: Իսկ մեր եղբայր Ուստինը դիմում է հրեշտակներին եւ աղաչում նրանց՝ չթողնել իրենց աղոթքները, քանզի հոգիները չեն խորտակվել վերջնականորեն: Իսկ դուք, շան տղերք, մտածում եք, թե նա խոսում է պատերի հետ:

Ունկնդիրների մեջ խեւ Ֆոման նկատեց խեւ Կարպին: Կարպը դեմքն արեւին էր արել: Նա լսում էր Ֆոմային եւ անմտորեն ժպտում: Նա վայելում էր շոգ գարնանային օրը եւ իր ներկայությունը քաղաքի այդ մասում: Բռնելով Ֆոմայի մոլեգին հայացքը՝ Կարպը հիշեց արգելանքի խախտման մասին: Նա փորձեց կամաց ծլկել, թեեւ հասկանում էր, որ դա հեշտ խնդիրներից չէ: Ձգտելով կամրջին հասնել Պսկովայով, Կարպն սկսեց շրջանցել ամբոխը՝ կողաքայլերով: Նրան թվում էր, թե կողքանց շարժվելով կարող է թաքցնել իր իսկական նպատակները: Մի քանի ակնթարթ անց նա արդեն նկատեց, որ կամրջից կտրված է Ֆոմայով:

Կարպ, Կարպ, Կարպ, հեծկլտաց խեւ Կարպը եւ կողաքայլերով շարժվեց հակադիր կողմը:

Սակայն խեւ Ֆոման արագաշարժ գտնվեց խեւ Կարպից: Անբնական բարձր ճպպոցով նրա ձեռնափն իջավ կարգազանցի վզին:

Կարող էի՛ սրանից այլ գործողություն սպասել, ճչաց Կարպն ու նետվեց փախուստի կամրջի ուղղությամբ:

Ֆոման նրան քշում էր քացիներով: Հասնելով կամրջի մեջտեղը՝ Կարպը կանգ առավ: Երբ հետապնդողը մոտեցավ, փախչողն ընթացքից նրան մի ուժեղ ապտակ տվեց: Խեւ Ֆոման այն հեզորեն տարավ, քանզի դա արդեն խեւ Կարպի հողն էր:

-ԺԵ-

Դուք իմ հավատարիմ բարեկամներն եք ընդդեմ մարմնի, ասաց Արսենին մոծակներին: Դուք թույլ չեք տալիս մարմնին ինձ իր պայմանները թելադրի:

Վելիկոյե գետի ափին, ուր վանքն էր, շատ մոծակ կար: Իսկ շիրմատան պատի ետեւում, ուր չէր հասնում առափնյա քամին, մոծակ ավելի շատ կար, քան հենց ջրի մոտ: Այդպիսի քանակ դեռ ոչ ոք չէր տեսել: Արնախումները ծնունդ էին անսովոր շոգ գարնան:

Միջնադարյան մարդու միայն դեմքն ու ձեռքի դաստակներն էին բաց, բայց դա էլ բավ էր, որպեսզի Պսկովի բնակիչներին զրկեին համբերությունից: Պսկովցիները քորվում էին, թքում էին ձեռքի ափին եւ թուքը քսում մաշկին, կարծելով, որ այդպես խայթոցներից կթեթեւացնեն իրենց չարչարանքները: Չբավարարվելով մարմնի բաց մասերով, մոլեգնած միջատները խայթում էին խիտ հագուստի միջով:

Իսկ Արսենիին մոծակները չէին վշտացնում: Տաք, խոնավ գիշերներին, երբ օդը փոխակերպվում էր բզզացող զանգվածի, նա մինչեւ վերջ մերկանում էր ու կանգնում գերեզմանասալի վրա, իր տան առջեւ: Ձեռքը տանելով իր մարմնով՝ նա անսովոր զգացում էր ապրում: Թվում էր, թե իր մաշկը պատվել է խիտ, ինչպես Եսավի մոտ, բուսականությամբ: Երբ հպվում էր դրան, բուսականությունն արյուն էր դառնում: Մթան մեջ Արսենին արյուն չէր տեսնում, բայց առնում էր դրա հոտը եւ լսում էր ճզմվող միջատների ճպպոցը: Իսկ հաճախ նրանց ուշադրություն չէր դարձնում, քանի որ գիշերային իր կանգերի ժամանակ սրտանց աղոթում էր Ուստինայի համար:

Այդպես նա կանգնում էր օրվա մութ ժամերին, որը թեեւ կարճ էր, սակայն բավարար՝ լրիվ արյունազրկման համար: Բայցեւայնպես, Արսենին արյունազրկված չէր: Զզվեցրե՞լ էր արդյոք նրա արյունը մոծակներին, կամ,- նկատի առնելով Արսենիի անսովոր շռայլությունը,- ար-

նախումները որոշեցին զսպություն ցուցաբերել, միայն գիշերային կանգը նրա կյանքը չխլեց: Մեկ անգամ չէ, որ նրան առավոտյան գտան անշնչացած, բայց ամեն անգամ վերջիվերջո գիտակցության էր գալիս:

Կհանի հագուստն անցավորի եւ կհագնի հանդերձը հավերժական, այդպիսի օրերին ասում էր մայրապետը՝ շրջվելով նրա մերկությունից:

Ժամանակի ընթացքում մոծակները քչացան, բայց գիշերներն Արսենին առույգանալը չթողեց: Չէր էլ կարող թողնել, որքանով գիշերը Արսենիի համար մնաց իբրեւ աղոթքի եզակի խաղաղ ժամանակ: Օրը լիքն էր հոգսերով ու տագնապներով:

Արսենին շրջայց էր անում Զավելիչյեով եւ հետեւում նրա կյանքին: Նա դեւերի վրա քար էր շպրտում եւ խոսում հրեշտակների հետ: Գիտեր բոլոր մկրտությունների, պսակադրությունների եւ թաղումների մասին: Գիտեր Զավելիչյեում նոր հոգիների ծննդյան մասին: Կանգնելով նորածնի տան դեմ՝ կանխատեսում էր նրա ճակատագիրը: Եթե նրա կյանքը ենթադրվում էր երկար, Արսենին ծիծաղում էր: Եթե նա պիտի արագ մահանար, Արսենին արտասվում էր: Այդ օրերին, բացի խեւ Ֆոմայից, ոչ ոք չգիտեր, ինչից է ծիծաղում եւ արտասվում Արսենին: Իսկ Ֆոման չէր շտապում. որ մեկին բացատրեր, դե Զավելիչյեում էլ լինում էր հազվադեպ:

Մի անգամ խեւ Ֆոման եկավ Զավելիչյե եւ պահանջեց, որ Արսենին հետեւի իրեն գետով:

Ինձ քո խորհրդատվությունն է պետք, ասաց նա Արսենիին: Սա հեշտ գործ չի, դրա համար եմ միայն քեզ տանում քաղաքի իմ մասը:

Հարյուրապետ Պերեժոգի գրկանոց Անֆիմը պապանձվել էր: Նա պառկած էր իր օրորոցում եւ լուռ նայում էր վեր: Համրին օրորելու տակտի հետ շարժվում էր տասը զույգ աչք: Անֆիմի օրորոցը շրջապատել էին մերձավոր հարազատները: Երբ Արսենին նրան վերցրեց իր ձեռքերի վրա, նա հուսահատ ճչաց: Արսենիի աչքերը արցունքով լցվեցին, եւ նա Անֆիմին նորից օրորոցը դրեց: Պառկեց հատակին: Ձեռքերը խաչեց կրծքին: Փակեց աչքերը:

Մեր եղբայր Ուստինը տեսնում է, որ երեխան մեռնում է, ասաց խեւ Ֆոման: Բժշկությունն անզոր է:

Անֆիմը դադարեց շնչել լույս գիշերը: Հրաժեշտ տալով Արսենիին

լաստի մոտ՝ խեւ Ֆոման նրան մի ուժեղ ապտակ հասցրեց:

Սա իմ տարածքում հայտնվելու համար: Բայց չէ որ քեզ այդպես ավելի հեշտ է, հը՞:

Գետի մեջտեղում Արսենին գլխով արեց: Իհարկե, հեշտ է: Կիսախավարում երեւում էր, թե ինչպես է գետի ծածանքը բռնկվում աղոտ կայծերից: Նրա ամենամեծ պսակը դանդաղ շարժվում էր ալիքի կատարով, եւ Արսենին մտածեց, որ դա հոգին է մահացած երեխայի: Փոքրիկ մարմնից դուրս եկած, գիշերվան նայելով:

Երեք օր դու դեռ այստեղ պիտի անցկացնես, հոգիին ասաց Արսենին: Ընդունված է կարծել, որ առաջին երեք օրերը հոգիները ժամանում են այնտեղ, որտեղ ապրել են: Գիտես, Պսկովը լավ քաղաք է, էլ ինչո՞ւ չլքել աշխարհը հենց այստեղից: Նայիր՝ գետափի տներում վառվեցին կրակները, այնտեղ պատրաստվում են քնել: Իսկ երկինքն արեւմուտքում դեռեւս լուսավոր է: Նրա վրա սառել են ամպերն անհամաչափ, ալ եզրերով: Մինչեւ լույս նրանք արդեն չեն շարժվի: Երեկոյան քամու տակ թարմացած դողում են լորենիները: Մի խոսքով, տաք ամառային երեկո է: Դու լքում ես այս ամենը, եւ գուցե քեզ համար սարսափելի է: Չէ որ, տեսնելով ինձ, դու ճչացիր այդ սարսափից, ճշմարի՞տ է: Իմ տեսքը քեզ ասաց, որ մահը մոտ է: Իսկ դու մի վախեցիր: Որպեսզի դու քեզ մենակ չզգաս, ես երեք օր կանցկացնեմ քեզ հետ, ուզո՞ւմ ես: Ես ապրում եմ վանքի շիրմատանը, դա շատ խաղաղ տեղ է:

Եվ Արսենին Անֆիմի հոգին տարավ շիրմատուն: Նա աղոթք էր կարդում երեք օր ու գիշեր: Երրորդ օրվա ավարտին Արսենիի շուրթերն արդեն չէին շարժվում, բայց երեխայի հանդեպ սիրո զգացումը չէր դադարել: Եվ նա ասում էր Արսենիին՝ թարմացիր: Ասում էր, եթե նստես գետնին, ապա կքնես: Արսենին չէր նստում, բայց իրեն թույլ էր տալիս կռթնել սերտաճած կաղնիներին, որոնք իր տան պատն էին: Նա չէր ուզում միայնակ թողնել երեխային իր մահվան հետ:

Հրաժեշտ տալով Անֆիմի հոգուն՝ Արսենին շշնջաց.

Լսիր ինձ, քեզ խնդրանք ունեմ: Եթե այնտեղ հանդիպես փոքրիկ տղայի, նա քեզնից էլ փոքր է... Դու նրան հեշտ կճանաչես, նա նույնիսկ անուն չունի: Նա իմ տղան է... Արսենին ճակատով սեղմվեց կաղնուն եւ զգաց, թե ինչպես է իր մեջ լցվում փայտեղությունը: Դու նրան իմ կողմից պաչիկ արա: Պարզապես պաչիկ արա:

-ԺԶ-

Խեւ Կարպի օրն սկսվում էր այսպես: Ձեռքերը մեջքին դրած՝ նա կանգնած է կալաչաթուխ Սամսոնի տան մոտ:

Կարպ, Կարպ, Կարպ, անցորդներին ասում էր խեւ Կարպը:

Երբ Սամսոնը ելնում էր փողոց փոկից կախ տեփուրով, Կարպն ատամներով բռնում էր կեսկոպեկանոց ծակուլիկն ու փախչում մի կողմ: Մարդու համար, ով ատամների մեջ է պահել ծակուլիկը, նա փախչում էր շատ արագ: Պետք եղած դեպքում՝ լուռ: Չանջատելով մեջքին դրած ձեռքերը: Խեւի ետեւից վազում էին ոչ հարուստ մարդիկ, ովքեր գիտեին, որ վերջիվերջո ծակուլիկը կընկնի: Երբ ծակուլիկն ընկնում էր, նրանք այն հավաքում էին: Ինչ մնում էր խեւի բերանում, այդ էլ նրա ցերեկվա սնունդն էր:

Կալաչավաճառ Սամսոնը խեւ Կարպի ետեւից էր վազում: Նույնիսկ, եթե ուզենար էլ վազել, ծանր տեփուրով անհնարին կլիներ: Բայց կալաչավաճառը չէր ուզում վազել: Նա խեւ Կարպից չէր նեղանում: Որովհետեւ խեւի հետ հանդիպումից հետո առեւտուրը լավ էր գնում, եւ նրա ծակուլիկները ծախվում էին շատ արագ: Իսկ եթե խեւն իր զբաղվածության առումով ուշանում էր, կալաչավաճառ Սամսոնը համբերատար սպասում էր նրան Զապսկովյեի իր տան մոտ:

Այդպիսին չէր կալաչաթուխ զավելիչյեցի Պրոխորը: Նա մռայլ մարդու համարում ուներ եւ հակված չէր ծակուլիկներ բաժանելու: Որքանով Զավելիչյեն գտնվում էր Արսենիի պատասխանատվության ոլորտում, նա ստիպված էր դեմ առնելու կալաչաթուխ Պրոխորին: Դա տեղի ունեցավ ամռան վերջին:

Պրոխորին տեսնելով իր ծակուլիկներով՝ Արսենիի հոգին խռովվեց: Նա դիմահար նայում էր Պրոխորին, եւ նրա հայացքն ավելի էր դառնանում:

Ի՞նչ կա, խելա՛ռ, հարցրեց Պրոխորը:

Ոչ մի բառ չարտաբերելով՝ Արսենին տակից հարվածեց տեփուրին: Ծակուլիկները համերաշխ թռան տեփուրի միջից եւ թրըփացին օգոստոսյան փոշու մեջ: Անցորդները կուզենային թափ տալ ծակուլիկներն ու վերցնել իրենց, բայց Արսենին չէր տալիս: Կալաչաթուխ Պրոխորի արտադրանքը նա սկսեց կտոր-կտոր անել, ոտքերով տշել ու տրորել

փոշու մեջ: Երբ ծակուլիկները դարձան ցեխագնդեր, Պրոխորը կարծես զարթնեց: Նա դանդաղ մոտեցավ Արսենիին, եւ նրա ամեն մի բռունցքը կարծես մի ծակուլիկ լիներ: Մի կարգին թափ էլ չառնելով, նա բռունցքով հարվածեց Արսենիի դեմքին: Արսենին ընկավ գետնին, եւ հացավաճառը հարվածեց նրան ոտքով:

Մի՛ դիպչիր նրան, նա Աստծո մարդն է, գոչում էին անցորդները:

Իսկ իմ հացերը թափելը՝ Աստծո չէ՞: Իսկ դրանք տրորելը՝ Աստծո չէ՞:

Ամեն հարցի հետ կալաչավաճառ Պրոխորը ոտքով Արսենիին հարված էր հասցնում: Այդ հարվածներից պառկածը մի կողմ էր թռչում, ասես մի կույտ քուրջ: Կարող է պատահի, հենց մի կույտ քուրջ էր, որ կար, քանզի նրանում մարմին գրեթե չէր մնացել: Ոռնոցով կալաչավաճառը թռավ Արսենիի մեջքին երկու ոտքով, եւ բոլորը լսեցին նրա կողոսկրերի խշրտոցը: Այդ ժամանակ տղամարդիկ նետվեցին կալաչավաճառ Պրոխորի վրա եւ նրա ձեռքերը ոլորեցին մեջքին: Ինչ-որ մեկը կապեց նրա ձեռքերն իր գոտիով: Զորեղ Պրոխորը փորձեց մի կողմ նետել իր ձեռքերը ոլորողին եւ նորից պոկվեց դեպի Արսենին:

Հեռացի՛ր, Աստծո մարդ, ասում էին Արսենիին շրջապատողները: Բայց Արսենին չէր հեռանում: Նա չէր շարժվում: Պառկած էր ձեռքերը տարածած, եւ նրա մազերի տակ հոսում էր մուգ արնալիճը: Բոլորը նայում էին կալաչավաճառ Պրոխորին, որը մի քիչ հանդարտվել էր: Լաստի կողմից գալիս էր խեւ Ֆոման:

Այսուհետ քո անունը ոչ թե հացթուխ է, այլ բռնցքամուղ, գոչեց Ֆոման Պրոխորին: Իսկ ձեզ՝ քաքլաններիդ (նա աչքերը փոռացրեց կանգնածների վրա), ծանոթացնեմ հետեւյալ փաստի հետ: Անցած գիշեր տվյալ պտուղը կենակցել է իր կնոջ հետ: Հետո, առանց լվացվելու խմոր է հունցել եւ թխել իր ծակուլիկները: Առավոտյան ուզում էր անմաքուր մթերքը ծախել բարեպաշտներին եւ, եթե չլիներ մեր եղբայր Ուստինը, մի բաժակ ջուր խմելու պես կծախեր:

Դա ճշմարի՞տ է, հարցրին ներկաները:

Կալաչաթուխ Պրոխորը չպատասխանեց, բայց նրա լռությունն էլ պատասխան էր: Բոլորը գիտեին, որ խեւ Ֆոման միայն ճշմարիտն է ասում: Որոշեցին Պրոխորին տանել գետնաբանտ: Նրա պատիժը հետաձգեցին մինչեւ Արսենիի ճակատագիրը պարզ դառնար: Ասին.

Եթե Աստծո մարդը մեռնի, այդ մեղքը քո վզին է մնալու:

Իսկ Արսենիին դրեցին խսիրի վրա եւ շարժվեցին դեպի Հովհաննեսի վանք: Վանքի դարպասների դեմ քույրերը դիմավորեցին լացով, որքանով արդեն հասցրել էին կապվել Արսենիին: Նրանք արդեն գիտեին տեղի ունեցած փորձանքի մասին: Բռնելով ճիլոպի եզրերից՝ քույրերը զգուշորեն Արսենիին տարան վանական միաբանության միջով, որպեսզի նրան ավելորդ ցավ չպատճառեն: Բայց Արսենին ցավ չուներ. նա ոչինչ չէր զգում: Քույրերը տանում էին նրան՝ ջանալով գնալ մանր քայլերով եւ համաքայլ, իսկ Արսենիի գլուխը մի թեթեւ ճոճվում էր:

Մայրապետն ասաց.

Սեփական ժողովրդի մեջ օտար, ամեն բան խնդությամբ տարար ի սեր Քրիստոսի՝ արժանավորելով հնամենի մեռյալ հայրենիքը:

Մայրապետի դեմքը փակված էր ձեռքերով, եւ նրա ձայնը հնչում էր խուլ, բայց հասկանալի:

Արսենիի համար ազատեցին առանձին ճգնախուցերից մեկը, որտեղ տղամարդկային ներկայությունը չկարողանար շփոթեցնել ուխտյալներից եւ ոչ մեկին: Իսկ քույրերն իրենք չէին շփոթվում, որքանով խեւ Ուստինն իրենց աչքին սեռ չուներ եւ որոշ չափով անմարմին էր: Ներս բերելով հիվանդին հեռավոր ճգնախուցերից մեկը, նրանք հույս ունեին, որ նա կառողջանա, նաեւ պատրաստվում էին նրա մահվանը:

Ստիպված ցավով պիտի հաստատենք, ասաց մայրապետը, որ տուժողի վնասվածքները կյանքի հետ քիչ են համատեղելի: Ի դեպ մահը մեր եղբայր Ուստինի համար բոլորովին անծանոթ առարկա չի եղել՝ մեր եղբայր Ուստինը դեռ ողջության օրոք էր մեռյալ: Բարեխենթ Ուստինն արժանի էր ողբի իր ուղիներում, բայց հոգեւոր մարդն էր նորոգ: Ապրելով անտուն, մեր այս եղբայրը երկնքում իր տունը կգտնի:

Սահացու ելքի դեպքում քույրերը Արսենիի համար տեղ էին նախատեսել շիրմատան պատի մոտ, որտեղ նա հիմնավորվեց դեռեւս գարնանը: Արսենիի կացարանն իրենց թվում էր պատրաստի դամբարան: Հարմարավետ ու բնակված կառույց:

- ԺԷ -

Սակայն Արսենին ողջ մնաց: Մի քանի շաբաթ անց գիտակցության եկավ, եւ նրա ոսկորներն սկսեցին քիչ առ քիչ կպնել: Նրանց սերտաճումը Արսենին զգում էր նույնքան բացահայտ, ինչպես նախկինում կոտրվածքը: Այն անծայն էր տեղի ունենում, սակայն՝ ակնհայտ:

Սեպտեմբերի մեկին Արսենիի մոտ եկավ խեւ Ֆոման եւ շնորհավորեց նոր տարվա առթիվ: Իբրեւ նվեր էլ բերեց մի սատկած առնետ: Ֆոման բռնել էր պոչից, իսկ առնետը տխուր օրորվում էր:

Առնետին դնելով հիվանդի գլխավերեւում, խեւ Ֆոման ետեւի թաթերը սեղմեց նրա մռութին եւ դիմեց այսպես.

Հոգեպես ուրախ եմ, գործընկեր, որ դու չընդունեցիր այս անմխիթար կերպարանքը: Իսկ չէ՞ որ ամեն բան դեպի սա էր տանում: Շնորհավորում եմ քեզ նոր՝ 6967 թվի առթիվ, որը մենք, ըստ հին հիշողության, տոնում ենք սեպտեմբերյան այս լուսավոր օրը՝ երեսուներեք տարի առաջ մինչեւ տարին յոթհազարերորդ:

Առնետի հայտվելուց քույրերը դժգոհ եղան, սակայն Ֆոմային առարկել չհամարձակվեցին: Տեսնելով Արսենիի ժպիտը՝ նրանք այլեւս չնեղացան: Բազում ամիսների ընթացքում դա Արսենիի առաջին ժպիտն էր: Երբ խեւ Ֆոման առնետի պոչի ծայրով խուտուտ տվեց Արսենիի պնչերը, նա փռշտաց:

Հիվանդին թարմություն է պետք, գոչեց Ֆոման, իսկ ձեր մոտ, ասես, կներեք, սատանայի ոռում: Քարշ տվեք նրան գետի մոտ: Այնտեղ ջրի հոսք կա եւ օդ: Դա կօգնի նրա ապաքինմանը:

Շրջվելով՝ մայրապետի աչքերը ճակատին թռան, բայց քույրերին նշան արեց կատարել խեւի հրահանգը: Նրանք (Արսենին տնքաց) հիվանդին վերցրին դրեցին քաթանի վրա, որը (նա մեկ անգամ էլ տնքաց) զգուշորեն բարձրացրին:

Ճռճռա, ճռճռա խայտառակ ցախավել, քմծիծաղ տվեց խեւ Ֆոման, եւ մայրապետը նորից շրջվեց:

Քույրերն Արսենիին դուրս բերին գետի մոտ: Ֆոման ցուցանեց տեղը, որի վրա կարելի էր հիվանդին տեղավորել: Ամենայն նախազգուշավորությամբ Արսենիին պառկեցրին խոտին:

Իսկ հիմա փետուրներդ հավաքեք այստեղից, այ պոչգցուկներ, Ֆո-

ման ասաց քույրերին:

Քույրերը, ոչ մի բառ չասելով, շարժվեցին միաբանության կողմը: Քամին թափահարում էր նրանց զգեստի փեշերը, իսկ Արսենին եւ Ֆոման նայում էին նրանց ետեւից: Այն, թե ինչպես հեռացան քույրերը, ցույց էր տալիս, որ խեւ Ֆոմայից, ըստ էության, չէին նեղացել: Համարյա չէին նեղացել:

Երբ քույրերը կորան դարպասների ետեւում, խեւ Ֆոման ասաց.

Ես կատարել եմ քո խնդրանքը Պրոխորի վերաբերմամբ: Եթե քեզ ճիշտ եմ հասկացել գետի այն կողմում, դու չէիր ուզում, որ իշխանությունները նրան պատժեն:

Ես պարզապես նրա համար էի աղոթում, ասաց Արսենին Ուստինային: Խնդրում էի՝ Տեր Աստված, մի թող նրան այս մեղքի մեջ, չի իմանում, ինչ է անում: Աղոթիր նրա համար եւ դու, սեր իմ:

Խեւ Ֆոման գլխով արեց.

Քո աղոթքի հաշվով արդեն տեղյակ են զավելիչյեցիները, ես նրանց ասել եմ: (Նա ձեռքով ցույց տվեց արդեն հավաքված զավելիչյեցիներին, եւ նրանք հաստատեցին ասվածը): Վախենամ, որ քո էդ տեսակի աղոթքը վերջինը չլինի: Մռութդ, ախպերս, դեռ շատ կդգեն եւ ո՛չ մեկ անգամ:

Պարտադիր չէ, առարկեցին զավելիչյեցիները:

Հենց այդ է, որ կա, ասաց Ֆոման: Իսկ ռուս մարդը բարեպաշտ է: Նա գիտի, որ խեւը պիտի դիմանա տառապանքներին, եւ գնում է մեղքի, որպեսզի ապահովի նրա այդ տառապանքները: Իսկ ինչ-որ մեկը պիտի չարագործ լինի, չէ՞: Իսկ ինչ-որ մեկը պիտի ունակ լինի ծեծելու կամ էնտեղ, ասենք թե, սպանելու խեւին, ի՞նչ եք կարծում:

Դե, էդ ինչ բան է, անհանգստացան զավելիչյեցիները: Ծեծելը՝ էդ մի բան չի, բայց սպանելը՝ մի՞թե բարեպաշտություն է: Մահացու, եթե կարելի է այդպես անվանել, մեղք է:

Ե՛ս քո դիվիզիան, սրտանց բացականչեց խեւ Ֆոման: Այնպես չէ, որ ռուս մարդը՝ միայն բարեպաշտ չէ: Զեկուցում եմ ձեզ, համենայն դեպս, նա նաեւ անմիտ է եւ անողոք, եւ ցանկացած գործ նրա մոտ մեկեն կարող է շուռ գալ մահացու մեղքի: Չէ որ այստեղ եզրը այնքան նուրբ է, որ ձեզ՝ ռամիկներիդ, հասկանալի էլ չէ:

Զավելիչյեցիները չգիտեին, ինչ պատասխանեն: Չգիտեր նաեւ խեւ

Կարպը, որ կանգնել էր ամբոխի մեջ: Լավագույն դեպքում՝ շվարած նա լսում էր իր խեւ Ֆոմային բերանը բաց:

Ըհը՛, դու էլ ե՞ս այստեղ, մեղսագործ, գոռաց խեւ Ֆոման, եւ խեւ Կարպը լաց եղավ: Վաղուց է չեմ խփել քո մռութին: Ֆոման սկսեց մոտ գնալ Կարպին, բայց սա արդեն ծլկել էր միաբանության կողմը, եւ ամբոխը նրա թիկունքում ետ էր նահանջել:

Վա՛յ իմ գլխին, ճչաց խեւ Կարպը:

Դուրս պոկվելով ամբոխից՝ նա նետվեց դեպի միաբանության դարպասները: Պարզվեց դարպասները փակ են: Կարպը, որքան ուժ ուներ, թմբկահարեց դրանք եւ սարսափով էր հետեւում, թե ինչպես իրեն մոտեցավ Ֆոման: Չսպասելով դարպասների բացվելուն, Կարպը ձեռքերը մեջքին դրեց եւ նետվեց դեպի գետը: Իսկ երբ դարպասները բացվեցին, կողքով վազում էր Ֆոման: Դարպասներից նայող քույրերին Ֆոման լեզու ցույց տվեց եւ շարունակեց վազել: Քույրերն իրար նայեցին՝ ընտելացած չզարմանալուն:

Չե՞մ ասել քեզ՝ նստիր Զապսկովյեում, գոռում էր Ֆոման խեւ Կարպին:

Կարպը ձեռքերով ծածկեց դեմքը եւ շարունակեց վազել հեռու: Նրա բոպիկ ներբանները աղմուկով չլփում էին խոտի վրա: Հենց գետի մոտ նա կանգ առավ: Ափերը ետ տանելով դեմքից, տեսավ, որ իրեն է հասնում Ֆոման:

Կարպ, Կարպ, Կարպ, ճչաց խեւ Կարպը:

Նա ոտքը դրեց ջրի երեսին եւ զգուշորեն առաջ գնաց: Չնայած փչող քամուն, Վելիկոյե գետի ալիքներն այդ օրը բարձր չէին: Սկզբում Կարպը գնում էր դանդաղ եւ ինչ-որ անվստահ, սակայն նրա քայլափոխն աստիճանաբար արագանում էր:

Ֆոման մոտ վազեց գետին եւ ջուրը փորձեց ոտքի բութ մատով: Ցախջախված գլուխն օրորելով, նա նույնպես ոտքը ջրին դրեց: Արսենին եւ զավելիչյեցիները հետեւում էին, թե ինչպես են խեւերը գնում մեկմեկու ետեւից: Նրանք մի թեթեւ թռչկոտում էին ալիքների վրա եւ ծիծաղելի թափահարում էին ձեռքերը՝ հավասարակշռություն պահելով:

Ջրի վրա, ուրեմն, միայն քայլում են, ասացին զավելիչյեցիները: Իսկ վազել՝ առայժմ դեռ չեն սովորել: Գետի մեջտեղում խեւ Կարպը կանգ

առավ: Սպասելով խեւ Ֆոմային՝ նա թափ առած խփեց նրա թշին: Ապտակի զրնգոցը ջրի վրայով թռավ-հասավ ափին կանգնածներին:

Իրավունք ունի, ձեռքերը տարածեցին զավելիչցեցիները: Սա արդեն նրա տարածքն է:

Ոչ մի բառ չասելով, խեւ Ֆոման շրջվեց եւ ուղղվեց քաղաքի իր մասը: Գետի հոսանքի անհամաչափությունը գծագրվել էր ցածրիկ աշնանային արեւի շողերի մեջ: Հայելային մակերեւույթը փոխում էին ծածանքն ու ալիքները: Ջրին երկար նայելիս թվում էր, թե գետը հոսում է հակառակ ուղղությամբ: Այն բանից, գուցեեւ, որ նա արտացոլում էր ամպերի վազքը: Ընդհանուր շարժմանը համընթաց գետի մակերեւույթով սահում էին, հեռանալով իրարից, երկու ֆիգուրիկներ: Միայն Արսենին եւ իրեն շրջապատած Զավելիչցեի բնակիչներն էին մնացել տեղում:

-ԺԸ-

Զմեռվա դեմ Արսենին արդեն ավելի լավ էր քայլում: Նրա ոսկորները կպել էին, եւ հիվանդության մասին հիշեցնում էր միայն երբեմն բռնող տկարությունը: Իրեն ավելի լավ զգալով՝ Արսենին վերադարձավ շիրմատան մոտի իր տունը: Քույրերը համոզում էին նրան մնալ հեռավոր ճգնախուցում, բայց նա աներեր էր:

Օրհնյա՛լ լինես, անտուն եւ թափառական, ասաց մայրապետը եւ թողեց Արսենիին նրա ընտրած բնակատեղում:

Վերադառնալով սերտաճած կաղնիների տակ, Արսենին հասկացավ, որ ետ է վարժվել դժվար կյանքից: Ծաբաթները, որ նա անցկացրել էր ճգնարանում, նա ողբում էր իբրեւ կորսված մի բան, քանզի ստիպեցին իրեն ուշադրություն դարձնել մարմնին: Դրանք, ըստ էության, սառեցրել էին Արսենիին, եւ վերադարձի առաջին օրերին նա ոչ մի կերպ չէր տաքանում: Նա անդադար շշնջում էր, թե գտնվում է ասես ուրիշի մարմնում, բայց դա օգնեց ոչ իսկույն: Օգնեց չորս օր անց:

Յոթերորդ օրը նրա մոտ եկավ կալաչավաճառ Պրոխորը: Նա թեւատակից լուռ հանեց ծակուլիկն ու ծունկի իջավ Արսենիի դեմ: Իր կացարանի դռանը կանգնած Արսենին մոտ եկավ կալաչավաճառ Պրոխորին: Կողքին ինքն էլ ծունկի իջավ եւ գրկեց նրան: Եվ նրա ձեռ-

քից վերցրեց ծակուլիկը:

Ես ծոմ եմ պահել յոթ օր, ասաց Պրոխորը:

Արսենին գլխով արեց, որովհետեւ դա հասկացավ հացի ձեւից եւ նրա բուրմունքից:

Ներիր ինձ, երանելի Ուստին, լաց եղավ կալաչավաճառ Պրոխորը:

Արսենին հպվեց Պրոխորի այտին, իսկ իր ցուցամատին մնաց Պրոխորի արցունքը: Այն քսեց հացի բոլորը: Այն տեղը, որտեղ հացը ներծծեց Պրոխորի արցունքը, այդ տեղը Արսենին կծեծ: Կծածը ծամելով՝ Արսենին ինքը ոտքի կանգնեց եւ բարձրացրեց կալաչավաճառին: Խաչակնքեց եւ ուղարկեց իր տուն: Երբ կալաչավաճառ Պրոխորն անհետացավ պատի բացվածքում, Արսենին վերցնելով ծակուլիկը, դուրս ելավ: Միաբանության պատի մոտ ոչ հարուստ մարդիկ էին կանգնած: Բաժանելով ծակուլիկը մասերի՝ Արսենին տվեց նրանց:

Այդ օրվանից կալաչավաճառ Պրոխորը Արսենիին այցելում էր ոչ հազվադեպ: Ամեն անգամ նա ծակուլիկ էր բերում, լինում էր նաեւ՝ ոչ միայն այդ: Արսենին երախտագիտությամբ էր ընդունում հացերը: Պրոխորի գնալուց հետո նա դրանք տանում էր միաբանության պատի մոտ եւ բաժանում չունեւոր մարդկանց:

Ժամանակի ընթացքում, սակայն, Արսենիից ծակուլիկներ սպասում էին ոչ միայն նրանք: Գալիս էին մարդիկ քաղաքից եւ Մերձպսկովյեից, եւ նրանցից շատերը համարվում էին ունեւոր: Նրանք քաղցից չէին տանջվել, բայց գիտեին, որ Արսենիի ձեռքի հացերն անսովոր համով են ու օգտակար: Նրանց դիտարկմամբ, այդ հացերը ուժ էին տալիս, կտրում էին արնահոսությունը եւ լավացնում էին նյութափոխանակությունը:

Լսելով հաց բաժանելու մասին, մի անգամ Արսենիի մոտ եկավ պսկովցի փոխիշխան Գավրիիլը: Գավրիիլը կես ծակուլիկ ստացավ եւ ուղեւորվեց դրանով իր տուն: Ստացած հացը կերան՝ նա, իր կինը եւ տարբեր տարիքի չորս երեխաները: Հացը նրանց դուր եկավ, եւ նրանք իրենց լավ զգացին, թեեւ մինչ այդ, ըստ էության, բավականին լավ էին զգում:

Դա էլ հենց ֆենոմենն է, արժանի՝ ցանկացած աջակցության, ասաց փոխիշխան Գավրիիլը:

Նա մեկնեց Արսենիի մոտ եւ քույրերի ներկայությամբ նրան հանձ-

նեց մի քսակ արծաթ: Ի զարմանք փոխիշխան Գավրիիլի, Արսենին քսակն ընդունեց: Հեռանալով, փոխիշխանը միաբանության մոտ մարդ թողեց, որ հետեւեր, թե խեւն ինչպես է տնօրինում հանձնված միջոցները: Նույն օրվա երեկոյան մարդը հայտնվեց փոխիշխան Գավրիիլին եւ նրան զեկուցեց, որ Արսենիի առաջին գործը եղավ վաճառական Նիգոդայի մոտ գնալը: Առանձին նշվեց, որ վաճառականի մոտ խեւը մտել է քսակը ձեռքին, եւ դուրս է եկել առանց քսակի:

Այդժամ փոխիշխան Գավրիիլը նորից մեկնեց Արսենիի մոտ եւ հարցրեց նրան, թե ինչո՞ւ է նա փողերը տվել ոչ թե աղքատներին, այլ վաճառականին: Արսենին լուռ նայում էր փոխիշխանին:

Իսկ ի՞նչ կա այստեղ անհասկանալի, զարմացավ պատի բացվածքում կանգնած խեւ Ֆոման: Վաճառական Նեգոդան սնկակցել է, եւ նրա ընտանիքը սովից հալումաշ է լինում: Իսկ ողորմություն ամաչում է խնդրի բարեգութ մարդկանցից քանի դեռ լավ է հագնված: Կհամբերի, բոզի կատուն, մինչեւ որ սատկեն ինքն էլ ու իր ընտանիքն էլ: Ահա եւ Ուստինը նրան փող տվեց: Իսկ աղքատներն իրենք իրենց կկերակրեն, ողորմալը, ոնց էլ լինի, իրենց մասնագիտությունն է:

Փոխիշխան Գավրիիլն ապշեց Արսենիի իմաստնությունից եւ հարցրեց՝ եղբայր Ուստին, քո բարեկեցության համար ի՞նչ է պահանջվում:

Արսենին լուռ էր, եւ այդժամ ասաց խեւ Ֆոման.

Նրա փոխարեն որ ընտրեմ, կընծայե՞ս:

Փոխիշխան Գավրիիլը պատասխանեց:

Կընծայեմ:

Դե տուր նրան մեծ քաղաք Պսկովը, ասաց խեւ Ֆոման: Եվ նա կբավարարի նրանց սնունդը:

Փոխիշխանը բառ իսկ չարտաբերեց, քանզի չէր կարող Արսենիին մի ամբողջ քաղաք տալ: Իսկ խեւ Ֆոման, տեսնելով, որ փոխիշխան Գավրիիլը մտահոգ է, քրքջաց.

Դե մի նեղվիր, այ մարդ: Չես կարող նրան տալ այս քաղաքը՝ մի տուր: Նա առանց քեզ էլ կստանա:

-ԺԹ -

Վերահաս ձմեռը սոսկալի էր: Այդպիսի ձմեռներ չէին հիշում ո՛չ պսկովցիները, ո՛չ էլ առավել եւս՝ Արսենին: Ընդ որում, Արսենին չէր հիշում նաեւ այն, թե քանի ձմեռ է անցել Պսկով իր ժամանումից հետո: Երեւի մեկ: Իսկ գուցեեւ, բոլոր ձմեռները միախառնվել են եւ այլեւս կապ չունեին ժամանակի հետ: Ձմեռ դարձան առհասարակ:

Սկզբում քաղաքը ծածկում էր ձյունը: Ձյունն իջնում էր օր ու գիշեր, նա իր գերառատությամբ ցնցում էր գետին եւ օդ՝ Աստծո աշխարհը կերպափոխելով միասնական կաթնյա թանձրուկի: Ձյունը ծածկում էր գոմերը, տները եւ ցածրիկ եկեղեցիները նույնիսկ: Դրանք դառնում էին հսկայական ձնակույտեր, որոնց կատարներից երբեմն երեւում էին խաչերը: Ձյունը ճզմում էր տանիքները հին տների, եւ դրանք փլվում էին չոր ճարճատյունով: Մարդիկ հայտնվում էին բաց երկնքի տակ, որից անընդմեջ թռչում էր ձյունը՝ լցվելով վնասված տներն օրվա ընթացքում: Ձյունը տեղաց երեք շաբաթ, հետո խփեց սառնամանիքը:

Սառնամանիքն անողոք էր: Նրա ուժը եռապատկում էր քամին, որից փրկում չկար: Քամին ցած էր գցում անցորդներին, մտնում էր դռան ճեղքերի մեջ ու սուլում ոչ կիպ տեղադրված գերանների վրայից: Նրա թռիչքում զոհվում էի թռչունները, մանր գետերում սառչում էին ձկները, իսկ անտառներում գազաններն էին տապալվում: Նույնիսկ կրակով տաքացող մարդիկ մարմնի տկարությունից չէին կարողանում տանել այդ մեծազոր սառնամանիքը: Այդ օրերին քաղաքում, մերձակա գյուղերում եւ ճամփեքի վրա ցրտահարվեցին բազում մարդիկ ու անասուններ: Աղքատներն ու թափառականները հանուն Քրիստոսի, տանելով մեծագույն աղետներ, մորմոքում էին ի խորոց իրենց սրտերի, եւ լալիս էին դառնորեն, եւ անդադար ցնցվում էին, եւ սառչում:

Մայրապետի հրահանգով Արսենիին տեղավորեցին հեռավոր ճգնախուցում, որտեղ իրեն պատվիրված էր սպասել վայրագ սառնամանիքի ավարտին: Երեք օրն անցնելուց հետո Արսենին լքեց հեռավոր ճգնախուցը եւ վերադարձավ շիրմատան մոտի իր տուն: Մնալու բոլոր խնդրանքներին նա պատասխանում էր լռությամբ:

Հասկանում ես, նա ասաց Ուստինային, հեռավոր ճգնախուցում իմ մարմինը ջերմանում է եւ սկսում իր պահանջմունքներն առաջ բերել:

Բայց դե, սեր իմ, բավ է սկսես: Մատդ տալիս ես՝ ամբողջ ձեռքդ է լափում: Ավելի լավ է, սեր իմ, լինեմ թարմ օդում: Որպեսզի չսառչեմ, երեւի սկսեմ անցնել Զավելիչյեով: Պիտի հետեւեմ, ինչ է տեղի ունենում սպիտակ աշխարհում, քանզի երբեք դեռ չի եղել այսքան սպիտակ:

Եվ Արսենին սկսեց ման գալ Զավելիչյեով: Եվ երբ նա հանդիպում էր ցրտահարվածների կամ հարբածների, կամ ծնակույտերում քնելու հակվածների, ապա մինչեւ իրենց տներն էր հասցնում նրանց: Իսկ եթե մեկը տուն չէր ունենում, ապա նմաններին տանում էր մուրացիկների տուն, որ կառուցվել էր ցուրտ եղանակի համար հին մարագում, Հովհաննեսի միաբանության պատի մոտ:

Մի անգամ, գնալով սառած գետի երկարությամբ, Արսենին գետի վրա տեսավ խեւ Ֆոմային, որն ասաց նրան սառույցի վրայից.

Սիրալիր իմ ընկեր, սահմանը քաղաքի մասերի միջեւ այսուհետ ջնջված է բնական ճանապարհով: Հարկ է հավաստել՝ մեզ բաժանող պատնեշը ժամանակավորապես կորել է անտեսանելի հաստ սառույցի տակ: Եթե կամենում ես ցրտահարված տարրեր հավաքել նաեւ իմ տարածքում, բան չունեմ առարկելու:

Խեւ Ֆոմայի ասվածից հետո Արսենին դադարեցրեց սահմանափակվել Զավելիչյեով: Նա գնում էր քաղաք եւ նույնիսկ Զապսկովյե, ուր ապրում էր նաեւ Կարպը: Այդ մասին վկայում էին բոպիկ հետքերը, որոնք տարածվում են Հովհաննեսի միաբանությունից՝ ճառագայթներով: Ամեն առավոտ հայտնաբերվում էին նոր հետքեր, որոնցով Պսկովի բնակիչները ճանաչում էին, թե քաղաքի որ մասում է եղել Արսենին նախորդ գիշեր:

Մի օր Արսենին տուն տարավ գիշերաշրջիկին: Նա գալիս էր պանդոկից, եւ նրա ուժերը սպառվում էին: Հաճախ նստում էր ճանապարհին՝ պահանջելով Արսենիից իրեն հանգիստ թողնել: Նման դեպքերում Արսենին ստիպված էր անծանոթին քաշել ձյան վրայով՝ մի քիչ ուժ տալով: Սահքը դժվար էր, որովհետեւ անծանոթը ճամփի առաջին կեսի ձյունը, հռհռալով, քերել էր սապոգի ծայրով: Մեկ ժամ անց նա սառեց, եւ քեֆը թողեց: Նա անձայն դեգերում էր Արսենիի ետեւից զգալիորեն սթափված ու կատաղի:

Նրա կացարանի որոնումներում շրջան կատարելով անցնում էին մերձքաղաքային խրճիթները: Գիշերվա դեմ երկնքում երեւաց լուսինը,

եւ դա էլ հարցը որշեց: Ավլված ծնակոյտերից մեկում ճանաչելով իր խրճիթը՝ անծանոթը վճռականորեն ուղղվեց դեպի առմուտք: Այդպես վճռականորեն էլ վեր բարձրացավ եւ իր ետեւից դուռը փակեց:

Արսենին շուրջը զննեց: Երկարատեւ դեգերումը նրա միտքը շեղել էր, եւ հիմա չէր կարողանում դատել՝ քաղաքի որ կողմում է: Լուսինը նորից քաշվեց ամպերի տակ: Արսենին հասկացավ, որ եթե մի քանի քայլ էլ անի խրճիթից, կկորցնի նաեւ այն: Զգում էր, որ ինքն էլ այլեւս չի կարողանա յոլա գնալ առանց ջերմության:

Հիմա այնպիսի պահ է, սեր իմ, որ ինձ պետք է գոնե մի ժամ լինել տաք տեղում, ասաց Արսենին Ուստինային: Դու կարող ես իմ փոխարեն չանհանգստանալ, ոչինչ, ինչպես տեսնում ես, սարսափելի բան չկա: Պահանջվում է միայն շնչառությունս տեղը բերեմ, սեր իմ, եւ ես կարող եմ վերադառնալ:

Արսենին ջանաց ժպտալ, բայց հասկացավ, որ չի զգում ո՛չ շրթունք, ո՛չ այտ: Երերալով ետ եկավ դեպի խրճիթ եւ բարձրացավ նրա սառցակալած առմուտքին: Թակեց դուռը: Ոչ ոք չբացեց, եւ նա թակեց կրկին: Դուռը բացվեց: Շեմքին կանգնած էր իր ծանոթը: Նա ետ-ետ գնաց, ասես Արսենիի համար տարածություն բացելով, իսկ Արսենին տխրեց, քանի որ հասկացավ, որ իրականում այս մարդուն թափ առնել է պետք: Բացողը հարայ-հրոցով վազեց եւ երկու ձեռքով բոթեց Արսենիին առմուտքից:

Երբ Արսենին գիտակցության եկավ, նորից լուսավորում էր լուսինը: Նա մի ափ ձյուն առավ եւ տրորեց փայտացած դեմքը: Կողմ նետած ձյունը արնոտ էր: Լուսնի լույսի ներքո Արսենին տեսավ ուրվագծերը հեռավոր տների: Ճոճվելով՝ նա գնաց դեպի դրանք: Տները խարխուլ էին, եւ Արսենին հասկացավ, որ այնտեղ ապրում են աղքատ մարդիկ: Նրա թակոցին մարդիկ դուրս եկան մահակներով: Նրանք ասացին.

Գնա ու մեռի, խելառ, աստ չկա տեղ քո եւ մեզ համար:

Այդ մարդկանց մեջ կարեկցանք չհայտնաբերելով՝ Արսենին լքեց նրանց: Գնաց տների երկայնքով եւ փողոցի ծայրին նկատեց մի թեքված մարագ: Երբ նրա աչքերն ընտելացան մութին, մարագի անկյունում նկատեց մի քանի զույգ աչք: Աչքերում արտացոլվում էր լուսնի լույսը, որ ներս էր թափանցել ծածկի ճեղքից: Արսենիին նայում էին խոշոր շներ: Նա չորեքթաթ արեց եւ սողաց դեպի շները: Շները խուլ

գռմռում էին, բայց վնաս չհասցրին Արսենիին: Նա պառկեց շների միջեւ եւ նիհրեց: Երբ արթնացավ, շները նրա կողքին չէին արդեն:

Ի՜նչ գարշելի եմ ես, ասաց Արսենին Ուստնային: Ես լքված եմ Աստծուց եւ մարդկանցից: Եվ նույնիսկ շները, քանի որ հեռացան, ինձ հետ չեն ուզում գործ ունենալ: Եվ հենց ինձ համար էլ նողկալի է իմ կեղտոտ ու կապտած մարմինը: Այս ամենը ցուցանում է այն, որ իմ մարմնական գոյությունն անիմաստ է եւ հասնում է ավարտին: Այնպես որ, ո՛չ իմ աղերսներով, սեր իմ, պիտի ներման արժանանաս:

Արսենին պպզեց, գլուխը թեւերի մեջ առավ ու թաքցրեց ծնկների միջեւ: Նա գիտակցեց, որ չի զգում արդեն ո՛չ գլուխ, ո՛չ ձեռք, ո՛չ ծունկ: Թույլ լսում էր միայն սիրտը: Միայն սիրտը դեռ չէր շղթայվել սառնամանիքով, որովհետեւ գտնվում էր խոր ներսում մարմնի: Լավ է, խորհում էր Արսենին, որ մարմնական մասիս արդեն հրաժեշտ եմ տվել: Հրաժեշտ տալ նրան, որը դեռ չի սառչել, կլինի, դատելով ամեն ինչից, քանիցս դյուրին:

Եվ երբ Արսենին այդպես մտածեց, նա զգաց, որ աստիճանաբար ներսից իրեն պատում է ջերմությունը: Բացելով աչքերը՝ Արսենին իր առջեւ տեսավ սքանչելի տեսքով մի պարմանու: Նրա դեմքը լույս էր տալիս, ինչպես արեւի ճառագայթը, եւ ձեռքում բռնել էր մի ճյուղ, ծածկված ալ ու ճերմակ ծաղիկներով: Այդ ճյուղը նման չէր անցավոր աշխարհի ճյուղի, եւ նրա գեղեցկությունն էր աներկրային:

Սքանչելի պարմանին, որ ձեռքին ճյուղ էր բռնել, հարցրեց.

Արսենիե, որտե՞ղ ես հիմա գտնվում:

Նստած եմ խավարում, շղթայված երկաթով, մահվան օթեւանում, պատասխանեց Արսենին:

Այդժամ պարմանին ճյուղով հարվածեց Արսենիի դեմքին եւ ասաց.

Արսենիե, անհաղթելի կյանքն ընդունիր քո ամբողջ մարմնով եւ մաքրվիր ու քո տառապանքների վերջը թող լինի այս մեծազոր սառնամանիքը:

Եվ այդ բառերի հետ Արսենիի սիրտը մտան ծաղկանց բուրմունքն ու կյանքը, ընծայված նրան՝ երկրորդ անգամ: Իսկ երբ աչքերը բացեց, ապա հայտնաբերեց, որ պարմանին դարձել է անտեսանելի: Եվ Արսենին հասկացավ, ով է այդ պարմանին: Նա հիշեց կենարար բառերը ժամերգության: Եթե Աստված կամենա, մարմինը կհաղթահարի:

Որովհետեւ ըստ բնական էության ծիսակարգի Արսենին պիտի մեռներ: Սակայն, դեպի մահ թռչողը, բռնվեց եւ վերադարձվեց կյանք:

-Ի-

Այդ օրվանից Արսենիի ժամանակն ընթացավ այլ կերպ: Ավելի ճշգրիտ՝ այն պարզապես դադարեց շարժվել եւ կեցավ խաղաղության մեջ: Արսենին տեսավ աշխարհում տեղի ունեցող անցքերը, սակայն նշեց նաեւ այն, որ դրանք տարօրինակ ձեւով տարանջատվել են ժամանակից եւ այլեւս կապ չունեն ժամանակի հետ: Երբեմն նրանք շարժվում էին մեկը մյուսի ետեւից, ինչպես եւ նախկինում, երբեմն ընդունում հակառակ կարգը: Հազվադեպ՝ հարձակվում առանց որեւէ կարգի, անխղճորեն խճճելով հերթականությունը: Եվ ժամանակը չէր կարող նրանից գլուխ հանել: Այդպիսի անցքերը կառավարելուց ժամանակը հրաժարվում էր:

Այստեղ պարզվեց, որ անցքերը ոչ միշտ են անցնում ժամանակի մեջ, ասաց Արսենին Ուստինային: Դուրս են մղված ժամանակից: Եվ քեզ, սեր իմ, դա քաջ հայտնի է, իսկ ես բախվում եմ դրա հետ առաջին անգամ:

Արսենին դիտարկում է, թե ինչպես է հալվում գարնանային ձյունն, ու պղտոր ջրերը քույրերի ամրացրած ջրհորդանի միջով հոսում են Վելիկոյե գետը: Ամեն գարնան քույրերն այդ ջրհորդանը մաքրում են, որովհետեւ աշնանն այն խցանվում է տերեւներով՝ կաղնու եւ թխկենու: Այդ տերեւները քամին ավլում բերում է Արսենիի տուն, եւ Արսենին չի մերժում նման փետրաներքնակը, որքանով այն դիտվում է իբրեւ անձեռակերտ:

Արսենին տեսնում է, թե ինչպես է գիշերային անձրեւից հետո ծիկրակում վաղ հունիսյան արեգակը: Ջուրը դեռ թրթռում է տերեւների վրա: Անջատվում գոլորշու ամպիկներով Հովհաննես Կարապետի գմբեթից եւ չքվում անհիրական կապույտ երկնքում: Կոթնելով ցախավելին՝ ջրի գոլորշացմանն է հետեւում քույր Պուլխերիան: Ցերմ քամին հպվում է նրա մազերի ցորնային հյուսքին, որ դուրս է եկել գլխաշորի տակից: Քույր Պուլխերիան մտածկոտ սանրում է խալն ու մեռնում արյան վարակումից: Նա պառկած է թարմ հողաթմբում, մի քանի սաժեն

հեռու Արսենիի տնից: Նրա հողաթումբը ծածկվում է ձյունով:

Ուժգին տերեւաթափի ժամանկ Արսենիի մոտ է գալիս մայրապետը: Նա ասում է.

Եկել է ժամն իմ այս անցողիկ աշխարհից ներկայանալու անանց հավերժական հանգրվան: Օրհնիր ինձ, Ուստինե:

Տերեւները շրշյունով սահում են նրա զգեստով: Արսենին օրհնում է մայրապետին:

Ես չունեմ օրհնելու նման իրավունք, ասում է նա Ուտինային: Այնպես որ, սեր իմ, այդ անում եմ ոչ ըստ օրենքի, այլ հանդգնելով, քանի որ այդ կինն է խնդրում: Ընդ որում, նրա ճանապարհն իրոք շատ է հեռու, եւ նա գիտի այդ մասին:

Մայրապետը մեռնում է:

Ամառային շոգ օրով Հովհաննես Կարապետի եկեղեցու առաջ, հենված ցախավելին, կանգնել է քույր Ագաֆյան: Նա նայում է տաճարի գմբեթին, եւ ձեռքը ձգվում է դեմքի խալը: Կես ճամփին քույր Ագաֆյայի ձեռքը կասեցնում է Արսենիի ձեռքը: Նա ժամանակին է հասցնում:

Կապրի, մտածում է հեռանալով Արսենին:

Հաստատուն քայլվածքով նա գնում է Իոան քահանայի տուն: Մի ցատկով բացում է դուռը: Արսենիի ետեւից ներս է խուժում սառնամանիքի կծան լեզուն: Երեց Իոանն ու նրա ընտանիքը նստած են սեղանի շուրջ: Երեցի կինը պատրաստվում է սեղան գցել: Նա ուշադիր նայում է աղոտ լուսամուտին, որի ետեւում չկա ոչինչ, բացի ձյունից: Քահանա Իոանը նայում է իր դիմաց, կարծես ջանալով տնտղել իր ապագա ճակատագիրը: Իրիցկինն անձայն ժեստ է անում՝ հրավիրելով Արսենիին իրենց հետ կիսելու իրիկնահացը: Ժեստն անջատվում իրիցկնոջից եւ թռչում է բաց դռնով: Արսենին այն չի նկատում: Երեխեքը սեղմվում են իշոտնուկին եւ հառում են հայացքներն իր ձեռքերին, որ դրված են ծնկներին: Մատները քաշում են շապիկների կոշտ քաթանը: Արսենին իրենց համար նման է գնդածեւ կայծակի, որ տեսել է իրենց հայրը: Հայրը սովորեցրել է, որ երբ ներս է թռչում գնդածեւ կայծակը, ավելի լավ է չշարժվել եւ չմատնվել: Արտաշնչել եւ քարանալ: Նրանք քարանում են, Արսենին սեղանից թռցնում է դանակը եւ նետվում է երեց Իոանի վրա: Երեց Իոանը շարունակում է նայել իր առջեւ եւ ասես չի նկատում Արսենիին: Իրականում նա ամեն ինչ տեսնում է, բայց հարկ չի

համարում դիմադրել ճակատագրին: Արսենին դանակը թափահարում է հենց դեմքի դեմ երեց Իոանի: Երեցը չի շարժվում քիչ առաջվա պես եւ մտածում է, հնարավոր է, գնդածեւ կայծակի մասին: Այն մասին, որ կայծակն իրեն հայտնաբերել է: Արսենին դանակը նետում է հատակին եւ դուրս է վազում տնից: Երեց Իոանը դրանից թեթեւություն չի զգում: Նա հասկանում է, որ կատարվածը՝ կանխագուշակում է: Դա միայն փայլատակ էր, եւ նա սպասում է կայծակի գալուստին: Եվ գլխի է ընկնում, որ այս անգամ նրա հետ չհանդիպելը հեշտ չի լինելու:

Արսենին գնում է Անդրպսկովյեով, եւ նրան հետամտում են տղեկները: Նրան գցում են կամրջակի տախտակների վրա: Մի քանի զույգ ձեռքեր նրան սեղմում են տախտակներին, թեեւ ինքը չի դիմադրում: Նա, ում ձեռքերն ազատ են մնացել, Արսենիի շապիկի փեշերը մեխում է տախտակներին: Արսենին նայում է, թե ինչպես են ծիծաղում տղեկները, եւ ինքն էլ է ծիծաղում: Ամեն անգամ, երբ տղեկները մեխում են իր շապիկը կամրջակին, ինքը ծիծաղում է նրանց հետ միասին: Եվ անձայն խնդրում է, որ Աստված դա մեղք չհամարի: Նա կարող էր շնորհքով պոկել շապիկը մեխերից, բայց չի անում: Արսենին ուզում է տղեկներին հաճելի բան անել: Նա ելնում է կտրուկ, եւ նրա շապիկի փեշը խզզոցով պոկվում է: Տղեկները քրքջոցից գլորվում են գետնի վրա: Օրվա մնացած մասը Արսենին աղբի մեջ փնտրում է շապիկի ծվենները եւ կարում է դրանք պոկված փեշի հետ: Նոր կարկատաններ տեսնելով նրա շապիկի վրա՝ տղեկներն ավելի շատ են ծիծաղում:

Երբ նրանք փախչում են, լռություն է իջնում: Մնում է միայն մի տղա, որ մոտ է գալիս Արսենիին եւ գրկում է նրան: Եվ լաց է լինում: Արսենին գիտի, որ այդ տղան իրեն խղճում է, բայց բոլորի առջեւ ամաչում է ցույց տալ, եւ Արսենիի սիրտը սեղմվում է: Նա ուզում է, որ այդ տղան ուրախանա, որովհետեւ նրա դիմագծերում ինքը ճանաչում է մի այլ երեխայի դիմագծերը: Եվ Արսենին արտասվում է: Նա համբուրում է տղայի ճակատն ու փախչում է, որովհետեւ նրա սիրտը պատրաստ է պայթելու: Նա վազում է, եւ հեծկլտոցները ցնցում են իրեն, եւ նրա այտերից արցունքները թռչում են տարբեր կողմեր՝ ճամփեզրին ծլելով զանազան աննկատ բույսերի տեսքով:

Գարնան կողմերը Վելիկայա գետը բարձրանում է, եւ ինչ-որ տեղ ջրի երես են ելնում փայտասալարկները: Անդրպսկովյեում ցեխ է: Տան

ճամփին, տրորելով այն, անցնում է երեց Իոանը: Գունդ-գունդ ցեխի չլմփոց է լսում նա իր թիկունքում: Կամաց շրջվում է: Առջեւը մարդ է կանգնում դանակով, ամբողջովին ցեխակոլոլ: Երեց Իոանը ձեռքը լուռ սեղմում է կրծքին: Գլխում փայլատակում է Արսենիի կանխատեսության հիշողությունը: Սրտում աղոթք է հիշում, որն ինքը չի հասցնում արտաբերել: Մարդը նրան հասցնում է քսաներեք դանակի հարված: Ամեն մի վրա բերելուց նա հառաչում է եւ ախ է քաշում լարումից: Երեց Իոանը մնում է պառկած ցեխի մեջ: Այնտեղ էլ կորչում են մարդու հետքերը: Ասում են, որ կարծես թե մարդ էլ չի եղել, այլ եղել է միայն ցեխի ալիք: Երեց Իոանի թիկունքում սլացած եւ իսկույն էլ տարածված ճամփով մեկ: Մի քիչ հետո լսվում է անմարդկային մի ճիչ: Այն թռչում- անցնում է Վելիկայա գետը եւ Պսկով գետը, բռնում Պսկովի բոլոր քաղաքները: Դա ճիչն էր իրիցկնոջ:

Գալիս են փոխիշխան Գավրիիլի անունից: Ասուն են.

Դու՝ Ուստինե, մարդ ես հատուկ, եւ քո այցելությունը բարեբեր է: Փոխիշխանի կնոջ ատամները երեք շաբաթ է ցավում են, արդյոք չե՞ս կարող օգնել նրան: Արդեն շատ բժիշկներ են եկել նրա մոտ, իսկ թեթեւացում փաստորեն չկա: Եվ կառավարիչը քեզ կանչում է իր մոտ՝ հույս դնելով քո օգնությանը:

Արսենին նայում է կառավարիչ Գավրիիլի անունից եկածներին: Նրանք սպասում են: Նրանք ասում են, որ փոխիշխանուհին ինքը կարող էր գալ քեզ մոտ գերեզմանատուն, սակայն հենց գերեզմանատուն գալ էլ ինքը չի ուզում: Արսենին օրորում է գլուխը: Նա ձեռքը մտցնում է բերանը, հանում է լնդից իմաստության ատամն ու հանձնում է եկածներին: Սրանք հասկանում են, որ այս էլ երանելիի պատասխանն է իրենց խնդրանքին: Ամենայն զգուշավորությամբ նրանք Արսենիի ատամը բերում են փոխիշխանուհուն: Փոխիշխանուհին այն դնում է իր բերանը, եւ ատամնացավն անցնում է:

Փոխիշխան Գավրիիլը իր շքախմբով գալիս է Արսենիի մոտ: Նրա համար բերում է թանկարժեք հագուստներ եւ խնդրում է Արսենիին զգեստափոխվել: Արսենին զգեստափոխվում է: Նրան եւ փոխիշխան Գավրիիլին մատուցում են մի-մի գավաթ Ֆրանգստանի գինի: Փոխիշխանը խմում է, իսկ Արսենին խոնարհվում եւ, շրջվելով հյուսիսարեւելք, դանդաղ իր գավը հեղում է հողին: Գինու շիշը, անկումից պա-

րույր անելով, շողշողում է հղկված կողմերով: Թանկարժեք խոնավությունն ագահորեն ներծծվում է խոտերում: Արեւը զենիթում է: Փոխիշխան Գավրիիլը խոժոռվում է:

Սի՞թե չես հասկանում, փոխիշխանին հարցնում է խեւ Ֆոման, ինչու Աստծո ծառա Ուստինը քո գինին հեղեց հյուսիս-արեւելք:

Փոխիշխանը չի հասկանում եւ նույնիսկ հակված չէ թաքցնելու:

Դե դու, մարդ Աստծո, ասում է խեւ Ֆոման, եւ մեկից մեկ անտեղյակ ես, որ Նովգորոդում հիմի հրդեհ է, եւ Աստծու ծառա Ուստինը հասնում է մարելու իր ձեռքի տակ եղած միջոցներով:

Փոխիշխան Գավրիիլը ուղարկում է իր մարդկանց Մեծ Նովգորոդ, որպեսզի ստույգ իմանա տեղի ունեցածի մասին: Վերադառնալով, մարդիկ զեկուցում են փոխիշխան Գավրիիլին, որ նշյալ օրվա առավոտյան Նովգորոդում իրոք սաստիկ հրդեհ է բռնկվել, բայց կեսօրին մոտ նովգորոդցիներին անհայտ ուժից մարել է: Փոխիշխանը վառում է ծիթաճրագը: Մինչեւ դռների ետեւում կանգնածներին հասնում են խուլ բառերը նրա աղոթքի:

Արսենին իրեն նվիրած հագուստով գնում է պանդոկ: Պանդոկի այցելուները հանում են Արսենիի շորերն ու հագուստի փոխարեն տրված փողերով նպատակադրվում խմել երեք օր ու գիշեր: Արսենին իր մոտ էր պահել հին հագուստի կապոցը, որն իսկույն հագնում է: Նա թեթեւացած շունչ է քաշում: Պանդոկի այցելուները պատվիրում են առաջին գավաթները: Տեսնելով այդ՝ Արսենին խփում գցում է գավաթները նրանց ձեռքից: Գավաթները գլորվում են անագածայն, պարունակությունը թափելով հատակին: Այցելուները երկրորդ գավաթն են պատվիրում, բայց Արսենին նորից չի թողնում խմեն:

Նրանցից մեկն ուզում է խփել Արսենիի դեմքին, սակայն պանդոկապանը հայհոյում է նրան, որ չանի: Պանդոկապանը գիտի, որ ծեծի համար ստիպված ինքն է պատասխան տալու եւ դուրս է անում այցելուներին քացիներով: Այցելուները ցրվում են իրենց տները սթափ եւ փողերով: Խլելով փողերը, տուն եկածների հարազատները չեն կարողանում գտնել այս երեւույթի ողջամիտ բացատրությունը: Նրանք ընկնում են տարակուսանքի մեջ:

Իսկ դու գիտե՞ս, Արսենիին հարցնում է խեւ Ֆոման, քանի տարի է անցել աստ քո հայտնվելու օրից ի վեր:

Արսենին թոթվում է ուսերը:

Դեհ, քեզ պետք էլ չի, որ իմանաս, ասում է խեւ Ֆոման: Ապրիր առայժ ժամանակից դուրս:

Արսենին ցեխագնդեր է շպրտում Մերձպսկովյեցի մի քանի պատվարժան բնակիչների վրա: Նրանց թիկունքում ինքն անսխալ տարբերում է խոշոր եւ մանր դեւերին: Բնակիչները դժգոհ են:

Մխիթարանքը լոկ նրանում է, հաղորդում է Արսենին Ուստինային, որ դեւերը դժգոհ են առավել:

Երբեմն քարեր է նետում եկեղեցիների դռներին: Այնտեղ նույնպես կուտակվում են բավարար քանակի դեւեր: Տաճարի ներսը մտնել նրանք չեն հանդգնում եւ սեղմվում են մուտքի մոտ: Նայելով, թե ինչպես է Արսենին գիշերներն աղոթում, նոր մայրապետն ասում է:

Աստծո ծառա Ուստինը ցերեկն աշխարհի հետ խնդում, իսկ գիշերով ողբում է աշխարհը:

Միաբանություն են բերում Եպրաքսիային՝ հյուսն Արտեմի դստերը: Երկու ամիս առաջ ամբարում Եպրաքսիայի վրա է ընկնում ձեղունի չորսուն, այդ օրվանից նա պառկած է անշարժ: Հիվանդությունը չի թողնում վերադառնա կյանք, բայցեւ բա՛ց էլ չի թողնում, որ մեռնի: Եվ Եպրաքսիայի շրջապատողներին պարզ չէ, երկու վիճակներից որին է նա ավելի մոտ:

Եպրաքսիային տեղավորում են խուց-հյուրասենյակում եւ ի վերա նրա աղոթք են կարդում: Լավ օրերին նրան դուրս են բերում միաբանության բակ եւ աղոթք են կարդում մաքուր օդում: Քամին շարժում է Եպրաքսիայի մազերը, բայց նա ինքը մնում է անշարժ: Բակում նրա անկողնուն է մոտենում Արսենին: Նա բռնում է Եպրաքսիայի ձեռքը:

Կյանքն ամբողջովին չի թողել նրան, ասում է Արսենին Ուստինային: Ես զգում եմ, որ նա կարող է արթնանալ: Միայն թե պետք է օգնել նրան:

Արսենին Եպրաքսիայի ձեռնափը դնում է ճակատին: Նրա շուրթերը շարժվում են: Եպրաքսիան բացում է աչքերը: Նա տեսնում է Արսենիին եւ իրեն շրջապատած քույրերին: Տաք ամառային օր է: Կտրուկ են շուքերը ծառերի: Նրանք խառնվում են արեւի շարժման տակտի հետ: Լորենու տերեւները կպչուն են եւ հազիվ նկատելի թրթռում են քամուց:

Մենք տոնում ենք Եպրաքսիայի վերադարձը, ասում է նոր մայրապետը, բայցեւ հիշում ենք նաեւ այն մասին, որ դա անցողիկ է, քանզի ամեն բան է ժամանակավոր այս աշխարհում:

Իսկ ես նրա հետ ուզում էի խոսել գոնե մի անգամ, ասում է հյուսն Արտեմին: Իսկ հիմա ես նրա հետ խոսելու եմ մշտապես: Այն իմաստով, իհարկե, որ ժամանակավոր է: Եվ արտասվում եմ Աստծո անսահման գթասրտության եւ բարեհաճության մասին մտքից, որն իջել է Աստծո ծառա Ուստինի վրա: Եվ մենք բոլորս, կանգնածները (առանց բացառության), ունակ են շնչելու տաք ամռան օրվա բույրերը եւ լսելու թռչունների ճռվողյունը: Առանց բացառության, որովհետեւ, եթե Արսենին չլիներ, այդ բացառությունը կլիներ իմ դուստր Եպրաքսիան:

Հյուսն Արտեմին ծունկի է իջնում Արսենիի դեմ եւ համբուրում նրա ձեռքը: Արսենին ձեռքը թափահարում է, եւ սառույցի վրայով անցնում է Վիլիկոյե գետը, եւ հայտնվում Սերձպսկովյեում: Վաղ առավոտյան կալաչավաճառ Սամսոնը հանում է իր ապրանքը: Նա սպասում է խեւ Կարպին, որ պետք է իրենից թոցնի մի կալաչ: Խեւ Կարպը հայտնվում, չանթում է կեսկոպեկանոց կալաչն ու տանում, ձեռքերը մեջքին դրած, կալաչավաճառ Սամսոնից հեռու: Կալաչավաճառը ժպտում է բարի կալաչային ժպիտով: Բերանի գոլորշին եղյամ դարձած նստում է նրա մորուքին: Նա ձեռքով շոյում է մորուքն ու ասում.

Աստծո մարդն է, հասկանում ես: Երանելի:

Ամբողջ զգացումունքներն արտահայտելու համար կալաչավաճառային (ինչպես միշտ) բառերը չեն բավում: Խեւ Կարպը (ինչպես միշտ) վայր է գցում կալաչը, եւ այն գետնից վերցնում են չքավոր մարդիկ: Կարպը ծամում է իր բերանի մեջ մնացածը:

Երբ նրա բերանն ազատվում է, նա գոռում է.

Ո՞վ է իմ ուղեկիցը լինելու միչեւ Երուսաղեմ:

Կալաչը գետնից բարձրացրած մարդիկ տարակուսում են: Նրանք ասում են.

Խենթություն է անում մեր Կարպը: Ո՞վ կգնա Պսկովից Երուսաղեմ:

Ո՞վ է լինելու իմ ուղեկիցը միչեւ Երուսաղեմ, գոռում է հավաքվածներին խեւ Կարպը:

Հավաքվածները պատասխանում են:

Դե, Երուսաղեմը, հեռու է: Ո՞վ կհասնի այնտեղ:

Խեւ Կարպը աչքն էլ չճպպացնելով նայում է Արսենիին: Արսենին լսում, սակայն չի շրջվում: Նրա կոկորդը սեղմվում է: Նա ուզում է մի լավ նայել խեւ Կարպին, նա հենց դրա համար է եկել: Կարպը կուչ է գալիս, գլուխը քաշում է ուսերի մեջ ու հեռանում:

Կարպ, Կարպ, Կարպ, ասում է մտածկոտ:

Միաբանություն են բերում թուլացած Դավթին: Դավիթն հիվանդ է իր պատանության օրերից ի վեր: Երբ Դավթին կերակրում են շիլայով, նրա գլուխը վեր են հանում: Երբեմն շիլան թափվում է նրա բերանից: Այդ դեպքում գդալով հավաքում են կզակի վրայից եւ նորից տանում են բերանը: Դավթին ձեռքերի վրա բերում են միաբանության գերեզմանատուն: Զգուշորեն դնում են գերեզմանաթմբին, Արսենիի տան մոտ: Ասում են.

Օգնական եղիր մեզ, Արսենիե, եթե կարող ես:

Արսենին ոչինչ չի պատասխանում: Բաց ձեռքերով շիրիմներից նա եղինջ է պոկում եւ կապ անում: Երբ կապը պատրաստ է, Արսենին դաղում է եկվորների դեմքերն ու ձեռքերը: Նրանք զգում են, որ իրենց ներկայությունն այստեղ ցանկալի չէ: Հեռանում են՝ Դավթին պառկած թողնելով գերեզմանաթմբին: Մի պահ մտածելով՝ Արսենին եղինջով դաղում է նաեւ նրան: Դավիթը դեմքը կնճռոտում է, սակայն շարունակում է պառկած մնալ, քանի որ ուրիշ ելք չունի: Արեւը մայր է մտնում սովորականից ավելի շուտ: Երկնքում հայտնվում է լուսինը:

Արսենին Դավթի կողքին ծունկի է իջնում եւ դիպչում նրա ձեռքին: Զնում է Դավթի սպիտակ եւ գրեթե անկենդան մաշկը: Այդ մաշկը ստեղծված է լուսնալույսի համար: Արսենին շոյում է նրա մատներն ու սկսում է ուժով տրորել: Անցնում է մյուս ձեռքին: Թուլացածին շրջում է փորի վրա: Որքան ուժ ունի՝ տրորում է նրա մեռած մարմինը, ասես նրա մեջ մղելով կենարար ուժեր: Ծփում է Դավթի մեջքը ողնաշարի ուղղությամբ: Ճմռում է Դավթի ոտքերը, որից, կախվելով գերեզմանաթմբից, ցնցվում են Դավթի ձեռքերը: Հիվանդն ասես մեծ տիկնիկ լինի: Գիշերվա ընթացքում երկու անգամ նոր մայրապետը դուրս է գալիս գերեզմանատուն եւ կրկնակի տեսնում Արսենիի չընդհատվող աշխատանքը: Այգաբացի առաջին շողերի հետ Դավիթը դանդաղ կանգնում է ոտի: Նա փայտացած մի քանի քայլ է անում դեպի տաճարն, ուր նրան արդեն սպասում են իր մտերիմները: Ուժերը լքում են Դավթին,

քանի որ նրա մկանները արդեն անսովոր են քայլքին: Ստերիմները նետվում են դեպի Դավիթն ու բռնում են նրա թեւատակերից: Նրանք հասկանում են, որ առաջին քայլերը՝ ամենակարեւորն են: Բայցեւ ամենադժվարը:

Ինչ է այս, հարցնում է նոր մայրապետը ներկաներին, բայց նախեւառաջ հենց իրենից: Մեր եղբայր Ուստինի թերապեւտիկ միջոցառումների արդյո՞ւնքն է արդյոք, թե՞ Տիրոջ հրաշքը, հայտնված՝ անկախ գիտակցությունից, մարդկային ներգործության միջոցով: Ըստ էության, պատասխանում է մայրապետն ինքն էլ, մեկը մյուսին չի հակասում, քանզի հրաշքը կարող է լինել աշխատանքի արդյունք, բազմապատկված՝ հավատով:

Վելիկոյե գետի մոտ եւ պսկովյան անտառներում Արսենին խոտեր է հավաքում: Պսկովյան հողերն ավելի հարավ են, քան բելոզյորսկյանը եւ մեծ քանակությամբ խոտեր են ծնում: Այստեղ կան նույնիսկ այնպիսիք, որոնք իր ժամանակին չի նկարագրված Քրիստափորի կողմից: Նրանց ներգործության մասին Արսենին կռահում է հոտից եւ տերեւների ձեւից: Այդպիսի խոտեր նա չորացնում է միաբանության խոտանոցում եւ փորձարկում իր վրա: Չորացնում է նա նաեւ այլ խոտեր:

Ոմն քրիստոսասերներ Վելիկոյե գետում մի մեծ ձուկ են բռնում եւ նվիրում երեց Կոնստանտինին: Իրիցկին Մարֆան ձուկը պատրաստում է ընթրիքին: Նա զգուշացնում է ամուսնուն, որ մեծ ձուկը մեծ փշեր ունի եւ հորդորում է նրան լինել զգույշ: Երեց Կոնստանտինը անբասիր մարդ է, ցրված է ուտում ձուկը՝ չմտածելով փշերի մասին: Մտածելով կառուցվող ծխական եկեղեցու մասին: Նա փորձում է այս էլ որերորդ անգամ հաշվել գնված նյութատեսակների քանակը եւ տագնապում է, որ դրանք չեն բավի: Երեց Կոնստանտինը միանգամից չի նկատում, թե ինչպես է ձկան նուրբ մարմնից իր կոկորդը մտնում աղեղնաձեւ մի ոսկոր՝ ողնաշարի փշրվածքից: Նա հազում է, եւ բերանից դուրս են թռչում ձկան կտորտանքները, ամեն ինչ, բացի փշից:

Ոսկորը երեք կետերով կառչում է կոկորդից: Այն այլեւս ներքեւ չի գնում, բայցեւ չի էլ բարձրանում վեր: Շատ խոր է գնացել, որպեսզի հնարավոր լինի մատներով հանել: Իրիցկին Մարֆան դմփում է մարդու մեջքին, բայց ոսկորը մնում է անշարժ: Երեց Կոնստանտինը փորով պառկում է սեղանի վրա եւ, գլուխը կախելով մինչեւ հատակը,

փորձում է հազալով փուշն հանել: Բերանից փսլինքը հոսում է արյան հետ, բայց փուշը տեղից չի շարժվում եւ ոչ մի վերշոկ:

Երեց Կոնստանտինի մոտ են բերում բժիշկ Տերենտիոսին: Տերենտիոսը խնդրում է հիվանդին բերանը բանալ եւ բերանին է մոտեցնում մոմը: Բայցեւ մոմի լույսի տակ էլ ոսկորը չի երեւում: Տերենտիոսը ջանում է հիվանդի բերանը մտցնել իր երկար մատները, բայց նույնիսկ դրանք ի վիճակի չեն շոշափել ոսկորը: Երեց Կոնստանտինը լուռումունջ ցնցվում է որձկումից եւ ի վերջո պոկվում է բժշկի ձեռքերից: Իրիցկին Մարֆան դուրս է անում Տերենտինոսին խրճիթից:

Նրանք հրաժարվում են բժշկական օգնությունից, հավաքվածներին փողոցում ասում է բժիշկ Տերենտինոսը: Եվ ձեռքը դնելով սրտին՝ նրանք արդարացի են, քանզի ոսկորի խրվածքի խորությունը գերազանցում է արդի բժշկության հնարավորությունները:

Գիշերից հետո երեց Կոնստանտինի չարչարանքները նրան գետով բերում են Մերձպսկովյե: Գալով Հովհաննեսի վանքի գերեզմանատուն՝ երեցին դնում են Արսենիի դիմաց: Բայց հիվանդն այլեւս չի կարողանում կանգնել, նա նստում է գերեզմանասալին: Կոկորդն ուռել է եւ նա խեղդվում է: Աչքերում տառապանք է ու թախիծ,- նրան թվում է, թե իրեն թաղում են արդեն: Նա վախենում է, թե իր ցավը չի անցնի նաեւ մահից հետո:

Արսենին պպզում է երեց Կոնստանտինի դիմաց: Շոշափում է նրա վիզը երկու ձեռքերով: Երեցը լուռ տնքում է: Հանկարծակին Արսենին բռնում նրա ոտքից եւ պահում է գլխիվայր: Թափ է տալիս անսպասելի ուժ ու ցասումով: Արսենիի ցասումն ուղղված է հիվանդության դեմ: Հիվանդի կոկորդից դուրս են գալիս հառաչանքներ, կարմիր լորձունք եւ փուշը:

Երեցը պառկած է գետնին եւ ծանր է շնչում: Կիսաբաց աչքերով նայում է տառապանքների պատճառին: Գերեզմանատանը պատահած մարդկանցից ոմանք ուզում են իրեն բարձրացնել, բայց նա ձեռքով կանգնեցնում է. իրեն շունչ առնել է պետք: Իրիցկին Մարֆան Արսենիի դեմ ծունկի է իջնում: Արսենին կռանում է, բռնում է իրիցկնոջը ոտքից՝ ջանալով բարձրացնել նաեւ նրան: Իրիցկինը ճչում է: Նա չափազանց ծանր է, իսկ Արսենին արդեն այդքան ուժ չունի:

Գործնականում, վերամբարձելի չէ, մեկմեկու շշնջում են ներկանե-

ը, օրորելով գլուխները:

Արսենին թողնում է իրիցկին Մարֆային եւ լքում գերեզմանատունը: Իրիցկինը թաշկինակի մեջ է փաթաթում փուշն իբրեւ ընտանեկան շնորհակալական հիշողություն:

Փոխիշխան Գավրիիլի աղջիկ Աննան մահանում է: Կյանքի տասնվեցերորդ տարում: Սայթաքելով լաստանավի վրա՝ Աննան ընկնում է ջուրն ու քարի պես իջնում հատակ: Նրա ետեւից նետվում են մի քանի մարդ: Նրանք սուզվում են մի քանի ուղղություններով, փորձելով գուշակել, թե ուր է ներքաշվել կույսի մարմինը: Դուրս են գալիս ջրից շնչակտուր, թոքերում ջուր հավաքած եւ նորից խորասուզվում ջրի մեջ: Դժվարությամբ են հասնում Վելիկոյե գետի հատակին, բայց նաեւ այնտեղ ձեռքներին չի հասնում փոխիշխանի դուստրը: Ցուրը պղտոր է: Ցուրն արագընթաց է եւ լի ջրապտույտներով: Սուզվածներից մեկը քիչ է մնում խեղդվի, բայց սուզակների ճիգերն ապարդյուն են: Ցրահեղձի մարմինը գտնում են հոսանքի ներքեւում մի քանի ժամ անց, երբ ջուրը նրան բերում է եղեգնուտ:

Փոխիշխան Գավրիիլը վշտից իր տեղը չի գտնում: Նա ուզում է իր դստերը հուղարկավորել Հովհաննեսի միաբանությունում եւ գնում է մայրապետի մոտ: Մայրապետն ասում է նրան, որ Աննային ավելի լավ է թաղեն կավե ամանում: Փոխիշխան Գավրիիլը բռնում է մայրապետի ուսից եւ երկար ցնցում: Մայրապետը նայում է հարյուրապետին առանց վախի, սակայն թախիծով: Նա թույլ է տալիս փոխիշխանին իր դստերը թաղել միաբանությունում: Հարյուրապետը կարգադրություններ է անում, որ Աննային զուգեն ոսկյա եւ արծաթյա զարդերով, իբրեւ նա նույնիսկ մահացած չի կորցրել իր գեղեցկությունը: Լաստանավը մահացածի մարմնով դիմավորում են Զավելիչյեի եւ Պսկովի այլ մասերի բնակիչներ: Բոլորի աչքերում արցունք կա: Թաղման արցունքներն արարչական են, Աննային հանձնում են հողին: Հեռանում են բոլորը, բացի փոխիշխանից: Նա մնում է մի քանի ժամ, պառկում է թարմ գերեզմանաթմբի վրա: Երբ իջնում է գիշերը, փոխիշխանին տանում են: Հենված սերտաճած կաղնիներին՝ գերեզմանատանը մնում է միայն Արսենին: Թվում է, թե նա էլ է սերտաճել՝ փոխառելով դրանց կեղեւագույնն ու անշարժությունը:

Այդ տպավորությունը սխալական է, քանի որ Արսենիի էությունը

փայտեղեն չի, այլ մարդեղեն է եւ աղոթական: Նրա ներսում բաբախում է սիրտը, իսկ շրթունքները շարժվում են: Նա երկնային ընծաներ է աղերսում նորահանգուցյալ Աննայի համար: Նրա աչքերը լայն բացվում են: Նրանցում արտացոլվում են մոմի լեզվակները, որ անվստահ հատում են շիրմատունը: Կրակը շրջանցում է խաչերն ու բարձրանում ճմաթմբերի վրա: Հասնելով Աննայի գերեզմանին՝ կանգ է առնում: Անտես ձեռքը նրան մեխում է գերեզմանին մոտ կոճղի վրա: Այուս ձեռքը կաղամախու մի ճյուղ է ջարդում եւ դրանով կրակը ծածկում վանքի կողմից: Մոմի կայծկլտացող շրջանում հայտնվում է մի բահ: Այն առանց դժվարության հատում է գերեզմանաթումբը: Թարմ հողը ճիգեր չի պահանջում: Փորողը մինչեւ ծնկներն արդեն գերեզմանում է: Կանգնում է՝ մինչեւ գոտկատեղն է: Նրա դեմքը մոմի հետ հայտնվում է մի մակարդակում: Արսենին ճանաչում է այդ դեմքը:

Ժիլան է, ասում է նա կամաց:

Ժիլան դողդողում եւ բարձրացնում է գլուխը: Նա ոչ ոքի չի տեսնում:

Եթե դու, Ժի՛լա, մինչեւ կուրծքդ մտնես այս գերեզմանը, ապա արդեն երբեք դուրս չես գա այդտեղից, ասում է Արսենին: Չի՞ ասված արդյոք քո գողացած գրառումներում. մեղսագործների մահն անողոք է:

Ժիլային բռնում է դողը: Նա նայում է մութ երկնքին:

Մի՞թե հրեշտակն է սա:

Իսկ նշանակություն ունի՞, ով եմ ես, պատասխանում է Արսենին, հրեշտա՞կ եմ, թե՞ մարդ: Սկզբում դու կողոպտում էիր մարդկանց, իսկ հիմա դարձել ես գերեզմանագող: Ստացվում է, որ դեռ կենդանության օրոք դու ձեռք ես բերում հողային հատկանիշներ եւ դրանից կարող ես նույնաժամ հող դառնալ:

Էդ դեպքում ի՞նչ անեմ, հարցնում է Ժիլան, եթե ես ինձ համար տաժանք եմ:

Անդադար աղոթիր, իսկ սկզբի համար հողը լցրու:

Ժիլան լցնում է գերեզմանը:

Եթե դու հրեշտակ չլինեիր, դու չէիր իմանա, ոնց է իմ անունը, ասում է նա ինչ-որ մեկին վերեւում: Որովհետեւ քաղաք Պսկովում ես առաջին օրն եմ:

Քիչ առ քիչ Արսենիի բժշկարար շնորհի փառքը տարածվում էր ամ-

բողջ Պսկովով: Նրա մոտ գալիս են մարդիկ տարբեր հիվանդություններով եւ խնդրում են իրենց թեթեւություն տալ: Նայելով խեւի կապույտ աչքերի մեջ նրան պատմում են իրենց մասին: Նրանք զգում են, թե ինչպես են այդ աչքերում սուզվում իրենց դժբախտությունները: Արսենին ոչինչ չի ասում եւ նույնիսկ գլխով չի անում: Ուշադրությամբ լսում է: Թվում է, թե նրա ուշադրությունը յուրահատուկ է, քանի որ, ով հրաժարվում է խոսքից, իրեն արտահայտում է լսողության միջոցով:

Երբեմն Արսենին նրանց խոտեր է տալիս: Քույր Ագաֆյան, որ խրվել էր նրա պարկի մեջ, գտնում է Քրիստափորի համապատասխան գրառումը եւ հիվանդին ընթերցում բարձրաձայն: Արջնդեղ խոտն ստացողին նշանակվում էր՝ այն եփել ջրում արմատով. թարախը քաշում է ականջներից: Մեղուներից խայթվածին տալիս են քնջութ խոտը եւ պատվիրվում սրբվել: Արսենին լուռ ունկնդրում է քույր Ագաֆյայի ընթերցանությունը, թեեւ առաջարկվող խոտերի նշանակությունը գերագնահատելու հակված չէ: Բժշկական կենսափորձը հուշում է նրան, որ դեղորայքը բուժման մեջ՝ գլխավորը չէ:

Արսենին օգնում է ոչ բոլորին: Զգալով իր օգնության անզորությունը՝ նա լսում է հիվանդին եւ շրջվում է նրանից: Երբեմն ճակատով հպվում է նրա ճակատին, եւ աչքերից արցունքներ են հոսում: Նա հիվանդի հետ կիսում է նրա ցավը եւ ինչ-որ չափով՝ մահը: Արսենին հասկանում է, որ հիվանդի հեռանալուց հետո աշխարհը չի մնում նախկինը, եւ իր սիրտը լցվում է տրտմությամբ:

Եթե իմ մեջ լույս լիներ, ես կապաքինեի նրան, նման հիվանդի մասին Արսենին ասում էր Ուստինային: Բայց ես չեմ կարող ապաքինել իմ մեղքերի ծանրության պատճառով: Այդ մեղքերն ինձ չեն թողնում հասնել այն բարձրությանը, որտեղ այդ մարդու փրկությունն է: Ես, սեր իմ, նրա մահվան մեղավորն եմ եւ դրանից էլ լալիս եմ եւ՛ նրա հեռացման, եւ՛ իմ մեղքի համար:

Բայց նաեւ այն հիվանդները, ում Արսենին չի կարող բուժել, զգում են նրա հետ շփման բարերարությունը: Արսենիի հետ հանդիպումներից հետո ցավը, ինչպես իրենց թվում է, թուլանում է, եւ դրա հետ մեկտեղ էլ պակասում է վախը: Չապաքինվողներն այդ բանի մեջ տեսնում են նրան, ով ունակ է հասկանալ տառապանքի խորությունը, քանզի ցավի հետազոտման խնդրում նա իջնում է մինչեւ դրա հատակը:

Արսենիի մոտ ոչ միայն հիվանդներն են գալիս: Գերեզմանատանը հայտնվում են հղիներ: Նրանց նայում է արցունքների միջով եւ ձեռքը դնում է փորերին: Գալիս են ծծմայրերը, որոնց կաթը ցամաքել է: Արսենին նրանց թզարմատ խոտն է տալիս: Եթե խոտը չի օգնում, Արսենին կանանց տանում է զավելիչյան փարախներից մեկն ու հորդորում կթել կովին: Նայում է, թե ինչպես է լարումից կարմրած նրանց մատների միջով կաթում սպիտակ խոնավությունը: Ինչպես է երերում կովային կուրծքը: Ետեւի դռների մեջ կանգնում են տերերը: Նրանք նույնպես նայում են: Նրանք գիտեն, որ խեւի ու կնոջ այցելությունն օրհնյալ է: Արսենին նշանացի ցույց է տալիս, որպեսզի ծծմայրը կաթը խմի: Նա խմում ու զգում է, թե ինչպես են լցվում սեփական պտուկները: Եվ շտապում է իր ծծկերի մոտ:

Արսենին անցնում է Վելիկոյե գետը: Ընթացս շարժման նկատում է, որ սառույց չկա արդեն, բայց ջուրը դեռ սառն է: Անդրպսկովյեի վրա փչում է գետային ցուրտ քամին դեռ վաղ առավոտից՝ սառեցնելով քաղաքի այդ մասը: Խեւ Ֆոման կկոցելով աչքերը, նայում է հեռուն, ինչոր տեղ: Նրա մորուքը շրջում է քամին: Խեւ Կարպը կանգնել է դեմքը ձեռքերով փակած: Կիսաշրջված խեւ Ֆոմային: Կալաչավաճառ Սամսոնը չի ստիպում իրեն երկար սպասել եւ հայտնվում է հացերի տեփուրով: Բարի ժպիտը շուրթերին: Խեւ Կարպը հոգնած ձեռքերը վար է առնում դեմքից եւ սեղմում՝ կողպեք է անում մեջքին: Նրա քունքին տրոփում է կապույտ երակը: Նա արդեն, ըստ էության, ջահել չի: Նրա դիմագծերը նուրբ են: Փափուկ բալետային քայլվածքով խեւ Կարպը մոտենում է կալաչաթուխ Սամսոնին եւ ատամներով բռնում ամենամոտ հացը: Մի քանի քայլ ետ անելով տեփուրից՝ խեւ Կարպը շրջվում է: Խղճմտանքով նայում է Սամսոնին: Սամսոնը, դեմքը չփոխելով, հանում է տեփուրն ու խնամքով դնում գետնին: Մի քանի քայլ է անում խեւ Կարպի ուղղությամբ: Բարեկազմ կալաչավաճառը կեստակ է լինում: Նրա ձեռքը մտնում է սապոգի ճիտքը: Այնտեղ՝ փայլողն է, պաղն է եւ սուրսայրը: Կալաչավաճառը կիպ մոտենում է Կարպին: Կարպը մի կողմ է ձգվում: Նա կալաչավաճառից բարձր է եւ վզով զգում է նրա շնչառությունը: Դանակը դանդաղ մտնում է խեւի մարմինը: Երկնայի՛ն ուժեր, շշնջում է կալաչավաճառ Սամսոնը, որքա՛ն եմ սպասել այս օրվան:

ԵՎԳԵՆԻ ՎՈԴՈԼԱԶԿԻՆ

ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ

-Ա -

Ամբրոջո Ֆլեկկիան ծնվել է Սանյանո փոքրիկ վայրում: Սանյանոյից արեւելք, ձիով մեկ օրվա ճամփա է, փռված է Միլանը՝ սուրբ Ամբրոսիայի քաղաքը: Ի պատիվ սուրբի կոչեցին նաեւ տղային: Ամբրոջո: Այսպես էր հնչում այն իր ծնողների լեզվով: Հիշեցնում էր, հնարավոր է ամբրոսիայի մասին՝ անմահների խմիչքի: Տղայի ծնողները գինեգործներ էին:

Մեծանալով, Ամբրոջոն սկսեց նրանց օգնել: Նա խոնարհ կատարում էր այն, ինչ իրեն հանձնարարվում էր, բայց աշխատանքում նա խնդություն չուներ: Ֆլեկկիա կրտսերը, մի անգամ չէ որ գողունի հետեւելով որդուն, ավելի էր դրանում համոզվում: Նույնիսկ բոպիկ ոտքերով չանի մեջ խաղողը ճմռելիս (ավելի ուրախալի ինչ կարող է լինել երեխայի համար), Ամբրոջոն մնում էր լրջմիտ:

Լինելով ժառանգական գինեգործ, Ֆլեկկիա կրտսերը նույնպես չափից ավելի ուրախություն չէր սիրում: Նա գիտեր, որ գինու խմորումը դանդաղ գործընթաց է, նույնիսկ մելանխոլիկ, եւ դրա համար էլ գինեգործության մեջ որոշակի աստիճանի լռակյացություն էր թույլ տալիս: Սակայն մեկուսիությունը, որով գինու արտադրությանն էր մոտ գնում նրա որդին, ինչ-որ այլ բան էր. հոր աչքում այն մերձ էր անտարբերությանը: Իսկ իսկական գինին (մատներից թափ տալով չաչերը Ֆլեկկիա կրտսերը հոգոց հանեց) ունակ է պատրաստել ոչ անտարբեր մարդը միայն:

Ընտանեկան գործին տղայի օգնությունն ի հայտ եկավ անսպասելի կողմով. խաղողի մեծ բերքահավաքից հինգ օր առաջ Ամբրոջոն հայտնեց, որ խաղողը պետք է քաղել անմիջապես: Նա ասաց, որ առավոտյան, երբ ինքը բացեց աչքերը, բայց դեռ լրիվ չէր արթնացել, նրան երեւաց կայծակի տեսիլը: Դա ահեղ կայծակ էր, եւ Ամբրոջոն այն նկարագրեց մանրամասնորեն: Նկարագրության մեջ ներկա էին հանկարծակի թանձրացող խավարը, քամու ոռնոցը եւ սուլոցով թռչող կարկ-

տահատերը հավի ձվի մեծության: Տղան պատմեց, թե ինչպես են խաղողի հասած ողկույզները խփվում բներին ճիլոպի պես, թե ինչպես են կլոր սառցակտորները թռիչքում ծակծկում աջուձախ խփվող տերեւները եւ հողի վրա ընկած պտուղները ճզմում: Այս ամենին ավելացրած՝ երկնքից իջած կապույտ զրնգացող ցուրտը, եւ աղետի վայրը ծածկվեց ձյան բարակ շերտով:

Այդպիսի կայծակ Ֆլեկկիա կրտսերը տեսել էր միայն մեկ անգամ, իսկ տղան չէր տեսել երբեք: Սակայն պատմածի բոլոր մանրամասները ճշգրտորեն համընկնում էին նրա հետ, ինչը իր ժամանակին դիտարկել էր հայրը: Հակված չլինելով միստիկային, Ֆլեկկիա կրտսերը տատանվելուց հետո, համենայն դեպս, ականջ դրեց Ամբրոջոյին եւ անցավ խաղողաքաղին: Նա ոչինչ չասաց հարեւաններին, որովհետեւ վախենում էր ծաղրուծանակից: Բայց այն բանից հետո, երբ հինգ օր անց Սանյանոյի գլխին իրոք պայթեց ահեղ կայծակը, Ֆլեկկիաները միակ գերդաստանը եղան, որ այդ տարի բերք էին հավաքել:

Թուխ պատանյակին այցելեցին նաեւ ուրիշ տեսիլներ: Դրանք առնչվում էին կյանքի զանազան ոլորտներին, բայց գինեգործությունից ահագին հեռու էին արդեն: Այսպես, Ամբրոջոն կանխագուշակեց պատերազմը, որը ծագեց 1494 թվականին Պյեմոնտի տարածքում ֆրանսիական եւ Հռոմեական սրբազան կայսերության թագավորների միջեւ: Գինեգործի որդին պարզ տեսնում էր, թե ինչպես են արեւմուտքից արեւելք Սանյանոյի մոտով քայլարշավում առաջավոր ֆրանսիական զորամասերը: Տեղի բնակչությանը ֆրանսիացիները գրեթե ձեռք չէին տալիս, միայն՝ համալրելու համար մթերապաշարը. խլում էին մանր անասունները եւ դե քսան տակառ էլ պյեմոնտական գինի, որն իրենց վատը չթվաց: Այդ տեղեկությունը հաղորդվեց Ֆլեկկիա ավագին 1457 թվականին, այսինքն շատ ավելի վաղ, ինչն, ըստ էության, թույլ էլ չտվեց նրան դրանից հնարավոր օգուտը կորզել: Մարտական գործողությունների մասին կանխագուշակումները նա մոռացավ արդեն մի քանի շաբաթ անց:

Ամբրոջոն կանխագուշակեց նաեւ Քրիստափոր Կոլումբոսի կողմից Ամերիկայի հայտնագործումը 1492 թվականին: Այդ իրադարձությունը նույնպես չգրավեց հոր ուշադրությունը, որքանով Պյեմոնտում գինեգործության վրա նկատելի ազդեցություն չունեցավ: Իսկ տղային՝ տե-

սիլը տակնուվրա արեց, քանզի ուղեկցվում էր Կոլումբոսի բոլոր երեք նավատորմիղների ուրվագծերի չարագուշակ լուսարձակումով: Չարանշան լույսը դիպավ նաեւ հայտնագործողի արծվային կիսադեմին: Ճենովացի Կոլումբոն, որ հանգամանքներից դրդված անցել էր իսպանական ծառայության, եղել է, ըստ էության, Ամբրոջոյի հայրենակիցը: Չէինք ուզենա կարծել, որ 1492 թվականի հոկտեմբերի 12-ին այդպիսի մարդը զբաղվել է ինչ-որ անպատշաճ բանով, եւ այդ պատճառով էլ երեխան լուսային էֆեկտները հակված էր բացատրել ատլանտյան մթնոլորտի չափազանց էլեկտրականացմամբ:

Երբ Ամբրոջոն հասակ առավ, նա ցանկություն հայտնեց մեկնել Ֆլորենցիա, որպեսզի սովորի այնտեղի համալսարանում: Ֆլեկկիա ավագը նրան չխոչընդոտեց: Այդ ժամանակ արդեն նա վերջնականապես համոզվեց, որ իր որդին ստեղծված է ո՛չ գինեգործության համար: Ըստ էության, Սանյանոյում բոլորի համար արդեն հասկանալի էր, որ Ֆլեկկիա կրտսերը մի կտրված հացաշերտիկ է, այնպես որ, նրա մեկնումն այդ վայրից սպասում էին օրեցօր: Մեկնումը, սակայն, հետաձգվեց հենց իր՝ Ամբրոջոյի որոշմամբ, ով կարողացավ կանխատեսել, որ մոտակա երկու տարում Ֆլորենցիայում պիտի ժանտախտը մոլեգնի:

Վերջիվերջո պատանին հայտնվեց Ֆլորենցիայում: Այդ քաղաքում ամեն բան այլ էր. այն բոլորովին նման չէր Սանյանոյին: Ամբրոջոն քաղաքը տեսավ ժանտախտից ոտքի կանգնելիս, վեհությունն այնտեղ դեռեւս խառնված էր շփոթի հետ: Համալսարանում Ամբրոջոն ուսանում էր յոթ ազատ արվեստներ: Հասնելով տրիվիումի առարկաներին (քերականություն, դիալեկտիկա, ճարտասանություն), նա անցավ կվադրիումին, որը ներառում էր թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը եւ աստղագիտությունը:

Ինչպես հազվադեպ չէր լինում նախկին ժամանակների համալսարաններում, ուսուցման ընթացքը երկարատեւ եղավ: Այն ներառում էր տքնաջան ուսումնառության մի քանի տարիներ, որոնք ընդմիջվում էին սովորածի վերամտածման նույնքան տքնաջան տարիներով, երբ դադարեցվեց համալսարան այցելությունը, եւ Ամբրոջոն ուղեւորվեց ճանապարհորդելու Իտալիայով: Իսկ իրականում ուսանողի կապը alma mater-ի հետ չխզվեց երբեք, նույնիսկ իր ուղեւորության օրերին ամենահեռավոր անկյունների հետ, բարեբախտաբար, ոչ այնքան մեծ

իր հայրենիքի:

Ամեն ինչից, որի հետ Ամբրոջոն բախտ ունեցավ ծանոթանալու ուսումնառության ընթացքում, ամենաշատ նա պատմությունը սիրեց: Որպես առանձին առարկա համալսարանում պատմություն չէին ուսումնասիրում. Տրիվիումի շրջանակներում այն ուսուցանվում էր որպես ճարտասանության բաղկացուցիչ մաս: Պատմական երկերի վրա պատանին պատրաստ էր տքնել ժամերով: Ուղղորդված լինելով դեպի անցյալ, նրանք (եւ դա հարազատ էր այն տեսիլներին, որոնք ուղղված էին դեպի ապագա) նրա համար դարձան նահանջ ներկայից: Ներկայի երկու կողմերում շարժումն անհրաժեշտ էր Ամբրոջոյին իբրեւ օդ, քանզի բացում էր ժամանակի միաչափությունը, որտեղ խեղդվում էր նա:

Ամբրոջոն ընթերցում էր անտիկ եւ միջնադարյան պատմագիրներին: Ընթերցում էր տարեգրություններ, քրոնիկոններ, ժամանակագրություններ, քաղաքների, հողերի եւ պատերազմների պատմություններ: Նա իմացավ ինչպես են ստեղծվում եւ փլուզվում կայսրությունները, տեղի ունենում երկրաշարժերը, ընկնում աստղերը եւ գետերը դուրս գալիս ափերից: Հատուկ էր նշում մարգարեությունների կատարումը, ինչպես նաեւ նշանների հայտնությունն ու իրականացումը: Ժամանակի այդպիսի հաղթահարումը նրան երեւակվում էր իբրեւ հաստատումն երկրի վրա ոչ պատահաբար տեղի ունեցած ամենայն բանի: Մարդիկ բախվում են իրար (մտածում էր Ամբրոջոն), նրանք թռչում են միմյանց վրա, ինչպես ատոմներ: Նրանք սեփական հետագիծ չունեն, եւ այդ պատճառով նրանց արարքները պատահական են: Բայց նման պատահականությունների ամբողջությունն ունի իր օրինաչափությունը, որն ինչ-որ մասերում կարելի է կանխատեսելի լինել, իսկ լրիվությամբ՝ այն գիտի միայն Նա, Ով արարել է ամենը:

Մի անգամ Պսկովից Ֆլորենցիա եկավ մի վաճառական: Վաճառականի անունը Ֆերապոնտ էր: Տեղի բնակչության ֆոնին նա առանձնանում էր երկար, երկպոչանի մորուքով եւ խոշոր, ծաղկաչեչոտ քթով: Սամույրի մորթիների կապոցից բացի Ֆերապոնտը բերել էր լուրն այն մասին, որ 1492 թվականին Ռուսիայում սպասում են աշխարհի վերջին: Այդ տեղեկություններին Ֆլորենցիայում վերաբերվեցին հիմնականում հանգիստ: Նախեւառաջ՝ ֆլորենտացիները զբաղված էին մի դյուժին ընթացիկ գործերով եւ բաների մասին, որոնք չէին սպառնում անմի-

ջականորեն, շատերը պարզապես մտածելու ժամանակ չունեին: Երկրորդ՝ Ֆլորենցիայում ոչ բոլորն էին պատկերացնում Ռուսիայի գտնվելու վայրը: Նկատի առնելով հենց Ֆերապոնտի անսովոր տեսքը (պարզ չէր, արդյոք նրա հայրենիքում բոլորն ունեն նման քիթ եւ մորուք), Ռուսիայի գտնվելու վայրի հնարավորությունը ենթադրվում էր բնակելի աշխարհից դուրս: Դա բնակչությանը հույս էր ներշնչում, որ ենթադրյալ աշխարհի վերջը միայն Ռուսիայով էլ կսահմանափակվի:

Ֆլորենցիայում բոլոր ապրողներից վաճառական Ֆերապոնտի հաղորդումը թվաց իսկապես կարեւոր միայն մի մարդու՝ Ամբրոջոյին: Պատանին փնտրեց Ֆերապոնտին եւ հարցրեց նրան, ի՞նչ հիմքով է նա եզրահանգել 1492 թվականի աշխարհի վերջի մասին: Ֆերապոնտը պատասխանեց, որ այդ եզրահանգումը ոչ թե ինքն է արել, այլ լսել է Պսկովում բանիմաց մարդկանցից: Ունակ չլինելով ինչ-որ ձեւով հիմնավորել ճակատագրական տարեթիվը, Ֆերապոնտը կատակով Ամբրոջոյին առաջարկեց բացատրությունների համար ուղեւորվել Պսկով: Ամբրոջոն չծիծաղեց: Նա մտախոհ գլխով արեց, քանզի այդպիսի հնարավորությունը չէր բացառում:

Այդ խոսակցությունից հետո նա սկսեց (հին) ռուսերենի դասեր առնել վաճառականից: Ֆլեկկիա ավագը նույնիսկ չէր կասկածում ինչի վրա են ծախսվում իր փողերը: Ամբրոջոն էլ իր հերթին ողջամտորեն հորը ոչինչ չէր ասում. Ռուսիայի գոյությունը Ֆլեկկիա ավագին կթվար էլ ավելի կասկածելի, քան 1494 թվականի պատերազմի մանրամասները՝ երբեմնի նկարագրված իր որդու կողմից: Այդ ժամանակին է վերաբերում Ամբրոջո Ֆլեկկիայի ծանոթությունը ապագա ծովագնաց Ամերիգո Վեսպուչիի հետ: Վեսպուչիի աչքերից Ամբրոջոն առանց դժվարության հասկացավ, թե ուր է տարածվում նրա ուղին: Ակնհայտ էր, որ 1490 թվականին Ամերիգոն կուղեւորվի Սեւիլիա, որտեղ, աշխատելով Ջուանոտո Բեռարդիի առեւտրային տանը, մասնակից կդառնա Կոլումբոսի արշավախմբի ֆինանսավորմանը: Սկսած 1499 թվականից, ոգեւորված Կոլումբոսի հաջողություններով, ֆլորենտացին ինքն էլ կձեռնարկի մի քանի ճամփորդություններ, այն էլ այնքան հաջող, որ նորից հայտնագործված մայրցամաքին կշնորհեն իր, այլ ոչ թե Կոլումբոսի անունը: (Նույն 1499 թվականին,- եւ այդ մասին Ամբրոջոն չկարողացավ չասել վաճառական Ֆերապոնտին,- արքեպիսկոպոս Գենևա-

դի Նովգորոդցին Ռուսիայում առաջին անգամ կկազմի ամբողջական Սուրբ Գիրքը, որն արդյունքում կանվանվի Գեննադիական Աստվածաշունչ:)

Ամբրոջոն Ամերիգո Վեսպուչիի ուշադրությունը հրավիրեց 1492 թվականի ենթադրվող իրադարձությունների տարօրինակ մերձեցմանը: Մի կողմից՝ նոր մայրցամաքի հայտնագործումն է, մյուս կողմից՝ Ռուսիայում սպասվող աշխարհի վերջը: Որքանո՞վ են (Ամբրոջոյի տարակուսանքն է) այդ իրադարձությունները կապակցված, եւ, եթե կապակցված են, ապա ինչպե՞ս: Իսկ չի՞ կարող (Ամբրոջոյի կռահումն է) նոր մայրցամաքի հայտնագործումը ժամանակի մեջ ձգված աշխարհի վերջի սկիզբը լինել: Իսկ եթե դա այդպես է (Ամբրոջոն բռնում է Ամերիգոյի ուսերից եւ նայում նրա աչքերի մեջ), ապա արժե՞ այդպիսի մայրցամաքին տալ իր անունը:

Այդուհանդերձ վաճառական Ֆերապոնտի հետ պարապմունքները շարունակվում էին: Ամբրոջոն կարդում էր վաճառականի ունեցած սլավոներեն Սաղմոսարանը եւ շատ բաներ, պետք է ասել, նրանում հասկանում էր, քանի որ սաղմոսների լատիներեն բնագիրը նա գիտեր անգիր: Ոչ պակաս հետաքքրությամբ նա լսում էր Ֆերապոնտի ընթերցումը: Իր խնդրանքի համաձայն սաղմոսներից յուրաքանչյուը վերընթերցվում էր քանիցս: Դա թույլ էր տալիս Ամբրոջոյին հիշել ոչ միայն բառերը (նա դրանք սերտում էր դեռեւս ընթերցելու ընթացքում), այլեւ առոգանության յուրահատկությունները: Ի զարմանք Ֆերապոնտի, պատանին կամաց-կամաց դառնում էր իր խոսքային կրկնակը: Ամբրոջոյի արտաբերած մի քանի բառերում ռուսական նմուշները գուշակվում էին ոչ իսկույն, բայց երբեմն,- եւ դա հաճախակի էր պատահում,- Ֆերապոնտն ակամա դողում էր՝ իտալացու շուրթերից հնչում էին պսկովյան վաճառականի մաքրագույն ելեւէջները:

Եկավ օրը, երբ Ամբրոջոն հասկացավ, որ պետք է ուղեւորվի Ռուսիա: Վերջինը, որ նրանից լսեցին ֆլորենտացիները, ահավոր ջրհեղեղի կանխասացումը եղավ, որը պիտի թափվեր քաղաքի վրա 1966 թվականի նոյեմբերի 4-ին: Զգոնության կոչելով քաղաքացիներին, Ամբրոջոն ցուցանեց, որ Առնո գետը դուրս կգա իր ափերից եւ փողոցները կողողի 350.000.000 խմ ծավալով ջրային զանգվածը:

Հետագայում Ֆլորենցիան մոռացավ այդ կանխասացության մա-

սին, ինչպես նաեւ մոռացավ գուշակին:

Ամբրոջոն ուղեւորվեց Սանյանո եւ հորը հայտնեց իր պլանների մասին:

Չէ՞ որ այնտեղ է սահմանը բնակելի տարածքի, ասաց Ֆլեկկիա ավագը: Ինչո՞ւ ես գնում այնտեղ:

Տարածության սահմանի վրա, պատասխանեց Ամբրոջոն, ես, գուցեեւ, իմանամ ինչ-որ բան ժամանակի սահմանի մասին:

- Բ-

Ֆլորենցիան Ամբրոջոն լքեց ոչ առանց ափսոսանքի: Այդ տարիներին այնտեղ ոչ քիչ արժանավոր մարդիկ հայտնաբերվեցին (Սանդրո Բոտիչելլին, Լեոնարդո դա Վինչին, Ռաֆայել Սանտին եւ Միքելանջելո Բուոնարոտտին), որի դերը մշակույթի պատմության մեջ պարզ էր իրեն դեռեւս այն ժամանակ: Նրանցից եւ ոչ մեկը, սակայն, չկարողացավ փոքրագույն իսկ պարզություն մտցնել աշխարհի վերջի մասին հարցում,- Ամբրոջոյի համար՝ եզակի նշանակալի: Այդ հարցը չի հուզում նրանց, ինքն իր համար նշեց Ամբրոջոն, քանզի արարում հանուն հավերժության:

Իր կյանքի վերջին օրերին Ֆլորենցիայում Ամբրոջոն արժանացավ մի քանի,- մեծ եւ փոքր,- տեսիլների: Տեսիլները նրան լիովին հասկանալի չէին, եւ դրանց մասին ոչ ոքի չպատմեց: Դրանք չէին վերաբերում ընդհանուր պատմությանը: Իր տեսած իրադարձությունները վերաբերում էին առանձին մարդկանց պատմություններին, որոնցից էլ, կարծում էր Ամբրոջոն, վերջնահաշվում կազմվում է ընդհանուր պատմությունը: Տեսիլներից մեկը՝ ամենաքիչ հասկանալին, վերաբերում էր հյուսիսում գտնվող այն մեծ երկրին, որին ինքը ձգտում էր: Որոշ մտորումներ Ամբրոջոն որոշեց պատմել նրան՝ վաճառական Ֆերապոնտին: Այն համառոտ հետեւյալն էր:

1977 թվականին Յուրի Ալեքսանդրովիչ Ստրոեւը,- քիչ անց՝ պատմագիտության թեկնածու,- Ա.Ա. Ժդանովի անվան Լենինգրադի համալսարանի կողմից գործուղվեց Պսկով՝ հնագիտական արշավախումբ: Յուրի Ալեքսանդրովիչի թեզը, որը նվիրված էր վաղ ռուսական տարեգրությանը, համարյա ավարտված էր, չէին բավում միայն ամփոփ-

ման բովանդակային եզրակացությունները, որը դիսերտանտին, չգիտես ինչու, չէր տրվում: Հենց որ նա անցավ եզրակացություններին, սկսեց թվալ, որ դրանք կիսատ են, պարզունակեցնում են իր աշխատանքը եւ ինչ-որ իմաստով հանգեցնում զրոյի: Հնարավոր է, դիսերտանտը պարզապես գերհոգնել էր: Ծայրահեղ դեպքում այդպես էր կարծում Իվան Միխայիլովիչ Նեչիպոռուկը՝ նրա գիտական ղեկավարը: Որն էլ հենց Ստրոեւին մտցրեց հնագիտական արշավախմբի կազմի մեջ: Պրոֆեսորը ենթադրում էր, որ դիսերտանտին պետք էր մի քիչ հանգստանալ, եւ եզրակացություններն իրենք իրենց կշարվեին: Պրոֆեսորն ուներ ղեկավարման մեծ փորձ:

Պսկովում արշավախմբի մասնակիցներին տեղավորեցին մասնավոր բնակարաններում: Ստրոեւի բնակարանը գտնվում էր Անդրպսկովյեում, Մայիսի մեկի փողոցում, ոչ հեռու Փրկչի Անձստեղծ Պատկերի տաճարից, կառուցված 1487 թվականի մեծ ժանտախտի ժամանակ: Բնակարանը բաղկացած էր երկու սենյակից: Մեծում ապրում էր երիտասարդ կինը հինգ տարեկան տղայի հետ, իսկ փոքրում տեղավորեցին Ստրոեւին: Կնոջը, ինչպես նրան հայտնեցին, անվանում էին Ալեքսանդրա Սյուլլեր, եւ նա ռուսական գերմանուհի էր:

Գերմանուհին Ստրոեւին ներկայացավ որպես Սաշա: Այդպես էին կոչում նաեւ նրա տղային, որը դիմավորեց հյուրին մոր հետ միասին: Տղան գրկեց մոր ոտքը, եւ Ալեքսանդրայի չթե զգեստը վերածվեց կիպ տաբատի: Խորասուզված թեզի մասին մտքերում, Ստրոեւը, համենայն դեպս, նկատի առավ, որ Ալեքսանդրան բարեկազմ ոտքեր ունի:

Տունը Ստրոեւին դուր եկավ: Դա մի հին առեւտրային տուն էր՝ կարմիր աղյուսից: Նրա լուսամուտները երեկոներին լուսավորվում էին դեղնավուն էլեկտրական լույսով: Երբ Ստրոեւը առաջին անգամ վերադարձավ պեղումներից, նա կանգ առավ առմուտքի առջեւ, որպեսզի հիանա դրանց փայլով: Այդ փայլն արտացոլվում էր Պոբեդա ավտոմեքենայի վրա, որը կանգնած էր տան մոտ: Սալարկուղու կլոր գետաքարերի վրա:

Ներս մտնելով, Ստրոեւը տեսավ, որ Ալեքսանդրան տղայի հետ թեյ է խմում, եւ ինքն էլ թեյ խմեց նրանց հետ:

Ինչո՞վ է զբաղվում ձեր արշավախումբը, հարցրեց Ալեքսանդրան:

Պատի ետեւում ինչ-որ մեկը սկսեց ջութակ նվագել:

Մենք հետազոտում ենք Հովհան Նախավկայի տաճարի հիմքը: Անցած հարյուրամյակների ընթացքում այն զգալիորեն նստել է: Ստրոեւը ափերը դանդաղ մոտեցրեց սեղանին:

Տղայի ափերը նույնպես հազիվ էին դիպչում սեղանին: Նկատելով Ստրոեւի հայացքը՝ նա սկսեց մատները տանել սեղանի մոմլաթի նախշերի վրայով: Դրանք բարդ եւ մանր նախշեր էին, սակայն տղայի մատներն ավելի մանր էին: Այդ երկրաչափությունից նա հեշտ էր գլուխ հանում: Հովհաննու միաբանությանը կից էր ապրում խեւ Արսենին, որն իրեն Ուստին էր անվանում, ասաց Ալեքսանդրան: Գերեզմանատան պատի մոտ:

Այժմ այնտեղ պատ չկա:

Նույնիսկ գերեզմանատուն չկա: Ալեքսանդրան Ստրոեւին թեյ ավելացրեց: Գերեզմանատունը դարձել է կոմերիտմիության հրապարակ:

Իսկ հանգուցյալները, հարցրեց տղան: Մի՞թե նրանք կոմերիտական դարձան:

Ստրոեւը խոնարհվեց ուղիղ տղայի ականջին.

Դա կպարզվի պեղումների ընթացքում:

Հաջորդ երեկոյան նրանք մեկնեցին զբոսանքի: Հատեցին Աշխատանքի փողոցը, հասան մինչեւ Որոտացող աշտարակին եւ այնտեղ նստեցին Պսկովոյեի ափին: Տղան մանրիկ քարեր էր նետում գետի մեջ: Ստրոեւը հախճասալիկի մի քանի բեկոր գտավ եւ նետեց դրանք գորտի պես ցատկելու գետի երեսով: Ամենամեծը ջրի վրա ցատկոտեց հինգ անգամ:

Ուրիշ անգամ նրանք ուղեւորվեցին Զավելիչյե: Անցնելով Վելիկոյե գետը՝ Սովետական բանակի կամրջով ուղղվեցին Հովհաննու միաբանության կողմը: Մոտեցան տաճարին եւ երկար կանգնած մնացին պեղումնավայրի եզրին: Փոքրիկ սանդուղքով զգուշորեն իջան ցած: Ծոյեցին հնամյա քարերը, որ ջերմացել էին օգոստոսյան երեկոյին: Առաջին անգամ ջերմացած բազում դարերի ընթացքում: Եվ առաջին անգամ բազում դարերի ընթացքում նրանց ինչ-որ մեկը շոյեց: Այսպես էր մտածում Ալեքսանդրան: Նա այդ քարերի մոտ պատկերացրեց վաղնջական խեւին, եւ չէր կարողանում ինքն իրեն պատասխանել, իրականում արդյո՞ք հավատում էր այն բանին, ինչը նրա մասին կարդացել է: Իսկ եղե՞լ է արդյոք, առհասարակ, խեւը: Իսկ եղե՞լ է արդյոք, հարց է

ծագում, նրա սերը: Եվ եթե եղել է, ապա ինչի՞ է կերպափոխվել անցած հարյուրավոր տարիների ընթացքում: Եվ ո՞վ է այդ դեպքում զգում, եթե սիրահարները վաղուց մոխիր են դարձել:

Ինձ համար լավ է նրանց երկուսի հետ էլ, ասաց Ստրոեւն իր սրտում, որովհետեւ նրանց երկուսի մեջ էլ զգում եմ ինչ-որ հարազատություն: Որոշակի, կարելի է ասել, համահունչ մի բան, չնայած նրա գերմանական ծագմանը: Նա խաղաղ է, խարտյաշ եւ դիմագծերն ուղիղ են: Ինչո՞ւ է նա մենակ իր տղայի հետ, եւ ո՞ւր է նրա ամուսինը: Ի՞նչ է անում նա այստեղ՝ ռուսական գավառում, գետնից աճած կույր լուսամուտների, հնացած ավտոմեքենաների, վրան թողնված վուշե շապիկների (վրադիր գրպաններով) եւ անձրեւներով լվացված, փոշեցան (քամին հազիվ նկատելի օրորում է դրանց տակի փետրախոտը), կնճռապատ ու դեղնադեմ բնակիչների պատվո տախտակի միջեւ: Չգիտեմ, ինքն էլ պատասխանեց, ինչ է անում, քանզի այս աշխարհին օրգանապես չի կապվում: Եվ նա պատկերացրեց Ալեքսանդրա Մյուլլերին լենինգրադյան փոթորկվող փողոցում կամ, օրինակ, Ս.Մ.Կիրովի անվան թատրոնում, շիկնող, երրորդ զանգից առաջ, եւ իր սիրտը դողդողաց, քանի որ իր ուժը կպատեր նրան տեղափոխել այդտեղ:

Հետո նրանք վերադարձան տուն եւ թեյ խմեցին, եւ պատի ետեւում նորից հնչեց ջութակը:

Պարխոմենկոն է նվագում, ասաց տղան: Մենք սիրում ենք լսել նրան:

Ալեքսանդրան թոթվեց ուսերը:

Ստրոեւը ջանում էր տեսնել նրանց երեքին էլ, լուսամուտի մեջ, դեղին էլեկտրական լույսի ներքո, փողոցից, մտովի հայացքով: Իսկ գուցեեւ, նույնիսկ հայացքով՝ Լենինգրադից: Նա հիմա արդեն գիտեր, որ կարոտելու է այդ խոհանոցին, լուսամուտի մոտ կանգնած Պոբեդա ավտոմեքենային, սալարկուղու գետաքարերին եւ Պարխոմենկոյի անտեսանելի ջութակին: Նա արդեն դիտարկում էր նրանց՝ նստածներին, որպես թանկագին լուսանկար, եւ լուսամուտի շրջանակը դրա շրջանակն էր, եւ ջահի լույսը ողողում էր ժամանակի դեղինով: Ինչո՞ւ եմ (մտածեց Ստրոեւը) կարոտում նախօրոք, կանխորոշելով իրադարձությունները եւ վազանցելով ժամանակը: Եվ ինչպե՞ս եմ միշտ իմանում նախօրոք, որ պիտի կարոտեմ: Իսկ ի՞նչն է իմ մեջ ծնում այդ մղկտաց-

նող զգացմունքը:

Ես դպրոցում ռուսաց լեզու եւ գրականություն եմ դասավանդում, ասաց Ալեքսանդրան, բայց դա այստեղ ոչ մեկին չի հետաքրքրում:

Ստրոեւը վազից թխվածքաբլիթ վերցրեց եւ սեղմեց այն ներքեւի շրթունքին:

Իսկ ի՞նչ է նրանց հետաքրքրում:

Չգիտեմ: Լռելով՝ նա հարցրեց.

Իսկ դուք ինչո՞ւ եք ընտրել միջնադարի պատմությունը:

Դժվար է ասելը... Գուցեեւ, նրա համար, որ միջնադարյան պատմաբանները նման չէին հիմիկվաններին: Պատմական իրադարձությունները մեկնաբանելու համար նրանք միշտ փնտրում էին բարոյական պատճառներ: Իսկ անմիջական կապեր իրադարձությունների միջեւ կարծես թե չէին նկատում: Կամ էլ՝ դրան մեծ նշանակություն չէին տալիս:

Ինչպ՞ս կարելի է բացատրել աշխարհը՝ չտեսնելով կապերը, զարմացավ Ալեքսանդրան:

Նրանք նայում էին առօրեականության վերից եւ տեսնում բարձրագույն կապեր: Իսկ բացի դրանից, բոլոր անցքերը կապակցում է ժամանակը, թեեւ այդպիսի կապը այդ մարդիկ չէին համարում հուսալի:

Տղան թխվածքաբլիթը պահում էր ներքեւի շրթունքի մոտ: Ալեքսանդրան ժպտում էր.

Սաշան պատճենում է ձեր ժեստերը:

Երկու շաբաթ անց Ստրոեւը վերադարձավ տուն: Կիսամյակն սկսվում էր եւ, ի հեճուկս սպասումների, սկզբում կարոտ չէր զգում: Չէր զգում նաեւ ավելի ուշ, քանի որ աշնան բոլոր ամիսներին զբաղված էր թեզն ավարտելով եւ նախապատրաստվելով պաշտպանության: Տարվա ամենավերջին Ստրոեւը հաջողությամբ պաշտպանեց: Նրա թեզից բոլորն էին գոհ, հատկապես պրոֆեսոր Նեչիպոռուկը, համոզված, որ դիսերտանտին պեղումների ուղարկելու որոշումը եղավ միակ ճշմարիտը: Նոր տարվա հունվար Ստրոեւը մտավ բեռը նետած, որ երկար ժամանակ կախված էր նրանից եւ, անկեղծ ասած, հաջորդապես նրա գոյությունը թունավորող: Նրա հոգին թեթեւացավ: Այդ անկշռելի, համարյա ճախրող հոգեվիճակում հոգին զգում էր Ալեքսանդրա Սյուլլերի բացակայությունը:

Դա չի նշանակում, որ Ստրոեւը սկսեց մշտապես մտածել Ալեքսանդրայի մասին: Եվ դեռ ավելին՝ ինչ-որ բան ձեռնարկել, որպեսզի տեսնի նրան, որքանով գործելը նրա ուժեղ կողմը չէր: Բայց քնից առաջ, այն հուզումնալի պահին, երբ առօրյա գործերն արդեն նահանջել էին, իսկ երազատեսությունը դեռեւս չէր մոտեցել, նա հիշեց Ալեքսանդրային: Նրա դիմաց լողում էր խոհանոցը, սեղանի վրա կախված կտորե լուսամփոփը եւ տերեւներով նկարազարդված թեյնիկը: Իր անկողնում պառկած Ստորեւը ներշնչում էր հին պսկովյան տան հոտը: Նա պատուհանի տակ քայլերի ձայն էր լսում եւ պատառիկներ նրանց զրույցից: Տեսնում էր տղայի ժեստերը, որոնք իր սեփական ժեստերն էին: Ստրոեւը խաղաղվում էր, եւ նա քնեց: Մի անգամ Ալեքսանդրայի մասին պատմեց իր բարեկամ եւ գործընկեր Իլյա Բորիսովիչ Ուտկինին:

Հնարավոր է, դա սեր է, ասաց Ուտկինը երկմտելով:

Բայց սերը (Ստրոեւը թափահարեց ձեռքը), դա այնպիսի ամենակուլ զգացմունք է, որը, ինչպես հասկանում եմ, պարզապես ջղացնցման է տանում: Գործնականորեն՝ ցնցում է: Իսկ ես այդպիսի բան չեմ զգում: Նրա պակասը ես զգում եմ՝ այո: Ես ուզում եմ կողքին լինել՝ այո: Լսել նրա ձայնը՝ այո: Բայց ո՛չ խենթանալ:

Դու խոսում ես կրքի մասին, որն իրոք խելագարության տեսակ է: Իսկ ես խոսում եմ գիտակցված սիրո մասին եւ, եթե հարմար է, նախորոշված: Քանի որ, երբ որեւէ մեկի կարիքն ես զգում, խոսքը քեզ չբավող քո մի մասին է վերաբերում: Եվ դու տենչում ես միաձուլվել այդ մասի հետ:

Շատ ռոմանտիկ է հնչում, մտածեց Ստրոեւը, բայց ինչպիսի՞ն է այն իրական կյանքում նման հասկացողությամբ: Ահա Ալեքսանդրան, ենթադրենք, որդի ունի, շատ անուշ մի տղա: Բայց նա իմ որդին չի: Նրա հոր մասին ես ոչինչ չգիտեմ: Ստրոեւը ծամում էր շրթունքները: Եվ, ճիշտն ասած, չեմ ուզում իմանալ: Չեմ բացառում, որ այդ մարդու հետ կապված են ինչ-որ մռայլ պատմություններ: Ինչ-որ, լավ բան չսպասենք, անդունդներ կան հենց Ալեքսանդրայի կյանքում: Դե, մեծ հաշվով, բանը իրեն էլ չի առնչվում: Ես պարզապես վախենում եմ, որ չեմ կարողանա հենց տղայի հետ լեզու գտնել:

Մոտավորապես մեկ ամիս անց նա ասաց Ուտկինին.

Ես միշտ մտածում եմ երեխայի մասին: Նա չի՞ կանգնի իմ եւ Ալեքսանդրայի միջեւ:

Մի՞թե նա արդեն համաձայնվել է դառնալ քո կինը:

Իսկ դու մտածում ես, չի՞ համաձայնի:

Ես դա չգիտեմ: Զանգիր, հարցրու:

Նման բաները հեռախոսով չեն որոշում: Ուրեմն՝ մեկնիր:

Հո չասեցիր, Իլյա... Դրան ես դեռ պատրաստ չեմ:

Ես ինքս էլ չգիտեմ, ինչ եմ ուզում, խոստովանեց Ստրոեւն ինքն իրեն: Ես ունեմ բազմաթիվ մտքեր եւ զգացմունքներ, բայց ես նորից չեմ կարող եզրակացություններ անել:

Մարտին Ուտկինն ինքը հարցրեց Ստրոեւին Ալեքսանդրայի մասին:

Ես վախենում եմ, ասաց Ստրոեւը, որ նա կամուսնանա ինձ հետ միայն նրա համար, որպեսզի մեկնի գավառից: Կամ որպեսզի իր երեխան հայր ունենա:

Իսկ դու չես ուզում, որպեսզի նա հեռանա գավառից, եւ նրա երեխան հա՞յր ունենա:

Ինչո՞ւ ես դու այդ մասին հարցնում ինձ:

Որովհետեւ դու տեղի ունեցածին դեռ չես նայել նրա աչքերով: Եթե քեզ հաջողվի դա անել, կնշանակե, դու նրան սիրում ես եւ դու պետք է նրա մոտ մեկնես:

Մայիսի վերջին Ստրոեւն ասաց Ուտկինին.

Գիտես, Իլյա, ես թերեւս մեկնեմ:

Ստրոեւը գնացք նստեց եւ ուղեւորվեց Պսկով: Վագոնի լուսամուտից ներխուժում էր բարդիների խավամազը: Ստրոեւը գնում եւ մտածում էր, որ Ալեքսանդրային չի գտնի այնտեղ: Կմոտենա դռանը եւ նրա առջեւ ոչ ոք դուռը չի բաց անի: Նա ճակատը կսեղմի խոհանոցի լուսամուտի ապակուն: Ափերը կդնի քունքերին, որպեսզի արտացոլանքը չխանգարի, եւ կտեսնի անցած երջանկության փշրանքները: Լուսամփոփը, սեղանը: Սեղանը դատարկ է: Սիրտը սեղմվում է: Հարեւան դռնից կշտամբալից դուրս կգա Պարխոմենկոն (իսկ ես ձեզ համար, հասկանում եք, նվագել եմ), թիկնեղ, կարճատ: Ահա թե ինչ էր թաքնված, պարզվում է, երաժշտության ետեւում: Նրանք չկան, կասի Պարխոմենկոն, մեկնել են ընդմիշտ: Ընդ-միշտ: Դուք չափազանց երկար էիք

պատրաստվում: Ըստ էության, չէ որ բանն այստեղ ժամանակի մեջ էլ չի, քանզի ճշմարիտ սերը ժամանակից դուրս է: Այն կարող է սպասել թեկուզ մի ամբողջ կյանք: (Պարխոմենկոն հոգոց է հանում): Ընթացիկ անցքերի պատճառը ներքին կրակի բացակայությունն է: Ձեր դժբախտությունը, եթե ուզում եք իմանալ, նրանում է, որ ձեզ հատուկ չէ վերջնական եզրահանգում անելը: Դուք վախենում եք, որ ընդունված որոշումը կզրկի ձեզ հետագա ընտրությունից, եւ դա կաթվածահար կանի ձեր կամքը: Դուք հիմա էլ չգիտեք, թե ինչի համար եք եկել: Այդ ընթացքում դուք բաց եք թողել այն ամենալավը, ինչը ձեզ համար պատրաստել էր կյանքը: Ես ձեզ ասեմ, որ դուք ունեիք բոլոր պայմանները, ինչը կարող էր բնությունը մատուցել մարդուն. բնակարան՝ խաղաղ պսկովյան փողոցում, ծեր լորենիներ՝ պատուհանի մոտ եւ լավ երաժշտություն՝ պատից այն կողմ: Թվարկվածներից դուք չօգտվեցիք եւ ոչ մեկից, եւ ձեր ներկայիս ուղեւորությունը, ինչպես նաեւ նախկինը, ժամանակի անտեղի կորուստ է:

Ժամանակի անտեղի կորուստ, մտածկոտ ասաց Ամբրոջոն:

Ժամանակի անտեղի կորուստ, կրկնեց վաճառական Ֆերապոնտը:

- Գ -

Ամբրոջո Ֆլեկկիան Ռուսիայում հայտնվեց կամ 1477-ին, կամ 1478 թվականին: Պսկովում, որտեղ նրան առաջնորդեց վաճառական Ֆերապոնտը, իտալացուն դիմավորեցին զուսպ, բայց առանց թշնամանքի: Նրան ընդունեցին իբրեւ մարդու, ում նպատակները լիովին պարզ չէին: Իսկ երբ համոզվեցին, որ աշխարհի վերջը նրա միակ հետաքրքրությունն է, սկսեցին նրան վերաբերվել ավելի ջերմ: Պարզաբանումը աշխարհի վերջի ժամկետի շուրջ շատերին պատվաբեր զբաղմունք թվաց, քանզի Ռուսիայում սիրում էին մասշտաբային խնդիրներ:

Թող պարզաբանի, ասաց փոխիշխան Գավրիիլը: Փորձը ինձ հուշում է, որ աշխարհի վերջի նշանները մեզ մոտ կլինեն ամենաակնհայտը:

Իտալացու հետ ավելի մոտիկից ծանոթանալով՝ փոխիշխան Գավրիիլը սկսեց նրան հովանավորել: Առանց այդ հովանավորության Ամբրոջոյի համար հեշտ չէր լինի, քանի որ նա ոչինչ չէր արտադրում եւ

առեւտուր չէր անում: Պսկովում, ըստ էության, իր ոչ վատ կյանքի համար նա լիովին պարտական էր փոխիշխանի առատաձեռնությանը:

Գավրիիլին դուր էր գալիս Ամբրոջոյի հետ զրուցելը: Իտալացին նրան պատմում էր պատմական անցած նախանշանների, աշխարհի վերջի կանխանշանների, նշանավոր ճակատամարտերի եւ պարզապես Իտալիայի մասին: Պատմելով իր հայրենիքի մասին, Ամբրոջոն սաստիկ տխրում էր, որ չի կարող հաղորդել լեռնային կապույտ ալիքները, օդի խոնավ աղիությունը, ինչպես նաեւ բազում այլ բաներ, որոնք Իտալիան դարձնում էին աշխարհում գեղեցկագույն վայրերից մեկը:

Եվ դու չափսոսեցի՞ր լքել այդպիսի երկիրը, մի անգամ նրան հարցրեց փոխիշխան Գավրիիլը:

Ափսոս է, իհարկե, պատասխանեց Ամբրոջոն, բայց իմ երկրի գեղեցկությունն ինձ թույլ չի տվել կենտրորնանալ հիմնականի վրա:

Իր ամբողջ ժամանակը Ամբրոջոն նվիրում էր ռուսերեն գրքերի ընթերցանությանը, որոնցում նա ջանում էր գտնել իրեն հուզող հարցի պատասխանը: Բազմաթիվ մարդիկ, իմանալով նրա փնտրտուքների մասին, հարցնում էին աշխարհի վերջի մասին:

Կարծում եմ, որ միակ Աստծուն հայտնի է սա, խուսանավեց Ամբրոջոն: Իմ ընթերցած գրքերում բազմիցս ասված է այս մասին, բայց դրանցում չկա թվային համաձայնություն:

Աղբյուրների տարասությունը Ամբրոջոյին գցում էր շփոթի մեջ, բայց փորձերը՝ պարզելու աշխարհի վերջի տարեթիվը, նա չէր թողնում: Նրան զարմացնում էր, որ, չնայած յոթհազարերորդ տարվա ցուցումին, որպես առավել հավանականը աշխարհի վերջի համար, ահեղ իրադարձության մոտեցում չէր զգացվում: Ճիշտ հակառակը. Ամբրոջոյի փոքր եւ մեծ տեսիլները վերաբերում էին ավելի հեռավոր տարիներին: Ըստ էության, նա դրա համար ավելի ուրախ էր, բայց տարակուսանքը դրանից ավելի էր մեծանում:

6967-ի ամռանը (կարդաց Ամբրոջոն) կազդարարվի Նեռի ծնունդը, եւ կդրդա երկիրը նրա ծնունդից, քանզի մինչ այդ երբեք չի եղել անիծյալ եւ անողոք նմանը,եւ մեծ ողբ կլինի այդժամ ամբողջ տիեզերքում:

Այո (մտածում էր Ամբրոջոն),Նեռը պիտի հայտնվի երեսուներեք

տարի առաջ աշխարհի վերջից, բայց 6967 թվականին աշխարհի արարումից (նաեւ 1459-ին՝ Քրիստոսի ծնունդից) վաղուց էր անցել, իսկ կանխանշանները Նեռի գալստյան դեռ շոշափելի չեն: Դրանից հետեւո՞ւմ է, որ աշխարհի վերջը հետաձգվում է անորոշ ժամանակով:

Օրերից մի օր փոխիշխան Գավրիիլը ասաց նրան.

Ինձ մի մարդ է պետք, որ հասնի մինչեւ Երուսաղեմ: Ես ուզում եմ, որպեսզի ի հիշատակ իմ մահացած Աննա աղջկա, մի կանթեղ կախի Տիրոջ Գերեզմանին: Եվ այդ մարդը կարող ես լինել դու:

Դե ինչ, պատասխանեց Ամբրոջոն, ես կարող եմ լինել այդ մարդը: Դու շատ բան ես ինձ համար արել, եւ ես կտանեմ կանթեղն ի հիշատակ քո մահացած աղջկա:

Փոխիշխան Գավրիիլը գրկեց Ամբրոջոյին:

Գիտեմ, որ դու այստեղ աշխարհի վերջին ես սպասում: Ես կարծում եմ, մինչեւ այդ ժամանակը դու կհասցնես վերադառնալ:

Մի անհանգստացիր, փոխիշխան, ասաց Ամբրոջոն, քանզի եթե սպասելիքը կատարվի, ապա այն նկատելի կլինի ամենուր: Իսկ այցելությունը Երուսաղեմ բարետու:

Փողոցով բերում էին կապկպված կալաչաթուխ Սամսոնին:

Փառավոր, իմ քնքուշ հացաբուլկեղեն արտադրանքներ, լաց լինելով ասում էր կալաչաթուխը: Ես ձեզ սիրում եմ իմ եւ ուրիշի կյանքերից առավել, քանզի կարողանում էի ձեզ հունցել, ինչպես ոչ ոք ամբողջ Պսկով քաղաքում: Իսկ խեւ Կարպը քաշում էր ձեզ իր անմաքուր բերանով եւ թավալում էր գետնին, նա բաժանում էր ձեզ նրանց, ով ձեր կողն էլ չարժեր, իսկ բոլորը ժպտում էին՝ կարծելով իբր բարիք ես արարում: Ես էլ ժպտացի, քանզի ինչ էր մնում ինձ անել, երբ բոլորն ինձ բարի մարդ էին համարում, դե ես այդպիսին էլ կայի, եթե լավ խորանանք: Պարզապես ինձնից սպասելիքի չափը գերազանցեց իմ բարությանը, այդպես լինում է, ինչ կա զարմանալու: Եվ ահա, ձեզ ասեմ, բացակը սպասվածի եւ եղածի՝ լցվում էր իմ մեջ պարզապես անագե չարությամբ: Բացակը մեծանում էր, եւ չարությունն էր մեծանում, իսկ իմ շուրթերին ծաղկում էր ժպիտը, որն ինձ համար, հավատո՞ւմ եք արդյոք, ջղաձգման ծնունդ էր արդեն:

Արդյոք գիտե՞ս, թե որքան ժամանակ ես արդեն անցկացրել Պսկովում, Արսենիին հարցրեց խեւ Ֆոման:

Արսենին թոթվեց ուսերը:

Իսկ ես գիտեմ, խրախճանեց խեւ Ֆոման: Դու աշխատել ես արդեն Լիայի փոխարեն եւ Ռաքելի փոխարեն եւ դեռ ինչ-որ մի երրորդի համար էլ:

Միայն թե ոչ Ուստինայի, իր սրտի խորքում ասաց Արսենին:

Ֆոման ցույց տվեց կալաչաթուխ Սամսոնին, որ տանում էին պահակները, եւ գոչեց.

Կարպի հեռանալուց հետո քո լռության մեջ այլեւս իմաստ չկա: Դու կարող ես լռել, որովհետեւ խոսում էր Կարպը: Այժմ դու այդպիսի հնարավորություն չունես:

Իսկ հիմա ես ի՞նչ անեմ, հարցրեց Արսենին:

Այստեղ ես մի գաղափար ունեմ, պատասխանեց խեւ Ֆոման: Իսկ առայժմ, բարեկամս, տուր ինձ Քրիստափորի գրառումներով պարկը: Նա այլեւս քեզ պետք չի գա:

Արսենին խեւ Ֆոմային տվեց Քրիստափորի գրառումներով պարկը, սակայն ներքուստ սգում էր: Ետ տալով պարկը՝ Արսենին մտածեց, որ իր մոտ, պարզվում է, գույքի հանդեպ կապվածություն է մնացել, եւ ամաչեց այդ զգացումից: Իսկ խեւ Ֆոման հասկացավ, թե ինչ է կատարվում Արսենիի հոգում եւ ասաց նրան.

Մի վշտանա, Արսենի, որքանով Քրիստափորի հավաքած իմաստությունը քո մեջ կմտնի ոչգրավոր ճանապարհով: Իսկ ինչ վերաբերում է խոտերի նկարագրությանը, ապա քեզ համար, ես կարծում եմ, դա արդեն անցած շրջան է: Ամոքիր հիվանդներին՝ ընդունելով նրանց մեղքերը քո վրա: Ինչպես դու, կարծում եմ, հասկանում ես, այդպիսի բուժման համար խոտեր հարկավոր չեն: Եվ մի բան էլ՝ այսուհետ դու Ուստինը չես, սակայն, ինչպես նախկինում, Արսենին ես: Դե պատրաստվիր, ընկեր, ի ճանապարհ:

- Դ -

Շուտով ամբողջ Պսկովին հայտնի դարձավ, որ Ուստինը խոսում է: Որ նրա անունը Ուստին չէ, այլ՝ Արսենի: Եվ բոլորը գնում էին նրան տեսնելու, բայց չէին կարողանում նրան տեսնել, որովհետեւ նա արդեն ապրում էր ոչ թե գերեզմանատանը, այլ Հովհաննեսի միաբանության

հյուրախուցում:

Ինչ է, այստեղ ձեզ համար կրկե՞ս է, այցելուներին հարցրեց մայրապետը: Մարդը տասնչորս տարի ապրել է մաքուր օդում, ուստի թույլ տվեք նրան խելքի գա:

Օրերից մի օր Արսենիին հյուր եկավ Ամբրոջոն:

Ինձ քեզ մոտ է ուղարկել փոխիշխան Գավրիիլը, ասաց Ամբրոջոն: Նա ուզում է, որ դու դառնաս իմ ուղեկիցը Երուսաղեմի ճանապարհին: Ես ելնում եմ այն բանից, որ աշխարհի վերջը կգա 7000 թվականից ոչ շուտ, Քրիստոսի ծնունդից 1492 -ին: Այնպես որ, եթե ամեն ինչ լինի կարգին, մենք կհասցնենք վերադառնալ:

Ինչի՞ վրա ես հիմնվում քո հաշվարկներում, հարցրեց Արսենին:

Ամեն ինչ շատ պարզ է: Կհամեմատեմ օրերը հազարամյակների հետ, քանզի ասված է ութսունիններորդ սաղմոսում. հազար տարին Քո աչքերի առջեւ, Տեր, իբրեւ օրն էր երեկվա: Որքանով շաբաթն ունի յոթ օր, ստանում ենք յոթ հազար մարդկային կյանք: Հիմա 6988-րդ տարին է. մեր տրամադրության տակ ունենք եւս տասներկու տարի: Ձղջման համար, կարծում եմ, այնքան էլ քիչ չէ:

Վստա՞հ ես դու, հարցրեց Արսենին, որ հիմա հենց այդ տարին է, այսինքն վստա՞հ ես դու նրանում, որ աշխարհի Արարչագործությունից մինչեւ այսօրը անցել է ուղիղ 6988 տարի:

Եթե ես դրանում համոզված չլինեի, պատասխանեց Ամբրոջոն, հավանաբար չէի կանչի քեզ ինձ հետ Երուսաղեմ գնալու: Դատիր ինքդ. 5500 թվականից, երբ ծնվեց մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս, բոլոր թագավորությունները վավերացված են հելլենական եւ հռոմեական քրոնիկոններում: Գումարիր հռոմեական եւ կոնստանդնուպոլսյան կայսրերի կառավարման տարիները եւ դու կստանաս որոնվող տարեթիվը:

Իսկ ինչո՞ւ,- ներիր ինձ, օտարերկրացի,- դու համարում ես, որ աշխարհի Արարչագործությունից մինչեւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծնունդն անցել է ճշգրտորեն 5500 տարի՝ ո՛չ ավելի եւ ո՛չ պակաս: Ո՞րն է աղբյուրը նման եզրահանգման:

Ես միայն ուշադրությամբ կարդում եմ Սուրբ Գիրքը, պատասխանեց Ամբրոջոն, եւ այն հանդիսանում է իմ գլխավոր աղբյուրը: Օրինակ, Ծննդոց Գիրքը ցուցանում է յուրաքանչյուր նախապապի տարիքը առաջնեկի ծննդյան ժամանակ: Ավելին, նրանում նշված է տարիների

քանակը, որն ապրել է նախապապը երեխայի ծննդից հետո, ինչպես նաեւ նախապապի կյանքի ընդհանուր գումարը: Ինչպես տեսնում ես, եղբայր Արսենի, վերջին երկու դիրքորոշումները, իմ հաշվարկի համար, հավելյալ են: Որպեսզի իմանանք անցած տարիների ընդհանուր քանակը, բավ է գումարել նախապապերի տարիները նրանց առաջնեկների ծննդյան ժամանակ:

Բայց դե տառերը, որ թվեր են նշանակում նաեւ, կարող են վնասվել, առարկեց Արսենին: Հանուն երկարատեւ ժամանակի գրվածքները մաշվում են եւ դառնում անհասկանալի: Եվ սույնը երբեմն իր ամբողջի միակ մասնիկով ջնջվում է,դա չի հասկացվում՝ ամբողջ է՞, թե՞ զերո, այդպիսով երեք հարյուր թիվը ութ հարյուր է թվում:

Ինչո՞վ կապացուցես, ասա, Ամբրոջո, որ քո հաշվարկներն անխոցելի չեն, եւ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծնունդը համընկնում է 5500 թվականի հետ: Ինչպիսի՞, հարց է առաջանում, հարմոնիայով ես դու ստուգում այդ ամբողջ հանրահաշիվը:

Թվերը, Արսենի, ունեն իրենց բարձրագույն իմաստը, քանզի արտացոլում են ա՛յն երկնային հարմոնիան, որի մասին դու հարցնում ես: Իսկ հիմա լսիր ուշադիր: Քրիստոսի չարչարանքները համընկան շաբաթվա վեցերորդ օրվա վեցերորդ ժամի հետ, եւ դա ցուցանում է այն, որ Փրկիչը ծնվել է վեցերորդ հազարամյակի մեջտեղում, այսինքն աշխարհի Արարչագործումից 5500 թվին: Նույնն է ցուցանում Մովսեսի տապանի չափագրումների գումարը, որը, համաձայն Ելից Գրքի քսանհինգերորդ գլխի, կազմում է հինգուկես կանգուն: Դրա համար էլ Քրիստոս իբրեւ ճշմարիտ Տապան պիտի գար 5500 թվին:

Այդ մարդն ունակ է առողջ դատելու, ասաց Արսենին Ուստինային: Այդպիսի մարդու հետ իրոք որ արժե ուղեւորվել Երուսաղեմ: Եթե հավատանք նրա հաշվարկներին (իսկ ես հակված եմ դրան), ճամփորդության համար մենք ունենք ամենաքիչը տասը տարի: Այնպես որ, ես, սեր իմ, գնում եմ հենց աշխարհի կենտրոն: Գնում եմ դեպի այն կետը, որն ամենամոտն է երկնքին: Եթե իմ բառերին տրված է թռչելու մինչեւ երկինք, ապա դա տեղի կունենա հենց այնտեղ: Իսկ իմ բոլոր բառերը՝ քո մասին են:

- Ե-

Այդ օրվանից Արսենին եւ Ամբրոջոն սկսեցին պատրաստվել ուղեւորությանն ի Երուսաղեմ: Ճանապարհի համար փոխիշխան Գավրիիլը նախատեսել էր նրանցից ամեն մեկին մեկական քսակ հունգարական ոսկե դուկատ: Դուկատը Պսկովից մինչեւ Երուսաղեմ բոլորի կողմից ընդունված էր, եւ ուխտագնացները հաճույքով վերցնում էին ճամփի համար: Փոխիշխանը կարող էր եւ ավելին տալ, բայց նա գիտեր, որ միջնադարում դրամը հազվադեպ է երկար պահպանվում ճանապարհորդների մոտ: Ինչպես փողը, այնպես էլ իրերը, դժվարությամբ էին հաղթահարում տարածությունը: Նրանց տերերը հաճախ տուն էին վերադառնում առանց թե՛ մեկի, եւ թե՛ մյուսի: Իսկ ավելի հաճախ՝ չէին վերադառնում:

Ճամփորդների համար երբեմն փողից ավելի օգտակար էին երաշխավորագրերն ու անձնական կապերը: Այդ ոչ պարզունակ դարաշրջանում կարեւոր էր, որ ինչ-որ մեկը ինչ-որ մեկին որոշակի վայրում սպասի, կամ, հակառակը, ուղարկի ինչ-որ տեղ, երաշխավոր լինի նրա համար եւ աջակցի: Ինչ-որ կերպ դա հաստատում էր, որ մարդը նախկինում էլ տեղ է ունեցել կյանքում, որ չի ծագել ոչ մի տեղից, այլ ազնվորեն տեղափոխվել է տարածության մեջ: Ընդհանուր առմամբ, ճամփորդությունները հաստատում էին աշխարհի տարածության անընդհատականությունը, որը դեռեւս որոշակի կասկածներ էր հարուցում:

Արսենիին եւ Ամբրոջոյին տվեցին հանձնարարական նամակներ մի քանի քաղաքների համար: Դրանք նամակներ էին իշխանական տիտղոս ունեցող անձանց, հոգեւոր դեմքերին եւ վաճառականության ներկայացուցիչներին. հարկ եղած դեպքում ցանկացածը նրանցից կարող էր օգնել: Յուրաքանչյուրին երկուական ձի եւ հեծյալի կապա բերին: Կապայի փեշերի մեջ ուխտագնացները կարեցին դուկատները: Որպեսզի ոսկե դրամները չզրնգային եւ չշոշափվեին, դրանք շարեցին կաշվե շերտերով: Գնվեցին նաեւ չորացած միրգ եւ ձուկ՝ այնքան, որքան կարող էին տանել երկու ձիերը, որոնք թամբված չէին: Բոլոր նախապատրաստությունները ղեկավարում էր Ամբրոջոն, ով հեռավոր ճամփորդությունների փորձ ուներ:

Հավաքելով շորերն ու սննդամթերքը՝ նրանք պահպանում էին չափը: Պսկովյան հողում տարվա տաք ժամանակ էր, իսկ պաղեստինյան

հողում՝ միշտ էր տաք: Ցերմ ու հագեցուցիչ, ինչպես այն հողի ջրերն հոսընթաց ու աղբյուրներն անդունդներից հոսում են արտերով ու լեռներով, սնելով խաղողը, թզենիներն ու արմավը, այդ հողը բխեցնում է խունկ ու մեղր, քանզի հողն այդ հիրավի օրհնյալ է եւ Աստուծո Դրախտին է մերձ:

Ուղեւորության նախօրեին Արսենիին եւ Ամբրոջոյին իր մոտ կանչեց փոխիշխան Գավրիիլը եւ հանձնեց նրանց վեցանիստ արծաթե կանթեղը: Կանթեղը մեծ չէր, որպեսզի ավելորդ ուշադրություն չգրավեր: Այդ նույն պատճառով էլ կանթեղից զատ փոխիշխանը հանձնեց նրանց վեց ադամանդ: Տեղ հասնելուն պես ադամանդները հարկ էր դնել դրանց համար նախատեսված կանթեղի նիստերի մեջ: Դնել եւ սեղմել ձողերով, որոնք դյուրությամբ էին ծռվում: Փոխիշխանը ցույց տվեց նրանց, թե ինչպես են ծռվում ձողերը.

Բարդ բան չկա:

Նա լռեց:

Ես երկար եմ մտածել, թե ում ուղարկեմ Երուսաղեմ, եւ ձեզ ընտրեցի: Դուք տարբեր հավատքի եք, բայց երկուսդ էլ՝ ճշմարիտ: Եվ ձգտում եք դեպի նույն Տերը: Դուք կգնաք ուղղափառների եւ ոչ ուղղափառների երկրներով, եւ ձեր տարբերությունը ձեզ կօգնի:

Փոխիշխան Գավրիիլը համբուրեց կանթեղը: Գրկեց Արսենիին եւ Ամբրոջոյին:

Ինձ համար դա կարեւոր է: Ինձ համար դա շատ կարեւոր է:

Նրանք գլուխ տվեցին փոխիշխան Գավրիիլին:

- Զ -

Ձիերը դոփում էին ափին եւ վախենում էին ելնել նավ: Նրանց համար սարսափելի չէր շարժումը ջրի միջով. իրենց կյանքում մեկ անգամ չէ, որ լողալով կտրել էին գետերն ու անցել ծանծաղուտները: Նրանց վախեցնում էր շարժումը ջրի վրայով: Այն թվում էր անբնական: Ձիերին քաշում էին ելարաններով, սանձերից: Նրանք խրխնջում էին եւ դոփում սմբակներով տախտակամածի փայտերին: Նայելով ձիերին՝ Արսենին չնկատեց, թե ինչպես հեռացան ափից:

Հեռացավ նաեւ ափին կանգնած ամբոխը: Երբ թիավարները թափահարեցին թիակներով, այն սկսեց փոքրանալ իր չափերով եւ հնչ-

յուններով: Ամբոխը փոթորկվում էր՝ վերածվելով հորձանուտի: Պտույտ էր գալիս փոխիշխանի շուրջ, որը կանգնած էր նրա կենտրոնում: Նա նույնիսկ ձեռքով չարեց: Կանգնած էր անշարժ: Նրա կողքին փռփռում էր Հովհաննու միաբանության մայրապետի զգեստը: Երբեմն սեւ մահուդը քսվում էր հենց իր՝ փոխիշխանի դեմքին, բայց նա չէր խուսանավում: Քամու տակ մայրապետը թվում էր սովորականից ավելի լայն: Թվում էր մի թեթեւ փքված: Նա օրհնում էր հեռացող նավին՝ դանդաղ, լայնումեծ խաչեր հանելով:

Ափերը շարժվում էին թիակների թափահարման տակտով: Նրանք փորձում էին հասնել երկնքով սահող ամպերին, բայց ակնհայտորեն չէր բավում արագությունը: Արսենին հաճույքով էր ներշնչում գետային քամին, հասկանալով, որ դա թափառումների քամին է:

Այսքան տարի, ասաց նա Ուստինային, այսքան տարի ես նստել եմ այստեղ անշարժ, իսկ հիմա լողում եմ կտրուկ դեպի հարավ: Զգում եմ, սեր իմ, որ շարժումն այս արգասավոր է, այն մոտեցնում ինձ քեզ եւ հեռացնում մարդկանցից, որոնց ուշադրությունը, ճշմարիտն ասած, սկսել է ինձ խանգարել: Ես, սեր իմ, մի լավ ուղեկից ունեմ, ջահել մտավորական մարդ՝ հետաքրքրությունների լայն շրջանակով: Թուխ է: Գանգրահեր: Անմորուս: Քանզի նրա եզերքներում մորուքը սափրում են: Ցանում է որոշել աշխարհավերջի ժամկետը, եւ, թեեւ վստահ չէ, որ այն իր լիիրավության մեջ չէ, ինքնին խրախուսանքի արժանի է թվում ինձ ուշադրությունը վախճանաբանության հանդեպ: Մեր հետ գնում են նաեւ պսկովյան նավատերերը: Վելիկոյե գետով նրանք մեզ տանում են Պսկովյան երկրի սահմանները: Գետը լայն է: Նավարկության ափերի բնակիչները մեզ ճանապարհ են դնում հայացքներով, եթե նկատում են: Երբեմն ձեռքով են անում մեր ետեւից: Մենք էլ ենք ձեռքով անում: Ի՞նչ է մեզ սպասվում: Անասելի ուրախություն եմ զգում եւ չեմ վախենում ոչինչից:

Երեկոյան դեմ կայանեցինք ափին եւ խարույկ վառեցինք: Ձիերին նավից չիջեցրինք, որովհետեւ նրանք այնտեղ ընտելացել են: Սկսվում է ուշահաս պսկովյան գիշերը:

Մեր հողերում, ասացին նավատերերը, դժվար է անակնկալ սպասել: Իսկ ահա հետո, որոշ տեղեկությունների համաձայն, հանդիպում են շան գլուխներով մարդիկ: Չգիտենք, ճի՞շտ է արդյոք, բայց այդպես

ասում են:

Երկինք մի բարձրացեք, պատասխանեց Ամբրոջոն, քանզի նաեւ այստեղ ամեն ինչից էլ շատ կա: Ստեք, օրինակի համար, Կրեմլ. այնտեղ այդպիսիք շատ են:

Ժամանակ առ ժամանակ նավատերերից ոմանք գնում էին մոտակա անտառ եւ այնտեղ կոտրված ճյուղեր հավաքում: Արսենին հետեւում էր, թե ինչպես է բոցավառվում խարույկը: Նա լռակյաց ճյուղ ճյուղի վրա էր դնում՝ շարելով բրգաձեւ: Կրակը սկզբում լիզում էր նրանց: Մինչեւ որ ամբողջ ճյուղերը կբռներ, այն ասես թե փորձում էր լեզվով: Մի քանի ոստեր վառվելու ընթացքում ճաք էին տալիս:

Թաց են, ասացին նավաշինարարները: Անտառում ավելի թաց է:

Խարույկի շուրջը պտտվում էին մոծակներ ու մժղուկներ: Դրանք թռչում էին կիսաթափանցիկ պարսով, համարյա ծխի պես: Պարսի ներսում շրջաններ եւ էլիպսներ էին գծում, այնպես որ, թվում էր, թե նրանցով ինչ-որ մեկը ձեռնածություն է անում: Բայց նրանցով ոչ ոք ձեռնածություն չէր անում: Երբ ծուխը շուռ եկավ նրանց կողմը, այսուայն կողմ թռան: Արսենին զարմանքով իր մտքում նշեց, որ մոծակների փախուստն իրեն ուրախացնում է:

Կհավատա՞ս, ասաց Ուստինային, ես դարձել եմ դժվարահաճ եւ վախենում եմ արնախումներից: Ապրելով ուրիշի մարմնում՝ ես ոչ ոքից չէի վախենում: Այ սա էլ, սեր իմ, վախեցնում է: Չկորցրեցի՞ ես արդյոք միաժամանակ այն, ինչը հավաքել էի քեզ համար այս բոլոր տարիներին:

Մենք լսել ենք, ասացին նավատերերը, որ Զատիկին Տիրոջ Գերեզմանին իջնող կրակը չի այրում, չէ՞ որ դուք ճանապարհ եք ուղեւորվել Զատիկից հետո, եւ ստացվում է, որ չեք տեսնի կրակի սովորական հատկանիշները:

Արդյոք Տիրոջ ամեն մի օրը չպիտի՞ դառնա մեզ համար Զատիկ, հարցրեց Արսենին:

Նա ձեռնափը պահեց հենց կրակի վրա: Կրակի լեզուներն անցան նրա բացված մատների արանքով եւ լուսավորեցին դրանք վարդագույն լույսով: Գիշերը ափ իջնողներից ոմանց համար Արսենիի ձեռնափը փայլատակում էր խարույկից պայծառ: Ամբրոջոն նայում էր աչք չկտրելով Արսենիից: Նավատերերը խաչակնքվում էին:

-Է-

Հաջորդ օրը նրանք հասան Պսկովյան հողերի հարավային սահմաններին: Այդ սահմաններին էլ հանձնարարված էր հասցնել ուխտագնացներին: Վելիկոյե գետը փոքրանում էր եւ շրջադարձում արեւելք:

Գետը մոտենում էր իր ակունքներին, ասացին նավատերերը, ավելի հաճախ են հանդիպում խոչուխութեր, որոնցից գլուխ հանելն էլ մի գլխացավանք է: Ափսոս, ազնվորեն ասած, որ բաժանվում ենք, բայց մխիթարում է այն, որ ետդարձին մենք պիտի շարժվենք հոսանքի ուղղությամբ:

Վաղուց է նկատված, հաստատեց Ամբրոջոն, որ հոսանքի ուղղությամբ շարժվելը քանիցս դյուրին է: Ուստի ուղեւորվեք խաղաղությամբ:

Ձիերին բերել էին ափ, եւ Ամբրոջոն ու Արսենին հրաժեշտին գրկախառնվեցին նավատերերի հետ: Նայելով, թե ինչպես է հեռանում նավը, նրանք անհանգստություն էին զգում: Այսուհետ ճանապարհորդներն իրենք իրենցով էին եւ Աստծով: Նրանց սպասվում էր ոչ հեշտ ճանապարհ:

Նրանք շարժվում էին հարավ: Շարժվում էին չշտապելով՝ առջեւում Արսենին էր եւ Ամբրոջոն, ետեւից՝ սանձերով կապված երկու բեռնակիր գրաստ: Ճանապարհը նեղ էր, տեղանքը՝ բլուրներով: Շտապում էին, որպեսզի հաց ուտեն: Շերտիկներով չորացրած միս էին կտրում, վրայից ջուր էին խմում: Ձիերը կանգառներում շտապով խոտ էին պոկոտում: Առվակներն անցնելիս դնչներով ընկնում էին դրանց վրա եւ, փնչացնելով, ֆոթացնելով խմում:

Օրվա վերջին ժամանեցին Սեբեժ փոքր քաղաքը: Ստնելիս հարցրին՝ որտե՞ղ կարելի է կանգ առնել գիշերը: Նրանց ցույց տվին պանդոկը: Պանդոկում, չգիտես, թափած գարեջրի հո՞տ էր գալիս, թե՞ մեզի: Պանդոկապանը հարբած էր: Եկվորներին նստեցնելով նստարանին՝ ինքը նստեց մյուսի վրա: Երկար ու անթարթ նայում էր նրանց: Նստել էր լայն բացած ոտքերով, ձեռքերը հենած ծնկներին: Հարցերին չէր պատասխանում: Բռնելով նրա ուսից, Արսենին հասկացավ, որ պանդոկապանը քնած է: Նա քնած էր բաց աչքերով:

Հայտնվեց պանդոկապանի կինը եւ ձիերին տարավ ախոռ: Հյուրերին ցույց տվեց սենյակը:

Հեյ, Չեռպա՛կ, կանչեց նա ամուսնուն, բայց սա չշարժվեց: Չեռպա՞կ: Կինը թափ տվեց ձեռքը: Թող քնի:

Փակեք նրա աչքերը: Փակ աչքերով քնելը շատ ավելի լավ է:

Դե ոչ, ավելի լավ է այսպես, ասաց պանդոկապանի կինը: Եթե դուք սկսեք պրպտել պանդոկը, նա ձեզ կտեսնի:

Չեռպակը քնած է- Չեռպակը զգոն է, արտաբերեց պանդոկապանը որձկալով: Խարդախ բաներ մի մտածեք: Կարեւորը ձեզնով մի արեք կնոջս, քանզի նա ինքը ձեզ իրենով կանի: Նա ոտքերը փռեց իշոտնուկի վրա եւ ծածկվեց փսիաթով: Դուք նույնիսկ չեք պատկերացնում, թե ստիպված ինչպիսի բաների վրա եմ աչք փակում:

Գիշերվա կեսին Արսենին զգաց, թե ինչպես է իր փորի վրայով տեղաշարժվում ինչ-որ տաք բան: Նա մտածեց, որ դա առնետ է, եւ իրեն թափ տվեց, որպեսզի մի կողմ նետի:

Սսսսս, շշնջաց պանդոկապանի կինը: Կարեւորը՝ մի աղմկիր, ես թանկ չեմ վերցնում, կարելի է ասել սիմվոլիկ, ես առհասարակ չէի վերցնի, բայց մարդս, դե դու տեսար այդ անասունին, նա համարում է, որ ամեն մի գործում պետք է լինի տնտեսական բաղկացուցիչ, նրան՝ էդ ստորին, հակառակը չես համոզի, իսկ դու ուզում ես, չէ՞ որ դու ուզում ես...

Մի կողմ գնա, հազիվ լսելի շշնջաց նա:

Կինը շարունակում էր շոյել Արսենիի փորը, եւ նա զգաց, թե ինչպես ձեռքի տակ այդ կնոջ, որ ոչ ջահել էր ու ոչ գեղեցիկ, կորցնում է կամքը: Նա ուզում էր Ուստինային ասել, որ հիմա կարող է փշրվել այն, ինչը ստեղծվել է այսքան տարիների ընթացքում, բայց պանդոկապանի կինը խռռացնում էր համարյա ձայնով.

Ես ձեր ախպորը լա՛վ եմ ճանաչում...

Նրա ձեռքը սահեց փորից ներքեւ, Արսենին տեղից վեր թռավ եւ գլխով խփեց ծանր ու հնչեղ մի բանի, որը պատից պոկվեց, գլորվեց, թռչկոտեց եւ դուրս թռավ սենյակից պանդոկապանի կնոջ հետ միասին:

Հարեւան սենյակում կրակն ուժեղացավ:

Չէ, հլա դու տես, դու տես, ճչում էր պանդոկապանի կինը՝ ցույց տա-

լով Արսենիին: Ինձ ձեռ-մեռ էր գցում:

Օգտվելով իմ վայրկենական թուլությունից, ասաց պանդոկապանը: Նա համարյա սթափ էր եւ դրա համար էլ չարացած:

Նա ոտնձգություն էր անում, Չեռպա՛կ: Նրա ձեռքերում մնաց իմ հագուստի ծվենը: Իսկ ես պոկվեցի:

Արսենին պարզեց ձեռքերը, եւ դրանք դատարկ էին.

Ոչ մեկի շորն էլ ինձ մոտ չի:

Պանդոկապանի կինը նայեց Արսենիին եւ հանգիստ գոռաց.

Ձեռքերին է ազատություն տվել, դու քո Պսկովում չես, ոսկո՛վ վճարիր անպատվության համար:

Սա Մեծ Լիտվական իշխանությունն է, եւ ես դա ոչ մեկին թույլ չեմ տա, որ իրեն այդպես պահի...

Արսենին լաց եղավ:

Լսիր, Չեռպակ, ասաց Ամբրոջոն, ինձ մոտ պատվոգիր կա, որը ես շնորհելու եմ ձեր իշխանություններին: Բայց բանավոր (Ամբրոջոն կիպ մոտեցավ պանդոկապանին) ես կհաղորդեմ նաեւ այն մասին, ինչպես են Սեբեժում ընդունում հյուրերին: Չեմ կարծում, որ նրանք կուրախանան:

Իսկ ես ի՞նչ, ասաց պանդոկապանը: Չէ որ ես ամեն ինչը նրա խոսքերից գիտեմ: Չես ուզում՝ անպատվելու համար մի վճարիր:

Պանդոկապանի կինը խեթ նայեց նրան.

Ա՛խ դու, Չեռպակ, իսկ դու ինձ ասում էիր՝ հիանում եմ քո գեղեցկությամբ, գոնե նրան քֆուր տայիր: Եթե ո՛չ ոսկի, գոնե ինչ-որ մի բան տուր:

Քո գեղեցկությա՞ն համար վճարենք քեզ, հարցրեց Ամբրոջոն:

Նրան վճարենք այն բանի համար, որ իմ հանդեպ ոտնձգություն արեց, ասաց Արսենին: Քանզի, եթե նա խոսքով է ոտնձգություն անում, ապա ունակ է անել նաեւ գործով: Իսկ ամեն ինչում մեղավոր եմ ես, եւ դա իմ անկումն է: Ներիր ինձ, բարի կին, ներիր եւ դու, Ուստինա:

Ոչ մի բառ չարտասանելով՝ Ամբրոջոն հանեց դուկատը եւ մեկնեց պանդոկապանի կնոջը: Կինը կանգնել էր հայացքը կախ: Պանդոկապանը թոթվեց ուսերը: Կինը նայեց ամուսնուն եւ, ամաչելով, վերցրեց դուկատը: Պատուհանից այն կողմ լուսանում էր:

Սեբեժից մինչեւ Պոլոցկ շարժվեցին լուռ: Արսենին գնում էր քիչ

առջեւից, իսկ Ամբրոջոն նրան չէր հասնում:

Այսքան տարիների լռությունից հետո, ասաց Ամբրոջոն, դժվար նորից խոսքին ընտելանաս:

Արսենին գլխով արեց:

Երբ նրանք հերթական անգամ աճապարեցին, Ամբրոջոն ասաց.

Ես հասկանում եմ, թե ինչու մեղքը վերցրիր քո վրա: Նա, ով իր մեջ ներառում է աշխարհը, պատասխանատու է ամեն ինչի համար: Բայց դու չմտածեցիր այն մասին, որ զրկեցիր մեղքի զգացողությունից այդ կնոջը: Ծնորհիվ քեզ նա համոզվեց, որ իրեն ամեն ինչ կարելի է:

Դու սխալվում ես, ասաց Արսենին: Ահա թե ինչ եմ գտել իմ գրպանում:

Նա ձեռքը գրպանից հանեց եւ բռունցք արեց: Նրա ձեռքի ափին դուկատն էր:

- Ը -

Պոլոցկում նրանք փութացին Եֆրոսինիա փրկչի վանքի մոտով: Ամբրոջոն ձիերին կապեց ծեր կնձենուց: Իսկ Արսենին ճակատով սեղմվեց միաբանության շրջապարսպին եւ ասաց.

Ողջույն, սուրբ Եֆրոսինիե: Ինչպես դու, հավանաբար գիտես, մենք իմ ուղեկից Ամբրոջոյի հետ (Ամբրոջոն խոնարհեց գլուխը) գնում ենք Երուսաղեմ: Մենք չէ որ քեզ պիտի պատմենք, որքան բարդ է ճանապարհը դեպ այնտեղ, քանզի դու այն հաղթահարել ես, իսկ մենք ամենասկզբում ենք: Եվ այնտեղ, առավել եւս, անտեղի կլինի պատմել այն մասին, որքան բարդ է հակառակ ճանապարհը. մենք այն նույնիսկ չենք սկսել: Իսկ դու, արդարակյա՛ց, առհասարակ հրաժարվեցիր նրանից եւ Աստծո ողորմածությամբ հանգրվանեցիր Սուրբ հողում: Մենք գնում ենք այնտեղ աղերսելու երկու կանանց համար եւ շատ ենք ապավինում քո օգնությանը: Օրհնի՛ր մեզ, արդար Եֆրոսինիե: Ուխտագնացները խոնարհվեցին եւ շարժվեցին հեռու:

Պոլոցկի ծայրամասում Ամբրոջոն դիմեց անցորդին.

Մենք փնտրում ենք Օրշայի ճանապարհը:

Օրշան Դնեպրի վրա է, ասաց անցորդը: Դնեպրը՝ մեծ գետ է, եւ դա համապատասխանաբար բացում է մեծ հնարավորություններ:

Նա ցույց տվեց ուղղությունը դեպի Օրշա եւ գնաց իր բանին:

Ես նկատել եմ, ասաց Ամբրոջոն, նայելով անցորդի ետեւից, որ ճանապարհների անպիտանության պատճառով Հին Ռուսիայի մարդիկ նախընտրում էին ջրային ճանապարհը: Նրանք, ի դեպ, դեռեւս չգիտեն, որ Ռուսիան՝ Հին է, բայց ժամանակի ընթացքում կքնեն: Կանխատեսման որոշակի հմտություններն ինձ թույլ են տալիս դա հաստատելու: Ինչպես, ընդ որում, եւ այն, որ ճանապարհների վիճակը չի փոփոխվի: Ընդհանուր առմամբ, քո երկրի պատմությունը զարգանալու է բավականաչափ անսովոր:

Մի՞թե իմ երկրի պատմությունը գալարածեւ ձեռագիր է, որպեսզի այն զարգանա, հարցրեց Արսենին:

Ցանկացած պատմություն, մինչեւ որոշակի աստիճանը, գալարածեւ ձեռագիր է Բարձրյալի ձեռքերում: Ոմանց (օրինակ, ինձ), տրված է դեպքից դեպք աչք ածել այն եւ տեսնել, ինչ է լինելու առջեւում: Միայն մի բան չգիտեմ. արդյոք այդ գալարածեւ ձեռագիրը հանկարծակի դեն չի՞ նետվի:

Դու նկատի ունես աշխարհի կործանո՞ւմը, հարցրեց Արսենին:

Այո, աշխարհի վերջը: Եվ միաժամ՝ նաեւ խավարի՛ վերջը: Այս իրադարձության մեջ, գիտե՞ս որ, կա իր սիմետրիան:

Մի քանի ժամ նրանք գնացին ոչ մի բառ չարտաբերելով: Ճանապարհն ընթանում էր Դվինայի երկայնքով: Ճանապարհը հաջորդում էր գետին, գալարվում, ամայանում, երբեմն լրիվ կորսվում էր: Բայց անփոփոխ գտնվում էր ինչ-որ հեռվում: Նրանք մտան փշատերեւ անտառ, ու սմբակների ձայնը դարձավ ավելի զրնգուն:

Արսենին հարցրեց.

Եթե պատմությունն Արարչի ձեռքերում գալարածեւ ձեռագիր է, արդյոք նշանակո՞ւմ է, որ ամենը, ինչ ես մտածում եւ անում եմ,- մտածում եւ անում եմ ոչ ես, այլ իմ Արարիչը:

Ո՛չ, չի նշանակում, որովհետեւ Արարիչը բարիք է, իսկ դու մտածում եւ անում ես ոչ միայն բարին: Դու արարված ես Աստծո կերպարով եւ նմանությամբ, եւ նմանությունը քո, ի տարբերություն այլ բաների, ազատության մեջ է:

Բայց քանի որ մարդիկ ազատ են իրենց մտքերով եւ արարքներով, ստացվում է, որ պատմությունը նրանց կողմից ստեղծվում է ազատ:

Մարդիկ ազատ են, ասաց Ամբրոջոն, բայց պատմությունը՝ անազատ: Նրանում այնքան, ինչպես դու ասում ես, մտադրություններ եւ արաքներ կան, որ այն չի կարող դրանք միավորել, եւ ամբողջացվում է միայն Աստծո կողմից: Ես նույնիսկ կասեի, որ ազատ են ոչ թե մարդիկ, այլ՝ մարդը: Իսկ մարդկային կամքերի խաչաձեւումը նմանեցնում եմ փայտոջիլներով լցված փորձանոթի. նրանց շարժումն ակներեւ է, բայց մի՞թե այն ունի ընդհանուր ուղղվածություն: Այդ պատճառով պատմությունը չունի նպատակ, ինչպես այն չունի նաեւ մարդկությունը: Նպատակ ունի միայն մարդը: Այն էլ՝ ոչ միշտ:

- Թ -

Գետի երկայնքով նրանք ընթանում էին արդեն երկրորդ օրը: Անտառով անցնելիս հանկարծ տեսան մի բացատ եւ մի զառիթափ՝ դեպի ջուրը: Ամբրոջոն աճապարում էր, որպեսզի ծիուն ջրի: Հենց գետի մոտ սայթաքեց կավահողի վրա եւ ընկավ ջուրը: Պարզվեց անսպասելի խորն է, համարյա մինչեւ կոկորդը: Դուրս թքելով ջրիմուռները Ամբրոջոն ծիծաղում էր: Նրա երկար, սեւ մազերը նույնպես ջրիմուռ էին հիշեցնում: Դրանք կախվել էին նրա ծիծաղող դեմքին: Ամբրոջոյի ծիծաղն արեւի փայլերի նման ճողփաց ջրի երեսով:

Այսօր տաք, գրեթե շոգ օր է, ասաց Արսենին: Մենք կարող ենք լվանալ մեր հագուստներից ինչ-որ բան, եւ դրանք կչորանան մինչեւ մայրամուտ:

Հավաքելով կեչու կեղեւներ եւ ճյուղեր, նա սկսեց խարույկ վառել: Պարկից հանեց կայծքարն եւ չախմախաքարը: Հանեց աբեթը, որ պատրաստված էր աբեթասնկից, եւ փաթաթված առանձին փալասի մեջ, չխկացրեց կայծքարը չախմախաքարին, մինչեւ որ կայծերից մեկը չվառեց աբեթը: Նա այդ նկատեց ծխի բարակ շիթից, ապա աբեթի վրա հայտնվեց հազիվ նկատելի մլմլացող մի կետ, որն սկսեց ընդարձակվել: Արսենին նրա վրա դրեց կեչեկեղեւի նրբագույն շերտիկներ եւ չոր սոճու փշասեղներ: Կեչակեղեւի մի լայն կտորով սկսեց բորբոքել կրակը: Երբ այն վառվեց, Արսենին բարակ ճյուղեր դրեց վրան: Ապա՝ ավելի հաստ ճյուղեր:

Այժմ մնում է սպասել մինչեւ փայտը մոխիր դառնա, ասաց Արսե-

նին: Մոխիրը մեզ պետք է լվացքի համար:

Ամբրոջոն դեռեւս ջրի մեջ կանգնած էր: Նրա ձեռքերը գծագրում էին փրփուրե երկու կիսաշրջաններ:

Թռիր այստեղ, բացականչեց Արսենիին:

Երկմտելով, Արսենին հանվեց ու ցատկեց գետի մեջ: Նա ջուրն զգաց, կարծես ինչ-որ մեկին էր հպվում: Քնքուշ սառնորակ հպումը՝ միանգամից ամբողջ մարմնին: Արսենին երջանկության զգացում ունեցավ եւ ամաչեց դրանից, քանզի Ուստինան չէր կարող իր հետ մտնել ջուրը Դվինայի: Նա դուրս ելավ ափ: Ամաչելով իր մերկությունից, փաթաթվեց լայն գոտիով, որը մտադիր չէր լվանալ:

Երբ ճյուղերի մի մասն այրվել էր, Արսենին կիտեց մոխիրը կողքի եւ վրան ջուր լցրեց: Հողի վրա փռելով փալասը՝ մոխիրը լցրեց նրա վրա: Փալասի ծայրերը կապեց: Փորձեց՝ պինդ էր: Նկատեց ջրից դուրս ցցված մի քար, եւ մոտ տարավ դրան այն, ինչը նախատեսված էր լվացքի համար: Ջրից դուրս գալով՝ Ամբրոջոն դժվարությամբ հանեց թաց կապան: Կապային ավելացրեց եւս մի քանի հագուստ եւ դրեց Արսենիի հավաքած կույտի վրա:

Թրջելով հագուստն ու ներքնաշորերը՝ Արսենին դրանք տրորեց քարի վրա թնջուկ արած մոխրի հետ: Նստեց ճիլոպի վրա: Ծփվելով քարի հետ՝ կապայի մեջ կարված դուկատները խուլ կտկտում էին: Ամբրոջոն լվացքը պարզաջրեց եւ կախեց ներքեւի ճյուղերի վրա: Կախեց նաեւ մասրենու եւ ջահել սոսիների թփերի վրա, որոնք ճկվել էին թաց միջնադարյան հագուստների ծանրության տակ:

Արսենին պառկեց ջրից ոչ հեռու: Մեջքով զգում էր արեւի ջերմությունը, փորով՝ փափկությունը խոտի: Եվ այն, եւ մյուսը առողջարար էին նրա մարմնի համար: Ինքն էր դառնում խոտ: Նրա ձեռքի վրայով սողում էին փոքրիկ անանուն արարածներ: Դրանք հաղթահարում էին իր մաշկի վրայի մագիկները, մաքրում էին թաթիկներն ու մտածկոտ օդ թռչում: Ջրի երեսով թեւաբախում էին բադերը: Տերեւները շուռ տալով քամին շարժում էր կաղնիների կատարները: Արսենին աչքերը փակեց:

Արթնանալով տեսավ, որ արդեն պառկած է ստվերում: Արեւը շրջանցել է նրան թիկունքից եւ թաքնվել ծառերի ետեւում: Երբեմն քամու պոռթկումների հետ լուսաշերտերում հայտնվում էր ծառերի սա-

ղարթամասը: Քամին թռցնում էր խարույկի մոխիրը, որի վրա Ամբրոջոն խաչածեւ դրել էր երկու չորացած կեչու բուն: Կոճղերը վառվում էին դանդաղ, ոչ պայծառ, բայց հուսալի. քամին չէր կարողանում դրանք հանգցնել: Ամբրոջոն հասցրեց ճյուղերից հավաքել ներքնաշորերը եւ հիմա շոշափում էր կապաները, դրանք դեռ խոնավ էին:

Ես կարծում եմ, մենք կմնանք այստեղ գիշերելու:

Կմնանք, գլխով արեց Արսենին:

Նա կուզեր այստեղ մնալ ընդմիշտ, սակայն գիտեր, որ դա անհնար է:

Մթնշաղին ցրտեց: Նրանք անտառից բերեցին չոր ճյուղեր եւ դարսեցին խարույկի մոտ: Երկնքով լողում էին ամպերը, եւ այդժամ վերջնականապես մթնեց: Չկար ո՛չ լուսին, ո՛չ աստղ: Չկար ո՛չ անտառ, ո՛չ գետ: Մնացել էր միայն խարույկը, այն էլ շատ քիչ բան էր լուսավորում: Կոճղերի անկանոն բուրգը: Երկու նստած օտարականների: Բազմաձեռ ստվերները ծառերի:

Այդպիսիների մասին չեմ լսել, պատասխանեց Ամբրոջոն, բայց, ճանապարհորդելով Ռուսիայից դեպի արեւելք, իմ հայրենակիցներից մեկը տեսել է մի հրեշ, որն ունեցել է մի ձեռք, դե այն էլ՝ կրծքի մեջտեղում: Գումարած՝ մեկ ոտք: Նկատի առնելով իրենց յուրահատկությունները՝ մեկ աղեղից կրակում էին երկուսով: Եվ տեղափոխվում էին այնքան արագ, որ ձիերը չէին կարողանում հասնել, չնայած այն բանին, որ նրանք սլանում էին մեկ ոտքով: Երբ ուժասպառ էին լինում, ապա քայլում էին մի ձեռքի եւ ոտքի վրա շրջանաձեւ պտտվելով: Պատկերացնո՞ւմ ես:

Ամբրոջոն նստել էր գլուխը ետ գցած, եւ նրա դեմքը չէր երեւում: Իտալացու ձայնից Արսենիին թվաց, թե նա ժպտում է: Իսկ Արսենին լուրջ էր: Նա ապշել էր վիթխարի սեւ աշխարհից, որը տարածվում էր նրանց թիկունքում: Այդ աշխարհն իր մեջ ամփոփում էր բազում անհայտ բաներ, թաքցնում վտանգներ, տերեւներով շրշում գիշերային քամուց եւ տանջալիորեն ճռնչում ճյուղերով: Արսենին արդեն չգիտեր, արդյոք գոյություն ունե՞ր առհասարակ այդ աշխարհը կամ ծայրահեղ դեպքում հիմա, այն անկայուն ժամանակներում, երբ գտնվել էր խավարում: Չե՞ն փոփոխվել արդյոք օրվա մութ ժամին անտառները, գետերը, քաղաքները: Արդյոք չէ՞ր հանգստանում բնությունն իր կարգա-

վորվածությունից, որպեսզի առավոտյան, ուժերը հավաքած, քաոսից նորից վերածվի տիեզերքի: Միակը, ով այդ արտասովոր ժամին չէր դավաճանել իրեն, Ամբրոջոն էր, եւ Արսենին այդ բանի համար նրա հանդեպ ջերմ երախտագիտությամբ էր լցվում:

-Ժ-

Մի քանի օր անց նրանք հասան Օրշա: Պարզվեց, որ ճամփին եղած ժամանակ նրանց պաշարները խիստ նվազել են, եւ այժմ կարիք չունեին բեռնակիր գրաստների: Երկու ձիերը վաճառվեցին Օրշայում: Մնացած երկու ձիերով ջրային ուղու մասին մտածել ավելի հեշտ էր: Երկու օր անց նրանք գտան մի նավ, որ Կիեւ էր մեկնում եւ բեռնավորվեցին նրա վրա:

Դնեպր գետը Օրշայում դեռեւս չէր լայնանում: Ավելի լայն չէր, քան Վելիկոյե գետը: Սակայն Արսենին եւ Ամբրոջոն գլխի ընկան, որ այն պիտի լայնանա, որովհետեւ լսել էին, որ ի տարբերություն պսկովյան գետի, Դնեպրն իրոք մեծ էր: Ամբրոջոն կուզեր ավելին իմանալ այդ գետի մասին, սակայն նավատերերը մռայլադեմ դուրս եկան եւ զրույցի չբռնվեցին: Նրանք իրենք իրենց հաշիվ էին տալիս, որ վճարվում են մարդկանց եւ բեռների փոխադրման համար: Եվ կռահում էին, երեւի, որ խոսակցությունների համար չեն վճարում:

Նրանք չէին խոսում նաեւ այն ժամանակ, երբ հավաքված լինելով նեղ շրջանակով, երեկոներին խմում էին ինչ-որ պղտոր խմիչք: Ո՛չ Արսենին, ո՛չ Ամբրոջոն չգիտեին, ինչ են խմում այդ մարդիկ, միայն թե խմիչքը նրանց չէր զվարթացնում: Նրանց մեջքերն ավելի էր կռանում: Նստածները հիշեցնում էին մի մեծ, անշուք ծաղկի, որը փակվում է գիշերաժամին: Հազվադեպ, նրանք սկսում էին կիսաձայն երգել: Նրանց երգերը նույնքան դառն ու պղտոր էին, ինչպես այն, ինչը նրանք խմում էին:

Շատ ռուսներ մռայլ են, իր դիտարկմամբ կիսվեց Ամբրոջոն:

Կլիման է, գլխով արեց Արսենին:

Երեք օր անց կառանեցին Մոգիլյովում: Ոչ քաղաքը, առավել եւս՝ նրա անունը, չէին լավացնում նավատերերի տրամադրությունը: Երեկոյան նրանք խմում էին սովորականից ավելի, բայց չէին պառկում

քնելու: Գիշերվա կեսին կառամատույցին մոտեցավ սայլակառքը: Նրա վրայից սուլեցին:

Նավատերերն, իրար նայելով, իջան ափ: Ետ դարձան ամուր կապած պարկերով: Նավի վրա պարկերը կրելուց նրանց օգնում էին սայլակառքի մարդիկ: Հետաքրքրությունից եւ անկեղծությունից ելնելով օտարերկրացի Ամբրոջոն կուզեր նրանց հարցնել՝ ի՞նչ կա պարկերում, սակայն Արսենին մատը դրեց շուրթին:

Երբ նավը հեռացավ ափից, Արսենին մոտեցավ նավատերերից մեկին: Երկու ձեռքով բռնեց նրա վզից ու հարցրեց.

Ի՞նչ է անունը քո, նավատեր:

Պրոկոպիոս, պատասխանեց նավատերը:

Քո մոտ, Պրոկոպիոս, ուռուցք կա շնչուղիներում: Դրությունդ ծանր է, բայց ոչ անհուսալի:

Եթե որոշես Աստծուց օգնություն խնդրել, ազատվիր առաջին հերթին նրանից, ինչը քեզ տանջում է:

Նավատեր Պրոկոպիոսը ոչինչ չպատասխանեց Արսենիին, բայց նրա աչքերից արցունքներ հոսեցին:

Ոռգաչովում գետը զգալիորեն լայնացավ:

Լյուբեչեում Արսենիին մոտեցավ Պրոկոպիոսն ու ասաց.

Իմ հիվանդության մասին դեռ ոչ մեկը չի իմանում, բայց ես արդեն սկսում եմ խեղդվել:

Դու խեղդվում ես քո մեղքերից, պատասխանեց Արսենին:

Երբ մոտենում էին Կիեւին, նավատեր Պրոկոպիոսն ասաց Արսենիին.

Հասկացա քո ասածը եւ կանեմ ըստ քո խոսքերի:

Աջ նավակողից տեսնելով կիեւյան սարերը, նավատեր Պրոկոպիոսը բղավեց.

Սուրբե՛րդ պեչորյան, աղոթեք Աստծուն մեզ համար:

Ընկերները մռայլ նայեցին Պրոկոպիոսին: Նրա հանկարծական բարեպաշտությունն իրենց զգուշավոր դարձրեց: Իսկ երբ նավը մտավ Պոչայնու գետը, որպեսզի հանգրվանի կիեւյան Պոդոլի մոտ, Պրոկոպիոսն ասաց նրանց.

Փախեք նավից այս, քանզի ուզում եմ մեղքերիս քավություն տալ եւ հանձնվել իշխանություններին:

Եթե նավը չկանգներ բազմամարդ կիեւյան նավամատույցում, եթե նավակողին չգտնվեին երկու հյուրերը, նավատեր Պրոկոպիոսին, հնարավոր է, չհաջողվեր նավը լքել այդքան հեշտությամբ: Լիովին հնարավոր է, նրան առհասարակ չհաջողվեր լքել: Բայց հանգամանքները Պրոկոպիոսի կողմից էին: Նա ելավ ափ եւ նախկին ընկերներին վերջին խրատները տվեց արդեն այդտեղից: Նա խորհուրդ տվեց մեղքի մեջ չընկնել, այլ՝ զղջալով գնալ Դնեպրի հոսանքով ի վեր՝ մինչեւ Օրշա քաղաք եւ այնտեղ իրենց համար ազնիվ զբաղմունք փնտրել: Նավատերերը լսում էին լռությամբ, քանզի ինչ պիտի առարկեին Պրոկոպիոսի ճշմարիտ խոսքին: Հետեւելով նրա շուրթերի շարժումներին՝ նրանք ինչ-որ չափով ափսոսեցին, որ չոլորեցին նրա վիզը ինչ-որ տեղ Լյուբեչեի մոտակայքում եւ չնետեցին ջրառատ Դնեպր գետը:

Նավին մոտեցան նավահանգստի իշխանությունները: Նավատեր Պրոկոպիոսն իր բարի կամքով նրանց պատմեց, որ բացի ուխտագնացներից եւ նրանց ձիերից, վուշե շապիկներից եւ կավե ամանեղենից Կիեւ քաղաք նավը տեղ է հասցրել կողոպտված բարիքը Սոգիլյովից: Նա պատմեց, որ երեք շաբաթ առաջ Սոգիլյովում սպանվել է վաճառական Սավվա Չիգիրը: Սավվայի ունեցվածքը, որը ճանաչվելու վտանգից ելնելով չէր կարելի վաճառել Սոգիլյովում, գետով վեր ուղարկվեց Կիեւ: Այդպիսի ճանապարհով էլ նախկինում ուղարկվել է նաեւ մոգիլյովյան այլ վաճառականների ունեցվածքը, որի մասին նավատեր Պրոկոպիոսը, ծառայության վերցված լինելով առանց հատուկ բացատրությունների, ոչինչ չգիտեր: Թեեւ զարմացավ, իհարկե, որ բեռնումը կատարվում է խոր գիշերին, անսովոր կանխազգուշավորությամբ՝ շապիկների եւ ամանեղենի նկատմամբ: Իսկ երբ այս անգամ ամանեղենի փոխարեն պարկերից մեկում նա հայտնաբերեց թանկարժեք իրեր, ինչպես նաեւ սպանված Սավվայի գավաթը (արծաթե գավաթի վրա փորագրված էր նրա անունը), Պրոկոպիոսն իսկույն կասկածեց, որ ինչ-որ բան էն չի: Եվ այն, որ նրա առողջությունը վատանում է, իրեն պատկերանում է ոչ պատահական, իսկ ուխտագնաց Արսենիի խոսքերում նա տեսնում է ցուցումն Աստծո եւ այդ պատճառով մեղա է գալիս բոլորի առջեւ: Պրոկոպիոսն արտաշնչեց: Եվ հաջորդ ներշնչումը նրան նախորդից թեթեւ թվաց:

Լսելով նավատիրոջ խոստովանությունը՝ նավահանգստի իշխանու-

թյունները բարձրացան նավի վրա, սակայն արդեն այնտեղ մարդ չգտան: Գտան մի քանի պարկ, եւ իրոք լեցուն թանկարժեք իրերով: Այդ ժամանակ նրանք սկսեցին հարցաքննել Պրոկոպիոսին իր ընկերների մասին, եւ նա պատմեց ամենը, ինչը գիտեր: Պատմում էր ճնշված ձայնով, որովհետեւ օդը չէր բավում:

Մոտենալով Պրոկոպիոսին, Արսենին նորից ձեռքը դրեց նրա վզին, շոշափեց այն եւ սեղմեց նրա կոկորդը բթամատերով: Նավատերը հազով բռնվեց: Նա կիսով կռացավ, եւ նրա բերանից դուրս եկավ արնոտ լորձունքը: Կառչելով Պրոկոպիոսի մորուքից՝ այն կախվել էր գետնից վեր բարակ, վարդագույն լուլայով:

Նկատի առնելով անկեղծ խոստովանությունը նավատիրոջ, նրա անմասնակցությունը գործին, ինչպես նաեւ ողբալի առողջական վիճակը, իշխանությունները նրան բաց թողին:

Հիմա հաղորդվիր եւ կլավանաս, ասաց Արսենին նրան: Հավատա ինձ, եղբայր Պրոկոպիոս, դու թեթեւ պրծար:

- ԺԱ -

Արսենիի եւ Ամբրոջոյի մոտ կար մի նամակ Պսկովի փոխիշխան Գավրիիլից՝ ուղղված Կիեւի վոյեվոդ Սերգիին: Գավրիիլը խնդրում էր Սերգիին սատարել ուխտագնացներին, եւ հնարավորության դեպքում նրանց կցել վաճառականների քարավանին, որոնք ժամանակ առ ժամանակ ուղեւորվում էին Կիեւից: Երբ ուխտագնացներն սկսեցին հարցուփորձ անել, թե որտեղ գտնեն վոյեվոդին, տեղի բնակիչները նրանց ցույց տվեցին Ամրոցը: Այդպես էր կոչվում քաղաքի այն մասը, որը տեղակայված էր ոչ ընդարձակ մի սարահարթում եւ շրջապատված պատով:

Ամրոցը երեւում էր ամեն տեղից: Բռնելով ձիերի սանձերից՝ Արսենին եւ Ամբրոջոն սկսեցին դանդաղ բարձրանալ փողոցներից մեկով: Փողոցը ոլոր էր գնում, բայց ճանապարհորդները գիտեին, որ չեն մոլորվի: Ամրոցը կախված էր նրանց առջեւ պատերի ածխացած գերաններով:

Հորդան է, ասաց անցորդը, ցույց տալով սեւացած պատը: Ձեզ ճանաչելով իբրեւ օտարականների, բացատրում եմ սրա ածխանալու

պատճառը. Մենգլի-Գիրեի հորդան է: Ճակատին ասած, մեծ գլխացավանք:

Նա ժպտաց անատամ լայն ժպիտով եւ գնաց իր գործին:

Ամեն դեպքում ռուսներն այնքան էլ մռայլ չեն, ինչպես քեզ է թվում, ասաց Արսենին Ամբրոջոյին: Երբեմն նրանք նաեւ բարձր տրամադրություն են ունենում: Օրինակ, հորդայի հեռանալուց հետո:

Ամրոցի մուտքի մոտ նրանց դիմավորեց պահախումբը: Երբ նրանք ներկայացան, ներս թողեցին: Ամրոցում տեղակայված էին կիեւյան անվանի տները եւ մի քանի եկեղեցիներ: Նրանք մոտեցան վոյեվոդա Սերգիի տանը եւ ներկայացան ուրիշ պահակների: Լսելով նրանց՝ պահակներից մեկը չքացավ տան մեջ: Մի քանի րոպեից վերադարձավ եւ նշան արեց, որպեսզի եկվորներին խուզարկեն: Հագուստի վրայից մի կարճ միջոցի թփթփացնելուց հետո Արսենիին եւ Ամբրոջոյին թողեցին ներս:

Վոյեվոդա Սերգին ճաղատ էր եւ թավահոն: Նրա անհետաքրքիր դեմքը հոնքերը արտահայտիչ էին դարձնում: Զգացմունքի փոքրագույն շարժումն իսկ ցանկացած մի այլ մարդու մոտ աննկատելի է: Վոյեվոդա Սերգիի մոտ շնորհիվ հոնքերի դառնում էին դեմքի արտահայտություն: Դիմավորելով ուխտագնացներին (հոնքերը շարժվեցին) խստորեն, վոյեվոդան նրանցից ընդունեց փոխիշխան Գավրիիլի նամակը: Նամակի մեջ խորասուզվելուն համապատասխան ընթերցողի դեմքը հարթվեց՝ մինչեւ որ հոնքերը ձգվեցին միահավասար եւ հաստ քուղի պես: Ընթերցելով նամակը մինչեւ վերջ, նա այն դրեց սեղանին եւ սեղմեց ձեռքով: Մյուս ձեռքի մատները թողնվեցին կապայի ձախ լամբակի տակ: Դրանք շարժման մեջ էին:

Ես ճանաչում եմ փոխիշխանին եւ կօգնեմ ձեզ, ասաց վոյեվոդա Սերգին: Ձեզ կուղարկեմ վաճառականների առաջիկա քարավանով: Իսկ կսպասեք հյուրատանը:

Իսկ երկա՞ր ենք սպասելու դրան, հարցրեց Ամբրոջոն:

Գուցեեւ մեկ շաբաթ, պատասխանեց վոյեվոդա Սերգին: Իսկ գուցե նաեւ մեկ ամիս: Ո՞վ գիտի: Նա ջուր խմեց կռունկ-շերեփից եւ ձեռնափը ճակատով տարավ: Ծոգ է:

Հասկանելի էր, որ ունկնդրումն ավարտվեց: Արդեն դռների մեջ Արսենին ասաց.

Գիտես, վոյեվոդա, խնդիրը ձեր սրտի հետ կապ չունի: Խնդիրը ողնաշարի մեջ է: Նրանից առհասարակ շատ բան է կախված: Ծատ ավելի, քան մենք երբեմն հակված ենք ենթադրելու:

Վոյեվոդա Սերգիի հոնքերը վեր սողացին:

Դու գիտե՞ս, որ ցավում է իմ սիրտը:

Կրկնում եմ, դա սիրտը չի, այլ ողնաշարը, պատասխանեց Արսենին: Քեզ մոտ սրտի ջլերից մեկն է ճմլվել, իսկ դու մտածում ես, թե՝ սիրտդ է: Հանվիր, վոյեվոդա, եւ ես կնայեմ, թե ինչ կարելի է անել:

Տատանվելով, վոյեվոդա Սերգին իր վրայից հանեց հագուստը: Նրա ուսերն ու կուրծքը ծածկված էին մազերով: Լող-լող, մեծ փորով, նա ինքն էր շերեփ հիշեցնում, որից ջուր խմեց: Արսենին ցույց տվեց նստարանը.

Պառկիր, վոյեվոդա, փորի վրա:

Սերգին պառկեց փորի վրա, կարծես թե իրենից անկախ ինչ-որ բանի վրա: Նստարանը նրա տակ ալիքաձեւ ճռճռաց: Արսենիի մատները խրվեցին վոյեվոդայի փռչոտ թիկունքի մեջ: Նրանք անցնում էին վերեւից ներքեւ՝ շոշափելով ող առ ող: Դրանցից մեկի վրա կանգ առան: Թեթեւակի տրորեցին: Տեղ թողեցին ձեռնափի ներքեւի մասի համար: Արսենին ձեռնափի վրա դրեց մյուս ձեռնափը եւ սկսեց սեղմել ողնաշարը հզոր ու ռիթմիկ: Ամբրոջոն նայում էր,թե ինչպես էր ցնցվում հաճախորդի ճարպոտ ծոծրակը: Մի թեթեւ խռչոց լսվեց, եւ վոյեվոդան բղավեց:

Կարգին է, ասաց Արսենին: Այսուհետ քեզ բաց կթողնի սրտի ցավը եւ ցանկացած ցավ:

Վոյեվոդա Սերգին ելավ նստարանից եւ սրբեց թիկունքը: Ուղղվեց: Ոչինչ չէր ցավում: Հարցրեց.

Ի՞նչ կխնդրես քո օգնության համար, բժշկող:

Մի բան եմ խնդրում. վախեցիր միջանցիկ քամիներից եւ ծանր բան բարձրացնելուց, պատասխանեց, մտածելով, Արսենին: Դրանք քո դեմ սուր դանակ են:

-ԺԲ -

Վոյեվոդա Սերգին նրանց չթողեց գնան հյուրատուն եւ տեղավորեց իր սենյակներում: Հաջորդ երեք օրերի ընթացքում նրանց այցելեցին բազում մարդիկ:

Եկավ վոյեվոդայի աներ Թեոգնոստը, որ վաղուց կռացած էր ման գալիս: Նա մշտապես գտնվում էր կիսախոնարհված վիճակում եւ հենվում էր ոչ երկար ձեռնափայտին: Արսենին հիվանդին պառկեցրեց նստարանին: Հավաքելով Թեոգնոստի ողնաշարը ող առ ող, նա գտավ նրա ծռվածության պատճառը: Արսենիի մոտից Թեոգնոստը հեռացավ առանց ձեռնափայտի:

Եկավ վոեվոդայի Ֆոտինյա հղի կինը՝ բողոքելով իր արգանդում երեխայի անհանգստությունից: Արսենին նրա ձեռքը դրեց փորին:

Քո մոտ ութերորդ ամիսն է, ասաց նրան, եւ կծնվի՝ տղա:

Իսկ անհանգիստ է, քանի որ նա վոյեվոդայի որդի է, ինչպե՞ս կարող է հանգիստ լինել:

Եկավ վոյեվոդայի զոքանչ Ագաֆյան, որի դաստակի կոտրված ոսկորը չէր կպնում ձմեռային վայրէջքից հետո: Արսենին պինդ վիրակապեց Ագաֆյայի դաստակը քաթանով եւ պահեց իր ձեռքերի մեջ:

Մի տրտմիր այլեւս, Ագաֆյա, քանզի մինչեւ թոռանդ ծնվելն առողջ կլինես:

Եղան Արսենիի մոտ տիուն Երեմեյը՝ հիվանդ ատամներով, տերտերակին Սերաֆիման՝ ժաժան գլխով, կալվածատեր Միխալկոն՝ ազդրի վրա թարախակալված վերքով եւ մի քանի ուրիշ մարդիկ, որոնք լսել էին Պսկովից եկած մարդու զարմանալի օգնության մասին: Եվ իր մոտ եկածներին նա բուժում էր ախտերից կամ թեթեւություն էր տալիս, որը պնդեցնում էր նրանց՝ ընդդիմանալու հաղթահարվելիք հիվանդություններին, չէ որ հենց շփումը Արսենիի հետ թվում էր բալասանող: Ուրիշներն էլ փափագում էին դիպչել նրա ձեռքին, որովհետեւ զգում էին, որ նրանից կենսական էներգիա է բխում: Իսկ այդ ժամանակ անբացատրելի ձեւով Բելոզյորյայից թռավ հասավ նրա առաջին մականունը՝ Ռուկինեց: Եվ Արսենիի մոտ բոլոր եկածները գիտեին, որ ինքը Ռուկինեցն է: Իսկ արդեն հետո ճանաչեցին նրա իսկական կեղծանունը՝ Բժիշկ:

Կիեւ Ժամանելու չորրորդ օրվա գիշերը Արսենին եւ Ամբրոջոն դուրս ելան քաղաքի սահմաններից եւ ուղղվեցին դեպի Պեչորյան միաբանություն: Նրանք գնում էին անտառածածկ սարով, իսկ ներքեւում հանգստանում էր մթագանգված Դնեպրը: Այն չէր երեւում, բայց շնչում էր, եւ զգացվում էր, թե որքան զգայելի է ծովը եւ ցանկացած ջրառատություն: Երբ Արսենին ու Ամբրոջոն մոտեցան միաբանությանը, սկսեց լուսանալ: Սարի կատարից նշմարվում էր լերկ ձախ ափը:

Հայացքը դեպի արեւելք ոչնչով չէր ընդհատվում, այն ճախրում էր հարթավայրի վրա եւ հասնում հեռավոր հեռուն Ռուսիայի: Այդտեղից տեսանելի էր եւ կարծես թե նույնիսկ ցնցումներով էր բարձրանում հսկայական կարմիր արեւը:

Վանքի դարպասների մոտ նրանց երկար հարցուփորձ էին անում այն մասին, թե ովքեր են իրենք: Երբ իմացան, որ Ամբրոջոն կաթոլիկ է, կասկածեցին՝ արդյո՞ք թողնեն: Ուղարկեցին վանահոր մոտ: Որոշելով, որ միաբանություն այցելությունը կարող է օտարականին օգուտ բերել, վանահայրն օրհնեց երկուսին էլ ներս մտնելու:

Նրանց տվեցին մեկական մոմ, իսկ վանականը նրանց տարավ Անտոնիիների քարանձավը եւ Թեոդոսյանների քարանձավը: Նրանք տեսան մասունքները սուրբեր Անտոնիայի եւ Թեոդոսիայի: Այնտեղ կային բազում այլ սուրբեր նաեւ, որոնց մասին Արսենին գիտեր, իսկ երբեմն, թվում էր, նաեւ չգիտեր: Առջեւից գնում էր նրանց ուղեկցող վանականը: Ոլորաններից մեկի վրա նա շրջվեց, եւ նրա աչքերում վառվեցին մի-մի մոմ:

Եֆրոսինիա Պոլոցկայա (վանականը ցույց տվեց տապանակներից մեկը): Վերադարձավ այնտեղից, ուր դուք ուղեւորվում եք: Սրբազան հողից թոհուբոհի ժամանակներում նրա մասունքները տեղափոխվեցին այստեղ:

Խաղաղություն քեզ, Եֆրոսինիե, ասաց Արսենին: Իսկ չէ՞ որ մենք մտանք Պոլոցկ, բայց քեզ, իհարկե, չգտանք:

Նա կվերադառնա Պոլոցկ 1910 թվականին, ենթադրեց Ամբրոջոն: Մինչեւ Օրշա մասունքները կտեղափոխվեն Դնեպրով, իսկ Օրշայից մինչեւ Պոլոցկ կտանեն ձեռքերի վրա: Վանականը ոչինչ չասաց եւ շարունակեց քայլել: Արսենին եւ Ամբրոջոն ընթանում էին նրա հետքով՝ ոտքերով շոշափելով դարուփոս հատակը: Այնտեղ՝ վերեւում պեծին

էին տալիս այգաբացն ու ամառը, իսկ այստեղ լոկ երեք մոմ էին պատառոտում խավարը: Խավարը հեռանում էր մոմերից, բայց ասես անվստահ եւ ոչ հեռու: Քարանում էր ցածր կամարների տակ պարզված ձեռքի տարածության չափով եւ բարդվում՝ պատրաստ նորից իր մեջ փակվելու: Այդ վաղ ժամին վերեւում արդեն շոգ էր, իսկ այստեղ զովություն էր տիրում:

Այստեղ մի՞շտ է այսպես զով, հարցրեց Ամբրոջոն:

Այստեղ չի լինում ոչ սառնամանիք, ոչ էլ շոգ, որոնք ծայրահեղության դրսեւորման էությունն են, պատասխանեց վանականը: Հավերժությունը խաղաղ է եւ նրան զովությունն էլ յուրահատուկ: Արսենին մոմը մոտեցրեց տապանակներից մեկի գրությանը:

Բարեւ, սիրեցյալ Ագապիտե, ցածրաձայն արտաբերեց Արսենին: Ես այնքան հուսով էի, որ քեզ կհանդիպեմ:

Ո՞ւմ ես այստեղ առողջություն ցանկանում, հարցրեց Ամբրոջոն:

Սա սուրբ Ագապիտն է՝ բժիշկն անսակարկելի: Արսենին ծնրադրեց եւ շուրթերով դիպավ Ագապիտի ձեռքին: Գիտես, Ագապիտե, իմ բուժումները՝ այնպիսի տարօրինակ պատմություն է, չեմ կարող քեզ խելքը գլխին բացատրել: Քանի ես բուժում էի խոտերով, ամենը շատից-քչից պարզ էր: Ես բուժում էի եւ գիտեի, որ Աստծո օգնությունը գալիս է խոտերի միջով: Հիմա դե: Իսկ հիմա Աստծո օգնությունը գալիս է հենց իմ միջով, հասկանո՞ւմ ես: Իսկ ես փոքր եմ իմ բալասանումից, ավելի փոքր, ես ինքս դրանք չարժեմ, եւ ինձ համար կա՛մ սարսափելի է, կա՛մ անհարմար:

Դու ուզում ես ասել, որ խոտից վա՞տն ես, հարցրեց վանականը:

Արսենին աչքերը հառեց վանականին:

Որոշակի իմաստով՝ ավելի վատը, քանզի խոտն անմեղ է:

Բայց անմեղ է, քանի որ չունի գիտակցություն, ասաց Ամբրոջոն: Սրանում նա մի՞թե վաստակ ունի:

Նշանակում է՝ պետք է գիտակցաբար ազատվել մեղքից, ուսերը թոթվեց վանականը: Ուրիշ ոչինչ՝լոկ գործեր: Պետք է, գիտեք, ոչ թե դատողություններ անել, այլ՝ աստվածանալ:

Երեք մարդ շարժվում էին առաջ, իսկ նրանց դիմավորում էին դեռ նորանոր սուրբեր: Սուրբերը կարծես չէին շարժվում եւ նույնիսկ չէին խոսում, սակայն մեռյալների լռությունն ու անշարժությունն անբար-

բառ չէին: Այնտեղ՝ գետնի տակ, տեղի էր ունենում ոչ լիովին սովորական շարժում եւ լսվում էին հատուկ տեսակի ձայներ, որոնք չէին խանգարում խստությունն ու անդորրը: Սուրբերը խոսում էին սաղմոսների բառերով, եւ իրենց վարքաբանության տողերով, որոնք հայտնի էին Արսենիին մանկությունից: Մոտ բերված մոմերի ստվերները տեղափոխվում էին չորացած դեմքերի եւ կիսաձալված դարչնագույն դաստակների վրա: Թվում էր, թե սուրբերը վեր բարձրացրին գլուխները, ժպտացին եւ հազիվ նկատելի ձեռքով արին:

Սուրբերի քաղաքն է, շշնջաց Ամբրոջոն, հետեւելով ստվերների խաղին: Նրանք ներկայացնում են մեզ կյանքի պատրանքը:

Ոչ, նման շշնջոցով էլ առարկեց Արսենին: Նրանք բացասում են մահվան պատրանքը:

-ԺԳ -

Մեկ շաբաթ անց Կիեւից Վենետիկ ուղեւորվեց վաճառականների քարավանը, եւ Արսենին Ամբրոջոյի հետ միացավ նրան: Թողնելով որ ճանապարհ ելնեն, վոյեվոդա Սերգին թախծում էր, որը չէր թաքցնում: Վոյեվոդան ափսոսում էր նման հրաշալի բժշկից բաժանվելու համար: Նա ափսոսում էր լավ զրուցակիցներից բաժանվելու համար: Բայց հո կարճ ժամանակի ընթացքում, որ նրա մոտ հյուրընկալվեցին ուխտավորները, հասցրեց շատ բան իմանալ Պսկովի եւ Իտալիայի կյանքի մասին, համաշխարհային պատմության եւ աշխարհի կործանման ժամկետը հաշվարկելու միջոցների մասին: Վոյեվոդա Սերգին իր հյուրերին պահելու համար թույլ փորձեր ձեռնարկեց, բայց լրջորեն կանգնեցնել նրանց չջանաց: Նա գիտեր, ինչ առիթով են Արսենին եւ Ամբրոջոն ձեռնարկել այդ ճամփորդությունը:

Քարավանը ի մի եկավ քառասուն վաճառականներով, երկու նովգորոդյան պատգամաբերներով եւ երեք տասնյակ մարդով պահպանությունից: Պահպանության համար փողեր հավաքեցին բոլոր ճանապարհորդներից, ներառյալ՝ Արսենին եւ Ամբրոջոն, որոնցից, նկատի առնելով, որ նրանք համարյա բեռ չունեն, վերցրին չորս դուկատ: Վաճառականներից յուրաքանչյուրը բերեց մի քանի բեռնակիր գրաստ, իսկ շատերն իրենց բեռը տանում էին սայլերով, լծած՝ եզներին: Հա-

վաքված քարավանն իրենով լցրել էր Սուրբ Սոֆիայի տաճարի դիմացի հրապարակը: Ամենուր լսվում էին սայլերի ճռճռոցներ, ձիու խրխնջոց, եզների բառաչ եւ հայհոյանքը քարավանի պահապանների: Ինչպես եւ պետք է լինեին պահապանները, նրանք ջղային մարդիկ էին:

Ճարվելուց եւ փողային հաշվարկներից երկու ժամ անց քարավանը շարժվեց տեղից: Հասնելով Ոսկե դարպասներին, այն սեղմվեց եւ, կարծես թե շշի բերանից, սկսեց ծանր ծորել դուրս: Ապրանքներով քաղաքից դուրս գալու համար հարկ էր վճարել: Արսենին Ամբրոջոյի հետ գնում էին առանց ապրանքի, եւ նրանցից ոչինչ չվերցրին: Թանկարժեք իրերից նրանց մոտ միայն արծաթե կանթեղն էր, բայց այդ մասին ոչ ոք չգիտեր:

Իսկ վաճառականները տանում էին մորթի, գլխարկներ, գոտիներ, դանակներ, թրեր, կողպեքներ, գութանի երկաթ, կտավ, թամբեր, նիզակներ, աղեղներ, նետեր եւ արդուզարդ: Ոսկե դարպասների մեջ կանգնածների տեսանկյունից վաճառականները վճարելու բան ունեին: Փողը գանձում էին ոչ թե առանձին ապրանքների, այլ սայլերի դիմաց: Դրա համար էլ ամեն մի սայլի վրա դնում էին այնքան, որքան այն կարող էր պահել, երբեմն՝ ավելի շատ: Այդպիսի դեպքերում սայլերը կտրվում էին, եւ դրանց բեռը, համաձայն օրենքի, դառնում էր կիեւյան վոյեվոդության սեփականությունը: Ընկած առարկաները (ինչ սայլից ընկնում էր, ապա կորչում էր) նույնպես անխղճորեն խլվում էին: Դարպասների մեջ ճանապարհը փորված էր դարուփոսերով: Եթե ժամանակի ընթացքում դարուփոսերը հարթվում էին, դրանք մանրակրկիտ տոպանում էին: Միջնադարում, ինչպես եւ ավելի ուշ ժամանակներում, ճամփորդողների հետ մաքսակետը աշխատել գիտեր:

Ոչ քիչ տարածություն հեռանալով քաղաքային պատից՝ քարավանը կանգ առավ: Այստեղ նրանց սպասում էին տասնյակ սայլեր, որոնց վրա ենթադրվում էր տեղափոխել դուրս բերված բեռի մի մասը: Այն տեսքով, որով ապրանքներն անցան դարպասներով, մինչեւ Վենետիկ դրանք չէին հասնի, եւ այդ հասկանում էին վաճառականները: Ապրանքների վերաբաշխումով զբաղվեցին մի քանի ժամ: Երբ քարավանը վերջնականորեն ճամփա ընկավ, արեւն իջել էր:

Գիշերեցին Կիեւից ոչ հեռու: Քարավանն այնքան մեծ էր, որ ստիպված հանգրվան փնտրեցին մի քանի գյուղերում: Երբ բաժանեցին

գյուղերի վրա, Ամբրոջոյին եւ Արսենիին մոտեցավ պահապան Վլասին: Նրա ձեռքում լախտ կար, գոտու տակ՝ մարտական կացին:

Պսկովի՞ց եք, հարցրեց պահապան Վլասին:

Պսկովից, պատասխանեցին ճանապարհորդները:

Ես էլ եմ այնտեղից, իսկ պահակությամբ փող եմ վաստակում: Գնանք, ձեզ լավ տեղում կտեղավորեմ:

Արսենին եւ Ամբրոջոն տեղավորվեցին նույն հյուղակում լեհ վաճառական Վլադիսլավի հետ, որը մեկնում էր Կրակով: Իր հետ նա տանում էր մի տրցակ սամույրի մորթի, գնված՝ Նովգորոդում: Բոլոր յոթ կապոցները վաճառական Վլադիսլավը դարսել էր նստարանի մոտ, որի վրա նրան անկողին գցեցին:

Մորթիները թարմ էին եւ սուր հոտ էին արձակում: Պատմելով իր ապրանքի մասին, վաճառականը բռնում էր իր մեծ ականջների բլթակներից՝ ամեն մեկից հերթով: Ծոգից հյուղակում նրա ականջները վառվում էին, եւ դրանց անսովոր չափերից դա ավելի էր նկատելի: Նրա հաստ մատերին շողշողում էին մի քանի մատանի: Ժամանակ առ ժամանակ նա մատները մտցնում էր սամույրի մորթու մեջ, կարծես թե խոտի մեջ, եւ թանկարժեք քարերը շողշողում էին այնտեղից խոշոր, թունավոր գետնամորու պես:

Գերազանց մորթիներ են, ամփոփեց վաճառական Վլադիսլավը:

Կրակովում այդպիսիք չկա՞ն, քաղաքավարությամբ հարցրեց Ամբրոջոն:

Ինչու չկան, կան, վիրավորվեց վաճառականը: Պարզապես այլ գներով: Լեհական թագավորությունում ամեն ինչ կա:

Նա խոսում էր նկատելի շեշտադրությամբ, եւ նրա մի քանի բառերը հաջողվեց հասկանալ դժվարությամբ:

Խոսողների խոսքն արդեն այնքան էլ հուսադրող չէր, որքան ճանապարհի սկզբին, ասաց Արսենին Ուստինային՝ պառկելով նստարանին: Բառերն այժմ լողում են: Որոշները դուրս են սահում դեռ չգիտակցված: Ազնվորեն ասած, սեր իմ, դա ինձ մի քիչ անհանգստացնում է:

Մի ակնթարթ անց Արսենին քնեց:

- ԺԴ -

Լուսաբացին քարավանը նորից շարունակեց ճանապարհը: Քարավանաշարը հիշեցնում էր երեկվանը, բայց ճշգրտությամբ չէր կրկնվում: Վերջնականապես շարանը կազմավորվեց գյուղը թողած վերջին ճանապարհորդով: Քարավանի ընթացքը դանդաղ էր: Այն որոշվում էր եզների արագությամբ, կենդանիներ, որոնք իրենց բնույթով դանդաղկոտ են: Եզներն ունեն մտասույզ տեսք, թեեւ իրականում ոչնչի մասին չեն մտածում: Քարավանը շարժվեց, հետքեր չթողնելով, որովհետեւ վաղուց անձրեւ չէր եղել: Նրա ետեւից միայն մնում էին փոշու ամպեր, որոնք տարուբերվում էի չոր օդում:

Քիչ առջեւից Արսենին եւ Ամբրոջոն տեսան պահնորդ Վլասին: Երեկ նա թվում էր ավելի տարիքով, իսկ հիմա համարյա տղեկի տեսք ուներ: Շիկահեր էր, գորշաչվի: Նրանց ձեռքով արեց եւ ինչ-որ բան ասաց: Քարավանային աղմուկի պատճառով նրանք ոչինչ չլսեցին: Ամբրոջոն ցույց տվեց իր ականջը:

Ես ապրել եմ Անդրպսկովյեում, գոռաց պահապան Վլասին: Ան-դրպսկով-յե: Նա ժպտաց: Գիտե՞ք այդպիսի վայր:

Նրանք գիտեին եւ գլխով արին. հայտնի բան է, Անդրպսկովյեում:

Ճանապարհը նեղ էր, եւ Արսենիի ձին երբեմն-երբեմն քսվում էր Ամբրոջոյի ձիուն: Արսենին բռնեց իր ուղեկցի ձիու սանձից եւ ասաց.

Ես բազում տարիներ ջանում եմ ծառայել Ուստինայի փրկությանը, որին սպանեցի: Եվ դեռ չեմ հասկանում բարեբա՞ստ է արդյոք իմ աշխատանքը: Ես դեռ սպասում եմ ինչ որ նշանի, որն ինձ ցուցաներ, որ ես գնում եմ ճիշտ ուղղությամբ, սակայն բոլոր այդ տարիներին ես չեմ տեսել եւ ոչ մի նշան:

Նշաններով ընթանալը հեշտ է, եւ դրա համար արիություն պետք չէ, պատասխանեց Ամբրոջոն:

Եթե խոսքն իմ փրկության մասին լիներ, ես անհամբերություն չէի ցուցաբերի: Ես կշարժվեի էլի ու էլի, քանի գնային ոտքերս, քանզի չեմ վախենում շարժումից եւ ճիգերից: Ես լոկ վախենում եմ, որ գնում եմ ոչ այնտեղ:

Չէ որ գլխավոր դժվարությունը, մտածում եմ, ոչ թե շարժման մեջ է (Ամբրոջոն հանդիպեց Արսենիի հայացքին), այլ ճանապարհի ընտրու-

թյան:

Քարավանը գնում էր անտառով: Արսենին լուռ ճոճվում էր թամբին, եւ անհասկանալի էր, գլխո՞վ էր անում ի նշան համաձայնության Ամբրոջոյի, թե՞ ճոճում էր գլուխը ձիու քայլքին համընթաց: Երբ դուրս եկան դաշտ, Արսենին ասաց.

Պարզապես ես վախենում եմ, Ամբրո՛ջո, որ իմ բոլոր գործերը չեն օգնում Ուստինային, իսկ իմ ճամփան տանում է ինձ ոչ դեպի նա, այլ հեռացնում է նրանից: Նկատի առնելով աշխարհի վերջի մոտիկությունը, չէ՞ որ դու հասկանում ես, որ ես իրավունք չունեմ մոլորվելու: Որովհետեւ եթե ես գնացել եմ սխալ ճանապարհով, ապա արդեն չեմ հասցնի վերադառնալ ճիշտ ճանապարհ:

Ամբրոջոն քանդեց կապայի վերեւի կոճակները:

Ես մի տարօրինակ բան ասեմ: Գնալով ինձ թվում է, թե ժամանակ չկա: Ամեն բան աշխարհում գոյություն ունի արտաժամանակյա, այլապես ո՞նց կարող էի իմանալ ոչանցյալ ապագան: Ես կարծում եմ ժամանակը տրված է մեզ Աստծո ողորմածությամբ, որպեսզի մենք չխճճվենք, քանզի չի կարող մարդու գիտակցությունն իր մեջ բաց թողնել բոլոր իրադարձությունները միաժամանակ: Մենք կողպված ենք ժամանակի մեջ մեր թուլության պատճառով:

Ուրեմն, ըստ քեզ, եւ աշխարհի վերջն արդեն գոյությո՞ւն ունի, հարցրեց Արսենին:

Ես դա չեմ բացառում: Չէ որ գոյություն ունի մահն առանձին մարդկանց,- մի՞թե դա անձնական աշխարհի կործանումը չէ:- Վերջիվերջո, համընդհանուր պատմությունը լոկ մասն է անձնական պատմության:

Կարելի է ասել նաեւ հակառակը, մտածելով, նկատեց Արսենին:

Կարող է եւ հակառակը. այդ երկու պատմություններն ի սկզբանե չեն կարող առանց մեկմեկու: Այստեղ, Արսենի, կարեւորն այն է, որ ամեն մի առանձին մարդու աշխարհի վերջը վրա է հասնում իր ծննդից մի քանի տասնյակ տարի անց. դա արդեն ում որքան տրված է: (Ամբրոջոն հակվեց ձիու պարանոցին եւ արտաշնչեց նրա բաշի մեջ): Համընդհանուր աշխարհի վերջը, ինչպես դու գիտես, ինձ հուզում է, սակայն ես չեմ սարսափում: Այսինքն՝ սարսափում եմ ոչ ավելի, քան սեփական մահից:

Ճանապարհը լայնանում էր, եւ նրանց հավասարվեց վաճառական

Վլադիսլավը:

Ես լսեցի, թե դուք ինչպես եք խոսում մահվան մասին, ասաց վաճառականը: Դուք՝ ռուսներդ, շատ եք սիրում խոսել մահվան մասին: Եվ դա շեղում է ձեզ կյանքի շինվածքից:

Ամբրոջոն թոթվեց ուսերը:

Իսկ մի՞թե Լեհաստանում չեն մեռնում, հարցրեց Արսենին:

Վաճառական Վլադիսլավը ծոծրակը քորեց: Նրա դեմքը կասկած էր արտահայտում:

Մեռնում են, իհարկե, բայց ավելի ուշ-ուշ:

Նա խթանեց ձիուն եւ սլացավ դեպի քարավանի սկիզբը: Արսենին եւ Ամբրոջոն լուռ նայում էին նրա ետեւից:

Ես անընդհատ մտածում եմ ժամանակի մասին քո մտքերի վրա, ասաց Արսենին: Դու հիշո՞ւմ ես, ինչ երկար են ապրել նախապապերը: Ադամն ապրեց ինն հարյուր երեսուն տարի, Սեմը՝ ինն հարյուր տասներկու, իսկ Մաթուսաղան՝ ինն հարյուր վաթսունինը: Ասա՛, մի՞թե ժամանակը օրինանք չէ:

Ժամանակը, ավելի շուտ, նզովք է, քանզի Դրախտում, Արսենիե, այն չի եղել: Իսկ նախապապերն այդքան երկար ապրել են շնորհիվ այն բանի, որ նրանց դեմքերի վրա փայլել է դրախտային անդրժամանակը: Նրանք կարծես թե ընտելացել էին ժամանակին, հասկանո՞ւմ ես: Նրանց մեջ դեռ մի քիչ կար հավերժությունից: Իսկ հետո նրանց տարիքը սկսեց կրճատվել: Եվ երբ փարավոնը հարցրեց ալեւոր Հակոբին, քանի՞ տարեկան ես, Հակոբը պատասխանեց. իմ կյանքի ապրած տարիների օրերը ես դեռ ապրում եմ, հարյուր եւ երեք տասն տարի է: Կարճ ու չարքաշ էին կենաց օրերն իմ. չհասա իմ հոր կյանքի տարիներին:

Դու՝ Ամբրո՛ջո, խոսում ես ընդհանուր պատմության մասին, որը համարում ես կանխորոշված: Գուցեեւ, այն այդպես էլ կա: Բայց անձնական պատմությունը, չէ որ բոլորովին այլ բան է: Մարդը չի ծնվում պատրաստի: Նա ուսանում է, իմաստավորում կենսափորձը եւ կառուցում է իր անձնական պատմությունը: Դրա համար էլ նրան պետք է ժամանակը:

Ամբրոջոն ձեռքը դրեց Արսենիի ուսին:

Բարեկամս, չէ որ ես չեմ դնում հարցականի տակ ժամանակի անհ-

ռաժեշտությունը: Պարզապես պետք է հիշել, որ ժամանակի կարիքն ունի միայն նյութական աշխարհը:

Բայց միայն հենց նյութական աշխարհում կարելի է գործել, ասաց Արսենին: Դրանում է իմ եւ Ուստինայի տարբերությունը: Եվ ինձ ժամանակ է պետք, եթե ոչ երկուսիս, ապա՝ գոնե նրա համար: Ես, Ամբրոջո, շատ եմ վախենում, որ ժամանակը կարող է վերջանալ: Մենք դրան պատրաստ չենք՝ ո՛չ ես, ո՛չ նա:

Դրան ոչ ոք պատրաստ չէ, ցածրաձայն ասաց Ամբրոջոն:

-ԺԵ-

Մի քանի օր անց քարավանը հասավ Ժիտոմիր: Ելնելով Ժիտոմիրից՝ այն ուղեւորվեց Զասլավ: Զասլավից նրա ճանապարհը ձգվում էր Կրեմենեց: Իսկ երբ թողեցին Կրեմենեցը, վաճառական Վլադիսլավն ասաց.

Հետո սկսվում է Լեհական թագավորությունը:

Նա արտասանեց դա այնքան բարձր ու դանդաղ, որ շրջապատողները շրջվեցին: Լեհական թագավորությունից ցանկալի էր սպասել ինչ-որ հատուկ բան. վերջիվերջո, քարավանի ճամփին հայտնվել էր առաջին թագավորությունը: Տրամադրությունները բարձր էին: Քարավանը գնում էր առաջ, բայց ճանապարհի երկու կողմերում շարունակվում էին ձգվել նույն անտառները, դաշտերը եւ լճերը, որ ուղեկցում էին ուխտավորներին հաղթահարվող ճանապարհին: Ոմանք ենթադրում էին, թե անտառները, դաշտերը եւ լճերն արդեն այն չեն: Ոմանք էլ՝ նշելով նմանությունը նախկինում տեսածների հետ, դա բացատրում էին նրանով, որ Լեհական թագավորությունը դեռ չի սկսվել: Գիշերը քարավանին վրա հասավ ամայի տարածքում, եւ ոչ ոք, ներառյալ վաճառական Վլադիսլավը, անկարող էին մատնանշել՝ դա արդեն Լեհաստա՞նն է, թե՞ դեռ Լիտվան է: Քարավանի մոտով սլացավ ձիավորների մի խումբ: Ձիավորներին հարցրին, ո՞ր երկրով է շարժվում քարավանը, բայց նրանք չգիտեին կամ չուզեցին պատասխանել: Նրանք բավականին մռայլ ձիավորներ էին:

Կանգ առան անտառի մոտ՝ դաշտում եւ խարույկ վառեցին, Արսենին ու Ամբրոջոն հայտնվեցին մի խարույկի մոտ վաճառական Վլա-

դիսլավի եւ պահնորդ Վլասի հետ: Մինչեւ քնելը պահնորդ Վլասը հարցրեց ներկաներին՝ գոյություն ունե՞ն արդյոք շնագլուխ մարդիկ: Պահնորդը ջահել էր եւ սիրում էր ճանաչողական զրույցներ:

Ռուսիայից արեւելք ճանապարհորդելիս, ասաց Ամբրոջոն, իտալացի վանական Ջովաննի դել Պլանո Կարպինին այդպիսի մարդկանց տեսել է: Կամ նրանց մասին պատմել են իրեն, որն, իհարկե, նույն բանը չէ:

Կոկորդը մաքրելով զրույցի մեջ մտավ վաճառական Վլադիսլավը:

Լեհական թագավորությունում տեսել են մարդկանց, որոնք ամեն ինչով մարդու կերպարանք ունեին, բայց ոտքերի ծայրերը եղել են, ինչպես ցուլերի ոտքերը, եւ նրանց գլուխն է մարդկային եղել, իսկ դեմքը՝ ինչպես շան, մի երկու խոսք ասում էին մարդու պես, իսկ երրորդին հաչում էին, ինչպես շուն:

Անսովոր հետքրքիր է Լեհական թագավորությունը, ասաց Ամբրոջոն, եւ մնում է միայն ափսոսել, որ մենք այն անցնում ենք առանց երկարատեւ կանգառների:

Իսկ տեսել են նաեւ մարդկանց, շարունակեց վաճառական Վլադիսլավը, որոնց ականջներն այնքան մեծ են, որ դրանցով ծածկում են իրենց ամբողջ մարմինը:

Արսենին ակամա նայեց վաճառական Վլադիսլավի ականջներին: Դրանք նույնպես փոքր չէին, բայց դրանցով ծածկվել անհնար էր:

Պահնորդ Վլասին հարցրեց.

Իսկ Լեհական թագավորությունում կա՞ն մարդիկ, որ ապրում են միայն հոտերով: Ինձ նմանների մասին պատմել են:

Լեհական թագավորությունում կա ամեն ինչ, պատասխանեց վաճառական Վլադիսլավը: Կան մարդիկ ոչ մեծ ստամոքսով եւ փոքր բերանով. նրանք միս չեն ուտում, այլ միայն եփում են այն: Միսը եփելով՝ նստում են տաշտակի վրա, ներս են քաշում գոլորշին, եւ միայն դա է նրանց պահում:

Եվ ի՞նչ, ապշեց պահնորդ Վլասին, նրանք իսկի՞ ոչ մի բան չեն ուտում:

Եթե ուտում էլ են, ապա շատ չնչին, համեստորեն ասաց վաճառականը:

Խարույկը վառվում-նստում էր, եւ նոր փայտեր ոչ ոք չէր դնում: Բո-

լորը, որոնց թվում նաեւ պահնորդ Վլասին, սկսեցին պատրաստվել քնել: Այդ գիշեր նա զբաղված չէր պահակախմբում: Քիչ առ քիչ հանգան նաեւ մյուս խարույկները, բացի մեկից, որի շուրջ նստել էին մի քանի պահնորդներ: Նրանք պիտի առույգ մնային մինչեւ առավոտ: Միառժամանակ անց հանգեց նաեւ այդ խարույկը:

Արսենին փափուկ խոտեր ու ծարխոտ պոկեց եւ դարսեց անկողնու վրա, գլխատակին դրեց թամբը: Թամբից կաշվի եւ ձիու քրտինքի հոտ էր գալիս: Տոթ գիշերին դա հատկապես տհաճ էր: Նրա հոգում պղտոր տագնապ էր մտնում: Աչքերի մեջ լույս էր գցում լիալուսինը: Արսենին կշջվեր մյուս կողքի վրա, բայց այդպես թամբը կսեղմեր նրա այտոսկրը: Տատնվելով՝ նա կրկին պառկեց մեջքի վրա:

Թամբը ստեղծված է ուրիշ տեղի համար, շշնջաց Ամբրոջոն՝ նայելով, թե ինչպես է հարմարվում Արսենին: Ինձ մոտ ավելի լավ բան կա:

Նա Արսենիին պարզեց մի լայն, փափուկ գոտի: Արսենին կուզեր հրաժարվել, բայց ժամանակին իրեն կանգնեցրեց: Նրան այրում էր Ամբրոջոյի հանդեպ երախտագիտության զգացումը, որ նա հոգ է տանում իր համար: Արսենին պառկել եւ մտածում էր, որ այսքան տարիներ անց նա առաջին անգամ մենակ չէ: Զգում էր, թե ինչպես է հոգնել մենակությունից: Եվ լաց եղավ, եւ քուն մտավ արցունքն աչքին:

-ԺՋ -

Արսենիին երազում ճիչեր եկան: Ճիչերը մարտնչող էին եւ սովորական միաժամանակ: Արսենիին պարզ էր, որ դրանք արձակում էին տարբեր մարդիկ: Հնարավոր է, դրանք մարդիկ չէին: Կարող է պատահի, նրանք էին, ովքեր պայքարում էին Ուստինայի համար: Երկու հակադիր ուժեր, որոնք քաշքշում էին ննջեցյալի հոգին տարբեր կողմեր:

Արսենին բացեց աչքերը եւ հասկացավ, որ ճիչերը երազում չէին: Նրանք հնչում էին դաշտի հեռավոր ծայրից, որտեղ խփված էր ճամբարը: Արսենին տեսավ, թե ինչպես գոտուց քանդելով մարտական կացինը, իր մոտով վազեց պահնորդ Վլասին: Պահնորդը վազում էր այնտեղ, որտեղ հնչում էին ճիչերը: Օդը դեռեւս լցված էր խավարով, եւ միայն արեւելքում, որտեղից գալիս էր քարվանը, սկսում էր լուսանալ:

Քարավանի վրա հարձակվել են, գոռաց ինչ-որ մեկը մոտերքում:

Դա այդպես էլ կար: Հարձակման համար ավազակները ընտրել էին ադամամութի քունը, երբ, ջերմությամբ լցվելով, մարմինը անկամ է դառնում եւ անպաշտպան: Առաջին գործով նրանք մղվեցին դեպի գիշերային պահախմբի պահնորդները: Սրանք դիմադրություն ցույց չտվեցին, որովհետեւ չէին առույգացել, այլ, հակառակը, պարուրված էին խոր քնով: Նրանց կոտորեցին իսկույն, քնի մեջ, հանգչող խարույկի կողքին: Նրանցից մեկը, մահացու վիրավոր, հասցրեց գոռալ եւ արթնացնել մյուս պահնորդներին: Այդ գիշեր հագուստով քնած պահնորդներն անմիջապես նետվեցին մարտի:

Ավազակները դիմադրության չէին սպասում: Նրանք սովոր էին, որ նման դեպքերում պահախումբը այս ու այն կողմ է փախչում՝ ամբողջ բարիքը թողնելով վրա տվողներին: Բայց պահախումբը չփախավ, այն լուռ ու կատաղի դիմադրում էր ավազակներին՝ վերջնականորեն արթնանալով մարտի ընթացքում: Չարագործները տեսան, որ արագ հաղթանակի արդեն չեն հասնի, իսկ հաղթանակն ամեն գնով նրանց պլանների մեջ չէր մտնում: Մի քանի մարդու կորցնելով մեռած՝ նրանք վճռեցին նահանջել: Հնչեց ոչ բարձր մի հրաման, եւ ավազակներն սկսեցին թողնել քարավանի դասավորվածությունը: Մի քանի րոպե անց հեծյալների մի խումբ արշավում էր արեւելք: Նրանց ոչ ոք չէր հետապնդում:

Երբ լրիվ լուսացավ, պարզ դարձավ, թե մարտն ինչ սարսափելի էր եղել: Հանգած խարույկի մոտ պառկած էին չորս սրախողխող պահնորդ: Նրանց ձեռքերում զենք չկար, նրանք պարզապես չէին հասցրել արթնանալ: Հայտնաբերվեցին նաեւ երեք ավազակների մարմինները: Կրծքի խաչերի ձեւից որոշեցին, որ նրանք ռուսներ են եղել:

Մարտի դաշտը մոլեգին ճիչեր էր արձակում: Դրանք մերթ մարում էին, մերթ նորոգվում անմարդկային ուժով, քանզի այդ ճիչերում չկար այլեւս ոչինչ մարդկային: Արսենին գնաց դեպի ճիչերը: Գոռացողին շրջապատել էր ամբոխը, բայց ոչ ոք չէր համարձակվում մոտ գնալ նրան: Գալարվող մարդը գլորվում էր արնամած հողի վրա, իսկ նրա ետեւից քարշ էին գալիս փոշու եւ սոճու ասեղներ հավաքած դուրս թափված աղիները: Երբ մարդուն մի պահ ուղղեց ջղակծկումը, Արսենին տեսավ, որ գոռացողը պահնորդ Վլասին է:

Արսենին քայլ արեց դեպի Վլասին, եւ ամբոխը նրա առջեւ ճամփա

բացեց: Սպասում էր, թե ով է անելու առաջին քայլը: Նրան օգնելու այրող ցանկությունը մարմնավորվեց այն բանում, թե որքան արագ եւ լայն ճամփա կբացի Արսենիի համար: Արսենին կռացավ հիվանդի վրա: Վլասին, քչախոս, բարյացակամ Վլասին վերածվել էր ճիչ արձակող տառապյալ մարմնի: Եվ Արսենին հարցրեց ինքն իրեն՝ կա՞ արդյոք հիմա այդ մարմնում հոգի, եւ պատասխանեց, որ չի՛ կարող չլինել:

Սուր դանակով Արսենին կտրատեց տառապյալի վրայի հագուստը եւ մերկացրեց իրանը: Ցուր խնդրեց: Երբ նրան մի կուժ ջուր բերին, նա հրամայեց շուրջբոլորի մարդկանց բռնել Վլասիի ձեռքերից եւ ոտքերից: Ապա վեր բարձրացրեց գետնից Վլասի աղիներն ու սկսեց ջրաշիթով լվանալ: Դրանց լպրծուն երեսի վրա նա զգաց արյան եւ լորձունքի թանձրուկներ: Վլասին այնպես ճչաց, ինչպես երբեք չէր ճչացել: Ամբոջոն, որպեսզի զորակցի Արսենիին, կպել էր նրա մեջքին, բայց նայում էր բոլորովին այլ ուղղությամբ, քանի որ Վլասիի հետ կատարվածին նայելու ուժ չուներ: Արսենին տեղավորեց աղիները փորի մեջ եւ այն փաթաթեց քաթանով: Մի քանի մարդ բարձրացրին վիրավորին եւ դրին սայլերից մեկի վրա, մորթիների վերեւում: Նրա գլուխն անկենդան կախվել էր: Վլասին անգիտակից էր:

Ես տեսնում եմ, որ կարճ ժամանակ անց նա կմահանա, ասաց Արսենին Ուստինային, եւ ես, սեր իմ, անկարող եմ նրան օգնել: Բայց այդ ժամանակը նրա համար ապրելն ավելի հեշտ կլինի:

Սահացած պահնորդներին որոշվեց թաղել մոտակա ռուսական գյուղում, քանզի վաճառական Վլադիսլավը հաղորդեց, որ Լեհական թագավորությունում կան ոչ միայն լեհական, այլեւ ռուսական գյուղեր, հատկապես սահմանի մոտերքում: Քննարկելուց հետո որոշեցին վերցնել նաեւ ավազակների մարմինները, բայց հողին հանձնել՝ առանձին:

Քարավանը շարժվեց տեղից: Սայլի ցնցումներից գիտակցության եկավ պահնորդ Վլասին եւ տնքաց: Ցնցումը նրան տառապանք էր բերում: Արսենին մոտ գնաց սայլին եւ բռնեց դժբախտի ուսերից: Սա նորից մոռացության գիրկն ընկավ: Երբ Արսենին ձեռքը ետ քաշեց, Վլասին գիտակցության եկավ եւ նորից սկսեց ճչալ: Այդ պատճառով էլ Արսենին գնում էր նրա կողքով եւ չէր քաշում իր ձեռքը:

Հասնելով մոտակա գյուղը՝ քարավանը կանգ առավ: Այնտեղ որոշ-

եցին թողնել Վլասիին, որը ցնցումներից ուժասպառ էր եղել: Դա լեհական գյուղ էր, եւ այնտեղ էլ ուղղվեց վաճառական Վլադիսլավը: Հիվանդին տեղավորելու մի քանի անհաջող փորձերից հետո վաճառականին հաջողվեց պայմանավորվել երկու ծերունիների հետ: Նրանց անուններն էին Թադեուշ եւ Յադվիգա, եւ նրանք երեխա չունեին: Այդ գթասիրտ մարդիկ պատրաստ էին հոգ տանել հիվանդի համար:

Երբ Վլասին բերեցին Թադեուշի եւ Յադվիգայի տուն, նա բացեց աչքերը: Իր անկողնու մոտ տեսնելով Արսենիին՝ բռնեց նրա ձեռքը, քանզի երբ դեռ բռնած էր պահում Արսենիի ձեռքը, ցավը թողնում էր: Վլասին միմիայն շուրթերով հարցրեց.

Այստե՞ղ ես թողնում ինձ, Արսենիե:

Քարավանի վաճառականները նայեցին Վլասիին, եւ նրանց աչքերը լիքն էին արցունքով: Նրանք հասկանում էին, որ քարավանի հետ պիտի հեռանային բոլորը:

Մի վշտացիր, Վլասի, ասաց Արսենին: Եսկմնամ քեզ հետ:

Արսենին շրջվեց Ամբրոջոյի կողմը: Ամբրոջոն կախեց գլուխը: Նա դուրս ելավ վաճառականների հետ եւ կարճ ժամանակ անց վերադարձավ՝ բերելով երկու ձի: Տադեուշի եւ Յադվիգայի բակից Արսենին եւ Ամբրոջոն հետեւում էին, թե ինչպես է ծանր-ծանր ճանապարհ ընկնում քարավանը:

Յադվիգան այդ է, ուզում էր շիլա եփել Վլասիի համար, սակայն Արսենին նրան կանգնեցրեց: Նա թույլ տվեց հիվանդին միայն ջուր տալ:

Հաճախաբար Ամբրոջոն նրա շուրթերին էր մոտեցնում կավե բաժակը: Վլասին ագահաբար խմում էր ջուրը՝ բաց չթողնելով Արսենիի ձեռքը: Մեկ օր նա անցկացրեց կիսամոռացության մեջ: Երեկոյան աչքերը բացեց ու հարցրեց.

Ես կմեռնե՞մ:

Վաղ թե ուշ մենք բոլորս կմեռնենք, պատասխանեց Արսենին: Թող դա քեզ մխիթարանք լինի:

Բայց ես վաղ եմ մեռնում:

Վլասիի աչքերը դանդաղորեն թրթռացին շղարշի հետ: Նրա վրա հակված Արսենին արտաբերեց.

Վաղ եւ ուշ բառերը չեն որոշում երեւույթի բովանդակությունը, դրանք վերաբերում են միայն ընթացքի ձեւին՝ ժամանակին: Որը, ինչ-

պես կարծում է Ամբրոջոն, վերջնահաշվում չկա:

Արսենին ուշադիր նայեց Ամբրոջոյին:

Ես կարծում եմ, ասաց Ամբրոջոն, որ սպառվում է ոչ թե ժամանակը, այլ երեւույթը: Երեւույթն արտահայտում է իրեն եւ դադարեցնում իր գոյությունը: Պոետը զոհվում է, ասենք, 37 տարեկանում եւ մարդիկ, ողբալով նրան, սկսում են դատողություններ անել այն մասին, թե դեռ ինչեր կարող էր նա գրել: Իսկ նա, գուցեեւ, արդեն կայացել է եւ իրեն ամբողջովին արտահայտել:

Չգիտեմ, թե դու ում նկատի ունես, բայց այստեղ մտածելու բան կա: Արսենին ցույց տվեց մոռացության մեջ ընկած Վլասին: Դու ուզում ես ասել, որ այս տղան իրեն արդեն արտահայտե՞լ է:

Դա չի կարող իմանալ ոչ ոք, պատասխանեց Ամբրոջոն: Բացի Աստծուց:

Վլասին անսպասելի ուժով սեղմեց Արսենիի ձեռքը.

Ես վախենում եմ հեռանալ այս աշխարհից:

Մի վախեցիր: Այն աշխարհն ավելի լավն է: Ազատ ձեռքով Արսենին սրբեց նրա ճակատի քրտինքը: Ես ինքս էլ կհեռանայի, բայց մի գործ պիտի ավարտեմ:

Ես վախենում եմ հեռանալ մենակս:

Դու մենակ չես:

Մայրս եւ եղբայրներս մնացին Պսկովում:

Ես քո եղբայրն եմ:

Ահա ես եկա այստեղ պահախմբում ծառայելու: Փող աշխատելու: Ինչի՞ համար:

Ինչ-որ բանով ապրել պետք է:

Եվ հիմա ահա՝ էլ պետք չի: Դու իմ ձեռքը բաց մի թող:

Բռնել եմ:

Մինչեւ վերջ:

Մեռնողը փակեց աչքերը:

Առաջին աքլորներն են, լսո՞ւմ ես:

Ոչ, պատասխանեց Արսենին, չեմ լսում:

Իսկ ես լսում եմ: Էդ նրանք են ինձ կանչում: Վատ է, որ ես առանց հաղորդության եմ հեռանում: Առանց զղջումի:

Խոստովանիր ինձ: Ես քո խոստովանությունը մինչեւ Երուսաղեմ

կտանեմ եւ հավատացած եմ, մեղքերը քո աճյուն կդառնան:

Բայց չէ՞ որ այդպես կլինի իմ մահից հետո: Մի՞թե դա հաշվի կառնեն:

Չէ որ ասում եմ՝ ժամանակի գոյությունը հարցականի տակ է: Երեւի թե, հետո պարզապես չկա:

Այդժամ Վլասին սկսեց խոստովանել: Ամբրոջոն դուրս եկավ խոտերի մեջ, ուր նստած էին Թադեուշը եւ Յադվիգան: Նրանք ինչ-որ բան ասացին լեհերեն: Ամբրոջոն չհասկացավ նրանց բառերը, բայց գլխով արեց: Նա համաձայն էր նրանց ցանկացած խոսքի հետ, որքանով տեսնում էր, բարի մարդիկ են:

Միայն մի մոռացիր իմ մեղքերից եւ ոչ մեկը, շշնջաց Վլասին Արսենիին:

Չեմ մոռանա, Վլասի: Արսենին շոյեց նրա մազերը: Ամեն բան լավ կլինի, լսո՞ւմ ես:

Սակայն Վլասին արդեն ոչինչ չէր լսում:

- ԺԷ -

Հողին հանձնելով Վլասին՝ Արսենին եւ Ամբրոջոն ճամփա ընկան: Նրանք հույս ունեին հասնել քարավանին եւ ընթանում էին արագ: Նրանք իրոք հասան կեսգիշերին մոտ, որովհետեւ քարավանները դանդաղընթաց են: Հաջորդ օրվա առավոտյան Արսենին եւ Ամբրոջոն ճամփա դուրս եկան քարավանի հետ միասին:

Անտառները նորից հաջորդեցին դաշտերին, իսկ լեհական գյուղաքաղաքները՝ ռուսականին: Բուսկեում ապրում էին գերազանցապես լեհեր, Նեսլուխովոյում՝ ռուսներ, իսկ Զապիտովոյում, պետք է ենթադրել, կես-կես: Ով էր ապրում Լվովում, անհասկանալի էր: Լվովյան փողոցում քարավանը դիմավորեց քաղքենի Ստեփանը: Ստեփանը սթափ չէր, եւ նրա լեզուն չէր հասկացվում: Քաղքենին գնացողներին սպառնաց բռունցքով: Սայթաքելով թրիքի վրա՝ նա գլորվեց պահնորդներից մեկի ձիու ոտքերի տակ: Ձիու սմբակն իջավ Ստեփանի ձեռքին եւ ջարդեց ոսկորը: Ստեփանին պառկեցնելով սայլի վրա՝ ուղարկեցին Արսենիի ետեւից:

Ինչպե՞ս է անունը քո, մա՛րդ, հարցրեց Արսենին՝ Ստեփանի ձեռքը

ձգելով քաթանով:

Ստեփանը շարժեց առողջ ձեռքը եւ մռլնգաց անհոդաբաշխ:

Դատելով ժեստից, նրա անունը Ստեփան է, ենթադրեց վաճառական Վլադիսլավը:

Լսիր, Ստեփան, ասաց Արսենին, Աստծո աշխարհը լայն է քո ավանից: Գոնե չսպառնայիր մարդկանց բռունցքով: Ապա թե ոչ, կարող ես զրկվել ձեռքից:

Լվովից հետո անցան Յարոսլավլը, Յարոսլավլից հետո՝ Ժեշովը:

Ժեշովում Արսենին ասաց Ուստինային.

Ժեշովցիների բարբառում՝ տեղի բնակիչների, ակնհայտ է շչականների հաճախությունը: Իսկույն հագեցվածություն ես զգում:

Ժեշովից հետո Տառնովն էր, Տառնովից հետո՝ Բոխնիան, Բոխնիայից հետո՝ Կրակովը: Կրակովում Արսենին եւ Ամբրոջոն հրաժեշտ տվեցին վաճառական Վլադիսլավին: Վաճառականը հյուրասիրության հրավիրեց իր քաղաքում, բայց նրանք երախտագիտորեն հրաժարվեցին: Պետք է շարունակեին գնալ: Հրաժեշտին գրկվեցին: Վաճառականի աչքերում արցունքներ կային.

Բաժանվել չեմ սիրում:

Կյանքը բաղկացած է բաժանումներից, ասաց Արսենին: Բայց, հիշելով այդ մասին, լիառատ ուրախանում ես շփման համար:

Իսկ ես (վաճառական Վլադիսլավը սրբեց քիթը) կհավաքեի ինձ հանդիպած բոլոր բարի մարդկանց եւ նրանց բաց չէի թողնի:

Կարծում եմ, որ այդպես նրանք ավելի արագ կչարանային, ժպտաց Ամբրոջոն:

Դուրս գալով Կրակովից՝ քարավանը գնաց Վիսլայի երկայնքով: Գետն այստեղ դեռ չէր լայնանում: Սլանալով նրա հետ միասին՝ հասան Օսվենցիմ ավանը: Ամբրոջոն ասաց.

Հավատա ինձ, Արսենիե, դարեր անց այս վայրը սարսափահար է անելու: Բայց նրա ծանրությունը զգացվում է արդեն հիմա:

Հետո սկսվում էր Սիլեզիան: Մինչ Արսենին հարցուփորձ էր անում Սիլեզիայի մասին, այն աննկատելիորեն փոխվեց Մորավիայի: Նա շտապում էր ամեն բան իմանալ Մորավիայի մասին, քանզի ոչինչ Մորավիայում չէր կանխասում, որ այն ավելի մեծ է Սիլեզիայից: Այնտեղ ապրող մարդկանց շուրթերի վրա սլավոնական բարբառը հավասարա-

չափ հերթագայում էր գերմանականին եւ հունգարականին: Հարավարեւմուտք առաջ շարժվելու հետ գերման բարբառը հանդիպում էր ավելի հաճախ, մինչեւ որ իրենով լիովին դուրս մղեց մնացածներին:

Այսպես սկսվեց Ավստրիան: Գերմաներենը Արսենիի համար օտար չէր: Նրանով որ՝ ինչ արտաբերում էին հանդիպակաց մարդիկ, նա գլխի էր ընկնում բառերը, որոնք ինքը ինչ-որ ժամանակ ջանում էր կարդալ Բելոգյորսկում, երբ սովորում էր վաճառական Աֆանասի Բլոխայի մոտ: Պարզվեց, որ գերմաներեն խոսողների առոգանությունն էապես տարվերվում էր Աֆանասիի առոգանությունից: Ի դեպ, Աֆանասին դրանում մեղավոր էր միայն մասնակի: Ավստրիայի բնակչները դեռեւս այն ժամանակ էին ձգտում խոսել գերմաներեն սեփական լադով: XV դարի վերջին ավստրիացիները դեռեւս ճշգրտորեն չգիտեին, արդյոք տարբերվո՞ւմ էին իրենք գերմանացիներից եւ, եթե տարբերվում են, ապա ինչո՞վ: Առոգանության տարբերություններն ի վերջո երկու հարցի պատասխանն էլ նրանց տվեցին:

-ԺԸ-

Վիեննայում Ամբրոջոն գանց Սուրբ Ստեփանոսի տաճար, որպեսզի հաղորդություն առնի: Արսենին որոշեց նրան ուղեկցել: Նա գնաց Ամբրոջոյի հետ այն մեծ վստահությամբ, որ, միեւնույն է, Վիեննայում ուղղափառ եկեղեցի չկա: Նա ցանկանում էր հսկայական տաճարը տեսնել ներսից: Բացի այդ,- եւ դա եղել է հավանաբար գլխավորը,- նա երբեք ներկա չի եղել կաթոլիկ պատարագի:

Տպավորությունը երկակի է, հաղորդեց Արսենին Ուստինային Սուրբ Ստեփանոսի տաճարից: Մի կողմից ինչ-որ հարազատ բանի զգացողություն կա, որովհետեւ մեր արմատներն ընդհանուր են: Մյուս կողմից՝ ես այստեղ ինձ չեմ զգում տանը, քանզի մեր ուղիները բաժանվեցին: Մեր Աստված մոտ է ու ջերմ, իրենցը՝ բարձր ու վեհատեսիլ: Հնարավոր է, այդ տպավորությունը մակերեսային է եւ առաջացել է, սեր իմ, լատիներենի չիմացությունից: Բայց ծիսակարգի ամբողջ ընթացքում ես այդպես էլ չպարզորոշեցի, արդյո՞ք գիտեն այն իրենք՝ ավստրիացիները:

Վիեննայում քարավանին միացավ ֆրանցիսկյան վանական Գու-

գոն Դրեզդենից: Իր միաբանության գործերով եղբայր Գուգոն եղել էր Բոհեմիայում, իսկ այժմ ուղեւորվում էր Հռոմ: Նա գնում էր էշով, եւ նույնիսկ բացատրեց, մատները ծալելով, ինչու է այդ անում: Առաջին՝ էշով գնացել է Քրիստոսը (վանականն իրեն հով արեց խաչադրոշով): Երկրորդ՝ էշը համառ կենդանի է, եւ դա հենց այն է, ինչն անհրաժեշտ է խոնարհության համար:

Եղբոր բոլոր պատմածները ճշմարտություն էին: Սովորական էշային համառությունը խորացավ նրանով, որ իբրեւ հեծյալ եղբայր Գուգոն էշին դուր չեկավ: Եղբայրը բարեհոգի էր եւ շփվող, սակայն հաստլիկ ու անհամբեր: Նա մշտապես քշում էր էշը՝ կրունկներով խփելով նրա կողերին, այն ժամանակ, երբ կենդանին ամենաշատը գնահատում էր չշտապելն ու լռությունը: Արժե՞ արդյոք զարմանալ, որ ասողխոսող Գուգոն նրան անկեղծորեն գրգռում էր: Ամեն անգամ հենց եղբայր Գուգոն սկսում էր խոսել, էշը ձգտում էր կծել նրա ծունկը:

Զրուցելով քարավանի տարբեր մարդկանց հետ (դա իրեն արժեցավ մի քանի հիվանդագին կծոց), ֆրանցիսկյանը կպավ Արսենիին եւ Ամբրոջոյին: Ի տարբերություն ուրիշ շատերի, շատից-քչից նրանք հասկանում էին գերմաներեն: Երեւի այդ պատճառով էլ նրանց հետ շփվելուց եղբայր Գուգոյի մոտ առաջացավ թեթեւության զգացում՝ ավելի մեծ թեթեւության, քան նա զգում էր քարավանի առեւտրական մարդկանց հետ զրուցելիս: Բացի դրանից,- եւ դա պակաս կարեւոր չէր,- նրան սկսեց թվալ, որ երկու ուխտավորների ներկայությամբ իր էշը ավելի հանգիստ է մնում եւ իրեն կծում է ավելի հազվադեպ:

Թողնելով Վիեննան՝ քարավանն անցնում էր Ալպերի երկարությամբ: Ճանապարհի եւ լեռների միջեւ տարածվում էին դաշտերը: Ինչոր խաղաղեցնող, համարյա ծույլ մի բան կար այն բանում, թե ինչպես էին ձգվում այդ լեռները: Չնայած թվացյալ խաղաղությանը, նրանց անշարժությունը երեւութական էր: Ի տարբերություն դաշտերի, որ ազնվորեն մնացել էին իրենց տեղերում, լեռները շարժվում էին: Նրանք ուղեկցում էին քարավանին աջից, չմոտենալով նրան, բայց նաեւ չհեռանալով: Ձգվում էին առաջ քարավանի արագությամբ, եւ գնացողներին թվում էր, որ նրանց հասնել-անցնելն անհնարին է:

Դաշտերի հեռավոր եզերքին, որտեղ քամին սանրում էր աշորան հակառակ կողմով, այնտեղ էր սկսվում շարժումը: Մնալով հարթա-

վայր, այդ տարածություններն արդեն շարժվում էին լեռների հետ միասին: Ընթացս սարերը փոփոխվում էին: Դառնում էին ավելի բարձր, ավելի կտրուկ, անտառը փոխվում էր քարի, իսկ քարը՝ ծածկվում ձյունով: Արսենին առաջին անգամ էր տեսնում բարձր լեռներ եւ հիմա հիանում էր նրանցով աչք չկտրելով:

Այդպես քարավանը Վիեննայից հասավ մինչեւ Գրաց, իսկ Գրացից ուղղություն վերցրեց Կլագենֆուրտ: Այստեղ ճանապարհն արդեն անցնում էր լեռներով: Այն ոլորվում էր՝ հարմարվելով հսկայական քարե դարսվածքներին: Ժայռերը շարժվում էին ճանապարհի վրա ավելի նեղանալով: Երբեմն դրանք համարյա կպչում էին վերեւում եւ այդ ժամանակ մթնում էր: Իսկ երբեմն լեռները նորից էին ետ քաշվում եւ այդպիսի տեղերում ստեղծվում էր երթադադար, որքանով լայն տեղերում քարաթափի տակ ընկնելու վտանգն ավելի քիչ էր: Երթադադարի տեղերը եղբայր Գուգոն ամեն անգամ շաղ էր տալիս իռլանդական ճանապարհափոշի, որը սպանում է օձերին, քանզի գիտեր, որ սուրբ Պատրիկի աղոթքներով Իռլանդիան փրկվել է զեռուններից: Այդ երկրի բնահողն այնքան անտանելի է իժերի համար, որ նույնիսկ նավի վրա բերված դոդոշները, որոնց հենց նետում էին Իռլանդական ափ, իսկույն տրաքում էին: Փոշին, որ կանխազգուշորեն հավաքված էր Ֆրանցիսկյանի կողմից Իռլանդիայում, շարունակում էր ճանապարհորդներին պաշտպանել նաեւ Ալպերում:

Կապելով էշին հեռավոր թփուտից, եղբայր Գուգոն հնարավորություն ունեցավ երթադադարում հանգիստ պատմել այն մասին, թե ինչպես են Ապենինները պահպանում շոգը հարավային քամուց, իսկ Ալպերի ժայռերը կասեցնում էին ցուրտ հյուսիսային Բորեաս եւ Արկտոս քամիները: Ինչ որ բան նա գիտեր նաեւ Ծայր Հյուսիսի Հիպերբորեան լեռների մասին, որոնց մակերեւույթները հարթ են ասես ապակին, որը թույլ է տալիս արտացոլել արեւի ճառագայթները: Լեռների գոգածեւը ստիպում է ճառագայթներին ընկնել նույն կետում, եւ դա տաքացնում է օդը: Իսկ լեռների բարձրությունը չի թողնում այդ օդին խառնվել արկտիկական ցրտին, որն էլ հենց կլիման դարձնում է չափազանց հաճելի: Դրա շնորհիվ էլ այնտեղ ապրող հիպերբորեացիները հասնում են այնպիսի տարիքի, երբ բնական ձեւով հոգնում են կյանքից եւ առանց ինչ-որ տեսանելի պատճառների ծովը նետվում բարձր ժայռերից՝

դրանով վերջ տալով իրենց գոյությանը, որն, իհարկե, մեղք է:

Հարմար պահ գտնելով՝ եղբայր Գուգոն իր նոր ծանոթներին պատմում էր նաեւ ուրիշ լեռների մասին: Իր քաջատեղյակությամբ կիսվում Օլիմպոսի մասին, որը վերեւից է նայում ամպերին, անտառներում ընկղմված Լիբանանի մասին եւ Սինա լեռան մասին, որի կատարը երկինքներում է, որի պատճառով այնտեղ բարձրանալը սովորական մարդկանց համար անհնար է: Լինելով ֆրանցիսկյան, վանականը հասկանալի է, որ պիտի հիշեր Լա Վերնա լեռան մասին, որի վրա մենացել էր սուրբ Ֆրանցիսկոսը՝ օրհնելով լյառն այնպես, ինչպես նախկինում օրհնել էր թռչուններին: Եղբայր Գուգոյի ուշադրությունը չշրջանցեց նաեւ այն լեռը, որի մոտով անցել էր Ալեքսանդր Մեծը, ով խիզախներին դարձնում էր վախկոտ եւ վախկոտներին՝ խիզախ: Ալեքսանդրն ինքնամոռաց ճանապարհորդ էր, եւ ճանապարհն ինքն էր փռվում նրա ոտքերի տակ:

Երբեմն ես ինձ Ալեքսանդր եմ զգում, ասաց Արսենին Ուստինային: եվ ճանապարհն ինքը կփռվի իմ ոտքերի տակ: Եվ Ալեքսանդրի նման, սեր իմ, ես չգիտեմ, ուր է այն տանում:

Օրերից մի օր քարավանն ընկավ քարաթափի տակ: Քարերը թռչում էին՝ կիրճում հազարապատիկ արձագանքներով, եւ սարսափելի էր: Երբ ամեն ինչ խաղաղվեց, բոլորը տեսան, թե ինչպես է ճամփամերձ թփուտում խռխռոցով կծկվում ձին: Նա ջղաձգորեն իր առջեւ էր նետում սմբակները, եւ լսելի էր, թե նրա գավակի տակ ինչպես են ճարճատում ճյուղերը: Ուզում էին խողխողել, որպեսզի չշարունակվեն տանջանքները, բայց Արսենին չթողեց նրանց, ովքեր ուզում էին այդ անել: Նա թփուտի կողմից մոտեցավ ձիուն եւ իր ձեռքը բաշին դրեց: Ձին դադարեց ոտքերով հարվածել: Երեւաց, որ առջեւի ոտքից արյուն է հոսում: Արսենին շրջանցեց ձիուն եւ շոշափեց նրա վիրավոր ոտքը:

Սա հոգեւարք չէ, ասաց Արսենին, ձին դեսուդեն չի զարկվում այն բանից, որ սատկում է, այլ՝ անտանելի ցավից: Նրա ոտքը ուժեղ վնասվել է, բայց չի կոտրվել: Ինձ քաթան տվեք, եւ ես կկապեմ նրա ոտքը, որպեսզի արնահոսությունը կանգնեցնեմ:

Վերցրու, բայց եղիր զգույշ, բացականչեցին քարավանից, որովհետեւ սմբակի հարվածով նա կարող է սպանել: Բացի այդ, նկատի առ, որ քարավանը չի կարող սպասել ձիու լավանալուն:

Արսենին վիրակապեց ձիու ոտքը եւ, նստելով կողքին, զգուշորեն ձեռքը տարավ քաթանի վրայով: Քիչ հետո ձին վեր կացավ: Նա գնում էր կաղալով, բայց գնում էր: Վաճառականները շնորհակալություն հայտնեցին Արսենիին ոչ անքան ձիու կայնքը փրկելու, որքան այն անսովոր երեւույթի համար, որի ականատեսը դարձան: Նրանք հասկացան, որ խնդիրն այստեղ ձին չէ: Քարավանն առաջ ընթացավ:

Լայն ու լուսավոր կիրճերում, ուր ճանապարհը թույլ էր տալիս կողք կողքի երեք ձիավորի անցնել միանգամից, եղբայր Գուգոյի փոքրիկ ավանակն անսխալ հայտնվեց Արսենիի եւ Ամբրոջոյի ձիերի միջեւ: Ձիերի չափավոր քայլքը ուղեկցվում էր նրա կոտորակվող դոփյուններով, որոնք հիշեցնում էին խաղալիք թմբուկ: Այդ կոտորակների տակտի տակ ցնցվում էին եղբայր Գուգոյի այտերն ու կզակը: Չնայած քայլքի տարբերությանը, ձիերն ու էշը գնում էին պինչ պնչի. վերջինիս համար դա պատվի խնդիր էր: Իսկ եղբոր համար կարեւոր էր միայն, որպեսզի երկու զրուցակիրները իրեն լսեին համաչափ լավ:

Անձրեւի ժամանակ եղբայր Գուգոն նրանց պատմեց թուխպերի եւ ամպերի բնույթի մասին, իսկ լավ եղանակին խոսում էր երկնային գոտիներից, որոնցով լողում են լուսատուները՝ ցերեկային եւ գիշերային: Դիտարկելով, թե ինչքան արագ է փոխվում եղանակը, Ֆրանցիսկյանը չթաքցրեց Արսենիից եւ Ամբրոջոյից նաեւ այն, որ գիտեր մարդու բնութագրի վրա կլիմայի ազդեցության մասին: Հողերի կլիմայական յուրահատկություններից նա հավաստի արտածում էր, որ հռոմեացիները մռայլ են, հույները՝ փոփոխական, աֆրիկացիները՝ նենգ, գալլերը՝ մոլեգին, իսկ անգլիացիք ու տեւտոնացիք՝ ամուր են մարմնով: Ռոնի հովտում ուժգին միստրալը հանգեցրեց նրան, որ այնտեղ մարդիկ հողմահարված են, թեթեւամիտ եւ չեն պահում իրենց տված խոստումը: Իսկ ժողովուրդների տեղաշարժերը կլիմայի հերթագայության հետ միասին անխուսափելիորեն հանգեցնում է բարքերի փոփոխության: Այսպես, լոմբարդացիները, հասնելով Իտալիա, կորցրին դաժանությունը, մասնավորապես, իհարկե, որովհետեւ ամուսնացան իտալուհիների հետ, բայց հիմնականում, ինչպես հարկ է ենթադրել, համենայն դեպս, կլիմայական պայմանների պատճառով:

Չհանդիպեինք քեզ, եղբայր Գուգո, մենք երբեք չէինք իմանա բազում օգտակար բաներ:

Տեղաշարժը տարածության մեջ հարստացնում է կենսափորձը, համեստորեն պատասխանեց եղբայրը:

Այն խտացնում է ժամանակը, ասաց Ամբրոջոն: Եվ դարձնում ավելի տարողունակ:

-ԺԹ-

Ալպերում ճանապարհողը նման է նրան, ով շարժվում է լաբիրինթոսով: Նա կիրճերի հատակում գնում է զիգզագներով, հետեւելով դրանց ձեւին, եւ ճանապարհը նրա երբեք ուղիղ չի լինում: Կիրճերը երբեմն միանում են իրար՝ ճամփորդին հնարավորություն տալով անարգել անցնել մեկից մյուսը: Բայց մարդու համար առավելապես փորձություն հանդիսանալով, լեռները ոչ միշտ են նախատեսում անցման հարմարություններ: Քիչ չի պատահում, երբ կիրճն ամուր փակված է լեռներով: Նման դեպքերում մնում է միակ ճանապարհը՝ դեպի վեր:

Հատկապես այդպես էր շարժվելու քարավանը: Ճանապարհն անցնում էր փոքրիշատե լերկ ժայռով, եւ քարավանը դանդաղ էր բարձրություն հավաքում: Քանի դեռ վերելքը չափազանց կտրուկ չէր, եղբայր Գուգոն պատմում էր սառցադաշտերի զարմանալի բնույթի մասին, որոնք ոչ միայն ներքեւ են սահում ժայռերի միջով, այլեւ գտնվում են մշտական ներքին շարժման մեջ, այնպես որ, նրանց վերին մասերը աստիճանաբար իջնում են ցած, իսկ ցածինները բարձրանում են մակերես, որից էլ մարմինները նրանց, ով ընկել է փապարների կամ խոր ճեղքվածքների մեջ, հետեւանքում հայտնաբերում էին արդեն սառցերեսի վրա: Եղբայր Գուգոն իմանում էր նաեւ ձնահյուսքերի մասին, որոնք փլվում էին փոքրագույն իսկ բղավոցից եւ հոսում, աճելով ինչպես հսկայական անձեւ գունդ, եւ գլորում իրենց մեջ այն ամենը, ինչն ընկած է ճանապարհին. մարդկանց, ձիերին, սայլերը,- եւ ձնահյուսքի տակ ընկած ամեն բան այլեւս մակերես դուրս չի գալիս, քանզի տեղաշարժվելուց հետո ձնահյուսքը անշարժանում է դարերով:

Ժամ առ ժամ լանջը դառնում էր ավելի կտրուկ, որը վերելքը դարձնում էր ոչ միայն դժվարին, այլեւ՝վտանգավոր: Օդն արդեն զգալիորեն ցրտել էր: Ճանապարհը նեղանում էր: Գնացողների աջ կողմից վեր էր հառնում մի կախված ժայռ, իսկ ձախից, կիրճի հատակում ոռնում էր

հեղեղը, եւ նրա ցայտքերում ծիածանն էր փայլատակում: Երբ բարձրացան ավելի վեր, ձյուն եկավ, իսկ կաթիլներն ու հոսանքի գոլորշին նստեցին եւ սառեցին ճանապարհին՝ այն դարձնելով սայթաքուն:

Եղբայր Գուգոյի էշի ոտքերն իրոք որ ճողվեցին, եւ նույնիսկ պահի տակ ձիերն էին նկատելիորեն սայթաքում: Մի քանի անգամ էշն ընկավ առջեւի ոտքերի վրա, եւ եղբայր Գուգոն աճապարեց: Նա արդեն ոչինչ չէր պատմում եւ շնչահատ գնում էր Արսենիի եւ Ամբրոջոյի առջեւից: Ճանապարհի լայնությունն այժմ թույլ էր տալիս գնալ լոկ երկու հեծյալի: Առժամանակ անց բոլորը, ովքեր հեծվոր էին, աճապարում էին եւ տանում էին ձիերին սանձատակերից բռնած: Սայլատերերը հրում էին ետեւից, որովհետեւ եզների ոտքերն սկսեցին անզոր խաչ ընկնել սառույցի վրա:

Ճանապարհի հերթական շրջադարձին էշի ոտքերն աջ գնացին, նա ընկավ կողքի եւ ծիծաղելի սահեց՝ տանելով իր հետ եղբայր Գուգոյին: Էշը սահեց ներքեւ եւ դանդաղ պտտվում էր, եւ բոլորը քարացած նայում էին, թե ինչպես է ցնցվում նրա սպիտակ եւ ինչ-որ չափազանց մեծ փորը, որի վրա թափվեցին ճանապարհային պայուսակները, ինչպես էին անօգնական ցնցվում նրա ոտքերը, սահքը ցած արագացնելով միայն, եւ եղբայր Գուգոն սահում էր նրա հետ միասին՝ անկարող բաց թողնել պարանը...

Վերջին վայրկյանին Ամբրոջոն բռնեց Ֆրանցիսկյանի վզից, եւ սա թողեց պարանը, իսկ կենդանին սարսափելի խշխշոցով դեռ շարունակում էր սահել սառցակալած քարերի վրա, եւ սահեց հասավ մինչեւ անդունդի եզրը: Կախվեց օդում: Մարող զոռոցով փլվեց հեղեղատի մեջ:

Եղբայր Գուգոն ոտքի կանգնեց: Լուռ հայացքով նայեց բոլորին: Մի քանի քայլ արեց դեպի անդունդը, եւ կանգնածներն արդեն պատրաստ էին բռնելու նրան, մտածելով, որ խելքը թոցրել է: Բայց եղբայր Գուգոն իջավ ծունկի: Անհասկանալի էր, աղոթո՞ւմ է նա, թե՞ պարզապես չեն պահում ոտքերը: Երբ ոտքի կանգնեց, նրա ձեռքերում մի ծվեն էշի մազ էր մնացել: Նա ծվենը պահեց բոլորի դիմաց, եւ նրա աչքերից հոսեցին արցունքները:

Եղբայր Գուգոն լաց եղավ լեռնանցքի ամբողջ վայրէջքի ընթացքում: Բոլորի հետ միասին նա բռնել էր սայլերից մեկը, որպեսզի այն

չգլորվի չափից ավելի արագ, եւ արցունքները հոսում էին նրա դեմքով առվակների պես: Բանն այն է, որ նա հանեց թեւատակին պահած ծվենն ու դրեց իր աչքերին: Հարթավայրային տեղանքում երկու կիեւյան վաճառական եղբայր Գուգոյին նստեցրին մորթիներով սայլի վրա, քանի որ արագ քայլքից նրա մոտ շնչարգելություն էր սկսվում: Վշտանալով իր զոհված ընկերոջ համար, նա անսպասելի միտք հայտնեց, որ իրեն այլեւս ոչ ոք չի կծի: Դա չէր կարող իրեն հաշտեցնել կորստյան հետ, բայց որոշ չափով թեթեւացնում էր ցավը:

-Ի-

Նեղ էր ելքը վերջին ալպիական կիրճի: Այն հիշեցնում էր կամար, որի վերին մասում ջահել ծառեր էին, որոնք աճել էին ժայռերի վրա, ճանապարհի երկու կողմերում եւ հակվել իրարու: Այդ կամարի մեջ էլ հայտնվեց ձիավորների խումբը՝ կտրելով քարավանի ճանապարհը: Քարավանի պոչը դեռ շարունակվում էր ձգվել կիրճով, իսկ առջեւում պահախումբն արդեն չէր շարժվում առաջ: Այն կանգնած էր ձիավորներից որոշ հեռավորության վրա՝ փորձ չանելով նրանց մոտենալ, քանզի նրանց տեսքը ոչ մի լավ բան չէր գուշակում:

Ավազակներն են, ասաց եղբայր Գուգոն, նստելով մորթիների վրա, եւ շուրջբոլորի մարդիկ չէին կարող նրա հետ չհամաձայնել:

Իրար մեջ ավազակները խոսում էին իտալերեն: Մի կարճ խորհուրդ անելուց հետո նրանց հետ բանակցություն վարելը հանձնարարվեց Ամբրոջոյին: Մի քանի պահնորդներ կանչվեցին, որ գնան նրա հետ, բայց Ամբրոջոն հրաժարվեց: Նա ցույց տվեց իր մոտով վարգող Արսենիին եւ ասաց.

Հերիք ենք երկուսով:

Երեքով, խառնվեց եղբայր Գուգոն: Երեքով: Չէ՞ որ ես էլ եմ տիրապետում իտալերենին: Բացի այդ, այսօրվանից այլեւս ոչինչ չունեմ կորցնելու:

Այդժամ եղբայր Գուգոյին ձի տվեցին, որպեսզի նա ավազակների հետ չխոսի ներքեւից վերեւ, այլ նրանց հետ իրեն պահի իբրեւ հավասար: Քարավանում ենթադրեցին, որ վանականի տեսքն ի զորու է փափկացնելու նույնիսկ դաժան սիրտը: Երեք ձիավոր դանդաղ պոկ-

վեցին տեղից դեպի ավազակների կողմը:

Խաղաղություն ձեզ, դեռ հեռվից գոչեց եղբայր Գուգոն:

Պատասխան չհաջորդեց, եւ եղբայրն իր ուղերձը կրկնեց ավելի մոտ տարածությունից:

Դու այնքան էլ լավ չես խոսում մեր լեզվով, օտարական, ասաց սպիտակ ձիով ավազակը: Եվ դրա համար պիտի վճարես:

Մնացած ավազակները քրքջացին: Հանձին խոսողի կարելի էր գուշակել ավազակապետին: Նա ծանրամարմին էր եւ ջահել չէր: Նրա դեմքը վառ կարմիր էր, ինչպես մի բաժակ պյեմոնտական գինին, իսկ խոր ճաղատի վրա, գանգի մեջ խրված էր թրի սպին: Նրա ձին դոփում էր սմբակներով եւ, հասկանալի էր, որ այդպես է արտահայտվում հեծյալի անհամբերությունը:

Տիրոջ համար չկա օտարական, առարկեց եղբայր Գուգոն:

Դե մենք նրա մոտ էլ ձեզ կուղարկենք, ասաց ավազակապատը, այնտեղ կլինեք յուրայիններով: Իսկ ձեր քուրջուփալասը կման մեզ:

Ավազակները նորից քրքջացին, այս անգամ՝ զուսպ: Նրանք իրենք էլ դեռ չգիտեին ասվածն ինչ աստիճանի է կատակ:

Մենք շատ լավ պահախումբ ունենք եւ այն ոչ մի տեղ չի փախչի, ասաց Ամբրոջոն: Փորձված է:

Փորձված է, բայց ոչ մեր կողմից:

Ավազակապետը ձգեց սանձերն, ու նրա ձին խրխնջաց:

Ամբրոջոն թոթվեց ուսերը:

Բանն ինչով էլ ավարտվի, դուք կորուստներ կունենաք:

Ոչինչ չպատասխանելով ավազակապետը մի քանի ավազակների հետ դուրս ելավ ճամփեզր: Նրանք ծանրութեթեւ էին անում բավական երկար: Չլինելով նրանցից, ովքեր մարտնչում են հանուն պատերազմի, այդ մարդիկ հասկանում էին, որ մարտի ելքն ակնհայտ չէ: Ուղղելով իր ձին դեպի Ամբրոջոն՝ ավազակապետն ասաց.

Դուք մեզ կտաք ամեն մարդուց տասը դուկատ՝ ներառյալ պահախումբը, եւ ոչ մեկի արյունը չի թափվի:

Ամբրոջոն մտքերի մեջ ընկավ:

Մեկական դուկատ, ասաց եղբայր Գուգոն: Աստծո Գերեզմանին հասնելու համար անհավատները վերցնում են երկու դուկատ, որը մաքուր կողոպուտ է: Որքանով տվյալ դեպքում մեզ թալանում են քրիս-

տոնյաները, հնարավոր եմ համարում սահմանափակվել մեկ դուկատով:

Կարծես թե է մենք առեւտուր ենք անում, ասաց ավազակապետը:

Ես ձգտում եմ որքան հնարավոր է թեթեւացնել ձեր խիղճը, պարզաբանեց եղբայր Գուգոն:

Համակողմանի քննարկումից հետո գտնվեց բոլորի համար ընդունելի գումարը՝ հինգ դուկատ քարավանով գնացողներից: Երբ եղբայր Գուգոն գնաց դեպի քարավանը, որ հաղորդի բանակցության արդյունքը, Արսենին ասաց Ամբրոջոյին.

Մարդը, որը քեզ հետ խոսում էր, վտանգի մեջ է: Նրա գլխում ուժեղ աղմուկ է: Արյունը ճնշում է նրա գլխանոթները, եւ դրանք պատրաստ են պայթելու: Ես տեսնում եմ, Ամբրոջո, թե դրանք ինչպես են ուռչել արյան ավելցուկից: Դրանք նման են յուղոտ, կախված որդերի: Այդ գլխում դեռ կարելի է լավացնել արյան հոսքը, բայց, հավատա ինձ, առանց մտքերի փոփոխության ոչինչ չի ստացվի:

Լսելով Արսենիին, Ամբրոջոն դիմեց ավազակապետին.

Աղմուկը, որ դու լսում ես քո գլխում, հետեւանք է այնտեղ բնավորված մտքերի: Այն վտանգավոր է քո կյանքի համար, բայց իմ ընկերը կարող է դեռ քեզ օգնել:

Ավազակները ոչինչ չիմանալով ավազակապետի գլխի աղմուկի մասին, նորից քրքջացին: Բայց ավազակապետը լուրջ էր մնում: Նա հարցրեց.

Եվ ի՞նչ է ուզում ձեր ընկերը դրա դիմաց:

Նա հունա-ռուսական հավատքի մարդ է եւ քեզ խնդրում է փոխել մտքերդ, այլ կերպ ասած՝ մեղա գալ, քանզի զղջալ հունարեն կլինի մետանոյա, որը բառացիորեն նշանակում է՝ մտքերի փոփոխություն:

Դուք նորից եք առեւտուր անում, քմծիծաղ տվեց ավազակապետը: Բայց առեւտրի առարկա կարող են լինել միայն փողերը:

Սա առեւտուր չէ, այլ՝ պայման, գլուխն օրորեց Ամբրոջոն: Անհրաժեշտ պայման, որի դեպքում իմ ընկերը կարող է քեզ օգնել:

Ձրուցողներին մոտեցավ եղբայր Գուգոն փողերով: Ավազակապետը նրա ձեռքից վերցրեց ոսկե դրամներով փոքրիկ պարկը եւ նետեց ավազակներից մեկին հաշվելու: Արդեն հեռանալիս նա շրջվեց Արսենիի եւ Ամբրոջոյի կողմը.

Գիտե՞ք, ես դեռ ոչ մեկի պայմանները չեմ ընդունել: Նա ցույց տվեց ժայռերով փակված երկնքի կտորը: Նույնիսկ Նրա:

Քարավանը լուռումունջ հետեւում էր, թե ինչպես են ավազակները թողնում կիրճը: Երբ վերջին ավազակն անհետացավ ժայռի ետեւում, քարավանը նույնպես շարժվեց տեղից: Բոլորն էլ հասկանում էին, որ այս անգամ էժան պրծան, բայց դրանից չէին ուրախանում:

Ինչ մարդ ասես չի լինում աշխարհում, հոգոց հանեց կիեյան վաճառականներից մեկը:

Ի՞նչ ասաց նա, Ամբրոջոյին հարցրեց եղբայր Գուգոն:

Նա ասաց, որ մարդիկ իրարից շատ տարբեր են:

Ինչ ճիշտ է, այն ճիշտ է, հաստատեց եղբայր Գուգոն:

Նա նորից բարձրացավ մորթիներով բարձած սայլին: Ավելի հարմար տեղավորվելով սամույրի մորթիների վրա, եղբայր Գուգոն շարունակեց.

Մարդիկ՝ նրանք տարբեր են: Ահա ասում են՝ կան մարդիկ, որոնք կոչվում են անդրոգինիա: Ունեն մարմին՝ մի կողմից տղամարդու, մյուս կողմից՝ կանացի. այդպիսի մարդու մոտ աջ պտուկը տղամարդու է, իսկ ձախ պտուկը՝ կանացի: Իսկ կան մարդիկ, որ կոչվում են սատիր: Նրանց բնակատեղին լեռնային անտառներում է, իսկ նրանց շարժումը՝ արագ. երբ վազում են, ոչ ոք չի կարող նրանց հասնել: Իսկ շրջում են մերկ, եւ նրանց մարմինը ծածկված է մազերով: Մարդկային լեզվով չեն խոսում, միայն ձայնում են ճիչերով: Գոյություն ունեն, այսպես ասած, նաեւ սկիապոդներ՝ մարդիկ, որոնք հանգստանում են սեփական ոտնաթաթերի ստվերում: Նրանց ոտնաթաթերն այնքան մեծ են (եղբայր Գուգոն բարձրացրեց իր ոտնաթաթերը), որ շոգ եղանակին նրանք պատսպարվում են դրանցով, ինչպես ծածկի տակ: Կան, ես ձեզ ասեմ, աշխարհում զանազան ծնունդներ. նրանք շնագլուխ են, իսկ այլոք՝ առանց գլուխ, նրանց կրծքին ատամներ կան, արմունկների վրա՝ աչքեր, ուրիշները երկու դեմք ունեն, այլոք՝ չորս աչքեր, ոմանք վեց եղջյուր են կրում գլխին, իսկ կան որ վեց մատ ունեն ձեռքերին եւ ոտքերին:

Եթե նրանք իրոք գոյություն ունեն, շրջվելով հարցրեց Արսենին, ո՞րն է նրանց գոյության նպատակը:

Եղբայր Գուգոն մտքերի մեջ ընկավ:

Նպատակներ չկան, կան պատճառներ: Ամբողջ խնդիրն այն է, որ Աստված աշտարակաշինությունից հետո բաց թողեց բոլորին ապրելու ըստ իրենց սրտի ուզածի: Ահա եւ ոմանք մոլորվեցին: Իրենց ճանապարհն ուղղեցին իրենց հակումներին համապատասխան, եւ նրանց արտաքին տեսքն սկսեց համապատասխանել իրենց մտքերի ձեւին: Ամեն ինչ շատ տրամաբանական է:

Տրամաբանակա՞ն: Ես մարդկանց էի ճանաչում մտքերի այնպիսի ձեւով, որ նրանց տեսքն ըստ այդ տրամաբանության պիտի որ լիներ սարսափելի: Ընդ որում, նրանք լիովին բարետես էին:

Չսպասելով պատասխանի, Ամբրոջոն խթանեց ձին եւ սլացավ առաջ: Մի փոքր մտորելուց հետո նրա ետեւից շարժվեց նաեւ Արսենին:

Առանց բացառությունների կանոններ չեն լինում, նրանց ետեւից բղավեց եղբայր Գուգոն: Ասում են, որ, օրինակ, երկրագնդի հակառակ կողմում ապրում են հակոտնյաներ, եւ նրանցից շատերը, պատկերացնում եք, այնպիսի տեսք ունեն, ինչպես մենք:

Բայց Ամբրոջոն արդեն նրան չէր լսում:

Ձեզ դա դո՞ւր է գալիս, կիեւյան վաճառականներին դիմեց եղբայր Գուգոն:

Վաճառականները գլխով արեցին: Գերմաներեն նրանք ոչինչ չէին հասկանում:

Բայց ես այնքան էլ չեմ հավատում հակոտնյաների պատմություններին, քաջալերված շարունակեց եղբայրը: Եվ գիտե՞ք ինչու: Որպեսզի նրանց լուրջ վերաբերվես, անհրաժեշտ է ընդունել, որ երկրագունդը կլոր է: Ես էլ չեմ ասում այն մասին, որ դա անհեթեթ է, որ դա բռիություն է, ամենից առաջ դա ծիծաղելի է: Հենց ընդունենք, որ երկրագունդը կլոր է, մենք պարզապես ստիպված կլինենք ենթադրել, որ երկրագնդի մյուս երեսին մարդիկ քայլում են գլխիվայր:

Եղբայր Գուգոն բարձրաձայն քրքջաց: Նայելով նրան՝ սկսեցին ժպտալ նաեւ կիեւյան վաճառականները: Եղբայր Գուգոյի ծիծաղն այնքան վարակիչ էր, որ մեկ րոպե անց ողջ քարավանը ծիծաղում էր: Այդ ծիծաղի հետ դուրս էր մղվում մարդկանց տագնապը, որոնք վերջին օրերին ենթարկվել էին մահացու վտանգների: Այդ ծիծաղի մեջ ամփոփվում էր այն մարդկանց ուրախությունը, ում առջեւում սպասում էր

Վենետիկը՝ աշխարհի ամենասքանչելի քաքաղը:

Երբ հաջորդ առավոտյան քարավանը լքեց գիշերային երթադադարի վայրը, Ալպերի կողմից մոտեցան երկու ձիավոր: Հանձին նրանց, ճանաչեցին ավազակներին, որոնց հանդիպել էին նախօրեին: Տեսնելով Արսենիին եւ Ամբրոջոյին՝ նրանք մոտեցան:

Մեր ավազակապետը շատ վատ է, դիմեցին նրանք Ամբրոջոյին: Երեկ երեկոյան նա կաթվածահար եղավ եւ պառկած է անշարժ: Քո ընկերը կարո՞ղ է ինչ-որ բանով օգնել:

Ամբրոջոն Արսենիին թարգմանեց ասվածը:

Նրանց հաղորդիր, որ ես հիմա անզոր եմ օգնել, պատասխանեց Արսենին: Այդ մարդու ժամերը հաշված են, եւ այսօր երեկոյան նա կմահանա: Ողորմածություն է արագ մահը նրան հայտնված Աստծուց:

Լսելով Արսենիի պատասխանը՝ ավազակներն ասացին.

Քանի դեռ նա կարող էր խոսել, խնդրեց ձեզ փոխանցել սա:

Ավազակներից մեկը թեւատակից հանեց ոսկով լի փոքրիկ պարկը եւ տվեց Ամբրոջոյին: Փողերն անմիջապես վերադարձրին նրանց, ովքեր նախօրեին տվել էին: Քարավանն ուղղություն վերցրեց դեպի Վենետիկ:

-ԻԱ-

Վենետիկի մուտքի մոտ քարավանը կանգնեցրեց պահակախումբը: Բոլորից պահանջում էին ճանապարհային նամակներ, որոնք կարող էին ապացուցել, որ օտարականները ժամանում են հյուսիսից եւ ոչ թե հարավ-արեւելքից: Փոքր Ասիայում մոլեգնում էր ժանտախտը, եւ իշխանությունները վախենում էին, թե այն կթափանցի Վենետիկյան հանրապետություն: Նամակներ ունեին բոլորը, բացի եղբայր Գուգոյից, ով դրանք կորցրել էր իր էշի եւ պայուսակների հետ միասին, բայց քարավանում բոլորը միաձայն հաստատեցին, որ եղբայրն իրենց հետ կտրել-անցել է Ալպերը:

Կտրել-անցել է, ախ քաշեց Ֆրանցիսկյանը, թեեւ համոզված էլ չէր, թե դա ճիշտ որոշում է:

Վենետիկում բոլորն իրար հրաժեշտ տվին: Հրաժեշտը նշվեց հատուկ սրտալիությամբ, քանզի շատերը գիտեին, որ բաժանվում են առ-

միշտ: Դրանում էր այն ժամանակի բաժանման ինքնատիպությունը: Միջնադարը հազվադեպ էր հնարավորություն ունենում կրկնակի հանդիպացնել մարդկանց երկրային կյանքի ընթացքում:

Եղբայր Գուգոն Արսենիին եւ Ամբրոջոյին հրավիրեց գիշերելու Ֆրանցիսկյան միաբանությունում: Այլ հանգրվան Վենետիկում նրանք չունեին եւ հրավերքը երախտագիտությամբ ընդունվեց: Միաբանություն հասան բավականին երկար, որովհետեւ եղբայր Գուգոն ճանապարհը հստակ չէր հիշում: Նա Ամբրոջոյի հետ նստել էր նույն ձիու վրա, ցույց տալով, ուր գնան: Փողոցները ոլորվում էին՝ վերածվելով փակուղիների կամ տանում էին նախկին տեղը: Եռակի նրանք հայտնվեցին Սան-Մարկո հրապարակում եւ կրկնակի՝ Ռիալտոյի կամրջի մոտ: Ձիերը գնում էին իրար ետեւից, եւ նրանց սմբակների դոփյունը ծածկվում էր սեփական արձագանքով: Երբեմն ստիպված էին ընդհուպ սեղմվել պատերին, որպեսզի տեղ տան հանդիպակաց հեծյալներին: Ամբրոջոն ժպիտով էր նայում Արսենիին: Առաջին անգամ էր նա տեսնում իր ընկերոջը զարմացած:

Արսենին իրոք զարմացած էր, չէ՞ որ նախկինում նա չէր տեսել նման ոչ մի բան: Մի անգամ նույնիսկ կանգ առավ կամրջի վրա եւ նայեց, թե ինչպես է տարեց վենետիկուհին իջնում գոնդոլի մեջ ուղիղ իր տան դռների միջից: Գոնդոլը նրա ոտքերի տակ օրորվեց: Արսենին շրջվեց: Լսելով թիակի ճողփյունը, նա զգուշորեն շրջեց գլուխը: Վենետիկուհին հանգիստ նստել էր նավախելին: Նա չէր ընկալում Արսենիի տագնապները, որովհետեւ վերջին կես դարի ընթացքում վենետիկուհին իր տնից դուրս էր եկել հենց այդպես:

Ճանապարհորդներին միաբանությունում ընդունեցին բարյացակամորեն: Եղբայր Գուգոն հաղորդեց վանահորը, որ Արսենին կաթոլիկ չէ, եւ վանահայրը պատասխանեց անհասկանալի ժեստով: Այդ ժեստը կարելի էր բացատրել տարբեր ձեւով, բայց ուղղակի արգելանք միաբանությունում կանգ առնելու, այն չէր նշանակում: Ծայրահեղ դեպքում այդպես ընկալեց եղբայր Գուգոն: Նա Արսենիին եւ Ամբրոջոյին տարավ բոլոր երեքի համար նախատեսված խուցը, որտեղ նրանց համար անկողին էր գցված եւ լվացվելու ջուր կար: Մեկ ժամ անց նրանց սպասում էին իրիկնահացի: Իրիկնահացի երեքից ոչ ոք չգնաց: Եղբայր Գուգոն եւ Ամբրոջոն՝ ճանապարհից հետո ընկղմված խոր քնի մեջ,

Արսենին՝ Վենետիկի հետ հանդիպելու խոր ապրումներով: Դրանք չէ-ին թողնում քնել: Չէին թողնում նաեւ մնալ խուցում: Նա կամացուկ իջավ ներքեւ եւ, գլուխ խոնարհելով բարապանին, ելավ դուրս:

Միաբանությունը ջրանցքի վրա էր: Փողոցից թվում էր սովորական տուն, չտարբերվող այլ տներից, որոնք կառուցված էին կիպ կպած իրար: Տների եւ ջրանցքի միջեւ մի նեղ շերտ սալարկուղի էր անցնում, եւ այստեղ պետք չէր ուղղակի դուրս գալ ջրի վրա: Արսենին մի քանի քայլ արեց դեպի ջրանցքը: Նստելով խսիրին՝ նա դիտարկում էր, թե ինչպես են ճոճվում ջրիմուռները կառանման ցցահենարանի վրա: Ջրի հոտն այստեղ ուրիշ էր, քան իր տեսած այլ վայրերում: Փտահոտ էր գալիս: Հիշելով դրա հետեւանքները, Արսենին երջանկություն ապրեց, քանզի դա Վենետիկի հոտն էր:

Երեկոյացավ: Արեւը չէր երեւում տների ետեւից, բայց պատերը, որոնց հաջողվում էր հասնել վերջին ճառագայթներին, դառնում էին օքրայագույն եւ դեղին: Արսենին քայլում էր ջրանցքի երկարությամբ,- այնտեղ, ուր կարելի էր գնալ,- եւ հատում էր կամարաձեւ կամրջակնե-ը: Սկզբում նա ջանում էր հիշել անցած ուղին, որպեսզի վերադառնա, բայց արդեն մի քանի փողոց անց չէր կարողանում որոշել նույնիսկ ուղ-ությունը, որտեղ փռված էր ֆրանցիսկայան միաբանությունը: Երբեք իր կյանքում նա չէր եղել նման զարմանալի վայրում, եւ հիմա չէր կա-րողանում մտապահել: Արսենին զգում էր անտառի տարածությունը եւ դաշտի տարածությունը, Բելոզյորեի սառցե անապատն ու փայտե փո-ղոցները Պսկովի, եւ ամենուր առանց դժվարության գտնում էր ճանա-պարհը: Իսկ այժմ, ընկնելով ջրի եւ քարի շերտաշարերի միջեւ, նա հասկացավ, որ այդ տարածությունը չի զգում: Նա մենակ էր արտասո-վոր ու սքանչելի քաղաքում եւ չգիտեր նրա լեզուն: Միակ մարդը, որ կարող էր իրեն օգնել, քնած էր, բեզարած, չգիտես որտեղ գտնվող մե-նաստանում: Եվ Արսենին իրեն հանգիստ զգաց:

Նա գնում էր կռահելով եւ չէր փորձում հիշել ճանապարհը: Որոշ փողոցներ սկզբում թվացին ծանոթ: Բայց հաջորդ վայրկյանին արդեն նա հայտնաբերեց նախկինում չտեսած պատշգամբներ ու խորաքան-դակներ եւ հասկացավ, որ նմանությունն անամոթաբար ինքն իրեն կրկնության տեղ է ներկայացնում: Երբ բոլորովին մթնեց, Արսենին իջավ Սուրբ Մարկոսի հրապարակ: Ծագող լուսինը լուսավորել էր տա-

ճարը, որ խավարում նման էր մութ լեռան: Այն շարված էր Կոնստանդնուպոլսից կողոպտված քարերով. այսպես ասաց Արսենին Ամբրոջոյին: Նա ձեռքը հպեց մարմարե սյունին եւ ջերմություն զգաց, որն այն ներծծել էր իր մեջ օրվա ընթացքում: Մտածում էր, որ դա, հավանաբար, Բյուզանդիայի ջերմությունն է:

Արսենին նստեց մուտքից աջ եւ հակվեց սյանը: Նա զգաց, որ հոգնել է: Ավելի հարմար տեղավորվելով՝ Արսենին կպավ ինչ-որ փափուկ բանի: Որմնախորշում՝ սյուների միջեւ, մի աղջնակ էր նստել: Նրա մանկական դեմքը թվաց խորաքանդակներից մեկը՝ այն բանից, հնարավոր է, որ անշարժ էր: Արսենին ձեռքը տարավ նրա աչքերին, եւ նա աչքերը թարթեց:

Խաղաղությո՛ւնն ընդ քեզ, զավակս, արտասանեց Արսենին: Ես միայն ուզում էի իմանալ, թե արդյոք չի՞ լքել քեզ կյանքը:

Նա նայեց Արսենիին առանց զարմանքի:

Իմ անունը Լաուրա է, եւ ես չեմ հասկանում քո լեզուն:

Ես տեսնում եմ, որ դու ինչ-որ բանից ճնշված ես, բայց չգիտեմ քո վշտի պատճառը:

Երբեմն ավելի հեշտ է խոսել, երբ քեզ չեն հասկանում:

Հնարավոր է, դու հոի ես, եւ քո երեխան չի լինելու օրինական, քանզի նրա հայրը չդարձավ քո ամուսինը:

Որովհետեւ, երբ հայտնվում ես անհանգստությունների մեջ, ուզում ես արտահայտել քո ցավը եւ վախենում ես, որ այն դուրս կգա քո շուրթերից, եւ բոլորը կիմանան:

Գիտես, դա չուղղվող բան չէ: Նրա հայրը դեռ կարող է դառնալ քո ամուսինը: Կամ քո ամուսինը կարող է դառնալ ուրիշ մի մարդ, այդպես լինում է: Ես, հավատա ինձ, քեզ կին կառնեի, որպեսզի քեզ օգնեմ, բայց չեմ կարող այդ անել, քանի որ ունեմ հավերժական սեր եւ հավերժական կին:

Իսկ ես, կարելի է ասել, արդեն չեմ էլ վախենում: Ես մի միջոց գիտեմ, որը հաշտեցնում է բոլոր դժբախտությունների հետ: Եթե արդեն բոլորովին վատ զգամ, իմ հուսալքությունն ինձ ուժ կտա դրանից օգտվելու:

Իմ կյանքում եղել է Ուստինան եւ մի փոքրիկ անանուն երեխա, բայց նրանց երկուսին էլ ես չպահպանեցի:

Մի քանի օր առաջ ես իմացա, որ հիվանդ եմ բորոտությամբ: Երբ պուտեր հայտնվեցին դաստակներիս վրա, ես դեռ չգիտեի, դա ինչ նշան է: Իսկ երբ ամառվա կեսին կոկորդս սկսեց քոր գալ, նույնպես գլխի չընկա: Բայց ինձ փողոցում մի պատահական մարդ տեսավ եւ ասաց՝ իսկ դու բորոտություն ունես: Ասաց՝ լքիր այս քաղաքը եւ գնա բորոտների քաղաք, որպեսզի անեծք չդառնաս քո տան գլխին: Եվ ես գնացի բժշկի մոտ, եւ բժիշկը հաստատեց, որ այդ մարդն իրավացի է:

Այն ժամանակից ի վեր ես փորձում եմ զրուցել նրանց հետ, սակայն նրանք ոչ մի կերպ չեն կարողանում ինձ պատասխանել: Տղան փոքրիկ էր, որ մեռավ, նա չի էլ կարող պատասխանել: Բայց չէ՞ որ չի պատասխանում նաեւ Ուստինան: Իհարկե, նրանց դրության մեջ դա այդքան էլ հեշտ չի: Մի՞թե ես չեմ հասկանում: Հասկանում եմ... Եվ, համենայն դեպս, սպասում: Թող որ ոչ բառ-նշանով: Երբեմն ինձ համար շատ ծանր է:

Եվ ես այլեւս տուն չվերադարձա: Ես գիտեի, որ իմ տանեցիներն ինձ չեն թողնի եւ կնախընտրեն դանդաղ մեռնել ինձ հետ:

Իսկ ես միեւնույն է չեմ ընկնում հուսալքության մեջ: Ուժերիս ներածին չափով, համենայն դեպս, փորձում եմ պատմել Ուստինային այտեղ տեղի ունեցածի մասին: Չէ որ նա իր կայնքը միչեւ վերջ չապրեց, ահա եւ ես ջանում եմ ինչ-որ ձեւով լրացնել չապրվածը: Միայն թե դա դժվար է: Կյանքն ամբողջությամբ, ամբողջ մանրամասներով, չես պատմի, հասկանո՞ւմ ես:

Իմ եւ մնացած աշխարհի միջեւ պատ իջավ: Առայժմ այն ապակուց է, քանի որ իմ դժբախտության մասին ոչ ոք չգիտի: Բայց հետագայում ամեն բան կդառնա տեսանելի: Բժիշկն ինձ ամեն ինչ պատմել է: Ինձ թվաց, թե դա նրան բավականություն է պատճառում: Իսկ գուցեեւ, նա ուզում էր ինձ ազատել հույսերից եւ հիասթափություններից:

Իրապես այնտեղ կարելի է փոխանցել ընդհանուր գաղափարը: Գլխավորն այն ամենից, ինչը տեղի է ունենում: Օրինակ, իմ սերն իր հանդեպ:

Ինձ կուղարկեն բորոտանոց: Ժամանակի ընթացքում իմ մոտ կառաջանա թամբածեւ քիթ: Առյուծի դեմք: Ես պիտի ամաչեմ, որ այդ դեմքի վրա է ընկնում բոլորի արեւը: Ես կիմանամ, որ այդ իրավունքը չունեմ: Ես իրավունքը չունեմ ոչ մի սքանչելի բանի: Կարելի է մեռնել՝

լինելով դեռ ողջ:

Արսենին բռնեց Լաուրայի ձեռքը, նայեց նրա աչքերի մեջ, եւ այդպես նրան հայտնվեց տեղի ունեցածի էությունը: Նա համբուրեց Լաուրայի ճակատը:

Առողջ լեր, զավակս: Քանի մարդը հողի վրա է, շատ բան ուղղելի է: Իմացիր, որ ոչ ամեն մի հիվանդություն է մնում մարմնում: Նույնիսկ՝ ամենասարսափելին: Դա չեմ կարող բացատրել որեւէ այլ բանով, բացի իբրեւ Բարձրյալի ողորմածություն, բայց տեսնում եմ, որ բորը քո միջից դուրս կգա: Իսկ դու վերադարձիր քո տանեցիների մոտ եւ գրկիր նրանց եւ մի բաժանվիր նրանցից երբեք:

Տեսնելով, որ Լաուրան այլեւս ուժ չունի, Արսենին օգնեց բարձրանալ նրան եւ տարավ դեպի տուն: Սկսվեց գիշերային մանրամաղ անձրեւը: Երկնքի այն մասը, որի մեջ գտնվում էր լուսինը, դեռ ազատ էր ամպերից: Լուսնալույսում ճոճվելով շողում էին թաց գոնդոլները: Նրանց գոգատակերին հնչեղ չփփոցով ճողփում էր ջուրը: Իր տան շեմին (ծնողների գրկում) Լաուրան շրջվեց Արսենիի կողմը:

Բայց Արսենին չկար: Ուրվականային քաղաքը ստեղծված էր այն բանի համար, որպեսզի նրանում չքանաս: Տարրալուծվես անձրեւի մեջ: Լաուրան դա գիտեր եւ չզարմացավ: Նույնիսկ, գտնվելով կողքին, Արսենին նրան չէր թվում իրական էակ: Լաուրան չէր կարողանա կրկնել նրա բառերը, բայց դրանք լիացրին իրեն անսահման ուրախությամբ, քանզի գլխավոր իմաստը բացահայտված էր արդեն Լաուրային: Հիմա նա վերջին օրերն ընկալում էր իբրեւ սարսափելի երազ: Նա ինքն էլ չէր հասկանում, թե իր հետ ինչ է կատարվել, եւ աշխարհում ամենաշատն ուզում էր արթնանալ:

Արսենին քայլում էր դեպի միաբանություն: Այժմ, երբ երկինքը վերջնականապես ծածկվեց ամպերով, եւ անձրեւն իջավ համատարած պատի պես, շարժման ուղղությունը դարձավ փոքրիշատե պարզ: Եղբայր Գուգոն եւ Ամբրոջոն չգիտեին նրա բացակայության մասին: Քնած էին եւ երազներ էին տեսնում:

Եղբայր Գուգոն երազում տեսավ իր իշուկին՝ քնքուշ, սանրված բաշով, հանդիսորեն զարդարված: Նա դնդաղ ճախրում էր անդունդի վրայով եւ իր տեսքով հիշեցնում Պեգասի: Նրա մեջքին հազիվ նկատելի թրթռում էր տապճակը: Ես գիտեի, որ անցյալից ոչինչ չի չքանում,

շշնջում էր երազում եղբայր Գուգոն: Ո՛չ մարդը, ո՛չ կենդանին, ո՛չ նույնիսկ տերեւը: Deus conservat omnia. Նրա դեմքն արցունքներից թացացել էր:

Ամբրոջոն երազում մի փողոց տեսավ Օրյոլ քաղաքում: Русский лен խանութի աստիճանների վրա լուսանկարվում էր հինգ հոգուց բաղկացած մի խումբ: Ձախից աջ՝ Սատվեեւա Նինա Վասիլեւնա, Կոռոտչենկո Ադելաիդա Սերգեեւնա (վերեւի շարք), Ռոմանցովա Վերա Գավրիլովնա, Մարտիրոսյան Սովսես Ներսեսովիչ, Սկոմորոխովա Նինա Պետրովնա (ներքեւի շարք): 28 մայիսի 1951 թվական: Ի պատիվ Русский лен խանութի բացման հինգերորդ տարեդարձի տնօրեն Մարտիրոսյանը կոլեկտիվին առաջարկեց տոն կազմակերպել: Կանայք տանը պատրաստեցին դոնդող, դոլմա, խառնախորտիկ եւ փլավ: Նրանք այդ ամենը բերեցին աշխատավայր եւ դասավորեցին ըստ ճաշատեսակների ու սալաթամանների: Հաջորդաբար խառնելով խառնախորտիկն ու փլավը, լպստում էին գդալները: Սովսես Ներսեսովիչը բերեց երկու շիշ շամպայն եւ մեկ շիշ «Արարատ» կոնյակ: Նա եկավ մեդալները կրծքին: Կանանցից օծանելիքի եւ արդուկած շրջազգեստի բույր էր գալիս: Բուրում էր արեւոտ մայիսյան օրով: Բաժակաճառեր ասացին (Սովսես Ներսեսովիչը), շատ ուրախ էր: Երբ խանութի տնօրենը բաժակ բարձրացրեց, նրա կրծքի մեդալները հաճելի զրնգացին: Հետո եկավ լուսանկարիչը եւ լուսանկարեց բոլորին խանութի ֆոնի վրա: 2012 թվականին, արդեն աչք ածելով դեղնած լուսանկարը, Նինա Վասիլեւնա Սատվեեւան ասաց՝ այն ժամանակ Սովսեսը կարճ օր էր հայտարարել խանութում: Նրանցից, ում տեսնում եք լուսանկարում, ողջ եմ մնացել միայն ես: Ես նույնիսկ չեմ կարողանում այցելել նրանց գերեզմանին, որովհետեւ տեղափոխվել եմ Տուլա, իսկ նրանք մնացել են Օրյոլում: Մի՞թե այդ ամենը մեզ հետ է եղել: Ես նրանց եմ նայում ասես այն աշխարհից: Տեր Աստված, որքա՜ն եմ նրանց սիրում:

-ԻԲ-

Մեկ շաբաթ անց Արսենին եւ Ամբրոջոն բարձրացան Սուրբ Մարկոս նավի վրա: Այդ շաբաթվա ընթացքում եղբայր Գուգոյին հաջողվեց միաբանության վանահոր միջոցով վենետիկյան դոժ, սինյոր Ջովանի

Մոչենիգոյից մի ճամփորդական նամակ հաջողացնել: Այդ նամակը հրահանգված էր պահպանել ամբողջ Վենետիկյան հանրապետությունում, որը տարածված էր Ադրիատիկ ծովի երկու ափերին: Այդ օրերին էլ Արսենին եւ Ամբրոջոն ստիպված եղան վաճառել ձիերը: Ծովային երկարատեւ ճանապարհ էր սպասվում, եւ ոչ ոք չգիտեր, դա ինչպես կտանեն կենդանիները: Բացի այդ, ձիերի տեղափոխումն էժան չէր:

Արսենիին եւ Ամբրոջոյին նավի վրա հանձնարարված էր լինել կեսգիշերին մոտ: Մինչեւ նավամատույց նրանց ճանապարհեց եղբայր Գուգոն: Հաջորդ օրը նա նույնպես թողեց Վենետիկն ու ուղեւորվեց Հռոմ: Ֆրանցիսկյան եղբայրներն ուրիշ մի ավանակ նվիրեցին, բայց այդ փոփոխությունը նա համարժեք չհամարեց: Բծախնդրորեն զննելով էշին եւ թփթփացնելով նրա ետնաբաշին, եղբայր Գուգոն ասաց.

Այս կենդանու մեջ իսկական բնավորություն չկա, եւ ես վախենում եմ, որ նա ինձ չի զսպի:

Մի վախեցիր դրանից, եղբայր Գուգո, պատասխանեցին նրան ֆրանցիսկյանները: Մի կողմ թող քո հոգսը, քանզի այս կենդանին կզսպի քեզ: Նա բնավորություն ունի, եւ այդ հանգամանքով է պայմանավորված որոշ չափով մեր ցանկությունը՝ բաժանվել նրանից:

Ցանկանալով օգնել Արսենիին եւ Ամբրոջոյին բեռը տեղ հասցնել նավամատույց, եղբայր Գուգոն բարձեց այն իր նոր էշի վրա: Բեռն, ըստ էության, մեծ չէր, սակայն էշը չէր ուզում տանել նույնիսկ դա: Ամբողջ ճանապարհին նեղացած ցատկոտում էր՝ փորձելով ցած գցել իր թամբին դրված կաշվե պայուսակները: Նա պայուսակները քսում էր պատերին եւ դրանցով կառչում կողքով անցնող հեծյալների ասպանդակներից: Տեսնելով դա՝ եղբայր Գուգոն փոքր-ինչ հանգստացավ: Նա գիտակցեց, որ իրեն դեռ զսպվելու հնարավորություն մնում է: Նավամատույցում եղբայր Գուգոն գրկախառնվեց նավարկողների հետ: Նա լաց եղավ եւ ասաց.

Երբեմն մտածում ես, արժե՞ արդյոք կապվել մարդկանց հետ, եթե հետո այդքան դժվար է բաժանվելը: Գրկելով եղբայր Գուգոյին՝ Արսենին թփթփացրեց նրա մեջքին.

Գիտես, բարեկամս, ցանկացած հանդիպում չէ, որ ավելին է, քան բաժանումը: Մինչեւ հանդիպումը դատարկություն է, ոչինչ, իսկ բաժանումից հետո արդեն դատարկություն չի լինում: Հանդիպելով մի օր՝ լի-

ովին բաժանվելն անհնար է: Մարդը մնում է հիշողության մեջ իբրեւ նրա հիշողության մաս: Այդ մասը ստեղծել է ինքը, եւ այն ապրում է եւ երբեմն դուրս է գալիս շփվելու իր ստեղծիչի հետ: Այլապես ինչի՞ց է, որ մենք թանկագին մարդկանց զգում ենք տարածության վրա:

Արդեն բարձրանալով նավի վրա, Արսենին եւ Ամբրոջոն խնդրեցին երդբայր Գուգոյին չկանգնել նավամատույցին, որովհետեւ ոչ ոք չգիտեր, թե ճշգրիտ երբ կշարժվի նավը: Ֆրանցիսկյանը գլխով էր անում, բայց չէր հեռանում: Նավի թույլ լույսերից իսկույն չէր նկատվում, թե իրականում ինչպես է պարանը ձգվում եղբայր Գուգոյի ձեռքերում եւ խրտնած դիմադրում նրա էշը՝ չուզելով թողնել կառամատույցը: Կենդանին հետեւում էր հարյուր քսան հետեւակայինների նավաբարձումին, որոնց վենետիկյան դոժն ուղարկել էր Կրետեում ծառայելու: Նրանք ներկայացան լրիվ համազգեստավորված, եւ ճանապարհող կանանց կրկնակի տխուր էր բաց թողնել նրանց այդքան ջահել-ջահել: Այդպիսին, մտածում էին կանայք, մենք նրանց տեսնում ենք առաջին անգամ: Իսկ, հնարավոր է, նաեւ վերջին:

Առավոտյան ժամը չորսին, հենց լուսաբացից առաջ, նավը բարձրացրեց խարիսխը: Նա դանդաղ դուրս եկավ նավահանգստից, եւ լուսացող երկնքի ֆոնի վրա նշմարվում էին Սուրբ Մարկոսի տաճարի ուրվագծերը: Այն ժամանակ, երբ բոլոր ճանապարհորդողները քնել էին նավամբարի կախովի մահճակալներում, Արսենին մի քանի ժամ չէր լքում տախտակամածը: Նա հաճույքով էր լսում կայմի ճռճռոցը եւ առագաստների փռփռոցը,- դա թափառումների քաղցրանուշ երեժշտությունն էր: Արսենին դիտում էր, թե ինչպես է ջուրը սեւից աստիճանաբար դառնում վարդագույն, իսկ վարդագույնից՝ զմրուխտյա:

Նրան թվում էր, որ համեմատած այն ջրի հետ, որն ինքը տեսել էր նախկինում իր կյանքում, ծովային ջուրը բոլորովին այլ կազմության հեղուկ: Ձեռաց լիզելով ալիքների ցայտքերը, նա զգում էր դրանց աղիությունը: Ծովային ջուրն այլ գույնի էր, այլ կերպ էր բուրում եւ նույնիսկ իրեն պահում այլ կերպ: Նրանում չկար գետային մանրիկ ծածանքը: Գետային եւ նույնիսկ լճային ջրից տարբերվում էր այնպես, ինչպես կռունկը տարբերվում է ճնճղուկից: Գալով նման համեմատության, Արսենին ենթադրեց ոչ այնքան մեծությունը, որքան շարժման բնույթը: Ծովային ջուրը գլորվում էր մեծ ալիքներով, եւ նրա շարժումները վե-

հատես էին ու սահուն:

Տեսնելով Արսենիի հետաքրքրությունը ծովային ջրի հանդեպ, նրան մոտեցավ նավի կապիտանը՝ հաստ շուրթերով մի ցմփոր մարդ: Կապիտանը լսել էր Արսենիի եւ եղբայր Գուգոյի զրույցը եւ նրանց հետ խոսեց գերմաներեն.

Ծովային ջուրը եւ գետայինը երկու տարբեր տարերքների էություն են: Ես երբեք չէի համաձայնի վարել նավը քաղցրահամ ջրերով, սինյոր:

Ի նշան հարգանքի կապիտանի դիրքորոշման՝ Արսենին խոնարհեց գլուխը: Տարված ջրի մասին դատողություններով՝ զրուցակիցներին մոտեցան երկու ուխտավոր Բրանդենբուրգից:

Լիովին ակնհայտ է, շարունակեց կապիտանը, որ քաղցրահամ ջուրը թույլ է աղի ջրից: Իսկ եթե որեւէ մեկը դրանում կասկածում է, ապա թող բացատրի ինձ, ինչո՞ւ, ասենք ծովային ջրերն ունակ են արտանետելու այդպիսի հզոր քաղցրահամ ջրի հոսք, ինչպիսին Սենան է Ռուանեում, եւ ստիպել նրան հոսել հակադիր ուղղությամբ երեք օր:

Հնարավոր է, ասաց ուխտավոր Վիլհելմը, քաղցրահամ ջրին աղի ջուրը թվում է զզվելի մի բան, եւ այդ պատճառով նրա առջեւ նահանջում է:

Իսկ ես կարծում եմ, առարկեց ուխտավոր Ֆրիդրիխը, որ գետը հարգանք է տածում իր հոր՝ ծովի հանդեպ՝ նրան զիջելով ճանապարհը: Իսկ երբ սկսվում է տեղատվությունը, նման հարգանքով էլ հետեւում է նրան:

Խոսելով հայրության մասին, դու՝ օտարերկրացի, ենթադրում ես, որ նման տարբեր տարերքների միջեւ գոյություն ունի ցեղակցություն, զարմացավ կապիտանը:

Իհարկե, ասաց ուխտավոր Ֆրիդրիխը, չէ՞ որ ծովը բոլոր գետերի եւ աղբյուրների նախակունքն է, ինչպես Տեր Հիսուս Քրիստոս աղբյուրն է ցանկացած բարեգործության եւ գիտելիքի: Մի՞թե մաքուր ձգտումներ չեն հանդիսանում բոլորը՝ մինչեւ վերջին հոսանքը՝ մեկ եւ միասնական աղբյուրից: Եվ դրա նմանությամբ, ինչպես հոգեւոր հոսանքներն են ձգտում իրենց նախակունքին, բոլոր ջրերը վերադառնում են ծով:

Իսկ ի՞նչ ես դու մտածում ջրերի հարահոսության մասին, հարցրեց Արսենիին ուխտավոր Վիլհելմը:

Մեր երկիրը հիշեցնում է մարդկային մարմին, պատասխանեց Արսենին, եւ ներսում ներթափանցված են ջրանցքներ, ինչպես մարմինը ներթափանցված է արյունատար անոթներով: Որտեղ էլ մարդն սկսի փորել հողը, նա անպայման ջրի դեմ կառնի: Այդպես էր ասում իմ պապ Քրիստափորը, ով ջուրն զգում էր գետնի տակ:

Ես երկու պապ եմ ունեցել, բայց ոչ մեկին չեմ տեսել,ախ քաշեց կապիտանը: Երկուսն էլ եղել են ծովային եւ երկուսն էլ ջրահեղձ են եղել:

Կապիտանի խոսքերից հետո զրուցակիցները որոշ ժամանակ լուռ մնացին:

Քաղցրահամ ջրի խառնվելը աղի ջրին, կամաց ասաց ուխտավոր Ֆրիդրիխը, նմանեցնում եմ այն բանին, թե ինչպես է այս աշխարհի քաղցրությունը վերածվում աղի եւ դառնության:

-ԻԳ-

Վենետիկից մեկնելուց մեկուկես օր հետո Սուրբ Մարկոսը կտրեցանցավ Ադրիատիկ ծովն ու խարիսխ նետեց քառորդ մղոն Պարենցո քաղաքից հեռու: Ավելի մոտենալ քաղաքին խանգարում էին ժայռերը, բայց եւ շարժվել առաջ նույնպես հնարավորություն չկար. ծովն ամբողջովին պատել էր ծովամրրիկը: Բազմաքանակ ճանապարհորդներ էին գտնվում տախտակամածին:

Գեղեցիկ քաղաք է Պարենցոն, ասաց Արսենին կապիտանին:

Այն գեղեցիկ է, որովհետեւ հիմնել է Պարիսը, պատասխանեց կապիտանը: Այդպես ասում են:

Սխալվում են, ասաց ուխտավոր Վիլհելմը:

Իսկ այդ դեպքում ինչո՞ւ են Պարիսն եւ Պարենցոն միանման հնչում: Արտասանելով սեփական երկու անունները, թուքը ցայտեց նավապետի մսոտ շրթունքներից: Պարիսը, զեկուցում եմ ձեզ, հիմնեց քաղաքը, երբ հույներն առեւանգեցին Հեղինեին:

Հույները չեն առեւանգել Հեղինեին, ասաց ուխտավոր Ֆրիդրիխը: Դրանք բոլորը հեթանոսական հեքիաթներ են:

Գուցե Տրոյան է՞լ է հեքիաթ, զզվանքով հարցրեց նավապետը:

Տրոյան էլ է հեքիաթ, հաստատեց ուխտավոր Ֆրիդրիխը:

Նավապետը տարածեց ձեռքերն ու լիզեց թաց շրթունքները: Նա

վճռականորեն ավելացնելու ոչինչ չուներ:

Ես վստահ չեմ, սիրելի Ֆրիդրիխ, որ դու իրավացի ես, ասաց Ամբրոջոն: Ես նախազգացում ունեմ, որ մի գեղեցիկ օր Տրոյան ինչ-որ մեկը կհայտնաբերի: Հնարավոր է, որ այդ մարդ լինի քո հայրենակիցը:

Այդ նույն օրվա իրիկնադեմին փչեց համընթաց քամին: Օրերով շարժվում էին այդ քամու ուղղությամբ, բայց հետո ստիպված էին մտնել դալմատինյան Զարյա նավահանգիստը, որովհետեւ սկսեց փչել հակադիր քամին, որին իտալացիներն անվանում էին սիրոկկո: Այդ քամին կարող էր փչել մի քանի օր, եւ ճանապարհորդները հարկադրված պիտի լցվեին համբերությամբ: Հարյուր քսան հետեւակայիններ, անտարբեր մեծափնյա քաղաքներին, ընկերովի սկսեցին զառ խաղալ: Մնացած բոլոր ուղեւորները ելան ափ:

Նավահանգստում նրանց դիմավորեց վենետիկյան պրետորը, որը տեղեկացավ, թե արդյո՞ք առողջ օդից է հետեւում նավը: Նրան հավաստիացրին, որ նավը ժամանել է Վենետիկից, այլ ոչ թե Արեւելքից: Պրետորին ցույց տրվեց նաեւ վենետիկյան դոժի ճամփորդական նամակը, եւ նա թույլ տվեց բոլոր ցանկացողներին մտնել քաղաք եւ իր ամրոցը:

Զարյա քաղաքը նշանավոր էր նրանով, որ Սիմեոն Աստվածընկալ ծերունու տաճարում հանգչում էին սրբակյաց ճգնավորի մասունքները: Արսենին եւ Ամբրոջոն ուղեւորվեցին խոնարհվելու Սիմեոնի աճյունի առաջ: Ծունկի գալով նրա անմեռ մասունքների առաջ, Արսենին ասաց.

Այժմ Քո կանչով Քո ծառային արձակիր խաղաղությամբ, քանզի իմ աչքերով եմ տեսել փրկությունս: Գիտես, Սիմեոնե, չէ որ ես պարգեւի չեմ սպասում քեզ տվածի համեմատ: Իսկ իմ փրկությունը Ուստինայի եւ մանկան փրկության մեջ է: Վերցրու նրանց քո ձեռքը, ինչպես վերցրիր Սանուկ Հիսուսին, եւ տար Նրա մոտ: Ահա իմ խնդրանքի եւ պաղատանքի էությունը:

Որպեսզի չթրջի Սիմեոնի մասունքներն իր արցունքներով, Արսենին հպվեց դրանց իր ճակատի վերին մասով: Բայց մի արցունք, այդուհանդերձ, պոկվեց արտեւանունքներից եւ ընկավ մասունքների վրա: Դե ինչ, թող մնա այնտեղ, մտածեց Արսենին: Այն ալեւորին կպատմի իմ մասին:

-ԻԴ-

Հաջորդ օրը Արսենին, Ամբրոջոն եւ երկու բրանդենբուրգյան ուխտագնացները զբոսնում էին Զարյա քաղաքի ամրոցի տարածքում: Մինչեւ նավ վերադառնալը նրանք մի պանդոկ մտան ճաշելու: Պանդոկում Վենետիկյան հանրապետության խորվաթ բնակիչներն ինչ-որ տոն էին նշում: Տեսնելով այցելուներին ճամփորդական հագուստներով, Զարյայի բնակիչները զգուշացան: Որքանով թուրքական սպառնալիքն արդեն իսկ դատարկ խոսք չէր, նրանք չէին բացառում, որ անծանոթները կարող էին լինել թշնամական լրտեսներ: Ըստ նրանց խմածի չափի՝ կասկածանքը վերածվում էր վստահության: Վերջինը, որ ամրապնդեց նրանց վստահությունը, ուխտավորների գերմաներեն լեզուն էր, որն անմիջապես ընդունվեց իբրեւ թուրքերեն: Խնջույքի մասնակիցները միանգամից վեր կացան, եւ իշոտնուկները, որոնց վրա նստել էին, դղրդոցով շրջվեցին:

Արսենին եւ Ամբրոջոն ընդհանուր առմամբ հասկանալով սլավոներեն, կատարվածի իմաստը գիտակցեցին մյուսներից ավելի շուտ: Բայց նույնիսկ բրանդենբուրգյան ուխտավորներին, որոնք սլավոներեն չէին հասկանում, պարզ դարձավ, որ իրադարձությունները վտանգավոր շրջադարձ են կատարում: Ուխտավոր Վիլհելմի վրա իբրեւ մի մարդու, որը խոսում է անհասկանալի լեզվով, թռավ անագե գավաթը:

Արսենին մի քանի քայլ արեց հարձակվողների կողմու եւ պարզեց ձեռքը: Ինչ-որ մի պահ այդ ժեստը նրանց հանգստացրեց: Տեղում կանգնած մնալով, նրանք կենտրոնացած նայում էին Արսենիի ձեռքին: Արսենին նրանց ասաց ռուսերեն.

Մենք ուխտավորներ ենք եւ գնում ենք Սուրբ երկիր:

Զարյայի բնակիչներին լեզուն թեեւ թվաց հասկանալի, սակայն տարօրինակ: Որքանով նրանց լեզուն էլ արդեն պարզ չէր, դրան վերաբերվեցին համապատասխան համբերությամբ: Արդեն ավելի հանգիստ՝ նրանք ասացին Արսենիին.

Ապա խաչակնքվիր:

Արսենին խաչակնքվեց:

Փոթորիկը վերսկսվեց: Հարկավոր եղավ ընդամենը շունչը տեղը բերելու մեկ ակնթարթ.

Նա նույնիսկ չի կարողանում ճիշտ խաչակնքվել: Արդյոք արժե՞ր թուրքական լրտեսներից այլ բան սպասել: Ամբրոջոն փորձեց բացատրել, որ կաթոլիկներն ու ուղղափառները խաչակնքվում են տարբեր ձեւով, պահանջեց իրենց տանել վենետիկյան պրետորի մոտ, բայց իրեն արդեն ոչ ոք չէր լսում: Զարյայի բնակիչները քննարկում էին, թե ինչպես վարվեն բռնվածների հետ: Կարճ, բայց բուռն վեճերից հետո եկան համոզման, որ լրտեսներին պետք է կախել: Ընդ որում Զարյայի բնակիչները հակված չէին գործը վաղվան թողնել, որքանով նրանց հայտնի էր, որ ժամանակը՝ վճռականության գլխավոր թշնամին է:

Նրանք պանդոկապանից պարան պահանջեցին: Սա սկզբում չտվեց, քանի որ վախենում էր, որ մեղավորներին կկախեն հենց իր պանդոկում: Իսկ երբ նա իմացավ, որ տվյալ փուլում պարանը պահանջվում է միայն կապելու համար (քանզի ո՞վ է պանդոկում մարդ կախում), նա ուրախությամբ տվեց եւ նույնիսկ լրտեսներ բռնողներին խմիչք լցրեց հիմնարկի հաշվին: Չնայած դիմադրությանը, կապկպելով բռնվածներին, նրանք շտապով խմեցին, չէ որ նրանց հոգսաշատ եւ ժամանակ պահանջող զբաղմունք էր սպասվում: Արդեն դռների մեջ մի պարան էլ խնդրեցին, իսկ գլխավորը՝ օճառ, որի մասին մոռացել էին՝ վերջին լրտեսների մեռնելու կենացը խմելուց հետո:

Ինչպիսի՜ հիմար մահ է մեզ սպասվում, կիսածայն ասաց Ամբրոջոն Արսենիին:

Իսկ ո՞ր մահը հիմար չէ, ասաց Արսենին: Իսկ մի՞թե հիմարություն չէ, երբ կոպիտ երկաթը մտնում է մարմնի մեջ՝ խարխլելով նրա կատարելությունը: Նա, ով անկարող է նույնիսկ ճկույթի եղունգ ստեղծել, ավերում է բարդագույն մեխանիզմը, որը մարդու հասկացողությանն անհասանելի է:

Պանդոկում արձակված դատավճիռը որոշվեց ի կատար ածել նավահանգստում: Այնտեղ բազում հարմար չորսուներ ու կեռեր կային, դե եւ տեղն էլ բաց էր, ուրեմն եւ՝ հասանելի ապագա բոլոր լրտեսներին՝ այդ խրատը քննարկելու համար:

Ամբրոջոն մեկ անգամ էլ փորձեց Զարյայի բնակիչների սրտերն ու մտքերը բախելով բացել: Նա բղավում էր, որ ուխտագնացների մոտ ճամփորդական նամակ կա վենետիկյան դոժի կողմից եւ քանիցս առաջարկեց խաչակնքվել կաթոլիկաբար, սակայն ամեն բան զուր էր:

Այդ մարդկանց սրտերն ու մտքերը վնասված էին ալկոհոլով:

Արսենին զարմացավ Զարյայի բնակիչների թերհավատության վրա: Հնարավոր է (մտածում էր նա), նրանց այստեղ շատ են չարչարել լրտեսները: Արսենին չէր բացառում նաեւ այն, որ այդ մարդիկ, պարզապես ուզում էին ինչ-որ մեկին կախաղան հանել:

Վերջիվերջո Ամբրոջոյի բերանը կոպեցին պրկափայտով: Խորհրդակցելով, քանդեցին բոլոր ուխտավորների ոտքերը, որպեսզի նրանք կարողանան քայլել, իսկ ձեռքերը մնացին կապկված: Հիմա Ամբրոջոն չէր կարող ոչ գոռալ, ոչ խաչակնքվել:

Նա քայլում էր Արսենիի կողքով եւ նայում զույգ բրանդենբուրգյան ուխտավորներին, որոնք քայլում էին առջեւից: Չնայած տեղի ունեցածի դրամատիզմին, նրանց տեսքը չէր կարող ժպիտ չառաջացնել: Նրանք քայլում էին մի կողմից մյուս կողմն ընկնելով, եւ ետեւում կապկված ձեռքերը նրանց հանդիսավոր, համարյա պրոֆեսորական տեսք էին տալիս: Նրանք նաեւ հիշեցնում էին զույգ պինգվինների, որոնց հետ Եվրոպայում պիտի ծանոթանային ինչ-որ տասը-տասնհինգ տարի հետո: Ֆրիդրիխն ու Վիլհելմը մինչեւ հիմա դեռ ոչինչ չէին հասկանում եւ հույս ունեին, որ մոտակա ժամանակամիջոցում թյուրիմացությունը կփարատվի: Արսենին չէր ուզում նրանց վերահամոզել դրանում, Ամբրոջոն նույնպես չէր ուզում, բայց, անշուշտ, նաեւ չէր կարող:

Սեր իմ, նավահանգստում ասաց Արսենին Ուստինային, շատ հնարավոր է, որ հենց այստեղ է իմ ճանապարհի վերջը, բայց ոչ իմ սիրո վերջը քո հանդեպ: Եթե մի պահ կտրվենք գործի ցավալի մասից, կարելի է ուրախանալ, որ ճանապարհն իմ ավարտվում է մի այսպիսի գեղեցիկ վայրում՝ դեպի ծովը տեսարանով, հեռավոր մի կղզիով եւ Աստծո աշխարհի բոլոր սքանչելիքներով: Բայց գլխավորն այն է եւ ուրախալի, որ իմ վերջին ժամերն անցնում են սրբակյաց ճգնավոր Սիմեոնի հետ, ում ոգորումները, ի տարբերություն իմի, իրականացել են: Ես ափսոսում եմ, սեր իմ, որ ես շատ քիչ բան հասցրի անել, բայց հավատս ամուր է, որ, եթե Ամենաշնորհ Աստված հիմա ինձ տանի, մեր բոլոր չարածները կանի Նա: Առանց այդ հավատքի իմաստ չէր լինի ո՛չ իմ, ո՛չ քո գոյության մեջ:

Արեւն իջել էր արդեն: Այն գծել էր իր ճանապարհը նավակայանից մինչեւ հորիզոն: Կասկած չէր մնում, որ այնտեղ, ամենահեռավոր կե-

տում էլ պատրաստվում է նստել: Արեւը խփում էր ուղիղ Արսենիի աչքերին, բայց նա չէր կկոցում: Արեւը խփում էր կապիտանի աչքերին, որը կանգնած էր Սուրբ Մարկոսի տախտակամածին, եւ նա անցավ հակադիր նավակող: Այդ նավակողից նա նկատեց, թե ինչպես են իր նավահանգստային վերհան մեքենայի վրայով նետում օղապարանը:

Ինչ-որ մեկին կախաղան հանել են պատրաստվում, հայտարարեց կապիտանը տախտակամածի վրա կանգնածներին: Ով հետաքրքրվում է, կարող է նայել:

Հետաքրքրվեցին բոլորը, ներառյալ հետեւակայինները: Բոլորն ուշադրությամբ նայում էին վերհան մեքենայի մոտ կանգնած մարդկանց, հատկապես նրան, ում վզին հագցվում էր օղը:

Դա Արսենի՞ն է, անվստահ հարցրեց կապիտանը: Արսենին:

Նա շրջվեց դեպի տախտակամածի հանդիսատեսները, եւ նրանք գլխով արին:

Դա Արսենին է, գոռաց կապիտանը Զարյայի բնակիչներին: Նա ձեռքերը բարձրախոսի պես պահեց, եւ նավահանգստում նրան լսեցին բոլորը: Մարդն այդ՝ անձնական պաշտպանության տակ է Ջովաննի Մոչենիգոյի՝ Վենետիկի դոժի, եւ նրա վրա ձեռք բարձրացնող ցանկացած մեկը կգլխատվի:

Զարյայի բնակիչները կանգ առան: Նրանք գիտեին կապիտանին եւ շրջվեցին դեպի Սուրբ Մարկոսը, որպեսզի իրենց լսածին հավատան, բայց կապիտանն արդեն վազում էր ելարանով: Նավի վրայից նայում էին բոլոր հարյուր քսան հետեւակայինները, որոնց զառ խաղալն այդ ժամանակ արդեն հոգնեցրել էր:

Դուք լսեցի՞ք ինձ, ընթացս կրկնեց կապիտանը եւս մեկ անգամ, ցանկացած ձեռք բարձրացնող կգլխատվի:

Բայց հիմա Զարյայի բնակիչներն արդեն ձեռք չէին բարձրացնում Արսենիի վրա: Դեռ մինչ այդ նրանք սկսել էին գլխի ընկնել, որ իրենց մեղադրանքներում լիովին արդար չեն, այնպես որ՝ նրան կախում էին ավելի շուտ ինքնագիայով: Նրանց չէր բավում մի պստիկ պատճառ իսկ, որպեսզի կանգ առնեն, եւ հիմա ահա այն գտնվեց: Նրանց ցասումն սպառվեց նույնքան հանկարծակի, ինչպես եւ առաջացել էր:

Մենք այլեւս ոչ ոքի չենք կախում, ասացին Զարյայի բնակիչները: Քո խոսքերը պարզաբանեցին մեզ իրադրությունը եւ հանեցին բոլոր

հարցերը:

Մոտ վազելով, կապիտանը դուրս քաշեց Արսենիի վրայից օղակը եւ Ամբրոջոյի բերանից հանեց գելոցը:

Մենք մեր Վիլիելմ ընկերոջ հետ այդպես էլ չհասկացանք, ինչ են ուզում նրանք մեզանից, գոչեց ուխտավոր Ֆրիդրիխը՝ դիմելով բոլորին: Մենք կուզեինք իմանալ, ո՞րն է մեր հանդեպ պահանջների էությունը եւ ինչո՞ւ նրանք հանկարծ որոշեցին կախել Արսենիին: Այդ մարդու մեջ մենք ոչ մի մեղք չենք տեսնում:

Արսենին նրանց պատասխանեց երախտագետ խոնարհումով: Ամբրոջոն ծիծաղեց եւ ասաց.

Ես հիշեցի մի իռլանդացի վանականի, ով կատակում էր, թե արեւելյան լեզուներից իր համար ամենակարեւորը գերմաներենն է: Նրա կատակը պարզվեց մարգարեական էր. ձեր լեզուն այստեղ ընդունեցին թուրքերենի փոխարեն:

Արդեն Սուրբ Մարկոսի վրա Արսենին հարցրեց. Ասա, Ամբրոջո, քո կանխագուշակման շնորհը ասե՞լ էր քեզ, որ մենք կփրկվենք:

Ամենաղժվարը, Արսենիե, սեփական կյանքը կանխագուշակելն է, եւ դա՝ լավ է: Իսկ փրկության վրա, իհարկե, հույս ունեի: Գոնե եթե ոչ այս աշխարհում, ապա այն մյուսում:

-ԻԵ-

Սիրոկկոն հանդարտվեց երկու օր անց, եւ նավը բարձրացրեց առագաստները: Ձախ նավակողի մոտ կանգնած, Արսենին ասաց սրբակյաց Սիմեոնին.

Փառքդ շատ, սրբահայր: Կարծում եմ, քո աղոթքների շնորհիվ երկարեց իմ սպասման ժամանակը: Ուրեմն նորից աղոթիր, որպեսզի սպասումն իմ զուր չլինի:

Նավի ճանապարհի հաջորդ մեծ քաղաքներն էին Սպալատոն եւ սքանչելի Ռագուզան: Բայց որքանով քամին շարունակում էր մնալ բարենպաստ, դրանցից եւ ոչ մեկը չմտան: Սուրբ Մարկոսի կապիտանը ջրին ավելի շատ էր վստահում, քան ցամաքին եւ առանց ծայրահեղ անհրաժեշտության ափ չէր իջնում:

Ելնելով Միջերկրական ծով, առաջին անգամ զգացին ուժեղ ճոճք:

Թույլերին կապիտանը խնդրեց իրենց պահել նավակողերին մոտ, որովհետեւ ճոճքից դուրս ժայթքած հոտը չէր օդափոխվում նավամբարում դեռեւս շատ երկար: Չնայած մեծ ծով դուրս գալուն, Սուրբ Մարկոսը փորձում էր ափը տեսողությունից չկորցնել:

Կորֆու կղզու նավահանգստի մուտքի մոտ բարեհաջող շրջանցեցին ավազե ծանծաղուտը, որի մասին գիտեն բոլորը, ով այսպես թե այնպես մասնակից է նավագնացությանը: Կանգ առնելով կղզուց կես մղոն հեռու՝ հավելում էին քաղցրահամ ջրի եւ մթերքի պաշարները: Այդ ամենը կղզեբնակները տեղ էին հասցնում գետային բեռնանավերով եւ ճիչերով բեռնաթափում նավի վրա: Արսենին նայում էր, թե ինչպես են նավազները կրում նավամբարից բերածը: Բացի կանաչեղենից նավ հասցրին երկու տասնյակ արկղեր կենդանի հավի ճտերով: Ե՛վ ջուրը, եւ՛ կանաչեղենն անձամբ կապիտանն էր համտես անում: Ճտերին նա փորձում էր շոշափելով: Խմելով կես գավաթ բերված ջուրը, կապիտանն ասաց.

Քաղցրահամ ջուրը բոլորովին անհամ է, բայց աղին, ի մեծ ափսոսանք ինձ, չի կարելի խմել:

Կեֆալոնիա կղզում, որտեղ նավը մոտեցավ նավամատույցին, երեք ցուլ գնեցին ճանապարհին՝ կերածի փոխարեն: Ցուլերին նավամբար քշելու փորձի ժամանակ նավազներից մեկին ցուլը հանեց պոզերի վրա: Արսենին զննեց նավազին եւ տեսավ, որ չնայած արյան առատությանը, նրա վերքը ծանր չէ: Ցուլի պոզը մտել էր նավազի հետույքի փափուկ հյուսվածքների մեջ, սակայն կենսականորեն կարեւոր օրգաններին չէր կպել: Վերքի յուրահատկության պատճառով ցանցաճոճում նավազը չէր կարող պառկել, եւ Արսենին նրան պառկեցրեց խոհանոցային մեծ սնդուկի վրա: Կապիտանը շնորհակալություն հայտնեց Արսենիին եւ ասաց նավազին, որ այժմ նա պետք է ավելի երկար պառկի փորի վրա: Նավազը դա գիտեր, որքանով այլ կերպ պառկել պարզապես չէր կարող, բայց իր հերթին շնորհակալ եղավ կապիտանին: Ուղեւորության մթնոլորտը Արսենիին որոշակիորեն դուր էր գալիս:

Պետք է ասել, որ կապիտանի սրտով էր նաեւ Արսենին: Կարողանալով Արսենիին փրկել իսկական մահից, կապիտանը հետագայում էլ նրան ուշադրությունից դուրս չէր թողնում: Մի անգամ ազատ ոոպենե-

րին կապիտանը Արսենիին պատմեց, թե ինչպես է առաջանում աղի ջուրը: Պարզվում է, որ ուժեղ արեւային ճառագայթների տակ պարզապես գոլորշիանում է արեւադարձային օվկիանոսի սովորական ջրից եւ այդտեղից հոսանքով տարածվում ուրիշ ծովեր: Փոփոխություններ կրած ջուրը պարզորոշ երեւում է Արլից ոչ հեռու Էքս կոմսության լճի օրինակով: Ձմեռային ցրտերի ներգործության տակ այդ լճի պաղ ջուրը վերածվում է սառույցի, իսկ ամառային շոգերի ազդեցության ներքո, բնականաբար՝ աղի: Դա ապացուցում է, որ երկրագնդի շուրջ լողարկելն անհնար է, որքանով նրան ողողող օվկիանոսը հյուսիսում սառչում է, իսկ հարավում՝ վերածվում աղի:

Մենք նավարկում ենք, ըստ էության, սառույցի եւ աղի նեղ հատվածի միջով, արդյունքներն ամփոփեց կապիտանը:

Արսենին շնորհակալություն հայտնեց տեղեկությունների համար: Բացի իրեն փրկելու երախտագիտությունից իբրեւ ծովագնացի, նա հարգանք էր տածում կապիտանի հանդեպ:

Կրետեին մոտենալիս կապիտանը ներկաներին ծանոթացրեց Եվրոպային առեւանգած Զեւսի պատմության հետ: Բրանդենբուրգյան ուխտավորներն ընդդիմացան եւ կապիտանին մեղադրեցին դյուրահավատության մեջ: Ուշադրություն չդարձնելով նրանց առարկություններին, կապիտանը շարադրեց նաեւ իրեն հասանելի տեղեկությունները Սինոտավրոսի, Թերսեւսի եւ Արիադնայի մասին: Առավել լավ զննականության համար նա նույնիսկ հրահանգեց նավազներին բերել մի կծիկ թել, եւ ոլորապտույտ տանելով կայմերի եւ պարանասարքերի միջեւ, քանդեց այն տախտակամածի երեսով մեկ: Ուխտավորներն այդ գործողություններն ուղեկցում էին սկեպտիկ դիտողություններով: Իսկ կապիտանը շարունակում էր խոսել անբնականորեն հանգիստ տոնով, եւ յուրաքանչյուրին, ով գոնե փոքր-ինչ հասկանում էր մարդկանցից, պարզ էր, որ նրա նյարդերը ծայրահեղ լարված են: Ուխտավոր Վիլհելմը, որ մարդկանցից գլուխ չէր հանում, ասաց.

Այդ ամենը հեթանոսական հեքիաթներ են, եւ մեր ժամանակներում դրանց հավատալն ամոթ է:

Ոչ մի խոսք չասելով կապիտանը ուխտավոր Վիլհելմին պինդ գիրկն առավ եւ քայլ արեց դեպի նավակողը: Ուխտավոր Վիլհելմը ցանկանալով, հնարավոր է, տուժել հեթանոսությանը հակադրվելիս, փոքրա-

գույն դիմադրություն իսկ չցուցաբերեց: Իսկ մյուսները գտնվում էին որոշ հեռավորության վրա կապիտանից եւ պարզապես ժամանակ չունեին օգնության հասնելու դժբախտին: Տարածությունը ուխտավորին գրկած կապիտանից մինչեւ նավակողը, ըստ էության, չնչին էր: Նրանք Վիլհելմին տեսան արդեն նավակողից թռչելիս, քանզի կապիտանի դիտավորությունները գրված էին իր դեմքին, եւ դա գաղտնիք չէր: Տեսան Վիլհելմին կախված ծովանդունդի վրա: Տեսան կուլ տված-ամենը, ներառյալ՝ Արսենիին: Բայց դա նա տեսավ ուրիշներից մի ակնթարթ շուտ եւ հազիվ էր կապիտանը ուխտավոր Վիլհելմին հասցրել նավակողի վրա, Արսենին կանգնած էր նրա առջեւ: Նա կառչեց ուխտավորից որքան ուժ ուներ՝ թույլ չտալով նետել նավակողից ցած: Մարտը հանուն Վիլհելմի մարմնի, որն առաջվա նման իրեն պահում էր իբրեւ կողմնակի դիտորդ, կարճ տեւեց: Կապիտանը արնախում մարդ չէր, եւ երբ վայրկենական ցասումը չքացավ, նա բաց թողեց ուխտավոր Վիլհելմին: Իր սրտի խորքում կապիտանը ուխտավորի հանդեպ չարություն չէր տածում:

Ապա նայիր, սեր իմ, այս անգամ ինձ հաջողվեց առաջ անցնել ժամանակից, ասաց Արսենին Ուստինային, իսկ դա ցույց է տալիս, որ նա ամենատեր չէ: Ես առաջ անցա ժամանակից ընդամենը մեկ վայրկյան, բայց այդ վայրկյանն արժեր մի ամբողջ մարդկային կյանք:

Փոքր-ինչ հանգստանալով, կապիտանը բրանդենբուրգյան ուխտավորներին առաջարկեց ափ իջնել եւ միասին գնալ դեպի լաբիրինթոս, որն, ըստ իր խոսքերի, գոյություն ուներ մինչեւ այսօր: Ուխտավորները հրաժարվեցին, դա համարելով ժամանակի զուր կորուստ, սակայն տախտակամածի վրա կանգնածների մեջ գտնվեց մի մարդ՝ եղբայր Ժանը Բեզանսոնից, որը լաբիրինթոսի գոյությունը հաստատեց:

Որոշ ժամանակ առաջ, լինելով Կրետեում, նա ուրիշ վանականների հետ նույնիսկ եղել էր այնտեղ: Եղբայր Ժանի խոսքերով լաբիրինթոսում դժվարություններ առաջացնում էին ոչ այնքան նրա քարայրների խճճվածությունը, որքան մթությունը, այնպես որ, երբ եղբայրներից մեկի մոմը հանգցրեց վերեւից թռչող մեծաչղջիկը, եղբայրն իսկույն մոլորվեց: Նրան չկարողացան գտնել երեք օր, եւ միայն շնորհիվ տեղի բնակչության, փոքրիշատե ընտելացած լաբիրինթոսին, եղբայրը վեր-

ջիվերջո հայտնաբերվեց քաղցից, ծարավից տանջված եւ ժամանակավոր խանգարվածությամբ, որը լավ խնամքի արդյունքում, հետագայում, այնուամենայնիվ, անցավ: Իսկ լաբիրինթոսն ինքը եղբայր ժանի վրա մի առանձնակի տպավորություն չթողեց եւ հիշեցնում էր լքված քարհանք:

Այդ ժամանակ կապիտանը նորից կրկնեց իր առաջարկը բրանդենբուրգյան ուխտավորներին, բայց նրանք նորից մերժեցին: Ուխտավորները հայտարարեցին, որ իրենք քարհանք տեսել են որքան ուզես, քանզի կյանքը միայն հենց այն է արել, որ իրենք բախվեն քարհանքերին, բայց ոչ մի տեղ դեռ քարի արդյունահանումը չի ուղեկցվել նման քանակի հեքիաթներով:

Կրետե հասնելով՝ հետեւակայինները լքեցին նավը: Նավահանգստում նրանց դիմավորեցին կանայք՝ թվով հարյուր քսանից ոչ քիչ:

Արդյոք այն կանայք չե՞ն, ովքեր նրանց ճանապարհեցին Վենետիկ, հարցրեց Ամբրոջոն:

Այո, նրանք շատ նման են, պատասխանեց Արսենին, բայց սրանք ուրիշ կանայք են: Բոլորովին այլ: Հենց Վենետիկում էլ մտածեցի այն մասին, որ աշխարհում կրկնություն չկա. գոյություն ունի միայն նմանություն:

-ԻԶ-

Կրետեից հետո Կիպրոսն էր: Կրպրոս հասան ուշ երեկոյան եւ ափ չիջան: Տեսան լերանց ողնաշարի ուրվագծերը եւ կիպարիսների կատարները: Լսեցին անհայտ թռչունների երգեցողությունը, ընդ որում նրանցից մեկը նստել էր կայմին: Թռչնին դուր էր գալիս երգել ճոճվելով:

Ո՞վ ես դու, թռչուն, կատակով նրան հարցրեց կապիտանը:

Պատասխան չտվեց, իրենն էր երգում: Մի կարճ պահ կտրվեց, որպեսզի մաքրի փետուրները: Վերեւից հետեւում էր, թե ինչպես էին լրացնում ջրի եւ պարենամթերքի պաշարը: Երբ լերանց ուրվագծերն սկսեցին պարզվել, Սուրբ Մարկոսը հեռացավ ափից:

Դեռ առավոտվանից ուժեղ շոգ էր: Այն մասին, թե ինչ կլինի կեսօրին, ճամփորդողները չէին էլ ուզում մտածել: Հուսալով, որ ծովում

ավելի հով կլինի, կապիտանն արագացնում էր նավարկումը: Որպեսզի թարմացնի շոգից թթված ուղեւորներին, նրանց հետ կիսվում էր իր բնագիտական գիտելիքներով, որոնց տիրապետում էր մեծապես: Նայելով երկինքներում բոցավառվող արեւին, կապիտանը պատմում էր ջրերի մասին, որ լվանում են մթնոլորտը եւ ցրտահարում լուսատուները: Որ այդ ջրերն աղի են, նա չէր կասկածում: Նրա պատկերացումներով խոսքը սովորական ծովի մասին է՝ որոշակի պատճառների բերումով տեղավորված երկնակամարի վրա: Այլապես ինչո՞ւ, հարցրեց կապիտանը, ոչ վաղ անցյալում Անգլիայում, դուրս գալով եկեղեցուց, հայտնաբերեցին մի խարիսխ, որը երկնքից իջեցվել էր պարանով, որից հետո վերեւից երկիր հասան նավազների ձայները, որոնք ջանում էին բարձրացնել խարիսխը, եւ երբ, ի վերջո, նավազներից մեկը ցած իջավ խարսխի պարանով, նա մահացավ՝ հազիվ հասնելով հողին, կարծես թե խեղդվեց ջրում: Անհասկանալին լոկ նրանում էր, թե արդյո՞ք միանում են ջրերը, որոնք գտնվում են երկնակամարի վրա, այն ջրերի հետ, որոնցով լողում ենք մենք: Այս հարցի պատասխանից էր կախված, եթե հարմար է, անվտանգությունը հեռավոր նավարկության, որովհետեւ անտեղյակ բարձրանալով վերին ծով, կապիտանը (նա սրբեց ճակատին դուրս տված քրտինքը) արդեն ոչ ոքի երաշխիք չէր կարող տալ, թե իրեն նորից կհաջողվի նավն իջեցնել ներքեւի ծով:

Սակայն վտանգն այդ առավոտ ավելի մոտ էր գտնվում: Այն տեղավորվել էր երկնակամարի տակ եւ ելնում էր այն ծովից, որով կապիտանը բազում տարիներ վարել էր Սուրբ Մարկոսը: Կեսօրից հետո շոգը փոխվեց տոթի: Քամին մարեց, եւ առագաստները կայմի վրա կախվեցին:

Արեւը կորավ մառախուղում: Կորցնելով պայծառությունը, այն սահեց երկնքով հսկայական անձեւ զանգվածի պես: Հորիզոնում անագե ամպեր առաջացան, որոնք սկսեցին անշեղորեն մոտենալ: Արեւելքից գալիս էր փոթորիկը:

Կապիտանը հրամայեց հավաքել առագաստները: Նա հույս ուներ, որ փոթորիկը կանցնի կողքով, բայց հասկացավ, որ վերջին ակնթարթին առագաստներն հավաքել չի հասցնի: Հավանաբար, ամպերն իրոք որ գալիս էին նավի վրա՝ ավելի շատ թեքվելով դեպի հարավ: Ու թեեւ քամի բարձրացավ եւ ալիքների կատարներին հայտնվեցին ամպակու-

տակներ, բուն փոթորիկը խաղարկվում էր բավականին հեռու աջ նավակողից: Այնտեղ՝ նավի եւ հորիզոնի միջեւ կես ճանապարհին, անագե ամպերը ծով բաց թողեցին նմանապես անագե ճառագայթներ, եւ ջրերի միախառնումը, որի մասին խոսում էր կապիտանը, իրականացավ: Սեւակապույտ ֆոնի վրա իրոք որ հայտնվեցին կայծակներ, սակայն որոտմունք չէր լսվում, եւ դա նշանակում էր, որ դրանք իրոք հեռու են: Նավակողից ձախ երկնքից դեռեւս թափվում էր լույսը: Սուրբ Մարկոսը կանգնած էր հենց փոթորկի սահմանագծին:

Առաջացած ճոճքից Արսենին սրտխառնուք զգաց: Կլման մի քանի շարժում արեց: Կռանալով նավակողից՝ անմասնակից դիտում էր հեղուկի շիթը, որը ծգվում էր իր կոկորդից: Շիթը կորչում էր ցածում, ուր մոլեգնում էր ծովաջուրը: Որտեղ փրփրում եւ շարժվում էր ջրապտույտներով: Խաղում էր ալիքների պրկված մկաններով: Վիթխարի ջրային զանգվածը նա լսում էր նաեւ թիկունքով: Նույնիսկ չտեսնելով այն, հետեւում էր նրա դանդաղ թռիչքին, ինչպես թիկունքով տեսնում են մոտեցող մարդասպանին: Դա առաջին մեծ ալիքն էր, որը կախվեց (Ամբրոջոն բարձրացրեց գլուխը) նավախելի վրա: Այն քարացավ (Ամբրոջոն փորձեց քայլ անել դեպի Արսենին) տախտակամածի վրա եւ իջավ (Ամբրոջոն փորձեց գոռալ) Արսենիի թիկունքին՝ թեթեւորեն պոկելով նրան ճաղաշարից եւ տանելով ցած:

Ամբրոջոն հակվում է բազրիքին: Այնտեղ՝ ներքեւում, ոչինչ չկա բացի ջրից: Ջրի միջից աստիճանաբար նշմարվում է Արսենիի դեմքը: Արձակվելով ջրում, նրա մազերը շողարձակում են ազդեցիկ լուսապսակով: Արսենին նայում է Ամբրոջոյին: Դեպի Ամբրոջոն են վազում կապիտանն ու մի քանի նավազներ: Ամբրոջոն նստում է բազրիքի վրա, անցկացնում երկրորդ ոտքն ու ետհրվում: Թռիչքում օդ է կուլ տալիս: Արսենին նայում է Ամբրոջոյին: Կապիտանն ու նավազները դեռ վազում են: Ամբրոջոյին ծածկում է ալիքը: Նա դուրս է լողում ջրերես եւ նորից է օդ կուլ տալիս: Արսենին չի երեւում: Ամբրոջոն սուզվում է: Անագե խորքերից նրան հանդիպակաց բարձրանում է միտքն այն մասին, որ ծովը մեծ է, եւ ինքը չի գտնի Արսենիին: Որ ինքը կգտնի նրան, եթե միայն սուզվի: Միայն այդ դեպքում ժամանակ կունենա փնտրելու: Վախը նրան ազատում է այդ մտքից՝ սուզվելու: Վախը կաշկանդում էր նրա շարժումները: Ամբրոջոն բարձրանում է ջրերես եւ օդ ներքաշում:

Սկում է: Ձեռքով շոշափում նավակողի լպրծուն մակերեւույթը: Օդ է ներշնչում: Սկում է: Ձեռքով դիպչում Արսենիի ձեռքին: Կառչում է նրանից որքան ուժ ունի: Դուրս է գալիս եւ բարձրացնում Արսենիի գլուխը ջրի վրա: Վերեւից նրանց են նետում գերանով ճոպանը: Արսենին բռնում է գերանից, եւ նրան սկսում են քաշել վերեւ: Արսենին պոկվում է: Ամբրոջոն օգնում է նրան նորից կառչել գերանից: Գերանը պլստում է Արսենիի ձեռքերից: Նավակողից նետում են գերանը՝ կապված պարանասանդուղքին: Սանդուղքն Ամբրոջոն հագցնում է Արսենիի ոտքին ճոճանակի ձեւով: Արսենին բռնվում է պարանից: Ամբրոջոն գրկում է Արսենիին մի ձեռքով, մյուսով բռնվում սանդուղքից: Տասը զույգ ձեռք նրանց ձգում է վեր: Նրանք ճոճվում են ջրի վրա: Եթե նրանց խփի նավակողին, ջարդուխուրդ կլինեն (նրանք արդեն չեն վախենում): Նավաստիների տխուր աչքերը: Նավակողից ետ է շպրտում ալիքը (ջրի մնացորդները հոսում են մերկացած ջրիմուռների եւ խխունջների վրայից), եւ նրա հետ ամեն ինչ գնում է ծով: Սանդուղքը կախվում է առաջացած անդունդի վրա: Հաջորդ ալիքը կլանում է նավակողն ամբողջությամբ՝ հասնելով Ամբրոջոյի եւ Արսենիի գոտկատեղին: Երկնակեսը դեռեւս ազատ է ամպերից: Նրանց քաշում են տախտակամած:

Ծովն անհանգիստ էր, բայց դա դեռ փոթորիկը չէր: Փոթորիկը, սկզբնապես հեռանալով հարավ, բացահայտորեն փոխում էր իր ուղղությունը: Կապիտանը լուռ հետեւում էր այն բանին, թե ինչպես է անագե պատը շարժվում Սուրբ Մարկոսի կողմը: Այդ շարժումը դանդաղ էր, սակայն անշեղ: Երկնքի լուսավոր մասը գնալով փոքրանում էր, իսկ կայծակի հեռավոր բռնկումներն սկսվեցին որոտով:

Սկսեց մթնել: Ոչ այնպիսի մութ, ինչպես գիշերը, քանի որ գիշերային մթությունն իր խաղաղությունն ունի: Դա տագնապալի խավար էր, որ խժռում էր լույսը ի հեճուկս սահմանված գիշերվա եւ ցերեկվա հերթափոխության: Այն միասեռ չէր, կուտակվում էր, թանձրանալով եւ տարալուծվելով կախված ամպերի խտությունից, եւ նրա սահմանը հորիզոնին մերձ էր, որտեղ դեռ լույս էր արձակում երկնքի նեղ ժապավենը:

Արսենիին եւ Ամբրոջոյին տարան նավամբար: Մինչեւ իջնելը Արսենին շրջվեց: Ասես նկատելով նրա շարժումը, կայծակը խփեց եւ որոտմունք եղավ, որպիսին նա դեռ երբեք չէր լսել: Այդ ձայնի հետ շիկացավ

երկնակամարը եւ ճեղք առաջացավ արմատածեւ, բազմաթիվ ճյուղավորումներով, կայծակնագծով: Բացվածքից ժայթքեց ջուրը: Հնարավոր է, դա վերին ծովի ջուրն էր:

Ծովային ջուրը ժայթքում էր նաեւ Արսենիից՝ մինչեւ որ լրիվ դուրս թափվեց: Նրան եւ Ամբրոջոյին դուրս շպրտեց ցանցաճոճերից եւ գլորեց տախտակամածով: Եկուսն էլ գտնվում էին կիսագիտակից վիճակում: Սոմը, մի կողմ շպրտվելով, հանգավ: Արսենիի ներսը տակնուվրա էր լինում, բայց նրանից այլեւս դուրս գալու բան չկար, եւ հիմա միայն մաղձ էր գալիս: Նա մտածեց, որ եթե նավը խորտակվի, ինքը ծայրահեղ դեպքում չի փսխի: Այնտեղ՝ ներքեւում, նրան կպարուրի խաղաղ հանգստությունը ծովի:

Նավամբարում Արսենիի համար մութ էր եւ խեղդուկ: Երկու արհավիրք միացել էին եւ խորացնում էին մեկմեկու: Մութ խեղդուկ: Խեղդուկ մթություն: Նրանք մեկ անբաժանելի էություն էին: Արսենիին թվաց, թե ինքը մեռնում է: Որ ինքը հենց հիմա կմեռնի, եթե օդ կուլ չտա: Ամբրոջոյից անտես, նա շոշափելով գտավ դուռը, որը տանում էր տախտակամածի սանդուղքը: Հրեց դուռը: Սայթաքեց սանդուղքի վրա: Սողաց չորեքթաթ: Սայթաքեց եւ նորից սողաց: Նա զարկվեց բռնածողին: Սողաց մինչեւ տախտակամածի դուռն ու բացեց այն: Նրան այրեց մրրիկը:

Նա ճչաց՝ սարսափելով տեսածից եւ չլսեց իր ճիչը: Սարսափեցնում էր ոչ թե սպառնացող մահը, այլ տարերքի վեհությունը: Մրրիկը պոկեց Արսենիից ճիչը նրա շուրթերից եւ ակնթարթորեն հեռացրեց հարյուր մղոն հեռու: Այդ ճիչը կարող էր հնչել միայն այնտեղ, ուր դեռ մնացել էր մաքուր երկնքի ժապավենը: Բայց այդ նեղ ժապավենն արդեն վարդագույն էր, որից պարզ դարձավ, որ գիշեր է իջնում, եւ երկնքի վերջին շերտն անհետանում է: Եվ Արսենին նորից ճչաց, որովհետեւ վերահաս համընդհանուր խավարն իր հետ անհուսություն էր բերում:

Ալիքները խփում էին նավակողին եւ ամենայն գոյ նավի վրա ցնցվում էր, եւ ամեն մի հարվածից հետո Արսենին զարմանում էր, որ այն դեռ ամբողջ է: Վիթխարի ալիքները մերթ սեղմում էին նավը, մերթ հեռանում նրա տակից: Այն շրջվում էր նավակողի վրա, տձեւ, կողով հակված ալիքներին, հազիվ չդիպչելով դրանց կատարներին կայմով: Պտտվում էր ջրհորձանքում, ցատկում էր եւ սուզվում:

Արսենին դեռեւս կանգնած էր դռների մեջ: Նրա մոտով՝ տախտակամածով առաջ էին գնում երկու նավաստի: Շարժվում էին կռացած, լայն-լայն դնելով ոտքերը: Տարածելով ձեռքերն, ասես գրկախառնվելու համար: Նրանք քարշ էին տալիս ինչ-որ ճոպան՝ կայմից դեպի նավակողը, ջանալով այն ձգել եւ իրենք էլ էին կապված կայմին ճոպաններով: Իրականում սայթաքում էին եւ ընկնում ծնկների վրա: Արսենիի համար անհասկանալի, նրանց աշխատանքը նման էր կամ պարի, կամ էլ աղոթքի: Երեւի, նրանք իրոք որ աղոթում էին:

Արսենին տեսավ, թե ինչպես է ձախ նավակողով գալիս վիթխարի, փրփրաբաշ ալիքը: Չնայած մթությանը, ալիքը լավ էր երեւում, եւ նրա կատարը գունափոխվում էր անհասկանալի է, թե որտեղից եկող լույսի մեջ: Այդ կայծկլտումն էլ ամենասարսափելին էր: Ալիքը քանիցս բարձր էր տախտակամածից: Ալիքի համեմատ նավը թվում էր փոքրիկ, համարյա խաղալիք: Արսենին անձայն գոռաց նավաստիներին, որպեսզի փրկվեն, բայց նրանք շարունակեցին իրենց տարօրինակ շարժումը: Աչքերին քաշած կնգուղները նմանեցնում էին նրանց Ալեքսանդրականի զարմանալի էակներին: Նաեւ ճոպաններն էին ձգվում նրանց ետեւից, ինչպես պոչեր:

Ալիքը չբախվեց նավին, պարզապես ճմռթեց իր տակ եւ գլորվեց նրա վրայով: Արսենիին նետեց ցած, ու նա արդեն չէր տեսնում, ինչ է կատարվում տախտակամածի վրա: Խելքի գալով՝ նա փորձում էր նորից բարձրանալ դեպի վերեւի ելքը: Դռների մեջ կանգնած էր կապիտանը: Նա աղոթում էր: Տախտակամածը դատարկ էր, այն ամենից, ինչը Արսենին տեսել էր այդտեղից, չէր բավում շատ բան: Թնդանոթները, ճաղաշարերը, կայմերը: Չկային երկու նավազները ճոպանը ձգող: Արսենին ուզում էր հարցնել կապիտանին, արդյոք նրանց հաջողվե՞ց փրկվել, բայց չհարցրեց: Կապիտանը զգաց նրա ներկայությունն ու շրջվեց: Ինչ-որ բան բղավեց Արսենիին: Արսենին ոչ մի բառ չէր լսում: Կապիտանը կռացավ հենց Արսենիի ականջին եւ գոռաց.

Դու տեսե՞լ ես սուրբ Գերմանին:

Արսենին բացասաբար գլուխը շարժեց:

Իսկ ես տեսել եմ: Կապիտանը Արսենիի գլուխը սեղմեց իր գլխին: Հավատում եմ, որ նրա աղոթքներով կփրկվենք:

Փոթորիկը ոչ թե թուլացավ, այլ դադարեց ուժգնանալ: Նավը դեռեւս

նետվում էր կողքից կողք, բայց արդեն այնքան էլ սարսափելի չէր: Գուցե, այն բանից, որ գիշերահասի հետ անհետացավ լույսը վերջին, եւ չէին երեւում վիթխարի ալիքները: Այժմ նավն արդեն չէր ընդդիմանում տարերքին՝ այն նրա մասն էր:

-ԻԷ-

Երբ առավոտյան Արսենին դուրս ելավ տախտակամած, անամպ երկնքում շողում էր արեգակը: Թեթեւ քամի էր փչում: Երեքից երկու կայմերը ջարդված էին, իսկ ամենը, ինչ գտնվում էր տախտակամածի վրա, սրբված կամ արմատահան էր եղած: Նավազներն ու ուխտագնացները երգում էին հիշատակ ննջեցելոցը: Նրանց ձեռքերն ու դեմքերը փոս էին ընկել:

Արսենին չտեսավ մի քանի ծանոթ դեմքեր: Նա չգիտեր զոհված նավազների անուններն ու հազիվ թե կյանքի օրոք նրանցից լսած լիներ մեկ-երկու դարձվածքից ավելի, մի սովորական ողջույն, բայց նրանց բացակայությունն աղաղակող էր: Նա հասկանում էր, որ այսուհետ նրանց բարիողջույնից զրկված է լինելու ընդմիշտ:

Ընդմիշտ, շշնջաց Արսենին:

Հիշեց նրանց վերջին պարային շարժումները: Նա նավազներին պատկերացրեց հիմա ծովի ջրերում լողալիս: Ցրի այն շերտում, որն իրենց անհասանելի դարձրեց ցանկացած փոթորկի համար:

Աղոթքից հետո կապիտանն ասաց տախտակամածի վրա հավաքվածներին.

Այս գիշեր սուրբ Գերմանին ես տեսել եմ յոթ անգամ: Նա հայտնվեց, ինչպես միշտ, մոմի լեզվակի տեսքով, որը ցանկության դեպքում կարելի է հասկանալ նաեւ իբրեւ պայծառ աստղ: Բոցը մեկ պայծառ, մեկ խամրած էր կես կայմի չափով, միշտ բարձունքում: Եթե ուզում ես, օրինակ, բռնել այն, ապա հեռանում է, իսկ եթե անշարժ է, կարդում ես Հայր մերը, տեղում կանգնած է լինում մոտ մեկ քառորդ ժամ, առավելագույնը՝ կես ժամ, եւ նրա հայտնվելուց հետո քամին ավելի է մեղմանում, իսկ ալիքները՝ ավելի փոքրանում: Երբ նավերը քարավանով են շարժվում, ապա պահպանվում է այն նավը, որին հայտնվել է սուրբ Գերմանը, իսկ ով նրան չի տեսել, սուզվում կամ ջախջախվում է: Իսկ

եթե հայտնվում են երկու մոմ, որը լինում է հազվադեպ, ապա նավն անխուսափելիորեն զոհվում է, քանզի երկու մոմ սրբազան հայտնության էությունը չեն, այլ՝ ուրվապատկերների:

Դա նրանից է, ասաց ուխտավոր Վիլհելմը, որ դեւերը երբեք չեն հայտնվում մեկ միասնական կերպարով, այլ միշտ՝ բազում:

Ամենայն Աստվածային եւ ճշմարիտ եզակի են, ասաց ուխտավոր Ֆրիդրիխը, ամեն դիվական եւ կեղծ՝ բազում:

Բրանդենբուրգյան ուխտավորներն այլեւս չէին վիճում կապիտանի հետ, եւ նա ուրախ էր:

Ամբրոջոն մտազբաղ նայում էր հյուսիս: Նա տեսնում էր 1865 թվականի հոկտեմբերի 1-ի փոթորիկը Սպիտակ ծովում: Սոլովեցկյան միաբանության Վերա շոգենավը գալիս էր Անզեր կղզուց դեպի մեծ Սոլովեցկ կղզին: Նա Վերին Վոլոչկից բերում էր ուխտագնացների: Նավակողերից պոկեց նավակները, իսկ նավամբարում կոտրվեց պոմպը, որ ջուրն էր քաշում: Նավին շպրտում էր տաշեղի պես: Ուխտավորների սիրտը խառնում էր: Փոթորիկը զարմանալի էր նրանով, որ տեղի էր ունենում լրիվ տեսանելիության պայմաններում: Փչում էր մրրիկը, սակայն ո՛չ ամպ, ո՛չ անձրեւ: Եվ աջ նավակողից դիտվում էր Մեծ Սոլովեցկյան կղզին իբրեւ առկայծող մի սպիտակ կետ: Ուխտավորներից մեկը հարցրեց կապիտանին.

Մենք ինչո՞ւ չենք գնում ուղիղ դեպի կղզի:

Չկտրվելով ղեկանիվից, կապիտանը նշան արեց, որ խոսողին չի լսում:

Ինչո՞ւ ենք մենք հեռանում կղզուց, փոխարենն այնտեղ գնալու, գոռաց ուխտավորը հենց կապիտանի ականջի մեջ:

Որովհետեւ մենք ընթանում ենք հալսերով, պատասխանեց կապիտանը: Այլապես մեզ ջարդուփշուր կանի կողային ալիքով:

Վերայի կապիտանի երկար մորուքը ծածանվում էր քամուց:

Անձնակազմը, որ բաղկացած էր սոլովեցկյան վանականներից, հանգիստ էր: Դա նրանց խաղաղությունն էր, ով նույնիսկ լողալ չգիտեր: Սպիտակ ծովի նավաստիները սովորաբար լողալ չգիտեն: Դե դա նրանց պետք էլ չի: Սպիտակ ծովի ջուրն այնքան սառն է, որ մի քանի րոպեից ավելի նրա մեջ չեն դիմանում:

Սուրբ Մարկոսի կապիտանը մաքրեց արցունքը, որովհետեւ անչափ

վշտացած էր զոհված ծովագնացների համար: Կապիտանը շնորհակալ եղավ Աստծուն եւ սուրբ Գերմանին, որ ողջ է մնացել: Նա կանգնած էր արեւով ողողված տախտակամածին՝ հիացած առավոտվա ստվերի երկարությամբ եւ կտրուկությամբ: Ծնչում էր չորացող ծառի հոտը: Նա ուզում էր ընկնել տախտակամածի տախտակների վրա, պառկել եւ այտով զգալ դրանց խորդուբորդը, բայց այդ չարեց: Իբրեւ կապիտան նա պետք է տիրապետեր իր զգացմունքներին: Կապիտանն առհասարակ չպիտի լինի սենտիմենտալ, մտածում էր նա, այլապես անձնակազմը կընդդիմանա: Նա որոշում ընդունեց նավը տանել մոտակա ափ միակ պահպանված առագաստով: Այլընտրանք կապիտանը չուներ: Դանդաղ ընթացքի մեկ օրում ամբողջովին իրիկնային արեւի ոսկիներում Սուրբ Մարկոսը մոտեցավ Յոպպա նավահանգստին:

-ԻԸ-

Դա Արեւելքն էր: Այն Արեւելքը, որի մասին Արսենին շատ էր լսել, բայց հստակ որեւէ պատկերացում չուներ: Պսկովում նա տեսել էր ապրանքներ Արեւելքից: Պսկովում նա տեսել էր նույնիսկ արեւելցիների, բայց այնտեղ այդ մարդիկ հարմարվել էին հյուսիսռուսական ապրելակերպին, դանդաղ եւ անաղմուկ: Պսկովում արեւելցիները հեզ էին եւ բարետես: Խոսում ցածր ձայնով եւ խորհրդավոր ժպտում էին: Նրանց ուղեկցում էին ոչռուսական խոտերի հոտն ու անուշահոտությունները: Յոպպայում դրանք բոլորովին այլ էին:

Ճանապարհորդներին ճանապարհ տվող յոպպացիները, մեծամասամբ արաբներ, աղմկոտ էին, ձայնեղ եւ բազմաձեռ: Նրանք իրոք որ բռնում էին եկվորների հագուստից՝ ջանալով իրենց վրա ուշադրություն հրավիրել: Բացելով ծակծկված խալաթը, կուրծք էին ծեծում: Յուղոտ թեւքերով սրբում քրտնաթոր ճակատներն ու վզերը:

Ինչ են ուզում այս մարդիկ, Ամբրոջոյին հարցրեց Արսենին:

Ամբրոջոն թոթվեց ուսերը.

Կարծում եմ, նույն բանը ինչ որ մյուսները՝ փող:

Արաբներից մեկը ուղտին մոտ տարավ Արսենիին եւ փորձեց նրա ձեռքի մեջ մտցնել ուղտի սանձը: Երկու ձեռքերով նա սեղմում էր Արսենիի մատները, բայց սանձը դուրս էր սահում, որովհետեւ Արսենին

այն չէր բռնում: Արաբը մատների վրա ցույց էր տալիս ուղտի գինը: Ձեռքն ամեն անգամ բարձրացնելիս մատների քանակը պակասում էր: Արսենին նայում էր զարմանալի կենդանուն, իսկ նա նայում էր Արսենի-ին՝ ինչ-որ տեղ վերից: Ինչ էլ գոռոզ հայացք ունի այս արարածը, մտածեց Արսենին: Արաբը խփեց իր կրծքին եւ, ի վերջո, սանձը դնելով Արսենիի ձեռքը, ձեւ արեց, թե հեռանում է:

Արսենին չգիտես ինչու ձգեց սանձը, եւ ուղտը մտածկոտ նայեց նրան: Իր ամբողջ բնավորությամբ տիրոջ հակապատկերն էր, նրան կանոնաբար, հնարավոր է, չարչարող: Արաբի հանկարծակի անհետացումը կենդանին ընդունեց իբրեւ բարիք եւ հեռացածի ետեւից չէր նայում: Արսենիի ձեռքերի շարժումը տեսնելով, ուղտի կողքին նորից հայտնվեց արաբը եւ նորից ցույց տվեց նրա գինը: Բոլոր ծալած մատները նորից վերադարձան իրենց տեղը: Արսենին ժպտաց: Արաբը հասկացավ եւ նույնպես ժպտաց: Ատամները ցույց տվեց նաեւ ուղտը: Չնայած կյանքի ոչ հեշտ պայմաններին, նրանք բոլորը կարողանում էին առիթ գտնել ժպտալու:

Յոպպայի կյանքն իրոք, որ հեշտ չէր: Քաղաքը, որ երկու դար առաջ մամլյուկները վերածել էին ավերակների կույտի, այդպես էլ չէր կարողանում վերածնվել: Այն վարում էր ուրվականային, համարյա, անդենական գոյություն ոչ մեծաթիվ նավերի հաշվին, այս կամ այն պատճառների պարտադրմամբ կառանվող նավահանգստի մնացորդների մոտ: Ոչ, Յոպպան մեռյալ քաղաք չէր: Նրանում անցկացնելով երկու օր, Արսենին եւ Ամբրոջոն նշեցին, որ երեկոներին նաեւ այստեղ էր կյանքը հորդում, որտեղ կային իրենց իրադարձություններն ու կրքերը: Նրանք նույնպես հայտնաբերեցին, որ Յոպպայի բնակիչների համար, որ այդքան զարմացրել էին իրենց ակտիվությամբ առաջին երեկոյի ժամանակ, խորթ չէր նաեւ հայեցողականությունը:

Հատկապես այդ էր որոշում Յոպպացիների կյանքը ցերեկային ժամերին: Սաստիկ շոգ օրերին այդ մարդիկ անցկացնում էին կավաշեն տների բակերում՝ փափկած մարմիններով որսալով թույլ ծովային քամին: Նրանք պառկում էին նավահանգստային ջարդված եզրապատերի վրա եւ հետեւում, թե ինչպես են ծովախորշ մտնում ձկնորսական նավակները եւ (չափազանց հազվադեպ) նավերը: Երբեմն օգնում էին բեռնաթափել դրանք: Սակայն միայն երեկոներին էին Յոպպայի բնա-

կիչները շարժունակ եւ գործում ճշմարտապես: Օրվա ընթացքում հավաքած ուժն ու ջերմությունը նրանք շփում էին իրար վրա եւ երկվորների: Ամեն բան՝ առուծախը, փոխանակումները, պայմանագրերն ու սպանությունները կատարվում էին երկու ժամվա ընթացքում, մայրամուտից հետո:

Մինչմայրամուտային ժամը հաջորդ օրվա Արսենիին, Ամբրոջոյին եւ մյուս ուխտագնացներին հաջողվեց պայմանավորվել արաբների հետ Երուսաղեմի ճանապարհի վերաբերմամբ: Կես դուկատով ճամփորդողներին առաջարկվում էր, ըստ իրենց ընտրության, վարձել ուղտ կամ ավանակ: Շատերը, ներառյալ Արսենին եւ Ամբրոջոն, ուզում էին գնալ ոտքով, բայց նրանց ասացին, որ այդպես նրանք ետ կմնան քարավանից:

Սովորաբար քարավանը շարժվում է դանդաղ, ասաց Ամբրոջոն արաբներին թարգմանչի միջոցով:

Սովորաբար, բայց ոչ այժմ, պատասխանեցին արաբները: Դու նույնիսկ շուջբոլորդ նայել չես հասցնի, երբ կլինես տեղում:

Հասկանալի էր, որ ավանակներ եւ ուղտեր վարձելու առաջարկը քննարկման ենթակա չէ: Հիշելով եղբայր Գուգոյի երկու էշերի մասին, Արսենին եւ Ամբրոջոն ընտրեցին ուղտերը: Իսկ Ֆրիդրիխն ու Վիլհելմն էլ որոշեցին գնալ էշերով:

Մինչ քարավանի մեկնումը դեռ ժամանակ կար, բայց ուխտավորները չվերադարձան քաղաք եւ մնացին նավահանգստում: Ոմանք քնեցին, մեկնվելով օրվա ընթացքում արեւից տաքացած քարերի վրա: Մյուսները զրուցում էին կամ նորոգում ժամանակի ընթացքում մաշված ճամփորդական հագուստը: Հանելով կանթեղը, Ամբրոջոն տեղադրեց նրա վրա ադամանդները: Նա արդեն Սուրբ հողի վրա էր եւ որոշեց կանթեղին տալ իր նախնական գեղեցկությունը: Վեց քարերից յուրաքանչյուրը դնում էր փորվածքի հատակին եւ ամրացնում էր ձողիկներով, ինչպես նրան ցույց էր տվել փոխիշխան Գավրիիլը:

Ամբրոջոյի աշխատանքին լուռ հետեւում էին արաբները, որոնց վարձել էին ուխտավորները՝ քարավանը պաշտպանելու համար: Պահպանության համար յուրաքանչյուրից պահանջել էին մեկուկես դուկատ, որն ուխտավորներին շատ թանկ էր թվացել, որովհետեւ ճանապարհը դեպի Երուսաղեմ այնքան էլ հեռու չէր:

Ճանապարհը երկար չէ, բայց վտանգավոր է, առարկեցին արաբները: Այստեղ ամենուրեք մահն է թաքնված: Իսկ կյանքի համար պետք է վճարել:

-ԻԹ-

Ուղտի վրա նստում են ոչ այնպես, ինչպես ձիու: Արսենիին օգնելով նստել՝ արաբը ուղտին ստիպեց իջնել ծնկների վրա: Արսենին զարմացավ կենդանու ծնկներին կանգնելու ունակությունից եւ տեղավորվեց նրա երկու սապատների միջեւ: Երբ ուղտը կանգնեց, Արսենին քիչ էր մնում թռներ գետնին: Առաջինն ուղտի մոտ ուղղվում են ետեւի ոտքերը, որի պատճառով հեծյալին նետում է առաջ: Կանգնելով՝ ուղտը տխուր նայեց Արսենիին: Ինչի՞ց նա տխրեց եւ ի՞նչ էր կանխազգում:

Քարավանը տեղից շարժվեց լուսադեմին: Հակառակ արաբների խոստումներին, այն շարժվում էր անշտապ: Ուխտագնացների դեմքերն արտացոլում էին լուսացող անապատի բոլոր երանգները: Արեւը բարձրանում էր անհավատալի արագությամբ, եւ նույն արագությամբ ցուրտը փոխվում էր շոգի: Ուխտավորների դեմքերը ծածկվում էին քրտինքով եւ քարավանի առջեւից գնացող արաբական ձիերի սմբակների բարձրացրած փոշիով:

Ճանապարհ ընկնելուց երկու ժամ անց արաբները յուրաքանչյուր մարդուց պահանջեցին ավելացնել եւս մեկական դուկատ: Նրանք դա բացատրում էին, թե հեռվում տեսել էին մամլյուկների մի ջոկատ, իսկ պաշտպանությունը մամլյուկներից հատուկ փող էր արժենում: Մինչ նրանց հետ առեւտուր էին անում, արաբներից մեկը սլացավ առաջ, ասելով, որ ճանապարհն է ստուգում: Արաբներն ավելացրին եւս մեկական դուկատ:

Ժամանակ առ ժամանակ արաբները ետ էին ընկնում քարավանից եւ ինչ որ բանի շուրջ խորհրդակցում: Նրանց ընդհանուր վարքագիծը եւ տեսած մամլյուկների ջոկատը անհանգստացրեց բրանդենբուրգյան ուխտավորներին, եւ նրանք սկսեցին պնդել, որ վերադառնան Յոպպա: Արաբները հրաժարվեցին վերադառնալ, իսկ ինչ վերաբերում է մամլյուկներին, ապա նրանց շտապով միրաժի տեղ դրեցին, որը հաճախ է անապատում հետապնդում ճանապարհորդներին: Այդ ժամանակ

բրանդենբուրգյան ուխտագնացները, իսկ նրանց հետեւելով նաեւ մյուսները, սկսեցին ետ պահանջել ուղեկցողներին տված լրացուցիչ դուկատները, բայց արաբները նույնպես հրաժարվեցին վերադարձնել:

Ես ինչ-որ վատ զգացողություն ունեմ, ասաց Ամբրոջոն, բայց որոշակի ոչինչ ասել չեմ կարող մեր ապագայի մասին, քանզի նրա դեպքերը շատ մոտ են: Հեշտ ճանապարհ սպասելու կարիք էլ չկար, չէ որ մեզ ոչ ոք չէր խոստացել, դե դա նախկինում էլ չի եղել: Մենք մոտենում ենք Սուրբ քաղաքին, եւ մոտենալու հետ դիմադրությունը եռապատկվում է:

Քաղաք չմտնելը իրավորական կլիներ, գտնվելով նրանից կես օրվա ճանապարհ հեռու, ասաց ուխտավոր Ֆրիդրիխը:

Մովսեսին տրված էր հեռվից տեսնել Ավետյաց Երկիրը, բայց տրված չէր մտնել այնտեղ, առարկեց ուխտավոր Վիլհելմը:

Մի՞թե մեզնից մեկնումեկը նման է Մովսեսին, հարցրեց ուխտավոր Ֆրիդրիխը:

Ավետյաց Երկիրը փնտրող ամեն ոք նման է Մովսեսին, ասաց Ամբրոջոն, այդպես չէ՞, եղբայր Արսենիե:

Արսենին լուռ նայեց Ամբրոջոյին եւ նրան թվաց, թե Ամբրոջոյի գլուխը բարձրացավ իր մարմնից վեր: Գլուխը դեռ խոսում էր, բայց մարմնինը այլեւս չէր: Ամբրոջոյի մարմինը պատվեց պղտոր փառով: Սկզբում այն կիսաթափանցիկ էր, իսկ հետո ամբողջովին տարրալուծվեց: Մյուսների մարմինները դեռ երեւակվում էին պղտորության միջով, բայց նրանց գալիքը տեսանելի չէր: Նրանք նույնպես սկսեցին երերալ՝ քիչ առ քիչ ի հայտ բերելով, նման Ամբրոջոյի մարմնին, իրենց թափանցիկ յուրահատկությունները: Արսենին վախենում էր, որ հիմա կկորցնի գիտակցությունը: Բայց չկորցրեց:

Քարավանի ընթացքն ավելի դանդաղեց: Տաք քամու պոռթկումները քայլողների աչքերին ավազ էին ցանում: Ուղտերն այդ է կանգ էին առնում փուշ ծամելու, իսկ էշերը կանգ էին առնում առանց պատճառի: Երկինքը հիմա հողի նման դեղին էր, որովհետեւ նրա ամբողջ տարածքը զբաղեցրել էր արեւը: Արեւից ու ավազից աչքերը արցունքակալվում էին, բայց արցունքները չորանում էին թարթիչների վրա՝ չհասցնելով ընկնել այտերին: Ահա, թե ինչու ուխտավորներն արեւի եւ ավազի թանձրուկը մամլյուկների ջոկատի տեղ դրեցին:

ԵՎԳԵՆԻ ՎՈԴՈԼԱԶԿԻՆ

Սկզբում այն իսկապես որ չէր տարբերվում արեւային փայլակներից կամ էլ ավազամրրիկից եւ, թվում էր, միախառնվում է այդպես անկանոն: Բայց այդպես թվում էր: Այդ մրրիկը գալիս էր ուղիղ քարավանի վրա: Պաղեստինի եգիպտացի տերերը սլանում էին ամբողջ թափով եւ կարծես գիտեին, թե ինչ են փնտրում: Երբ մամլյուկները մոտեցան, ուխտավորները նրանց մեջ տեսան այն արաբին, որը գնացել էր ճանապարհն ստուգելու: Ձիավորները շրջապատեցին քարավանը:

Մամլյուկները հագել էին բամբակապատ կարմիր խալաթներ, նրանց գլուխներին ծածանվում էին դեղին տյուրբաններ: Դա մամլյուկներին փրկում էր արեւի ճառագայթներից, բայց ակնհայտորեն չէր փրկում տապից: Նրանց խալաթների մգլահոտը զգացվում էր նույնիսկ բաց օդում: Այդ գարշահոտությունը շնչում էին մամլյուկներով շրջապատված ուխտավորները: Արաբներն էլ կուտակվել էին քիչ հեռվում եւ ժպտալով հետեւում էին կատարվածին: Նրանք չնչին փորձ իսկ չէին անում միջամտելու:

Մամլյուկների պարագլուխը, որն առանձնանում էր ոսկեկար գոտիով, հրամայեց բոլոր ուխտավորներին շտապել: Դա իսկույն հաջողվեց նրանց, ովքեր գնում էին էշով, իսկ մնացածների համար այնքան էլ հեշտ չէր: Եղբայր Ժանը Բեզանսոնից, որ նստած էր ուղտին, փորձեց իջնել գետնին, բայց նրան չհաջողվեց: Նա կախ ընկավ՝ բռնվելով ուղտի սապատից: Ցատկել՝ եղբայր Ժանը վախենում էր, եւ նրա ոտքերն անօգնական օրորվում էին օդում: Մամլյուկները բարձրաձայն ծիծաղեցին: Մամլյուկներից մեկը մտրակով հարվածեց վանականի ձեռքերին, եւ նա փռվեց գետնին: Անսպասելիությունից ուղտը զռռաց: Նա առջեւի ոտքերով դոփեց եւ սմբակով դիպավ գետնին ընկած եղբայր Ժանի գլխին: Դա քրքջոցի նոր պայթյուն առաջացրեց: Միայն մամլյուկների պարագլուխը հազիվ նկատելի ժպտաց: Լիաբերան ծիծաղել, հնարավոր է, նրան թույլ չէր տալիս իր դիրքը: Եղբայր Ժանը հարբածի նման ափլփում էր փոշին: Նրա ճերմակ մազերն արագորեն ներծծվեցին արյունով:

Ուղտերին մոտեցան տերերը: Նրանք մահակներով հարվածում էին ուղտերի ոտքերին, եւ ուղտերը ծունկի իջան: Ուխտավորները ոչ առանց ջանքի իջան ուղտերից՝ շարժելով թմրած ոտքերը: Արսենին մոտեցավ եղբայր Ժանին, բայց նրան բռունցքի հարվածով ետ շպրտե-

ցին: Արսենին զգաց, թե ինչպես իր քթից հոսեց արյունը: Խլացած վանականը շարունակում էր իր տարօրինակ շարժումները: Փորձելով բարձրանալ, նա հիշեցնում էր մեջքի վրա ընկած բզեզի: Սիգարշավող ձիավորներին նա իսկապես զվարճացնում էր եւ զվարճանքը դադարեցնել ոչ մեկին թույլ չտրվեց:

Արսենին նայեց գլխավոր մամլյուկին եւ իրեն պատեց սարսափը: Մամլյուկի ժպիտը վերածվեց դիմածռության: Այդ դիմածռությունը չէր արտահայտում ո՛չ ծիծաղ, ո՛չ ատելություն եւ ո՛չ էլ արհամարհանք: Ուռած քներակի տակտի հետ նրանում բաբախում էր անսանձ կիրքը որսորդի՝ իր զոհի հանդեպ: Նույնիսկ կուշտ լինելով, կատուն հարձակվում է կոտրված թեւով թռչունի վրա, քանի որ այդպես է շինվածքը կատվի եւ նրա նախորդ բոլոր սերունդների, որովհետեւ թռչունն իրեն պահում է զոհի նման, իսկ հաշվեհարդարի քաղցրությունը զոհի հանդեպ որսորդի մոտ սովից էլ ուժեղ է եւ տռփանքից ավելի պահանջված:

Տռփական աղաղակով գլխավոր մամլյուկը թափահարեց ձեռքն ու եղբայր Ժանի կրծքում նիզակը ճոճվեց: Եղբայր Ժանը բռնեց նիզակը, որ այն չճոճվի եւ չկոտրի իր կողոսկրը, եւ նիզակի հետ միասին շրջվեց կողքի: Նա նույնպես գոռաց, եւ այդ գոռոցը մամլյուկին հասցրեց էքստազի: Մամլյուկը պարզեց ձեռքը, եւ նրան նոր նիզակ տվեցին, եւ նա աղաղակով նետեց այն եւ դիպավ եղբայր Ժանի կողին: Վանականը ճչաց ու կորավ փոշու մեջ, իսկ մամլյուկը նորից պարզեց ձեռքը, նորից նետեց նիզակը եւ դիպավ նրա մեջքին: Այս անգամ եղբայր Ժանը չճչաց: Նա ցնցվեց եւ հոգին ավանդեց: Իսկ Արսենիին թվաց, թե սպանվածի դեմքը դեմքն է Ամբրոջոյի:

Ուխտավորներին սկսեցին խուզարկել: Եղբայր Ժանի վախճանից հետո ոչ ոք չհամարձակվեց ընդդիմանալ: Մամլյուկները բաժանվեցին զույգերի եւ ուխտավորներին մեկ-մեկ տարան մի կողմ: Խուզարկվածներին հրահանգվեց անցնել քարավանի սկիզբ:

Թե ինչպես էին մամլյուկները գործին վերաբերվում, զգացվում էր նրանց սովորույթից եւ փորձից: Սկզբում քրքրում էին պայուսակները, հետո անցան մարմնի զննումներին: Մամլյուկները լավ գիտեին, թե որտեղ են պահվում ոսկեդրամները: Նրանք ճղում էին պայուսակների աստառներն ու կրկնատակերը: Ծուռ էին տալիս թեւքերի թեզանիքներն ու պոկում սապոգների տակացուները: Միջնադարում փողը թղթե

չէր եւ այն թաքցնելը շատ հեշտ չէր:

Հասավ Արսենիի հերթը: Մամլյուկները նրանից խլեցին միայն փոդերը, որոնք հանեցին աստառից դանակի մեկ հարվածով: Այն, ինչ կար ճամփորդական պարկում, նրանց չէր հետաքրքրում: Արսենիին ցույց տվեցին, որ նա առաջ շարժվի իր ուղտի հետ: Արսենին տեղից չշարժվեց, որովհետեւ գետնի վրա տեսավ Ամբրոջոյի կտրված գլուխը: Գլխի աչքերը անթարթ նայում էին Արսենիին: Կիսաբաց բերանում երեւում էր լեզուն: Պնչերից ծորում էր արյունը: Արսենիին առաջ էին քշում քացիներով: Արսենին փայտացած մի քանի քայլ արեց: Նա քայլում էր առաջ՝ շարունակելով ետ նայել: Ուժ չունենալով հայացքը կտրել Ամբրոջոյի գլխից:

Մամլյուկների ազատ զույգը Ամբրոջոյին մի կողմ տարավ: Նրանք ստիպեցին ձեռքերը վեր բարձրացնել եւ խուզարկեցին (Արսենին հրեց իրեն ուղեկցող մամլյուկին եւ առաջին քայլն արեց դեպի Ամբրոջոն): Ամբրոջոն հանգիստ հետեւում էր, թե ինչպես են իր կապայից կտրում-հանում ոսկեդրամները: Նրա ճամփորդական պարկը, ինչպես նաեւ Արսենիինը ստուգեցին առանց հատուկ բծախնդրության: Ամբրոջոյին այդ է թողնում էին, բայց մոտեցող արաբը, մամլյուկի հետ հայացք փոխանակելով, նետվեց դեպի ճամփորդական պարկը:

Ամբրոջոյի պարկից մամլյուկը հանեց կանթեղը: Միջօրեի արեւից այն շողշողում էր տեղադրված բոլոր քարերով: Ամբրոջոն խլեց կանթեղը մամլյուկից եւ ինչ-որ բան ասաց թարգմանչին: (Թափահարելով մտրակված ձեռքերը՝ Արսենին շարժվեց դեպի Ամբրոջոն): Թարգմանիչը թարգմանեց հետեւելով քարերին ընկած արեւի շողերի խաղին: Մամլյուկը նորից ծգվեց դեպի կանթեղը, բայց Ամբրոջոն մի կողմ տարավ իր ձեռքը՝ թույլ չտալով նրան դիպչել կանթեղին: Ամբրոջոն չնկատեց, թե ինչպես իր թիկունքից մոտեցավ ասեղնագործած գոտիով մամլյուկը, ինչպես բարձրացրեց սուրը, իսկ մամլյուկի ոտքից, որքան ուժ ուներ, կառչեց Արսենին:

Ամբրոջոն տեսավ, թե ինչպես Պետերբուրգում Պողոս-Պետրոի տաճարի զանգակատան վրա դանդաղ իջավ խաչով հրեշտակը: Մի ակնթարթ հրեշտակը կախված մնաց, ստուգելով վայրէջքի ճշգրտությունը, իսկ հետո խաչի հիմքը դանդաղ սուզեց սրածողի վրայի ոսկեզօծած խնձորի մեջ: Նախկին տեղը հրեշտակը վերադարձավ վերա-

կանգնողական աշխատանքներից հետո: Ստեղծելով վայրընթաց օդային հոսանք, նրա վրա թեւերը տարածեց Ми-8 ուղղաթիռը: Այդ ոչ դյուրին պայմաններում արդյունաբերական լեռնագնաց Ալբերտ Միխայիլովիչ Տյունկկյունենը ամրապնդեց խաչի հիմքը առանձնակի ամուր համածուլվածքի հեղյուսներով: Լեռնագնացի երկար մազերը ծածանվում էին տարբեր կողմեր, ընկնում էին իր աչքերի մեջ եւ բերանը: Տյունկկյունենն ափսոսաց, որ իջնելով գմբեթի վրա հրեշտակի հետ, ուղղաթիռում մոռացել է սպորտային գլխարկը, որը միշտ կրում էր ինչ-որ բան պտուտակաթեւ մեքենայի տակ նորոգելիս: Ցղագրգռված՝ նա իրեն նախատում էր մոռացկոտության համար, մեղադրում էր նաեւ երկար մազերի համար, որոնք երկնակամարում ամեն անգամ իրեն խոստանում էր խուզել եւ ամեն անգամ խախտում էր խոստումը գետնի վրա՝ թաքուն հիանալով իր մազերով:

Նա անկեղծորեն հայհոյում էր իրեն, արտահայտությունների մեջ, ի դեպ, չանցնելով որոշակի սահմանը, քանզի նրան զսպում էր ներկայությունը հրեշտակի: Չնայած բոլոր խոչընդոտներին, 122 մետր բարձրությունից Ալբերտ Միխայիլովիչին տեսանելի էր շատ բան՝ Ձայաչի կղզին, Պետերբուրգը եւ նույնիսկ երկիրն ամբողջությամբ: Նրան տեսանելի էր նաեւ այն, թե ինչպես հեռավոր Պաղեստինում ո՛չ ոսկեջրած, այլ լիովին իրական հրեշտակը երկինք տարավ իտալացի Ամբրոջո Ֆլեկկիայի հոգին:

ԵՎԳԵՆԻ ՎՈԴՈԼԱԶԿԻՆ

ԳԻՐՔ ՀԱՆԳԵԼՈՑ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

-Ա-

Ընդունված է կարծել, որ Արսենին Ռուսիա վերադարձավ ութսունական թվերի կեսերին: Հստակ հայտնի է, որ 1487 թվականի հոկտեմբերին նա արդեն Պսկովում էր, որքանով այդ ժամանակ արդեն սկսվել էր նրանց վերապրած մեծ ժանտախտը: Արսենիի վերադարձին ոմանք Պսկովում հասցրել էին մոռանալ իրեն: Այդպես պատահեց ոչ թե այն պատճառով, որ շատ ժամանակ էր անցել (այնքան էլ շատ չէր անցել), այլ այն պատճառով, որ մարդկային հիշողությունը թույլ է եւ իր մեջ պահում է միայն հարազատներին: Ոչ հարազատները (այդպիսին էր բոլորի համար Արսենին) այնտեղ ավելի երկար չեն մնում: Հեռացողին տեսադաշտից կորցնում են եւ սովորաբար հարություն չեն տալիս նրա կերպարին իրենց կամոք: Լավագույն դեպքում վերհիշում են լուսանկարներից: Բայց Միջնադարում լուսանկարներ չկային, եւ մոռացումը դառնում էր վերջնական: Պսկովի բազում բնակիչներ չհիշեցին Արսենիին, նույնիսկ տեսնելով նրան, որովհետեւ չճանաչեցին: Վերադարձած մարդը նման չէր ո՛չ քաղաք եկած խեւին, ո՛չ էլ քաղաքը լքած ուխտավորին: Արսենին փոխվել էր: Թուխ, ոչ ռուսավարի արեւահարված դեմքի հետ համադրված, նրա բաց գույնի մազերն ավելի էին շեկացել: Սկզբում կարող էր թվալ, որ դրանք մոխրացել էին արեւելքի շոգ արեւից, բայց մոտիկից զննելիս պարզվում էր, որ Արսենիի մազերն այլեւս շեկ չէին. սպիտակ էին:

Արսենին վերադարձավ ալեհեր: Քթարմատից վերեւ ամբողջ ճակատով մեկ ձգվում էր սպին, որը նայվում էր որպես խոր եւ դառը կնճիռ: Արսենիի դեմքին հայտնված իրական կնճիռներին միահյուսված սպին դեմքին տալիս էր սրբապատկերի թախծոտ, կրքից ձեբազատված արտահայտություն: Եվ, կարող է պատահել, ոչ թե սպիտակությունը, ոչ թե սպին, այլ այդ արտահայտությունը թույլ չէր տալիս պսկովցիներին ճանաչել Արսենիին:

Վերադառնալով՝ նա ոչ ոքի ոչինչ չպատմեց: Նա, առհասարակ, խոսում էր շատ քիչ: Ոչ այնքան քիչ, գուցե, ինչպես խելի իր առօրյայում, բայց այժմյան նրա խոսքերը զրնգում էին այնպիսի լռությամբ, որը բնորոշ չէ հենց իրեն՝ խոր լռությանը: Գալով փոխիշխան Գավրիիլի մոտ, նա ասաց.

Խաղաղություն քեզ, փոխիշխան: Իսկ դու ինձ ներիր:

Արսենիի աչքերում փոխիշխան Գավրիիլը տեսավ նրա ամբողջ դժվարին ճանապարհը: Տեսավ Ամբրոջոյի մահը եւ այլեւս ոչինչ նրան չհարցրեց: Գրկեց Արսենիին եւ լաց եղավ նրա ուսին: Արսենին կանգնած էր անշարժ: Նա իր պարանոցի մաշկի վրա զգաց փոխիշխանի արցունքները, սակայն իր աչքերը մնացին չոր:

Մնա իմ տանը, ասաց փոխիշխան Գավրիիլը:

Արսենին գլուխը կախեց: Իր մնալու տեղին նա հիմա քիչ նշանակություն էր տալիս:

Արսենին կուզեր գնալ խեւ Ֆոմայի մոտ, բայց այդ ժամանակ Ֆոման արդեն չկար այս աշխարհում: Շուտով, Արսենիի հեռանալուց հետո, Ֆոման կանխագուշակեց իր մահը եւ հասցրեց բոլորին հրաժեշտ տալ: Տանջահար լինելով մոտեցող մահվան բեռան տակ, Ֆոման իր մեջ ուժ գտավ վերջին շրջայցը կատարել քաղաքում եւ վերջում քարեր շպրտել ամենաանամոթ դեւերի վրա: Եվ բոլորը գիտեին, որ Ֆոման մեռնում է, եւ ամբողջ քաղաքը շարժվում էր նրա ետեւից՝ ուղեկցելով նրան վերջին շրջայցին: Ֆոմայի ոտքերը փախս ընկան, եւ նրան օգնեցին առաջ շարժվել:

Մահական խավարն է ինձ պատել, եւ կորել է լույսն իմ աչքերի, բղավեց Ֆոման, շրջելով քաղաքի կեսը:

Եվ որքան նա այլեւս ոչինչ չէր տեսնում, քարերը դնում էին նրա ձեռքի մեջ, եւ նա ինչքան ուժ ուներ շպրտում էր դեւերի վրա եւ այդպես շրջեց քաղաքի երկրորդ կեսը, որովհետեւ ֆիզիկական կուրությունը միայն սրել էր նրա հոգեւոր տեսողությունը:

Իսկ երբ քաղաքը մաքրվեց, Ֆոման ասաց, պառկելով եկեղեցու գավթում.

Մի՝թե դուք մտածում եք, որ ես քշեցի նրանց առհավետ: Դե, մի հինգ տարով, առավելագույնը՝ տասը: Եվ դուք ի՞նչ եք անելու, հարց է առաջանում, հետո: Իսկ հիմա գրեք: Ձեզ սպասվում է մեծ ժանտախտ,

բայց ձեզ կօգնի Աստծո ծառա Արսենին, որ վերադարձել է Երուսաղեմից: Եվ հետո կհեռանա նաեւ Արսենին, քանզի հարկ կլինի թողնել քաղաքն այս: Ահա այդ ժամանակ դուք ստիպված կլինեք ոգու ամրություն եւ ներքին կենտրոնացում դրսեւորել: Վերջիվերջո, դուք արդեն երեխա չեք:

Հետեւելով, որ ամեն բան գրված լինի, խեւ Ֆոման փակեց աչքերն ու մեռավ: Ապա բացեց աչքերը մի ակնթարթ եւ ավելացրեց.

Եւ գրություն: Թող Արսենին նկատի ունենա, որ իրեն սպասում է Կիրիլյան միաբանության վանահայրը:

Վերջ:

Այդ ասելով՝ խեւ Ֆոման մեռավ վերջնականապես:

-Բ-

Կարդալով Ֆոմայի ուղերձը, Արսենին ընկավ մտածմունքի մեջ: Յոթ օր ու յոթ գիշեր նա չլքեց փոխիշխան Գավրիիլի կցաշենքը, որ տրամադրված էր իրեն ապրելու համար: Գուցեեւ, նա մնար այդտեղ նաեւ երկար, բայց այդտեղ մնալու յոթերորդ օրը Պսկովով մեկ տարածվեց լուրը ժանտախտի մասին: Ստնելով Արսենիի մոտ՝ փոխիշխանն ասաց.

Ֆոմայի կանխատեսածն իրականացավ: Իսկ մենք հույսներս դնում ենք Աստծո ողորմածության եւ քո, Արսենիե, մեծ շնորհի վրա:

Ծնրադիր՝ Արսենին դիմադարձ էր սրբապատկերներին եւ թիկունքով՝ դեպի փոխիշխան Գավրիիլը: Նա աղոթում էր եւ անհասկանալի էր, արդյո՞ք լսել էր փոխիշխանի ասածը: Փոխիշխանը կանգնած մնաց էլի ինչ-որ ժամանակ, բայց խոսքերն իր չսկսեց կրկնել, քանզի կռահեց, որ Արսենին այդպես էլ արդեն ամեն ինչ գիտի: Զգուշորեն, որպեսզի հատակի տախտակները չճռճռան, փոխիշխան Գավրիիլը դուրս ելավ: Հաջորդ օրը, վերջացնելով աղոթքը, դուրս եկավ նաեւ Արսենին:

Առմուտքի մոտ նրան սպասում էր ամբոխը: Նա հայացքը սեւեռեց եւ ոչինչ չասաց: Ամբոխը նույնպես լուռ էր: Հասկանում էր, որ այստեղ ոչինչ ասելու կարիք չկա: Հիշելով Ֆոմայի կանխասացությունը, ամբոխը գիտեր, որ Արսենին միակն է, ով ունակ է օգնել վերահաս դժբախ-

տության մեջ: Իսկ Արսենին գիտեր, որ իր հնարավորությունները սահմանափակ են, եւ ամբոխը գիտեր նրա գիտելիքների մասին, եւ ամբոխի իմացածները հաղորդվում էին Արսենիին: Նրանք իրար էին նայում այնքան ժամանակ, մինչեւ որ ամբոխի մոտ չարդարացված սպասումներ չմնացին, իսկ Արսենիի մոտ չանհետացավ այդ սպասումները խաբելու վախը: Իսկ երբ դա տեղի ունեցավ, Արսենին իջավ առմուտքից եւ շարժվեց դիմավորելու ժանտախտը:

Նա անցավ տուն առ տան եւ զննեց բոլոր հիվանդ մարդկանց: Մշակելով նրանց գեղձուռուցքները եւ նրանց տալով մանրած ծծումբ՝ ձվի դեղնուցով, լվաց նրանց մարմինները փսխուկից եւ ծխահարեց հարարի հերձանով: Եվ նույնիսկ դատապարտվածները չէին ուզում նրան բաց թողնել իրենց մոտից, որովհետեւ քանի նա գտնվում էր իրենց կողքին, այդքան ծանր ու անհուսալի չէր: Նրանք կառչում էին Արսենիի թեւից, եւ նա իր մեջ ուժ չէր գտնում ազատվելու նրանց ձեռքերից, եւ նրանց հետ գիշերներ էր անցկացնում մինչեւ մահը:

Ինձ թվում է, ասաց Արսենին Ուստինային, որ ես վերադարձել եմ մի քանի տարի առաջ: Իմ ձեռքերում նույն թարախակալված մարմիններն են եւ, կհավատա՞ս, սեր իմ, հազիվ թե նույն մարդիկ չլինեն, որոնց ես բուժել եմ ինչ-որ ժամանակ: Արդյոք ժամանակը ետ չի՞ գնացել, կամ,- հարցը այլ կերպ տանք,- արդյոք ես չե՞մ վերադառնում ինչ-որ ելման կետի: Եթե այդպես է, ապա արդյո՞ք քեզ չեմ հանդիպի այդ ճանապարհին:

Արսենիի ձեռքերն արագ հիշեցին մոռացված աշխատանքը եւ հիմա իրենք իրենց էին մշակում ժանտախտային խոցերը: Նայելով իր ձեռքերի հմուտ շարժումներին, նա սկսեց վախենալ, որ դրանց գործողությունները խոչընդոտ կդառնան եւ կվախեցնեն այն զարմանալի ուժին, որը դրանց միջով հորդում էր հիվանդների մեջ, բայց բուժական արվեստի հետ ուղղակի կապ չունեին արդեն: Մարդկանց բուժելով, Արսենին ավելի հաճախ էր նկատում, որ հենց այդ ուժով էր, այլ ոչ թե մանրած ծծումբով եւ ձվի դեղնուցով, առողջացնում: Ծծումբն ու դեղնուցը չէին վնասում, բայց, ինչպես սկսեց թվալ Արսենիին, էապես չէին էլ օգնում: Կարեւոր էր Արսենիի ներքին աշխատանքը, նրա սեւեռման ունակությունը աղոթելիս, միաժամանակ, հիվանդի մեջ տարրալուծվելով: Եվ եթե հիվանդն առողջանում էր, դա Արսենիի ապաքինումն էր:

Իսկ եթե հիվանդը մեռնում էր, նրա հետ մեռնում էր նաեւ Արսենին: Եվ իրեն ողջ-առողջ զգալով խեղդվում էր արցունքներից եւ ամաչում այն բանից, որ հիվանդը մեռած է, իսկ ինքը՝ ողջ: Արսենին եկավ այն գիտակցության, որ մահվան պատճառը եղել է ոչ թե հիվանդության զորությունը, այլ իր աղոթքի տկարությունը: Նա սկսեց իրեն ուղղակի մեղավոր ճանաչել վերահաս մահերի համար եւ ամեն օր խոստովանում էր, այլապես մեղքի բեռը տանելը նրա համար կլիներ ուժից վեր: Եվ ամեն մի հաջորդ հիվանդի մոտ նա մտնում էր ասես առաջին անգամ, կարծես թե մինչեւ նա չէին եղել զննված հարյուրավոր մարդիկ, եւ տանում էր հիվանդի մոտ իր զարմանալի ուժն ամբասիր, չէ՞ որ միայն դա էր հույսն ապաքինման:

Արսենին պայքարում էր ոչ միայն հիվանդության, այլեւ մարդկային վախերի դեմ: Նա շրջում էր քաղաքով եւ համոզում մարդկանց չվախենալ: Խորհուրդ տալով պահպանել զգուշությունը՝ Արսենին նրանց ետ էր պահում խուճապից, որը մահացու է: Նա հիշեցնում էր մարդկանց, որ առանց Աստծո կամքի մարդու գլխից մազ անգամ չի ընկնի եւ կոչ էր անում չփակվել տներում՝ մոռանալով մերձավորներին օգնելու մասին: Շատերն էին մոռանում:

Ժանտախտի առաջին շաբաթներին Արսենին մտածում էր, թե ինքը չի դիմանա: Նա հոգնությունից ոտքի վրա չէր կանգնում: Հաճախ ուժ չէր ունենում տուն իսկ հասնել եւ մի փոքր քնելու համար նա մնում էր հիվանդի մոտ: Առժամանակ անց Արսենին զարմանքով նկատեց, որ ինքը փոքր-ինչ թեթեւություն է զգում:

Կարծես թե ընտելանում եմ մի բանի, ինչին ընտելանալն անհնար է, ասաց նա Ուստինային: Դա ավելորդ անգամ ապացուցում է, սեր իմ, որ չկա ուժասպառություն, այլ կա փոքրոգություն:

Արսենին քնում էր օրական երկու-երեք ժամ, բայց անգամ քնի մեջ չէր կարողանում ազատվել իրեն շրջապատող վշտից: Գունեղ երազներում նա տեսնում էր այտուցված հիվանդներին, եւ նրանք խնդրում էին ապաքինել իրենց, եւ ինքը ոչնչով չէր կարողանում օգնել, որովհետեւ գիտեր, որ նրանք արդեն մահացել են: Եվ նրա երազներում այլեւս երեւակայական ոչինչ չկար, դրանք ճշմարտացի երազներ էին՝ երազներ եղելության մասին: Ժամանակն իրոք դարձ էր կատարում: Այն իր մեջ չէր ընդգրկում իրեն բաժին տրված անցքերը,- այնքան մեծապանծ

ու սրտառուչ էին այդ իրադարձությունները: Ժամանակը սողում էր իր թելագծով, ինչպես թափառականի ճամփորդական մախաղը: Եվ հիմա թափառականին ներկայացնում էր իր պարունակությունը, եւ նա զննում էր այն, որպես առաջին անգամ:

-Գ-

Ահա ես, Տեր իմ, եւ ահա իմ կյանքը, որը հասցրի ապրել, մինչեւ կգայի առ Քեզ, ասաց Արսենին Տիրոջ Գերեզմանի մոտ: Ինչպես նաեւ այն իմ կյանքը, որը Քո անբարբառ ողորմածությամբ դեռ կարող եմ ապրել: Չէ՞ որ ես արդեն հույս չունեի լինել այստեղ, քանզի հենց Երուսաղեմ քաղաքի դեմը կողոպտվեցի եւ հատվեցի սրով, իսկ այն, որ կանգնած եմ աստ, Քո առջեւ, համարում եմ իբրեւ մեծագույն ողորմածությունը Քո: Մենք իմ անմոռանալի ընկեր Ամբրոջոյի հետ բերում էինք Քեզ կանթեղն ի հիշատակ պսկովյան փոխիշխանի դուստր Աննայի. նա գետում է խեղդվել: Իսկ հիմա ձեռնունայն եմ, եւ չունեմ կանթեղ, եւ իմ ընկեր Ամբրոջոն նույնպես չկա, եւ շարանն ուրիշների, ում ես հանդիպեցի ճանապարհին, նույնպես կորցրի իմ մեղաց պատճառով: Աստ հիշատակեմ պահնորդ Վլասին, քանզի իր կուծքը դեմ տվեց հանուն յուր ընկերոջ: Վլասիի մեղքերը խոստացա թողություն տալ Քո առջեւ, իսկ ինքը պառկած է լեհաց հողում համընդհանուր հարության սպասումով: Մե՛ր Փրկիչ, խաղաղություն տուր Քո այն ծառաներին, ում հիշատակեցինք մենք եւ բնակեցրու նրանց Քո տիրույթներում, ինչպես գրված է եւ ուշ մի դարձրու նրանց կամա թե ակամա գործած մեղքերին, եւ ամենին, ինչն իմանալի է մեզ եւ անիմանալի... Ո՛վ Մարդասեր: Դիմում եմ Քեզ գլխավոր պաղատանքով իմ կյանքի, վերաբերող Քո ծառա Ուստինային: Աղերսում եմ ոչ նրա ամուսնու իրավունքով, քանզի ես նրա այրը չեմ, թեեւ կարող էի եւ լինել՝ չընկնելով այս աշխարհի իշխանի ցանցերի մեջ: Աղերսում եմ նրան սպանողի իրավունքով, որքանով իմ ոճիրը մեզ կապեց այս դարում եւ ապագայում: Մեռցնելով Ուստինային, ես զրկեցի նրան Քո ներդրած հնարավորությունները բացահայտել, զարգացնել այն եւ ստիպել փայլել Աստվածային լույսով: Ես ուզում էի նրա համար տալ իմ կյանքը, իսկ ավելի ճշմարիտն ասած՝ տալ նրան իմ կյանքը այն կյանքի փոխարեն, որը խլեցի նրանից: Եվ ես

չզորեցի այդ անել այլ կերպ, քան մահացու մեղքի միջոցով, իսկ ո՞ւմ պետք կլիներ այդպիսի կյանքը: Եվ որոշեցի ետ տալ նրան ինձ համար հասանելի միակ հասանելի միջոցով: Ես ջանացի, ինչպես կարող էի, փոխարինել Ուստինային եւ նրա անունից արարել բարի գործեր, որոնք երբեք չէի կարողանա արարել իմ կողմից: Ես հասկանում էի, որ ամեն մի մարդ անփոխարինելի է եւ առանձնահատուկ պատրանքներ չէի փայփայում, բայց էլ ինչպե՞ս, ասա, ես կարող էի մարմնավորել իմ զղջանքը: Դժբախտությունը լոկ նրանում է, որ իմ աշխատանքի պտուղներն այնքան չնչին ու անհեթեթ եղան, որ ոչինչ, բացի ամոթից ես չզգացի: Եվ չթողեցի դա միայն այն պատճառով, որ մնացած ամեն բան իմ մոտ կստացվեր ավելի վատ: Ես անվստահ եմ անցնում իմ ճամփան եւ դրանից ինձ ավելի դժվար է շարժվել հեռու: Անծանոթ ճանապարհով կարելի է ընթանալ երկար, շատ երկար, սակայն չի կարելի ընթանալ անվերջանալիորեն: Փրկարա՞ր է այն Ուստինայի համար: Եթե ես գոնե ինչ-որ նշան ունենայի, գոնե ինչ-որ հույս.... Գիտես, չէ որ ես մշտապես խոսում եմ Ուստինայի հետ, նրան պատմում այն մասին, թե ինչ է կատարվում աշխարհում, իմ տպավորությունների մասին, որպեսզի ցանկացած ակնթարթ նա, ինչպես ասում են, տեղեկացված լինի կատարվածից: Նա ինձ չի պատասխանում: Դա լռությունը չէ չներելու. ես գիտեմ նրա բարեսրտությունը, նա ինձ չէր տանջի այսքան տարիներ: Ավելի շուտ, հնարավորություն չունի ինձ պատասխանելու, իսկ գուցեեւ, նա պարզապես խնայում է ինձ վատ լուրերից, չէ որ ձեռ ի սիրտ՝ ես պիտի հուսադրվեմ բարի լուրերով: Ես հավատում եմ այն բանին, որ իմ սիրով նրան կարող եմ փրկել հետմահու, սակայն հավատից բացի ինձ պետք է դրանց վերաբերյալ գոնե մեկ կաթիլ իմացություն: Ուրեմն՝ տուր ինձ, Փրկիչ, գոնե ինչ-որ նշան, որպեսզի իմանամ, որ ճանապարհն իմ շեղվել է դեպի խելագարություն, իսկ արդեն այդպիսի իմացությամբ կարելի է ընթանալ ամենադժվարին ուղիով, գնալ որքան հնարավոր է երկար եւ այլեւս հոգնություն չզգալ:

Ի՞նչ նշան ես ուզում եւ ինչպիսի՞ իմացության, հարցրեց ճգնավորը, որ կանգնած էր Տիրոջ գերեզմանի մոտ: Մի՞թե դու չգիտես, որ ամեն ուղի իր մեջ վտանգներ է թաքցնում: Ցանկացած, եւ եթե դու դա չգիտակցես, էլ ինչո՞ւ շարժվես առաջ: Ահա դու ասում ես, որ քեզ հավատը քիչ է, դու դեռ գիտելիք էլ ես ուզում: Սակայն գիտելիքը չի ենթադրում

հոգեւոր ճիգ, գիտելիքն ակնառու է: Ճիգը ենթադրում է հավատ: Գիտելիքը՝ խաղաղություն, իսկ հավատը՝ շարժում:

Սակայն մի՞թե խաղաղության հարմոնիայի չէին ձգտում սրբակյացները, հարցրեց Արսենին:

Նրանք ընթանում էին հավատի միջով, պատասխանեց ճգնավորը: Եվ հավատը նրանց այնքան զորեղ էր, որ վերափոխվեց գիտելիքի:

Ես միայն ուզում եմ իմանալ ճանապարհի ընդհանուր ուղղությունը, ասաց Արսենին: Առ այն, ինչը վերաբերում է ինձ եւ Ուստինային:

Իսկ մի՞թե Քրիստոս ընդհանուր ուղղություն չէ, հարցրեց ալեւորը: Էլ ի՞նչ ուղղություն ես դեռ փնտրում դու: Դե եւ ի՞նչ ես հասկանում ճանապարհ ասելով՝ արդյոք ո՞չ այն տարածությունները, որոնք թողել ես քո թիկունքում: Քո հարցերով դու եկար հասար Երուսաղեմ, թեեւ կարող էիր տալ դրանք, ասենք, նաեւ Կիրիլյան միաբանությունում: Ես չեմ ասում, որ թափառումներն անօգուտ են. նրանցում իրենց իմաստը կա: Մի նմանվիր լոկ քո սիրած Ալեքսանդրին, որն ուներ ճանապարհ, սակայն չուներ նպատակ: Եվ չափից ավելի մի տարվիր հորիզոնական շարժմամբ:

Իսկ ինչո՞վ տարվեմ, հարցրեց Արսենին:

Ուղղահայաց շարժմամբ, պատասխանեց ալեւորը եւ վերեւը ցույց տվեց:

Տաճարային գմբեթի կենտրոնում սեւանում էր կլոր անցքը, որ թողնված էր երկնքի եւ աստղերի համար: Աստղերը դիտվում էին, սակայն նրանց տեսքը դժգույն էր: Արսենին հասկացավ, որ լուսանում է:

-Դ-

Փետրվարի դեմ ժանտախտն սկսեց նվազել: Ձմեռվա վերջն այնքան ցուրտ էր, որ ժանտախտը պարզապես սառեց: Եվ չնայած Արսենիի աշխատանքները նկատելիորեն քչացան, հենց փետրվարին նա զգաց, որ իր ուժերը սպառվում են: Ամիսների պայքարը ժանտախտի դեմ Արսենիին լրիվ հյուծել էին, իսկ դրան ավելացան նաեւ գարնանամուտի սովորական թուլությունները: Վեր կենալն առավոտներն ավելի էր դժվարանում: Հիվանդներին այցելության ճանապարհին մի քանի անգամ նստում էր հանգստանալու: Արսենիին տեսնելով ուժասպառ՝

հարյուրապետ Գավրիիլն ասաց.

Պսկովի քաղաքացիներ, ձեր բազմաթիվ ապաքինումների վրա նա սպառեց իր ամբողջ ուժերը, ուրեմն, ի սեր Աստծո, խնայեք նրան:

Փետրվարի վերջին ժանտախտով հիվանդանալու դեպքերը բոլորովին դադարեցին: Եվ երբ Արսենին հնարավորություն ունեցավ հանգստանալու, նա քնեց: Նա քնեց ուղիղ կես ամիս՝ տասնհինգ օր ու տասնհինգ գիշեր: Արսենին գիտեր, որ ժանտախտի ժամանակ ծախսած ուժերը նա պարտքով վերցրել է ապագայից եւ հիմա լրացնում էր վատնածը: Երբեմն նա արթնանում էր, որպեսզի ծարավը հագեցնի, բայց իսկույնեւեթ նորից քնում այն պատճառով, որ կոպերը չէին պոկվում իրարից: Նրան շարունակում էր երազվել Երուսաղեմը եւ ճանապարհը Պաղեստին, եւ Ամբրոջոն՝ դեռ կատարելապես ողջ-առողջ: Տասնվեցերորդ օրը Արսենիի մեծագույն քունն ավարտվեց, եւ նա զգաց, որ ուժերը կամաց-կամաց վերադառնում են:

Արթնանալով, Արսենին հասկացավ, որ գարուն է եկել: Նա սովոր էր տարիները չափել գարուններով: Ի տարբերություն տարվա մյուս եղանակների՝ գարնանագալն առավել զգալի էր եւ թափանցող: Սովորաբար Արսենին նրա գալստյանն էր սպասում, իսկ հիմա արթնացել էր գարնանակեսին, այդպես հանկարծակի արթնանում են լավ եղանակին եւ տեսնում, որ արեւն արդեն վերեւում է, ու նայում են հատակի վրա նրա թրթռոցին, եւ սարդոստայնին արծաթը ճառագայթի մեջ, եւ լաց են լինում շնորհապարտության արցունքներով: Արսենիին կթվար, որ օդի բուրմունքի եւ ընդհանուր վիճակից այդ գարունը ճիշտ եւ ճիշտ այնպիսին էր, ինչպես ինչ-որ ժամանակ մանուկ տարիներին, սակայն նա տեղնուտեղն իրեն կարգի բերեց: Արսենին այժմ բոլորովին այլ էր, եւ դրանից էլ այժմյան գարունը ոչ մի ընդհանուր բան չուներ իր մանկության գարնան հետ: Ի տարբերություն այն գարնան՝ ներկա գարունը չէր լցնում իրենով ամբողջ աշխարհը: Նա իր սքանչելի ծաղիկն էր, սակայն Արսենին վաղուց գիտեր, որ այդ այգում կային եւ ուրիշ բույսեր:

Նա քայլում էր Պսկովով, եւ իր շարժմանը համընթաց փայտածայն հնչում էին կամրջակները: Ծառերի վրա ուռել էին բողբոջները, իսկ օդում թռչում էր ձմեռվանից հետո առաջին փոշին: Մոտենալով Հովհաննեսի վանքին, Արսենին փնտրեց պատամիջի բացվածքը եւ թա-

փանցեց գերեզմանատուն: Տեսավ իր ծառերը պատի մոտ եւ լաց եղավ, որովհետեւ դրանք անցյալի ծառերն էին եւ անվերադարձ կյանքի:

Գերեզմանատանն Արսենիին արդեն սպասում էին մայրապետը քույրերի հետ: Մայրապետն ասաց.

Ֆոմայի մարգարեությունը պարտադիր հատկանիշ ունի: Դա նշանակում է, որ ցանկության դեպքում անգամ չի կարելի այն շրջանցել: Այնպես որ, դու, մարդ Աստծո, պիտի ուղեւորվես Կիրիլյան միաբանություն՝ որքան շուտ, այնքան լավ:

Կրեմլում փոխիշխան Գավրիիլը միայն տարածեց ձեռքերը: Նա հիշեց Ֆոմայի ասածը, բայց հոգու խորքում հույս էր տածում, որ Արսենին կմնա Պսկովում մինչեւ ենթադրյալ աշխարհի վերջը: Այդպես նրա համար ավելի հանգիստ էր: Արսենիի հետագա ներկայության նպատակահարմարությանը փոխիշխանը վստահ չէր:

Սկզբունքորեն մենք պատրաստ ենք նրան ընդունել, ասացին Կիրիլյան միաբանությունից: Իսկ փոխիշխան Գավրիիլին փոխանցեք, որպեսզի չտրտնջա եւ փայտը չդնի հեռացողի անիվի մեջ, եթե խոսքն, իհարկե, հետիոտն շարժման մասին չէ:

Իսկ ո՞վ կուղարկի նրան նման ուժասպառությունից հետո, զարմացավ փոխիշխան Գավրիիլը: Դե, հավանաբար, Պսկով քաղաքի եւ շրջակայքի հանդեպ նրա վաստակին համապատասխան ինչ-որ բան կշինենք:

Արսենիին ուզեցին առաջարկել հենց փոխիշխանի կառքը, սակայն նա ընտրեց ձին: Կառքերը ծառայում են գերազանցապես թույլ մարմիններին, ինչպես նաեւ կանանց եւ երեխաներին: Իմանալով այդ, բոլորը հասկանում էին, որ Արսենին ուզում էր մեկնել այնպես, ինչպես վայել է այրամարդուն: Նույնիսկ ո՛չ լիովին ապաքինված, ոչ ոք չէր փորձում համոզել նրան հրաժարվել ձիով մեկնելուց: Փոխիշխան Գավրիիլը պնդում էր, որ Արսենիին կտա հինգ հոգուց բաղկացած ուղեկցորդների խումբ անկանխատեսելի իրադրությունների դեպքում: Այն ոչ հեշտ ժամանակներում իրադրությունների մեծ մասը, ըստ էության, անկանխատեսելի էին:

Արսենիին ճանապարհելու դուրս եկավ Պսկովի գրեթե ողջ բնակչությունը: Նա գունատ էր, համարյա թափանցիկ, բայց թամբի վրա իրեն պահում էր լավ:

Ճանապարհը նրան վերջնականապես կբուժի, ասաց Հովհաննեսի միաբանության մայրապետը: Ճանապարհը լավագույն դեղամիջոցն է:

Սովորաբար զուսպ փոխիշխան Գավրիիլը չէր թաքցնում արցունքները: Նա գիտեր, որ Արսենիին տեսնում է վերջին անգամ: Արսենիի մեկնելու պատճառով պսկովցիների համար փոքր-ինչ վախենալու էր: Նրանց հանգստացրեց լոկ այն, որ ժանտախտը պրծել էր եւ քաղաք էր վերադառնում առտնին կյանքը, եթե ոչ ընդմիշտ, ապա ծայրահեղ դեպքում առաջիկա հինգ տարիներին: Նկատի առնելով հնարավոր աշխարհի վերջը, Պսկովի բնակիչներն արդեն չէին սպասում նոր ժանտախտի:

-Ե-

Ճանապարհին Արսենին, իրոք, իրեն լավ էր զգում: Դաշտերի ալեկոծության եւ անտառների աղմուկի հետ ապաքինումը մտնում էր նրա մեջ: Ռուսական հողի լայնարձակությունը կազդուրիչ էր: Այն ժամանակ դրանք անծայրածիր չէին եւ ուժեր չէին պահանջում, այլ ուժ էին տալիս: Արսենիին ուրախացնում էր սմբակների դոփյունը, նա ետ չէր նայում իր ուղեկիցներին եւ պատկերացնում էր, որ քիչ հետ ընկած իր ետեւից գալիս է իր թանկագին ընկեր Ամբրոջոն եւ հետո՝ քարավանը, իսկ քարավանում՝ բոլոր նրանք, ումից երբեւէ բաժանվել էր:

Հեծյալներն արագ էին ընթանում, ոչ այն բանից, որ ինչ-որ տեղ էին շտապում (Արսենին գնում էր դեպի հավերժություն, էլ ինչո՞ւ պիտի շտապեր), պարզապես արագ վարգը համապատասխանում էր Արսենիի հոգեվիճակին եւ բարձրացնում էր նրա ոգին: Սակայն հեծյալներից Ի՛լ ավելի արագ սլանում էր Արսենիի մեծագույն փառքը: Այն առաջ էր անցնում եւ մղում նրանց դեպի մարդկային ամբոխները: Արսենին աճապարում էր: Նա ջանում էր լսել բոլորին, ով ուզում էր դիմել իրեն:

Շատերն էին սպասում, որ իրենց հիվանդությանը կօգնի: Արսենին նրանց մի կողմ էր տանում եւ ուշադրությամբ զննում: Նա որոշում էր, արդյո՞ք ինքը կարող է օգնել այդ մարդկանց: Եթե զգում էր, որ կարող է, ապա օգնում էր: Իսկ եթե զգում էր, որ չի կարող, ապա փնտրում էր հուսադրման խոսքեր: Նա ասում էր.

Քո հիվանդությունը վեր է իմ ուժերից, բայց Աստծո ողորմածությունն առավել բարձր է մարդկային ուժերից: Աղոթիր եւ մի հուսալք-

վիր:

Կամ.

Ես գիտեմ, որ դու ցավից ավելի ես վախենում, քան մահից: Եվ քեզ ասում եմ, որ քո հեռացումը կլինի խաղաղ եւ դու ցավից չես տապակվի:

Ծատերն էլ հարցեր էին տալիս, որոնք կապ չունեին հիվանդությունների հետ: Նրանք պարզապես ուզում էին խոսել այն մարդու հետ, ում մասին այդքան շատ էին լսել: Նմաններին Արսենին հպվում էր ձեռքով առանց հետևերը խոսքի բռնվելու: Եվ նրա հպումն ավելի խորն էր ցանկացած խոսքից: Այն պատասխան էր ծնում հենց հարցնողի գլխում, քանզի նա, ով հարց է տալիս, հաճախ գիտի նաեւ պատասխանը, չնայած միշտ չի խոստովանում այդ մասին:

Եվ վերջապես կար մարդկանց մի մեծ խումբ, ովքեր ոչինչ չէին բուժում եւ ոչինչ չէին հարցնում, քանզի յուրաքանչյուր ժողովրդի մեջ մեծամասնությունն առողջ է եւ հարցեր չունի: Այս մարդիկ լսել էին, որ Արսենիի հայեցումը բարերար է, եւ գալիս էին նրան տեսնելու:

Արսենիի ճանապարհային հանդիպումները ժամանակ էին պահանջում եւ էապես երկարածգում նրա երթը: Բայց Արսենին չէր փորձում արագացնել իր ընթացքը:

Եթե ես չլսեմ բոլոր այս մարդկանց, ասաց նա Ուստինային, իմ ճանապարհը չի համարվի ամբողջովին անցած: Քեզ, ի՛մ խնդություն, կփրկեն մեր բարի գործերը, իսկ արդյոք կարելի՞ է դրանք ցուցանել մեզ: Ոչ, պատասխանում եմ, չի կարելի, միայն ուրիշ մարդկանց, եւ փառք Աստծո, որ այդ մարդկանց Նա մեզ է ուղարկում:

Արսենիի ժամանումը մարդկանց հայտնի դարձավ մի քանի օրում, եւ բնակիչները նախապես էին որոշում, թե նա ում մոտ պետք է կանգ առնի: Այդ մարդիկ ելնում էին Արսենիի առավելագույն հարմարավետությունից, ինչպես նաեւ սեփական բարեկեցության ակնկալիքից: Չէ որ Արսենիի փառքի հետ տարածվում էր նաեւ այն կարծիքը, որ նրա ոտնամուտը որեւէ մեկի տուն, մեծ բարիք է տանտիրոջ համար: Արսենին ոչ միշտ էր հյուրընկալվում այնտեղ, որտեղ իրեն առաջարկում էին, այլ, ամբոխի միջից հայցքով ընտրելով մեկին, հարցնում էր.

Իսկ թույլ կտաս, բարեկամս, մնալ քո տանը: Եվ ընտրյալի կյանքն այդ պահից փոխվում էր,- գոնե իր հարազատների աչքում: Արսենին

ինքն էլ զգում էր, թե ինչպես է փոխվում նաեւ իր կյանքը: Նա դեռ երբեւէ չէր զգացել ուժերի այդպիսի հավելում: Չնայած այն բանին, որ ինքն իրեն չէր խնայում օգնելով մարդկանց, նա ավելի շատ ուժ էր ստանում, քան ծախսում էր: Եվ դրանից չէր զարմանում: Արսենին զգում էր, որ իրեն ուժ են տալիս այն հարյուրավոր մարդիկ, ում նա հանդիպում էր: Իսկ նա այդ ուժը փոխանցում էր նրանց, ովքեր դրա կարիքն ավելի շատ ունեին:

Ճամփորդներն անցնում էին այն վայրերով, ուր Արսենին եղել էր շատ տարիներ առաջ Բելոգյորսկից Պսկով ուղեւորվելիս: Նա ճանաչում էր նախկինում տեսած բլուրները, գետերը, եկեղեցիներն ու տները: Նրան թվում էր, թե ինքը ճանաչում է նույնիսկ մարդկանց, չնայած դրանում այնքան էլ համոզված չէր: Ի վերջո մարդիկ արագ են փոխվում:

Արսենին վերհիշում էր իր երիտասարդության ցավալի դեպքերը, բայց նրա հուշերը ջերմ էին: Դրանք արդեն հիշողություններ էին, կարծես թե մի այլ մարդու մասին: Նա վաղուց սկսել էր կասկածել, որ ժամանակն ընդհատական է: Եվ նրա առանձին մասերը միմյանց հետ կապ չունեն, նման այն բանին, կարծես թե չի եղել երբեւէ, բացի, գուցեեւ, անունից՝ Ռուկինյան արվարձանի շիկահեր տղայի եւ ճերմակած մազերով ճամփորդի, համարյա ծերունու միջեւ: Ըստ էության, կյանքին համընթաց փոխվում էր նաեւ անունը:

Հարուստ տներից մեկում Արսենին իրեն տեսավ վենետիկյան հայելու մեջ. նա իսկապես որ ծերունի էր: Այդ բացահայտումը ապշեցրեց իրեն: Արսենին չէր ափսոսում իր երիտասարդությունը, դե նա առաջ էլ էր զգում, որ ինքը փոխվում է: Եվ, համենայն դեպս, հայելու այդ հայացքն իր վրա ուժեղ տպավորություն թողեց: Երկար ճերմակած մազեր: Սրված, այտոսկրերում հավաքված աչքեր: Նա չէր կարծում, որ փոփոխություններն այդքան հեռու կգնային:

Հապա նայիր, թե ինձնից ինչ մնաց, ասաց նա Ուստինային: Ո՞վ կմտածեր: Դու, սեր իմ, ինձ այսպիսի տեսքով չէիր ճանաչի: Ինքս էլ ինձ չեմ ճանաչում:

Արսենին գնում էր ու մտածում, որ իր մարմինն այնքան ճկուն չէ, որքան նախկինում, ոչ այնքան անխոցելի: Հիմա նա ցավը զգում էր ոչ միայն հարվածից հետո, այլեւ առանց նրա: Ավելի ճիշտ, հիմա նա

զգում էր այնպես, ինչպես հարվածներից հետո: Իր գոյության մասին, մեկ այստեղ, մեկ այնտեղ, նվվացող մարմնից էր հիշում: Իսկ նախկինում այդ մասին չէր հիշում, քազնի բուժում էր ուրիշների մարմինները՝ հոգալով նրանցից յուրաքանչյուրի մասին, իբրեւ մի անոթի, որն իր մեջ տեղավորում է հոգին:

Մի անգամ Կիրիլյան միաբանության ճանապարհին նա հանկարծ տեսավ մի մարմին, որից հոգին վաղուց համարյա դուրս էր եկել: Այն պատկանում էր զառամած մի ծերունու, որ նայում էր Արսենիին՝ կապուտաչյա, բայց առանց արտահայտության: Ծերունուն նրա մոտ բերեցին հարազատները՝ ասելով, որ տկար է: Արսենին խոր հայացքով նայեց կապույտ աչքերի մեջ երկարակյացի եւ զարմացավ, որ դրանք վաղուց թոշնել են այն ժամանակ, երբ նրա հոգին թոշնել է վաղուց:

Իսկ կուզե՞ս ապրել, ալեւոր, հարցրեց Արսենին:

Կուզեմ մեռնեմ, պատասխանեց ծերունին:

Ահա նա մեռել է վաղուց, իսկ մարմինը նրա չի թողնում, էլ ինչո՞ւ եք բռնել թաղանթից, ասաց Արսենին նրա հարազատներին: Այն, ինչը տեսնում եք նրա մեջ, արդեն այստեղ չէ:

Դե այն, ինչպես ասում են, նկատելի է նաեւ, հաստատեցին հարազատները, նրա մեջ նախկին սրտալիությունը չկա: Նրան ասում ես՝ տարիքդ շա՞տ է, պապի: Իսկ նա՝ դե կորեք դուք... Այսպիսի զարհուրելի կերպափոխություն: Բայց էլ ի՞նչ կարող ես անել նրա հետ, այդուհանդերձ:

Եվ ոչինչ մի արեք, պատասխանեց Արսենին: Ամեն ինչ կորոշվի քառասուն օրվա սահմաններում:

Այդպես էլ տեղի ունեցավ: Ծերուկը մահացավ հենց այն օրը, երբ Արսենին ժամանեց սուրբ Կիրիլի միաբանություն:

-Զ-

Արսենին միաբանություն հասավ իրիկվա դեմ, եւ նրան դիմավորեց բազմաքանակ ժողովուրդը: Տեսնելով միաբանության պատերը, Արսենին հիշեց Քրիստափորի հետ իր մանկական ուղեւորությունը: Հիշեց գիշերային սայլը եւ իր գլխավերեւում ցածրածայն խոսակցություններ-ը արվարձանի տղամարդկանց: Նա մտածեց, որ իրեն սիրող Քրիս-

տափորից միայն ոսկորներն են մնացել: Եվ իր համար ուրախալի էր, որ հիմա մոտենում է այդ ոսկորներին: Արսենին սկսեց զգալ դրանց հարազատական ջերմությունը: Նա ջանում էր պատկերացնել Քրիստափորի դեմքը, բայց չէր կարողանում:

Իջնելով ձիուց, Արսենին ծնրադրեց եւ համբուրեց միաբանության դարպասների դեմի հողը:

Երկար ճամփորդությունից հետո, սեր իմ, ես վերադարձել եմ տուն, ասաց Արսենին Ուստինային:

Քո ճամփորդությունը նոր է միայն սկսվում, առարկեց ճգնակյաց Ինոկենտին: Պարզապես հիմա այն կընթանա այլ ուղղությամբ:

Արսենին բարձրացրեց գլուխն ու ներքեւից վերեւ նայեց ճգնակյացին:

Ինձ թվում է, ճանաչում եմ քեզ, ծերուկ: Քիչ չե՞նք արդյոք զրուցել Երուսաղեմում:

Շատ հնարավոր է, պատասխանեց ճգնավոր Ինոկենտին:

Նա բռնեց Արսենիի ձեռքից եւ նրան տարավ միաբանության դարպասների մեջ: Իսկ միաբանությունում ճգնավորն ասաց.

Վանահայր մենք սովորաբար ձեռնադրում ենք յոթ տարի անց՝ համայնք գալուց հետո: Բայց քո վարքը, Արսենիե, մեզ հայտնի է, այն մինչեւ այժմ էլ եղել է աբեղայական, այնպես որ, լրացուցիչ փորձություններ, կարծես թե, չի էլ պահանջվում: Դե իրադրությունն էլ ամբողջությամբ, ինչպես դու գիտես, բարենպաստ չէ երկար-բարակ քաշքշուկի համար: Եվ եթե մեզ իրոք սպասվում է աշխարհի վերջը, քեզ ավելի լավ կլիներ այն դիմավորել ձեռնադրված: Թեեւ, երեւի, դեռ գլուխ կգա:

Ծերուկն աչքով արեց:

Նրանց ուղեկցող ամբոխն աղմկեց: Աշխարհի վերջի մասին հարցը նրան հուզում էր արտակարգ: Ամբոխն իր առջեւ տեսել էր սրբակյաց երկու մարդու, եւ նրանցից մեկնություններ էր սպասում: Եկածները գիտեին, որ Արսենիին ապաքինելու շնորհ է տրված, բայց չէին բացառում, որ նա տիրապետում է նաեւ մարգարեության շնորհին: Ըստ էության, գիտելիքն աշխարհի կործանման մասին նրանց համար ավելի կարեւոր էր ապաքինումից, որովհետեւ աշխարհավերջի մերձության հաստատումը նրանց աչքում ապաքինումը ի չիք էր դարձնում:

Ուրեմն՝ էլ ե՞րբ է, հարց է առաջանում, աշխարհի վերջը, բղավում էր

ամբոխը: Մեզ համար դա կարեւոր է, ներեցեք ուղղամտության համար, եւ՛ աշխատանքները պլանավորելու առումով, եւ՛ հոգու փրկության իմաստով: Մենք բազմիցս դիմել ենք միաբանություն ճշգրտումների համար, սակայն միանշանակ պատասխան չենք ստացել:

Ալեւոր Իննոկենտին խիստ հայացքով չափեց ամբոխին:

Մարդկանց գործը չէ ժամանակներն ու ժամկետներն իմանալը, ասաց նա: Էլ ի՞նչ տարեթվեր եք դուք սպասում, երբ ցանկացած քրիստոնյա պարտավոր է ամեն ժամ պատրաստ լինելու վերջին: Նույնիսկ այստեղ կանգնածներից ամենապատանիները կապրեն յոթանասունից ոչ ավելի, դե, գուցեեւ, ութսուն: (Պատանիները լաց եղան): Եվ նրանցից ոչ ոք, ում այստեղ տեսնում եք, հարյուր տարի անց արդեն չի լինի: Արդյո՞ք մեծ է տարկետումը հավերժության հետ համեմատած: Այդ պատճառով էլ (ալեւորը նայեց պատանիներին) ասում եմ ձեզ. Լաց եղեք ձեր մեղքերի համար: Բայց գլխավորը՝ զվարթացեք եւ աղոթեք: Եվ խնդացեք, որ աղոթավորի եք ձեռք բերել նույնպես ձեր հոգիներում: Եվ հրաժեշտ տվեք Արսենիին, քանի որ ձեռք եք բերում Ամբրոսիային:

Ասվածից հետո ճգնավոր Իննոկենտին Արսենիին տարավ վանահոր մոտ: Վանական սովորույթի համաձայն անուն ընտրեցին այն նույն տառից, որով սկսվում էր աշխարհիկ անունը: Եվ Արսենին արդեն գիտեր, թե ինչ անուն իրեն պիտի առաջարկեն, եւ հրճվում էր դրանով իր հոգու խորքում:

Մենք քեզ համար անուն ենք ընտրում ի հիշատակ սրբազան Ամբրոսիա Մեդիոլանսկու, ասաց ծերուկ Իննոկենտին եւ այն հիշեցնում է,- դե այդպես է միշտ ստացվում,- քո նվիրյալ ընկերոջը՝ այդ անունն արտասանված մի այլ տոնայնությամբ: Թող որ այդ անունը, ճիշտ առոգանությամբ, հիշողությունը լինի նաեւ քո ընկերոջ: Իսկ քանի՞ կյանք ես ապրելու այսուհետ միաժամանակ:

Հովվապետի օրհնությամբ վանահայրը հաստատեց Արսենիի նոր անունը: Յոթ օր անց խիստ պահքից հետո Արսենին ձեռնադրվեց:

-Է-

Արսենի անվամբ ինձ մի փնտրիր ողջերի մեջ, այլ փնտրիր ինձ Ամբրոսիա անվամբ: Այսպես ասաց Ուստինային Ամբրոսիան: Արդյոք հիշո՞ւմ ես, սեր իմ, մենք քեզ հետ խոսում էինք ժամանակի մասին: Այստեղ այն բոլորովին այլ է:

Ժամանակն այլեւս չի շարժվում առաջ, այլ գնում է շրջաններով, որովհետեւ շրջաններով են շարժվում նրան հագեցնող իրադարձությունները: Իսկ իրադարձություններն այստեղ, սեր իմ, կապված են գերազանցապես ժամերգության հետ: Ամեն օրվա առաջին եւ երրորդ ժամերին մենք հիշում ենք Պիղատոսի դատը ի վերա մեր Տեր Հիսուս Քրիստոսի, վեցերորդ ժամին նրա խաչելության ճանապարհը, իսկ շաբաթվա ամեն օրը մարդու նման ունի իր դեմքն ու նվիրումը: Երկուշաբթին նվիրված է անպտուղ ուժերին, երեքշաբթին՝ մարգարեներին, չորեքշաբթին եւ ուրբաթը՝ հիշողությանը Հիսուսի խաչամահի, շաբաթը՝ ննջեցյալների հիշատակման, իսկ գլխավոր օրը նվիրված է Տիրոջ հարությանը: Այս ամենը, սեր իմ, կազմում է յոթնօրյա ժամերգության շրջան: Իսկ ամենամեծ շրջանը՝ տարվանն է: Այն որոշվում է արեւով ու լուսնով, որոնց, հույս ունեմ, դու ավելի մոտ ես, քան այստեղ մենք բոլորս: Արեւի շարժման հետ են կապված տասներկու տոներն ու սուրբերի հիշատակի օրերը, իսկ լուսինը մեզ ասում է Զատիկի ժամանակի մասին եւ նրանից կախված տոների: Ես ուզում եմ քեզ ասել, որքան ժամանակ է արդեն գտնվում եմ միաբանությունում, բայց գիտես, ինչոր մտքերս չեմ կարողանում հավաքել: Ես դա, թվում է, ինքս էլ արդեն չեմ հասկանում: Ժամանակը, սեր իմ, այստեղ շատ երերուն է, քանի որ շրջանը փակ է եւ հավասար է հավերժության: Հիմա աշուն է. դա թերեւս միակ բանն է, որ ես կարող եմ ասել փոքրիշատե հավաստի: Տերեւները թափվում են, միաբանության վրա տարուբերվում են ամպերը: Համարյա թե կառչում են խաչերից:

Ամբրոսիան կանգնած էր լճափին, եւ քամին նրա դեմքը ծածկում էր մանրիկ ցայտքերով: Նա նայում էր, թե ինչպես է պատի երկայնքով դեպ իրեն հուշիկ մոտենում ալեւոր Ինոկենտին: Ալեւորի ոտքերը ծածկում էր պարեգոտը, եւ դրանից էլ չէին երեւում քայլերը, այնպես որ, չէր կարելի նույնիսկ ասել, որ նա քայլում է: Նա մոտենում էր:

Միաբանության ժամանակն իրոք շաղկապվում է հավերժության հետ, ասաց ալեւոր Իննոկենտին, բայց հավասար չէ նրան. ողջերի ճանապարհը, Ամբրոսիե, չի կարող շրջան լինել: Ողջերի ճանապարհը, նույնիսկ եթե նրանք վանական են, բացված է, չէ՞ որ առանց շրջանից ելնելու, հարց է առաջանում, Է՛լ ինչ կամքի ազատություն: Եվ նույնիսկ, երբ մենք վերարտադրում ենք իրադարձություններն աղոթքի մեջ, մենք հենց այնպես չենք հիշատակում: Մենք վերապրում ենք այդ իրադարձությունները եւս մեկ անգամ, եւ նրանք եւս մեկ անգամ տեղի են ունենում:

Հողմաբեր դեղին տերեւների ուղեկցությամբ ալեւորն անցավ Ամբրոսիայի մոտով եւ կորավ պատի ոլորանի ետեւում: Պատի մոտ ափը նորից ամայացավ: Ընդգծված անապատային (կարծես թե ոչ ոք էլ չէր եկել այստեղ), չնախատեսված՝ քայլելու համար: Ամբրոսիայի գոյությունն այս ափին հնարավոր էր դարձնում միայն նրա անշարժությունը:

Դու ենթադրում ես, որ ժամանակն այստեղ շրջան չէ, այլ ինչ-որ բացված ֆիգո՞ւր, հարցրեց Ամբրոսիան ալեւորին:

Հենց այդպես, պատասխանեց ալեւորը: Սիրելով երկրաչափությունը՝ ժամանակի շարժումը նմանեցնում եմ պարույրի: Դա կրկնություն է, սակայն ինչ-որ նոր, առավել բարձր մակարդակում: Կամ, եթե ուզում ես, ապրում է նոր, սակայն սկսված ոչ մաքուր էջից: Նախկինում ապրվածի հիշողությամբ:

Ամպերի ետեւից երեւաց աշնանային թույլ արեւը: Պատի հակադիր կողմից երեւաց ալեւոր Իննոկենտին: Ամբրոսիայի հետ զրույցի ժամանակ նա հասցրեց մի պտույտ անել միաբանության շուրջ:

Դե դու, ալեւոր, պտույտներ ես անում:

Ոչ, դա արդեն պարույր է: Գնում եմ, ինչպես եւ առաջ, հողմահար տերեւների ուղեկցությամբ, բայց տես, Ամբրոսիե,- արեւը դուրս եկավ, եւ ես արդեն մի քիչ ուրիշ եմ: Ինձ թվում է, որ ես նույնիսկ մի թեթեւ թռչում եմ: (Ալեւոր Իննոկենտին պոկվեց հողից եւ դանդաղ լողաց Ամբրոսիայի մոտով): Թեկուզեւ ոչ այնքան բարձր, իհարկե:

Դե ոչ, նորմալ է, գլխով արեց Ամբրոսիան: Գլխավորը, որ քո բացատրությունները տեսանելի են:

Կան իրար նման անցքեր, շարունակեց ալեւորը, սակայն այդ նմա-

նությունից ծնվում է հակադրություն: Հին Կտակարանը բացում է Ադամը, եւ Նոր Կտակարանը բացում է Քրիստոս: Ադամի կերած խնձորի քաղցրությունը շրջվում է Քրիստոսի խմած քացախի դառնության: Իմացության ծառը մարդկությանը բերում է մահվան, իսկ խաչափայտը մարդկությանն անմահություն է ընծայում: Հիշիր, Ամբրոսիե, որ կրկնությունները տրված են ժամանակի հաղթահարման եւ մեր փրկության համար:

Դու ուզում ես ասել, որ նորի՞ց կհանդիպեմ Ուստինային:

Ես ուզում եմ ասել, որ չուղղվող բաներ չկան:

-Ը-

Ընտելանալով միաբանության կյանքին, Ամբրոսիան խնդրեց խոհանոց մտնել: Ծառայությունն այնտեղ համարվում էր վանական ծառայության դժվարներից մեկը: Ծատերն էին անցնում խոհանոցային ծառայությունը, սակայն հաճույքով՝ ոչ բոլորը: Եվ նույնիսկ նրանք, ովքեր խոհանոց էին գնում իրենց կամքով, այնտեղի աշխատանքը համարում էին փորձություն: Իսկ Ամբրոսիան խոհանոցը փորձություն չէր համարում: Այդպիսի աշխատանքը նրա սրտով էր:

Ամբրոսիային դուր էր գալիս ջուր կրելն ու փայտ ջարդելը: Սկզբնական շրջանում անընտել լինելով, նրա մոտ կոշտուկներ հայտնվեցին: Դրանք պայթում էին՝ կացնի կոթի վրա թողնելով խոնավ բծեր: Երբ վառելափայտ նախապատրաստելիս նա սկսեց թաթպաններ հագնել, կոշտուկները չքացան: Հետո նա փայտը ջարդում էր առանց թաթպանների, սակայն կոշտուկներ չէին առաջանում արդեն: Նրա ձեռնափերի մաշկը կոշտացել էր, եւ Ամբրոսիան հոգնում էր արդեն ոչ այնքան ուժեղ: Նա սովորեց կացնով ճիշտ հարվածել կոճղի կենտրոնին, եւ այն ճեղքվում էր կարճ ճտտոցով: Բացվում էր ինչպես երկու թերթիկով մեծ փայտե ծաղիկ: Երբ չէր դիպչում մեջտեղին, ձայնն ուրիշ էր լինում: Բարակ եւ կեղծ: Վատ աշխատանքի ձայն:

Գիշերվա կեսին, երբ միաբանությունը քնած էր, Ամբրոսիան վառում էր տաճարի կանթեղի մոմը եւ, ծածկելով ձեռնափով, տանում միաբանության բակով: Քայլում էր հուշիկ, շնչելով գիշերային թարմությունն ու մեղրաբույրը մոմի: Ձեռնափով փակված եւ Ամբրոսիային

չլուսավորող մոմը հեռվից ինքնուրույն էություն էր թվում: Տեղափոխվելով օդով՝ այն իր կրակը տանում էր խոհանոց:

Այդ կրակից վառվում էր հսկայական վառարանի կրակը: Որոշ ժամանակ անց վառարանը շիկանում էր մինչեւ կարմրեր: Այն այնպես էր այրում, որ կողքին կանգնել չէր լինում: Իսկ Ամբրոսիան նրա վրա պատրաստում էր միաբանության կերակուրը: Դնում եւ հավաքում էր ամանները, ջուր էր ավելացնում, փայտ էր գցում: Կրակը խանձում էր Ամբրոսիայի մորուքը, հոնքերը, թարթիչները:

Դիմացիր կրակին այս, Ամբրոսիա, ասում էր իրեն, եւ դու կրակով կհաղթահարես հավերժական կրակը:

Կավե մեծ պուտուկներում Ամբրոսիան շչի էր եփում: Նրանց մեջ նա դնում էր կաղամբ՝ թարմ կամ թթու դրած, երբեմն՝ բազուկ կամ վայրի թրթնջուկ: Ավելացնում էր սոխ, սխտոր եւ խառնում էր կտավատի ձեթով: Ծիլա էր եփում՝ ոլոռի, վարսակի եւ հնդկացորենի: Համեստ օրերին շչիի հետ տալիս էին խաշած ձու՝ մեկ եղբորը՝ երկու ձու: Վերափոխման պահքի ժամանակ կերակրում էին վարունգով՝ այն մատուցելով մեղրի հետ: Մեծ պահքի սովորական օրերին մատուցում էր յուղով կաղամբ, մանրացրած շաղգամ, քերված հապալասի հետ՝ մեղր, իսկ շաբաթ եւ կիրակի օրերին՝ սեւ ձկնկիթ՝ սոխի հետ կամ կարմիր ձկնկիթ՝ պղպեղով: Սպասարկելով եղբայրներին, նա ուտում էր ոչ թե հացի սեղանի շուրջ, այլ հետո իր մոտ՝ խոհանոցում: Ամբրոսիան հաց էր ուտում եւ վրայից ջուր խմում: Իր պատրաստած ճաշատեսակներին ձեռք չէր տալիս: Նստելով կրակի մոտ:

Պատահում էր, որ նա կրակի մեջ տեսնում էր իր դեմքը: Ծեկ մազերով տղեկի դեմքը Քրիստաֆորի տանը: Տղեկի ոտքերի մոտ գայլն էր պառկած: Տղեկը նայում է վառարանին եւ տեսնում իր դեմքը: Դեմքը երիզված է ճերմակ մազերով՝ փնջված ծոծրակին: Այն ծածկված է կնճիռներով: Չնայած այդպիսի հակապատկերին, տղան հասկանում էր, որ դա իր սեփական արտացոլանքն է: Միայն թե՝ շատ տարիներ անց: Եվ այլ հանգամանքներում: Դա այն մարդու արտացոլանքն է, ով նստած կրակի մոտ տեսնում է դեմքը ճերմակամազ տղեկի եւ չի ուզում, որ մտնողն իրեն անհանգստացնի:

Եղբայր Մելետին դոփում է շեմին եւ, մատը դնելով շուրթերին, շշնջում՝ ինչ-որ մեկի ուսի վրայով, որ Համայն Ռուսիո Բժիշկ Ամբրոսիան

հիմա զբաղված է: Հետեւում է կրակին:

Ներս թող նրան, Մելետի, ասում է Ամբրոսիան, առանց շրջվելու: Ի՞նչ ես կամենում, կին:

Ապրել եմ ուզում, Բժիշկ, օգնիր ինձ:

Իսկ մեռնել չե՞ս ուզում:

Կան մարդիկ, ովքեր ուզում են մեռնել, բացատրում է Մելետին:

Ես որդի ունեմ, Ամբրոսիե, խղճա նրան:

Այսպիսի՞ն: Ամբրոսիան ցույց է տալիս վառարանաշուրթը, որտեղ բոցի ուրվագծերում ենթադրվում է տղայի կերպարը:

Ջուր ես դու, իշխանուհի, ծունկի իջնում (Մելետին հուզված է եւ կրծում է եղունգները), չէ որ նա չի սիրում այդ:

Ամբրոսիան հայացքը կտրում է բոցից: Մոտենում է ծունկի իջած իշխանուհուն եւ ինքն էլ է նրա կողքին ծունկի գալիս: Մելետին ընկրկելով դուրս է ելնում: Ամբրոսիան բռնում է իշխանուհու կզակից եւ նայում նրա աչքերի մեջ: Ձեռնափի երեսով մաքրում նրա արցունքները:

Քո գլխում, կին, ուռուցք կա: Դրանից է վատանում քո տեսողությունը: Եվ բթանում լսողությունդ:

Ամբրոսիան գրկում է նրա գլուխն ու սեղմում իր կրծքին: Իշխանուհին լսում է նրա սրտի բաբախյունը: Դժվարացած ծերունական շնչառություն: Ամբրոսիայի շապկի տակից նա զգում է կրծքախաչի սառնությունը: Կողերի չորությունը: Իր համար էլ է զարմանալի, որ այդ ամենը նկատում է: Փակ դռների ետեւում տաշեղներ է կտրում Մելետին: Նրա դեմքին արտահայտություն չկա:

Հավատա Տիրոջը եւ Նրա Անարատ Մորը եւ օգնություն հայցիր: Ամբրոսիան չոր շրթունքներով հպվում է նրա ճակատին: Իսկ քո ուռուցքը կփոքրանա: Գնա խաղաղությամբ եւ շատ չտխրես:

Ինչո՞ւ ես լաց լինում, Ամբրոսիե:

Ես լալիս եմ ուրախությունից:

Ամբրոսիան անբարբառ շրջվում է դեպի գայլը: Գայլը լիզում է արցունքները նրա:

-Թ-

Խոհանոցում Ամբրոսիային տրվեց արցունքի շնորհը, եւ, երբ նա մենակ էր լինում, արցունքներն անընդմեջ ողողում էին նրա դեմքը: Արցունքները հոսում էին այտերի կնճիռներով, բայց կնճիռները չէին բավում: Եվ այդ ժամանակ արցունքներն իրենց նոր ճանապարհ էին բացում, եւ Ամբրոսիայի դեմքի վրա հայտնվեցին նոր կնճիռներ:

Սկզբում դրանք վշտի արցունքներ էին: Ամբրոսիան ողբում էր Ուստինային եւ մանկանը, իսկ նրանցից հետո՝ բոլորին, ում կյանքում նա սիրել էր: Ողբում էր նաեւ նրանց, ով սիրում էր իրեն, քանի որ համարում էր, որ իր կյանքն իրեն խնդություն չի նվիրել: Ամբրոսիան ողբում էր նաեւ նրանց, ովքեր իրեն չէին սիրում եւ երբեմն տանջել էին, ինչպես, ի դեպ, նրանց, ով սիրում էր, բայց տանջում էր, քանզի այդպես էր արտահայտվում նրանց սերը: Նա ողբում էր իրեն եւ իր կյանքը եւ չգիտեր այստեղ ճշգրտորեն ինչի մասին է խոսքը: Հույս ունենալով, որ կվերապրի Ուստինայի կյանքը, որպեսզի նա իրեն տրվի իբրեւ իր սեփականը, Ամբրոսիան արդեն չէր հասկանում՝ որտե՞ղ է դեգերում իր կյանքը, երբ ինքը, համենայն դեպս, չի մահացել: Ի վերջո նա դառնորեն ողբում էր նրանց, ում իրեն չհաջողվեց փրկել մահից, չէ՞ որ այդպիսիք շատ էին:

Իսկ հետո դառնության արցունքները փոխվում էին երախտագիտության արցունքների: Նա շնորհակալ էր լինում Բարձրյալին այն բանի համար, որ Ուստինան անհույս չի մնացել, իսկ ինքը՝ Ամբրոսիան, կարող է պաղատել հանուն նրա, քանի ողջ է եւ տքնում է հոգեւորի մեջ՝ ի բարօրություն նրա: Երախտագիտության արցունքներ էր ծնում այն, որ ինքը դեռ ողջ է, եւ ուրեմն՝ ունակ կատարելու բարի գործեր: Ամբրոսիան շնորհակալ եղավ մեծ թվով բժշկվածների համար, իրեն ապրելու հնարավորություն ընձեռելու դեպքում այն ժամանակ, երբ նրանք կարող էին մեռած լինել եւ այլեւս անկարող բարի գործեր կատարել:

Արցունքները ողողում էին ոչ միայն նրա դեմքը, այլեւ նրա հոգին: Առաջին անգամ կյանքում Ամբրոսիան զգաց, որ իր հոգին խաղաղվում է: Ամբրոսիայի աստիճանական խաղաղությունը ծնվում էր ոչ թե համընդհանուր հարգանքից (նրա փառքը մեծ էր, ինչպես երբեք անցյալում), բայց եւ ոչ անտարբերությունից, որը բռնում է բազում արժա-

նավոր մարդկանց ծերության օրերին: Խաղաղեցումը կապված էր հույսի հետ, որը միաբանությունում ապրած յուրաքանչյուր օրվա հետ ավելի ու ավելի էր ամրապնդվում Ամբրոսիայի մեջ: Նա այժմ չէր կասկածում իր ճանապարհի ճշմարտացիությանը, որովհետեւ համոզվում էր, որ ընթանում է միակ հնարավոր ճանապարհով:

Նայելով մոլեգնող կրակին, նա չէր զգում նախկին տագնապը: Ավելի ճիշտ, տագնապը մնացել էր, բայց միտքը գալիք հավերժական կրակի մասին տեղը զիջում էր անցյալի հիշողություններին:

Այժմ նա տեսնում էր ոչ միայն իր մանկությունը: Նա տեսնում էր իր կյանքը Պսկովում եւ իր դեգերումները: Փակելով աչքերը շոգ վառարանի մոտ, Ամբրոսիան պատկերացնում էր Երուսաղեմը:

Գեթսեմանյան այգու ցածրիկ ծառերը: Լայն, չորացած բներով: Ճյուղերի ոլորված մատներով: Ծռված եւ կոտրված, ինչպես քարացած ճիչ: Կամրջակների քարե սալերը, հղկված՝ առ Նա բազմադարյան քայլքով: Արեւային ջերմությունը դրանք պահպանում են ամբողջ գիշեր: Դրանց վրա կարելի է պառկել՝ չվախենալով մրսելուց: Ամբրոսիան հասկանում էր դա, երբ պառկում էր տաք սալերի վրա քնելու: Երբ այլեւս գիշերելու տեղ չկար: Երբ դեռ Արսենի էր:

Նրան խնամելով առողջացրին Երուսաղեմի մոտ, մամլյուկյան սրի հարվածից հետո: Երկու ծերուկ հրեա՝ նա եւ նե: Վախենալով մամլյուկներից, ապրում էին Երուսաղեմից դուրս: Երեխաներ չունեին, դա պարզ էր նրանց դեմքերից: Նրանց անուններն էին Թադեուշ եւ Յադվիգա: Հենց նրանք էլ խնամում էին: Ո՛չ, նրանք խնամում էին մեռնող Վլասին, իսկ մեռնող Արսենիին խնամում էին ուրիշները: Հնարավոր է, Աբրահամը եւ Սառան: Ծերուկներն ինչ-որ մեկին խնամում են: Պատահեց այնպես, որ մեռնող Արսենին ապրեց: Ծերունիները նրան ճանապարհի համար տվեցին վարսակե բլիթներ, ջուր, մի քիչ փող եւ ուղեւորվեցին Երուսաղեմ:

-Ժ-

Ամբրոսիայի մոտ շարունակում էին գալ հիվանդները: Նրանք շատ էին, թեեւ այլ պայմաններում եկողները կարող էին ավելի շատ լինել: Հոսքի կրճատմանը նպաստեցին մի քանի պատճառ: Դրանցից գլխա-

վորը ճգնավոր Իննոկենտին էր, ով արգելում էր անհագստացնել Ամբրոսիային դատարկ տեղը: Ատամներ բուժելը, գորտնուկներ հեռացնելը եւ նման այլ բաներ նա արժանի պատճառ չէր համարում դիմելու համար. քանզի դրանք շեղում էին Արսենիին ուրիշ առավել լուրջ դեպքերից:

Այդպիսի հարցերը, հայտարարեց ճգնավորը, խնդրում եմ լուծել ըստ բնակության վայրի:

Այցելուների առատությունը շեղում էր ոչ միայն Ամբրոսիային: Այն խանգարում էր նաեւ միաբանության եղբայրությանը, որ մեկուսացած էր աշխարհից: Բացի այդ, շատերին անհանգստացնում էր, որ մարդիկ հաճախ ուղեւորվում էին ուղիղ Ամբրոսիայի մոտ՝ չմտածելով աղոթքի, զղջումի եւ փրկության մասին:

Այդ մարդիկ, ասում էր հայր տնտեսը, մոռանում են այն մասին, որ առողջացնում է ոչ թե եղբայր Ամբրոսիան՝ միաբանությունում, այլ մեր Տերը՝ երկնքում:

Օգնության եկածներին առաջինը դիմավորում էր եղբայր Մելետին, որը եւ որոշում էր, ինչպես վարվել յուրաքանչյուր դեպքում: Որոշներին նա իսկույն տուն էր ուղարկում՝ նույնիսկ չլսելով մինչեւ վերջ: Նմաններից էին մեծ թվով մարդիկ՝ կորցրած տղամարդկային ուժը կամ էլ, որ չէին ունեցել երբեւէ: Մելետին դրա վերականգնման անհրաժեշտությունը չէր տեսնում, հայտարարելով, որ ըստ իր անձնական փորձի, շատ ավելի դժվար է հակառակ արդյունքի հասնելը: Բացառություն էին աներեխա ամուսինները: Միայն համապատասխան աղոթքից հետո այդպիսի մարդկանց Մելետին բերում էր Ամբրոսիայի մոտ: Միաբանություն այցելելուց հետո նրանց մտքում սկսում էին շարժվել անկողնային մտադրությունները: Երեխայի ծնվելուց հետո, սակայն, այդ մտադրությունները Մելետիի աղոթքներով անմիջապես անհետանում էին:

Ճգնավոր Իննոկենտիի եւ եղբայր Մելետիի խստությունը չէր միակ պատճառն այն բանի, որ Ամբրոսիայի մոտ եկածների հոսքը չէր ավելանում, այլ նվազում էր: Բելոզյորյան եզերքի շատ բնակիչներ չէին դիմում, քանի որ, հնարավոր աշխարհի վերջը նկատի առնելով, դրանում սուր անհրաժեշտություն չէին տեսնում: Նրանց թվում էր, թե այդ մի կարճ ժամանակին, որ մնացել է մինչեւ ահեղ իրադարձությունը, կարե-

լի է դիմանալ: Վատթարագույն դեպքում՝ պարզապես մեռնել, քանզի մահաժամի տարկետումը շատերին էական չէր թվում:

Բայց եւ այնպես, եղան նաեւ այնպիսիք, ովքեր ոչ միայն չէին ուզում հաշտվել մահվան հետ, այլեւ առանց մտածելու հաղթահարել մահը նույնիսկ համընդհանուր վախճանի դեպքում: Հատկապես նրանց շրջանում էր սկսել տարածվել խոսք ու զրույցը, թե Ամբրոսիայի մոտ է հավերժության էլիքսիրը: Այն մասին, որ այդ կենսահյութը Ամբրոսիան, դեռեւս լինելով Արսենի, իբր բերել է Երուսաղեմից:

Չնայած ասեկոսեի անհեթեթությանը, դրա հայտնվելը միաբանությունում ոչ ոքի չզարմացրեց:

Աշխարհի վախճանի սպասումներում ոմանց նյարդերը չեն դիմանում, ասաց ճգնավոր Իննոկենտին: Եվ այն բանում, որ նրանք Ամբրոսիայից են սպասում անմահության ըմպելիքը, կա իր տրամաբանությունը: Փնտրելով մարմնական անմահություն՝ էլ ո՞ւմ դիմեն նրանք, եթե ոչ բժիշկին:

Նրանցից շատերին եղբայր Մելետին փորձում էր բացատրել, որ ոչ մի կենսահյութ էլ Ամբրոսիան չունի, բայց նրանք չէին հավատում: Վախենալով, որ անհրաժեշտ պահին կենսահյութը բոլորին չի բավի, ոմանք տեղավորվեցին ապրելու միաբանության պատերի տակ եւ իրենց համար կացարանի նման բան կառուցեցին: Միաբանությունն իրենց պատկերանում էր իբրեւ նոր տապան, որտեղ անհրաժեշտության դեպքում իրենց հնարավոր է ընդունեն: Երբ նման մարդկանց թիվն անցավ հարյուրը, Ամբրոսիան գնաց նրանց մոտ: Նա երկար դիտում էր թշվառ կացարանները, իսկ հետո նշան արեց, որ հետեւեն իրեն: Մտնելով միաբանության դարպասների մեջ, Ամբրոսիան նրանց տարավ Սուրբ Տիրամոր Վերափոխման տաճար: Հենց այդ նույն ժամանակ տաճարում ավարտվում էր ժամերգությունը, եւ Արքայական դարպասներից հաղորդության գավաթով դուրս ելավ սրբահայր Իննոկենտին: Վանդակաճաղ լուսամուտից առանձնացել էր առավոտյան արեւի ճառագայթը: Ճառագայթը դեռեւս թույլ էր: Այն դանդաղ թափանցում էր բուրվառի թանձր ծխի միջով: Մեկը մյուսի ետեւից կլանում հազիվ նշմարելի փոշեհատիկները, եւ ներսում արդեն՝ դրանք սկսում էին բրոնզյան լուռ պարը: Երբ ճառագայթն սկսեց խաղալ արծաթե գավաթի վրա, տաճարը լուսավորվեց: Այդ լույսն այնքան պայծառ

էր, որ ներս մտնողները կկոցում էին աչքերը: Ցույց տալով գավաթը՝ Ամբրոսիան ասաց.

Սրա մեջ է անմահության ըմպելիքը, եւ այն բոլորին կբավի:

-ԺԱ-

Եղավ ժամանակ, որ միաբանությունում գրիչների պակաս զգացվեց, եւ վանահայրը Ամբրոսիային խոհանոցից տեղափոխեց գրչագրության խուց: Բացի նրանից այնտեղ նստած էին եւս երեք մարդ: Ձեռագրերն ընդօրինակելու համար բերում էր Իննոկենտի սրբահայրը: Ձեռագիր գրքերի էջերին ամեն տեղ դրված էին նրա լայնատառ отселе и дозде: Այդ ցուցումներին Ամբրոսիան հետեւում էր անշեղորեն:

Ամբրոսիայի աշխատանքը ցանկացած օր սկսվում էր փետուրների ծայրը սրելով եւ թղթի գծանշումից: Արտագրվող ձեռագրի վրա, որպեսզի այն չփակվի, դնում էր փայտե փոքրիկ մի էջանիշ-չորսու: Ձեռագրի էջի վրայով սահում էր թղթի բարակ շերտը, որը հնարավորություն էր տալիս չկորցնել անհրաժեշտ տեղը: Նա շերտը պահում էր ձախ ձեռքով, իսկ աջով՝ գրում: Շերտը շարժվում էր ներքեւ՝ բացելով տող տողի ետեւից:

Եվ եղբայրներից մեկը երկար հիվանդանալուց հետո մահացավ: Եվ նրա բարեկամներից մեկը սրբեց նրան սպունգով եւ գնաց քարայր, ուզենալով տեսնել այն տեղը, որտեղ պիտի դրվեր իր ընկերոջ մարմինը եւ այդ մասին հարցրեց սուրբ Մարկոսին: Երանելին նրան պատասխանեց. գնա ասա եղբորդ, որպեսզի սպասի մինչեւ վաղը, ես կփորեմ նրա գերեզմանը, եւ այդժամ կհեռանա կյանքից խաղաղությամբ: Իսկ եկած եղբայրը նրան ասաց. հայր Մարկոս, ես արդեն նաեւ սպունգով եմ շփել, մաքրել նրա մարմինը, որ մեռած է: Ո՞ւմ ես պատվիրում ինձ ասել: Իսկ Մարկոսը նորից ասաց. տեսնում ես տեղը պատրաստ չէ: Պատվիրում եմ քեզ, գնա ասա մեռյալին. քեզ ասում է մեղսավոր Մարկոսը, եղբայր, այս օրն էլ ապրիր, իսկ վաղը կհեռանաս քո սիրեցյալ մեր Տիրոջ մոտ: Իսկ երբ նախապատրաստեմ տեղը, որտեղ պիտի քեզ դնեն, կուղարկեմ քո ետեւից: Եկած եղբայրը լսեց երեւելիին եւ, գալով միաբանություն, եղբայրներին տեսավ երգեցողության պահին, ըստ

սովորության՝ ի վերա մեռյալի: Եվ կանգնեց մեռյալի կողքին, եւ ասաց. Մարկոսը քեզ ասում է, որ պատրաստ չէ, եղբայրս, քո տեղը, սպասիր մինչեւ վաղը: Եվ բոլորը զարմացան այդ խոսքից: Եվ երբ եղբայրն այդ արտահայտեց բոլորի առջեւ, մեռյալը իսկույն հասկացավ, եւ հոգին վերադարձավ իր մեջ: Եվ մնաց նա այդ օրն ու ողջ գիշերը բաց աչքերով, սակայն ոչինչ ոչ ոքի չասաց:

Ոմն զինվոր մեղքերը խոստովանելուց հետո անառակություն արեց հողագործի կնոջ հետ: Ծնություն անելիս նա մեռավ: Եվ, գթալով, մոտակա միաբանության աբեղաները, նրան հողին հանձնեցին միաբանության վանքում, եւ ժամերգության երրորդ ժամն էր: Երբ ինն երրորդ ժամն է նրանք երգում էին, աղաղակ լսեցին գերեզմանից՝ ողորմացե՛ք ինձ, Աստծո ծառաներ: Փորել-հանելով դագաղը՝ նրա մեջ գտան մի նստած զինվորի: Այն բանից հետո, երբ հանեցին նրան այդտեղից, սկսեցին հարցուփորձ անել կատարվածի մասին: Իսկ նա, խեղդվելով արցունքներից, ոչինչ չէր կարողանում պատմել եւ խնդրեց միայն, որ իրեն տանեն եպիսկոպոս Գելասիայի մոտ: Եվ միայն չորրորդ օրը նա կարողացավ եպիսկոպոսին պատմել կատարվածի մասին: Մեռնելով մեղքերի մեջ, զինվորը տեսնում է ինչ-որ ճիվաղների, ում տեսքն ավելի սարսափելի է ցանկացած տառապանքից, եւ նրանց տեսքից սկսում է իր հոգին դեսուդեն զարնվել: Նա նաեւ տեսնում է երկու սքանչելի պատանիների՝ սպիտակ շուրջառներով, եւ նրա հոգին թռչում է նրանց ձեռքերի մեջ: Եվ բարձրացրին նրա հոգին օդ, եւ տարան տառապանքի բովով, իրենց հետ վերցնելով տապանակը բարի գործերով այդ զինվորի: Եվ ամեն մի չար գործի դիմաց տապանակում կար մի բարի գործ, եւ հանեցին նրան այդտեղից, եւ դրանով ծածկեցին չար գործը: Իսկ վերջին չարչարանքի դիմաց, որը կապված էր անառակի հետ, նրա բարի գործերը հերիք չարին: Եվ դեւերը դուրս բերին բոլոր անառակ ու մարմնական մեղքերը, որ գործել էր նա իր պատանության օրերից ի վեր, հրեշտակներն ասացին. այն ամենը, որ նա կատարել է մինչեւ խոստովանանքը, Աստված նրան ներել է: Այդ խոսքի վրա նրանց պատասխանեցին ահեղ հակառակորդները. դա այդպես է, սակայն խոստովանանքից հետո նա շնացել է հողագործի կնոջ հետ, իսկ հետո՝ անմիջապես մեռել: Այդպիսի բառեր լսելով, հրեշտակները թախծեցին ու հեռացան, քանզի այլեւս նրանք բարի գործեր չունեին,

որոնցով կարող էին ծածկել այդ մեղքը: Եվ այդժամ զմայլվեցին դեւերը, եւ հողը բացվեց, եւ նրան նետեցին մի նեղ ու մութ տեղ: Նա մնաց այնտեղ լալով երրորդ ժամից մինչեւ ինեներորդը, երբ հանկարծակի տեսավ այնտեղ իջնող երկու հրեշտակի: Եվ սկսեց նրանց աղաչել, որպեսզի իրեն հանեն գուբից եւ ազատեն այդ ահավոր փորձանքից: Իսկ նրանք պատասխանեցին. միշտ մեզ ես կանչում, քանզի ոչ ոք այստեղ եղածներից դուրս չի գալիս այստեղից մինչեւ աշխարհի հարությունը: Բայց զինվորը շարունակեց լաց լինել եւ աղաչել նրանց՝ ասելով, որ վերադառնալով երկիր՝ կծառայի հօգուտ ողջերի: Եվ այդ ժամանակ հրեշտակներից մեկը հարցրեց իր ընկերոջը. արդյո՞ք կերաշխավորես այս մարդու համար: Եվ պատասխանեց նրան երկրորդ հրեշտակը՝ երաշխավորում եմ: Այդժամ զինվորի հոգին տարան դագաղի մոտ եւ պատվիրեցին նրան մտնել մարմնի մեջ: Եվ հոգին պսպղաց ինչպես հուլունք, իսկ մեռյալ մարմինը սեւ էր, ինչպես տիղմը եւ գարշահոտ: Եվ ճչաց զինվորի հոգին, որ չի ուզում մտնել մարմնի մեջ նրա խավարման պատճառով: Իսկ հրեշտակներն ասացին զինվորին. դու չես կարող զղջալ այլ կերպ, քան մարմնով, որով մեղանչել ես: Եվ հոգին մտավ մարմնի մեջ շուրթերի միջով եւ հարություն տվեց նրան: Լսելով պատմածը, եպիսկոպոս Գելասիան պատվիրեց ուտելու բան տալ զինվորին: Իսկ նա, համբուրելով սնունդը, հրաժարվեց այն ուտել: Եվ ապրեց քառասուն օր պահքի մեջ, եւ արթուն մնալով պատմեց տեսածի մասին, եւ դիմեց զղջման, եւ իմացավ իր մահվան մասին երեք օր առաջ: Այդ մասին հաղորդել են վստահության արժանի հայրերը մեր հոգեւոր օգուտի համար:

Թեոֆիլ արքան պատկերամարտիկ էր, եւ դրանից թագուհի Թեոդորան մեծ վշտի մեջ էր հայտնվել: Պատահեց այնպես, որ Աստծու ցասումով Թեոֆիլը հիվանդացավ դաժան հիվանդությամբ: Նրա ծնոտները հեռացան այնպես, որ շրթունքները չէին փակվում, որից նրա տեսքն անհեթեթ էր դարձել եւ սարսափելի: Իսկ թագուհին, վերցնելով Կույս Աստվածածնի սրբապատկերը, դրեց նրա շուրթերին, եւ դրանք նորից միացան: Եվ սակավ ժամանակ անց կյանքից հեռանում է այդ Թեոֆիլը եւ մեռնում այդ հիվանդությունից: Իսկ թագուհին հույժ վշտանում է, քանզի գիտեր, որ իր ամուսինը տանջանքների է տարվելու հերետիկոսների հետ, եւ անընդմեջ մտածում էր այն մասին, թե ինչպես

նրան փրկի: Տարագրության մեջ կամ զնդաններում եղողներին նա ազատում էր եւ աղաչում հայրապետին, որպեսզի բոլոր եպիսկոպոսները, քահանայական եւ աբեղայական դասը աղոթեն Թեոֆիլ արքայի համար, որպեսզի Աստված նրան ազատի տանջանքներից: Իսկ հայրապետը սկզբում չէր տրվում, բայց, հուզված թագուհու պաղատանքներից, ասաց. եղիցի կամքն Աստուծո: Նա պատվիրեց, որպեսզի բոլոր եպիսկոպոսները, քահանյական եւ աբեղայական դասը աղոթեն Թեոֆիլ արքայի համար: Իսկ ինքը՝ հայրապետը, գրեց բոլոր արքա հերետիկոսների անուններն ու դրեց գրությունը Սուրբ Սոֆիայի տաճարի սեղանին: Եվ աղոթում էին նրանք Թեոֆիլի համար Մեծ պահքի առաջին շաբաթը: Իսկ երբ ուրբաթ հայրապետն եկավ վերցնելու իր գրությունը, ապա գրության մեջ բոլոր անունները հասան ուզած իր նպատակին, իսկ Թեոֆիլի անունն Աստծո դատաստանով քավվեց, եւ բարբառեց նրան հրեշտակը՝ լսվեց աղոթքը քո, ով եպիսկոպոս, եւ ներում ստացավ Թեոֆիլ արքան, այդ մասին ավելորդ տեղը էլ մի ասեք Աստվածությանը: Ցնծացեք, եղբայրներ, մեր Տեր Աստծո մարդասիրությունը հասկանալով, որ զորավոր են աղոթքները նրա սրբազանների: Հրճվենք նաեւ առ Աստված երանելի թագուհի Թեոդորայի սիրով ու հավատով. այդպիսի կանանց մասին է ասված, որպես թե մահով իրենց այրերին են փրկում: Բայց նաեւ հիշենք, որ հոգին մի է, մի է եւ կյանքի ժամանակը, էլ ինչու մի ուրիշ տեղից փրկություն ակնկալենք:

Ամբրոսիայի ձեռագրերը ներկայումս պահպանվում են Ռուսաստանի ազգային գրադարանի (Ս.-Պետերբուրգ) Կիրիլ-Բելոզյորյան հավաքածուում: Դրանք ուսումնասիրող հետազոտողները միահամուռ նշում են, որ գրիչի ձեռքը պինդ է եղել եւ ձեռագիրը՝ բոլորակ: Դա, իրենց կարծիքով, վկայում է Ամբրոսիայի նվաճած ոգու ամրության եւ ներքին հարմոնիայի մասին: *Երь* տառի բարձր կայմը ցուցանում է այն, որ այդ ժամանակ նա խոհանոցը թողել է վերջնականապես եւ մարմնական սննդի հարցերով հետաքրքրվել սակավ:

-ԺԲ-

Խոստովանության ժամանակ Ամբրոսիան ասաց սրբահայր Իննոկենտիին՝ ժամերգության ընթացքում ես միշտ չէ, որ ուշադիր եմ եւ մերթ ընդ մերթ խորհում եմ կողմնակի բաների մասին: Երեկ, օրինակ, հիշեցի անմոռանալի Ամբրոջոյի տեսիլներից մեկը:

Ինչի՞ մասին է այն, եթե ասենք համառոտակի, հարցրեց ճգնավորը:

Ահա թե ինչ պատմեց ճգնավորին Ամբրոսիան:

30 օգոստոսի 1907 թվական, գյուղ Սանյանո: Տասներկու տարեկան կույս Ֆրանչեսկա Ֆլեկկիան, որի արմատները գալիս են Ալբերտո Ֆլեկկիայից՝ Ամբրոջոյի եղբորից, արթնանում է վախի խառը զգացողությունից: Վախը բարձրանում է որովայնի ինչ-որ տեղից: Նա խլթխլթոց է զգում փորում, վեր է թռչում անկողնուց ու վազում տան բակի արտաքնոց: Այնտեղ նա թեթեւանում է: Ֆրանչեսկան անհնարին բացում է արտաքնոցի դուռն ու հետեւում բակում կատարվածին: Նրա տատիկը կանգնած է առավոտվա դողացող շողերի մեջ: Այն թափանցում է պինիայի ճյուղերի միջով,- այդ նրանք են ճառագայթը թրթռացնում: Տատիկը գունատ է ու կնճռոտ: Տատիկը մտքերի մեջ է: Ֆրանչեսկան տխրությամբ է նշում, որ նրան այդպիսին դեռ երբեք չի տեսել: Հնարավոր է, դա նույնպես պինիայի ազդեցությունն է: Իսկ գուցեեւ, տատիկը, չիմանալով, որ իրեն հետեւում են, պարզապես թուլացել է: Ֆրանչեսկան արդեն ինչ-որ ժամանակ տեսել է, թե ինչպես է մարդը ջահել երեւացել մարդկանց մեջ, իսկ հետո անցել է պատի անկյան ետեւն ու իսկույն ծերացել: Ինչ-որ իրեր կախված են կամային ճիգից, իսկ կամքը մշտապես լարել հնարավոր չէ: Ֆրանչեսկան տեսնում է, որ տատիկն իսկականից ծերացել է: Նա հասկանում է, թե ուր է տանում ծերությունը իր տատիկին: Աղջկա ստամոքսը նորից բռնում է սպազմը, իսկ նրա աչքերից արցունքներ են հոսում: Տատիկը փակվում է ամառային խոհանոցում: Բակ է դուրս գալիս Ֆրանչեսկայի քույր Մարագարիտան: Մարգարիտան տեսնում է, որ արտաքնոցը զբաղված է եւ ետ է դառնում տուն: Հայտնվում է Ֆրանչեսկայի մայրը: Նրա ձեռքերում հարսանեկան զգեստն է Մարգարիտայի, որն այսօր մարդու է գնում: Մայրը զգեստի վրայից փչում է անտեսանելի փոշեհատիկները

եւ նորից մտնում տուն: Փողոցից մտնում է հայրը: Պարզած ձեռքերում նա ներս է բերում սպիտակ վարդերի հսկայական մի փունջ: Վարդերը ջրով լի դույլի մեջ են, դրանք փաթաթված են թանզիվով: Թանզիվի ետեւից ամենեւին չի երեւում հայրական դեմքը: Տնից դուրս է գալիս Մարգարիտան եւ խնդրում Ֆրանչեսկային շտապել: Բերանը ջուր առնելով բաժակից, հայրը աղմուկով շաղ է տալիս ծաղիկների վրա: Ֆրանչեսկան հիշում է, որ այսօր երազում կտրված գլուխ է տեսել:

Հենց նոր լրացել է Մարգարիտայի տասնութ տարին: Նա ամուսնանում է Լեոնարդո Անտոնինոյի հետ: Ֆրանչեսկան արդեն քանի ամիս է սիրում է Լեոնարդոյին: Նա ճկուն է, ինչպես հովազը, եւ նրա անունը միշտ հիշեցնում է Ֆրանչեսկային նրա ճկունության մասին: Այն մասին, թե ինչ նուրբ է նա, նախեւառաջ՝ հոգով ու մտքով: Երբեմն որսում է Լեոնարդոյի տխուր հայացքները, եւ իրեն թվում է, թե նա սիրահետում է Մարգարիտային միայն աչքերը փախցնելու համար: Միայն այն բանի համար, որպեսզի գտնվի Ֆրանչեսկայի կողքին: Եվ եթե այդպես է, ապա անհասկանալի է, իսկ ինչո՞ւ է նա պսակվում Մարգարիտայի հետ: Ֆրանչեսկան նորից է արտասվում:

Մարգարիտան կարծում է, որ Ֆրանչեսկան դիտմամբ է նստել արտաքնոցում այդքան երկար, որպեսզի իրեն ներս չթողնի: Նա բողոքում է մորը: Ֆրանչեսկան անորոշ հույս է տածում, որ Մարգարիտան կպսակվի իրեն կարգի բերած: Մայրը դուրս է քաշում Ֆրանչեսկային արտաքնոցից: Նա այդ բանն անում է բարեսրտորեն, որովհետեւ գիտի, որ վաղը Ֆրանչեսկային ճանապարհ է սպասվում: Մայրն ուզում է նրան գոնե մի փոքր ջերմություն տալ իբրեւ պաշար: Ֆրանչեսկային ընդունել են օրիորդաց կաթոլիկ գիշերօթիկ, եւ նա մեկնում է Ֆլորենցիա: Որպեսզի կյանքում ինչ որ բանի հասնի, բավարար չէ Մանյանոյի ծխական դպրոցը: Ֆրանչեսկայի համար սարսափելի է:

Հարսանիքը ծանրումեծ իջնում է սարից: Մանյանայից այն գնում է հովիտ, ուր միայնակ կանգնած է Սուրբ Սեկունդոսի եկեղեցին: Դա գեղեցիկ ռոմանական եկեղեցի է 12-րդ դարի: Աշտական արարողություններ այնտեղ չեն լինում, սակայն դռները բացում են Մանյանոյի բնակիչների պսակադրության պատվին: Առջեւից, հյուսված ծաղկեշղթաներով, գնում են կառքերը՝ փեսայի, հարսի, նրանց ծնողների եւ վկաների: Գնում են դանդաղ, շատ դանդաղ: Նրանց շրջապատում են շատ

հյուրեր: Ճանապարը լայն է եւ թույլ է տալիս գնալ կառքի կողքով: Թափորը շարժվում է լուսանկարչի վրա, որը թաքնվում է եռոտանու սեւ ծածկոցի տակ:

Լայնեզր ցիլինդրներով կառապանները կտրուկ վայրէջքի վրա զսպում են ձիերին: Բարձրացած քամին ծածանում է հարսնաքողը, եւ այն լողում է թափորի վրա իբրեւ ուրվականային սպիտակ դրոշ: Ճանապարհի ծառերը պոկվում են ու աղմկում: Թափորի վրա նրացից թափվում են հասած շագանակներ: Ընկած շագանակների վրայով խրթխրթոցով անցնում են կառքի անիվները:

Սուրբ Սեկունդայի եկեղեցում ցուրտ է: Դարերի ցուրտն է, որից ներկաները մի քիչ երկյուղում են: Ամենաանպաշտպանն, անշուշտ, հարսնացուն է: Նայվում է իբրեւ թիթեռ՝ թռած մռայլ դամբարան: Պադրեն ժպտում է: Ֆրանչեսկայի ետեւում կանգնած է հաստլիկ Սիլվիոն: Նա շնչում է աղջկա թիկունքին: Ծնչում եւ ֆսֆսում է: Աղջիկը թիկունքով զգում է նրա շնչառության ջերմությունը, եւ դա հաճելի է: Եթե այն նույնիսկ դուրս է գալիս այդպիսի հաստլիկի պնչերից, դա՝ կյանքի շնչառությունն է: Տաճարի հնության հետ համեմատ ներկաների ամբոխը Ֆրանչեսկային թվում է թյուրիմացություն: Ուրվականների հավաք, որոնք ակնթարթ անց կտարրալուծվեն եւ կթողնեն տաճարը (որքա՞ն է նա այդպիսիներին տեսել) եւ կթողնեն տաճարը հավերժության հետ մենակ: Ֆրանչեսկան փորձում է բոլորին պատկերացնել կմախքի տեսքով: Կմախքներով լիքը եկեղեցի, նրանցից մեկը հարսնաքողով է:

Դուրս ելնելով՝ բոլորը կկոցում են աչքերը: Ցահելների վրա շաղ են տալիս մանրադրամներ ու ցորեն: Հարսանիքը վերադառնում է Մանյանո: Հակառակ ճանապարհին Ֆրանչեսկան հասցնում է պատմել իր երազը: Այն մասին, թե ինչպես է գլխատված պարանոցի վրա պղպջակ տալիս արյունը: Ինչպես է հրումով դուրս գալիս թրատված աորտայից:

Ես կարծում եմ, որ տվյալ դեպքում խոսքը Ամբրոջո Ֆլեկկիայի մասին է, ասում է պադրեն: Զարմանալի չէ, որ նա հենց քո երազում է եկել, որքանով դուք, համենայն դեպս, ազգական եք: Եթե քեզ նրա մասին նորից ինչ-որ բան երազում կգա, բարի եղիր գրի առնել: Ըստ էության, Ամբրոջո Ֆլեկկիայի մասին մեզանում մինչեւ օրս շատ քիչ փաստական նյութ կա:

Գյուղական հրապարակում դրված են հյուրասիրության սեղաննե-

ը: Սեղանների երկարությամբ՝ տախտակներ աթոռակների վրա: Տախտակների վրա՝ ծածկոց: Առատ հացկերույթից առաջ բոլորը բարձր տրամադրություն ունեն: Բոլորն ուրախանում են ջահելների համար: Լուիջի պապը ծխախոտ է փաթաթում, այն վերցնում է երկու մատով ու ներս է քաշում: Քարացած կոշտուկները չեն թողնում մատները ծալվել: Նրա դեմքը նման է պեմզայի: Նա ասում է, որ այդպիսի շքեղ հարսանիք դեռ երբեք չի տեսել: Նրա բառերը դուրս են գալիս ծխի հետ եւ թվում են վաղնջական շնչով համակված:

Երեկոյան սեղանների վրա շարում են մոմեր: Դրանց ստվերները պարում են օքրայե շենքերի ճակատներին: Մի քանի սեղանների շուրջ մոմերը փչում են: Ծուխը դեռ երկար լողում է կանգնած օդում: Ճարուկակ սեղանների մոտից ելնում են զույգերն ու կորչում մթության մեջ: Իրականում նրանք հեռու չեն գնում, կանգնած են, հենված՝ տների ջերմ պատերին: Երբեմն վերադառնում են, որպեսզի մի գավաթ գինի խմեն:

Ֆրանչեսկան ելնում է սեղանի մոտից: Նա գիտի, որ արդեն չի պատկանում այս աշխարհին եւ իրեն զգում է դժբախտ: Եվ չգիտի՝ ո՞ր աշխարհին է պատկանում: Նրանք տոնում են, իսկ ինքն այստեղ չի: Նրանք քեֆ են անում, իսկ ինքը չկարողացավ մի պատառ իսկ կուլ տալ: Ֆրանչեսկան կանգնում է պատախորշի մեջ, եւ ահա ոչ ոք իրեն չի տեսնում արդեն: Նրան կլանում է խավարը: Դա հանգստացումն է:

Ինչ-որ մեկը ձեռքով շոյում է նրա դեմքը: Ինչ-որ մեկի մատը շարժվում է նրա ճակատից՝ քթին, քթից՝ դնչիկին: Ֆրանչեսկան անշարժ է: Ինչ-որ մեկը շոյում է նրա մազերը: Նա թիկունքով զգում է դռան բռնակի սառնությունն ու ձեռքով գտնում է այն: Բռնվում է ամբողջ ուժով: Շրթունքներին դիպչում են նրա շրթունքները: Դուրս գալով խորշի խավարից՝ նա շրջվում է: Լեոնարդոն է:

Հաջորդ առավոտ Ֆրանչեսկան մեկնում է Ֆլորենցիայից եւ այդ օրվանից Սանյանոյում չի եղել ոչ մի անգամ: Ավարտելով օրիորդաց կաթոլիկական դպրոցը, քսան տարի անց նա ամուսնանում է լեյտենանտ Մասսիմո Տոտտի հետ: Նրանք տեղափոխվում են Հռոմ: 1915 թվին լեյտենանտ Տոտտին մեկնում է ճակատ, եւ նրան սպանում են առաջին իսկ մարտում: Լեյտենանտից, այդ ժամանակ արդեն հանգուցյալ, Ֆրանչեսկան ծնեց Մարչելլո որդուն: Դաստիարակելով որ-

դուն, Ֆրանչեսկան սովորում է համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում եւ աշխատում կոշիկի խանութում: Երբեմն նա ուզում է ամեն ինչ մի կողմ գցել ու մեկնել Մանյանո: Ավարտելով համալսարանը, նա ֆիզիկայի ուսուցչի դիպլոմ է ստանում: Ֆրանչեսկան դժվարությամբ իր համար կես հաստիք է ճարում Նեապոլի ռեալական ուսումնարաններից մեկում: Փողն աղետալիորեն չի հերիքում: Որպեսզի ինչ-որ ձեւով կարողանա մնալ հոսանքի վրա, Ֆրանչեսկան վերադառնում է Հռոմ եւ գնում աշխատելու դիահերձարանում: Դիահերձարանում վատ չէին վճարում: Իր հերթապահության հազվադեպ ազատ րոպեներին, նա Ջոյս էր կարդում: Երբեմն գրի առնում Ամբրոջոյի մասին իր երազները: Վերջիվերջո նա հրատարակում է դրանք Ամբրոջո Ֆլեկկիան եւ իր ժամանակը ընդհանուր վերնագրով: Գրառած երազների նյութի հիման վրա Ֆրանչեսկան այլ բաների հետ միասին գրքում զարգացնում է Էյնշտեյնի տեսությունը ժամանակի հարաբերականության մասին: Ի տարբերություն հանճարեղ ֆիզիկոսի աշխատությունների, գիրքը գրված է պարզ, հասանելի լեզվով եւ կատաղի հաջողություն ունեցավ: Ֆրանչեսկան դարձավ հարուստ եւ նշանավոր: Նա թողեց դիահերձարանը: Առանձնատուն գնելով արեւելյան ծովափին, այնտեղ ապրեց քսանութ տարի, մինչեւ իր մահը: Վերջին հարցազրույցներից մեկում Ֆրանչեսկային հարցրին՝ իր կյանքից ո՞ր օրն է հիշվում մնացածներից ավելի շատ: Ստածելով, Ֆրանչեսկան պատասխանեց.

Երեւի դա իմ քույր Սարգարիտայի հարսանիքի օրն է եղել:

-ԺԳ-

Օրերից մի օր միաբանություն եկան մոսկովյան բոյարին Ֆրոլի կողմից ուղարկված մարդիկ: Իր կին Ագաֆյայի հետ բոյարին Ֆրոլն ամուսնացած էր արդեն տասնհինգ տարի, բայց երեխա չունեին: Թեեւ այցելում էին բազմաթիվ վանքեր, եւ հրավիրում ամենահմուտ բժիշկներին, բոյարուհու արգանդը չէր բացվում: Քիչ-քիչ նրանց հույսը սկսեց մարել, իսկ աշխարհի Արարչագործությունից յոթ հազար թվականին մոտենալու հետ մարեց նաեւ նրանց երեխա ունենալու ցանկությունը, քանզի նրա կյանքն աշխարհի հնարավոր կործանման առումով ենթադրվում էր կարճ եւ անուրախ: Ահա թե ինչու, երբ բոյարին

Ֆրոլին հասավ Կիրիլյան միաբանության զարմանահրաշ բժշկողի մասին լուրը, նա չուրախացավ:

Ինչո՞ւ ծնել մահվան համար, ասաց Բոյարին Ֆրոլը տանու մարդկանց:

Չէ՞ որ բոլորն են ծնվում մահվան համար, առարկեցին մարդիկ, այլոց մենք առայժմ չենք տեսել:

Ձեզ հաղորդեմ, որ Ենոքն ու Եղիան ողջ-ողջ դարձան երկնքի բաժին, պատասխանեց բոյարինը, բայց դուք նրանց իրոք չեք տեսել:

Գիտես, պետք չէ կյանքը կանգնեցնել, քան դեռ այն կանգնեցված չէ Բարձրյալի կողմից, խորհուրդ տվեցին տանու մարդիկ:

Բոյար Ֆրոլը մտածեց եւ համաձայնեց: Նա ասաց.

Գնացեք Կիրիլյան միաբանություն եւ խնդրեք աբեղա Ամբրոսիային՝ թող աղոթի մանկածնության պտուղ ինձ պարգեւելու համար:

Բոյար Ֆրոլի դեսպանորդները ճամփա ընկան եւ գնացին քսան օր: Իսկ երբ քսանմեկերորդ օրվա առավոտյան նրանք մտան միաբանության դարպասներից ներս, նրանց դիմավորեց Ամբրոսիան: Ոչինչ չհարցնելով երկվորներին, նա ասաց.

Հավատում եմ, որ ձեր ճանապարհը զուր չէ, եւ մեր Տիրակալ Տիրամոր աղոթքներով Տերը բոյար Ֆրոլին ու նրա բոյարուհուն կտա մանկածնության պտուղը:

Այդ խոսքերի հետ Ամբրոսիան նրանց մեկնեց երկու նշխարք՝ բոյարի եւ բոյարուհու համար: Համբուրելով տվողի ձեռքը՝ եկվորները գնացին արարողակարգի: Կես օր կանգնեցին ծնկաչոք, իսկ հաջորդ կես օրն ու գիշերը հանգստացան ճանապարհից: Լույսը բացվելու հետ բոյարին Ֆրոլի մարդիկ ուղեւորվեցին եկած ճանապարհով, եւ այն ձգվեց կրկնակի քիչ, որովհետեւ նշխարքների հոտը հագեցնում էր նրանց քաղցը, իսկ տեսքը՝ հանում էր հոգնությունը: Իսկ երբ նրանք վերադարձան Մոսկվա, բոյարի առաջին գործը եղավ հարցնել նշխարքների մասին: Նրանք հանձնեցին նշխարքները, եւ երկու տարվա ընթացքում նա ունեցավ երկու երեխա՝ սկզբում՝ տղա, հետո՝ աղջիկ:

Որտեղի՞ց գիտեիր նշխարքների մասին, հարցրին բոյար Ֆրոլին տանու մարդիկ:

Եվ բոյարը պատմեց, որ այն գիշեր, երբ ուղարկվածները հանգստանում էին միաբանությունում հեռավոր ճանապարհից հետո, նրան

եւ բոյարուհուն երազ եկավ լուսազարդ մի ծերունի՝ երկու նշխարքով: Ալեւորը խոսում էր չբացելով շուրթերը, բայց նրա խոսքը հասկանալի էր.

Կսփոփվեք տղայով եւ աղջկանով: Իսկ մենք այստեղ աղոթելու ենք նրա համար, որպեսզի մինչեւ այս տարվա Զատիկը ոչինչ չպատահի: Քանզի միայն Զատիկի օրը կարելի է հույս ունենալ, որ աշխարհը ոտքի կկանգնի:

-ԺԴ-

Յոթհազարերորդ տարվա Զատիկի մեծասքանչ օրը ղողանջեցին Կիրիլյան միաբանության բոլոր զանգերը: Այդ ղողանջը տարածվում էր Բելոզյորյան հողի վրա, ավետելով, որ Տերը մարդկանց ցույց է տվել իր անսահման ողորմածությունն ու ժամանակ տվել նրանց զղջալու: Որոշված էր վերսկսել զատկականի կազմը, չէ որ մինչեւ այդ օրը ոչ ոք չգիտեր, թե կգա յոթհազարերորդ տարվա Զատիկը:

Ճատերի աչքերից հոսում էին երախտագիտության արցունքներ: Սիրեցյալները սփոփվում էին, որովհետեւ նրանց բաժանումը հետաձգվում էր, գործերը չավարտածները հանգստանում էին, քանի որ ժամանակ էին ստացել ավարտելու, եւ միայն վախճանը փափագողները չէին ուրախանում, քանի որ իրենց սպասումներում խաբվել էին:

Յոթհազարերորդ տարվա Զատիկի օրը Ամբրոսիան ասաց սրբահայր Իննոկենտիին.

Մենություն եմ փնտրում, սրբահայր:

Գիտեմ, պատասխանեց ճգնավոր Իննոկենտին: Կա ժամանակը շփվելու, հարաբերվելու, եւ կա ժամանակը մենանալու:

Ես երկար եմ ճանաչել աշխարհը եւ իմ մեջ այնքան եմ կուտակել, որ հետայսու կարող եմ ճանաչել իմ մեջ:

Այժմ, երբ աշխարհի վախճանի առումով մենք փոքրիշատե հանգիստ ենք, հասել է ժամանակը մենանալու: Պատրաստվիր, Ամբրոսիե, այս ամռանը սքեմը ընդունելու:

Ամբրոսիայի համար նախապատրաստվելը հիվանդներին բուժելը դարձավ: Երբ վերջնականորեն պարզորոշվեց, որ կյանքը տեսանելի ապագայում կշարունակվի, հիվանդների հոսքն աճեց տասնապատիկ:

Նրանք, ովքեր հիվանդացել էին վերջերս, այդ հոսքում միացան նրանց, ովքեր վերջին տարիներին նախընտրում էին համբերել, սակայն նկատի առնելով բացվող բարենպաստ հեռանկարը, փոխեցին իրենց որոշումը: Այցելուների այդպիսի քանակը շփոթեցրեց միաբանությանը եւ խանգարում էր նրանց կենտրոնանալ աղոթքի վրա: Նրանցից ոմանք այդ մասին գանգատվեցին վանահորը:

Իսկ ինչ՞ է, առաջ դուք կարողանո՞ւմ էիք կենտրոնանալ աղոթքի վրա, վանահայրը հարցրեց գանգատվողներին:

Չէինք կարողանում, պատասխանեցին գանգատվողները, եւ վանահայրը շնորհակալություն հայտնեց անկեղծության համար:

Բայց Ամբրոսիան նաեւ ինքն էր կասկածների մեջ ընկել տեղի ունեցածի արդարացիության հարցում: Երբեմն հիշում էր հայր-տնտեսի բառերը, թե նրա մոտ եկողներից շատերը մտածում էին միայն առողջության մասին՝ չխորհելով աղոթքի եւ զղջման մասին: Այդ խոսքերը Ամբրոսիայի մեջ կասկածանքի սերմեր էին ցանում: Նա անհանգստություն էր զգում, սակայն սրբահայր Իննոկենտին այլեւս նրա կողքին չէր: Այդ ժամանակ սրբահայր Իննոկենտին անցել էր թողության խուց, որ մեկ օրվա ճամփա էր միաբանությունից: Իմանալով, որ ճգնավորը խորշում է տարածությունից,Ամբրոսիան նրան ասաց միաբանությունից.

Վախենամ, թե իմ բժշկումները նրանց համար դառնան սովորական գործ: Դրանք այդ մարդկանց հոգիները չեն մղում շարժման, որովհետեւ բուժումները նրանք ստանում են մեքենաբար:

Դու ի՞նչ գիտես ավտոմատիզմի մասին, Ամբրոսիե, թողության խուցից պատասխանեց ճգնավոր Իննոկենտին:

Եթե քեզ շնորհ է տրված բժշկելու, օգտվիր դրանից, էլ ինչո՞ւ է այն քեզ տրված: Նրանց ավտոմատիզմն արագ կանցնի, երբ դու իրենց հետ չես լինի: Իսկ բժշկելու հրաշքը, հավատա, նրանք կհիշեն հավետ:

Աշխարհի Արարչագործումից յոթհազարերորդ թվականի օգոստոսի 18-ին Սուրբ Աստվածածնի Վերափոխման տաճարում Ամբրոսիան ընդունեց սքեմը: Բայց այս անգամ ամեն բան ավելի հանդիսավոր էր եւ խիստ:

Արսենին տաճար մտավ, ինչպես եւ հարկն էր, պատարագի փոքր մուտքի ժամանակ: Ներս մտնելով, գլխի վրայից հանեց ծածկոցը, իսկ ոտքերից՝ սանդալները: Աչքերն ընտելացան տաճարի կիսախավարին, իսկ ներկաների մութ զանգվածը դեմք առավ: Երգչախմբում մի մարդ էր կանգնած՝ Քրիստափորի նման: Գուցեեւ հենց Քրիստափորն էր:

Ստեղծիչ բոլորի եւ Բժիշկ տկարների, մե՛ր Տեր, ամենից առաջ նույնիսկ մինչ վերջը չեմ զոհվի, փրկիր ինձ,- շշնջաց Ամբրոսիան՝ երգչախմբին հետեւելով:

Բաց դռներից փչում էր ամռանավերջի քամին: Բոցերն այդ պիտի թրթռային մոմերի վրա, բայց հետո անշարժացան՝ ձգվելով ընդհանուր ուղղությամբ: Մանկութ տարիներին, երբ նա կանգնած էր եկեղեցում Քրիստափորի հետ, բոցերն իրենց ճիշտ այդպես էին պահում: Եվ դա միակ բանն էր, որ Ամբրոսիային կապում էր այն ժամանակի հետ, որովհետեւ նա ինքը վաղուց ուրիշ էր դարձել, իսկ Քրիստափորը պառկած էր գերեզմանում: Ծայրահեղ դեպքում՝ այնտեղ էր դրված: Ամբրոսիան մտածեց, որ ճշգրտորեն արդեն չի հիշի, թե ինչպիսի տեսք ուներ Քրիստափորը: Որտեղի՞ց այստեղ լիներ Քրիստափորը: Ո՛չ, դա Քրիստափորը չէր:

Աշխարհաթո՞ղ ես լինում, թե՞ մնում ես, ինչպես Տերը պատվիրեց, հարցրեց Ամբրոսիային վանահայրը:

Աշխարհաթող եմ լինում, պատասխանեց Ամբրոսիան:

Նա լսեց, թե իր ետեւից ինչպես փակեցին դուռը, եւ մոմերի բոցը հավասարվեց: Այժմ բոցի մեջ ոչ մի տագնապ չկար: Այդպիսին պետք է դառնա նաեւ հոգին, մտածեց Ամբրոսիան: Անկիրք, անխռով: Իսկ իմ հոգին դեռ չի հանգստանում, որովհետեւ ցավում է Ուստինայի համար:

Վանահայրն ասաց.

Վերցրու մկրատներն ու դրանք տուր ինձ:

Եվ Ամբրոսիան տվեց նրան մկրատներն ու համբուրեց ձեռքը: Իսկ վանահայրը բացեց իր ձեռքը, եւ մկրատներն ընկան գետնին:

Եվ Ամբրոսիան բարձրացրեց մկրատներն ու դրանք հանձնեց վա-

նահորը, եւ վանահայրը նորից գցեց դրանք:

Այդ ժամանակ Ամբրոսիան նորից տվեց մկրատները, եւ վանահայրը դրանք գցեց երրորդ անգամ:

Իսկ երբ Ամբրոսիան մկրատները բարձրացրեց նաեւ այդ անգամ, բոլոր ներկաները վստահ եղան, որ Ամբրոսիան խուզվում է ինքնակամ:

Վանահայրն անցավ խուզելուն: Նա Ամբրոսիայի գլխից խաչածեւ խուզեց երկու հյուսքը, որպեսզի մազերի հետ միասին գետնին թողնի իմաստակությունը: Նայելով հատակի վրայի սպիտակ հյուսքերին՝ Ամբրոսիան լսեց իր նոր անունը:

Մեր եղբայր Լավրը խուզում է իր գլխի մազերը հանուն Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու: Նրա մասին ասենք. Տե՛ր, թողություն տուր:

Տե՛ր, թողություն տուր, պատասխանեց միաբանությունը:

-ԺԶ-

Օգոստոսի 18-ին, երբ Ամբրոսիան ընդունեց մեծ սքեմը, օրն էր սուրբ նահատակներ Ֆրոլի եւ Լավրի: Այդ օրվանից Ամբրոսիան դարձավ Լավր:

Ճգնավոր Իննոկենտին ասաց հրաժարիմքի խուցից.

Լավ անուն է Լավրը, քանզի բույս է՝ քեզ այսուհետ տրված անվանակոչման, այն բալասանող է: Լինելով մշտադալար, խորհրդանշում է հավերժական կյանքը:

Ես այլեւս իմ կյանքի հետ ընդհանրություն չեմ զգում, ասաց Լավրը: Ես եղա Արսենի, Ուստին, Ամբրոսիա, իսկ այժմ ահա՝ դարձա Լավր: Իմ կյանքն ապրվել է իրարից տարբեր չորս մարդկանց կողմից, տարբեր մարմին ու անուն ունեցող: Ի՞նչ ընդհանուր բան կա իմ եւ Ռուկինյան գյուղարվարձանի այն շիկահեր տղայի միջեւ: Հիշողությո՞ւնը: Բայց որքան երկար եմ ապրում, իմ հիշողություններն այնքան շատ են ինձ հորինվածք թվում: Ես դադարում եմ հավատալ, եւ դրանից էլ՝ նրանց ուժը չի պատում կապել ինձ իրենց հետ, ով տարբեր ժամանակներում ես եմ եղել: Կյանքը հիշեցնում է խճանկար, եւ այն ցրիվ է գալիս մասերի:

Խճանկար լինել՝ դեռ չի նշանակում մասերի բաժանվել, պատասխանեց սրբահայր Իննոկենտին: Դա լոկ մոտիկից է թվում, որ ամեն մի առանձին քարհատիկ մյուսների հետ կապ չունի: Դրանցից յուրաքանչյուրում, Լավր, կա ինչ-որ առավել կարեւոր բան՝ ձգտումն առ այն,

ով նայում է հեռվից: Նրան, ով ունակ է ընդգրկել բոլոր քարերը միանգամից: Հենց նա՛ է ժողովում դրանք իր հայացքով: Այդպես է, Լավր, նաեւ քո կյանքում: Դու քեզ տարրալուծել ես Աստծո մեջ: Դու խաթարել ես քո կյանքի միասնությունը, հրաժարվել քո անունից եւ քո անձից: Սակայն քո կյանքի խճանկարում կա այն, որը միավորում է մնացյալ բոլոր մասերը,- դա ձգտումն է առ Նա: Դրանք նորից կհավաքվեն Նրա մեջ:

-ԺԷ-

Երեք շաբաթ անց սքեմն ընդունելուց հետո Լավրը թողեց վանքն ու ուղեւորվեց իրեն ճգնախուց փնտրելու: Դա հենց իր՝ Լավրի ներքին ձգտումն էր, բայց վանահոր եւ միաբանության կողմից առարկություն չեղավ:

Որքան էլ տարօրինակ է, Լավրի հեռանալուց հետո նրանք որոշակի թեթեւություն զգացին, որքանով ապաքինում փափագողների հոսքը խանգարում էր վանական հաստատուն կյանքը: Եվ թեկուզ եկողների համար դարպասները բացում էին հատուկ թույլտվությամբ, սպասողների ամբոխները պատերի տակ չէին կարող չշփոթեցնել միաբանությանը:

Լավրին որոնողներին եւ՛ միաբանությունը, եւ՛ վանահայրը ջանում էին ըմբռնումով վերաբերվել: Նրանք հիշում էին Աստծո խոսքն առ այն, որ չի կարող թաքնվել քաղաքը, որը կանգնած է լեռան կատարին, եւ որ վառված մոմը չեն դնում անոթի տակ, այլ մոմակալի վրա, եւ այն՝ տանը լուսավորում է ամենքին: Այլ բան, որ լույսն այդ համակյաց միաբանությունում չափազանց վառ կարող էր թվալ նրանց, ովքեր կարծում էին, թե միաբանության ուժն ամենից առաջ համատեղ աղոթքն է: Այդպիսին էլ այն, հավանաբար, թվում էր:

Լավրը դուրս ելավ վանքից՝ վերցնելով միայն բոքոն հացի մեծ կողը: Նրան փորձում էին համոզել ավելի շատ վերցնել իր հետ, քանի որ անհասկանալի էր, թե ինչ է սպասվում նոր վայրում, սակայն Լավրը ասաց.

Եթե այդ նոր վայրում Աստված եւ Նրա Կույս Մայրը մոռանան ինձ, ես էլ ինչի՞ եմ պետք:

Եվ Լավրը գնաց փնտրելու այն վայրը, ուր նրա հոգին իրեն ավելի հանգիստ կզգար: Նա քայլում էր աշնանային թաց անտառի միջով՝

չհիշելով ճանապարհի ուղղությունը: Նրան պետք էլ չէր, քանի որ իր վերադարձը չէր կանխատեսում: Հասկանում էր, որ իր շարժը սկիզբն է ուրիշ, առավել կարեւոր հեռացումի:

Լավրը ոտքը դնում էր կիսափտած ճյուղերի վրա, եւ իր ոտքերի տակ դրանք կոտրվում էին առանց ճտճտոցի: Դեղին տերեւների վրա առավոտներն սպիտակին էր տալիս եղյամը: Կեսօրին եղյամը վերածվում էր մանր կաթիլների, եւ դրանք ցրտաշողում էին արեւի տակ: Անտառային սեւ լճակներից Լավրը ջուր էր խմում: Եվ ամեն անգամ, երբ հակվում էր ջրին, խորքից դեպ իրեն էր բարձրանում վեղարավոր պատկերը խարխլված մի ծերունու, ուսերին՝ սպիտակ խաչեր: Լավրը հայացքը բարձրացրեց ճյուղերով գծագրված երկնքին եւ Ուստինային ցույց տվեց լճակի ծերունուն.

Պիտի ենթադրել, որ սա ես եմ, քանի որ այստեղ արտացոլվող ուրիշ մեկը չկա: Իսկ ես շարունակում եմ ապրել քեզնով եւ քեզ տեսնում եմ, որ անփոփոխ ես մնացել, բայց դու, սեր իմ, ինձ արդեն չէիր ճանաչի:

Երբեմն Լավրին թվում էր, որ այդ արտացոլանքը նա տեսել է, որ դա եղել է շատ տարիներ առաջ, բայց ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքներում է տեսել, հիշել ոչ մի կերպ չէր հաջողվում: Հնարավոր է, մտածեց Լավրը, դա եղել է երազում, քանզի, ցուցանելով պատկերները, երազը չի մտահոգվում պայմանական իրերի պահպանության համար, որոնցից մեկն էլ ժամանակն է:

Ամեն օր Լավրն իր հետ վերցրած բոքոնի մեծ կողից պոկում էր մի փշուր, բայց այն, այդուհանդերձ, չէր փոքրանում: Զարմացած այդ հանգամանքից, նա հարցրեց ճգնավոր Իննոկենտիին.

Լսիր, ծերուկս, գուցե ինձ միայն թվո՞ւմ է, թե ես ուտում եմ:

Դու հասուն մարդ ես, այն էլ՝ բժիշկ, իսկ դատում ես ինչպես երեխան, նեղացավ ծերունին: Էլ ինչպե՞ս, ասա, կարող է ապրել օրգանիզմն առանց սննդի: Ինչպիսի՞ կենսաբանական օրենքներով: Հասկանալի է, որ դու ուտում ես ամենաբնական ձեւով: Այլ բան է, որ բոքոնի կողը ամեն օր ավելանում է իր քաշով, այլապես դու այդպես հեշտ չէիր վերջացնի:

Խաղաղված սրբահայր Իննոկենտիի բացատրություններից՝ Լավրը շարունակեց իր շարժը: Ճանապարհին տեսավ բազում արժանի վայրեր, բայց դրանցից եւ ոչ մեկին նախընտրություն չտվեց: Ըստ իր ներքին զգացողության ամեն անգամ հասկանում էր, որ դա վերջնակե-

տը չէ իր թափառումների: Տեղեր կային՝ չափազանց նեղ էին: Ծառերն այնտեղ ընդհուպ կպչում էին մեկմեկու եւ կարող էին, ըստ Լավրի կարծիքի, նեղել այստեղ բնավորված ամեն հոգու: Ուրիշ վայրեր, ընդհակառակը, չափազանց լայն էին, եւ դրանց տարածությունները մեծ ճիգեր էին պահանջում յուրացման համար, այսինքն՝ հոգով իրենը դարձնելու: Չէ որ ասված է եղել Քրիստափորի գրառումներից մեկում, որ ռուս մարդկանց կողմից կնվաճվեն շատ տարածքներ, բայց նրանք չեն կարողանա այդ տարածքները յուրացնել: Լինելով ռուս մարդ, Լավրը զգուշանում էր իրադարձությունների այդպիսի շրջադարձից:

Նա թափառեց շատ օրեր, այնքան շատ, որ անտառի այդ մասերում ծառերի վրա ճանաչեց իր հատումները: Մի գիշեր նրան երազ եկավ մի վայր՝ բարձունքում: Դա մի բացատ էր՝ շրջապատված բարձր սոճիներով: Բացատի եզերքով թփուտներ էին աճում, որոնց թավուտում երեւում էր մի քարայր: Արեւի ճառագայթներն ազատորեն անցնում էին սոճու բների միջով, որն այդ տեղը դարձնում էր լուսավոր եւ խաղաղ:

Առավոտյան արթնանալով, Լավրն ուղղվեց դեպի այդ վայրը: Նա քայլում էր առանց ներքին կասկածների, քայլում էր ճանապարհն իմացող մարդու առույգ քայլով: Օրավերջին Լավրը հասավ բաղձալի վայրին: Պարզվեց, որ այն այնպիսին է, ինչպիսին տեսել էր երազում: Երախտագիտության աղոթք կարդալով, Լավրը համբուրեց հայտնաբերած հողն ու ասաց.

Այս խաղաղությունն իմ դարեդար է, այստեղ էլ կհանգրվանեմ:

Ասաց.

Ընդունիր ինձ, անապատ, ինչպես մայրն իր զավակին:

Ցախ հավաքելով եւ խոտեր քաղելով՝ դարսեց քարանձավում: Եվ պառկեց այնտեղ քնելու, եւ նրա քունն անխռով էր, ինչպես իսկական տանը: Եվ երազում նա երջանիկ էր, քանի որ գիտեր՝ դա իր վերջին տունն է:

-ԺԸ-

Մի քանի օր Լավրը զբաղվեց իր նոր կացարանի վերաշինությամբ: Քարանձավը, որտեղ նա տեղավորվել էր, երկու հսկայական գլաքար էր՝ վերեւից ծածկված եւս մի մեծ քարաբեկորով: Իր կողերից մեկով քարաբեկորը քսվում էր գետնին՝ գոյացնելով երրորդ՝ թեք պատը:

Չորրորդ պատը շինելուն անցավ Լավրն ինքը: Գործիքներից նրա մոտ կար միայն միաբանությունից վերցրած մի դանակ:

Քիչ հեռվում նկատելով տապալված ծառերի բները, Լավրը փորձեց քաշելով բերել դրանք քարայր: Ամենահաստ բներին նա նույնիսկ մոտ չգնաց: Իսկ երբ թեւերով գրկեց միջին չափի բներից մեկը եւ փորձեց շարժել տեղից, չհաջողվեց նաեւ այդ: Սրտխփոցը տեղը բերելով, Լավրը մտածեց, որ պատճառը ծառի ծանրությունն է կամ իր ծերությունը, եւ որոշեց, որ համենայն դեպս ծերությունն է:

Եվ այդ ժամանակ նա անցավ բարակ, ջահել բներին, որոնք տապալվել էին մեծ ծառերի ընկնելուց: Այդ ծառիկները մոտ քաշելով գլաքարերին, դրանց ներքեւի մասը թաղեց հողի մեջ, իսկ վերինը սեղմեց քարի խորդուբորդ երեսին: Բներն իրար էր կապում հաստ, պատատուկից հյուսված պարաններով: Բների միջեւ դատարկը լցնում էր խոտով ու մամուռով: Հյուսված ճյուղերից Լավրին հաջողվեց նույնիսկ դուռ սարքել: Դուռը սռնիներից չէր կախված, այլ դրված էր, սակայն ցրտից պաշտպանում էր ոչ վատ, քան իսկականը:

Պատը շինելով, Լավրը հասկացավ, որ բարակ բներն ամենահարմարը կգային այստեղ, որովհետեւ հաստ բներն այդքան կիպ չէին նստի: Նա ասաց Ուստինային.

Այն, ինչ տրվում է մարդուն իր ուժի շնորհիվ, դա էլ ամենալավն է: Իսկ ինչ իր ուժերից վեր է, ապա, սեր իմ, օգտակար չէ:

Այսուայնտեղ թափված քարերից Լավրը օջախ շարեց: Հասկանալով, որ հասել է ծերությունը, նա իր մարմնի ամրության վրա այլեւս հույս չէր դնում: Որպեսզի պահպանի կյանքն իր մարմնում, ամենացուրտ օրերին, Լավրը սկսեց օջախում կրակ բորբոքել: Արդյունքում՝ ապրելով նոր տեղում, սկսեց վառել շաբաթը մեկ անգամ: Շաբաթ օրերին նա կրակը բորբոքում էր կայծքարի եւ աբեթի օգնությամբ, որոնք միշտ պահում էր չոր առաստաղի տակ հայտնաբերած փորվածքի մեջ: Առավոտից մինչեւ երեկո էր վառում Լավրը՝ նայելով, թե ինչպես է իր հավաքած թաց ճյուղերից ծուխը դանդաղ վեր ծգվում դռան բացվածքից: Մեկ օր վառելուց քարանձավի քարերը ներքաշում էին այնքան ջերմություն, որ նրան բավ էր մինչեւ հաջորդ շաբաթ: Համարյա միշտ հերիք էր անում: Եթե քարանձավը ցրտում էր ավելի շուտ, Լավրը համբերում էր, բայց նշված օրը չէր փոխում:

Լավրը սիրեց իր կացարանը: Այն պաշտպանում էր ցուրտ հյուսիսային քամիներից եւ անսպասելի ընդարձակ դուրս եկավ: Մուտքին ամե-

նամոտ մասում կարելի էր կանգնել ամբողջ հասակով: Իսկ այնտեղ, որտեղ գրանիտե սալն իջնում էր ցած, պետք էր կռանալ: Երբեմն Լավրը մոռանում էր կախված քարաբեկորի մասին եւ գլուխն ուժեղ խփում: Սրբելով դուրս ցայտած արցունքները՝ նա մեղադրում էր իրեն գոռոզության եւ գլուխ չխոնարհելու ցանկության մեջ: Ժպտալով ուրախանում էր, որ իրեն տրված խոնարհության դասերն այդքան թեթեւ են:

Լավրը հասկանում էր, որ իր հետ վերաբերվում են ինչպես երեխայի: Առաջին անգամ մանկությունից ի վեր նրա համար այնքան խաղաղ էր: Սա իմ հանգիստն է հավիտենական, կրկնում էր ինքն իրեն եւ զարմանում իր հանդարտության խորությունից: Նախկին կյանքում նրա հետ շատ բան էր կատարվել, սակայն, այսպես թե այնպես, ամենը տեղի էր ունեցել մարդկանց աչքի առաջ: Իսկ այժմ նա բացարձակապես միայնակ էր:

Նա իրեն միայնակ չէր զգում, որովհետեւ մարդկանց կողմից լքված չէր: Երբեւիցե իրեն հանդիպած բոլոր մարդիկ իր կողմից ընկալվում էին որպես ներկաներ: Նրանք շարունակում էին իրենց խաղաղ կյանքը իր հոգում՝ անկախ այն բանից, նրանք այն աշխարհում էի՞ն, թե՞ դեռ ողջ էին: Նա հիշում էր նրանց բոլոր խոսքերը, հնչերանգը եւ շարժումները: Նրանց հին խոսքերը ծնում էին նորերը, որոնք համագործակցում էին վերջին իրադարձությունների եւ հենց Լավրի խոսքերի հետ: Կյանքը շարունակվում էր իր ամբողջ բազմազանությամբ:

Այն շարժվում էր քառսայնորեն, ինչպես բնորոշ է կյանքին՝ բաղկացած միլիոնավոր մասնիկներից, բայց միեւնույն ժամանակ դիտվելով որպես մեկ ամբողջություն: Լավրին թվում էր, թե կյանքն ընթանում է դիպի սկիզբ, ոչ թե Աստծո ստեղծած համընդհանուր կյանքի սկիզբը, այլ դեպի իր սեփական սկիզբը, որից սկսվեց նաեւ իր կյանքը:

Լավրի մտքերը, որոնք զբաղված էին վերջին տարիների իրադարձություններով, ավելի հաճախ էին անդրադառնում իր կյանքի առաջին տարիներին: Քայլելով աշնանային անտառով, նա իր ձեռքում երբեմն զգում էր Քրիստափորի ձեռքը. այն փշոտ էր ու տաք: Նայելով Քիրստափորին ներքեւից վերեւ, Լավրը վերջապես հիշեց, թե որտեղ է տեսել լճում արտացոլված դեմքը: Դա Քրիստափորի դեմքն էր: Պապից՝ թոռանը, ծերության օրոք:

Քրիստափորը նրան տանում էր գազանների հետքերով, ժամանակ առ ժամանակ կանգ առնելով շունչ քաշելու: Նա պատմում էր տարվա

այդ եղանակին քնած խոտերի եւ սառնամանիքից վնասված արմատների մասին: Պատմում էր թռչունների ուղիների մասին՝ ցրտից դեպի հարավ գնացող: Օտարության մեջ նրանց դժվար կյանքի եւ վերադառնալու զարմանալի ունակության մասին:

Վերադառնալը բնորոշ է ոչ միայն թռչուններին, այլեւ մարդուն, ասել էր մի անգամ Քրիստափորը Լավրին: Կյանքում պիտի որ ինչ-որ վերջ լինի:

Ինչո՞ւ ես դու ինձ Լավր անվանում, հարցրեց Լավրը: Դու ինձ գիտեիր որպես Արսենի:

Ի՞նչ տարբերություն, պատասխանեց Քիրստափորը: Իսկ հիշո՞ւմ ես, դու էլ էիր ուզում թռչուն դառնալ:

Հիշում եմ: Այն ժամանակ ես կարճ թռա...

Երբ տղան հոգնեց, պապիկը նրան նստեցրեց ուսապարկի մեջ: Տուն տարավ, եւ իր համաչափ քայլքից տղայի աչքերը փակվում էին: Տղային երազվեց, թե ինքը դարձել է խառադրիոս թռչուն: Իր վրա վերցնելով ուրիշների ցավերը՝ նա թռչում է դեպի երկնակամար եւ շաղ է տալիս դրանք երկրի վրա: Արթնացավ արդեն գիշերը իր պառկելատեղում: Լսում էր, թե ինչպես է քարանձավի անկյունում միալար կաթկթում ջուրը:

-ԺԹ-

Նոյեմբերին միաբանությունից վերցրած հացի կողը զգալիորեն հալվեց: Լավրը նկատեց այդ հալոցքը, բայց դա իրեն չանհանգստացրեց: Հասկանում էր, որ իր ներկայությունն աշխարհում դեռեւս որեւէ իմաստ ունի, հացն հանապազօր իրեն կտրվի ի շահ ժամանակի: Այդպես էլ եղավ:

Մի անգամ առավոտյան Լավրը զգույշ քայլերի ձայն լսեց քարանձավի մոտ: Նա դուրս եկավ եւ մի մարդու տեսավ բոքոնը ձեռքին:

Ես ջաղացպան Տիխոնն եմ եւ քեզ հաց եմ բերել, ասաց մարդը:

Նրա շորն ալրոտ էր, եւ մոտ երեսուն տարեկան կլիներ: Խոնարհվելով՝ ջաղացպան Տիխոնը մեկնեց բոքոնը: Լավրն առանց բառ ասելու վերցրեց այն եւ նույնպես խոնարհվեց: Ջաղացպանը գնաց:

Հաջորդ օրը նա վերադարձավ կնոջ ձեռքից բռնած, որը խիստ կաղում էր:

Իմ ոտքին ջաղացի երկանաքարն է ընկել եւ այդ օրվանից չեմ կա-

րողանում ոտքս գետնին դնել, ասաց ջաղացպանուհին: Իմ առողջությունը վատանում է օրեցօր:

Իսկ դու ինչպե՞ս ես հասել այստեղ այդ ոտքով, եթե ամուսինդ քեզ իր ձեռերի վրա չի բերել, հարցրեց Լավրը: Նույնիսկ առողջ մարդը չի կարողանա հասնել իմ թավուտ:

Դա այնքան էլ դժվար չէ, ասաց ջաղացպան Տիխոնը, քանի որ քո թավուտը Ռուկինյան գյուղարվարձանից մեկուկես ժամվա ոտաց ճամփա է: Քեզ տեսել են անտառում քայլելից, եւ գյուղարվարձանում բոլորը գիտեն, որ դու ապրում ես այստեղ:

Լավրը ուշադրությամբ նայեց եկվորներին: Նա հասկացավ, որ բազմօրյա իր ճանապարհն իրականում այնքան էլ երկար չի եղել: Եվ որ ինքը մոլորվել է ճամփին, բայց արդյունքում եկել այնտեղ, որտեղ որ պետք է գար:

Օգնիր մեզ, խնդրեց ջաղացպան Տիխոնը, թե չէ հիվանդ ոտքով նրանից ի՞նչ օգնական:

Ջաղացպանուհու աչքերից արցունքները հոսեցին այտերն ի վար, քանի որ գիտեր, խոսքը ոչ թե իր ոտքի, այլ իր կյանքի մասին է: Լավրը նշան արեց նրան, որ հանի հիվանդ ոտքին փաթաթած գլխաշորը: Երբ նա այդ արեց, Լավրը նրա կողքին ծունկի իջավ խսիրի վրա: Ոտնաթաթն ուռած էր եւ սկսել էր թարախակալել: Նա դանդաղ շոշափեց այն: Ջաղացպան Տիխոնը շրջվեց: Լավրը երկու ձեռքով սեղմեց ոտնաթաթը, իսկ ջաղացպանուհին հեկեկաց: Նա նորից ոտքը փաթաթեց:

Լաց մի լինիր, կին, ասաց Լավրը: Քո ոտքը կլավանա, դու կվերադառնաս ջրաղաց եւ կլինես քո ամուսնու օգնականը:

Եվ ամեն ինչ առաջվա նմա՞ն կլինի, հարցրեց ջաղացպանուհին:

Ոչ, ամեն ինչ առաջվանը չի լինի, քանի որ աշխարհում ոչինչ չի կրկնվում: Դե դու ինքդ էլ չես ուզում, կարծում եմ:

Նրանք խոնարհվեցին Լավրին ու գնացին:

Այդ օրվանից Ռուկինյան գյուղարվարձանից նրա մոտ սկսեցին մարդիկ գալ: Տեսնելով, որ սքեմավոր Լավրը օգնեց հիվանդ ջաղացպանուհուն, նրանք հասկացան, որ իրենց էլ չի մերժի: Լսելով ջաղացպանի պատմությունը, թե ինչպես Լավրն ընդունեց հացը եւ շնորհակալ եղավ խոնարհումով, նրանք սկսեցին Լավրին ուտելիք բերել: Եվ ամեն անգամ, երբ իրեն ուտելիք էին բերում, Լավրը խնդրում էր չանել այդ: Իսկ նրանք, միեւնույն է, բերում էին կամ հաց, կամ խաշած շաղգամ, կամ վարսակի շիլա պուլիկներով: Ջաղացպանի պատմածից

երեւում էր, որ նման նվիրատվությունները վնաս չեն տա: Բացի դրանից, Ռուկինյան գյուղարվարձանում վաղուց արդեն կարծում էին,թե միայն վարձատրվող աշխատանքն է արդյունք տալիս: Նույնիսկ եթե այդ աշխատանքն ապաքինումն է:

Հասկանալով, որ հրաժարվելն անհնար է, Լավրը սկսեց այդ սնունդը կիսել թռչունների ու կենդանիների հետ: Նա հացը պոկում ու փշրում էր ձեռքերի մեջ, ապա նրա ձեռքերին էին նստում թռչունները, նրանք կտցում էին հացը եւ հանգստանում նրա ջերմ ուսերի վրա: Վարսակի շիլան ու շաղգամն ուտում էր արջը: Նա ոչ մի կերպ չէր կարողանում քնելու հարմար որջ գտնել, եւ դա թունավորում էր իր կյանքը:

Գալով Լավրի մոտ, արջը գանգատվում էր ցրտերից, սննդի բացակայությունից եւ իր ընդհանուր անհարմարությունից: Ամենացուրտ օրերին Լավրը նրան թողնում էր քարանձավ տաքանալու՝ հորդորելով հյուրին չխռմփացնել եւ չշեղել իրեն աղոթքից: Իսկ իրենց հարեւանությունը Լավրն առաջարկեց ընդունել իբրեւ ժամանակավոր միջոց: Դեկտեմբերի վերջին արջն, այնուամենայնիվ, որջ գտավ, եւ Լավրը շունչ քաշեց թեթեւացած:

-Ի-

Սկսած այդ ձմեռվանից Լավրը կորցրեց ժամանակի հաշիվը, որը միտված էր առաջ: Այժմ նա զգում էր միայն շրջանաձեւ ժամանակը, փակված՝ իր վրա,- ժամանակը օրվա, շաբաթվա եւ տարվա: Նա գիտեր տարվա բոլոր կիրակի օրերը, սակայն տարիների հաշիվն անհույս կորցրել էր: Երբեմն նրան հաղորդում էին, թե ո՛ր տարին է, սակայն նա հենց տեղում մոռանում էր, քանի որ վաղուց արդեն չէր համարում այդպիսի գիտելիքն արժեքավոր:

Իրադարձությունները նրա հիշողության մեջ այլեւս չէին հարաբերվում ժամանակի հետ: Դրանք խաղաղ հոսում էին իր կյանքով՝ շարվելով հատուկ, ժամանակի հետ կապ չունեցող կարգով: Դրանցից մի քանիսը դուրս էին լողում ապրվածի խորքից, իսկ որոշներն էլ սուզվում էին այդ խորությունների մեջ առհավետ, քանի որ դրանց փորձը ոչ մի տեղ չէր տանում: Բուն ապրվածն աստիճանաբար կորցնում էր հստակությունը՝ ավելի ու ավելի վերածվելով բարու եւ չարի ընդհանուր գաղափարների, զուրկ՝ մանրամասներից եւ գույներից: Ժամանակային

ցուցիչներից ավելի հաճախ նրա մտքին էր գալիս մի անգամ բառը: Այդ բառը դուր էր գալիս նրանով, որ անեծքը հաղթահարվում էր ժամանակով: Եվ հաստատում էր ամենայն տեղի ունեցած բանի եզակիությունն ու անկրկնելիությունը՝ մի անգամ: Մի անգամ նա հասկացավ, որ այդ ցուցումը լիովին բավարար է:

(Մի անգամ) Լավրի քարանձավի մոտ բերեցին նովգորոդյան բոյարուհի Ելիզավետային: Շատ տարիներ առաջ նա սայթաքել եւ գլխով խփել էր քարին: Այդ օրվանից նրա տեսողությունն սկսել էր խամրել, եւ որոշ ժամանակ անց, նա տեսնում էր միմիայն առարկաների ուրվագծերը: Լավրի մոտ գալուց ոչ շատ առաջ բոյարուհի Ելիզավետան դադարեց տեսնել նույնիսկ դրանք:

Երբ Լավրը դուրս եկավ իր քարանձավից, նա ասաց.

Իմ աչքերին քսիր այն ջրից, որը վերցնում ես աղբյուրից, որպեսզի ես նորից տեսնեմ:

Լավրը զարմացավ օտարականի հավատքի վրա եւ այնպես արեց, ինչպես նա ուզում էր: Հենց նույն ժամին նա տեսավ Լավրի դիմագծերը, իսկ իր թիկունքում՝ իրեն ուղեկցողների շարժումը: Բոյարուհի Ելիզավետան սկսեց նրանց ցույց տալ մատով եւ նրանց կոչել անուններով: Նա նաեւ անվանեց խոտերի ու ծաղիկների անունները, որոնք աճել էին Լավրի քարանձավի շուրջ: Երբեմն սխալվում էր, որովհետեւ իր աչքերում դեռ պղտորություն կար, սակայն արդեն այդ ժամանակ նա տեսնում էր կարեւորը: Ծարունակ գլուխը վեր էր բարձրացնում եւ նայում՝ չկկոցելով աչքերն ամառային պայծառ արեւից, եւ աչքերը նրա չէին ցավում եւ չէին կարողանում հագեցնել արեւից: Աշնան սկզբին բոյարուհի Ելիզավետայի տեսողությունը ետ եկավ ամբողջովին:

(Մի անգամ) Լավրի մոտ բերեցին Աստծո ծառա Նիկոլային՝ կապկպված շղթաներով: Նրան բերում էին տասը մարդ, քանի որ քիչ քանակով ի վիճակի չէին բռնել նրան եւ կառավարել նրա շարժումները: Նիկոլայը միջահասակ էր, սակայն նրան բնական ուժ էին տալիս իր մեջ բնավորված դեւերը: Տեսքը սարսափելի էր: Նիկոլայը մռնչում էր ու ոռնում ու կրծում իր շղթաները՝ մերկացնելով երկաթից ջարդված ատամները: Նրա շրթունքների վրա եռում էր արնափրփուրը: Նա վայրենաբար խոլորում էր աչքերը, այնպես որ՝ երեւում էին սպիտակուցները միայն: Նրա քունքերին եւ վզին ուռչում էին կապույտ արյունատար երակները: Ոչ մի հագուստ չկար նրա վրա, քանի որ այն ամենը, ինչ հագցնում էին, նա պատառոտում էր ծվեն-ծվեն: Եվ, չնայած սառ-

նամանիքին, ցուրտը չէր զգում. իր մեջ նստած օտար ուժերը տաքացնում էին:

Բաց թողեք նրան, ասաց Լավրը Նիկոլային բռնողներին:

Բռնողներն իրար նայեցին: Մի փոքր դանդաղելով, նրանք դեն նետեցին շղթաներն ու Նիկոլայից կողմ քաշվեցին: Լռություն տիրեց: Նիկոլայն արդեն չէր ոռնում եւ չէր զարկվում: Կիսակռացած նա կանգնել ու նայում էր ուղիղ Լավրի աչքերի մեջ: Նրա բերանը կիսաբաց էր: Նրա բերանից, տատանվելով, ծանր ծորում էր թուքը: Լավրը քայլ արեց դեպի Նիկոլայն ու ձեռքը դրեց նրա գլխին: Այդպես նրանք կանգնեցին մի որոշ ժամանակ: Լավրի աչքերը փակ էին, իսկ շուրթերը շարժվում էին: Երկուսի գլուխներն էլ դանդաղ մոտենում էին, մինչեւ որ Լավրի ճակատը դիպավ Նիկոլայի ճակատին:

Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի անունից հրամայում եմ ձեզ թողնել Աստծո ծառա Նիկոլային, բարձրաձայն ասաց Լավրը:

Այդ խոսքերից Նիկոլայը ձեռքը երկարեց Լավրին, ասես ուզում էր նրան գրկել: Նրա մարմինը փափկեց: Զրնգացնելով շղթաները Նիկոլայը կամաց փլվեց գետնին: Նա պառկած էր ձյան վրա, Լավրի ոտքերի մոտ, եւ ոչ ոք չէր համարձակվում մոտ գնալ նրան: Նիկոլայի աչքերը բաց էին ասես մեռյալի աչքերը, բայց նա մեռած չէր:

Դրանք լքեցին Նիկոլային, եւ նրա ոգին առողջացման ճանապարհին է, ասաց Լավրը: Թողեք նա շունչ առնի մինչեւ լույսը բացվելը, իսկ առավոտյան թող գնա հաղորդության:

Եվ Նիկոլային տարան Ռուկինյան գյուղարվարձան, եւ նա անգիտակից պառկած էր մինչեւ այդ օրվա վերջը եւ ամբողջ գիշեր: Իսկ երբ վաղ առավոտյան բացեց աչքերը, ապա նրանցում արդեն շողում էր բանականության լույսը, ինչպես եւ վայել է մարդուն, որը կրում է պատկերն Աստուծո: Նիկոլայը դեռեւս շատ թույլ էր, որովհետեւ իր միջից դեւերի հետ դուրս էր եկել այն դժոխային ուժը, որին տիրապետում էր:

Ծրջապատողների եւ սեփական աղոթքներով Նիկոլայն իր մեջ ուժ գտավ հասնելու մինչեւ եկեղեցի եւ հաղորդվել: Իսկ հաղորդվելով՝ նա իրեն ավելի լավ էր զգում, քանի որ Քրիստոսի արյան եւ մարմնի հետ նրա մեջ էր մտել նոր զորություն: Եկեղեցուց Նիկոլայը, ժողովրդի ուղեկցությամբ, գնաց ուղիղ Լավրի քարանձավի մոտ:

Լավրը դուրս ելավ ընդառաջ եւ օրհնեց նրանց անբարբառ: Եվ բոլորը երգում էին Լավրի առջեւ ծնկաչոք, որովհետեւ տեսնում էին, որ այդ մարդու ուժը զորեղ է դիվային ուժից: Հետո բոլորը հարցրին Նիկո-

լային՝ այդ ինչի՞ց էր, երբ տանում էին Լավրի քարայրի մոտ, նա այդպես դիմադրում եւ գոռում էր ճիչով, որը գերազանցում էր իր ուժով մարդկային հնարավորությունները: Եվ այդ ժամանակ Նիկոլայը պատասխանեց նրանց.

Դուք ինձ ծեծում էիք, ստիպում գալ այստեղ, դեւերն էլ էին ինձ ծեծում՝ հայհոյելով այդ անել, եւ ես չգիտեի՝ ձեզնից որին լսեմ: Եվ ծեծված լինելով եւ՛ նրանցից, եւ՛ մյուսներից, ես ճչում էի կրկնակի ճիչով:

Եվ բոլորը զարմացան տեղի ունեցածից, եւ փառաբանեցին երկնավոր Աստծուն եւ նրա երկրային լուսատու Լավրին:

-ԻԱ-

Մեծ սովի տարում Լավրի մոտ եկավ պարմանուհի Անաստասիան, որ կորցրել էր կուսությունը: Լաց լինելով նա ընկավ Լավրի ոտքերն ու ասաց.

Զգում եմ, որ ես պատճառավոր եմ, բայց չեմ կարող ծնել՝ առանց ամուսնու: Չէ որ երբ երեխան ծնվի, նրան բիճ կասեն:

Իսկ ի՞նչ ես ուզում դու, կին, հարցրեց Լավրը:

Դու ինքդ էլ գիտես, Լավր, ինչ եմ ուզում, բայց վախենում եմ քեզ ասեմ:

Գիտեմ, կին: Չէ որ դու ինքդ էլ գիտես, ինչ եմ քեզ պատասխանելու: Իսկ ինչո՞ւ ես, ասա, ինձ մոտ եկել:

Որովհետեւ, եթե ես դիմեմ Ռուկինյան գյուղարվարձանի հեքիմ կնոջը, իմ մեղքը աշխարհը կիմանա: Իսկ դու աղոթիր, եւ իմ մեղքի պտուղն իմ միջից դուրս կգա այնպես, ինչպես մտել էր: Լավրի հայացքը բարձրացավ սոճիների կատարներով ու կորավ անագե երկինքներում: Նրա արտեւանունքներին սառել էին փաթիլները: Բացատը ծածկվել էր առաջին ձյունով:

Ես չեմ կարող աղոթել այդ բանի համար: Աղոթքը պիտի համոզչական ուժ ունենա, այլապես այն չի ազդի: Իսկ դու ինձ խնդրում ես աղոթել սպանության համար:

Անաստասիան դանդաղ ոտքի կանգնեց: Նստեց տապալված ծառին եւ այտերը սեղմեց բռունցքներին:

Ես որբ եմ, իսկ հիմա սովի ժամանակներ են, եւ չեմ կարենա ծիծ տալ երեխային: Ոնց չես հասկանում:

Պահպանիր երեխային, եւ ամեն ինչ լավ կլինի: Պարզապես հավա-

տա ինձ, ես դա գիտեմ:

Դու մեռցնում ես ինձ էլ, նրա՛ն էլ:

Լավրը նստեց ծառի վրա, Անաստասիայի կողքին: Ծոյեց նրա գլուխը:

Քեզ շատ եմ խնդրում:

Անաստասիան շրջվեց: Լավրը ծունկի իջավ եւ գլխով սեղմվեց Անաստասիայի ոտքերին:

Աղոթելու եմ հանուն քեզ եւ հանուն նրա ամեն ժամ: Թող նա լինի իմ ծերության զավակը:

Դու հրաժարվում ես ինձնից, որովհետեւ վախենում ես կործանել հոգիդ, ասաց Անաստասիան:

Վախենամ, որ արդեն կործանել եմ, ցածրաձայն ասաց Լավրը:

Հեռանալով՝ Անաստասիան շրջվեց Լավրի կողմը. նա լաց էր լինում: Եվ աղջիկը խղճաց նրան:

-ԻԲ-

Ձմեռը սառնամանիքներով եղավ: Երկնքից թռչում էին ոչ թե փաթիլներ, այլ սպիտակ, կայծկլտացող փոշի, որը նստում էր ծառերի վրա եւ թփերի: Ըստ էության, արդեն թփեր էլ չկային: Սկզբում դրանք թմբեր դարձան, իսկ հետո ձնաթմբերը կորան անսահման ձյունե ծածկոցի տակ, որը փռված էր անտառի վրա: Դեռեւս ձմռան սկզբին Լավրը ասաց Ուստինային.

Ինձ թվում է, սեր իմ, սա ամենացուրտ ձմեռն է, որն ինձ վիճակված է եղել ապրել: Իսկ գուցեեւ, բանը նրանում է, որ իմ մարմինն արդեն անկարող է դիմադրել դժվարություններին: Որպեսզի այն վաղաժամ չբաժանվի հոգուց, կփորձեմ տաքացնել շաբաթը երկու անգամ:

Սակայն քարանձավը շաբաթը երկու անգամ տաքացնել Լավրին չհաջողվեց: Նախապատրաստած կոճղերի պաշարն արագ սպառվում էր, իսկ կոճղեր գտնելը կապույտ ձյան տակ, շատ դժվար էր: Մինչեւ կուրծքը ձյան մեջ՝ Լավրը հասնում էր մոտակա ծառերին, ջարդում դրանց ճյուղերը, բայց դա մեծ ճիգեր էր պահանջում: Քարայր քարշ տալով մեկ-երկու ճյուղ, նա դեռ երկար չէր կարողանում շունչը տեղը բերել: Լավրը անուժ ընկնում էր պառկելատեղին եւ շնչառությունը, որը խեղդում էր կրծքահազը, վերականգնվում էր դժվարությամբ: Փայտ տնտեսելով նա սկսեց տաքացնել հաճախ, բայց քիչ-քիչ: Այդպես վա-

ռելուց քարերը չէին տաքանում եւ քարանձավում միշտ ցուրտ էր:

Սպառվում էր նաեւ սնունդը, որը մինչեւ մեծ ձյուները Լավրին երբեմն-երբեմն հասցնում էին Ռուկինյան գյուղարվարձանից: Երբ նախկինում ուտելիք էին բերում, նա հրաժարվում էր, ասելով, որ ինքը շատ պաշար ունի: Ամռանն ու աշնանը նա իրոք ուներ բազմաթիվ խոտեր ու արմտիք, որ բավարար էին սնվելու համար, բայց փլված ձյուների տակ դրանք արդեն անհասանելի էին: Խոր ձյուների պատճառով Լավրի մոտ չէին գալիս նաեւ հիվանդները, դադարեցնելով, բնականաբար, սնունդ բերելը: Այդ դժվար ժամանակներում նրա մասին մոռացել էին ո՛չ դաժան մոռացությամբ չարակամների, այլ կարիքավորների ստիպողական մոռացությամբ: Ձյունը միացել էր սովին, եւ հեշտ չէր ոչ ոքի համար:

Ձմռան կեսին Լավրը գրեթե դուրս չէր ելնում քարանձավից: Նա պահպանում էր իր ուժերն ու ջերմությունը: Մի անգամ քարանձավի հեռավոր ծայրում գտավ մնացորդներն այն բոքոնի կողի, որ մի ժամանակ բերել էր միաբանությունից:

Հացն այդ, հնարավոր է, նախնական թարմությունը չունի, ասաց Լավրը Ուստինային, բայց դե քիչ է մնացել, գիտես, եթե չտրվես շատակերության, որոշ ժամանակ հերիք կանի:

Իմ այս վիճակում, սեր իմ, գլխավորը կամակորություն չանելն է:

Լուծելով սնվելու դժվարությունները, Լավրը նաեւ տաքանալու հնարը գտավ: Նա սկսեց մտածել Երուսաղեմի մասին:

Առավոտից իրիկուն թափառում էր արեւով ողողված նրա փողոցներով եւ, նույնիսկ քնած, զգում ցրտող քարերի հոտը: Ծոյում էր դրանց խորդուբորդ երեսը: Քարերն իրենց ջերմությունն էին տալիս Լավրի սառչող ձեռքերին, եւ նա այլեւս չէր մրսում: Փետրվարի երրորդ օրը Ձիթենյաց լեռան վրա նա հանդիպեց ճգնավոր Իննոկենտիին: Ճգնավորի դեմքն արեւահարված էր այնպես, որ հասկանալի էր՝ նա Երուսաղեմում էր ոչ առաջին օրը: Բարեւի փոխարեն ճգնավորը ցույց տվեց Տաճարավոր լեռը եւ կամացուկ երգեց.

Այժմ թողություն տուր Քո ծառային, Տիրակալ, Քո խոսքով ի խաղաղություն...

Ճգնավոր Իննոկենտին երգում էր գլխաբաց, եւ փետրվարյան տաք քամին ծածանում էր նրա ճերմակները: Օդով լողում էին Սրբազան հողի միջատներն ու խոտերի չոր ժապավենները՝ պոկված հայրենի վայրերից: Նրանք խառնվում էին հինավուրց փոշու հետ Երուսաղեմի եւ

ընկնում կանգնածների աչքերի մեջ: Ճգնավոր Իննոկենտիի թարթիչ-ների վրա փայլում էին արցունքները: Նա արդեն փակել էր շուրթերը, իսկ նրա երգը դեռ տարածվում էր Կեդրոն հովտում: Նայելով նրան, Լավրը մտածեց, որ այդպես պիտի որ տեսնվեր սրբակյաց Սիմեոնն իր կյանքի երեք հարյուր վաթսունմեկերորդ տարում:

Չէ որ այսօր հենց սրբակյաց Սիմեոնի հիշատակի օրն է, ժպտաց սրբահայր Իննոկենտին, իսկ դու այդ մասին, ինչ է, մոռացե՞լ ես: Եվ ինչպես աստ չերգես ազատությունը, որն ինձ համար սկսվում է հիմա:

Ես դա հասկացա այն բանից, հենց դու մոտեցար, ասաց նրան Լավ-ը: Դու այդ արեցիր ազատագրված: Որպես մի մարդ, ով տեսել է ամեն ինչ, ով պիտի տեսներ: Ճշմարիտն ասած, չէի սպասում քեզ այստեղ հանդիպել, թեեւ էլ որտե՞ղ կարող էինք հրաժեշտ տալ, եթե ոչ այստեղ:

Սրբահայր Իննոկենտին գրկեց Լավրին:

Մի տխրիր, Լավրե, քանզի քեզ շատ չի մնացել փակված կենալու ժամանակի մեջ:

Նրանք կանգնած էին լեռան կատարին: Լավրը նայում էր, թե ինչ-պես է սրբահոր ուսի ետեւից դեպ իրենց լողում ամպը, որից չի հեղվում եւ ոչ մի կաթիլ անձրեւ:

-ԻԳ-

Գարնանը հասկանալի դարձավ, որ նաեւ եկող տարում սովը չի վեր-ջանա: Մայիսի վերջին, երբ գետնի տակից խոտաբույսեր երեւացին, իսկ պտղատու ծառերը նոր էին բողբոջում, սաստիկ սառնամանիք խփեց: Այն եկավ տաք օրերի կեսին եւ մոլեգնեց միայն մեկ գիշեր: Այն ամենը, որն ունակ էր աճել եւ ծաղկել, այդ գիշեր ոչնչացավ:

Ռուկինյան գյուղարվարձանում եղել էին զանազան դժբախտություն-ներ, բայց այսպիսի սառնամանիք մայիսին չէր հիշում ոչ ոք: Գյուղար-վարձանի ջաղացպանը դրա շնչառությունը համեմատեց դեւի հետ, որը սառույցի է վերածում ամենը, ինչին դիպչում է: Այդ նմանեցումը շատերի աչքերը բացեց կատարվածի իսկական բնույթի վրա եւ եզրա-հանգման ուղղություն տվեց: Պարզ էր, որ նման դեպքերը չեն լինում պատահաբար:

Պատճառների որոնումը երկար չտեւեց: Չնայած լայն-լայն հինռու-սական հագուստներին, գարնան դեմ ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ որբուկ Անաստասիան պարապ չի մնացել: Երբ դժբախտությունը տե-

ղի ունեցավ, նրան հարցրին՝ ո՞վ է երեխայի հայրը: Բայց նա հրաժարվեց պատասխանել: Երեխայի հայրը նա էր, ում սառցե շնչառությամբ ոչնչացավ ամենայն խոտաբույս եւ ամենայն ծառի պտուղ: Եվ ելքն այստեղ մեկն էր, եւ ոչ ոք չարտահայտվեց, թե դա ինչ ելք է, քանզի բոլորն առանց այդ էլ գիտեին, թե ինչպես պիտի վարվեն:

Մի լուսավոր հունիսյան գիշեր Անաստասիայի խարխուլ խրճիթը վառվեց չորս կողմից: Ռուկինյան գյուղարվարձանում ոչ ոք չէր քնել, բայց եւ ոչ ոք խրճիթը չմարեց: Ծատերը լալիս էին եւ աղոթում, քանի որ, չնայած Անաստասիայի կապին չար ուժերի հետ, նրան խղճում էին: Ծատերին թվում էր, որ առանց ծնողների ապրող աղջիկը, նույնիսկ, եթե դարձել է դեւի դյուրին որս, ապա դրանում ոչ միայն նրա մեղքն է եղել, այլեւ հանգամանքների: Եվ միայն Ռուկինյան գյուղարվարձանը սովից փրկելու հոգսն էր կաշկանդում փափկասրտությամբ տարբերվող այդ մարդկանց: Նրանք շրջապատեցին Անաստասիայի խրճիթը, որպեսզի չթողնեն նրան այդտեղից փախչի եւ փակեցին իրենց ականջները, որպեսզի չլսեն նրա մինչմահական ճիչերը: Բոցերի աղմուկի մեջ նրանք չէին էլ լսում:

Երբ խրճիթը վառվեց մինչեւ տակ, ամենահամարձակները քաջություն ունեցան խրվել մոխրի մեջ, որպեսզի ծակծկեն կաղամախու բրերով այն, ինչը մնացել էր Անաստասիայից: Չգտնելով ոչ մի բան վառվածի հետքերից, արվարձանցիներն առավել համոզվեցին նրա մեղավորության մեջ, որքանով անմեղ մարդուց պիտի մնար չէ՞ թեկուզ ինչոր բան: Եվ բոլորը համոզվեցին, որ Անաստասիան չքացել է, որպես ծուխն է չքանում, եւ մեռել է, որպես մոմն է հալվում կրակի երեսից, Աստծուն սիրողի դեմքից եւ խաչակնքումով վկայողների:

Բայց Անաստասիան չէր չքացել: Հասկանալով ինչի է հանգելու գործը՝ հրդեհի գիշերը նա թաքուն փախավ Ռուկինյան գյուղարվարձանից: Նրա փախուստը բարդացնում էին սրտխառնուքն ու գլխապտույտը, բայց գլխավորը՝ ծանր փորը, որտեղ խաղում էր նրա երեխան: Իսկ գլխավոր բարդությունն այն էր, որ փախչելու տեղ չուներ: Ամբողջ աշխարհում նա միայն ուներ ճգնավոր Լավրին, ով կանխագուշակեց իրադարձությունների բարեհաջող ելք: Եվ նրա կանխագուշակումը (Անաստասիան լողզեց այտերի արցունքները), կածես թե, չիրականացավ: Քերծելով դեմքն ու ձեռքերը հանդիպակաց ճյուղերից, իր սրտի խորքում Անաստասիան հայհոյում էր ծերունուն իրեն օգնելուց հրաժարվելու պատճառով եւ նրան համարում էր գրեթե մեղավորն իր դժբախտու-

թյունների: Իսկ երբ շուտով, կեսգիշերից հետո, նա մոտեցավ Լավրի քարանձավին, ցասումը լքել էր նրա սիրտը, իսկ ուժերը՝ մարմինը, նա չուներ այլեւս ոչ հանդիմանանք, ոչ էլ նույնիսկ արցունք: Ծանր շնչելով Անաստասիան իջավ գետնին եւ կանչեց Լավրին: Նա փսխեց:

Ձեռքում մի տափակ ամա՝ քարանձավից դուրս ելավ Լավրը: Նա լվաց Անաստասիայի ձեռքերն ու երեսը:

Ինձ ուզում էին վառել, շշնջաց Անաստասիան: Նրանք մտածում են, որ ես, ինչ կրում եմ իմ արգանդում, դեւից է:

Լավրը լուռ նայեց Անաստասիային, նրա աչքերը լի էին արցունքով:

Ախր ինչո՞ւ ես լռում, ճչաց Անաստասիան:

Լավրը ձեռքը դրեց նրա ճակատին, եւ Անաստասիան սառնություն զգաց:

-ԻԴ-

Լավրը կիսում է իր քարանձավը երկու հավասար մասի: Նրանք Անաստասիայի հետ հավաքում են ճյուղեր եւ, մեկը մյուսին կապելով պատատուկե պարաններով, շինում քարանձավի ներքնապատը: Արտաքին պատի մեջ կտրում են մի մուտք, որից կարողանար օգտվել Անաստասիան: Մուտքին ամրացնում են ճյուղակապ մի դուռ, որի մեջ ներհյուսված են ձարխոտեր: Քարանձավի երկրորդ մուտքը նրանք ջանում են աննկատ պահել:

Արեւոտ օրերին Անաստասիան զբոսնում է քարանձավի ետեւում, իսկ Լավրը կանգնում է կածանի վրա, որով դեպ իրեն են գալիս Ռուկինյան գյուղարվարձանից: Նա հիվանդներին ընդունում է բացատում՝ քարանձավի դիմաց եւ նշան է անում Անաստասիային, երբ նրանք հեռանում են:

Ավելի լավ է չտեսնեն, ասում է Լավրը Ուստինային: Երբեք չգիտես, թե ինչ կա այդ մարդկանց մտքում. նրանց գլուխներում, սեր իմ, դեռ այնքա՜ն խավար կա:

Խոսիր ինձ հետ, խնդրում է Լավրին Անաստասիան: Չեմ կարող, երբ ամբողջ ժամանակ լռում են:

Լավ, ես կխոսեմ քեզ հետ, պատասխանում է Լավրը:

Հիվանդները նորից են Լավրին սնունդ բերում, բայց արդեն շատ ավելի քիչ, քան առաջ, որովհետեւ շրջակա գյուղերում սով է: Բացի այդ, նրանք ընտելացել են, որ պարգեւատրումից Լավրը հրաժարվում

է: Միայն հիմա Լավրը չի հրաժարվում: Նա բուժում է հիվանդներին եւ շնորհակալությամբ ընդունում բերվածը: Հիվանդները զարմանում են: Նրանք ասում են, որ առաջվա առատ տարիներին Լավրը նրանցից ոչինչ չէր վերցնում, իսկ հիմա՝ սովին, ամեն բան վերցնում է, ներառյալ՝ միսը: Հիվանդները տխրությամբ են հիշատակում, որ նույնիսկ ասկետներին դժվարությունները փոփոխում են ոչ դեպի լավը: Իրենք մի փոքր ջղայնացած են, բայց ցույց չեն տալիս: Լավրը նրանց վերադարձնում է առողջություն եւ կյանք, առանց որոնց ուտելիքն անօգուտ է:

Լավրը ոչինչ չի բացատրում նրանց: Նա գիտի, որ Անաստասիան պետք է լավ սնվի, եւ ուշադրությամբ դրան է հետեւում:

Այդքան լավ ես դեռ չեմ կերել ոչ մի անգամ, ասում է Անաստասիան:

Հիմա կեր ոչ միայն դու, այլեւ քո տղան, պատասխանում է նրան Լավրը:

Որտեղի՞ց գիտես, որ տղա է:

Լավրը երկար նայում է Անաստասիային:

Այդպես ինձ թվում է:

Օրերից մի օր Լավրն ասում է Ուստինային.

Թերեւս, սեր իմ, ես գրագիտություն սովորեցնեմ նրան, ինչպես ինչոչ ժամանակ,- հիշո՞ւմ ես,- սովորեցնում էի քեզ: Գուցեեւ արդյունքում պատահի այնպես, որ նա կարդա այն, ինչը իրեն չեն ասի Ռուկինյան գյուղարվարձանում:

Լավրն սկսում է Անաստասիային գրագիտություն սովորեցնել: Գրագիտությունը տրվում է Անաստասիային զարմանալի արագ: Լավրը գրքեր չունի, բայց հո ունի կեչեկեղեւ, որի վրա գրում է այն, ինչը Անաստասիան կարդում է: Բայց հաճախ նա գրում է ձողիկով, գետնին: Որպեսզի նորը գրի, ջնջում է հինը: Երբեմն չի ջնջում:

Իր մոտ եկած մարդիկ տեսնում են այդ գրությունները, բայց այն մասին, ում համար են դրանք արված, գլխի չեն ընկնում: Պարզապես ջանում են ոտքերը դրանց վրա չդնել: Նրանք չգիտեն, թե հատկապես ինչ է գրված գետնին, բայց նրանց հայտնի է, որ սլավոնական տառերը սրբազան են, քանզի ի զորու են նշանակել սրբազան հասկացություններ: Ոչ սլավոնական տառեր նրանք չեն տեսել: Նրանք չափազանց մեծ քայլեր են անում եւ շարժվում գրությունների շուրջ ոտնաթաթերի ծայրերի վրա: Արիստիդես սրբակյացին հարցնում են՝ քանի՞ տարի մարդն ապրի, որ լավ լինի: Եվ Արիստիդեսը պատասխանում է՝

մինչեւ այն օրը, երբ գիտակցի, որ մահն ավելի լավ է, քան կյանքը:

Հեռանում են, այդպես էլ չընթերցելով Արիստիդեսի գրույցները: Խոնարհվում Լավրին եւ նրան երկար տարիների կայնք են մաղթում:

Աստված չանի, անձայն պատասխանում է Լավրը նրանց:

Քնելուց առաջ Անաստասիան խնդրում է նրան մի բան պատմել: Լավրը ուզում է պատմել Երուսաղեմ իր ճամփորդության մասին, բայց չի կարողանում հիշել: Նա երկար մտածում եւ հիշում է Ալեքսանդրականը: Երեկո առ երեկո Լավրը պատմում է Անաստասիային մակեդոնական արքայի թափառումների մասին, նրա տեսած վայրի մարդկանց մասին եւ պարսից արքա Դարեհի հետ նրա ճակատամարտի մասին: Ալեքսանդրի կյանքի իրադարձություններին Անաստասիան կարեկցանքով է վերաբերվում: Դրանք մի կողմ են տանում Անաստասիայի սեփական կյանքի դեպքերը, եւ նա խաղաղ քնում է: Իսկ Ալեքսանդրը պառկում է երկաթե հողի վրա, ոսկրե երկնքի տակ: Նա տխուր է, կարոտում է: Նա չի հասկանում, ինչի համար էին այդ բոլոր թափառումները եւ ինչի համար են բոլոր նվաճումները: Եվ նա դեռ չգիտի, որ իր կայսրությունը փլուզվում է ամեն ժամ:

Բացելով աչքերը, սակայն չարթնանալով, Անաստասիան արտաբերում է.

Ինչ տարօրինակ կյանք ունի Ալեքսանդրը: Ո՞րն է եղել նրա պատմական նպատակը:

Լավրը, չպոկելով հայացքը, նայում է Անաստասիայի աչքերի մեջ եւ նրանցում կարդում իր սեփական հարցերը: Հակվելով քնածի ականջին՝ Լավրը շշնջում է.

Կյանքը պատմական նպատակ չունի: Կամ՝ այն գլխավորը չէ: Ինձ թվում է, Ալեքսանդրն այդ հասկացել է միայն հենց իր մահից առաջ:

Վաղ առավոտյան նրանց արթնացնում է ձայների աղմուկը: Լավրը դուրս է գալիս քարանձավից ու տեսնում Ռուկինյան գյուղարվարձանի տղամարդկանց: Նրանց ձեռքերում եղաններ ու բրեր են: Լավրը լուռ նայում է նրանց: Որոշ ժամանակ նրանք նույնպես լուռ են մնում: Նրանց դեմքերին քրտինքի խոշոր կաթիլներ են, իսկ մազերը կպած են ճակատներին: Նրանք շտապում են: Նրանք դեռ ծանր են շնչում:

Դարբին Ավերկիին ասում է.

Դու գիտես, ճգնավոր, որ նախորդ տարում սով է եղել: Եվ պատճառը դրա՝ եղել է Անաստասիա աղջկա կապը Դեւի հետ:

Լավրը նայում է իր առջեւ, բայց անհասկանալի է, տեսնո՞ւմ է արդ-

յոք որեւէ մեկին:

Անաստասիային մենք վառեցինք, շարունակում է դարբին Ավերկիին, բայց սովը չպակասեց, այդ ինչի՞ց է, ճգնավո՛ր:

Լավրը աչքերը շրջում է դարբնի վրա:

Դա ասում է այն մասին, որ ձեր գլուխներում խավար է:

Դու, ճգնավո՛ր, ճիշտ չես: Դա ասում է այն մասին, որ մենք նրան չենք վառել:

Մենք նույնիսկ չգտանք նրա ոսկորները, հոգոց է հանում ջաղացպան Տիխոնը:

Լավրը մի քանի քայլ է անում Տիխոնի ուղղությամբ:

Առո՞ղջ է արդյոք կինը քո, Տիխոնե:

Այո, Աստուծո ողորմածությամբ, պատասխանում է ջաղացպանը:

Ճապկի փեշին նա նկատում է ալյուրի հետքերն ու սկսում է թափ տալ:

Անաստասիային տեսել են այստեղ, ասում է դարբին Ավերկիին: Տեսել են, ինչպես է նա մտնում քո անձավը... մենք գիտենք, ճգնավո՛ր, որ նա այստեղ է:

Եկածները նայում են դարբին Ավերկիին ու չեն նայում Լավրին:

Ես արգելո՛ւմ եմ ձեզ մտնել իմ քարայրը, հնչում է Լավրի ձայնը:

Ներիր, ճգնավո՛ր, բայց մեր ետեւում մեր ընտանիքներն են, կամացուկ ասում է դարբին Ավերկիին: Եվ մենք կմտնենք քո քարայրը:

Նա դանդաղ գնում է դեպի քարայրն ու կորչում այնտեղ: Քարայրից ճիչ է լսվում: Մի ակնթարթ անց դարբին Ավերկիին դուրս է ելնում: Նա բռնել է Անաստասիայի մազերից: Վուշի հասկերով դրանք փաթաթված են նրա կարմիր բռունցքի մեջ: Անաստասիան ճչում եւ փորձում է կծել Ավերկիի ազդրը: Ավերկիին նրա դեմքը խփում է իր ծունկին: Անաստասիան պապանձվում եւ կախվում է Ավերկիի ձեռքից: Նրա մեծ փորը լղլղում է: Կանգնածներին թվում է, թե փորը հիմա կբաժանվի Անաստասիայից, եւ այնտեղից դուրս կգա նա, ում ավելի լավ է չնայես:

Նրան տիրացել է Դեւը, բղավում են կանգնածները:

Այդպիսի բղավոցներով իրենք իրենց են ոգեւորում, որովհետեւ մոտ գալ Անաստասիային չեն համարձակվում: Նրանք ցնցված են աղջկան բռնած դարբնի համարձակությունից:

Դեւը տիրել է ձեզ, ասում է շնչարգել Լավրը, քանզի դուք մահացու մեղք եք գործում:

Անաստասիան բացում է աչքերը, որոնք լիքն են սարսափով: Մի

կողմ շրջված դեմքի վրա դրանք այնքան սարսափելի են, որ բոլորն ակամա սոսկում են: Մի ակնթարթ սարսափը բռնում է նաեւ դարբին Ավերկիին: Նա Անաստասիային շպրտում է իրենից հեռու: Նա պառկած է գետնին՝ նրանց եւ Լավրի միջեւ: Ավերկիին հավաքում իրեն եւ կտրուկ շրջվում է դեպի Լավրը.

Նա չի ասել իր երեխայի հոր անունը, որովհետեւ նա հողածիններից չէ:

Անաստասիան հենվում է արմունկներին: Նա չի ճչում, նա խռխռում է: Մինչեւ կանգնածների ականջներին հասնելը՝ այդ խռխռոցը թռչում է մի ամբողջ հավերժություն.

Ահա իմ երեխայի հայրը:

Նրա ազատ ձեռքը ցույց է տալիս Լավրին:

Բոլորը պապանձվում են: Խաղաղվում է առավոտյան քամին, եւ ծառերն այլեւս չեն սոսափում:

Դա ճի՞շտ է, հարցնում է ամբոխի միջից ինչ-որ մեկը: Ճգնավոր, մեզ ասա, որ նա ստում է:

Լավրը բարձրացնում է գլուխն ու բոլորին նայում դանդաղ, խամրած հայցքով:

Ո՝չ: Դա ճշմարիտ է:

Բոլորն արտաշնչում են: Սոճիների պսակները նորից սկսում են իրենց ծածանքը, իսկ ամպերն իջնում են վար՝ լողարկելու: Դարբին Ավերկիի շուրթերին ժպիտ է նշմարվում.

Ահա թե ինչ...

Ավերկիի ժպիտը գրեթե աննկատելի է եւ դա նրան տալիս է յուրահատուկ անպատկառ տեսք:

Բոլորի հետ էլ պատահում է, ինչ-որ մեկի ականջին ասում է ջաղացպան Տիխոնը: Բացարձակապես բոլորի հետ: Դե դա այնպիսի ոլորտ է, որ ոչ ոք ապահովագրված չէ:

Եկածներն աննկատ տարրալուծվում են անտառում: Նրանց եղաներն ու բրերը դառնում են թփուտի ճյուղեր: Նրանց ձայները խլանում են: Նրանք արդեն անզանազանելի են թռչունների կտրուկ ճիչերից, իրար հպվող բներից: Այդ անհետացմանը բացակայի պես ականջ է դնում Լավրը: Նա նստած է այտը դրած ծեր սոճու բնին: Նրա կեղեւը կազմված է առանձին, ասես սոսնձված սալիկներից: Սալիկները կնճռապատ են ու խորդուբորդ, որոշները ծածկված են մամուռով: Նրա վրայով վերուվար վազվզում են մրջյունները: Վխտում մամուռի մեջ:

Լավրի մորուքի մեջ: Մրջյունները հակված չեն զանազանելու նրան այդ սոճուց, եւ նա հասկանում է: Նա ինքն էլ է զգում իր փայտեղացման աստիճանը: Դա արդեն սկսվել է, եւ դեմն առնել դժվար է: Մի քիչ էլ՝ եւ նա արդեն չի վերադառնա: Անաստասիայի ոգեւորված ձայնը նրան դուրս է բերում փայտեղացումից:

Դու ստիպված նրանց սուտ ասիր:

Հնչյունները բառ են կազմում: Սուտ: Ստիպված ասվեց:

Մի՞թե ես սուտ ասացի նրանց:

Հաջորդ օրերին Լավրի խուցի մոտ հայտնվում էին բազում դատարկաշրջիկներ: Լուրը նրա եւ Անաստասիայի մասին տարածվում է ակնթարթորեն, եւ հիմա շրջակա բնակիչները գալիս են ա՛յն բանի համար, որ նրանց նայեն: Հետաքրքրասերներին չեն կանգնեցնում նույնիսկ իրենց կյանքի նեղուվատ պայմանները, քանզի ձգտումը՝ ուրիշի անկումը տեսնել սեփական աչքերով, շատերի մոտ ավելի ուժգին է սովից: Միջնադարում սենսացիան քիչ էր, եւ Լավրի հետ տեղի ունեցածն, անկասկած, դրանցից մեկն է, որովհետեւ խոսքը՝ սրբակյացի անկման մասին է:

Մերձակա եւ հեռավոր գյուղերի բնակիչները գալիս են ոչ թե որպեսզի ուրախանան կատարվածով, պարզապես իրենց անմիտ, դավաճանություններից ու խառնակչությունից աղտոտված կյանքը հիմա թվում է մի փոքր ավելի լավ: Նրանք հասկանում են, որ այդպիսի իրադարձության ֆոնի վրա պահանջարկն իրենցից՝ մեծ չէ: Իրենց ճառերում շատերը նույնիսկ ցավակցում են Լավրին, նշելով, ընդ որում, որ թռիչքի բարձրությունն անխուսափելիորեն սպառնում է նույնպիսի անկման խորությամբ: Զարմանալի չէ այդ պատճառով, որ նույնքան բարձր նրանք հետագայում չէին էլ պատրաստվում թռչել:

Ճաբաթ անց եկողների հոսքը կտրուկ նվազում է: Այժմ այցելուները շատ ավելի քիչ են, քան նախկինում՝ ոչնչով չմթագնված ժամանակներում: Ակնառու է, դրանում իր դերն է խաղում սովի ժամանակը. այդպիսի ժամանակ մարդիկ քիչ են մտածում առողջության մասին:

Կա նաեւ այլ պատճառ, ամենա, երեւի կարեւորը: Ամեն բանից հետո, ինչ տեղի ունեցավ, շատերը կորցնում են հավատը Լավրի բուժիչ ունակությունների հանդեպ: Չէ՛ որ միշտ հաճելի է, որ, ի տարբերություն սովորական բժիշկների, նրա ունակությունները հիմնավորվել են ոչ միայն մեկ մարդկային մարմնի գիտությամբ: Լավրը չէր բուժում՝ նա ապաքինում էր: Իսկ ապաքինումը կապված չէ կենսափորձի հետ: Լավ-

րի շնորհը թեւավորում էին բարձրագույն ուժերը, այն շարժում էին ինքնամեկուսացումն ու իր ուժով չտեսնված սերն առ մերձավորը: Ոչ ոք չէր կարող սպասել (խոսողները քրքջում էին բռունցքը բերանին), որ դա սերն է ընդունում նման կերպեր: Մարդկային պաղատանքի բարեմտությունն այն է, որ ապաքինման իրավունքը միայն արժանավորներին է ճանաչում: Եվ Լավրը այլեւս այդպիսին չէ:

Նրա մոտ դեռ գալիս են հին սովորույթի համաձայն, բայց գալիս են ինչ-որ անվստահ եւ, հիմնականում, դատարկ բաների համար: Ավելի հաճախ Լավրը ստիպված զբաղվում է ատամնացավով եւ գորտուկներ հեռացնելով: Լինում են նաեւ ավելի լուրջ դեպքեր, սակայն դրանց կրողներն իրենք էլ չեն հասկանում՝ արժե՞ արդյոք, որ այդպիսի հիվանդությունները հանձնեն անհուսալի ձեռքերին:

Այդ օրերին պատահում է վատթարը. Լավրը հասկանում է, որ արդեն չի կարող գլուխ հանել ամենապարզունակ հիվանդություններից: Նա զգում է, որ ապաքինման ուժն այլեւս իր ձեռքերից չի հորդում:

Ամեն ապաքինում ծնվում է նախեւառաջ իր հանդեպ հավատից, ասում է Լավրը Ուստինային: Նրանք ինձ այլեւս չեն հավատում, եւ դա, սեր իմ, խարխլում է մեր՝ նրանց հետ կապերը: Հիմա ես չեմ կարող նրանց օգնել:

Եվ արցունքները լվանում են նրա այտերը:

Այն փշրանքները, որոնք նրանց դեռ շարունակում են բերել, Լավրը տալիս է Անաստասիային: Հուրախություն Լավրի վանքից վերցրած բոքոնի կողը դեռ ամբողջովին կերված չէ: Նա ճաշակում է երախտագիտությամբ եւ հուզումով:

Օգոստոսի սկզբին Լավրի մոտ չի գալիս այլեւս ոչ ոք: Դա նրան զարմացնում է: Բոլորը հասկանում են, որ բուժումները սպառվել են, եւ Լավրի մոտ այցելությունը համարում են զուր: Ոմանք, հնարավոր է, դեռ կգնային նրա մոտ, սակայն ընդհանուր տրամադրությունը փոխանցվում է նաեւ իրենց: Այն բանից հետո, ինչ լսեցին նրանք Լավրի եւ Ռուկինյան գյուղարվարձանի մասին, նրա մոտ գնալը կարծես թե հարմար չի: Նրանք վախենում են պարզունակ երեւալ կամ, որն ավելի տհաճ է, լինել նրանց նման, ով խրախուսում է մեղքը:

Լավրը միայնակ է: Նա մենակություն չէր զգում, երբ փախավ աշխարհից, որովհետեւ այդ ժամանակ լքվածության զգացում չուներ: Այժմ աշխարհը փախչում է իրենից, իսկ դա բոլորովին այլ բան է: Լավրը տագնապում է: Նա տեսնում է, որ մոտենում է Անաստասիայի ծնն-

դաբերելու ժամանակը: Եվ նա չգիտի, ինչպես պիտի վարվի:

Տագնապում է նաեւ Անաստասիան: Նա զգում է Լավրի տագնապներն ու չի հասկանում պատճառները: Նրան զարմացնում է, որ մեծն Բժիշկ Լավրը այդպիսի անհանգստությամբ է վերաբերվում ծնունդն ընդունելուն, երբ պատասխանատու է եղել առհասարակ ցանկացած սովորական գործի հանդեպ: Լավրը մի քանի անգամ առաջարկում է նրան ծննդաբերելու մեկնել Ռուկինյան գյուղարվարձան, որտեղ ծնունդը նրանից կարող է ընդունել տատմերը, սակայն Անաստասիան կտրականապես հրաժարվում է: Նա չգիտի, ինչ սպասի Ռուկինայն գյուղարվարձանից: Նրա համար սարսափելի է այնտեղ վերադառնալը: Լինում են օրեր, երբ սարսափելի է մնալ նաեւ Լավրի հետ: Երբեմն Անաստասիային թվում է, թե նրա բանականությունը խառնվել է: Ժամանակ առ ժամանակ Լավրը նրան անվանում է Ուստինա: Նա ասում է, որ չարժե հրաժարվել տատմոր օգնությունից: Որ, եթե նա վախենում է գնալ արվարձան, հարկ է տատմորը կանչել այստեղ: Լավրը ծածկվում է հետո եւ դողացնում: Նա Լավրին այդպիսին երբեք չի տեսել:

Անաստասիան լսում է Ուստինային ուղղված խոսքերը եւ օգոստոսյան բարենպաստ մի լավ առավոտ ասում՝ այո: Ինքը չի գնա ծննդաբերելու Ռուկինյան գյուղարվարձան, բայց համաձայն է, որպեսզի այնտեղից իր մոտ գա տատմերը: Լավրը սեղմում է նրա ձեռքն իր կրծքին: Անաստասիան լսում է, թե ինչպես է հուսալքված բաբախում նրա սիրտը: Անատասիան զգում է, որ մոտ է ժամն իր ծննդաբերության:

Երկար տարիների ընթացքում առաջին անգամ Լավրը լքում է իր առանձնության վայրը: Նա գնում է նրա՛նց տրորած կածանով, ովքեր իր մոտ էին գալիս օգնություն ստանալու: Այժմ օգնության կարիք ունի նա ինքը: Եվ չի գտնում մեկին, որին ուղարկի տատմոր ետեւից, որովհետեւ այստեղ այլեւս ոչ ոք չի գալիս: Լավրը գնում է, մտածելով այն մասին, թե ինչպես կզգա իր բացակայությամբ Անաստասիան: Նա ջանում է աճապարել, բայց շնչահատ է լինում: Ռուկինյան գյուղարվարձան մտնելուց առաջ Լավրը մի րոպե կանգ է առնում եւ խոր շնչում: Փակում է աչքերն ու շնչում: Նա արդեն թեթեւ է զգում: Ցսպելով սրտխփոցը՝ նա մտնում է գյուղարվարձան:

Տների դռների մեջ հայտնվում են մարդիկ: Նրանք սուսուփուս շրջապատում են Լավրին: Նրանից աչք չեն կտրում: Նույնիսկ այն ամենից հետո, ինչ պատահեց, Ռուկինյան գյուղարվարձանի մարդիկ չեն կարող հավատալ նրա գալստյանը: Նույն հաջողությամբ նրանց մոտ

կարող էր գալ Կիրիլյան միաբանությունը: Դիմելով արվարձանցիներին՝ Լավրը ցույց է տալիս անտառը: Թռչող քամու պոռթկումների մեջ նրա ձայնը չի լսվում: Նա օգնություն է խնդրում: Նրա շրթունքները շարժվում են: Գյուղարվարձանցիները գիտեն, որ նա օգնություն է խնդրում, բայց օգնությունը չկա: Տատմերն հիմա ուղեւորության մեջ է: Ծնված օրից ոչ մի տեղ չի ուղեւորվել, իսկ հիմա ուղեւորվել է, ահա այսպիսի դեպք: Եվ նրան չկա փոխարինող: Բացարձակապես: Բանն այստեղ նրանց չկամությունը չի:

Լավրն ուշադիր նայում է ամբոխին եւ նրա առջեւ ծունկի է գալիս: Ոչինչ չի ասում: Բոլոր ասածներն արդեն մտել են այն ականջները, որոնք ինքը բուժել է: Ներծծվել է այն աչքերում, որոնք ինքը նույնպես բուժել է: Նա ողորմություն է խնդրում նրանցից, ում որ ինքն է ցուցաբերել այդքան տարիներ: Ծատերը լաց են լինում, քանզի սրտները քար չեն: Այդպես ամեն բան կարծես թե մարդկայնորեն չի դասավորվում, բայց նրանք ի՞նչ կարող են անել: Ծրջվելով՝ մաքրում են արցունքները: Եկվորին նայում են վերեւից ներքեւ: Լավրի կերպարանքը երերում է նրանց աչքերում, փոխում է ձեւն ու ուրվագծերը: Բարձրանում է: Հեռանում:

Լավրն իսկույն չի հասկանում, որ գնում է դեպի խուտոր: Ոտքերը դեռեւս հիշում են այդ ճանապարհը: Քանի՛ անգամ են անցել Քրիստափորի հետ: Հույս ունի նրան գտնել այնտեղ,- կարծես թե Քրիստափորը վաղուց է մեռել: Այնքան վաղուց, որ արդեն ոչ մի բանում վստահ լինել չի կարելի: Ոչ, իհարկե, մահացել է եւ պառկած է գերեզմանոցում. Չէ՞ որ ինքն է ծածկել նրա գերեզմանը քուրքով: Այդ դեպքում ինչո՞ւ է գնում նրա մոտ:

Քրիստափորը տեղում է՝ իր գերեզմանում: Անցած բոլոր տարիները նա անց է կացրել այստեղ: Նրա գերեզմանը դեռ կարելի է ճանաչել պարսպի մոտի խիտ խոտերի մեջ: Եթե, իհարկե, նրա գերեզմանն է: Իսկ Քրիստափորը տանը չէ: Ինչպես եւ Քրիստափորն էր կանխագուշակել, տան տեղը եկեղեցի է վեր խոյանում: Եկեղեցին գերեզմանոցում տնից կարեւոր է: Չէ որ գերեզմանոցն ինքնին տուն է:

Եկեղեցու դուռը բաց է: Նախքան այնտեղ մտնելը Լավրը շնչում է օգոստոսի բուրմունքը, կեչիների չոր տերեւներն է զննում: Առաջին դեղնությունն առած, մի քիչ հոգնած ամառվանից: Արեւի փայլերը ճաղաշարերին: Մտածկոտ սահքը սարդի: Սա վերադարձ է, իսկ նրա տունը դարձել է Տուն:

Տաճարում վառվում են մոմերը: Արքայական դարպասներից դուրս է գալիս Ալիպիին՝ Կիրիլյան միաբանության ավագերեցը: Նրա ձեռքում հողորդության բաժակ է:

Եկա՞ր, Լավրե:

Եկա:

Սրբահայր Իսնոկենտին մահացել է եւ չի կարող այսօր քեզ դիմավորել: (Ալիպիին հուշիկ շարժվում է Լավրին ընդառաջ):Եվ դրա համար էլ ի՞նձ խնդրեց:

Լավրի թիկունքում տաք քամու շրշյունն է: Մոմի լեզվակները երերում են, եւ կենդանանում են սրբապատկերները: Հաղորդություն առնելով՝ Լավրը ասում է.

Գիտես, ես էլ խնդրանք ունեմ: Երբ լքեմ իմ մարմինը, չէ որ նրանով շատ եմ մեղանչել, հատուկ ձեւականություններ մի արեք նրա հետ: Ոտքերիս պարան հագցրեք եւ քարշ տվեք ճահճային թավուտ, թող գազաններն ու օձերը ծվատեն: Ահա, ըստ էության, ամենը:

Կանգնելով եկեղեցու դռների մեջ, Լավրը հայում է Ալիպիի թախծոտ դեմքը:

Դա իմ կտակն է, ասում է Լավրը, եւ այն պետք է կատարել:

Իր քարանձավ Լավրը վերադառնում է երեկոյան: Ծնունդկանի ցավերն սկսվում են: Նա պառկեցնում է աղջկան քարանձավի պառկելատեղում եւ ջուր է պատրաստում, որպեսզի լվանա նորածնին: Պատրաստում է դանակը, որպեսզի կտրի նորածնի պորտալարը: Բացատում, քարանձավի դիմաց նա կրակ է վառում: Լավրը հանգիստ է: Եվ նորից է ուժ զգում իր ձեռքերում:

Անաստասիան (Անաստասիա՞ն) չի ուզում պառկել մութ քարայրում, եւ նա խնդրում է իրեն անկողին պատրաստել բացատում: Լավրը նայում է երկինք: Երկնքում ամպ չկա: Լուսավոր ամպեր՝ զարդարված մայրամուտով,- անձրեւ չի լինելու: Նա անկողին է պատրաստում բացատում: Նա պառկում է դեմքով դեպի քարայրը: Քարայրի երկու մուտքերը նրան հիշեցնում են երկու հսկայական աչք, բայցեւ՝ լի խավարով: Քարայրն ասես գլուխ է: Աղջիկը խնդրում է օգնել իրեն շրջվելու մյուս կողքի: Հիմա նա նայում է անտառին: Անտառը բարձր է ու բարի: Հարմար է: Խաղաղ:

Մի հեռացիր իմ մոտից, ասում է նա Լավրին:

Ես այստեղ եմ, սեր իմ, պատասխանում է Լավրը: Եվ մենք միասին ենք:

Նա իր ձեռքն է առնում աղջկա ափը, եւ նրա մեջ զովություն է լցվում: Նա իր ձեռքերի մեջ է քաշում նրա ցավը: Ներծծում է կաթիլ առ կաթիլ: Հազվադեպ վեր է կենում, որպեսզի խարույկի մեջ ճյուղեր գցի: Վրա հասնող մութի մեջ աղջիկը տեսնում է միայն նրա դեմքը: Այն լուսավորված է խարույկի բոցով: Նրա կնճիռների ռելիեֆը շարժուն է: Խարույկը ճարճատում եւ արտանետում է կայծեր: Կայծերը թռչում են մինչեւ սոճիների սաղարթները: Մի քանիսը մարում են: Մի քանիսն էլ թռչում են ավելի բարձր, որպեսզի խառնվեն առաջին աստղերին: Աղջկա աչքերն ուղղված են երկինք, նա ամեն ինչ տեսնում է: Նրա աչքերը արտացոլում են փայլը խարույկի:

Լավրի ձեռքը նրա փորին է:

Այդպես ավելի՞ հանգիստ է:

Հանգիստ է:

Նա ճչում է: Նրա հետ ճչում է ամբողջ անտառը:

Դիմացիր մի քիչ, սեր իմ: Մի՛ քիչ:

Նա դիմանում է: Եվ, միեւնույն է, ճչում է:

Լավրի ձեռքերը զգում են երեխայի գլուխը: Այն ասես կպչում է իր ձեռքին եւ փափուկ դուրս գալիս: Ուսերը: Փորը: Ծնկները: Կրունկները: Լավրը կտրում է պորտալարը: Լվանում նորածնին տաք ջրով:

Ահա նա, սեր իմ:

Նա ցույց է տալիս երեխային, եւ իր այտերի ծալքերում շողում են արցունքները: Խարույկի արտացոլքերում մանկիկն անհավատալի վարդագույն է: Իսկ գուցե թե ամբողջովին մաքրված չէ նրա արյունից: Մանկիկն օդ է հավաքում թոքերում ու ճչում: Այդ օդը հավաքում է իր մեջ ամբողջովին, առանց մնացորդի: Անաստասիան մանկանը դնում է կրծքին: Աչքերը կիսափակ են: Շատ օրերի ընթացքում առաջին անգամ է հանգիստ: Նա քնում է: Փափուկ եւ տաք խոտի վրա Լավրը բարուրում է նորածնին մաքուր գլխաշորով: Առնում է ձեռքերին: Լավրը նույնպես խաղաղ է:

Վաղ առավոտյան Անաստասիան արթնանում է ցրտից: Խարույկը հանգել է: Լավրը կիսանստած՝ մեջքով հենվել է սոճուն: Ձեռքերի վրա նա պահել է նորածնին: Երեխան շնչում է համաչափ: Լավրի գրկում նրա համար տաք է: Երեխային վերցնելով Լավրի ձեռքից՝ Անաստասիան նրան կուրծք է տալիս: Երեխան արթնանում եւ ագահորեն ճպպացնում է: Լավրի աչքերը փակ են: Նրա կոպերին արեւի առաջին ճա-

ռագայթներն են: Ճառագայթները սահում են առավոտյան գոլորշիների միջով: Սոճիների ասեղները շողշողում են: Ստվերները երկար են: Օդը՝ խիտ, քանզի դեռ չի կորցրել զարթնող անտառի հոտը: Սամուռը փափուկ է: Լի է արարածներով, ում տունը տերեւն է, իսկ կյանքը՝ օրը: Անաստասիան Լավրի առջեւ ծունկի է իջնում եւ երկար նայում նրան: Ծուրթերով հպվում նրա ձեռքին: Ձեռքը սառն է, բայց դեռ սառած չէ: Անաստասիան նստում է Լավրի կողքին: Սեղմվում է նրան: Անաստասիան գիտի, որ Լավրը մահացած է: Նա դա հասկացել է դեռ երազում:

Ես քնով ընկա քո մահը, ասում է Անաստասիան Լավրին, բայց քեզ ճանապարհում էր իմ երեխան:

Ռոստովյան, Յարոսլավյան եւ Բելոզյորյան Արքեպիսկոպոս Իոնան քայլում է Նեռո լճի ափով: Նա միշտ այնտեղ է զբոսնում առավոտյան ժամերգությունից առաջ: Դա ամենախոր լիճն է աշխարհում, բայց մաքուր ջուրը միայն մակերեսին է: Որ խորն է, տղմոտ՝ ոչ մեկին չի թողնում դուրս գա, ով ընկնում է այդտեղ: Իոնան դա գիտի: Նա հմայվում է լճի խորությամբ իրեն հաշիվ տալով, որ այն վտանգավոր է: Հավասարվելով վերընծա անվանը՝ նա չի վախենում խորությունից, բայց հոգեւոր զավակներին ամուր հողը թողնել խորհուրդ չի տալիս: Տեսնելով մի մարդու, որ սահում է լճերեսով, Իոնան զարմանում է:

Ո՞վ ես դու, ջրի վրայով քայլող, հարցնում է արքեպիսկոպոս Իոնան:

Աստծո ծառա Իննոկենտին եմ: Ձեկուցում եմ քեզ Աստծո ծառա Լավրի մահվան մասին:

Դու այդտեղ զգույշ եղիր խորությունից, գլուխն օրորում է Իոնան:

Իննոկենտիի ժպիտից Իոնան հասկանում է, որ իր խորհուրդն ավելորդ է: Այդ ժպիտով Իննոկենտին հայտնվում է Պերմյան եւ Վոլոգոդյան եպիսկոպոս Պիտիրիմի նուրբ երազում: Նա հաղորդում է Լավրի մահվան լուրը:

Խնդրիր, որ նրան առայժմ չթաղեն, ասում է Իննոկենտին եպիսկոպոս Պիտիրիմին:

Մի անհանգստացիր, եպիսկոպոս, պատասխանում է Իննոկենտին, որովհետեւ նրան չեն թաղելու:

Անաստասիան վերցնում է երեխային եւ գնում Ռուկինյան գյուղարվարձան: Նրա շուրջբոլորը հավաքվում են արվարձանցիները: Անաստասիան նրանց ասում է Լավրի մահվան մասին: Նա հայտարարում է, որ իր երեխայի իսկական հայրը ջաղացպան Տիխոնն է, որն արգելեց իրեն պատմել այդ մասին՝ մահվան սարսափի տակ:

Եթե տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, Տիխոնին ասում են արվարձանցիները, ավելի լավ է՝ խոստովանիր, որովհետեւ տվյալ դեպքում ստվեր է գցված սրբակյացի վրա, եւ Ահեղ դատաստանի ժամանակ հեշտ չի լինելու քեզ Նրա աչքերի մեջ նայել: Որոշ ժամանակ ջաղացպան Տիխոնը չխոստովանեց: Նա լռություն էր պահպանում՝ ընտրություն անելով երկրային եւ երկնային դատարանների միջեւ: Ծանրութեթեւ անելով ամենը, ջաղացպանն ասաց.

Բոլորիդ առաջ խոստովանում եմ այն բանում, որ սովի տարիներին ալյուր առաջարկելով նշված Անաստասիա անչափահասին՝ պղծել եմ, ինչպես նաեւ այն բանում, որ, վախենալով մերկացումից, սպառնացել եմ նաեւ մահով, թեեւ, եթե լավ մտածենք, ո՞վ կհավատար նրա խոսքերին: Իսկ իմ անկման պատճառը համարում եմ կույսի ջահելությունն ու թարմությունը, ինչպես, ի դեպ, նաեւ վիճակը իմ սեփական կնոջ, որը գտնվել է բուժման մեջ հանգուցյալ Լավրի մոտ:

Ռուկինյան գյուղարվարձան է գալիս վանահայր Ալիպիին: Նա խոժոռ է: Ալիպիին հրահանգում է ձեռք չտալ Լավրի մարմնին մինչեւ հոգեւոր պետերի գալը: Պատարագ տալով՝ յոթ տարեկանից մեծ արվարձանցիներին նա թույլ չի տալիս հաղորդությանը ներկա գտնվեն: Արվարձանցիները տագնապած են: Ալիպիին մեկնում է:

Լուրը Լավրի մահվան մասին տարածվում է կայծակնորեն: Դա ամենից առաջ զգում են Ռուկինյան գյուղարվարձանում, որտեղ ոչ մի խրճիթում շուտով տեղ չի մնում: Տեղ չկա նաեւ մոտակա ծառերի վրա: Ժամանողները քողտիկներ են շինում շրջակայքում: Ոմանք, ամառային ժամանակը նկատի առնելով, գիշերում են բաց երկնքի տակ: Բոլորը գիտեն, որ սրբակյացին հողին հանձնելիս կարող են հրաշքներ հայտնվել: Ժողովվում են խեղանդամները, կույրերը, կաղերը, բորոտները, խուլերը, համրերը եւ քթախոսները: Տարբեր, այդ թվում նաեւ հեռավոր վայրերից բերում են կաթվածահարներին: Բերում են դիվահարներին, որոնք կապկպված են պարաններով կամ շղթաների մեջ են:

Գալիս են անկար տղամարդիկ, անպտուղ կանայք, անմարդ կանայք, այրիներն ու որբերը: Ժամանում են սեւ ու սպիտակ հոգեւորականությունը, Կիրիլյան միաբանության եղբայրները, մեծ ու փոքր իշխանությունների իշխանները, բոյարները, փոխիշխաններն ու հազարապետերը: Ժողովվում են նրանք, ովքեր ինչ-որ ժամանակ բուժվել են

Լավրի մոտ, նրանք, ով շատ է լսել նրա մասին, բայց երբեք չի տեսել, նրանք, ովքեր ուզում են տեսնել, որտեղ եւ ինչպես է ապրել Լավրը, ինչպես նաեւ նրանք, ովքեր սիրում են ժողովրդի մեծ հոսք: Կատարվածի վկաներին թվում է, թե հավաքվում է ամբողջ Ռուսական երկիրը:

Լավրի մարմինը շարունակում է մնալ սոճու տակ, քարանձավի մուտքի դիմաց: Նա փտման հետքեր չունի, բայց նրան պահպանողները արթուն են: Ամեն ժամ մոտենում են մարմնին եւ ներշնչում նրանից դուրս եկող հոտը: Նրանց պնչերը թրթռում են ջերմեռանդությունից, սակայն որսում են միայն խոտերի եւ սոճու կոների բուրմունքը: Պահապանները խլացնում են բացատը զարմանքի բացականչություններով, սակայն հոգու խորքում իրենք էլ հաստատ գիտեն, որ հենց այդպես էլ պետք է լիներ ամեն բան:

Աշխարհի արարչագործությունից 7028 թվականի օգոստոսի 18-ին, Քրիստոսի ծնունդից 1520-ին, երբ ժամանողների թիվը հասանում է հարյուր ութսուներեք հազարի, Լավրին բարձրացնում են հողից եւ երկյուղածորեն տանում անտառի միջով: Տեղափոխումը ուղեկցվում է թռչունների թաղման երգերով: Ննջեցյալի մարմինը թեթեւ է: Հարյուր ութսուներեք հազար եկածներ սպասում են անտառի սահմանի վրա:

Երբ Լավրի մարմինը երեւում է թավուտից, բոլորը ծունկի են իջնում: Սկզբում՝ նրան տեսնողները, ապա, շարք առ շարք, բոլոր նրանք, ովքեր ետեւում են: Մարմինն ընդունում են եպիսկոպոսներն ու վանականությունը: Նրանք տանում են իրենց գլուխների վրա, եւ ամբոխը նրանց առջեւ ճանապարհ է բացում, ինչպես ծովը: Նրանց ճանապարհը տանում է եկեղեցի, կառուցված՝ Քրիստափորի տան տեղում: Այնտեղ է կատարվում հուղարկավորության ծեսը: Տասնյակ հազարներ անխոս սպասում են դրսում:

Եկեղեցու ժամերգությունն ամբոխին լսելի չէ: Սկզբում լսելի չեն նաեւ բառերն՝ արտասանված վանահայր Ալիպիի կողմից եկեղեցու գավթում: Նա հրապարակում է Լավրի կտակը: Բայց այդ բառերն Ալիպիի կողմից են արտասանված: Դրանք ընդարձակվում են ամբոխի մեջ, ինչպես շրջանները ջուրը նետված քարից: Մեկ րոպե անց մարդկային ծովը պապանձվում է, քանզի սպասվում է ինչ-որ աներեւակայելի մի բան: Քար լռության մեջ Լավրի մարմինը տանում են ամբոխի միջով: Կանաչ մարգագետնի եզրին նրան դնում են խոտերի մեջ: Խոտը հոսում եւ քնքշորեն իր գիրկն է առնում է Լավրին՝ պատրաստակամ ընդունելու նրան ամբողջովին, որքանով իրարու օտար չեն: Այդ մար-

գագետնում Քրիստափորը ինջեցյալին ցույց էր տալիս ընդերքների զուգամիտումը՝ երկնային եւ երկրային:

Լավրի ոտքերը կապում են պարանով, որից դուրս են գալիս երկու ճյուղ: Ամբոխի մեջ ճիչեր են լսվում: Ինչ-որ մեկը նետվում է պոկելու պարանը, բայց տեղում ոլորում են նրան եւ քարշ տալիս ամբոխի մեջ: Եթե նայենք վերեւից, կանգնածները կներկայանա կետերի չտեսնված կուտակումներ, եւ միայն Լավրը տարածականություն ունի:

Պարանի մի ծայրին մոտենում է Ռոստովյան, Յարոսլավյան եւ Բելոզյորյան արքեպիսկոպոս Իոնան: Պարանի մյուս ծայրին մոտենում է Պերմյան եւ Վոլոգոդյան եպիսկոպոս Պիտիրիմը: Նրանք ծունկի են իջնում եւ աղոթում են անբարբառ: Ձեռքներն են առնում պարանի ծայրերը, համբուրում դրանք եւ շտկվում են: Միաժամանակ՝ խաչակնքվում:

Նույն ուղղությամբ ցայվում են նրանց պատմուճանների քղանցքերն ու մորուքի ծայրերը: Նրանց կերպարանքների համամասնությունն աղավաղված է քամուց, քանզի երկուսն էլ լայնացել են դեպի աջ: Նրանց աշխատանքը երկմիասնական է: Հայացքներն ուղղված են վեր:

Արքեպիսկոպոս Իոնան աննկատ գլխով է անում, եւ նրանք կատարում են իրենց առաջին քայլը: Այդ քայլն իրենցից հետո կրկնում է անսահման ամբոխը: Նրա անսահման ախը ծածկում է քամու ձայնը: Լավրի կրծքի վրա ձեռքերը ցնցվում են ու բացվում, ասես գրկի մեջ: Ձգվում են մարմնի ետեւից: Մատներով ընտրում են խոտը, ինչպես ընտրում են վարդարանի հատիկները: Կոպերը դողում են, եւ այդ պատճառով բոլորին թվում է, թե Լավրը պատրաստ է զարթնելու:

Հոգեւոր պետերի թիկունքում լսվում են ճնշված հեծկլտոցներ: Ամեն ակնթարթի հետ հեծկլտոցները դառնում են առավել բարձր: Նրանք վերածվում են համատարած ոռնոցի, որը տարածվում է ամբողջ բնակելի տարածքի վրա: Իոնան եւ Պիտիրիմը շարունակում են իրենց շարժումը լուռ: Նրանց արցունքները քամին մարգագետնի հակառակ ծայրն է տանում:

Լավրը փափուկ սահում է խոտի վրայով: Առաջինը նրան է հետեւում պսկովյան փոխիշխան Գավրիիլը: Նա ճերմակած է եւ զառամած, եւ նրան տանում են թեւերի տակ ընկած: Համարյա քարշ են տալիս, բայց նա դեռեւս ողջ է: Գավրիիլի ետեւից գնում է նովգորոդյան բոյար Ֆրոլն իր կին Ագաֆյայի եւ զավակի հետ: Նրանց քանակն ավելանում է ամեն

տարի: Ապա բոյարուհի Ելիզավետան (իսկ ես տեսնում եմ), ինչպես նաեւ Աստծո ծառա Նիկոլայը՝ մտքով առողջ եւ սթափ հիշողությամբ: Եվ նրանց ետեւից բազմաթիվ գուշակներ ու խելքի եկածներ: Երթի ամենավերջում երեւում են վաճառական Զիգֆրիդը Դանցիգից, որն այստեղ հայտնվել է առեւտրային գարծերով, եւ դարբին Ավերկիին, որն ամաչում է իր արարքից:

Ինչ ժողովուրդ եք դուք, ասում է վաճառական Զիգֆրիդը:Մարդը ձեզ ապաքինում է, ձեզ է նվիրում իր ամբողջ կյանքը, իսկ դուք նրան մի ամբողջ կյանք տանջում եք: Իսկ երբ նա մեռնում է, նրա ոտքերը կապում պարանով ու քարշ եք տալիս եւ արցունքներից խեղդվում:

Դու մեր հողում ես մեկ տարի եւ ութ ամիս, պատասխանում է դարբին Ավերկիին, եւ այդպես էլ նրանից ոչինչ չհասկացար:

Իսկ դուք ինքներդ նրան հասկանու՞մ եք, հարցնում է Զիգֆրիդը:

Մե՞նք: Դարբինը մտքերի մեջ է ընկնում ու նայում Զիգֆրիդին: Մենք ինքներս էլ, ինչ խոսք, նույնպես չենք հասկանում:

Թարգմանությունն ավարտվել է՝
2015 թ., հոկտեմբեր

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳՐՈՂԸ ԻՐ ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

Հին Ռուսիան իմ «Լավր» վեպում ինքնաբավ արժեք չէ: Այն, եթե ուշադիր եք եղել, տրված է իբրև համապատկեր: Ես նույնիսկ կասեի, որ որոշակի իմաստով վեպը ներկայացնում է պայմանական Միջնադարը: Ենթադրվում է՝ ես ջանացել եմ սխալներ թույլ չտալ Միջնադարի նկարագրության մեջ, բայց ամբողջությամբ ջանացել եմ «մարել» այն, որպեսզի հատուկ տեղ չգրավի: Առաջին հերթին ինձ հետաքրքրում է մարդը: Ես ցանկացել եմ պատմել, օգտվելով Դոստոևսկու արտահայտությունից՝ «դրական գեղեցիկ մարդու» մասին: Բայց Դոստոևսկի պիտի լինես, որպեսզի նման բաները պատմես արդիական նյութի հենքի վրա: Ես չհամարձակվեցի անել, որովհետև ինձ ոչ ոք չէր հավատա: Դրա համար էլ խորացա այն ժամանակի մեջ, որը գիտեմ հավանաբար ո՛չ վատ արդիականից: Այնտեղ են ծավալվում բոլոր անցքերը, և մարդը կարող է իր էությունը դրսևորել. ինքնազոհողություն, նվիրում, սեր: Այդ արժեքները կա՛ն մեր կյանքում, սակայն մենք, չգիտես ինչու, ամաչում ենք խոսել այդ մասին: Ես ուզեցի գործածության մեջ դնել այդ բառերը:

…Չէ՞ որ գրողը հորինող չէ, ավելի շուտ՝ ժողովող է: Նա վակուումում չի ապրում: Նրանցից շատերը, ում նկարագրել եմ, իրական մարդիկ են, միայ թե՝ այլ անուններով: Դե սյուժեն էլ հաճախ վերցնում եմ կյանքից. դրանք լսողությանդ մեջ են: Որոշ մարդկանց մասին ընթերցել եմ. օրինակ՝ «Մտերիմ ընկերներ»-ը ես գրել եմ այն բանից հետո, երբ գերմանական թերթերից մեկում հոդված կարդացի մի մարդու մասին, ում ընկերն ու զորակիցը սպանվում է ճակատում: Այդ մարդը հանգուցյալի մարմինը դնում է դագաղի մեջ ու զոդում և իր հետ տանում բոլոր ռազմաճակատներով՝ մինչև այն ժամանակ, երբ կարողանում է դագաղն ինքնաթիռով ուղարկել զոհվածի կնոջը: Այդ պատմությունն ինձ ցնցեց իր դրամատիզմով, և ես վիպակ գրեցի:

Գիտե՞ք, թե ինչու են խև դառնում: Որովհետև թաքցնում են իրենց բարերարությունը: Դա սրբազնության զարմանալի տեսակ է, և սրբազնությունն ինքն իրենից է ամաչում. երբ սուրբն ինքը չի ուզում, որպեսզի իրեն լուրջ ընդունեն, հերոս համարեն, ձև է անում, թե ինքը խենթուխելառ է: Խև երբեմն դառնում են նաև վանականները՝ խելագար են ձևանում: Խևությունը, չնայած արտաքին էքսցենտրիկությանն ու էպատաժին, խոր հոգևոր խորհուրդ ունի:

…Երբ ապրում ես այս կամ այն երկրում, ներծծում նրա փորձը, լեզուն, վարքի կարծրատիպերը, նույնիսկ, եթե գրում ես, ասենք, 15-րդ դարի մասին, միևնույն է՝ դա այն երկրի մասին է, որտեղ դու ապրում ես: Վերջերս ինձ հարց տվեցին՝ ինչպե՞ս են ապրում արտասահմանում ռուս գրողները,- չէ՞ որ ես ինչ-որ ժամանակ ապրել եմ Գերմանիայում,- և ասեմ, որ դա հետաքրքիր կենսափորձ է: Երբ գտնվում ես օտար լեզվական միջավայրում, քո՛նը առավել նրբորեն ես զգում, առավել սուր: Հավանաբար էջեր գրել Հայրենիքում և Հայրենիքից դուրս՝ դրանք մի փոքր տարբեր բաներ են: Գոգոլը, օրինակ, «Մեռած հոգիներ»-ը գրել է Իտալիայում: Ես չեմ կարծում, թե դրանք նույնքան խորոթափանց կլինեին, եթե գրվեին Պետերբուրգում:

Ժամանակն ունի որոշակի նշանակություն… ինչպես ասում էր Դմիտրի Լիխաչովը. «Այն մեզ տրված է ըստ մեր թուլության»: Բայց ամենախոր և լուրջ հասկացությամբ՝ ժամանակ գոյություն չունի, մարդը պիտի իրադարձություններին նայի հավերժության տեսանկյունից: Իմ շատ էջեր, այսպես թե այնպես, ժամանակի բացակայության մասին են:

Կենսագրական

Եվգենի Գերմանի Վոդոլազկինը ռուս գրականագետ է և գրող: Ծնվել է 1964 թ., Կիևում: Բանասիրության դոկտոր է, հինռուսական գրականության մասնագետ, ռուս հին և նոր գրականությանը վերաբերող բազմաթիվ աշխատությունների հեղինակ: Աշխատել է ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչովի ղեկավարությամբ:

2000 թ. Մյունխենում հրատարակել է իր հեղինակած «Համաշխարհային պատմությունը Հին Ռուսիայի գրականության մեջ» մենագրությունը:

Գրել է գիտա-հանրամատչելի աշխատություններ, ինչպես՝ «Դմիտրի Լիխաչովը և իր դարաշրջանը», «Մայրցամաքի մասը՝ պարփակված երկնքով. Սոլովեցկյան բնագրեր և կերպարներ», «Լեզվի գործիքը» և այլ գրքեր:

2009-ին նրա «Սոլովյովը և Լարիոնովը» վեպն ընդգրկվել է Անդրեյ Բելիի անվան մրցանակաբաշխության եզրափուլում:

2013 թ. «Մեծ գիրք» համառուսաստանյան մրցանակը շնորհվել է Ե.Վոդոլազկինի «Լավր» վեպին:

Վոդոլազկինը «Բնագիր և ավանդույթ» ամսագրի գլխավոր խմբագիրն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԱՎՐ

Նախերգություն.....5
Գիրք իմացության.....8
Գիրք հրաժարման.....90
Գիրք ճանապարհի.....172
Գիրք հանգելոց խաղաղության.....276

ՀԱՎԵԼՎԱԾ

Գրողը իր վեպի մասին.....346
Կենսագրական.....348

ԵՎԳԵՆԻ ՎՈԴՈԼԱԶԿԻՆ

ԼԱՎՐ

Ոչ պատմական վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Շանթ ՄԿՐՏՉՅԱՆԻ

Ստեփանակերտ 2015

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Համակարգչային շարվածքը՝
Հ. Հակոբյանի
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Մ. Դրավյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 22 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
Հեռ.: +37497252323

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»- 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով, Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը. Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015